Վ. Ա. ՊԱՐՍԱՄՅԱՆ
Ն. Ո. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

9(47.925)
Դ-35
Շկա
4417

ՊՐՈՖ. Վ. Ա. ՊԱՐՍԱՄՅԱՆ
ՊՐՈՖ. Շ. Ռ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

(1801–1978 թթ.)

Թույլատրված է Հայկական ՍՍՀ բարձրագույն և միջնակարգ մասնագիտական կրթության մինիստրության կողմից որպես դասագիրք բուհերի ուսանողների համար:

«ԼՈՒՅՍ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1979

9 (С 42) Ինդեքս ԳՄԴ-63.3 (2 Հ) Я 73

Պարսամյան Վ. Ա., Հարությունյան Շ. Ռ.
Պ 35 Հայ ժողովրդի պատմություն (1801—1978 թթ.): Դասագիրք բուհերի ուսանողների համար.— Եր.: Լույս, 1979.— 752 էջ:

«Լույս» հրատարակչությունը 1967 թ. հրատարակել է «Հայ ժողովրդի պատմություն» բուհական դասագրքի III հատորը (1801—1917 թթ., հեղինակ՝ պրոֆ. Վ. Ա. Պարսամյան), իսկ 1970 թ.՝ IV հատորը (1917—1968 թթ., հեղինակ՝ պրոֆ. Շ. Ռ. Հարությունյան):

Հիշյալ հատորները, ուսումնական նոր ծրագրի հիման վրա, վերահրատարակվում են մի գրքով՝ բարեփոխված և լրացված:

Պ 60406—149 / 702 (01) 1979 — 9(С42) ԳՄԴ 63.3 (2 Հ) Я 73

Вардан Арамович Парсамян
Шмавон Рубенович Арутюнян
ИСТОРИЯ АРМЯНСКОГО НАРОДА
(1801—1978 гг.)
(на армянском языке)
Издательство «Луйс»
Ереван — 1979

© «Լույս» հրատարակչություն, 1979 թ.

ԱՌԱՋԻՆ ԲԱԺԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԸ XIX ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ԿԵՍԻՆ

I ԳԼՈՒԽ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ XIX ԴԱՐԻ ՍԿԶԲԻՆ

1. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ

Հայ ժողովուրդն անցնելով բազմադարյան պատմության քառուղիներով, ոտք դրեց XIX դարը՝ իր նոր պատմության ժամանակաշրջանը՝ տակավին զուրկ մնալով քաղաքական ազատ ու անկախ կյանքով ապրելու հնարավորությունից: Հայկական պետության անկումից հետո մեր ժողովուրդն ընկավ օտար նվաճողների տիրապետության տակ, որը չափազանց ծանր հետևանքներ ունեցավ նրա պատմական բախտի համար: 1514-1639 XVI—XVII դարերի թուրք-պարսկական երկարատև ու ավերիչ պատերազմներից հետո, ինչպես հայտնի է, Հայաստանը նվաճել ու բաժան-բաժան էին արել սուլթանական Թուրքիան և շահական Պարսկաստանը (Իրանը): Հայաստանի արևմտյան մասը զավթել էր Թուրքիան, իսկ արևելյանը՝ Պարսկաստանը:

Բացի Արևելյան Հայաստանից, Անդրկովկասում Պարսկաստանը նվաճել էր նաև ամբողջ Ադրբեջանը և Արևելյան Վրաստանը (Քարթլին ու Կախեթը):

Արևմտյան Վրաստանը (Իմերեթը, Գուրիան, Մեգրելիան, Աբխազիան) և Սև ծովի առափնյա մյուս շրջանները գտնվում էին Թուրքիայի տիրապետության տակ:

Հրի ու սրի միջոցով նվաճելով Հայաստանը՝ թուրքական ու պարսկական զավթիչներն. ամեն կերպ ձգտում էին հայ ժողովրդին զրկել տնտեսական-քաղաքական զարգացման հնարավորությունից, ասիմիլյացիայի ենթարկել նրան և որպես ազգ վերացնել:

Թուրքիայում և Պարսկաստանում գոյություն ունեցող օրենքներին համապատասխան Հայաստանում ստեղծվել էին փաշայություններ (վիլայեթներ) ու խանություններ: Փաշայությունները կառավարում էին

սուլթանի կողմից նշանակված թուրք փաշաները, իսկ խանությունները՝ շահի նշանակած պարսիկ խաները։

XIX դարի սկզբներին Արևմտյան Հայաստանը բաժանված էր մի շարք փաշայություններ՝ Էրզրումի, Վանի, Կարսի, Բայազետի, Մուշի, Խարբերդի և Դիարբեքիրի։ Փաշայություններն իրենց հերթին բաժանված էին սանջակների (գավառների), որոնք կառավարում էին փաշայի կողմից նշանակված թուրք կամ քուրդ բեյերը։

Վարչական այս բաժանումները միշտ միատեսակ չեն եղել, տարբեր ժամանակներում ենթարկվել են փոփոխությունների։

Արևմտյան Հայաստանի տնտեսական և վարչական-քաղաքական աչքի ընկնող կենտրոնը Էրզրումն էր։ Ռուսաստանի և Պարսկաստանի սահմանագլխում գտնվող փաշայությունները ենթարկվում էին Էրզրումի սերասկյարին, որը միաժամանակ ամբողջ Անատոլիայի թուրքական զորքերի գլխավոր հրամանատարն էր։

Արևելյան Հայաստանի մեծ մասը մտնում էր Երևանի խանության մեջ։ Երևանի խանությունը բաժանված էր 15 մահալի (գավառի)՝ Կրբիբուլաղի, Զանգիբասարի, Գառնիբասարի, Վեդիբասարի, Շարուրի, Սուրմալուի, Փարչենիս-Դարաքենդի, Սառալիի, Թալինի, Սեիդլի-Աղսախլիի, Սարդարապատի, Կարբիբասարի, Ապարանի, Դարաչիչակի և Գյոկչայի։

Մահալի կառավարիչը նշանակվում էր Երևանի խանի (սարդարի) կողմից, որը կոչվում էր միրբոլուք։ Գյուղերի կառավարիչները կոչվում էին ռնդխուդաներ կամ մելիքներ։

Երևանի խանության մեջ որպես առանձին վարչական միավոր մտնում էր նաև խանության կենտրոն Երևան քաղաքը։ Քաղաքի կառավարությունը գտնվում էր սարդարի կողմից նշանակված ռուսիկանապետի (դարուգայի) ձեռքում։ Դարուգայի օգնականներն էին յուզբաշիները (հարյուրապետներ) և չաուշները (տասնապետներ)։

Քաղաքի գլխավոր պաշտոնյաներից էին նաև քալանթարը (քաղաքապետ), բազարբաշին (շուկայի կառավարիչ), միրաբը (ջրի տնօրեն) և այլն։

Թուրքիայում և Պարսկաստանում տիրող պետական կարգը ռազմաֆեոդալական դեսպոտիզմն էր։ Երկրի ամբողջ իշխանությունը կենտրոնացած էր ռազմական և ֆեոդալական վերնախավի ձեռքում։ Սուլթանի ու շահի իրավունքները անսահմանափակ էին։ Հպատակների կյանքի ու գույքի ապահովությունը կախված էր նրանց քմահաճույքից։

Կ. Մարքսը, խոսելով Թուրքիայում տիրող կարգերի մասին, ասում է. «Օսմանյան պետությունը եղել է միջնադարի միակ իսկական ռազմական տերությունը»։ Օսմանյան կայսրությունն իր ռազմա-ֆեոդալական բնույթը պահպանել էր նաև XIX դարի առաջին կեսին։

Ինչպես շահն ու սուլթանը ամբողջ երկրում, այնպես էլ խաներն ու

փաշաներն իրենց իշխանության տակ գտնվող շրջաններում միահեծան բռնապետներ էին։ Նրանց ձեռքում էին կենտրոնացած վարչական, տնտեսական, դատական և ռազմական բոլոր գործերը։

Խաների ու փաշաների իշխանության հիմնական նեցուկը նրանց տրամադրության տակ եղած զինված ուժերն էին։ Նրանք ունեին իրենց մշտական զորքերը, միջֆեոդալական կռիվներ էին մղում, ասպատակություններ, թալան ու կողոպուտներ կատարում, խեղդում ժողովրդի մեջ եղած ապստամբությունները և այլն։ Օրինակ՝ Երևանի սարդարը պահում էր մեծ քանակությամբ հետևակ (սարբազներ) և հեծյալ զորամասեր։ Նա ուներ նաև հրետանային զորամաս։ Պատերազմների ժամանակ այդ ֆեոդալ սատրապները պարտավոր էին համալրել իրենց զորքերը և դնել գերագույն իշխանության տրամադրության տակ։

Խաներն ու փաշաներն ունեին բազմաթիվ ատորդաս պաշտոնյաներ, որոնք ինչպես կենտրոնում, այնպես էլ գավառներում իրագործում էին իրենց տերերի կամքը։ Տարբեր խանություններում ու փաշայություններում պաշտոնյաները տարբեր իրավունքներ ու պարտականություններ ունեին, բայց բոլորն էլ պատկանում էին արտոնյալ դասին, ազատ էին հարկերից ու տուրքերից։ Արտոնյալ դասին էր պատկանում նաև հոգևորականությունը։

Թուրքիայում և Պարսկաստանում, որպես կանոն, գրեթե բոլոր մեծ ու փոքր պաշտոնները վաճառվում էին։ Առանց կաշառքի անկարելի էր ձեռք բերել որևէ պաշտոն, իսկ այդ գումարները կորզվում էին ժողովրդից։

Լինելով ծայրաստիճան հետամնաց ֆեոդալական երկրներ, ո՛չ օսմանյան Թուրքիան և ո՛չ էլ շահական Պարսկաստանը չկարողացան ստեղծել քիչ թե շատ կանոնավոր պետական-վարչական կարգեր ու օրենքներ։ Ֆեոդալական անարխիան, ներքին երկպառակություններն ու խժդժությունները, վայրենի կամայականությունները ու բռնությունները, թալանն ու կողոպուտը այդ պետությունների անբաժան ուղեկիցներն էին։

Թուրքիայում ու Պարսկաստանում տիրող նման դրությունը չափազանց ծանր էր ազդում ոչ միայն հայ ժողովրդի, այլև թուրք ու պարսիկ աշխատավորական մասսաների վրա։

Հայաստանի բաժանվածությունը Թուրքիայի ու Պարսկաստանի միջև, հայ ժողովրդի առանց այդ էլ փոքրաթիվ ուժերի ցրտումը մեծ չարիք էին դարձել մեր հայրենիքի քաղաքական ազատության ու անկախության ճանապարհին։

2. ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ԻՐԱՎԱԿԱՆ ՈՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԾԱՆՐ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Թուրքիայում ու Պարսկաստանում ինչպես մյուս քրիստոնյա ժողովուրդները այնպես էլ հայերը համարվում էին «ռայա»՝ իրավազուրկ հպատակներ: Նրանք զուրկ էին քաղաքացիական տարրական իրավունքներից: Հայերին արգելված էր զենք կրել, ձի նստել, շքեղ հագնվել, վկայություն տալ դատարաններում և այլն:

Պարսիկ խաներն ու Թուրք փաշաները դաժան կերպով ճնշում ու կողոպտում էին հայ ժողովրդին: Առանձնապես ծանր էր հատարակության հիմնական արտադրող ուժի՝ գյուղացիության դրությունը:

Արտադրության գլխավոր միջոցը՝ հողը, գտնվում էր պետության և արտոնյալ դասերի ձեռքում: Գյուղացիների մեծ մասը զուրկ էր հողից: Նրանք մշակում էին պետական և կալվածատիրական հողերը, ամբողջ օրն աշխատում, դառը դատում, իսկ արդյունքը խլում, կողոպտում էին խաներն ու փաշաները և մնացած պարազիտային տարրերը:

Հողատիրության տարբեր ձևեր կային Թուրքիայում և Պարսկաստանում: Նույնիսկ առանձին խանություններում ու փաշայություններում հողային հարաբերությունները և հողօգտագործման ձևերն իրարից տարբերվում էին:

Ինչպես Արևելքի մյուս երկրներում, այնպես էլ Հայաստանում տիրապետող պետական կամ արքունական հողատիրությունն էր: Սակայն դրա հետ մեկտեղ գոյություն ուներ նաև մուլքադարական (կալվածատիրական) և եկեղեցական հողատիրություն: Թե՛ Արևելյան և թե՛ Արևմտյան Հայաստանում կային նաև մասնատիրական հողեր, որոնք չէին մտնում համայնքի ընդհանուր հողային ֆոնդի մեջ:

Հողի պետական և մասնավոր սեփականության հարցը Արևելքի երկրներում մինչև օրս էլ գիտական բանավեճի առարկա է: Ինչպես պետական, այնպես էլ մասնավոր հողատիրության հետ կապված շատ հարցեր դեռևս պարզված չեն:

Խանություններում ու փաշայություններում, մեր կարծիքով, հողատիրության այդ երկու ձևերն էլ գոյություն են ունեցել իրենց զարգացման տարբեր աստիճաններում: Այնպես որ, ճիշտ չէր լինի անտեսել հողատեր-կալվածատերերի առկայությունը՝ Հայաստանում տիրող ֆեոդալական ֆորմացիայի պայմաններում:

Հենց իրենք՝ խաներն ու փաշաները, հայ մելիքները, էջմիածնի, Տաթևի, Հաղպատ-Սանահինի, Վարագի, Մուշի սուրբ Կարապետի, Նարեկի և մյուս վանքերը հողատեր-կալվածատերեր էին: Նրանք ունեին մեծ քանակությամբ հողեր, այգիներ, արոտավայրեր, անասուններ, անշարժ կայք ու գույք և այլն:

Որպես օրինակ վերցնենք թեկուզ Երևանի խանությունը:

Արևելյան Հայաստանի մի զգալի մասը ընդգրկված էր Երևանի խանության կամ սարդարության մեջ, որը Պարսկաստանի ամենամեծ խանություններից էր: Երևանի խանությունը փաստորեն ֆեոդալական առանձին մի իշխանություն էր:

Եթե Երևանի խանը ամենախոշոր ֆեոդալն էր, ապա քիչ չէին նաև այնպիսի պաշտոնյաները, որոնք նույնպես օգտվում էին կալվածատիրական իրավունքներից, մուլքադարներ կամ թիուլդարներ էին և պատկանում էին բեգական արտոնյալ դասին:

Մուլքը արաբական բառ է, որը մեզ մոտ հիմնականում գործ է ածվել անշարժ գույքի, կալվածքի և բերքի մի մասի, տասանորդի իմաստով: Մուլքադար նշանակում է մուլքի տեր, մուլքային իրավունքից օգտվող: Իսկ թիուլդարների կալվածատիրական իրավունքները ցմահ էին և ոչ թե ժառանգական, ինչպես մուլքադարներինը:

Մուլքն ու թիուլը Երևանի և Նախիջևանի խանություններում ֆեոդալական հողատիրության ձևեր էին: Մուլքն ավելի տարածված էր, քան թիուլը: Կային որոշ շրջաններ, որտեղ մուլք և թիուլ գոյություն չունեին:

Մուլքադարը հանդես էր գալիս որպես հողի սեփականատեր, կալվածատեր: Նա կարող էր իր կալվածքն ամբողջությամբ կամ մաս-մաս վաճառել և նվիրաբերել:

Մուլքն ու մուլքադարությունը ֆեոդալական վերնախավի և գյուղացիության միջև պատմականորեն ստեղծված սոցիալ-տնտեսական, դասային ու դասակարգային հարաբերությունների մի ամբողջ սիստեմ էր: Մուլքն ու մուլքադարությունը, իհարկե, սոսկ պետական ծառայության, պաշտոնի հետ կապված երևույթ չէր և չէր կարող միայն այդպիսին լինել: Այլ խնդիր է, որ առանձին դեպքերում պետական պաշտոնյաներին հաջողվում էր իրենց ծառայությունների դիմաց և այլ ճանապարհներով հող ձեռք բերել և դառնալ հողատեր-կալվածատեր, գյուղացիներից կորզել նրանց ստացած բերքի մի մասը:

Ռուս վիճակագիր Ի. Շոպենի տվյալներով մուլքադարների ու թիուլդարների թիվը Երևանի խանության մեջ կազմում էր 237, Նախիջևանում՝ 150, Օրդուբադում՝ 53, ընդամենը՝ 440 ընտանիք:

Ազնվական դասին պատկանողների թիվը կազմում էր՝ Երևանում 1778 մարդ, Նախիջևանում 976, Օրդուբադում 419, ընդամենը՝ 3173 մարդ կամ ամբողջ բնակչության մոտ 2 տոկոսը: Արտոնյալ դասին պատկանող հոգևորականությունը կազմում էր 3 տոկոսից մի փոքր ավելի, իսկ 90 տոկոսը գյուղացիներ էին:

Տարբեր խանություններում ու փաշայություններում հողօգտագործման ձևերի միջև ևս կային տարբերություններ: Այնպես որ, գյուղացիների իրավական ու տնտեսական դրության ընդհանրության հետ մեկտեղ կային նաև որոշ տարբերություններ:

Գյուղացիությունը, որը կազմում էր բնակչության ճնշող մեծամասնությունը, բաժանվում էր երկու մեծ խմբի՝ պետական-արքունական և կալվածատիրական-մուլքադարական:

XIX դարի 20-ական թվականներին Երևանի խանության 521 գյուղերից 363-ը կամ 70 տոկոսը պատկանում էր արքունիքին, իսկ 158-ը կամ 30 տոկոսը՝ կալվածատերերին (մուլքադարներին, թիուլդարներին ու վանքերին)։ Գյուղացիության մեծ մասն այստեղ բնակվում էր պետական հողերի վրա։

Որոշակի հարաբերություններ գոյություն ունեին պետության, կալվածատերերի ու գյուղական համայնքի միջև։ Օրինակ, պետական և մուլքադարական գյուղերում համայնքը պատասխանատու էր բոլոր հարկերի, տուրքերի ու պարհակների համար։ Պետությունը կամ մուլքադարը չէին խառնվում համայնքի ներքին գործերին։ Նրանք իրավունք չունեին համայնքի այս կամ այն անդամին զրկել հողից։ Նրանք իրենց հասանելիք եկամտի տերն էին։ Հողի, ինչպես և ջրի հարցերը տնօրինում էր գյուղական համայնքը։

Հար և նման փոխհարաբերություններ կային նաև գյուղական համայնքի ու թիուլդարների միջև, չնայած նրան, որ մուլքն ու թիուլը, իրենց ընդհանուր գծերով հանդերձ, տարբեր հասկացողություններ են։

Հետևյալ պատկերն էր ներկայացնում Արևելյան Հայաստանի բնակչության ազգային կազմը։ Ռուսաստանին միանալուց առաջ Հայաստանի արևելյան հատվածում եղած շուրջ 169 հազար բնակիչներից հայերը կազմում էին մոտ 34 տոկոսը, մահմեդականները՝ մոտ 50, քրդերը՝ մոտ 16։

Պարսկական ու թուրքական հետամնաց ֆեոդալական կարգերի տնտեսական, վարչական, ռազմական ամբողջ ծանրությունը ընկած էր հասարակության ամենաբազմամարդ խավի՝ գյուղացիության վրա։

Գյուղացիների վրա էր ծանրացած հարկերի ու տուրքերի մեծ մասը։ Պետական հարկերի մի մասն էլ ընկած էր արհեստավորների ու առևտրականների վրա։

Բացի պետությանը և կալվածատերերին տրվող հիմնական հարկերից՝ բահրայից ու մուլքից, գյուղացիները վճարում էին նաև բազմաթիվ այլ հարկեր՝ գլխահարկ, ծխահարկ, անասնահարկ, արոտահարկ և այլն։ Որոշ տուրքեր գանձվում էին դրամով։ Հայերից, որպես քրիստոնյաների, վերցնում էին նաև հավատի հարկ։ Պարսկական ու թուրքական պաշտոնյաների սանձարձակությունը այնտեղ էր հասնում, որ նրանք գյուղերը շրջագայելիս հաց ուտելու համար հայ գյուղացիներից վերցնում էին ատամի վարձ (դիշ քիրասի)։

Երևանի խանության մեջ գոյություն ունեին մոտ 40 տեսակ հարկեր ու տուրքեր։ Սարդար Հուսեինը գանձում էր տարեկան ավելի քան 653

հազար ռուբլու հարկ, որից 322 հազարը բնամթերքով, 172 հազարը պարհակով, իսկ 159 հազարը դրամով։

Գանձվում էին ավելի քան 20 տեսակ զանազան դրամական հարկեր։ Երևանի քաղաքային բնակիչներից վերցվում էր տարեկան 1724 թուման (Երևանի թումանը հավասար էր 4 ռուբլու), քոչվորներից՝ 8219 թուման (Երևանի թումանը հավասար էր 4 ռուբլու), քոչվորներից՝ 8219 թուման (միայն քրդական գիլանի ցեղը, մոտ 2000 ընտանիք, վճարում էր 4000 թուման), Նովրուզ-Բայրամին (մահմեդական կրոնական տոն)՝ 1320 թուման, զուլուզփուլի (ծառայության վարձ)՝ 1383 թուման, միրաբների համար՝ 320 թուման, գինեգործության համար (միայն հայերից) 680 թուման և զանազան այլ հարկեր, ընդամենը տարեկան ավելի քան 40 հազար թուման։

Խանության մեջ գանձվող հիմնական հարկը բնահարկն էր։ Բոլոր տեսակի հարկերն ու տուրքերը, պարհակները սահմանվում էին ելնելով գյուղացիների իրավական վիճակից և հողային պայմաններից։

Գյուղացիները բաժանված էին հիմնականում երեք կատեգորիայի՝ բահրատու (բահրաքյար), կիսրար (յարիքյար) և ռանչպար։ Ճնշող մեծամասնությունը բահրատու գյուղացիներն էին։ Սրանք ունեին իրենց արտադրամիջոցները, մշակում էին հողը և վճարում բահրա։ Պետությանը պատկանող հողերի վրա ապրող գյուղացիները բահրան ամբողջությամբ վճարում էին պետությանը։ Մուլքադարական հողերի վրա ապրող գյուղացիները մուլքադարին վճարում էին բերքի $^1/_{10}$-ը, որը կոչվում էր մուլք։

Բահրան բնամթերքով տրվող հողային գլխավոր հարկն էր, որը կազմում էր բերքի $^1/_3$ մասը։

Կիսրար կամ յարիքյար կոչվող գյուղացիները լծկան անասուններ, գյուղատնտեսական գործիքներ կամ սերմացու չունեցողներ էին, որոնք այդպիսիք ստանում էին պետությունից կամ կալվածատիրոջից, իրենք մշակում էին հողը և բերքը կիսում։

Ռանչպարները սեփականազուրկ գյուղացիներ էին, որոնք որպես մշակներ մեծ մասամբ աշխատում էին արքունական կամ կալվածատիրական հողերի վրա, արտադրամիջոցները, սերմացուն ստանում էին պետությունից կամ կալվածատիրոջից, մշակում էին հողը և բերքի $^2/_3$-ը տալիս էին տիրոջը, իսկ $^1/_3$-ը մնում էր իրենց։ Հաճախ էր պատահում, որ խաներն ու բեգերը իրենց ռանչպարներին նվիրում էին ուրիշի, բայց գնել կամ վաճառել չէր թույլատրվում։

Բացի հողային գլխավոր հարկից, Երևանի սարդարը գյուղացիներից բնամթերքով վերցնում էր նրանց հնձած խոտի $^1/_5$-ը՝ իր մեծաքանակ հոտերի կերակրման համար կամ անասունները բաշխում էր գյուղերի վրա՝ ձմռանը ձրի պահելու և ապահով վերադարձնելու պայմանով։

Հուսեին խանը գյուղացիներից վերցնում էր տարեկան մի քանի

հազար բեռ փայտ ու ածուխ իր ընտանիքի, գրասենյակի և բերդի կայազորի կարիքների համար, յուրաքանչյուր 100 ոչխարից՝ 2 գլուխ, տարեկան մոտ 10 հազար հավ, 20 հազար ձու, յուղ, պանիր, բուրդ և այլն։

Ժողովրդի համար կատարյալ պատուհաս էր հարկահավաքման ձևը։ Խ. Աբովյանը, Մ. Թաղիադյանը և ուրիշ ականատեսներ պատմում են, թե ինչպես Երևանի խանի հարկահավաքները (սարքյարները) ընկնում էին գյուղերը և բռնագրավում գյուղացիների ունեցվածքը, կահկարասին, անասունները, երբեմն էլ բռնությամբ քաշում-տանում էին կանանց, աղջիկներին ու տղաներին։

Մ. Թաղիադյանը, որը 1819 թվականին եղել է Արտաշատի շրջանի Աղբաշ գյուղում, որպես ականատես գրում է. «Գիւղականք այսպիսի բարեբեր գեղջ, հարկաւ հարստանալ պիտէին, այլ ընդհակառակն յանուրս չքաւորութեան կաշկանդեալ կային։ Վասնզի Յուսէին խան բդէշխն Երևանայ, որպես ամենայն գիւղօրէից աշխարհին, նոյնպէս և ողորմելի բնակչաց սորուն բաժանորդ լինէր ամենայն հերկոց...

Ցանէին նոքա, և ի ժամանակի հնձոցն առաքէր նախ ընդ մէջ կիսէր զկալ նոցա ի բաժին, ապա ի մնացորդացն հատանէր և զհասն արքունի, մինչ զի չմնայր ինչ նոցա և ծախուցն բաւական։ Եթե դէպ լինէր երբեմն երկնառաք պատուհասիւք ստերջանալ անդորէից, և զլանալ ի բերսն, սա զվնասն զանցառութեամբք ժողովրդեան արկեալ, բռնանայր նոցա անպատմելի խժդժութեամբ, առնոյր գրաւէր իւր զոր ինչ ի տունս նոցա գտանէր զկահս և զկարասիս, և ի պակասիլ նոցուն զկանայս և զորդիս նոցա՝ առ ի վճար ընկերական բաժնի իւրում... և ի տանջանաց տառապելոցն հաւաքէր արիւն յարբումն իւր, զաշխարհն համօրէն կեղեքանօքն մաշէր»։

Գյուղացիները կատարում էին նաև կոռ ու բեգար։ Նրանք պարտավոր էին իրենց ընտանիքով ձրի աշխատել խանների ու փաշաների, աշխարհիկ ու հոգևոր ֆեոդալների համար բերդեր, շենքեր, պարիսպներ կառուցել, ճանապարհ շինել, առու հանել և այլն։

Օրինակ, Սարդարապատի բերդը Երևանի վերջին սարդարը կառուցել էր ամբողջապես գյուղացիների կոռի ու բեգարի միջոցով։ Ֆեոդալական այդ պարհակները չափազանց ծանր էին գյուղացիների համար։ «Երևանի խանության գյուղացիները,— ասում է Խ. Աբովյանը,— կոռի ու բեգարի տակ շորացել, շոփ էին դառել»։

Հայաստանում, ինչպես հայտնի է, Ռուսաստանի կամ հարևան Վրաստանի նման ճորտություն չի եղել։ Ճորտության հիմնական, բնորոշ պայմանները՝ գյուղացու ամրացված լինելը հողին, անձնական կախումը կալվածատիրոջից, ճորտացման իրավական, օրենսդրական ակտեր գոյություն չեն ունեցել։ Հայաստանում, ինչպես և Ադրբեջանում,

ֆեոդալական հարաբերությունները եղել են առանց արևմտաեվրոպական կամ ռուսական տիպի ճորտության։

Այս, իհարկե, բնավ չի նշանակում, թե մեզ մոտ գյուղացին կախյալ վիճակում չի գտնվել, ազատ է եղել ֆեոդալական ճնշումից ու շահագործումից։ Ինչպես արդեն ցույց ենք տվել, թուրքական ու պարսկական հարստահարիչները ամենադաժան կերպով ճնշում ու կեղեքում էին գյուղացիությանը։ Թուրք-պարսկական հետամնաց ֆեոդալական կարգերում ամենից ավելի շարքաշ և թշվառ վիճակում էին գտնվում աշխատավոր գյուղացիները։

Ռահաթի այսպես կոչված «ազատությունը» կատարյալ ֆիկցիա էր։ Իրավական տեսակետից ճորտություն չկար, բայց թուրք փաշաներն ու պարսիկ խաները, բոլոր մանր ու մեծ ֆեոդալները գյուղացիներին համարում էին իրենց ճորտերն ու ստրուկները և որքան կամենում շահագործում, կեղեքում էին նրանց։

Եթե հպատակներից որևէ մեկը հանդգնում էր չենթարկվել տիրոջ կամքին, պաշտպանել իր անձն ու պատիվը, ապա նրան անխնա պատժում էին Թուրքիայում և Պարսկաստանում սովորական դարձած բարբարոսական եղանակով՝ կրնկածեծի էին ենթարկում, կտրում լեզուն, քիթը, ականջները, ձեռքերը, հանում աչքերը կամ բերդի պարիսպներից ցած նետում։

Երևանի խանական կարգերը մանրամասն ուսումնասիրող Ի. Շոպենը, խոսելով Երևանի սարդարի գործադրած պատիժների մասին, գրում է. «Գրասենյակային գործավարությունը տարվում էր շատ հասարակ ձևով, չկային ոչ ցուցակներ և ոչ էլ մատյաններ։ Սարդարը լսում էր զեկուցումները կամ բողոքները, ծանոթանում գործի հանգամանքներին և վճիռ արձակում, որը տեղն ու տեղը ի կատար էր ածվում։ Եթե մեղադրյալը պատժի ենթակա էր, ապա սարդարի նշանով ֆառաշները վրա էին պրծնում, և մի ակնթարթում նա արդեն պառկեցված էր մեջքի վրա, երկու ֆառաշ բարձրացնում էին ֆալախկային կապած նրա ոտքերը, իսկ ուրիշ երկուսը մասրենու դալար ճիպոտներով հարվածներ էին հասցնում նրա կրունկներին։ Երբեմն կատաղած սարդարը հրամայում էր թշվառականին լուսամուտից նետել Զանգուն, երբեմն էլ կտրում էին դատապարտյալի ձեռքը, ոտքը, մեկ կամ երկու ականջը, լեզուն, հանում էին մեկ կամ երկու աչքը, և այդ ամենը կատարվում էր կայծակի արագությամբ»։

Ականատեսների վկայությամբ մեղադրյալի աչքերը կուրացնում էին շիկացած երկաթով կամ տուր գործիքով։

Տնտեսական հարստահարություններից ու ճնշումներից բացի հայ ժողովուրդը թուրքական ու պարսկական տիրապետության շրջանում ենթարկվում էր ազգային-կրոնական հալածանքների ու ֆիզիկական

բնաջնջման։ Թուրքիայում ու Պարսկաստանում ինչպես մյուս քրիստոնյա ժողովուրդներից, այնպես էլ հայերից կատարում էին մանկահավաքներ, ծնողներից բռնությամբ խլում էին նրանց գեղեցիկ աղջիկներին՝ սուլթանի ու շահի, փաշաների ու խաների հարեմների համար։

Թուրքիայում ու Պարսկաստանում տիրող ռազմա-ֆեոդալական դեսպոտիզմի պայմաններում, երբ գյուղատնտեսությունը, արհեստներն ու առևտուրը գտնվում էին զարգացման չափազանց ցածր մակարդակի վրա, երկրի ողջ էկոնոմիկան ապրում էր լճացման ու քայքայման պրոցես, հայ ժողովրդի դրությունը գնալով ավելի էր ծանրանում, նրա տնտեսական, քաղաքական և կուլտուրական զարգացումը կանգնում էր փակուղու առջև։

Թուրքական ու պարսկական դաժան լծից ազատագրվելը հայ ժողովրդի համար դառնում էր պատմական առաջնահերթ նշանակություն ունեցող հարց։

II ԳԼՈՒԽ

ԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԻԱՑՈՒՄԸ ՌՈՒՍԱՍՏԱՆԻՆ

1. 1804—1813 ԹԹ. ՌՈՒՍ-ՊԱՐՍԿԱԿԱՆ ԵՎ 1806—1812 ԹԹ. ՌՈՒՍ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐԸ

Քաղաքական իրադրությունը պատերազմի նախօրեին

XIX դարի սկզբներին Անդրկովկասի համար սուր պայքար էր մղվում Ռուսաստանի, Պարսկաստանի, Թուրքիայի, ինչպես և Անգլիայի ու Ֆրանսիայի միջև։

Թուրքիան ու Պարսկաստանը ամեն կերպ ձգտում էին ամրապնդել իրենց տիրապետությունը Անդրկովկասում և զավթել ամբողջ Կովկասը։ Ավելին, օգտվելով Անգլիայի և Ֆրանսիայի պաշտպանությունից, նրանք ագրեսիվ քայլեր էին կատարում Ռուսաստանի դեմ, վտանգ սպառնում նրա հարավ-արևելյան սահմաններին։

Թուրքական և պարսկական զավթիչների ագրեսիվ պլանները հանդիպում էին ոչ միայն կովկասյան ժողովուրդների, այլև նրանց հյուսիսային մեծ հարևանի՝ Ռուսաստանի դիմադրությանը։ Ռուսաստանը միակ մեծ տերությունն էր, որն ի վիճակի էր և շահագրգռված դիմադրելու Թուրքիային ու Պարսկաստանին և դրանով իսկ օբյեկտիվորեն նպաստելու կովկասյան ժողովուրդների պայքարին։

Ցարական Ռուսաստանը, ելնելով իր տնտեսական և քաղաքական շահերից, ձգտում էր ոչ միայն ապահովել իր հարավ-արևելյան սահմանները, այլև ընդարձակել դրանք, Թուրքիային և Պարսկաստանին դուրս մղել Անդրկովկասից, ազատ ելք ունենալ Սև ծովից, նոր շուկաներ ձեռք բերել և այլն։

Անգլո-ֆրանսիական գաղութարարներն աշխատում էին իրենց ազդեցության տակ գցել Մերձավոր արևելքը, Թուրքիային ու Պարսկաստանին լարել Ռուսաստանի դեմ, փակել նրա առաջ Սև ծովի դռները, թույլ չտալ, որպեսզի Անդրկովկասը միանա Ռուսաստանին, իրենց առևտրական մենաշնորհը հաստատել Արևելքի շուկաներում և այլն։

Մերձավոր արևելքում սուր կերպով բախվում էին նաև Անգլիայի ու Ֆրանսիայի շահերը։ Սրանցից ամեն մեկն աշխատում էր ինքը տիրել Արևելքի շուկաները, իր ազդեցության տակ գցել Մերձավոր արևելքը։

Միջազգային հարաբերությունների այդօրինակ լարված պայմաններում էր տեղի ունենում Անդրկովկասի միացումը Ռուսաստանին։

Դեռևս վաղ ժամանակներից Անդրկովկասի ժողովուրդները թուրք-պարսկական լծից ազատագրվելու իրենց հույսերը կապել էին Ռուսաստանի օգնության հետ. նրանց համակրանքը բոլոր դեպքերում Ռուսաստանի կողմն էր։ XVIII դարի վերջերին և XIX դարի սկզբներին, երբ Ռուսաստանը վճռական քայլերի դիմեց Անդրկովկասի միացման համար, և ռուսական զորքերը մտան Անդրկովկաս, հայերը, վրացիները, ադրբեջանցիները ոտքի կանգնեցին պարսիկ խաների ու թուրք փաշաների դարավոր լուծը թոթափելու համար։

1801 թվականին Արևելյան Վրաստանը միացավ Ռուսաստանին։ 1803 թվականին Ռուսաստանին միացան Մեգրելիան, 1804 թվականին՝ Իմերեթիան և Գուրիան, իսկ 1810 թվականին՝ Աբխազիան։

Եղբայրական վրաց ժողովրդի հետ Ռուսաստանի տիրապետության տակ են անցնում նաև Վրաստանում և Լոռի-Փամբակի, Ղազախի ու Շամշադինի շրջաններում ապրող հայերը։

Արևելյան Վրաստանի միացումը Ռուսաստանին խոշոր նշանակություն ունեցավ ինչպես վրաց ժողովրդի, այնպես էլ հայերի ու ադրբեջանցիների համար։ Հայ ժողովրդի ազատագրական պայքարը թուրք-պարսկական զավթիչների դեմ ստացավ նոր թափ, Հայաստանի միացումը Ռուսաստանին դարձավ հերթական հարց։

Ռուս-պարսկական պատերազմը. ռուսական զորքերի առաջին արշավանքը Երևանի վրա

Վրաստանի միացումը Ռուսաստանին տեղի ունեցավ խաղաղ ճանապարհով, բայց դա այնքան արեց ռուս-պարսկական հարաբերությունները, որ շուտով պատերազմ սկսվեց Ռուսաստանի և Պարսկաստանի միջև։

1804 թ. հունվարին ռուսական զորքերը գեներալ Ցիցիանովի հրամանատարությամբ հարձակվում են Գյանջայի խանության վրա։ Գյան-

ջայի Ջավադ խանը կատաղի դիմադրություն է ցույց տալիս։ Արյունա-հեղ մարտերից հետո ռուսական զորքերը հունվարի 3-ին գրավում են Գյանջան կամ Գանձակը (այժմ Կիրովաբադ)։ Գանձակի հայ բնակիչ-ները մեծ օգնություն են ցույց տալիս ռուսական զորքերին։

1804 թ. մայիսին ռուսական զորքերն արշավում են Երևանի վրա։ Երևանի Մահմադ խանը, իր թիկունքն ապահովելու համար, 1804 թ. գարնանը բռնությամբ հավաքում է մոտ 20 հազար հայերի և քշում դեպի Կարսի փաշայությունը։ Ախուրյան գետի մոտ հայերը կռվի բռնվելով խանի զորքերի հետ, Շիրակ մտած ռուսական առաջապահ զորամասի օգնությամբ ազատագրվում են պարսկական գերությունից և անցնում Լոռի-Փամբակ՝ ռուսական տիրապետության տակ։

Հունիսի 12-ին ռուսական զորքերը գրավում են Գյումրին (այժմ Լենինական) և շարժվում դեպի Երևան։ Հունիսի 19-ին նրանք հասնում են Էջմիածին։

Պարսկական թագաժառանգ Աբբաս-Միրզան, որը 20 հազարանոց հեծելազորով օգնության էր եկել Երևանի խանին, Էջմիածնի մոտ հունիսի 20-ին հարձակվում է Ցիցիանովի մոտ 5 հազարանոց զորամասի վրա՝ նպատակ ունենալով գլխովին ջախջախել նրան։ Սակայն, չնայած իրենց թվական գերակշռությանը, պարսիկները ծանր պարտություն են կրում և նահանջում դեպի Երևան։

1804 թ. հունիս-հուլիս ամիսներին պատերազմական գործողու-թյունները շարունակվում են Երևանի շրջակայքում։ Հունիսի 30-ին Երևանի մոտ տեղի ունեցած մարտերում ռուսական զորքերը ջարդում և փախուստի են մատնում հակառակորդին։

Հուլիսի սկզբներին, երբ ռուսական զորքերն սկսում են պաշարել Երևանի բերդը, Աբբաս-Միրզան և նրան օգնության եկած Ֆաթ-Ալի շահը Գառնիչայի (Ազատ գետի) կողմից միացյալ ուժերով հարձակվում են նրանց վրա։ Հուլիսի 15-ին կատաղի մարտեր են տեղի ունենում։ Պարսիկները, չնայած իրենց թվական գերակշռությանը, չեն դիմանում ռուսների գրոհներին, նահանջում են՝ մարտի դաշտում թողնելով մեծ քանակությամբ սպանվածներ ու վիրավորներ։

Այս հաղթանակներից հետո 1804 թ. հուլիսի 24-ին ռուսական զորքերը սկսում են գրոհել Երևանի բերդի վրա։ Այստեղ նրանց ուժեղ դիմադրություն է ցույց տալիս կայազորը, որն ուներ 7000 զինվոր և 60 հրանոթ։

Բերդի գրավումը ձգձգվում է. Ցիցիանովը՝ հաշվի առնելով սննդա-մթերքի ու ռազմամթերքի պակասությունը, զորքի մեջ տարածված ջերմախտը, Վրաստանի որոշ շրջաններում ծագած ապստամբություն-ների ծավալման վտանգը, սեպտեմբերի 2-ին թողնում է Երևանը և վե-րադառնում Թիֆլիս։

Այսպիսով, ռուսական զորքերի առաջին արշավանքը Երևանի վրա հաջողություն չի ունենում։

Հայերը մեծ հույսեր էին կապում այս արշավանքի հետ և ամեն կերպ օգնում էին ռուսական զորքերին։ Պարսիկների դեմ մղած մար-տերում իրենց քաջագործություններով առանձնապես աչքի ընկան Գրիգոր Մանուչարյանը՝ իր հեծյալ ջոկատով, և մելիք Աբովի որդի Ռոստոմը, որին գերի վերցրին և գլխատեցին Թավրիզում։

Երևանի բերդի պաշարման ժամանակ հայերը բերդի ներսից գաղտնի կապեր էին հաստատել ռուսական հրամանատարության հետ և կատարում էին զանազան առաջադրանքներ, կարևոր տեղեկություն-ներ հաղորդում հակառակորդի մասին։ Այդ խիզախներից մի քանիսին, որոնց անունները մնացել են անհայտ, պարսիկները բռնում և կախա-դան են բարձրացնում։

Հայերի համար առանձնապես ծանր դրություն է ստեղծվում ռու-սական զորքերի վերադարձից հետո։ Պարսկական կառավարությունը և Երևանի խանը սկսում են դաժան դատաստան տեսնել նրանց հետ։ Բազմաթիվ մարդկանց բանտարկում, լցնում են Երևանի բերդը, խոշ-տանգում ու դատապարտում մահվան։

Երևանի բնակիչներ Գաբրիել յուզբաշին ու մելիք Աբրահամը գե-ներալ Ցիցիանովին գրած իրենց մի խնդրագրի մեջ պատմում են, թե ինչպես ռուսական զորքերի նահանջից հետո Երևանի խանը դաժան դատաստան էր տեսնում հայերի հետ։ «Պարսիկները չորս հայ ընտա-նիքի բերեցին խանի մոտ,— գրում են նրանք,— որն առանց որևէ քննության հրամայեց կտրել մարդկանց գլուխները, իսկ ընտանիքնե-րին հանձնել գերության... Երևանի բերդի մոտ խղճալի վիճակում ապ-րում են ավելի քան 500 ընտանիք հայեր, արտասվալից խնդրում ենք՝ փրկեցեք նրանց ծայրահեղ դրությունից»։

Երևանի հայ և ադրբեջանցի բնակիչները 1805 թվականին գրած մի դիմումի մեջ, նկարագրելով իրենց ծանր դրությունը, ասում են. «Եթե թղթի վրա գրելու լինենք այն ճնշումները, որ մենք տանում ենք, ապա ոչ թուղթ կմնա և ոչ էլ թանաք»։ Երևանի խանության մեջ ապ-րող հայերից շատերը պարսկական դաժան ճնշումներից ազատագըր-վելու համար փախչում, անցնում էին ռուսական տիրապետության տակ։

Շիրակի հայերը ևս, չկարողանալով տանել Երևանի խանի ճնշում-ները, քանիցս դիմում են ռուսական սահմանապահ զորամասերի օգ-նությանը, ցանկություն հայտնում անցնելու Ռուսաստանի տիրապե-տության տակ։

Ընդառաջ գնալով Շիրակի բնակչության ցանկությանը, ռուսական զորքերը 1805 թ. մարտին Ղարաքիլիսայից մտնում են Շորագյալ և

գրավում Արթիկը։ Մահմադ խանը 3000 զինվորներով հարձակվում է Արթիկի վրա, բայց հանդիպելով ուժեղ դիմադրության, նահանջում է դեպի Երևան։

Այսպիսով, 1805 թ. մարտից Շորագյալի սուլթանությունը (Շիրակը այդպես էր կոչվում մինչև Ռուսաստանին միանալը) անցնում է Ռուսաստանի տիրապետության տակ։ Հոկտեմբերի 25-ին Ելիզավետպոլում Ցիցիանովը Բուդաղ-սուլթանի հետ պայմանագիր է կնքում, որի համաձայն Շիրակը մեկընդմիշտ միանում է Ռուսաստանին։

Շիրակի միացումը Ռուսաստանին մեծ նշանակություն ունեցավ տեղական բնակչության համար։ Որոշ չափով ամրապնդվեցին նաև ռուսական զորամասերի ռազմա-ստրատեգիական դիրքերը Թուրքիայի ու Պարսկաստանի սահմանագլխում։

1805—1806 թվականներին պատմական կարևոր իրադարձություններ են տեղի ունենում նաև Անդրկովկասի մյուս խանություններում։ 1805 թ. մայիսին Ղարաբաղը միանում է Ռուսաստանին։ Ղարաբաղի հետ միասին Ռուսաստանին են միանում նաև Զանգեզուրի, Ղափանի և Մեղրու շրջանները։ 1805 թվականի ամռանը Աբբաս-Միրզան մեծ բանակով հարձակվում է Ղարաբաղի վրա։ Ռուսական փոքրաթիվ զորքերը, հայերի ու ադրբեջանցիների հետ միասին, համառ դիմադրություն են ցույց տալիս պարսկական զավթիչներին։ Հակառակորդը պաշարում է Շուշիի բերդը, բայց չի կարողանում գրավել։

Այս կռիվների ժամանակ առանձնապես աչքի է ընկնում գնդապետ Կարյագինի ջոկատը։ Խիզախ հրամանատարը 400 մարտիկներով ճեղքում է թշնամու 15 հազարանոց զորամասի օղակը և դուրս գալիս շրջապատումից։ Նրան մեծ օգնություն են ցույց տալիս տեղի հայերը մելիք Վանիի գլխավորությամբ։ Ղարաբաղը գրավելու Աբբաս-Միրզայի պլանները ձախողվում են՝ հանդիպելով ռուսական զորքերի, հայերի ու ադրբեջանցիների միահամուռ դիմադրությանը։

Ղարաբաղից հետո 1805 թվականին Ռուսաստանին են միանում Շաքիի և Շիրվանի, իսկ 1806 թվականին՝ Բաքվի ու Դերբենդի խանությունները։

Ադրբեջանի միացումը Ռուսաստանին պրոգրեսիվ խոշոր նշանակություն ունեցավ ադրբեջանական ժողովրդի համար։ Այդ ակտը է՛լ ավելի ամրապնդեց Ռուսաստանի դիրքերը Անդրկովկասում և նոր նախադրյալներ ստեղծեց Հայաստանի միացման համար։

Ռուս-թուրքական պատերազմը

1806 թ. դեկտեմբերին Թուրքիան Ֆրանսիայի կայսր Նապոլեոնի դրդումով պատերազմ է սկսում Ռուսաստանի դեմ։ Ֆրանսիան, ինչպես և Անգլիան, զենք և ռազմամթերք էին մատակարարում Թուրքիային ու Պարսկաստանին, ամեն կերպ ձգտում էին թուրք-պարսկական ադրե-

սիվ բլոկ ստեղծել Ռուսաստանի դեմ։ Նապոլեոնը թուրքական զավթիչների ախորժակը գրգռում էր՝ նրանց խոստանալով Ղրիմն ու Կովկասը։

1806—1812 թթ. թուրքերը Կարսի, Ախալքալաքի, Ախալցխայի և Փոթիի շրջաններում բազմաթիվ հարձակումներ են գործում ռուսական զորքերի վրա, բայց հաջողություն չեն ունենում։

1807 թ. մայիսի 30-ին թուրքական սերասկյար (գլխավոր հրամանատար) Յուսուֆ փաշան 10 հազար զինվորներով և 20 հրանոթով հարձակվում է Գյումրիի վրա։ Ռուսական զորքերը, գեներալ-մայոր Նեսվետաևի հրամանատարությամբ, համառ մարտերից հետո հարկադրում են հակառակորդին նահանջել։

Յուսուֆ փաշան, համալրելով իր զորքերը, հունիսի 5-ին նորից է հարձակվում Գյումրիի վրա։ Թուրքական 20 հրանոթ ռմբակոծում են Գյումրին, սրան հաջորդում են հեծելազորի գրոհները։ Թուրքերը ներխուժում են գյուղ, բայց գրավել չեն կարողանում։

Կովկասյան գրենադերական գնդի քաջարի զինվորները 8 ժամ տևող համառ մարտերից հետո թշնամուն քշում են Ախուրյան գետի մյուս ափը։ Այս մարտերի ժամանակ Յուսուֆ փաշան կորցնում է իր սեփական դրոշակը և ավելի քան 200 զինվոր։

Հունիսի 8-ին իր բանակով Գյումրի է գալիս Կովկասյան զորքերի գլխավոր հրամանատար գեներալ Գուդովիչը։ 1807 թ. հունիսի 18-ին Ախուրյանի մոտ տեղի է ունենում ուժեղ ճակատամարտ։ 7 ժամ շարունակ երկու կողմերն էլ լարված մարտեր էին մղում՝ հետևակի, հեծելազորի ու հրետանու մասնակցությամբ։ Թուրքերը, չնայած իրենց թվական գերակշռությանը, չդիմանալով ռուսների հարվածներին, խուճապահար փախչում են դեպի Կարս, մարտի դաշտում թողնելով ավելի քան 1000 սպանված, 23 հրանոթ և մեծ քանակությամբ ռազմամթերք։ Յուսուֆ փաշան, չհասցնելով ձի նստել, փախչում է ոտքով և հազիվ ազատվում գերի ընկնելուց։

Ռուսական զորքերի երկրորդ արշավանքը Երևանի վրա

1808 թ. սեպտեմբերի 3-ին ռուսական զորքերը (7746 մարդ) գեներալ Գուդովիչի հրամանատարությամբ Փամբակի վրայով մտնում են Երևանի խանության սահմանը։ Մինչև Աշտարակ ռուսական զորքերը ոչ մի դիմադրության չեն հանդիպում։ Երևանի խանի հեծելազորը նահանջում էր՝ այրելով հայկական գյուղերը, արտաքսելով բնակիչներին։ Սեպտեմբերի 29-ին նրանք Աշտարակի մոտ միայն փորձեցին դիմադրել, բայց պարտություն կրեցին և փախան Երևան։ Սեպտեմբերի 30-ին ռուսական զորքերը գրավում են Էջմիածինը, իսկ հոկտեմբերի սկզբներին պաշարում են Երևանի բերդը։

Գուդովիչի կարգադրությամբ միաժամանակ Ղարաբաղից Նախիջևանի խանության վրա է հարձակվում գեներալ-մայոր Նեբոլսինի 3

հաղարանոց ջոկատը։ Հոկտեմբերի 28-ին Կարաբաբայի մոտ կռվի բռնվելով Աբբաս-Միրզայի բանակի հետ, ռուսները փախուստի են մատնում հակառակորդին և նոյեմբերի 1-ին գրավում Նախիջևանը։

Այսպիսով, Երևանի գրավման համար ստեղծվում են ավելի նպաստավոր պայմաններ, քան առաջին արշավանքի ժամանակ։ Բայց Գուդովիչը հապաղում է օգտագործել այդ մոմենտը, չի գրոհում բերդի վրա, հույս ունենալով, թե Երևանի խանը առանց կռվի կհանձնի այն։

Շուտով պարզվում է, որ Երևանի խանը բնավ մտադիր չէ առանց կռվի հանձնել բերդը։ Շահի և ֆրանսիական դեսպան Գարդանի կողմից նրան հայտնել էին, որ Ֆրանսիայի պահանջով ռուսական զորքերը հեռանալու են ոչ միայն Երևանի ու Նախիջևանի խանություններից, այլև ամբողջ Կովկասից։

Այդ շրջանում ռուս-պարսկական և ռուս-թուրքական պատերազմների գլխավոր հրահրողը Ֆրանսիան էր։ Դեռևս 1807 թ. հունվարին Նապոլեոնն առաջարկում էր Ֆրանսիայի, Թուրքիայի և Պարսկաստանի ռազմական բլոկ կնքել Ռուսաստանի դեմ։ 1807 թ. մայիսին Լեհաստանի Ֆինկենշտեյն ամրոցում կնքվում է ֆրանս-պարսկական պայմանագիրը, որն ուղղված էր ինչպես Ռուսաստանի, այնպես էլ Անգլիայի դեմ։

Այդ պայմանագրով Նապոլեոնը խոստանում էր Պարսկաստանին վերադարձնել Անդրկովկասից Ռուսաստանին միացված բոլոր տերիտորիաները (այդ թվում և Վրաստանը), հրանոթներ, հրացաններ, ռազմամթերք, զինվորական մասնագետներ ուղարկել Պարսկաստան և այլն։ «Եռանդուն կերպով գրոհիր քո հակառակորդի վրա, որին ես ուժասպառ եմ արել,— գրում է Նապոլեոնը Ֆաթ-Ալի շահին ուղարկած նամակում։ Վերցրու նրանից Վրաստանը և այն բոլոր գավառները, որոնք մտնում էին քո կայսրության մեջ և փակիր նրա առաջ Կասպիական դուռը»։

Նապոլեոնի կարգադրությամբ 1807 թվականին ֆրանսիական և թուրքական երկու ռազմական միսիա է մեկնում Թեհրան՝ պարսկական բանակը վերակազմելու և վերազինելու նպատակով։ Նրանք միաժամանակ պետք է կոորդինացնեին Թուրքիայի ու Պարսկաստանի պատերազմական գործողությունները Ռուսաստանի դեմ։

1807 թվականին Նապոլեոնը իր համհարզ գեներալ Գարդանի գլխավորությամբ 70 սպաներից և դիվանագիտական աշխատողներից կազմված հատուկ դեսպանություն է ուղարկում Պարսկաստան։ Նա խոստանում է շահի տրամադրության տակ դնել 10 հազար հրացան, հրանոթներ, հրետանավորներ, 1500 հոգուց կազմված ջոկատ, դիվերսիա կազմակերպել Ռուսաստանի դեմ և այլն։ Պատահական չէ, որ

Վ. Ի. Լենինը գեներալ Գարդանի դեսպանությունը անվանել է «Նապոլեոն առաջինի զինվորական միսիան Պարսկաստանում»։

Ստանալով Երևանի բերդի կայազորի հրամանատար Հասան խանի (սարդար Հոսեինի փոքր եղբոր) կտրական մերժումը, Գուդովիչը ուշացած հրամայում է իր զորքերին անցնել գրոհի։

1808 թ. նոյեմբերի 17-ին վաղ առավոտյան ռուսական զորքերը՝ մոտ 3000 հոգի, չորս շարասյունով գրոհում են Երևանի բերդի վրա։ Կայազորը հրետանային և հրաձգային ուժեղ կրակով ետ է մղում ռուսներին՝ զգալի կորուստներ պատճառելով նրանց։ Դրությունը չի փոխում ռուս զինվորների ցուցաբերած բացառիկ արիությունը, երբ նրանք նույնիսկ բռնցքամարտերի էին դիմում բերդը գրավելու համար։

Երևանի վրա կատարած գրոհների ժամանակ Գուդովիչը տեսնում է, որ բերդն ամրացված է եվրոպական ռազմական կանոններով՝ ֆրանսիական զինվորական ինժեներների ղեկավարությամբ։

Բացի այդ, Երևանի մոտ նրան ներկայանում է Պարսկաստանի ֆրանսիական դեսպան գեներալ Գարդանի քարտուղար Լեժարը և առաջարկում՝ դադարեցնել պատերազմական գործողությունները և զորքերը դուրս բերել Երևանի խանությունից։ Գուդովիչը մերժում է այդ առաջարկը և պահանջում, որ Ֆրանսիան խրև Ռուսաստանի դաշնակից կատարի իր դաշնակցային պարտքը։

Երևանի բերդի պատերի տակ կրած անհաջողությունը, վերահասած ձմեռը, ճանապարհները փակվելու վտանգը, սննդամթերքի ու ռազմամթերքի փոխադրումների դժվարությունները հարկադրում են Գուդովիչին նոյեմբերի 30-ին թողնել Երևանը և վերադառնալ Վրաստան։ Դեկտեմբերի 1-ին Նախիջևանից Ղարաբաղ է վերադառնում նաև Նեբոլսինի զորամասը։

Այսպիսով, Երևանի գրավման երկրորդ փորձը ևս հաջողություն չի ունենում։

Բուխարեստի և Գյուլիստանի պայմանագրերը

Ռուս-պարսկական և ռուս-թուրքական պատերազմները մղվում էին միջազգային լարված իրադրության պայմաններում։ Նապոլեոնի աշխարհակալական ձգտումները և Անգլիայի գաղութային քաղաքականությունը կաշկանդում էին Ռուսաստանին ինչպես Արևմուտքում, այնպես էլ Արևելքում։

Անդրկովկասում ևս ռուսական զենքի հաղթանակին մեծապես վնասում էին Անգլիան ու Ֆրանսիան։ Նրանք ամբողջ պատերազմի ընթացքում գաղտնի և ակնհայտ օգնում էին Թուրքիային և Պարսկաստանին, ամեն կերպ աշխատում էին ձախողել Անդրկովկասի միացումը Ռուսաստանին։

Տիլզիտի պայմանագրից և հատկապես Նապոլեոնի ջախջախումից

հետո Ռուսաստանի դեմ Մերձավոր արևելքում և Անդրկովկասում ակտիվ գործողություններ է անցնում Անգլիան։

1810 թվականին Անգլիան Պարսկաստանին տալիս է մոտ 20 հազար հրացան։ 1811 թվականին Անգլիան Պարսկաստանին խոստացած 200 հազար թուման (2 միլիոն ռուբլի) վարկի դիմաց տալիս է 12 հրանոթ, 12 հազար լեցք, 12 հազար հրացան և մահուդ՝ 12 հազար մարդու զինտավորման համար։ Անգլիական գործակալները խռովություններ էին կազմակերպում, խաներին ոտքի հանում Ռուսաստանի դեմ։

1807 թվականի ֆրանս-պարսկական, 1809 թվականի անգլո-պարսկական, 1810 թվականին Անգլիայի միջնորդությամբ կնքված թուրք-պարսկական պայմանագրերը Ռուսաստանի և Անդրկովկասի ժողովուրդների դեմ ուղղված ագրեսիվ ակտեր էին։

Միջազգային նմանօրինակ անլսելի պայմաններում Ռուսաստանն այնուամենայնիվ կարողացավ հաղթանակով դուրս գալ ինչպես ռուս-պարսկական, այնպես էլ ռուս-թուրքական պատերազմներից։

1812 թ. մայիսի 16-ին ռուս նշանավոր զորավար Կուտուզովին հաջողվում է հայտնի հայ դիվանագետ Մանուկ բեյի օժանդակությամբ Բուխարեստում կնքել հաշտության պայմանագիր, որով ավարտվում է ռուս-թուրքական պատերազմը։

Բուխարեստի պայմանագրով Ռուսաստանին է անցնում Բեսարաբիան, Աբխազիան, Մեգրելիան և Գուրիան։ Անապան, Փոթին և Ախալքալաքը վերադարձվում են Թուրքիային։

Բուխարեստի պայմանագիրը Ռուսաստանին հնարավորություն տվեց ապահովելու թուրքական սահմանը և զորքեր կենտրոնացնելու Նապոլեոնի, իսկ Անդրկովկասում՝ Պարսկաստանի դեմ։

Ավելի նպաստավոր պայմանագիր կնքվեց Պարսկաստանի հետ։

1812 թվականի հայրենական պատերազմի ծանր շրջանում պարսկական զորքերը հարձակման անցնելով ցանկանում էին ջարդել ռուսներին և վերստին գրավել իրենց կորցրած տերիտորիաները։ Սակայն նրանց բոլոր փորձերը, հանդիպելով ռուս փոքրաթիվ զորամասերի և Անդրկովկասի ժողովուրդների համատեղ դիմադրությանը, ապարդյուն անցան։

Հայրենական պատերազմում ռուս ժողովրդի տարած պատմական հաղթանակը, Ասլանդուզի, Լենքորանի և Մեղրու ճակատամարտերում պարսկական զորքերի կրած ծանր պարտությունները Ֆաթ-Ալի շահին հարկադրում են հաշտություն խնդրել։

1813 թ. հոկտեմբերի 12-ին Գյուլիստանում (հայկական գյուղ Ղարաբաղում) կնքվում է ռուս-պարսկական հաշտության պայմանագիրը։

Այդ պայմանագրով Պարսկաստանը մեկընդմիշտ հրաժարվում է

Արևելյան Վրաստանից, Լոռու և Շամշադինի շրջաններից, Գյանջայի, Ղարաբաղի, Շաքիի, Շիրվանի, Բաքվի, Կուբայի, Դերբենդի, Թալիշի խանություններից և Դաղստանից։ Գյուլիստանի պայմանագիրը նպաստեց նաև ռուս-պարսկական առևտրի զարգացմանը։

Այսպիսով, XIX դարի սկզբին Լոռու, Ղազախի, Շամշադինի, Ղարաբաղի, Իջևանի, Շիրակի, Զանգեզուրի և Ղափանի հայաբնակ շրջանները, եղբայրական Վրաստանի ու Ադրբեջանի հետ միասին, մեկընդմիշտ ազատագրվում են շահական Պարսկաստանի լծից և միանում Ռուսաստանին։

Հայաստանի մեծ մասում հայ ժողովուրդը մնում էր պարսիկ խաների ու թուրք փաշաների ծանր լծի տակ և շարունակում պայքարել իր ազատության համար՝ հույսը դնելով Ռուսաստանի օգնության վրա։

1813 հոկտ. 12
1826 սեպտ./հոկ.

2. 1826—1828 ԹԹ. ՌՈՒՍ-ՊԱՐՍԿԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ

Պարսկական զորքերի ներխուժումը Անդրկովկաս, հայերի ազատագրական կռիվները

Գյուլիստանի պայմանագրով, ինչպես տեսանք, ավարտվեց ռուս-պարսկական պատերազմը, բայց կայուն խաղաղություն չստեղծվեց երկու երկրների միջև։ Պարսկաստանը ձգտում էր ետ խլել իր կորցրած տերիտորիաները և լծի տակ պահել Անդրկովկասի ժողովուրդներին։ Ռուսաստանը ցանկանում էր իր դիրքերն ամրապնդել Կովկասում և Մերձավոր արևելքում։

Նապոլեոնի պարտությունից հետո Անգլիան սկսել էր ավելի ակտիվ գործել Մերձավոր արևելքում։ Նա թնդանոթներ, ռազմամթերք և զենք էր մատակարարում Պարսկաստանին ու Թուրքիային, ինչպես Կ. Մարքսն է նշել, հակայական գումարներ էր ծախսում Պարսկաստանում և կաշառում էր՝ սկսած շահից մինչև ուղտապան։

1817 թվականին անգլիական դիվանագետների խորհրդով պարսկական շահը հատուկ ներկայացուցիչ է ուղարկում Կոստանդնուպոլիս և սուլթանին առաջարկում է ռազմական դաշինք կնքել՝ միացյալ ուժերով Ռուսաստանի դեմ կռվելու համար։ Անգլիական գործակալները թուրքական և պարսկական լրտեսների հետ քայքայիչ աշխատանք էին կատարում նաև Անդրկովկասում և լեռնային ժողովուրդների մեջ։

Դեկաբրիստների հայտնի ապստամբությունից հետո անգլիական գործակալները Պարսկաստանում լուրեր էին տարածում, թե Ռուսաստանում տեղի են ունենում գահակալական կռիվներ, զորքի մեջ խռովություններ են սկսվել և ամենահարմար ժամանակն է Անդրկովկասից վտարելու ռուսներին։ Պարսկաստանը տենդորեն պատրաստվում էր պատերազմի։

Անգլիայի դրդումով, խախտելով Գյուլիստանի պայմանագիրը, Աբ-

բաս-Միրզան առանց պատերազմ հայտարարելու 1826 թ. հուլիսի 16-ին 60 հազարանոց բանակով ներխուժում է Ղարաբաղ։

Կոտորելով սահմանապահ զինվորներին, ավերելով ու հրկիզելով հայկական գյուղերը, պարսկական զորքերը հուլիսի 26-ին պաշարում են Շուշու բերդը։ Այստեղ նրանց ուժեղ դիմադրություն են ցույց տալիս ռուսական փոքրաթիվ կայազորը և բերդում ապաստան գտած հայ բնակիչները։ Չկարողանալով գրավել Շուշին, պարսիկներն այն թողնում են պաշարված վիճակում և արշավում դեպի Թիֆլիս։

Աբբաս-Միրզայի ներխուժումը Անդրկովկաս ոտքի է հանում խաներին ու բեկերին։ Երևանի խանի զորքերը հարձակվում են Շիրակի ու Փամբակի վրա։ Սկսվում է ռուս-պարսկական երկրորդ պատերազմը։

Պարսկական զորքերի հարձակումը չափազանց ծանր դրություն է ստեղծում հայերի համար։ Երևանի Հուսեին խանը, մանավանդ նրա արյունարբու եղբայր Հասան խանը, ինչպես Աբովյանն է ասում, կրակ գցել վառում էին հայ ժողովրդին։ «Ով էս սհաթը Երևան է մտել,— գրում է Աբովյանը,— հենց կիմանար, թե ջրհեղեղը նոր ա եկել, աշխարհս քանդել։ Ապարանը դառել էր դասապխանա։ Օր չէր ըլում, որ սարից, շոլից մարդ չի բռնեն ու Հասան խանի առաջը չբերեն։ Առանց մարդ սպանելու մեկ օր աչք չէր կպցնում»։ Ժողովրդի մեջ սարսափ էր տարածվել, թե Երևանի խանը իր մորուքի մազերի չափ մարդ է սպանել։

Ստեղծված օրհասական վտանգից փրկվելու իրենց բոլոր հույսերը Ռուսաստանի հետ կապելով, հայերը միահամուռ կերպով ոտքի են կանգնում և ռուս զորքերի հետ միացած մարտնչում թշնամու դեմ։

«Պարսկական զորքերի մեր սահմանները ներխուժելու հենց սկզբում, վկայում է Թիֆլիսի զինվորական նահանգապետ գեներալ Սիպյագինը, հայերը թշնամու դեմ աչքի ընկան իրենց անվախությամբ, դժբախտություններին դիմանալու անխախտելի կայունությամբ և Ռուսաստանի հանդեպ ունեցած օրինակելի հավատարմությամբ»։ Մի այլ տեղ նա ասում է. «Հայ ժողովրդի նվիրվածությունը Ռուսաստանին անխախտելի է։ Պարսիկների ներխուժման դեմ, ընդհանուր պաշտպանության մեջ առաջինը հայերը օրինակ ցույց տվեցին»։

Հերոսական պայքարի օրինակ են տալիս հատկապես Ղարաբաղի և Շիրակի հայերը։

Շուշու պաշտպանությունը

Պարսկական զորքերի հանկարծակի ներխուժումը Ղարաբաղ ծանր դրություն է ստեղծում այնտեղ գտնվող ռուսական փոքրաթիվ զորամասերի համար։ Գորիսում փոխգնդապետ Նազիմկայի հրամանատարության տակ եղած զորամասը (մոտ 1000 հոգի) հրաման է ստանում՝ միանալ գնդապետ Ռեուտի 42-րդ եղերական գնդին։ Ճանապարհին, Հագարու գետի մոտ, պարսկական զորքերը շրջապատում են Նազիմկայի ջոկատը, մի մասին գաղանաբար կոտորում, մնացածներին գերի վերցնում։

Գնդապետ Ռեուտն իր զորամասով (մոտ 1700 հոգի, 4 հրանոթ) ամրանում է Շուշու բերդում։ Շուշիում են կենտրոնանում նաև Ղարաբաղի հայ գյուղերի բնակիչներից շատերը՝ իրենց ընտանիքներով, պաշարով, անասուններով։ Գնդապետ Ռեուտը զինում է 1500 ղարաբաղցի հայ գյուղացիների, որոնք ռուս զինվորների հետ կանգնում են կրակի առաջին գծում։

Հուլիսի 26-ին պաշարելով Շուշին, Աբբաս-Միրզան հաջորդ օրը առաջարկում է Ռեուտին հանձնվել, խոստանալով թույլ տալ Թիֆլիս գնալու։ Ռեուտը պատասխանում է, որ առանց գլխավոր հրամանատարի կարգադրության Շուշին թողնել չի կարող։

Մերժում ստանալով, պարսկական զորքերը մի քանի անգամ հարձակումներ են գործում Շուշու բերդի վրա, բայց ոչ մի հաջողություն չեն ունենում։ Ի դեպ, պարսիկները Շուշին ռմբակոծում էին անգլիական հրանոթներով ու անգլիացի տպայի ղեկավարությամբ։

Աբբաս-Միրզայի գլխավոր նպատակը Թիֆլիսի գրավումն էր, ուստի նա չէր ցանկանում իր ուժերը ծախսել Շուշու գրավման վրա։ Այդ պատճառով նա կրկին բանակցություններ է մտնում Ռեուտի հետ և նույնիսկ 10 օրով զինադադար կնքում, մինչև որ Երմոլովից կարգադրություն ստացվեր Շուշին թողնելու մասին։

Սակայն դրան հակառակ, Ռեուտը գաղտնի ստանում է Երմոլովի հետևյալ հրամանը. «Պաշտպանվեցեք մինչև վերջին մարդը, գլխով և պատվով պատասխանատու եք բերդի ամոթալի հանձնման համար։ Պահանջում եմ բոլոր միջոցները գործադրել պաշտպանության համար։ Հայերին զինեք մեծ բանակությամբ, նրանք կպաշտպանվեն։ Սպասեցեք մեզ»։

Զինադադարի ժամկետը լրանալուց հետո պարսիկները վերսկսում են իրենց հարձակումները։ Նրանք գիշերային գրոհ են կազմակերպում բերդի վրա։ Շուշու հերոս պաշտպանները լաթերի վրա նավթ լցրած վառում, լուսավորում էին հակառակորդի գրոհող շարքերը և դիպուկ կրակով ետ մղում նրանց։ Պարսիկների գիշերային գրոհը ապարդյուն է անցնում։

Աբբաս-Միրզան փորձում է պառակտում ստեղծել բերդում գտնվող հայերի և ռուսների միջև։ Նա հավաքել է տարիս մի քանի հարյուր հայ ընտանիք և Սարգիս արքեպիսկոպոսի հետ ուղարկում է Շուշու բերդի պատերի տակ, որպեսզի հայերին համոզեն հանձնել բերդը, այլապես իրենց կկոտորեն։ Բերդի հայ պաշտպանները պատասխանում են. «Մենք ռուսներին չենք դավանանի... ավելի լավ է մի բանի հար-

յուր մարդ ոչնչանա, բան ամբողջ ժողովուրդն ընկնի զզլբաշների ծանր լծի տակ»:

Շուշու պաշտպանության գործում մեծ դեր են կատարում նաև տեղի հայ արհեստավորները, որոնք վառոդ, զենքեր էին պատրաստում, բերդի քանդված պատերը վերանորոգում և այլն: Հայ արհեստավորներից աչքի է ընկնում հատկապես Բարութչի Պողոսը, որն օրական պատրաստում էր 20—30 ֆունտ վառոդ: Շուշու խիզախ պաշտպաններից էին նաև կապիտան Մաղաթովը, սուրհանդակ Հ. Ալթունյանը, Ասլան-բեկը, Սաֆար և Ռոստոմ Թարխանյան եղբայրները և ուրիշներ:

Կանայք նույնպես ակտիվ մասնակցություն են ունենում Շուշու պաշտպանությանը: Նրանք փամփուշտ, ջուր, սննդամթերք էին մատակարարում մարտիկներին, խնամում վիրավորներին և այլն:

Շուշու պաշտպանությունը տևեց 48 օր և խոշոր նշանակություն ունեցավ պատերազմական գործողությունների հետագա ընթացքի համար: Այդ պաշտպանության ղեկավար, կովկասյան պատերազմների վետերան գնդապետ Ռեուտը, 42-րդ եգերական գնդի տպաներն ու զինվորները աչքի ընկան իրենց ռազմական բարձր արվեստով, տոկունությամբ ու քաջությամբ: Հրետանավոր Օբոսխովի, պրապորշչիկ Խվոստիկովի, մայոր Կլյուկի և ուրիշների անունները լայնորեն հայտնի դարձան Շուշու ռուս և հայ պաշտպաններին:

Շուշու պաշարման ծանր օրերին ռուս քաջարի զինվորների հետ միասին կենաց և մահու կռիվ էին մղում նաև հայերը: Գնդապետ Ռեուտը որպես ականատես վկայում է, թե ինչպես «քաջարի եգերների և հավատարիմ հայերի» միահամուռ ուժերով Շուշու պատերի տակ ամենուրեք ետ էին մղվում թշնամու գրոհները:

Գեներալ Երմոլովին գրած իր զեկուցագրում Ռեուտն ասում է. «Ինչ վերաբերում է բերդի պաշտպան հայերին, իմ պարտքն եմ համարում հայտնել, որ նրանց ծառայությունն արժանի է ուշադրության, որովհետև նրանք բոլորն էլ գործում էին գերազանց քաջությամբ, դիմանում էին բազմաթիվ գրոհների, թշնամուն ետ էին մղում մեծ կորուստներով, արհամարհում էին սննդամթերքի պակասը և երբեք չէին մտածում բերդի հանձնման մասին, թեկուզ կատարյալ սով սկսվեր»:

Շուշու պաշտպանությունը պարսկական զավթիչների դեմ հայ ժողովրդի մղած ազատագրական պայքարի հերոսական դրվագներից է:

Խլի-Ղարաքիլիսայի հերոսամարտերը

Պարսկական զավթիչներին հերոսական դիմադրություն են ցույց տալիս նաև Խլի-Ղարաքիլիսայի հայ գյուղացիները:

1826 թ. հուլիսի 16-ին Հասան խանը ներխուժում է Շիրակ և, ավերելով ճանապարհին ընկած գյուղերը, շարժվում դեպի Գյումրի:

Խլի-Ղարաքիլիսա գյուղում հայերը ռուս սահմանապահ զինվորների հետ դիմում են ինքնապաշտպանության: Հավաքելով իրենց սայլերը, կայքն ու գույքը, նրանք բարիկադներ են կառուցում և քաջաբար կռվում խանի զորքերի դեմ:

Պարսիկները ծանր կորուստների գնով կարողանում են ճնշել խլի-ղարաքիլիսեցիների դիմադրությունը և հրի ու սրի մատնել գյուղը:

Խ. Աբովյանը ականատեսների պատմածների հիման վրա, նկարագրելով այդ դեպքերը, գրում է. «Ալեքսանդրապոլից 9 վերստ հեռավորության վրա գտնվում է Խլղարաքիլիսա գյուղը... Այստեղ թափեց իր անողորմ դառնության թույնը Երևանի արյունարբու կուսակալ Հասան խանը... Մի առավոտ, նախքան արեգակի ծագելը, երբ թշնամու զորքը հարձակվեց, հայերը շտեսնված քաջությամբ պատերազմ մղեցին նրանց դեմ, և չորս ժամ թշնամին չհամարձակվեց մոտենալ նրանց»:

«Վերք Հայաստանի. ողբ հայրենասերի» պատմական վեպում Աբովյանը մեզ թողել է հերոսական այդ կռիվների գեղեցիկ նկարագիրը: «Խլղարաքիլիսեն էն խավարն էր բռնել, էն շամանդաղն էր պատել, որ աչքը իր առաջը բռնած էր տեսնում: Թվանքի ձենը, թշնամու գոռոցը, ձիանոց խրխինջը, տավարի բառանչը, թոզ ու տումանը Շորագյալու դաշտը բռնել՝ կապել էին... Հարյուր անգամ պարսից սևագոնդ զորքը զու արին, երիշ քաշեցին, ամեն անգամ էլ հարյուրով կոտորվեցան, իրանք իրանց լաշերի վրովը էլի եդ փախան. շունչ առան՝ էլի կրկին եկան, էլ կրկին մեկ բուռը խալխի թվանքի համն առան, էլի ամոթով ետ դարձան...

Որտեղ մոտենում էին՝ տան դռներիցը, սելի արանքներիցը թվանքները էնպես էին ճռռում, որ շատ պարսիկ իր ընկերին էր ոտնատակ տալիս: Տավար, ոչխար գնացին, արտերի կրակի բոցը և ծուխը երկինք էր հասել»:

Երևանի խանի զորքերին ուժեղ դիմադրություն են ցույց տալիս նաև Խարոտ գյուղի բնակիչները, որոնք մինչև Գյումրիի ռուսական կայազորից օգնություն ստանալը, յուզբաշի Դելի-Ղազարի գլխավորությամբ համառ կռիվներ են մղում թշնամու դեմ և թույլ չեն տալիս մտնել գյուղը:

Լոռի-Փամբակի ուղղությամբ գործող, 1812 թվականի հայրենական պատերազմի հերոս-պարտիզան, գեներալ-մայոր Դենիս Դավիդովի զորամասերում էր գտնվում Մարտիրոս Վեքիլյանի հեծելազորը, որն ակտիվ մասնակցություն ունեցավ բոլոր կռիվներին և պարգևատրվեց:

Գրիգոր Մանուչարյանի պարտիզանական ջոկատը

Պարսկական զորքերի, խռովարար խաների ու բեկերի դեմ մղած իր մարտական գործողություններով առանձնապես աչքի է ընկնում Գրիգոր Մանուչարյանի պարտիզանական հեծյալ ջոկատը:

Մանուչարյանի 500 հոգուց բաղկացած ջոկատը կազմվել էր դեռևս 1803 թվականին՝ Շամշադինի և Ղազախի հայ երիտասարդներից։ Ջոկատն ակտիվ մասնակցություն էր ունեցել Երևանի վրա ռուսական զորքերի կատարած առաջին և երկրորդ արշավանքներին, որի համար Մանուչարյանը պարգևատրվել էր Գեորգիի IV աստիճանի, Վլադիմիրի և Աննայի շքանշաններով։

Երկրորդ ռուս-պարսկական պատերազմի ժամանակ Երմոլովի հանձնարարությամբ Գրիգոր Մանուչարյանն իր ջոկատով Բորչալվի, Ղազախի, Շամշադինի, Դիլիջանի և Սևանի շրջաններում համարձակ մարտեր է մղում պարսկական զորքերի դեմ։ Նա գերությունից ազատում է հարյուրավոր հայ ընտանիքների, պաշտպանում է այդ շրջանների ինչպես հայ, այնպես էլ ադրբեջանական բնակիչներին պարսկական զավթիչների ներխուժումներից ու ասպատակություններից։

1826 թ. ամռանը, երբ պարսկական զորքերը ներխուժում են Ղազախ-Շամշադինի և Լոռի-Փամբակի շրջանները, Մանուչարյանի ջոկատը, գեներալ Մադաթովի զորամասի և վրացական ու ադրբեջանական հեծելազորների հետ միասին, ակտիվ մասնակցություն է ունենում թշնամու դեմ մղած մարտերին։ Օգոստոսի 22-ին նա իր 500 հեծյալներով հարձակվում է Զուրաբ խանի և վրացական արքայորդի, պարսիկների կողմն անցած դավաճան Ալեքսանդրի զորքերի վրա և փախուստի մատնում նրանց։ Մանուչարյանը մեծ օգնություն է ցույց տալիս տեղական բնակիչներին։

Այս խառը ժամանակներում է, որ Մանուչարյանը էջմիածնից փախած և Հաղպատի վանքում ապաստան գտած Եփրեմ կաթողիկոսին տեղափոխում է Թիֆլիս և փրկում նրան պարսիկների ձեռքն ընկնելուց։

Գեներալ Երմոլովը, մինչև Դենիս Դավիդովի Ջալալօղլի (Ստեփանավան) գալը, Մանուչարյանի ջոկատին հանձնարարել էր Լոռին և Դիլիջանը պաշտպանել Երևանի խանի ներխուժումներից։

Փաստերը ցույց են տալիս, որ բացի մարտական գործողություններից Մանուչարյանը որոշ դեր է կատարել նաև իր հայրենիքի՝ Շամշադինի հայ գյուղացիներին բեկերի ու աղալարների ճնշումներից ազատելու գործում։ Նրա դիմումների հիման վրա է, որ գեներալ Երմոլովը, հաշվի առնելով ռուսական զորքերին Շամշադինի հայերի ցույց տված օգնությունն ու հավատարմությունը, նրանց ազատում է բեկերի ու աղալարների կախումից և ճանաչում որպես պետական գյուղացիներ։

Շամխորի և Ելիզավետպոլի ճակատամարտերը

Պատերազմի սկզբում պարսկական զորքերի ունեցած ժամանակավոր հաջողությունները երկար չեն տևում։ Համալրելով իրենց ուժերը Ռուսաստանից եկած նոր զորքերով, այդ թվում դեկաբրիստների ապստամբությանը

մասնակցելու պատճառով Կովկաս աքսորված գվարդիական զորամասերով, ռուսներն անցնում են հակահարձակման։

1826 թ. սեպտեմբերի 3-ին հայ նշանավոր գեներալ Վ. Մադաթովի հրամանատարությամբ երկու հազար հոգուց բաղկացած ռուսական ջոկատը Շամխոր գետի մոտ հարձակվում է Աբբաս-Միրզայի 10 հազարանոց շահական գվարդիայի վրա։ Պարսիկները, չդիմանալով ռուս զինվորների համարձակ գրոհներին, փախուստի են դիմում, մարտի դաշտում թողնելով իրենց հրետանին և 1500 սպանված, այդ թվում հրամանատար էմիր խանին։

Շամխորի ճակատամարտում տարած հաղթանակի համար Մադաթովն ստանում է գեներալ-լեյտենանտի աստիճան և ադամանդներով զարդարված սուր՝ «քաջության համար» մակագրությամբ։

Սեպտեմբերի 13-ին Ելիզավետպոլի մոտ տեղի ունեցած ճակատամարտում ռուսական զորքերը (8 հազար մարդ) փայլուն հաղթանակ են տանում պարսկական 35 հազարանոց բանակի դեմ և նրան ետ շպրտում դեպի Ղարաբաղ։ Հետապնդելով թշնամուն, ռուսական զորքերը ազատագրում են Շուշին և ամբողջ Ղարաբաղը։

Հաջողությամբ են ավարտվում նաև Երևանի խանի զորքերի դեմ մղված կռիվները։ Լոռի-Փամբակում ռուսական զորքերը գեներալ Դենիս Դավիդովի հրամանատարությամբ հակառակորդին դուրս են քշում իր գրաված շրջաններից։

1826 թ. սեպտեմբերի 21-ին Արագածի ստորոտում գտնվող Միրաք գյուղի մոտ ուժեղ ճակատամարտ է տեղի ունենում։ Ռուսական զորքերը, հայ մարտիկների հետ միասին, ջախջախիչ հարվածներ են հասցնում Հասան խանի զորքերին և ետ շպրտում դեպի Երևան։

Այսպիսով, 1826 թվականի աշնանը ռուսական զորքերը, տեղական ժողովուրդների ակտիվ մասնակցությամբ, մեծ դժվարություններ հաղթահարելով, կարողանում են ոչ միայն պաշտպանվել պարսկական զավթիչների հարձակումներից, այլև հակահարձակման անցնել և նրանց դուրս քշել Անդրկովկասի սահմաններից։

Գոտեպնդված իրենց հաղթանակով, ռուսական զորքերը 1826 թ. վերջերին և 1827 թ. սկզբներին նախապատրաստվում են արշավելու Երևանի վրա։

Հայ կամավորական ջոկատների կազմակերպումը

Երևանյան արշավանքի նախապատրաստությունը մեծ ոգևորություն է առաջ բերում հայերի մեջ։ Նրանք այդ համարում էին փրկարար մի արշավանք, երբ, վերջապես, իրենց հաջողվելու էր ռուս զորքերի օգնությամբ ազատագրվել պարսիկ խաների դաժան լծից։

Հայ իրականության տվյալ շրջանի ամենաազդեցիկ հոգևոր և քաղաքական գործիչներից մեկը, ռուսական կողմնորոշման ջերմ պաշտ-

պան Ներսես Աշտարակեցին հատուկ կոչով դիմում է իր հայրենակիցներին, որտեղ ասում է. «Հասավ ժամը, երբ աչքով պիտի տեսնեք Արարատյան աշխարհի և հայոց ազգի ազատությունը... Ոտքի կանգնեք, հայոց քաջեր, թոթափեցեք պարսից լուծը, ուրախացրեք ալեզարդ Մասիսին, մի անգամ արյունով ներկեցեք հայրենի հողերը ու ապա ապրեցեք ազատ»:

Ներսես Աշտարակեցու կոչերը լայն արձագանք են գտնում հայ ժողովրդի մեջ: Բազմաթիվ հայ երիտասարդներ ցանկություն են հայտնում կամավոր կերպով մասնակցելու հայրենիքի ազատագրման գործին:

Ներսես Աշտարակեցու, Հարությունա Ալամդարյանի և ուրիշների ղեկավարությամբ Թիֆլիսում և այլ քաղաքներում կազմակերպվում են հայկական կամավորական ջոկատներ, որոնք Կովկասյան կորպուսի զորամասերի հետ միասին մասնակցելու էին Երևանյան արշավանքին:

Հայկական, ինչպես նաև վրացական ու ադրբեջանական, կամավորական ջոկատների (դրուժինաների) ձևավորման ու մարտական պատրաստության գործը գլխավորում էր Թիֆլիսի զինվորական նահանգապետ գեներալ Միսլյագինը:

1827 թվականին կազմվում է «Առաջադրություն՝ հայկական գումարտակների ձևավորման համար»: Ըստ այդ առաջադրության, հայկական կամավորական գումարտակներում ընդգրկվելու էին շուրջ 800 հոգի՝ 18—30 տարեկան երիտասարդներ, իրենց սեփական ցանկությամբ: Նրանք երդվում էին հավատարիմ ծառայել մինչև պատերազմի վերջանալը, որից հետո ազատ էին, իսկ ցանկացողները կարող էին ծառայության մտնել ռուսական բանակի շարքերում:

Կամավորական ջոկատներն ունեին իրենց ազգային դրոշակը: Հրամանատարները զինվորական աստիճան ունեցող հայեր էին: Զինավարժությունները և հրամանները տարվում էին հայերեն:

Հայ կամավորական ջոկատների զինվորներն ու հրամանատարները զենք, ռազմամթերք, վրաններ, հագուստ, մանգամթերք ստանում էին պետությունից: Ծառայության մեջ եղած ժամանակ նրանք իրենց ընտանիքներով ազատվում էին հարկերից ու պարհակներից:

Կամավորական առաջին ջոկատները ձևավորվում են Թիֆլիսում: Նրանց մեջ մտնում են Թիֆլիսում և Վրաստանում ապրող հայ երիտասարդները, Վանից, Էրզրումից, Կարսից, Բայազետից, Երևանից, Նախիջևանից, Խոյից, Սալմաստից, Ուրմիայից մինչ այդ Թիֆլիս եկած և մեծ մասամբ արհեստներով զբաղվող մարդիկ: Կամավորներ հավաքագրելու համար հատուկ մարդիկ են գործուղվում Շամշադինի և Ղազախի շրջանները, Նուխու մարզը և այլ վայրեր:

1827 թ. մարտի 30-ին Թիֆլիսում տեղի է ունենում հայ կամավորների զորահանդես, որին ներկա էր նաև Ներսես Աշտարակեցին: Ապրիլի սկզբներին, ռուսական առաջապահ զորամասերի հետ ռազմաճակատ մեկնելուց հետո, Ներսես Աշտարակեցին կամավորական ջոկատների կազմակերպման գործը հանձնարարում է Հարություն Ալամդարյանին: Կամավորական ջոկատների կազմակերպումը սկսվում է ռուս-պարսկական պատերազմի նախօրեին և շարունակվում պատերազմի ժամանակ:

Հայ կամավորների առաջին ջոկատը, 117 մարդուց բաղկացած, խերսոնյան գրենադերական գնդի ենթասպա Սմբատյանի հրամանատարությամբ, ռազմաճակատ է մեկնում 1827 թ. մայիսին:

Ռազմաճակատ մեկնելու օրը դրուժինան Թիֆլիսի հայկական եկեղեցում երդում է տալիս, որտեղ ճառ է արտասանում Հ. Ալամդարյանը: Նա խոսում է Հայաստանի պատմական անցյալի, պարսիկ խաների բարբարոսական լծի տակ նրա կրած տառապանքների մասին: Հայ կամավորներին հանձնելով դրոշակը, նա կոչ է անում աչքի լույսի պես պահել այն, արիաբար մարտնչել հայրենիքի ազատության համար:

Մայիսին Թիֆլիսում կամավորական ջոկատներում ցուցակագրվել էին մոտ 600 հոգի: Ղարաբաղի հայերը ևս կազմում են կամավորական մի հեծելագունդ:

Հունիսի սկզբներին Թիֆլիսից Երևան՝ գործող բանակ է մեկնում կամավորական երկրորդ դրուժինան՝ 100 հոգուց կազմված, ենթասպա Ակիմովի հրամանատարությամբ: Օգոստոսի 21-ին ռազմաճակատ է մեկնում երրորդ դրուժինան, թվով 67 մարդ, կապիտան Բեհբութովի հրամանատարությամբ:

Երևանյան արշավանքի ժամանակ կամավորական ջոկատների շարքերը համալրվում են Թիֆլիս—Երևան ճանապարհին գտնվող հայկական գյուղերի բնակիչներով. նրանց թիվը հասնում է ավելի քան հազար հոգու: Էջմիածնի և Երևանի մոտ միանալով ռուսական գործող բանակին, հայ կամավորական ջոկատները արտասովոր եռանդով կռվում էին դարավոր թշնամու դեմ, ցույց տալով քաջության ու արիության հիանալի օրինակներ:

Երևանյան արշավանքի մասնակից, ակադեմիկոս գեներալ Ն. Մուրավյովի վկայությամբ, հայ կամավորները «Մարտերում իրենց դրսևորում էին ինչպես վայել է զինվորին... պարսիկների դեմ կռվում էին այնպես, ինչպես կարելի էր ցանկանալ միայն: Նրանք հավատարիմ ծառայության երդում ընդունեցին և մեզ հետ մասնակցեցին բոլոր արշավանքներին»:

Հայ կամավորական ջոկատները ակտիվ մասնակցություն ունեցան 1826—1828 թթ. ռուս-պարսկական պատերազմին և խոշոր դեր խա-

ղացին Արևելյան Հայաստանը պարսկական բռնակալության դարավոր լծից ազատագրելու գործում:

Ռուսական զորքերի երրորդ արշավանքը Երևանի վրա

1827 թ. գարնանը ռուսական զորքերը արշավում են Երևանի վրա: Սա ռուսական զորքերի երրորդ արշավանքն էր, որը գլխավորում էր Ա. Երմոլովի փոխարեն 1827 թ. մարտին Կովկասի կառավարչապետ նշանակված գեներալ Ի. Պասկևիչը:

Երևանյան արշավանքի նպատակն էր գրավել Պարսկաստանի վերջին կարևոր հենակետը Անդրկովկասում՝ Երևանի բերդը, և ռուսական տիրապետության սահմանը հասցնել մինչև Արաքս գետը: Դեռևս Ալեքսանդր I-ի ժամանակից Ռուսաստանը ձգտում էր Քուռ—Արաքս գիծը դարձնել Պարսկաստանի հետ մշտական սահմանագիծ:

1827 թ. ապրիլին ռուսական առաջապահ զորամասերը գեներալ Կ. Բենկենդորֆի հրամանատարությամբ Փամբակից մտնում են Երևանի խանության սահմանները: Ներսես Աշտարակեցին, որ ռուսական զորքերի հետ մասնակցում էր այդ արշավանքին, բյուրականցի քաջ երիտասարդ Հովհաննես Ասլանյանին կարևոր հանձնարարություններով ուղարկում է Էջմիածին:

Ճանապարհին պարսիկները բռնում են Ասլանյանին և ստիպում տեղեկություններ տալ ռուս զորքերի և իրեն տրված հանձնարարությունների մասին: Խիզախ հայրենասերը, արհամարհելով մահը, ոչ մի գաղտնիք չի հայտնում: Գազազած դահիճները կտրում են նրա քիթը և հանում մեկ աչքը, բայց այդ էլ չի օգնում: Նրանք կտրում են Ասլանյանի լեզուն և արյան մեջ շաղախված, ուշագնաց վիճակում թողնում հեռանում են: Ժամեր անց ուշքի գալով, Ասլանյանը դիշերով մի կերպ հասնում է Էջմիածին և կատարում իրեն տրված հանձնարարությունը: Պասկևիչի միջնորդությամբ կառավարությունը Ասլանյանին պարգևատրում է ոսկե մեդալով և նշանակում ցմահ տարեկան 100 ռուբլի թոշակ:

Ապրիլի 13-ին ռուսական առաջապահ զորքերը մտնում են Էջմիածին: Ջաբայոզլի—Համամլու—Աշտարակ ճանապարհով հունիսի 8-ին Էջմիածին է հասնում Պասկևիչի գլխավոր բանակը: Պասկևիչի բանակի հետ էին նաև հայ կամավորները, զինվորական ու քաղաքական հայ պաշտոնյաներ, թարգմանիչներ և սուրհանդակներ:

Հունիսի կեսերից պատերազմական գործողություններն սկսում են ծավալվել Երևանի խանության սահմաններում: Ռուսական զորքերը գրոհում են Երևանի բերդի վրա, բայց գրավել չեն կարողանում: Պասկևիչը գեներալ Կրասովսկու դիվիզիան թողնում է Երևանի բերդը պաշարված պահելու համար, իսկ ինքը, գլխավոր ուժերի հետ, հետապընդում է Աբբաս-Միրզայի զորքերին:

Պասկևիչի բանակում գտնվող ռուս նշանավոր գրող Ա. Ս. Գրիբոեդովն իր օրագրում հունիսի 25-ին գրում է. «Օրը լավ է սկսվում, գյուղացիներին ազատում ենք ճնշումներից»:

Հունիսի 26-ին ռուսական զորքերը գրավում են Նախիջևանը: Հակառակորդն ամրանում է Արաքսի ափին գտնվող Աբբասաբադ բերդում, որը կառուցել էր Աբբաս-Միրզան՝ ֆրանսիական ինժեներների պլանով: Կատաղի մարտեր են սկսվում Աբբասաբադի համար: Աբբաս-Միրզան փորձում է Արաքսի աջ ափից անտպասելի հարված հասցնել ռուսներին:

Հուլիսի 5-ին Ջևան-Բուլաղում տեղի է ունենում ուժեղ ճակատամարտ, որն ավարտվում է ռուսների հաղթանակով: Հուլիսի 7-ին ռուսական զորքերը թմբուկների զարկերի տակ հաղթականորեն մտնում են Աբբասաբադի բերդը:

Ռուսական զորքերի այս հաղթանակները հարկադրում են Աբբաս-Միրզային զինադադար խնդրել: Պասկևիչն ընդունում է զինադադարի առաջարկը և բանակցություններ վարելու համար Կարագիադինի ճամբարն է ուղարկում Ա. Ս. Գրիբոեդովին:

Հուլիսի 21-ին սկսվում են բանակցությունները: Գրիբոեդովը ներկայացնում է հաշտություն կնքելու պայմանները, ըստ որի Երևանի և Նախիջևանի խանությունները պետք է անցնեին Ռուսաստանին, Պարսկաստանը պետք է վճարեր ռազմական տուգանք և այլն:

Աբբաս-Միրզան մերժում է այդ առաջարկները և զայրացած բացականչում. «Պարսկաստանը դեռ չի խորտակվել»: Գրիբոեդովը նրան պատասխանում է. «Դուք եք սկսել պատերազմը, ով առաջինն է ակում, նա երբեք չի կարող ասել, թե ինչով կվերջանա այն... Ես ձեզ կտամ մեծ մարդու և կայսրի՝ Նապոլեոնի անունը, որը պատերազմ սկսեց ռուսակամ հողում և վարձահատույց եղավ կորցնելով իր գահը»:

Մի քանի օրվա բանակցությունները ոչ մի արդյունք չեն տալիս: Գրիբոեդովը տեսնելով, որ Աբբաս-Միրզան ժամանակ շահելու համար ձգձգում է բանակցությունները և մտադիր չէ ընդունել իրեն առաջարկները, հուլիսի 25-ին վերադառնում է Պասկևիչի մոտ:

Շուտով հայտնի է դառնում, որ Աբբաս-Միրզան հաշտության փոխարեն վերսկսել է պատերազմական գործողությունները և 30 հազար զորքով Սուրմալու-Սարդարապատ ուղղությամբ հարձակվել է Էջմիածնի վրա:

Էջմիածնի ռուսական կայազորը և հայ կամավորները հերոսաբար դիմադրում են պարսիկներին, միաժամանակ օգնություն խնդրում գեներալ Կրասովսկուց, որն իր դիվիզիայով գտնվում էր Արագածի լանջերում:

Օշականի ճակատամարտը

Գեներալ Կրասովսկին տեղեկանալով էջմիածնի պաշարման մասին, շտապում է օգնության հասնել նրան։ 1827 թ. օգոստոսի 17-ին Օշականի և էջմիածնի միջև ռուսական և պարսկական զորքերը հանդիպում են միմյանց. սկսվում է մի կատաղի ճակատամարտ։

Պարսիկներն օգտվելով իրենց թվական գերակշռությունից, անընդհատ գրոհներ են գործում Կրասովսկու զորամասի վրա, նպատակ ունենալով ամբողջովին ջախջախել այն։

Ռուսական քաջարի զինվորները, հայ կամավորների հետ միասին, հերոսաբար ետ են մղում թշնամու կատաղի գրոհները։ Նրանցից շատերը վիրավորվում են, բայց դուրս չեն գալիս մարտի դաշտից։ Թևից վիրավորվում է նաև Կրասովսկին։

Օշականի ճակատամարտում առանձնապես աչքի է ընկնում 39-րդ եգերական գունդը, որը, այդ մարտերին մասնակից, դեկաբրիստ Լաչինովի վկայությամբ, միշտ գործում էր ավանգարդում և օրինակ ծառայում մյուս գնդերին։

Պարսիկները չափազանց դաժան էին վարվում իրենց ձեռքն ընկած ռուս և հայ մարտիկների հետ։ Կտրում էին նրանց գլուխը, որովհետև Աբբաս-Միրզան խոստացել էր յուրաքանչյուր գլխի համար վճարել 5 ոսկի։

Չկարողանալով տանել պարսիկների այդօրինակ գազանությունները, հմուտ հրանոթաձիգ Հակոբ Հարությունյանը, որը գտնվում էր պարսկական բանակում և կրակում էր անգլիական հրանոթից, ուժեղ մարտերի ժամանակ իր հրանոթի փողը դարձնում է դեպի պարսիկները և կրակում նրանց վրա, խուճապ առաջացնելով վերջիններիս շարքերում։

Պարսիկները բռնում են Հ. Հարությունյանին, հանում են նրա աչքերը, կտրում լեզուն, շրթունքները, քիթը, ականջները և այլանդակված ու մահամարձ գցում դիակների մեջ։ Խոշտանգված հերոսը կենդանի է մնում։ Կառավարությունը Հարությունյանին պարգևատրում է միանվագ 10 ոսկով և նշանակում ցմահ տարեկան 100 ռուբլի թոշակ։

Օշականի ճակատամարտն ավարտվում է ռուսների հաղթանակով։ Մանր կորուստների գնով նրանք կարողանում են պարտության մատնել թշնամուն և օգնության հասնել էջմիածնին։

Դեկաբրիստ Լաչինովը օգոստոսի 17-ը անվանում է «դաժան մարտերի օր»։ «Գեներալ Կրասովսկին իր 3 հազարանոց ջոկատով,— գրում է նա,— օգոստոսի 17-ին Ուշագան գյուղի մոտ ջարդեց պարսկական խաժամուժ զորքերին և դրանով իսկ կործանումից փրկեց էջմիածնի վանքը»։

Այդ ճակատամարտում ռուսները կորցնում են 1154 սպանված և 200 գերի։ Պարսիկների կորուստը մի քանի անգամ ավելի էր։

Օգոստոսի 17-ին զոհվածների հիշատակին էջմիածնից Օշական տանող ճանապարհի վրա 1834 թվականին կառուցվում է հուշարձան, որը ներկայումս էլ կանգուն է։

Կարաբաբայի ճամբարում, ուշացումով ստանալով Օշականի ճակատամարտի լուրը, Պասկևիչը թողնում է Թավրիզ շարժվելու իր մտադրությունը և շտապ վերադառնում էջմիածին։ Աբբաս-Միրզան խուսափելով նոր ճակատամարտից, իր զորքերով անցնում է Արաքսի աջ ափը։

Սեպտեմբերի 5-ին Պասկևիչի բանակը հասնում է էջմիածին։ Այդ ժամանակ էջմիածին էին հասել հրետանային նոր զորամասեր, իրենց հետ առաջին անգամ Հայաստան բերելով մեծ տրամաչափի ծանր հրանոթներ։

Սեպտեմբերի 13-ին ռուսական զորքերը պաշարում են Սարդարապատի բերդը, որն ուներ կրկնակի պարիսպներ ու աշտարակներ։ Բերդը պաշտպանում էր Հասան խանը՝ իր մի քանի հազար զինվորներով և 13 հրանոթով։

Բերդում կային մեծ թվով հայ բնակիչներ, որոնք ամեն կերպ օգնում էին ռուս զորքերին։ Դեռևս սեպտեմբերի 12-ին Ներսես Աշտարակեցին հատուկ կոչով դիմել էր Սարդարապատի բնակչությանը, առաջարկելով խուսափել ռմբակոծությունից, դուրս գալ բերդից և ռուսահպատակություն ընդունել։

Մի քանի օրվա նախապատրաստություններից հետո սեպտեմբերի 18-ին և 19-ին ռուսական 20 հրանոթ անընդհատ ռմբակոծում է բերդը։ Բերդի կայազորը սկզբում ուժեղ դիմադրություն է ցույց տալիս։ Կայազորի մի մասը սպիտակ շապիկ էր հագել՝ մինչև արյան վերջին կաթիլը կռվելու համար։ Բայց, ինչպես վկայում է այդ մարտերին մասնակից դեկաբրիստ Պուշչինը, պարսիկները հավատարիմ չմնացին իրենց որոշմանը։

Հասան խանը, չդիմանալով ռուսական զորքերի դիպուկ հարվածներին, սեպտեմբերի 19-ի գիշերը, օգտվելով ամպամած, խավար եղանակից, փախչում է բերդից և անցնում Երևան։

Մի հայ իմանալով նրա փախուստը, անմիջապես վազում է ռուսների մոտ և բացականչում. «Սալդաթ իդի, սարդար ստուպայ»։ Հայերը բացում են բերդի դռները ռուս զորքերի առաջ։ Սեպտեմբերի 20-ի առավոտյան ռուսական զորքերը մտնում են Սարդարապատի բերդը։

Երևանի գրավումը

Սարդարապատը գրավելուց հետո ռուսական զորքերը հարձակվում են Երևանի վրա։ Սեպտեմբերի 24-ին նրանք պաշարում են Երևանի բերդը, իսկ 25-ից սկսում ռմբակոծությունը։

Երևանի բերդը Արևելյան Հայաստանի ամենախոշոր ամրությունն էր։ Հրազդան գետի կողմից նա շրջապատված էր բարձր ու անմատչելի ժայռերով, իսկ մնացած կողմերից՝ հաստ ու բարձր կրկնակի պարիսպներով։ Բերդն ամրացված էր եվրոպական ռազմական կանոններով, անգլիական ու ֆրանսիական հրանոթներով, ֆուգասային ռումբերով։

Երևանի խանը պարծենկոտությամբ հայտարարում էր. «Թեկուզ 3—4 թագավոր միանան, դարձյալ չեն կարող Երևանի բերդը գրավել»։ Բերդի պաշտպանությունն իր վրա էր վերցրել Հասան խանը, որը շատ դաժան ու ֆանատիկ մի անձնավորություն էր։

Պասկևիչը, ցանկանալով խուսափել արյունահեղությունից, առաջարկում է Հասան խանին հանձնվել առանց կռվի։ Բայց կտրական մերժում ստանալով, հրամայում է անցնել գրոհի։

Երևան հասցված ռուսական ծանր հրանոթները մի քանի օր անընդհատ սկսում են ռմբակոծել բերդը, քանդել նրա պարիսպներն ու աշտարակները։

«Ամսի 25-ն էր,— գրում է Խ. Աբովյանը,— որ Երևանի բերդը ծխումը կորավ։ Հինգ օր հինգ գիշեր սար ու ձոր դմբում, դմբդմբում էր... էնքան թոփի դյուլլա էր գլխին ու սրտին դիպել, հոգին բերանը հասցրել»։

Հակառակորդը կատաղի դիմադրություն էր ցույց տալիս. բերդի գրավումը ձգձգվում էր։ Բերդում եղած հայերն ամեն կերպ օգնում էին ռուս զորքերին, աշխատում ձախողել բերդի պաշտպանությունը։ Հայ հայրենասերներից շատերը այդ անում էին իրենց կյանքի գնով։ Նման խիզախներից մեկին՝ Ատտվածատրյանին, պարսիկները բռնում են, կապում թնդանոթի փողին ու կրակում։ Սարդարի հրամանով կախաղան են բարձրացնում մի շարք հայ հայրենասերների, որոնց անունները մեզ չեն հասել։

Երևանի գրավմանը օժանդակում են նաև բերդից դուրս գտնվող հայերը։ Տեսնելով, որ բերդի գրավումը ձգձգվում է, Պասկևիչի բանակում գտնվող Ներսես Աշտարակեցին հատուկ կոչեր է ուղարկում Էջմիածնի, Օշականի, Աշտարակի և այլ վայրերի հայ գյուղացիներին՝ պահանջելով անհապաղ օգնության հասնել ռուս զորքերին։ Ահա նրա այդ կոչերից մեկը.

«Աշտարակի և Օշականի հայ հասարակությանը.

Գրում եմ բազմաթիվ օրհնություններով, որպեսզի գրությունս ստանալուն պես, առանց բոսրե կորցնելու, թողնեք ձեր տանը և ընտանիքին վերաբերող բոլոր կարևոր գործերը, թվանք ունեցող և չունեցող և հետևակ կտրիճ տղաներ շատ հավաքել և այսօր՝ սեպտեմբերի 28-ին, շորեքշաբթի օրը մինչև արեգակի մայր մտնելը հասցնել այստեղ մեզ։

Եվ եթե ձեզանից որևէ մեկը ծուլանա և ուշանա, այդպիսին թող իմանա, որ թեկուզ իմ աչքի լույսը լինի, չեմ խնայի հանել և դեն նետել»։

Երևանի շրջակայքի հայ գյուղացիները խմբերով օգնության են գալիս ռուս զորքերին և ակտիվ մասնակցություն ունենում բերդի գրավմանը։ Հայկական աշխարհազորային դրուժինաների մարտիկները գիշեր-ցերեկ դադար չունեին։ Նրանք կատարում էին հրամանատարության ամենապատասխանատու հանձնարարությունները, արիաբար մարտնչում Երևանը դարավոր կեղեքիչներից ազատագրելու համար։

Սեպտեմբերի 28-ի առավոտյան ռուսական պաշարողական հրանոթները սեղատարափ կրակ են բացում բերդի վրա։ Ամբողջ օրը ռմբակոծությունը չի դադարում. քանդվում է բերդի հարավ-արևելյան աշտարակը և պարիսպը։

Սեպտեմբերի 30-ի գիշերը 40 հրանոթ մինչև լույս անընդհատ ռմբակոծում է Երևանի բերդը, ավելի քան 1000 ռումբ է նետվում։ Բերդը կորչում է ծխի ու փոշու ամպերի մեջ։

1827 թ. հոկտեմբերի 1-ի առավոտյան ռուսական զորքերը, նրանց առաջին շարքերում դեկաբրիստների ապստամբությանը մասնակցած քաջարի զինվորները և հայ կամավորները պարիսպների փլվածքներով ներխուժում են բերդ և մարտերը շարունակում բերդի ներսում։ Շուտով հակառակորդը զենքը վայր է դնում. ընկնում է պարսկական դարավոր բռնակալության վերջին և ամենակարևոր հենակետը Հայաստանում։

Գերի են վերցնում Երևանի բերդի ավելի քան 3000 հոգուց բաղկացած կայազորը, Աբբաս-Միրզայի զվարդիական գումարտակը, Հասան խանին, բերդի պարետ Սվան-Ղուլի խանին, Մարանդի, Այրումի, Թավրիզի և ուրիշ խաների։ Գրավվում է մեծ ավար, ռազմամթերք, 100 մեծ ու փոքր թնդանոթ, 4 դրոշակ և այլն։

Երևանի գրավմանը ակտիվ մասնակցություն ունեցան և առավել աչքի ընկան դեկաբրիստներ Մ. Պուշչինը, Պ. Կոնովնիցինը, Ն. Օրժիցկին, Ե. Լաշինովը, Պ. Բեստուժևը, Ա. Գանգեբլովը և ուրիշներ։ Երևանի բերդում քաջի մահով ընկնում է հայ պարտիզան Աբովյան Աղատին՝ Խ. Աբովյանի «Վերք Հայաստանի» վեպի գլխավոր հերոսը։

Գեներալ Պասկևիչը, որը Երևանի գրավման համար ստացավ «կոմս Երևանսկի» տիտղոսը, հարկադրված էր խոստովանել, որ դեկաբրիստներ Պուշչինը, Կոնովնիցինը և ուրիշներ «զվեալի եռանդով կատարեցին իրենց պարտքը, իրենց օրինակով ոգևորելով մյուս զինվորներին»։ Կովկասյան պատերազմներին լավատեղյակ զինվորական պատմաբան Վ. Պոտտոն դեկաբրիստ Մ. Պուշչինին համարում է Երևանի բերդի գրավման «կարևորագույն գործիչներից մեկը»։

Երևանի գրավմանը մասնակցած ռուսներից և հայերից շատերը պարգևատրվում են «Երևանի բերդի գրավումը» մեդալով։ Այդպիսի

մեղալ է ստանում նաև ռուս նշանավոր գրող Ա. Ս. Գրիբոեդովը, որը պատերազմի սկզբից մինչև վերջ գտնվում էր Պասկևիչի բանակում և աչքի ընկնող դեր կատարում։

Երևանի գրավումը ռազմական, քաղաքական և տնտեսական կարևոր նշանակություն ունեցող ակտ էր։

Հայ ժողովուրդը Երևանի ազատագրումը համարում էր հայրենիքի փրկության սիմվոլ։ Նշանավոր բանաստեղծ, ջերմ հայրենասեր Հարություն Ալամդարյանը, 1827 թ. հոկտեմբերի 12-ին Թիֆլիսից գրած նամակում Ներսես Աշտարակեցուն շնորհավորելով Երևանի գրավման առթիվ, ասում է. «Շնորհավորում եմ Հայաստան աշխարհի փրկությունը անգութ պարսիկների երկաթե ճնոցից»։

Անվանի գրող, լուսավորիչ Մեսրոպ Թաղիադյանը, հեռավոր Հընդկաստանից շնորհավորելով իր հայրենակիցների՝ երևանցիների ազատագրությունը, գրում է. «Աչքներդ հազար լույս, որ մեր քաղցր աշխարհն պարսից դառն շարշարանքից ազատվեց... երբ որ լսեցի ներկա մեր աշխարհի ազատությունը, սիրտս ուրախությամբ վառվեց»։

Խաչատուր Աբովյանը «Վերք Հայաստանի» վեպում գրում է. «Դժոխքի քանդվիլը մեղավորների համար էս գինը չէր ունենալ, ինչպես Երևանու բերդի առնիլը հայերի համար»։

Երևանի ազատագրության հետ հայ ժողովուրդը կապում էր իր լավ ապագայի հույսերը։ Դա ոչ միայն հայ ժողովրդի, այլև Անդրկովկասի բոլոր ժողովուրդների համար պատմական նշանակություն ունեցող մի հաղթանակ էր։

Թուրքմենչայի պայմանագիրը

Երևանը գրավելուց հետո Պասկևիչը տպատում էր, որ Աբբաս-Միրզան հաշտություն խնդրի, բայց այդ տեղի չունեցավ։ Ուստի նա հրամայում է իր զորքերին հետապնդել թշնամուն և վերջնականապես կոտրել նրա դիմադրությունը։

1827 թ. հոկտեմբերի 13-ին ռուսական առաջապահ զորամասերը մտնում են Թավրիզ։ Տեղի հայերն ու ադրբեջանցիները աղ ու հացով են դիմավորում ռուսներին։ «Պարսկաստանի սահմանը մտնելիս,— գրում է ականատեսներից մեկը,— ռուս մարտիկները հայերի կողմից ընդունվում են որպես հայրենակիցներ։ Այս ժողովուրդը ամենանկատելի մասնակցություն ունեցավ մեր զենքի հաջողությանը»։

Ատրպատականում այդ ժամանակ մեծ թվով հայեր էին ապրում, որոնք նույնպես իրենց ազատագրությունը կապում էին ռուսական զորքերի հաղթանակի հետ։ Հայերի հետ միասին ռուսական զորքերին օգնում էին նաև տեղի ադրբեջանցի բնակիչները։ Նրանց համատեղ ջանքերով էր, որ Թավրիզը, հակառակ կայազորի պետ Ալայար խանի կամքի, առանց կռվի հանձնվեց ռուսներին։

Թավրիզի գրավումը մեծ իրարանցում է առաջ բերում ոչ միայն պարսկական արքունիքում, այլև անգլիական դեսպանատանը։ Անգլիան այդ ժամանակ մեծ ազդեցություն ուներ Իրանում և կոպիտ կերպով միջամտում էր նրա ներքին գործերին։ Ցանկանալով կասեցնել ռուսական զորքերի առաջխաղացումը, անգլիական դեսպանի պահանջով, Աբբաս-Միրզան Պասկևիչից խնդրում է զինադադար կնքել։

1827 թ. նոյեմբերին պատերազմական գործողությունները դադարեցվում են, և Դեհկարխան գյուղում սկսվում են հաշտության բանակցությունները։

Այստեղ Պասկևիչի և Գրիբոեդովի հետ տեսակցություններ են ունենում հայ պատվիրակները, որոնք ներկայացնում են իրենց պահանջները և խնդրում դրանք նկատի ունենալ հաշտության պայմանագիր կնքելիս։ Ներսես Աշտարակեցու հանձնարարությամբ հայ պատվիրակները՝ Ատրպատականի առաջնորդ Բարսեղ արքեպիսկոպոսը և խոյեցի Մարգար Եղիազարյանը, հատկապես խնդրում են հոգ տանել հայերի գաղթի, պարսկական գերությունից նրանց ազատելու և Ռուսաստանի տիրապետության տակ համախմբելու մասին։

Ինչպես Կարագիադինի, այնպես էլ Դեհկարխանի բանակցությունները ոչ մի արդյունք չեն տալիս։ Պարսկական դիվանագետները ձգձգում են բանակցությունները՝ ժամանակ շահելու, զորքերը համալրելու նպատակով։

Պասկևիչը տեսնելով այդ, որոշում է նոր ճնշում գործադրել հակառակորդի վրա։ 1827 թ. վերջերին և 1828 թ. սկզբներին ռուսական զորքերը գրավում են Խոյը, Ուրմիան, Մարաղան, Սալմաստը, Արդաբիլը և շարժվում դեպի Թեհրան։ Պարսկական զորքերը, չդիմանալով ռուսների հարվածներին, անկանոն նահանջում են։ Միանեի մոտ անգլիական դեսպան Մակդոնալդը ներկայանում է Պասկևիչին և հայտնում, որ շահն ընդունում է հաշտության պայմանները։

Թավրիզից Թեհրան տանող ճանապարհի վրա գտնվող Թուրքմենչայ գյուղում 1828 թ. փետրվարի 7-ին վերսկսվում են հաշտության բանակցությունները։ Պասկևիչն այս անգամ արդեն առանց երկարաբարակ վիճաբանություններ թույլ տալու Աբբաս-Միրզային առաջարկում է Գրիբոեդովի կողմից հմտորեն ձևակերպված հաշտության պայմանները։

1828 թ. փետրվարի 10-ին կնքվում է Թուրքմենչայի պայմանագիրը, որով ավարտվում է 1826—1828 թթ. ռուս-պարսկական պատերազմը, և այլևս ոչ մի պատերազմ տեղի չի ունենում հարևան երկու երկրների միջև։

Թուրքմենչայի պայմանագրով պարսկական շահն իր և հաջորդների անունից մեկընդմիշտ Ռուսաստանի սեփականությունն է ճանա-

չում Երևանի ու Նախիջևանի նախկին խանությունները, ինչպես և ամբողջ Կովկասը:

Երկու կողմերի ռազմագերիներին թույլ է տրվում վերադառնալ հայրենիք: Պարսկաստանի տիրապետության տակ մնացած հայերին իրավունք է տրվում գաղթել ռուսական տիրապետության սահմանները: Պարսկաստանը պարտավորվում է վճարել 20 միլիոն ռուբլի ռազմական տուգանք (կոնտրիբուցիա): Երկու երկրների միջև վերականգնվում են դիվանագիտական և առևտրական հարաբերությունները: Կասպից ծովում ռազմական նավատորմիղ ունենալու իրավունք է վերապահվում միայն Ռուսաստանին և այլն:

1828 թ. փետրվարի 10-ին Թուրքմենչայում միաժամանակ կընքվում է առևտրական պայմանագիր, որի համաձայն ազատ առևտրի իրավունք է տրվում երկու կողմերի հպատակներին: Այդ պայմանագիրը մեծապես նպաստում է Կասպից ծովի և Անդրկովկասի վրայով կատարվող ռուս-պարսկական առևտրին:

Թուրքմենչայի պայմանագիրը ամրապնդեց Ռուսաստանի տնտեսական, քաղաքական ու ռազմա-ստրատեգիական դիրքերը Անդրկովկասում և Մերձավոր արևելքում:

Այդ պայմանագրով Արևելյան Հայաստանը ազատագրվեց պարսկական խանների դարավոր լծից և միացավ Ռուսաստանին, որը բախտորոշ նշանակություն ունեցավ հայ ժողովրդի համար:

Պարսկահայերի գաղթը

Դարեր շարունակ պարսկական ու թուրքական իշխանությունների կազմակերպած կոտորածների, բռնի գաղթեցումների ու տեղահանումների, կյանքի դժնդակ պայմանների հետևանքով հայ բնակչությունը Հայաստանում չափազանց նվազել, նոսրացել էր. նույնիսկ հայկական նշանավոր մի շարք կենտրոններում (Երևան և այլն) մահմեդականներն ավելի մեծ թիվ էին կազմում, քան հայերը:

Թուրքական ու պարսկական ասիմիլյատորները, սիստեմատիկաբար դատարկելով Հայաստանը հայերից և նրանց փոխարեն թուրքեր, պարսիկներ ու մահմեդական այլ ցեղեր բնակեցնելով, ձգտում էին յուրացնել հայերի հայրենիքը, ասիմիլյացիայի ենթարկել աշխարհի հնագույն ժողովուրդներից մեկին:

Հայ ժողովուրդը հերոսաբար դիմադրում էր թուրք-պարսկական ասիմիլյատորների այդ նենգ ու խարդախ քաղաքականությանը: Նա ամեն ջանք գործադրում էր իր ֆիզիկական գոյությունը, իր հայրենիքը պահպանելու համար:

Ներսես Աշտարակեցին, որ հայերի ներգաղթի գլխավոր կազմակերպիչներից էր, դեռևս մինչև Թուրքմենչայի պայմանագրի կնքելը, քանիցս դիմել էր Պասկևիչին և Գրիբոեդովին՝ հայերին պարսկական

գերությունից ազատելու և Ռուսաստանի տիրապետության տակ համախմբելու համար: 1827 թ. նոյեմբերի 9-ին Երևանից Թավրիզ՝ գլխավոր հրամանատար Լազարյանին ուղարկած նամակում Աշտարակեցին գրում է. «Այժմ ես խնդրեցի ամենայն հայոց ազգի հավատարիմ պաշտպան Ալեքսանդր Սերգեևիչ Գրիբոեդովին շմոռանալ իմ խնդիրը նաև այդտեղ և այլ տեղերում եղած քրիստոնյա գերիներին ռուսաց հզոր իշխանության դրոշի տակ ընդունելու»:

Թուրքմենչայի պայմանագիրը, ինչպես տեսանք, առաջին անգամ հայերին հնարավորություն էր տալիս հայրենիք վերադառնալ, համախմբվել Ռուսաստանի տիրապետության տակ և կյանքի քիչ թե շատ տանելի պայմաններ ստեղծել իրենց համար:

Հայ ժողովուրդը մեծ գոհունակությամբ է ընդունում այդ պայմանագիրը: 1828 թվականի գարնանից սկսվում է պարսկահայերի մասսայական գաղթը դեպի ռուսական տիրապետության սահմանները՝ Արևելյան Հայաստան:

Ականատեսներից մեկը, նկարագրելով հայերի այս գաղթը, գրում է. «Անհամար բազմութիւնք գաղթական ժողովրդեան ի նմանութիւն ալեաց ծովու աղմկելոյ՝ հոսէին ի սահմանս Ռուսաստանի»:

Պարսկական իշխանություններն ու անգլիական գործակալները ամեն կերպ աշխատում էին ձախողել հայերի գաղթը: 1828 թ. ապրիլի 2-ին Լազարյանը Ուրմիայից հայտնում է Պասկևիչին. «Ոչ միայն պարսիկները, այլև անգլիական մխիթան բոլոր միջոցները գործադրում են, որպեսզի գաղթը դադարեցնեն»:

Գաղթի հակառակորդներին հաջողվում է հայերից շատերին մոլորության մեջ գցել և, մանավանդ ռուս զորքի հեռանալուց հետո, թույլ չտալ գաղթելու: Սակայն գաղթը ամբողջությամբ խափանել չեն կարողանում:

1828 թվականի գարնան մի քանի ամիսների ընթացքում մոտ 45—50 հազար հայեր Թավրիզի, Մակուի, Սալմաստի, Խոյի, Ուրմիայի, Արդաբիլի շրջաններից գաղթում, անցնում են Արևելյան Հայաստան:

Պասկևիչի հրամանով գաղթի ղեկավար էր նշանակվել Պետերբուրգից հրավիրված գնդապետ Լազար (Եղիազար) Լազարյանը (հայտնի Լազարյանների ընտանիքից): Նրան օգնականներ էին նշանակվել մի շարք հայ և ռուս զինվորականներ: Մարզային վարչության կից կազմվել էր գաղթականական կոմիտե: Պասկևիչի հանձնարարությամբ նախօրոք մշակվել էին նաև գաղթի կանոնները (ռուսերեն և հայերեն) և ուղարկվել համապատասխան հիմնարկներին ու պաշտոնյաներին:

Այդ կանոնների համաձայն, որոնք բխում էին Թուրքմենչայի պայմանագրից, Պարսկաստանի տիրապետության տակ գտնվող հայերին իրավունք էր տրվում կամավոր կերպով գաղթել Ռուսաստանի

տիրապետության տակ, իրենց հետ վերցնելով շարժական գույքը, իսկ անշարժ գույքը վաճառել հինգ տարվա ընթացքում։

Ռուսաստանի տիրապետության տակ գաղթողները բնակեցվելու էին պետական հողերի վրա։ Կալվածատիրական հողերի վրա չէին բնակեցվում, որպեսզի չընկնեին կախյալ վիճակի մեջ։

Նախատեսվում էր գաղթականների տեղաբաշխում կատարելիս հաշվի առնել տեղի կլիմայական պայմանները և բնակիչների զբաղմունքը, արհեստավորներին ու առևտրականներին բնակեցնել քաղաքներում, իսկ երկրագործներին՝ գյուղերում։

Ներգաղթողները հարկերից ազատվում էին 6 տարով, իսկ գավառական պարտավորություններից՝ 3 տարով, գաղթի համար Լազարևի տրամադրության տակ դրված 25 հազար ռուբլի գումարից օգնություն էր տրվելու չքավորներին։ Բնակարաններ կառուցելու համար նույնպես նախատեսվում էր նորեկներին օժանդակություն ցույց տալ։

Այնուհետև հանձնարարվում էր առաջին հերթին բնակեցնել Երևանի և Նախիջևանի գավառները, գաղթը կատարել կազմակերպված, քարավանները կազմել 150—300 ընտանիքից և ոստ զորքերի հսկողությամբ ապահով հասցնել մինչև ռուսական սահմանը։

1828 թվականի ապրիլ—մայիս ամիսներին հայ գաղթականության բազմահազար զանգվածներն արդեն իսկ գտնվում էին Արաքսի ռուսական ափին։ Ազատագրվելով պարսկական գերությունից, նրանց թվում էր, թե նոր են ծնվել։ Հայրենի հողում, հարազատ երկնքի տակ, նրանք այնքան թեթև էին շնչում, որ մոռանում էին առօրյա հոգսերն ու դժվարությունները։

Հայ գաղթականների ճնշող մեծամասնությունը բնակեցվում է Արևելյան Հայաստանում՝ Երևանի և Նախիջևանի գավառներում, Դարալագյազի, Մեղրիի, Զափանի, Զանգեզուրի, Օրդուբադի, Վեդիի, Արտաշատի, Գառնիբասարի, Սուրմալուի, Սարդարապատի, Վաղարշապատի, Զանգիբասարի, Կարբիբասարի, Դարաչիչակի և Ապարանի շրջաններում։ Գաղթականների մի մասն էլ բնակեցվում է Ղարաբաղում։

Պարսկահայերի ներգաղթի կազմակերպման գործում աչքի ընկնող դեր են կատարում Ներսես Աշտարակեցին, Եղիազար Լազարյանը, Մովսես Արղությանը, Ղամազյանը, Ղորղանյանը, ռուս զինվորականներից՝ Վոյնիկովը, Յակիմովը, Իսկրիցկին, Միլյուտինը և ուրիշներ։ Վերջին երկուսը Կովկաս աքսորված դեկաբրիստներից էին, կրթված ու ազնիվ մարդիկ։

Հայերի գաղթի կազմակերպման և նրանց տեղավորման, հայ գերիներին պարսկական խանների ճիրաններից ազատելու և հայրենիք վերադարձնելու գործում խոշոր դեր է կատարում հայ ժողովրդի մեծ բարեկամ Ա. Ս. Գրիբոեդովը։

1828 թ. դեկտեմբերին Թավրիզից Պետերբուրգ՝ իր ընկերոջը գրած նամակում նա ասում է. «Մեր կողմն են անցել մոտ 8 հազար հայ ընտանիք և ես այժմ նրանց թողած գույքի համար գիշեր-ցերեկ հանգիստ չունեմ, պաշտպանում եմ նրանց հարստությունը և նույնիսկ եկամուտները, մի խոսքով գեթ մի բան արվում է»։

Գրիբոեդովն անարգանքի սյունին է գամում գաղթականների համար տրված նպաստները հափշտակողներին, Պասկևիչից պահանջում է ներգաղթածներին չընակեցնել կալվածատիրական հողերի վրա, որպեսզի նրանք չընկնեն կախյալ վիճակի մեջ, Երևանի խանին պատկանող անասունները, որ պետականացվել էին, բաշխել գաղթականներին և այլն։

Հայերի ներգաղթը և կենտրոնացումը Արևելյան Հայաստանում խոշոր նշանակություն ունեցավ նրանց հետագա զարգացման համար։ Ազատագրվելով պարսկական բռնակալության լծից, հայրենի հողում նրանք ձեռնամուխ եղան խաղաղ, ստեղծագործ աշխատանքի։ Նորից սկսեց ծխալ աշխատասեր հայ շինականի մարած օջախը։

3. 1828—1829 ԹԹ. ՌՈՒՍ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ

Պատերազմի սկիզբը, Կարսի գրավումը

XIX դարի 20-ական թվականներին Ռուսաստանի և Թուրքիայի հարաբերությունները գնալով ավելի ու ավելի են սրվում։ Դրան նպաստում էին Անգլիան ու Ավստրիան՝ Թուրքիային հրահրելով Ռուսաստանի դեմ։

Պատերազմը Ռուսաստանի և Թուրքիայի միջև սկսվում է 1828 թ. ապրիլին։ Բալկանյան ռազմաճակատում ռուսական զորքերը գրավում են Մոլդավիան և Վալախիան, անցնում Դանուբ գետը և շարժվում դեպի հարավ։

Կովկասյան ռազմաճակատում 1828 թ. հունիսի 14-ին գեներալ Պասկևիչը 12 հազար զինվորով, 70 հրանոթով Գյումրու մոտ անցնում է Ախուրյան գետը և շարժվում դեպի Կարս։

Կարսում կենտրոնացած թուրքական զորքերը սուլթանի հրամանով պատրաստվել էին հարձակվելու Երևանի և Գյումրիի վրա, ապա արշավել դեպի Թիֆլիս։ Բայց նրանք ուշացան և կորցրին հարձակման նախաձեռնությունը։

Հունիսի 19-ին Կարսի մոտ տեղի են ունենում առաջին մարտերը։ Ռուսները ջարդում են թուրքական զորքերին և գերությունից ազատում 750 հայ ընտանիք։ Հունիսի 20-ին ռուսական զորքերը պաշարում են Կարսը։

Հակառակորդը մեծ ուժեր էր կենտրոնացրել Կարսում (11 հազար

զինվոր, 151 հրանոթ)։ Կարսի բերդը համարվում էր անառիկ։ Թուրքերը որոշել էին Կարսի պատերի տակ ջարդել ռուսներին։

Երեք օր շարունակ Կարսի համար կատաղի մարտեր են տեղի ունենում։ Ռուսական հրետանին իր դիպուկ հարվածներով ոչնչացնում է հակառակորդի ամրությունները։ Կարսի թուրքական կայազորը համառորեն դիմադրում էր։ Նրանց հրետանին գիշեր-ցերեկ ռմբակոծում էր ռուսական դիրքերը։

Հունիսի 21-ին և 22-ին ռուսական զորքերը նոր գրոհներ են գործում Կարսի արևմտյան բարձունքների, Ղարադաղի ամրության և հայկական թաղամասի ուղղությամբ։ Հայերն ամեն կերպ օգնում են ռուսներին։ Պատմաբան Պոստոն գրում է, որ հայերը օգնում էին ռուսներին Կարսի բերդի պարիսպների վրա բարձրանալու։ Ռմբակոծության հետևանքով խիստ կերպով տուժում է հայկական թաղամասը։

Թուրքական զորքերը չդիմանալով ռուս նշանավոր հրամանատարներ Մուրավյովի, Օստեն-Սակենի, Բուրցովի, Ռաևսկու, Ռեուտի, Կարպովի զորամասերի դիպուկ հարվածներին, մեծ կորուստներ տալով նահանջում են դեպի միջնաբերդ։

Հունիսի 23-ի առավոտյան ռուսական զորքերը սրընթաց գրոհով վերցնում են Կարսը։

Այդ մարտերում ռուսները կորցնում են մոտ 400 մարդ, իսկ թուրքերը՝ ավելի քան 2000։ Ռուսները գրավում են 151 հրանոթ, մեծ քանակությամբ զենք և ռազմամթերք, 33 դրոշակ, գերի են վերցնում 1361 զինվոր, այդ թվում Կարսի փաշային։

Կարսի համար մղված մարտերում իրենց տխրագործություններով առանձնապես աչքի են ընկնում դեկաբրիստներ Բուրցովը, Վալխովսկին, Պուշչինը, Ակուլովը, Բեստուժևը, Լաչինովը, Ֆոկը և ուրիշներ։ Կարսի գրավմանը ակտիվ մասնակցում են նաև տեղի հայերը (մոտ 2500 ընտանիք)։ «Կարսի հայերը,— գրում է ականատես ռուս հեղինակը,— լիակատար հրճվանքով էին դիմավորում մեր մարտիկներին... Նրանք կազմում էին հեծյալ և հետևակ ջոկատներ՝ բաղկացած մի քանի հարյուր հոգուց, սահմանագծերի պահակակետերը պաշտպանելու համար»։

Կարսի գրավումը ունեցավ ռազմա-ստրատեգիական խոշոր նշանակություն և միանգամից կոտրեց թուրքական զորքերի հարձակողական թափը։ Կարսից հետո ռուսական զորքերը մեկը մյուսի հետևից գրավում են Ախալքալաքը (հուլիսի 24-ին), Ախալցխան (օգոստոսի 15-ին) և Արդահանը (օգոստոսի 22-ին)։

Հակառակորդն ուժեղ դիմադրություն է ցույց տալիս հատկապես Ախալցխայի գրավման ժամանակ։ Ախալցխայի փաշայությունը շուրջ

140 հազար բնակիչ ուներ, 24 սանջակ և մոտ 5 անգամ մեծ էր Կարսի փաշայությունից։ Օգոստոսի 5-ին և 9-ին Ախալցխայի մոտ ջախջախելով և փախուստի մատնելով թուրքական 30 հազարանոց կորպուսին, ռուսական զորքերը օգոստոսի 10-ին պաշարում են Ախալցխայի բերդը։

Պասկևիչն առաջարկում է կայազորի պետին հանձնվել առանց կռվի, բայց կտրական մերժում է ստանում։ «Մենք ոչ երևանցիներ ենք, ոչ էլ կարսեցիներ,— պատասխանում են նրանք։— Մենք ախալցխացիներ ենք և բերդը չենք հանձնի, քանի դեռ չի ոչնչացված մեր 15 հազարանոց կայազորը»։

Մի քանի օրվա նախապատրաստությունից հետո օգոստոսի 15-ին ռուսական զորքերն անցնում են գրոհի։ Թուրքերը կատաղի դիմադրություն են ցույց տալիս։ Մութն ընկնում է, բայց մարտերը չեն դադարում։ Պասկևիչը հրամայում է հրդեհել քաղաքը և շարունակել գրոհը։ 13-ժամյա արյունահեղ մարտերից հետո վերցվում է Ախալցխայի բերդը։

Հակառակորդը կորցնում է մոտ 5000 հոգի։ Ռուսներից սպանված ու վիրավոր սպաների թիվը կազմում էր 62, իսկ զինվորներինը՝ ավելի քան 600։

Ախալցխայի գրավման ժամանակ հայերը և վրացիները մեծ օգնություն են ցույց տալիս ռուսներին։ Իրենց քաջությամբ հայ ռազմիկներից աչքի են ընկնում Բեհբությանը, Ղորղանյանը, Բեջանյանը, Մելիք Բեգլարյանը և ուրիշներ։ Այստեղ քաջի մահով ընկնում է Բեջանյանը։ Ախալցխան գրավելուց հետո Պասկևիչը գեներալ Բարսեղ Բեհբությանին նշանակում է կայազորի պետ և շրջանի կառավարիչ։

Արդահանում տեղի հայերը ցնծությամբ են դիմավորում ռուս զորքերին և նրանց հանձնում բերդի բանալիները։ Ռուս զորքերը գերությունից ազատում են մի քանի հազար հայերի, որոնց թուրքերը Արդահանի շրջանի հայկական գյուղերից հավաքել և քշում էին դեպի Էրզրում։

Բայազետի ազատագրումը

Ռուս-թուրքական պատերազմը ոտքի է հանում նաև Բայազետի հայերին։ Բայազետի փաշայության չորս սանջակներում (Բայազետ, Դիադին, Խամուր և Ալաշկերտ) ապրող բնակիչների 80 տոկոսից ավելին հայեր էին, իսկ մնացածը՝ քրդեր և թուրքեր։

Բայազետի գավառի (սանջակի) 30 գյուղերից 20-ը հայկական էր, 6-ը՝ քրդական, 4-ը՝ թուրքական։ Բնակչության թիվը կազմում էր 2635 ընտանիք։ Դիադինի գավառում ապրում էին 266 ընտանիք, Խամուրի գավառում՝ 116, Ալաշկերտի գավառում՝ 725։ Դիադինում եղած 93 ընտանիքից 81-ը, իսկ Թոփրակ-Կալայի 314 ընտանիքից 302-ը հայեր էին։

Չնայած նրան, որ Բայազետի փաշայության մեջ հայերը մեծա-

մասնություն էին կազմում, բայց նրանք գտնվում էին իրավազուրկ վիճակում։ Թուրք փաշաներն ու քուրդ բեգերը անխնա կեղեքում ու հարստահարում էին հայ աշխատավորներին։

Թուրք փաշաներն ու քուրդ բեգերը պատերազմի ժամանակ ավազակային հարձակումներ էին գործում սահմանամերձ շրջանների հայ գյուղերի վրա, թալանում ու կողոպտում՝ խաղաղ բնակիչներին։ Այսպես, օրինակ՝ 1828 թ. հունիսին 400 հոգուց բաղկացած քրդական մի խումբ հարձակվում է Մասիսի ստորոտին գտնվող Ակոռի հայ գյուղի վրա. հուլիսի կեսերին քրդական մի մեծ խումբ կողոպտում է Կողբ գյուղը։ Հուլիսի 20-ին թուրքական ու քրդական բանդաները՝ շուրջ երեք հազար հոգի, հարձակվում են Թալինի շրջանի Մաստարա գյուղի վրա, թալանում ու կողոպտում հայ բնակիչներին։

Սահմանակից լինելով պարսկական լծից ազատագրված հայկական շրջաններին, Բայազետի հայերը դեռևս պատերազմից առաջ գաղտնի կապեր էին հաստատել Էջմիածնի հետ և ցանկություն էին հայտնել ընդունելու ռուսահպատակություն։ Նրանք արևելահայերի նման իրենց ազատագրության հույսերը կապում էին Ռուսաստանի օգնության հետ։ Այդ էր պատճառը, որ երբ 1828 թ. օգոստոսի 25-ին Հայկական մարզի կառավարիչ գեներալ Ա. Ճավճավաձեն իր փոքրաթիվ զորամասով (1400 հետևակ, 200 կազակ, 400 հայ և ադրբեջանցի կամավորներ) մտնում է Բայազետի փաշայության սահմանը, հայերն ամենուրեք նրան դիմավորում են մեծ խանդավառությամբ։

Արծափի և այլ վայրերի հայ գյուղացիները զենքը ձեռքներին միանում են ռուս զորքերին՝ ընդհանուր թշնամու դեմ կռվելու համար։

Օգոստոսի 27-ին Բայազետի մոտ տեղի ունեցած կռիվներում թուրքական հեծելազորը պարտություն է կրում և դիմում է փախուստի։ Հաջորդ օրը՝ օգոստոսի 28-ին, հայերի ճնշման տակ, Բայազետի փաշան բերդի բանալիները և իր բախտը հանձնում է ռուսներին։ Բայազետի հայ բնակիչները ցնծությամբ են դիմավորում ռուսներին։

Ա. Ս. Գրիբոեդովը, խոսելով այդ մասին, գրում է. «Աննաարին է նկարագրել այստեղի բնակիչների, մեծ մասամբ հայերի հրճվանքը, որոնք դուրս էին եկել դիմավորելու հաղթողներին, մուսուլմանների երկարատև տանջալի լծից իրենց ազատողներին»։

Բայազետը գրավելուց հետո գեներալ-մայոր Ճավճավաձեն Սարդարապատի և տեղի հայերից կազմված մի ջոկատ է ուղարկում Դիադին, որտեղ բնակիչները նրանց ընդունում են գրկաբաց։ Խամուրի գավառի հայերը պատգամավորություն են ուղարկում Բայազետ՝ Ճավճավաձեի մոտ, և խնդրում իրենց ընդունել ռուսական հովանավորության տակ։

Էրզրումի սերասկյարը, տեղեկանալով այս դեպքի մասին, զորք

է ուղարկում Ալաշկերտ և միաժամանակ կարգադրում բոլոր հայերին քշել Անատոլիայի խորքերը, այրել նրանց գյուղերը։ Հայերը դիմում են ռուսների օգնությանը։ Ճավճավաձեն, որը հայ ժողովրդի լավ բարեկամներից էր, անմիջապես կարգադրում է Ալաշկերտի հայերին փրկել թուրքերի գերեվարությունից։ Բայց մինչև ռուսական զորքերի օգնությունը հասնելը, թուրքերին հաջողվում է դատարկել ու այրել մի քանի գյուղեր։ Այդպես նրանք ամբողջապես կողոպտեցին ու կոտորեցին Չիլկանի հայ գյուղացիներին։

Սեպտեմբերի 12-ին ռուսական զորքերը և հայկական աշխարհազորը գրավում են Թոփրակ-Կալան և ազատագրում Ալաշկերտը։ Հոկտեմբերի սկզբներին նրանք առաջ են շարժվում դեպի Մուշ և գրավում մի շարք գյուղեր։ Տեղի հայերը ամենուրեք գրկաբաց են ընդունում ռուս զորքերին։ Պատնոց գյուղի հայ բնակիչները նյութական և ռազմական օգնություն են ցույց տալիս ռուսական զորքերին։

Էրզրումի սերասկյարը, տեղեկանալով Ճավճավաձեի ջոկատի առաջխաղացման մասին, 4 հազարանոց մի զորամաս և 5 հրանոթ ուղարկում է նրա դեմ։ Մուշի փաշայի և մի քանի քուրդ ցեղապետների գինված բանդաներն իրենց հերթին անընդհատ հարձակումներ էին գործում ռուսական և հայկական փոքրաթիվ ուժերի վրա։

Հաշվի առնելով այդ ամենը, գեներալ Ճավճավաձեն հոկտեմբերի վերջերին պաշտպանողական մարտերով նահանջում է դեպի Ալաշկերտ։ Մուշի շրջանի հայերից 160 ընտանիք, թուրք փաշաների ու քուրդ բեգերի հալածանքներից ազատվելու համար, ռուս զորքերի հետ տեղափոխվում են Ալաշկերտ և Հայկական մարզ։

Այսպիսով, 1828 թ. մի քանի ամիսների ընթացքում ռուսական զորքերը գրավում են Կարսը, Ախալքալաքը, Ախալցխան, Արդահանը և Բայազետը։ Թուրքերը կորցնում են Անդրկովկասի սահմանագծում ունեցած իրենց ռազմա-ստրատեգիական գրեթե բոլոր կարևոր ամրությունները։

Ռուսական զորքերի այս հաղթանակները ձեռք բերվեցին հայերի ակտիվ մասնակցությամբ։ Թուրքական բռնակալության ծանր լծից ազատագրվելու հույսերը Ռուսաստանի հաղթանակի հետ կապելով, հայերը, ինչպես ռուս-պարսկական պատերազմի ժամանակ, այս անգամ ևս ամեն կերպ օգնում ու օժանդակում էին ռուս զորքերին։ Պատերազմի հենց սկզբին Արարատյան դաշտի հայերը կազմակերպեցին մոտ 2800 հոգուց բաղկացած կամավորական հետևակ ու հեծյալ ջոկատներ։ Նրանց օրինակին հետևեցին թուրքական լծից ազատագրված հայ բնակիչներից շատերը։

Հայ կամավորները, ռուս զորքերի հետ միասին, գործուն մասնակցություն ունեցան Կարսի, Արդահանի, Ախալքալաքի, Ախալցխայի,

Բայազետի և Ալաշկերտի համար մղված մարտերին: Նրանցից շատերը աչքի ընկան իրենց կատարած քաջագործություններով և պարգևատրվեցին շքանշաններով ու մեդալներով:

Պատերազմական գործողությունները 1829 թվականին

Ռուսական զորքերի հաղթանակները Կովկասյան և բալկանյան ռազմաճակատներում մեծ իրարանցում են առաջ բերում ոչ միայն Թուրքիայում, այլև Անգլիայի, Ֆրանսիայի ու Ավստրիայի կառավարող շրջաններում:

Անգլիական գաղութարարները, հավատարիմ ուրիշի ձեռքով կրակից շագանակ հանելու իրենց ավանդական քաղաքականությանը, աշխատում էին Թուրքիայի և Պարսկաստանի միջև ռազմական բլոկ ստեղծել ընդդեմ Ռուսաստանի: Նրանք ամեն կերպ ձգտում էին նորից պատերազմի մեջ քաշել Իրանը և դրանով իսկ չլատել Կովկասյան ռազմաճակատում Թուրքերի դեմ գործող ռուսական ուժերը: Հենց այդ նպատակով էլ անգլիական գործակալները 1829 թ. հունվարի 30-ին Թեհրանում կազմակերպեցին Պարսկաստանի ռուսական դեսպան Ա. Ս. Գրիբոեդովի և դեսպանատան աշխատակիցների սպանությունը, որն արտառոց երևույթ էր դիվանագիտական կյանքում:

Անգլիացիների դավերը չիրականացան: Նիկոլայ I-ը, որն առանց այդ էլ չէր սիրում Գրիբոեդովին՝ նրա ազատասիրական հայացքների համար, բավարարվեց սոսկ նրանով, որ շահը պաշտոնական ներողություն խնդրեց, որով և կանխվեց ռուս-պարսկական նոր պատերազմը:

Ռուսաստանի դեմ հանդես են գալիս նաև Ավստրիան, Ֆրանսիան և Պրուսիան: Ավստրիայի կանցլեր Մետերնիխը, խախտելով Ռուսաստանի հետ կնքած «սրբազան դաշինքը», առաջարկում է եվրոպական տիրություններին բլոկ կնքել Ռուսաստանի դեմ և իր զորքերը մոտեցնում է արևելյան սահմաններին:

Թուրքական սուլթանը, ոգեշնչված Անգլիայի, Ֆրանսիայի ու Ավստրիայի բռնած դիրքից, նրանց ցույց տված ռազմական ու քաղաքական օգնությունից, կազմում է ավելի ագրեսիվ պլաններ և, 1829 թ. գարնանը վերսկսելով պատերազմը, անցնում հարձակողական գործողությունների:

Էրզրումում Թուրքերը մեծ բանակ են կենտրոնացնում, որը պետք է հարձակման անցներ Բայազետի, Կարսի և Ախալցխայի ուղղությամբ, գրավեր Արևելյան Հայաստանն ու Վրաստանը:

Ռուսական զորքերն իրազեկ լինելով հակառակորդի պլաններին, պատրաստվում են հակահարվածի: Գեներալ Պասկևիչը միաժամանակ դիմում է Անդրկովկասի տեղական ժողովուրդներին՝ կամավորական նոր ջոկատներ կազմակերպելու, Կովկասյան կորպուսի զորամասերի հետ միասին թշնամուն վերջնականապես ջախջախելու համար:

Արձագանքելով այդ կոչին, Կարսի, Արդահանի, Բայազետի, Ալաշկերտի հայերը կազմակերպում են մի շարք մարտական նոր ջոկատներ: Ռուս հեղինակներից մեկը վկայում է, որ Կարսեցի և բայազետցի հայերից շատերը, մտնելով կամավորական ջոկատների մեջ, հրաժարվում էին նույնիսկ ոռճիկ ստանալուց: 1829 թ. հոկտեմբերի 10-ին թագավորին գրած իր մի զեկուցագրի մեջ Պասկևիչն ասում է. «Բայազետում երկու հազար հայեր մեր զորքերի շարքերում մարտնչում էին թշնամու դեմ... Կարսում հայերից կազմվեց մի գումարտակ և մոտ 800 հեծյալներ, որոնք մեր սահմանները պաշտպանում էին հարձակումներից»:

Բայազետի մելիք Մարտիրոսը սեփական նախաձեռնությամբ մի քանի օրում կազմակերպում է 500 հոգուց բաղկացած կազմավորական մի ջոկատ՝ Պասկևիչից պահանջելով միայն 300 հրացան: Պասկևիչի կարգադրությամբ մելիք Մարտիրոսը նշանակվում է ջոկատի հրամանատար: Զենք ու փամփուշտ ստանալով, այդ ջոկատն ակտիվորեն մասնակցում է թշնամու դեմ մղվող մարտերին:

Հայ կամավորների հետ մեկտեղ պատերազմական գործողություններին ակտիվ մասնակցություն են ունենում նաև վրացական և ադրբեջանական կամավորական ջոկատները: Կարսի, Արդահանի, Ախալցխայի և այլ վայրերի համար մղված մարտերում աչքի ընկան և պարգևատրվեցին վրացի, ադրբեջանցի կամավորներից շատերը: Թուրքերի դեմ մղված կռիվներին ակտիվ մասնակցություն է ունենում նաև 400 հոգուց կազմված քրդական հեծյալ ջոկատը: Թուրքական կառավարության ճնշումներից դժգոհ քրդերի համակրանքը Ռուսաստանի կողմն էր:

Ռուս մեծ բանաստեղծ Ա. Ս. Պուշկինը 1829 թ. գալով Կովկաս, լինում է Պասկևիչի գործող բանակում, ուղեկցում նրան մինչև Էրզրում: Նա, որպես ականատես, Ղարաբաղի հեծյալ կամավորական գնդի մասին գրում է. «Հունիսի 17-ի առավոտյան մենք նորից լսեցինք հրաձգության ձայներ և երկու ժամ հետո տեսանք Ղարաբաղի գունդը, որը վերադառնում էր՝ բերելով թուրքական 8 դրոշակ»:

1829 թվականի գարնանից Արևմտյան Հայաստանի տերիտորիայում վերստին ծավալվում են պատերազմական գործողությունները: Հունիսի 19—20-ին՝ Սողանլուղի լեռներում ռուսական զորքերը ջարդում ու ետ են շպրտում Կարսի և Ախալցխայի վրա արշավող Թուրքական զորքերին: Գերի են վերցնում Հակկի փաշային, 1200 զինվոր ու սպա, ամբողջ հրետանին, մեծ քանակությամբ զենք ու ռազմամթերք: Այս մարտերում դեկաբրիստներից աչքի են ընկնում Բուրցովը, Վալխովսկին, Սեմիշևը և ուրիշներ:

Հունիսի 24-ին ռուսական զորքերը գրավում են Հասան-Կալայի բերդը, Պուշկինի խոսքերով ասած՝ «Արզրումի բանալին»:

լով ռուսների սրընթաց հարվածներին, թուրքերն անկանոն նահանջում են դեպի Էրզրում։

Էրզրումի ճանապարհին Բասենի և մյուս շրջանների հայ գյուղացիները խմբերով ընդառաջ էին ելնում ռուս զորքերին, ողջունում նրանց գալուստը, հաց, միս և այլ մթերքներ մատակարարում նրանց։

Հունիսի 26-ին շրջապատելով Էրզրումը, Պասկևիչն առաջարկում է սերասկյարին՝ հանձնվել առանց կռվի, խոստանալով կյանքի և գույքի ապահովություն։ Հաջորդ օրը, մերժում ստանալով, ռուսական զորքերն սկսում են ռմբակոծել քաղաքը։ Էրզրումի սերասկյարը հարկադրված բերդի բանալիները և իր բախտը հանձնում է Պասկևիչին։ Այդ օրը նա գլխատել էր տվել իր հայ բժշկին, որը նրան խորհուրդ էր տվել քաղաքը հանձնել ռուսներին առանց արյունահեղության։

Ռուս զորքերի մուտքը Էրզրում մեծ ոգևորությամբ են դիմավորում տեղի հայերը, որոնց թիվը հասնում էր մոտ 20 հազարի։ Հայ կանայք ծաղկեփնջեր էին մատուցում ռուս զինվորներին։ Ա. Ս. Պուշկինը, նկարագրելով ռուսական զորքերի մուտքը Էրզրում, գրում է. «Մենք մըտանք քաղաք, որ զարմանալի տեսարան էր ներկայացնում։ Թուրքերը իրենց տափակ կտուրներից մռայլ նայում էին մեզ վրա։ Հայերն աղմըկելով վխտում էին նեղ փողոցներում։ Նրանց տղաները վազում էին մեր ձիերի առջևից, խաչակնքելով ու կրկնելով՝ քրիստոնյանե՛ր, քրիստոնյանե՛ր... Մեծ զարմանքով ես այստեղ հանդիպեցի իմ Արտեմին (Պուշկինի հայ ուղեկիցը— Վ. Պ.), որն արդեն շրջագայում էր քաղաքում»։

Էրզրումից հետո ռուսական զորքերը մեկը մյուսի հետևից գրավում են Խնուսը, Քղին, Դերջանը, Մուշը, Օլթին և Բայբուրդը։

Օլթիի գրավմանը ակտիվ մասնակցում են հայերից և ադրբեջանցիներից կազմված կամավորական երկու գնդեր։ 1829 թ. հուլիսի 19-ին Բայբուրդի համար մղված մարտերում աչքի է ընկնում գեներալ Բուրցովի զորամասում գործող հայկական հեծելազունդը։ Այս մարտերում ծանր վիրավորվում է խիզախ հրամանատար դեկաբրիստ Բուրցովը, որը հետո մահանում և թաղվում է Բայբուրդում։

Պատերազմական գործողությունների այդ լարված շրջանում հակառակորդը փորձում է խռովություններ կազմակերպել Թիկունքում (Էրզրումում, Բայազետում և այլուր)։ Հուլիսին Էրզրումի թուրքերը պատրաստվում են հարձակվել ռուսական կայազորի վրա և ոչնչացնել նրան։ Հայերի օգնությամբ կանխվում է թուրքերի դավադրությունը։ Դավադիրներից 12 հոգի բանտարկվում և ուղարկվում են Երևան։ Քաղաքի պաշտպանության համար Պասկևիչի կարգադրությամբ կազմակերպվում է հայկական պահակախումբ, որն ուներ սպիտակ դրոշակ, իսկ զինվորներն իրենց կրծքին կրում էին կարմիր մահուդից կարված խաչեր։ Տեղի հայ հարուստներից մեկը՝ Մկրտիչ աղան, իր միջոցներով

կազմակերպում է հայկական հեծելազոր։ Հայերի օրինակին հետևում են Էրզրումի հույները՝ տալով 100 զինվոր։

Բայազետի ներոսական պաշտպանությունը

1829 թվականի հունիսին, երբ ռուսական զորքերը Սողանլուղի և Զևինի բարձունքներով արշավում էին դեպի Էրզրում, Վանի փաշան, 15 հազարանոց զորքով, 12 հրանոթով հարձակվում է Բայազետի վրա։ Թուրքական զորքերը ճանապարհին կողոպտելով ու ավերելով Ալաշկերտի հայկական գյուղերը, հունիսի 20-ին հասնում են Բայազետ և կռվի բռնվում տեղի ռուսական կայազորի ու հայ աշխարհազորականների հետ։

Բայազետի պաշտպանությունը գլխավորում էին գեներալներ Պապովը և Պանյուտինը, որոնք 1812 թվականի հայրենական պատերազմի ակտիվ մասնակիցներից էին, մարտերում կոփված հրամանատարներ։ Նրանց տրամադրության տակ կար 13 հետևակային վաշտ (1482 մարդ), կազակային մի գունդ (339 մարդ), 1000 հոգուց կազմված հայկական գումարտակ, 17 հրանոթ և մեկ ամսվա պաշար։

Հունիսի 20-ի վաղ առավոտյան թուրքական հետևակը և հեծելազորը մեծ բազմությամբ գրոհում են Բայազետի կայազորի վրա։ Հինգ ժամ շարունակ տեղի են ունենում կատաղի մարտեր։ Արևելյան մարտակոցը 4 անգամ ձեռքից-ձեռք է անցնում։

Ռուսներն ու հայերը փոքրաթիվ ուժերով արիաբար դիմադրում են թշնամուն, մի քանի անգամ անցնելով սվինամարտի։ Դաժան մարտերը տևում են մինչև երեկո։ Հակառակորդը մեծ կորուստների գնով, Բայազետի մուսուլմանական թաղի բնակիչների օգնությամբ, երեկոյան գրավում է այդ թաղը և սրի քաշում ձեռքն ընկած բոլոր հայերին ու ռուսներին։

Բայազետի կայազորի առանց այդ էլ ծանր դրությունը դառնում է անհուսալի։ Նրանց 17 հրանոթներից 4-ը ընկնում է թշնամու ձեռքը, հրետանավորներից շատերը, կայազորի մեկ հինգերորդից ավելին սպանվում և վիրավորվում են։

Հունիսի 20-ի գիշերը տեղի է ունենում հրամանատարների խորհրդակցություն, որտեղ որոշվում է դիմադրել մինչև վերջ և չհանձնել քաղաքը։ Այդ գիշեր նրանք կենտրոնացնում են իրենց փոքրաթիվ ուժերը, իսկ դատարկ վրանները թողնում նույն տեղում՝ թշնամուն խաբելու համար։

Հունիսի 21-ին առավոտյան ռուսական հրետանին կործանիչ կրակ է տեղում քաղաք մտած հակառակորդի վրա և քանդում նրանց դիրքերը։ Թուրքերը մի քանի անգամ մեծ բազմությամբ, աղմուկ-աղաղակով գրոհում են ռուսների վրա, բայց ծանր կորուստներ կրելով հետ են քաշվում։ Ռուս և հայ մարտիկները թույլ էին տալիս, որ հակա-

ռակորդը մոտենա և այնուհետև դիպուկ կրակով ոչնչացնում էին նրան։

Կեսօրին թշնամին դուրս է շպրտվում քաղաքից և այլևս չի համարձակվում կրկնել իր գրոհները, իսկ մի քանի օր հետո լսելով, որ Պասկևիչի բանակը մտել է Էրզրում, շտապ նահանջում է դեպի Վան։

Բայազետի համար մղված արյունահեղ մարտերը տևում են 32 ժամ։ Թուրքերը կորցնում են մոտ 2000 մարդ, ռուսները՝ 425 վիրավոր և սպանված։ Սպանվածների մեծ մասի գլուխները թուրքերը գաղանաբար կտրել էին։ Մարտերից հետո թուրքական թաղում հայտնաբերվում են 16 հայ պահակների դիակները՝ բոլորը գլխատված։

Բայազետի հերոսական պաշտպանության ժամանակ ռուսներից և հայերից շատերն են աչքի ընկնում իրենց արիությամբ ու քաջությամբ։ Գեներալ-մայոր Պանյուտինը ծանր վիրավոր շարունակում է վարել մարտը և սեփական օրինակով ոգեշնչել մարտիկներին։

Արիաբար մարտնչում էին հրետանավորները. 250 հոգուց 190-ը սպանվել և վիրավորվել էին։ Երիտասարդ հրետանավոր Սելիվանովը երեք անգամ ծանր վիրավորվելուց հետո էլ ոչ մի քայլ չի հեռանում իր հրանոթից, մինչև վերջին շունչը հարվածում է թշնամուն և քաջի մահով ընկնում հրանոթի մոտ։

Ռուս զինվորներից ետ չէին մնում և հայ կամավորները, որոնք սրընթաց գրոհում էին հակառակորդի վրա և մեծ կորուստներ պատճառում նրան։ Հունիսի 21-ի դաժան մարտերի ժամանակ, որոնք և վճռեցին Բայազետի կայազորի բախտը, հայկական գումարտակը բացառիկ քաջություն և արիություն է ցուցաբերում։

Գեներալ-մայոր Պապովի վկայությամբ, «Հայերը կռվում էին և մեռնում որպես հերոսներ... նրանց ղեկավարները միշտ առջևում էին լինում և գրեթե բոլորը վիրավորվեցին»։ Պասկևիչին գրած մի զեկուցագրում նա ասում է. «Հայերը ամենավտանգավոր ժամանակ մեծ անձնվիրություն ցույց տվին մեզ»։

Բայազետի հայ և ռուս պաշտպանները, ձեռք ձեռքի տված, մարտնչում են թուրքական զավթիչների դեմ։ Նրանցից շատերը պարգևատրվեցին մարտական շքանշաններով ու մեդալներով։ Հայերից Բարսեղ Արծրունին արժանանում է «Արիության համար» արծաթե մեդալի, Նահապետ Բուդալյանը՝ «Պատվո նշան» շքանշանի և այլն։

Ադրիանապոլսի պայմանագիրը

Բալկանյան ռազմաճակատում գործող ռուսական զորքերը 1829 թ. օգոստոսին հասնում են Կոստանդնուպոլսի դռներին։ Սուլթան Մահմուդ II-ը հարկադրված հաշտություն է խնդրում, որը և կնքվում է Ադրիանապոլսում 1829 թ. սեպտեմբերի 2-ին։

Ադրիանապոլսի պայմանագրով Սև ծովի կովկասյան ափերը՝

Կուբանից մինչև Փոթի ներառյալ, ինչպես և Ախալցխան ու Ախալքալաքը, անցնում են Ռուսաստանին։

Ընդհանուր ներում է շնորհվում պատերազմին մասնակցած երկու կողմերի հպատակներին ու ռազմագերիներին։

Թուրքիայի տիրապետության տակ գտնվող հայերին իրավունք է տրվում 18 ամսվա ընթացքում, իրենց շարժական գույքով, անցնել Ռուսաստանի տիրապետության տակ։

Թուրքիան ճանաչում է Հունաստանի անկախությունը, Մոլդավիայի, Վալախիայի ու Սերբիայի ավտոնոմիան։

Ադրիանապոլսի պայմանագիրը ամրապնդում էր Ռուսաստանի տնտեսական-քաղաքական դիրքերը Բալկաններում, Սև ծովի ու նեղուցների վրա և Անդրկովկասում։

Ադրիանապոլսի պայմանագիրը որոշ դրական նշանակություն ունեցավ նաև Անդրկովկասի ժողովուրդների համար։ Արևելյան Հայաստանը, Վրաստանը և Ադրբեջանը ազատվեցին թուրքական զավթիչների մշտապես սպառնացող վտանգից, Ախալքալաքը, Ախալցխան, Փոթին և մի շարք այլ բնակավայրեր ազատագրվեցին թուրքական լծից և անցան Ռուսաստանի տիրապետության տակ։

Չնայած դրան, Ադրիանապոլսի պայմանագիրը հայերի համար ունեցավ ծանր հետևանքներ։ Արևմտյան Հայաստանում գրավված տերիտորիաները՝ Կարսը, Արդահանը, Բայազետը, Էրզրումը, Բայբուրդը և մյուս վայրերը վերադարձվեցին Թուրքիային։

Արևմտահայերի ճնշող մեծամասնությունը թուրքական լծից ազատագրվելու իր հույսերը կապում էր Ռուսաստանի օգնության հետ։ Պատերազմի տարիներին նրանք հնարավոր բոլոր միջոցներով օգնում էին ռուս զորքերին, զենք վերցրած կռվում էին ընդհանուր թշնամու դեմ։ Առհասարակ մեծ է եղել հայ ժողովրդի դերը Անդրկովկասը թուրքական ու պարսկական լծից ազատագրելու և Ռուսաստանին միացնելու գործում։ Այդ ամենը նա կատարում էր իր ազատության ու լավ ապագայի համար։

Պատերազմն ավարտվեց Ռուսաստանի հաղթանակով, բայց հաշտության պայմանագիրը չարդարացրեց հայերի հույսերը։ Նրանց ցանկություններն ու արդարացի պահանջները չիրագործվեցին։

Անգլիայի, Ֆրանսիայի, Ավստրիայի ու Պրուսիայի սպառնալիքից վախեցած Նիկոլայ I-ն իր զորքերը դուրս բերեց գրաված վայրերից։ Արևմտյան Հայաստանը վերստին մնաց թուրքական յաթաղանի տակ։

Արևմտահայերի դաղթը

Ադրիանապոլսի պայմանագիրը հայերի համար ծանր կացություն էր ստեղծում։ Նրանք կա՛մ պետք է մնային իրենց բնակավայրերում և իրենց բախտը վերստին հանձնեին թուրքական բռնակալների քմահաճույքին, կա՛մ

պետք է թողնեին իրենց հայրենի հողերը և անցնեին Ռուսաստանի տիրապետության տակ։

Ռուսների նկատմամբ հայերի ունեցած հավատարմությունը, պատերազմի ընթացքում ռուս զորքերին ցույց տրված նյութական ու ռազմական օգնությունը, հայ կամավորական գնդերի ակտիվ մասնակցությունը թուրքերի դեմ մղված կռիվներին և այլն, այս ամենը ծանր հետևանքներ պետք է ունենային Թուրքիայի տիրապետության տակ մընացող հայերի համար։

Գեներալ Պասկևիչը ևս դժգոհ մնաց, երբ իմացավ, որ իր նվաճած տերիտորիաները վերադարձվելու են Թուրքիային։ Նա առաջարկում է Կարսը և Բայազետը, որպես ռազմա-ստրատեգիական կարևոր կետեր, պահել Ռուսաստանի տիրապետության տակ։ Բայց այդ էլ չի հաջողվում։

Երբ վավերացվում է Ադրիանապոլսի պայմանագիրը և Պասկևիչին կարգադրվում է իր զորքերը դուրս բերել Արևմտյան Հայաստանից, 1829 թ. հոկտեմբերի 10-ին Էրզրումից նա թագավորին գրում է. «Հաշտությունը, որ Ձերդ կայսերական մեծությունը բարեհաճել եք շնորհել բարձրագույն դռանը... այստեղ, Ասիայում, ընդհանուր ուրախության հետ իրավացի տրտմության մեջ է դցել ժողովրդի այն մասին, որն արժանի է մեր կարեկցությանը և՛ մշտապես կրած իր տառապանքներով, և՛ ռուսական զենքի հաջողությանը ցույց տված իր փորձով, և՛ այն դժբախտ ապագայով, որ նրան սպասում է»։

Այնուհետև նշելով, թե ինչպես հայերը պատերազմի ժամանակ եղել են իրենց համակիրներն ու դաշնակիցները, Բայազետում, Կարսում, Էրզրումում և այլուր իր զորքերի շարքում կռվել են թշնամու դեմ, Պասկևիչը խնդրում է թույլ տալ իրեն «մոտ 10 հազար ընտանիքների, որոնց անխուսափելի վտանգ է սպառնում», վերաբնակեցնել Հայկական մարզում և Վրաստանում, այդ նպատակի համար տրամադրելով մեկ միլիոն ռուբլի։

Իր մի այլ պաշտոնական գրության մեջ Պասկևիչն ասում է. «Այս ժողովրդի (հայերի—Վ. Պ.) անսահման նվիրվածությունը, ռուսական զենքի հաջողության համար պատերազմի ընթացքում բազմիցս փորձով ցույց տված եռանդը արժանի է, որ կարելից լինենք և պաշտպանենք նրան ապագայում մահմեդականների հալածանքից ու վրեժխնդրությունից»։

Անդրկովկասում գրաված տերիտորիաների բնակեցման հարցը վաղուց էր զբաղեցնում Պասկևիչին։ Դեռևս 1829 թ. հունվարի 5-ին գրած իր մի զեկուցագրում նա պահանջում էր Արաքսի ռուսական ափը, Փամբակ-Շորագյալը, Սևանա լճի շրջակայքը և Սոմխեթը բնակեցնել 20000 ընտանիք (մոտ 80000)՝ մալոռուս կազակներով։

Պասկևիչի այս ծրագիրը չի իրագործվում և հեշտ էլ չէր իրագործել։ Մնում էր նոր գրաված շրջանները բնակեցնել աշխատասեր ու արդյունաբերող, Ռուսաստանին հավատարիմ հայ բնակչությամբ. այդպես էլ արվում է։

Դեռևս մինչև գաղթի թույլտվությունը, հայերից շատերը, ռուս զորքերին միացած, թողնում էին իրենց բնակավայրերը։ Իսկ երբ հրապարակվում է պաշտոնական հրահանգը, Էրզրումի, Կարսի, Բայազետի և այլ շրջաններից միանգամից ծայր է առնում հայերի մասսայական գաղթը դեպի ռուսական սահմանը։ Ոչ ձմռվա դաժան ցրտերը և ոչ էլ թուրքական կառավարության ու անգլո-ամերիկյան միսիոներների պրովոկացիաները չեն կարողանում կանգնեցնել հայ գաղթականների քարավանները։

Բաբերդցի հարուստ վաճառական Գևորգ աղան և մի քանի հարուստներ փորձում են համոզել ժողովրդին չգաղթել, սակայն ոչ մի արդյունքի չեն հասնում։ Երբ թուրքական կառավարության և Պոլսի պատրիարքարանի կողմից Էրզրում ուղարկած Բարդուղիմեոս եպիսկոպոսը փորձում է ժողովրդին համոզել վերադառնալ իրենց տեղերը, նրան պատասխանում են. «Եթե անգամ Քրիստոսն իջնի երկնից և մեզ նրամայի մնալ օսմանցոց ձեռքում, նրան էլ չենք լսի»։

1829—1830 թթ. Էրզրումից, Կարսից, Բայազետից գաղթում և Ռուսաստանի տիրապետության տակ են անցնում ավելի քան 90 հազար հայեր։

Էրզրումի (Կարինի) հատվածը՝ 7300 ընտանիք, հիմնականում բնակվում է Ախալցխայում ու Ախալքալաքում, կարսեցիք՝ 2500 ընտանիք՝ Շիրակի (Գյումրիի) և Թալինի շրջաններում, բայազետցիք՝ 4215 ընտանիք՝ Սևանա լճի մոտ։ Առանձին ընտանիքներ բնակություն են հաստատում Սուրմալուի, Դարաչիչակի, Ապարանի, Փամբակի և այլ շրջաններում։

Էրզրումի հայերի հետ գաղթում են նաև հույներ, որոնք բնակվում են Գյումրիի և Ծալկայի շրջաններում։

Արևմտահայ գաղթականները, պարսկահայ գաղթականների նման, 6 տարով ազատվում էին պետական հարկից, իսկ 3 տարով՝ զեմստվոյական պարհակներից։ Կարիքավոր ընտանիքներին նպաստ էր տրվում մինչև 25 ռուբլի։

Գաղթականները բաժանվում էին երեք խավի՝ երկրագործներ, արհեստավորներ ու առևտրականներ։ Երկրագործները բնակեցվում էին գյուղերում, պետական հողերի վրա, իսկ արհեստավորները և առևտրականները՝ քաղաքներում կամ քաղաքատիպ վայրերում։

Գաղթականական կոմիտեին կարգադրված էր հաշվի առնել կլիմայական և կենցաղային պայմանները, աշխատել տարբեր տեղեր չը-

բնակեցնել միևնույն գյուղի կամ շրջանի բնակիչներին, հող տանել նրանց անհրաժեշտ բնակարաններով, հողով, ջրով, արոտավայրերով ապահովելու մասին և այլն։

Արևմտահայ գաղթականների ճնշող մեծամասնությունը գյուղացիներ էին և արհեստավորներ։ Նոր բնակավայրերում նրանք զգալի դժվարությունների հանդիպեցին, բայց հետզհետե հաղթահարեցին դրանք, սկսեցին մշակել ամայի ու անմարդաբնակ հողերը, այգիներ ու պարտեզներ տնկել, ջրանցքներ ու ճանապարհներ կառուցել, արհեստանոցներ ու շուկաներ բանալ և այլն։

Արևմտահայերի և պարսկահայերի ներգաղթը խոշոր նշանակություն ունեցավ Արևելյան Հայաստանի և ամբողջ Անդրկովկասի գյուղատնտեսության, արհեստների և առևտրի հետագա զարգացման համար։

4. ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՀԵՏ ԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԻԱՑՄԱՆ ՊԱՏՄԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Թուրքմենչայի և Ադրիանապոլսի հաշտության պայմանագրերով ավարտվեցին 1826—1828 թթ. ռուս-պարսկական և 1828—1829 թթ. ռուս-թուրքական պատերազմները։ Շուրջ քառորդ դար Հայաստանի տերիտորիայում մղված պատերազմներից հետո ստեղծվեց խաղաղություն, որը Իրանի հետ մշտական եղավ, իսկ Թուրքիայի հետ տևեց մինչև Ղրիմի պատերազմը։

Ադրիանապոլսի պայմանագիրը, ինչպես տեսանք, որքան էլ նպաստավոր էր Ռուսաստանի համար, այնուամենայնիվ, քիչ բան տվեց հայ ժողովրդին։ Ռուսաստանի օգնությամբ Թուրքիայի լծից ազատագրվելու նրա ձգտումներն ու ցանկությունները չիրականացան։ Արևմտյան Հայաստանը եվրոպական մեծ տերությունների նենգ ու խարդախ քաղաքականության հետևանքով մնաց Թուրքական բռնակալության ծանր լծի տակ։

Հայ ժողովրդի համար համեմատաբար խոշոր նշանակություն ունեցավ Թուրքմենչայի պայմանագիրը։ Այս պայմանագրով Արևելյան Հայաստանը ազատագրվեց պարսկական բռնակալության դարավոր լծից և միացվեց Ռուսաստանին։ Դա շրջադարձային կետ հանդիսացավ հայ ժողովրդի պատմության մեջ և առաջադիմական խոշոր նշանակություն ունեցավ նրա հետագա զարգացման համար։

Մեր պատմագրության մեջ Հայաստանի միացումը Ռուսաստանին տարբեր ժամանակներում տարբեր ձևով է գնահատվել։

Կղերա-բուրժուական պատմաբանները, ցարական պաշտոնական պատմագրության հետևությամբ, ներբողներ են կարդացել «ամենաողորմած» թագավորների, իշխանների ու գեներալների հասցեին, այսպես կոչված «ազատագրական միտիա» են վերագրել ցարիզմին, իդեալականացրել ցարիզմը, անտեսել նրա վարած նվաճողական, գաղութային քաղաքականությունը։

Պրոֆ. Լենն իր մի շարք աշխատություններում, Պոկրովսկու դպրոցի ազդեցության տակ, Հայաստանի միացումը Ռուսաստանին դիտում է որպես «չարիք», հակադրվելով ցարիզմի ջատագով պատմաբանների կոնցեպցիային, որոնք այդ համարում էին «բացարձակ բարիք»։

Սովետական Հայաստանի մարքսիստ պատմաբանները, 1940-ական թվականներից սկսած, հանդես են եկել այդ սխալ, արատավոր տեսակետների դեմ և հիմնականում ճիշտ, գիտական-մարքսիստական գնահատական տվել Հայաստանի միացման ակտին։ Նրանք, մի կողմից, բարձր են գնահատել Ռուսաստանի և հատկապես ռուս ժողովրդի կատարած առաջադիմական դերը Հայաստանում, իսկ մյուս կողմից՝ քննադատության ենթարկել ցարիզմի գաղութային քաղաքականությունը։

Արդ հանրագումարի բերելով, տեսնենք, թե որն է Ռուսաստանի հետ Հայաստանի միացման պատմական նշանակությունը։

1. Ռուսաստանին միանալով հայ ժողովրդի մի մասը մեկընդմիշտ ազատագրվեց հետամնաց Թուրքիայի ու Պարսկաստանի ռազմա-ֆեոդալական դեսպոտիզմի ծանր լծից, ֆիզիկական բնաջնջման ու ասիմիլյացիայի վտանգից։

2. Պարսկական նախկին խանությունների, ֆեոդալական մասնատվածության փոխարեն Ռուսաստանի տիրապետության տակ ստեղծվեց շատ թե քիչ ամբողջական մի տերիտորիա (Հայկական մարզ), որը և դարձավ հայ ժողովրդի ամենից ավելի հաստատուն ու ապահով կենտրոնը։ Ֆեոդալական նախկին անարխիայի ու խժդժությունների փոխարեն երկրում հաստատվեցին վարչական նոր, կենտրոնացված կարգեր և նոր օրենքներ, որոնք այս կամ այն չափով ապահովում էին բնակչության կյանքն ու գույքը, պաշտպանում նրանց արտաքին թշնամիներից։

3. Ռուսաստանի օգնությամբ շուրջ 140 հազար հայեր Պարսկաստանի ու Թուրքիայի սահմաններից գաղթեցին և բնակություն հաստատեցին Արևելյան Հայաստանում ու Անդրկովկասում։ Ռուսաստանի տիրապետության տակ համախմբվեց հայ բնակչությունը, հիմնական օջախ ստեղծվեց հայ ժողովրդի տնտեսական, հասարակական-քաղաքական և ազգային-կուլտուրական կյանքի զարգացման համար։

Եթե նկատի ունենանք այն փաստը, որ դարերի ընթացքում Արարատյան դաշտը, հայ ժողովրդի պատմական բնօրրանը, օտար նվաճողների ձեռքով գրեթե դատարկվել էր հայ տարրից, ավերվել ու ամայացվել էին հարյուրավոր հայկական գյուղեր, Հայկական մարզում մնացել էր ընդամենը 25 հազար հայ, Երևանում և այլ կենտրոններում

ավելի շատ մահմեդականներ էին ապրում, քան հայեր, ապա հասկանալի կլինի, թե ինչպիսի խոշոր նշանակություն ուներ հայ բնակչության կենտրոնացումը Արևելյան Հայաստանում:

Ռուսաստանին միանալուց առաջ Արևելյան Հայաստանում հայերը փոքրամասնություն էին կազմում՝ 34 տոկոս, իսկ միացումից հետո, գաղթի շնորհիվ, դարձան մեծամասնություն՝ 59 տոկոս: Կասկածից վեր է, եթե պարսկական տիրապետությունը գոյատևեր, Արևելյան Հայաստանը վերջնականապես կկորցներ իր ազգային կերպարանքը:

4. Ռուսաստանի տիրապետության տակ նկատելի չափով փոխվեց ժողովրդի դրությունը: Ճիշտ է, նոր կարգերի ժամանակ չվերացան սոցիալական, ազգային ու դասակարգային ճնշումները, բայց ժողովրդի ճնշող մեծամասնությունը կազմող գյուղացիությունն ազատագրվեց պարսիկ խաների բարբարոսական ճնշումներից ու կամայականություններից, հայ գաղթականները 6 տարով ազատվեցին պետական հարկից, 3 տարով՝ պարհակներից, ընդարձակվեց ցանքերի տարածությունը, ավելացան գյուղացիների եկամուտները, զարգացան արհեստները ու առևտուրը և այլն:

5. Ռուսաստանի տիրապետության տակ անցնելով, հայ ժողովուրդը կապվեց ուժեղ, կենտրոնացված պետության, Թուրքիայից և Պարսկաստանից տնտեսապես ու կուլտուրապես ավելի զարգացած երկրի հետ, որը և նպաստեց նրա տնտեսական ու կուլտուրական հետագա զարգացմանը:

Ռուսաստանի հետ միանալով հայ ժողովուրդը ազատագրվեց պարսկական ու թուրքական հետամնաց ֆեոդալական կարգերի կապանքներից և աստիճանաբար կանգնեց զարգացման նոր, կապիտալիստական ուղու վրա, որով ընթանում էին Ռուսաստանի և Արևմտյան Եվրոպայի առաջավոր ժողովուրդները:

1851 թվականին Մարքսին գրած իր նամակում Էնգելսն ասում է. «Արևելքի նկատմամբ Ռուսաստանը, իրոք, կատարում է պրոգրեսիվ դեր. Ռուսաստանի տիրապետությունը Սև և Կասպից ծովերի, Կենտրոնական Ասիայի, բաշկիրների ու թաթարների նկատմամբ, քաղաքակիրթ դեր է կատարում[1]»:

6. Նշելով Ռուսաստանի կատարած պրոգրեսիվ դերը, միաժամանակ չի կարելի անտեսել, որ Ռուսաստանին միանալով հայ ժողովուրդը ձեռք չբերեց և չէր էլ կարող ձեռք բերել իսկական ու վերջնական ազատություն: Ինչպես Ռուսաստանի մյուս ժողովուրդները, այնպես էլ հայ ժողովուրդը ցարիզմի տիրապետության շրջանում ենթարկվում

[1] К. Маркс и Ф. Энгельс, Сочинения, т. XXI, стр. 211.

էր ազգային-գաղութային ճնշման, զուրկ էր ազատությունից և ազգային իրավունքներից:

Ցարական կառավարությունը երբեք իր առջև ազատագրական նպատակներ չի դրել և ճնշված ժողովուրդների «ազատագրական միսիա» չի կատարել: *Հայտնի է, թե ինչպես միլիոնավոր մարդիկ դարեր շարունակ հեծում էին այդ նույն ցարիզմի դաժան լծի տակ: Բայց ցարական Ռուսաստանի մղած պատերազմները Թուրքիայի և Պարսկաստանի դեմ օբյեկտիվորեն նպաստել են նրանց լծի տակ գտնվող ժողովուրդների ազատագրական պայքարին:*

7. Ռուսաստանի հետ միանալով հայ ժողովուրդն իր բախտը ընդմիշտ կապեց ռուս ժողովրդի բախտի հետ: Զպետք է մոռանալ, որ գոյություն է ունեցել երկու Ռուսաստան՝ ցարական և դեմոկրատական: Դեմոկրատական Ռուսաստանը միշտ էլ հանդես է եկել երկրի ներսում և երկրից դուրս ճնշվող ժողովուրդների պաշտպանի դերում: Փոքր ժողովուրդների, այդ թվում և հայ ժողովրդի իսկական բարեկամն ու հավատարիմ պաշտպանը եղել է ռուս մեծ ժողովուրդը:

Ռուսաստանին միանալուց հետո հայ ժողովուրդն իր ազատագրական պայքարը միավորեց ռուս ժողովրդի հեղափոխական պայքարի հետ և միայն Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության շնորհիվ ձեռք բերեց իր վերջնական ազատությունը:

Սրանք են ահա այն փաստերը, որոնք ամբողջապես հաստատում են Ռուսաստանի հետ Հայաստանի միացման առաջադիմական նշանակությունը:

III ԳԼՈՒԽ

ԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԿԱԶՄՈՒՄ

1. ՎԱՐՉԱԿԱՆ ԿԱՐԳԵՐԸ

Երևանի ժամանակավոր վարչությունը

Երևանը գրավելուց հինգ օր հետո, 1827 թ. հոկտեմբերի 6-ին Պասկևիչի հրամանով կազմվում է ժամանակավոր վարչություն: Վարչության պետ նշանակվում է տեղի զորքերի հրամանատար գեներալ Կրասովսկին, իսկ անդամներ՝ Երևանի բերդի պարետ, փոխգնդապետ Բորոդինը և Ներսես Աշտարակեցին:

Երևանի ժամանակավոր վարչությանը հանձնարարված էր.

Տապալված խանական կարգերի փոխարեն իշխանությունը վերցնել իր ձեռքը և կարգ ու կանոն հաստատել երկրում։

Հոգ տանել զորքի մատակարարման, երկրի սահմանների և մասնավորապես Երևանի, Սարդարապատի ու Աբբասաբադի բերդերի պաշտպանության մասին։

Երևանի մարզում պահակային ծառայության համար հայերից կազմակերպել հեծյալ ու հետևակ դրուժինաներ։

Ապահովել կապը Վրաստանի հետ՝ Դիլիջանի և Ապարանի վրայով։

Վերականգնել առևտուրը Վրաստանի հետ, զարկ տալ բամբակի մշակությանը և Կողբի աղի արտադրությանը։

Հաշվառման ենթարկել Երևանի խանի՝ երկրի այդ ամենամեծ ֆեոդալի կալվածքները, անասունները, եկամուտները և պետականացնել ամբողջ շարժական ու անշարժ գույքը։

Երևանի ժամանակավոր վարչությունը նոր իշխանության առաջին օրգանն էր Արևելյան Հայաստանում։ Շատ դժվարություններ էին կանգնած նրա առջև։ Պատերազմը դեռ շարունակվում էր, հին կարգերի կողմնակիցները դիմադրում էին և աշխատում վերականգնել իրենց իշխանությունը։ Հայ բնակչությունը պատերազմի տարիներին ցիրուցան էր եղել, երկրի տնտեսական-քաղաքական կյանքը դեռ չէր մտել իր նորմալ հունի մեջ։

Երևանի ժամանակավոր վարչությունը եռանդուն գործունեություն ծավալեց իր վրա դրված պարտավորությունները կատարելու համար։ Կրասովսկու և Ներսես Աշտարակեցու նախաձեռնությամբ կազմակերպվեցին հայկական հեծյալ ու հետևակ դրուժինաներ՝ բաղկացած ավելի քան հազար հոգուց, որոնք ռուսական կայազորի հետ միասին պաշտպանում էին երկրի սահմաններն ու ներքին կարգը։ Ապահովվեց կապը Վրաստանի հետ, գործող բանակի թիկունքը։ Հաշվի առնվեց և պետականացվեց Երևանի խանի շարժական ու անշարժ գույքը։

Չնայած Կրասովսկու և Ներսես Աշտարակեցու եռանդուն գործունեությանը, Պասկևիչը դժգոհ մնաց թե մեկից և թե մյուսից։ Փառամոլ գեներալին դուր չէր գալիս Կրասովսկու ու Ներսեսի մտերմությունը, ժողովրդի մեջ ունեցած նրանց հեղինակությունը, նրանց ինքնուրույն գործելակերպը։

Պատերազմի հաղթական ավարտից և Թուրքմենչայի պայմանագիրը կնքելուց անմիջապես հետո Պասկևիչը Կրասովսկուն ազատում է Երևանի ժամանակավոր վարչության պետի պաշտոնից և ուղարկում է Ռուսաստան։

Չանցած մեկ ամիս, 1828 թ. մարտին, Պասկևիչը Երևանից հեռացնում է նաև Ներսես Աշտարակեցուն, որն ուղարկվում է Բեսարաբիա որպես հայկական թեմի առաջնորդ։ Նա սկսում է հալածել Ներսեսի

համախոհներին։ Այդ հալածանքների զոհ դարձավ մեր նշանավոր գրող, մանկավարժ, Թիֆլիսի Ներսիսյան դպրոցի տեսուչ Հարությունն Ալամդարյանը։

Երևանի ժամանակավոր վարչությունը կազմակերպվել էր պատերազմի ժամանակ և գերազանցապես կոչված էր ծառայելու պատերազմը հաղթանակով ավարտելու գործին։ Դա ոչ թե քաղաքացիական, այլ ըստ էության ռազմա-վարչական իշխանության մի օրգան էր։

Թուրքմենչայի պայմանագրից հետո, երբ դադարել էին պատերազմական գործողությունները, և կյանքը մտել էր խաղաղ զարգացման հունի մեջ, բնական է, ժամանակավոր վարչությունը պետք է իր տեղը զիջեր իշխանության մի նոր ու ավելի համապատասխան օրգանի։

Երևանի ժամանակավոր վարչությունը գոյություն ունեցավ մոտ վեց ամիս։

Հայաստանի ինքնավարության (ավտոնոմիայի) նախագիծը

Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միացնելու ժամանակ ցարական կառավարությանը, ինչպես և հայ հասարակական-քաղաքական գործիչներին, զբաղեցնում էր նաև այն հարցը, թե խանական կարգերի փոխարեն ինչպիսի կարգեր պետք է ստեղծել երկրում։ Նիկոլայ I-ի կարգադրությամբ Պետերբուրգում ստեղծվել էր հատուկ կոմիտե, որն զբաղվում էր այդ հարցով։

Կոմիտեի անդամները սահմանափակ տեղեկություններ ունեին Հայաստանի մասին, այդ պատճառով էլ նրանց կազմած նախագիծը շատ միակողմանի էր և թերի։ Նախագծում ավելի շատ արտահայտված էին ցարական մինիստրների գաղութատիրական ձգտումները, քան նոր գրված երկրի վարչական, քաղաքական և տնտեսական կյանքի նպատակահարմար կազմակերպումը։ Նիկոլայ I-ը կոմիտեի ներկայացրած նախագիծը ուղարկելով Պասկևիչին, նրան իրավունք էր վերապահում այն գործադրել իր հայեցողությամբ։

Հենց այդ շրջանում էր, որ մի խումբ հայ գործիչներ, որոնք իրենց անվանում էին «հայ պատրիոտներ», հանդես եկան Հայաստանի ինքնավարություն (ավտոնոմիա) ստեղծելու ծրագրով։

Հետևելով Եկատերինա II-ի ժամանակ Հայաստանի ինքնավարության վերաբերյալ Հ. Արղությանի, Հ. Լազարյանի և Շ. Շահամիրյանի մշակած հայտնի նախագծերի օրինակին, այդ գործիչները(Խ. Լազարյան, Ա. Խուդաբաշյան, Կ. Արղության-Երկայնաբազուկ և ուրիշներ) 1827 թ. վերջերին Պետերբուրգում կազմում են մի նախագիծ և ներկայացնում կառավարությանը։

Այդ նախագծի համաձայն Հայաստանում պետք է ստեղծվեր ինքնավար իշխանություն՝ Ռուսաստանի հովանավորության տակ։

Երկրի պաշտպանության համար կամավոր հիմունքներով պետք է կազմվեր հայկական գվարդիա կամ էսկադրոն:

Հայկական գվարդիայի զինվորներն ու սպաները պետք է արտոնություններ ունենային և ազատ լինեին ճնշումներից։ «Որքան քիչ լինի ճնշումը,— ասված է այդ նախագծում,— որքան ազատ լինի ծառայությունը, որքան շատ լինեն արտոնությունները, այնքան ավելի կաճի ցանկացողների թիվը»։

Հայկական ինքնավար իշխանությանը կրթված կադրեր պետք է տային Մոսկվայի Լազարյան ճեմարանը և Թիֆլիսի Ներսիսյան դպրոցը։

Շատ ուշագրավ են նախագծի այն կետերը, որոնք վերաբերում են երկրի ներքին կյանքին, բնակիչների իրավունքներին ու պարտականություններին։

Նախագծում պահանջվում էր, որ «բնակիչներից յուրաքանչյուրի իրավունքներն ու պարտականությունները միշտ պաշտպանված լինեն արդարության և օրենքների վրա հիմնված կայուն կանոններով...: Յուրաքանչյուրի և բոլորի սեփականությունը պաշտպանվի:

Կալվածատերերի իրավունքները տարածվեն միայն այն հողերի և անշարժ գույքի վրա, որոնք ակտերով և օրենքներով պատկանում են նրանց։

Ճորտատիրական իրավունքի մեջ պարզություն մտցվի... քանի որ ճորտատիրական իրավունքի գոյությունից Վրաստանում բազմաթիվ շարագործություններ են ծագում, տեղի են ունենում անվերջ պրոցեսներ՝ կապված աղքատ դասակարգի մարդկանց քայքայման հետ...:

Անհրաժեշտ է սահմանափակել կամ ոչնչացնել ճորտատիրական իրավունքը Վրաստանում, կամ առնվազն սահմանել, որ ոչ ոք չկարողանա անհատապես վաճառել ընտանիքի այն անդամներին, որոնք ամրացված են հողին և ոչ թե անձին, և առհասարակ արգելվի մարդկանց վաճառքը, նրանց այլ նահանգներ ու այլ տեղեր փոխադրելը կամ գաղթեցնելը»:

Նախագծի հեղինակների պահանջը ճորտատիրական իրավունքի ոչնչացման և սահմանափակման վերաբերյալ իր ժամանակին միանգամայն առաջադիմական պահանջ էր։ Հայ հասարակական-քաղաքական մտքի պատմության մեջ դա վերին աստիճանի ուշագրավ երևույթ էր, որը սերտորեն կապված էր Ռուսաստանում աճող հակաճորտատիրական շարժման հետ։

Փաստեր կան ենթադրելու, որ այս նախագծի մշակմանը մասնակցած լինի նաև Խ. Լազարյանի հետ մտերմական կապեր ունեցող ռուս նշանավոր պետական գործիչ, օրենսգետ, ճորտատիրական իրավունքի թշնամի Մ. Սպերանսկին։

Ոգևորված ռուս-պարսկական պատերազմում ռուսական զորքերի հաղթանակներով, հայ հայրենասերները հույս ունեին, թե Նիկոլայ I-ը ինքնավարություն կտա Հայաստանին, և դրանով իսկ կիրականանա հայերի վաղեմի ցանկությունը։

1827 թ. նոյեմբերի 25-ին Խ. Լազարյանին գրած իր մի նամակում Կ. Արղության-Երկայնաբազուկը (Հովսեփ Արղությանի թոռը), խոսելով Արևելյան Հայաստանի միացման, Ռուսաստանի հովանու տակ Հայաստանի քաղաքական դրության վերականգնման մասին, գրում է. «Պապիս թղթերի մեջ ես գտա մի տեսակ պայմանագիր (խոսքը Հովսեփ Արղությանի կազմած «Կերպ դաշնագրության ի մեջ երկուց ազգաց հայոց և ռուսաց» նախագծի մասին է։— Վ. Պ.), որը պետք է կնքվեր ռուս և հայ ժողովուրդների միջև, ենթադրելով վերջինիս քաղաքական դրության վերականգնումը։ Այս թուղթը, գրված հանգուցյալ պապիս ձեռքով, շափազանց ուշագրավ է, հանգամանքներին նայելով, նրա մեջ խոսվում է թագավորության մասին, հայկական թագավորի մասին, որի ընտրությունը թողնվում է գերիմաստ թագուհու կամքին։ Ես ենթադրում եմ, որ այդ գաղափարը պետք է ծագած լինի իշխան Պոտյոմկինի գիգանտ մտքից։ Այժմ առիթ կա վերանորոգելու... կռահեցեք իմ եզրափակումը հանգամանքներին նայելով։ Դուք պետք է բոլորը մոտիկից իմանաք, թե ինչպիսի ուղղություն կտա կառավարությունը Հյուսիսային Հայաստանին»։

1827 թ. դեկտեմբերին հայ հայրենասերներն իրենց նախագիծը ներկայացնում են ցարական կառավարությանը, բայց այն ընդունելություն չի գտնում և մնում է անիրագործելի։

Չնայած նրան, որ նախագծի հեղինակները ծրագրում էին Հայաստանի ավտոնոմիան ստեղծել Ռուսաստանի պետական կազմում, թագավորի անմիջական հովանավորության տակ, այնուամենայնիվ, Նիկոլայ I-ը մերժում է այդ պահանջը, իսկ դրա փոխարեն հավանություն է տալիս Հայկական մարզ ստեղծելու նախագծին։

Հայաստանի ավտոնոմիայի նախագիծը պատմական կարևոր մի փաստաթուղթ է, որը ցույց է տալիս, թե ինչպես հայ ժողովրդի մեջ ապրում էր դարեր առաջ կորցրած քաղաքական անկախության, պետական իշխանության վերականգնման ձգտումը: Հայաստանի ինքնավարության 1827 թվականի նախագիծը, ինչպես և 18-րդ դարի նախագիծը, հայ հասարակական-քաղաքական մտքի, հայ իրավունքի ու պետականության պատմության նշանակալից էջերից է:

Այդ նախագծի ձախողումը միաժամանակ ցույց է տալիս, թե ինչպես ցարական կառավարությունը զրկում էր փոքր ժողովուրդներին քաղաքական ազատությունից, ազգային պետականություն ստեղծելու հնարավորությունից։

Հայ հայրենասերների քաղաքական սահմանափակությունը թույլ

չէր տալիս նրանց տեսնելու, որ դեկաբրիստների ապստամբությունը արյան մեջ խեղդող Նիկոլայ I-ի միապետական ռեժիմի պայմաններում հնարավոր չէր Հայաստանում ինքնավարություն ստեղծել։

Հայկական մարզի կազմակերպումը

Թուրքմենչայի պայմանագրով, ինչպես տեսանք, Ռուսաստանին միացվեցին Երևանի և Նախիջևանի նախկին խանությունները և Օրդուբադի շրջանը։ 1828 թ. մարտի 20-ին Նիկոլայ I-ը վավերացնում է այդ պայմանագիրը, իսկ մարտի 21-ին ստորագրում Հայկական մարզ կազմելու հետևյալ հրամանագիրը.

«Պարսկաստանի հետ կնքված դաշնագրի համաձայն, հրամայում եմ Պարսկաստանից Ռուսաստանին միացված Երևանի և Նախիջևանի խանությունները այսուհետև բոլոր գործերում անվանել Հայկական մարզ (Армянская область) և այն մտցնել մեր տիտղոսի մեջ»։

Այս հրամանագրի հիման վրա Պասկևիչն արձակում է Երևանի ժամանակավոր վարչությունը և փոխարենը կազմում Հայկական մարզի վարչություն։

Հայկական մարզի վարչության պետ է նշանակվում տեղի զորքերի հրամանատար, գեներալ-մայոր Ալեքսանդր Ճավճավաձեն, իսկ անդամներ՝ երկու ռուս զինվորականներ և մեկ հայ, մեկ մահմեդական՝ տեղական իշխող դասի ներկայացուցիչներից։

Մարզային վարչությունը կազմված էր երեք խորհրդականներից, որոնցից մեկը գլխավորում էր գործադիր մասը, մյուսը՝ ֆինանսական և տնտեսական, իսկ երրորդը՝ քաղաքացիական ու քրեական-դատական գործերը։

Հայկական մարզը բաժանվում էր երկու գավառի՝ Երևանի ու Նախիջևանի և մեկ օկրուգի՝ Օրդուբադի։ Գավառներն իրենց հերթին բաժանվում էին շրջանների, իսկ շրջանները՝ գյուղերի։

Երևանում, Նախիջևանում և Օրդուբադում հիմնվում են ոստիկանական վարչություններ։ Վերակազմվում է նաև դատական գործը։ Երևանում և Նախիջևանում հիմնվում են քաղաքային դատարաններ։

Նախիջևանում և Օրդուբադում Պասկևիչը տեղական իշխանությունը թողնում է նախկին կառավարիչներին (նայիբներին), որոնք պատերազմի ժամանակ օգնել էին ռուս զորքերին։ Նրանց որպես օգնականներ նշանակվում են ռուս սպաներ։

Շրջանների և գյուղերի կառավարումը թողնվում է նախկին պաշտոնյաներին՝ միրբոլուքներին, մելիքներին ու աղալարներին։

Քոչվոր ցեղերը (քրդեր, եզդիներ, թաթարներ) մնում են իրենց ցեղապետների իշխանության տակ։

Հայկական մարզում նոր պետական-վարչական ապարատ ստեղծելու այս առաջին քայլերը 1829 թվականի մայիսին հավանության են արժանանում թագավորի կողմից։

1828 թվականի մարտից Հայկական մարզի ինչպես կենտրոնական, այնպես էլ տեղական օրգանները սկսում են իրենց գործունեությունը։ Նրանք, արդեն խաղաղ պայմաններում, ձեռնամուխ են լինում նախկին խանական կարգերի և օրենքների փոխարեն Արևելյան Հայաստանում հաստատել ցարական կարգեր ու օրենքներ։

Հայկական մարզի ստեղծումը որպես տերիտորիալ մի ամբողջություն, վարչական միավոր, հայ ժողովուրդը գոհունակությամբ է ընդունում։ Թուրք-պարսկական զավթիչները ջնջել էին Հայաստան անունը և փոխարենը մտցրել ժողովրդին խորթ ու ատելի խանություն, փաշայություն, սուլթանություն։

Ռուսաստանի տիրապետության տակ անցած Երևանի և Նախիջևանի խանությունները պաշտոնապես Հայկական մարզ կոչելը և Ռուսական կայսրության՝ թագավորի տիտղոսի մեջ մտցնելը արտաքուստ Հայաստանի վերականգնման պատրանք էր ստեղծում հայերի մեջ, ինքնուրույն քաղաքական կյանքի որոշ հույսեր ներշնչում։

Ի դեպ, հենց այդ շրջանում է, որ ցարական արքունիքում վերստին սկսում են հետաքրքրվել և նյութեր հավաքել հին հայկական թագավորության, հայկական զինանշանի ու օրենքների վերաբերյալ։ Երևանից, Էջմիածնից հայ գործիչները պատմական աղբյուրներից տեղեկանքներ են ներկայացնում Պետերբուրգ՝ ցարական կառավարությանը, որոնց հիման վրա կազմվում է Հայկական մարզի զինանշանի նկարագրությունը, որը և 1833 թվականի փետրվարի 27-ին հաստատվում է թագավորի կողմից։

Հայկական մարզի զինանշանի վրա ներքևում պատկերված են Մասիսը, հայկական թագը, Արարատյան դաշտը, Էջմիածինը, իսկ վերևում՝ ցարական Ռուսաստանի խորհրդանշանը՝ թևերը փռած երկգլխանի արծիվ և կայսերական թագ։

Հայկական մարզի պատմությանը ծանոթ ամեն ոք կարող է ասել, որ այդ զինանշանը չէր արտացոլում ռեալ իրականությունը։ Հայկական թագավորության, հայկական անկախ իշխանության հետքեր անգամ չկային Հայկական մարզում։

Ցարական կառավարությունը Հայկական մարզի վրա նայում էր որպես կայսրության կազմի մեջ մտնող սոսկ տերիտորիալ միավորի՝ զուրկ ազգային-ինքնուրույն իրավունքներից։

Հայկական մարզի իշխանությունը, վարչական ամբողջ կառուցվածքը, գործող օրենքները հայկական չէին։ Մարզային վարչությունը, ոստիկանական, ֆինանսական-տնտեսական և դատական օրգանները գտնվում էին ռուս զինվորական և քաղաքական պաշտոնյաների ձեռ-

քում։ Ստորին օղակներում՝ շրջաններում և գյուղերում, գրեթե անփոփոխ գործում էին խանական պաշտոնյաները։

Ցարական կառավարությունը հետագայում սկսեց աստիճանաբար փոխարինել նրանց ռուս չինովնիկներով և ռուսականացնել Հայկական մարզի պետական ապարատը։

Վարչական փոփոխությունները Հայկական մարզում

XIX դարի առաջին երեք տասնամյակներում, զբաղված լինելով Պարսկաստանի և Թուրքիայի դեմ մղվող պատերազմներով, ցարական կառավարությունը հնարավորություն չուներ լուրջ փոփոխություններ մտցնելու Անդրկովկասի ներքին կյանքում։ Նրա ուշադրությունը բևեռված էր արտաքին ճակատի, թշնամու դեմ հաղթանակ տանելու գործի վրա։

Ռուս-պարսկական և ռուս-թուրքական պատերազմներից հետո, երբ Անդրկովկասում կյանքը մտնում է իր զարգացման խաղաղ շրջանը, ցարական կառավարությունն իր ուշադրությունը կենտրոնացնում է Անդրկովկասի ներքին կյանքի հարցերին, առաջին հերթին ռուսական վարչաձևեր ու օրենքներ մտցնելու և ամրապնդելու, ուժեղ պետական ապարատ ստեղծելու վրա։

Մինչ այդ ոչ միայն Հայկական մարզում, այլև շուրջ քառորդ դար առաջ Ռուսաստանին միացված Վրաստանում և Ադրբեջանում չէին հաստատվել կայուն վարչաձևեր ու օրենքներ։

Չէր կարելի Անդրկովկասում ստեղծել կենտրոնացված, ուժեղ ռեժիմ՝ առանց վերացնելու հին և նոր վարչաձևերի ու օրենքների այն քաոսը, որ գոյություն ուներ մինչ այդ։

1828 թ. հոկտեմբերի 1-ին Ա. Ս. Գրիբոեդովը Հայկական մարզից Պասկևիչին գրում է. «Խաներից ու բեգերից իշխանությունը մենք վերցնում ենք, իսկ փոխարենը ժողովրդին տալիս ենք օտար օրենքների խճճվածություն...։ Մեր մարզային և քաղաքային դատարանները փոքր չափով անգամ չեն մտահոգվում հարմարվել տեղական սովորություններին... դատում են ձգձգումով, ծանր, ստորագրում են այնպիսի որոշումներ ու վճիռներ, որոնք բնակիչներն ընդունում են ոչ թե համոզվելով, այլ կարծես թե բռնությամբ»։

Նոր կարգերն ու օրենքները ամրապնդելու, ժողովրդի մեջ եղած դժգոհությունները վերացնելու նպատակով ցարական կառավարությունը ձեռնամուխ եղավ Անդրկովկասում վարչական ռեֆորմներ անցկացնելուն։

Անդրկովկասի վարչական ռեֆորմների կապակցությամբ կառավարության շրջաններում երևան եկան տարբեր ծրագրեր, տարբեր մոտեցումներ։ Այսպես, օրինակ՝ Պասկևիչն առաջարկում էր Անդրկովկասում միանգամից ռուսական վարչաձևեր ու օրենքներ մտցնել։ Սենատորներ

Մեշնիկովը, Կուտայիսովը և Գանը, որոնք ուսումնասիրել էին Անդրկովկասը, պաշտպանում էին Պասկևիչի առաջարկը։

Դրան հակառակ, Պասկևիչի հաջորդ բարոն Ռոզենը գտնում էր, որ քաղաքական տեսակետից ճիշտ չէր լինի միանգամից վերացնել դարերով արմատացած տեղական կարգերն ու սովորությունները. դա պետք է անել աստիճանաբար։ Կառավարության մեջ կային մարդիկ, որոնք պաշտպանում էին Ռոզենի առաջարկը։

Կովկասում վարչական ռեֆորմներ անցկացնելու հարցի նախապատրաստման այս շրջանում որոշ փոփոխություններ են մտցվում Հայկական մարզում։ 1829—1830 թթ. Պասկևիչը Հայկական մարզ քաղաքացիական աշխատանքի է ուղարկում մի շարք զինվորական պաշտոնյաների։ 1830 թ. փետրվարին մարզային վարչության պետ է նշանակվում գեներալ-մայոր Վ. Բեհբութովը։ Բեհբութովի կառավարչության ժամանակ (1830—1838 թթ.) զգալի չափով ամրապնդվում են ցարական վարչական կարգերը և աստիճանաբար դուրս են մղվում խանական կարգերի մնացորդները։

Հայկական մարզի վարչական կառուցվածքի մեջ նկատելի փոփոխություններ են մտցվում 1833թ. հունիսի 23-ի օրենքով։

Այդ օրենքի համաձայն վերացվում է մարզային վարչության կոլեգիալ ձևը, ավելի լայն իրավունքներ են տրվում վարչության պետին։ Ոստիկանական, դատական և ֆինանսա-տնտեսական գործը ղեկավարող նախկին խորհրդականների փոխարեն հիմնվում են հատուկ բաժիններ։ Կազմվում է հարկերի ու տուրքերի գանձման առանձին վարչություն։ Հարկերն ու տուրքերը լրիվ գանձելու, պետական եկամտի նոր աղբյուրներ հայտնաբերելու գործը հանձնարարվում է առանձին կոմիսարի։

33թ Հունիսի 23-ի օրենքով Երևանի գավառը բաժանվում է չորս օկրուգի՝ Երևանի, Շարուրի, Սուրմալուի և Սարդարապատի։ Օկրուգների պետեր են նշանակվում ռուս չինովնիկներ։ Նախիջևանը և Օրդուբադը մնում են նախկին նայիբների՝ Էքսան-խանի և Շիխ-Ալի բեկի ձեռքում։

Երևանում և Նախիջևանում գործող քաղաքային դատարանների փոխարեն հիմնվում են գավառական դատարաններ՝ ռուս պաշտոնյաներից կազմված։ Տեղական բնակիչներին իրավունք է վերապահվում դիմելու նաև միջնորդ դատարանին և շարիաթին։

Մահալներում և գյուղերում վարչական ապարատը մնում է անփոփոխ։

1833 թ. հունիսի 23-ի օրենքը մի նոր քայլ էր Հայկական մարզի վարչական ապարատի ամրապնդման և ռուսականացման ուղղությամբ։ Բայց այդ օրենքը գործադրվում էր ժամանակավորապես, մինչև Անդրկովկասի վարչական ռեֆորմների հարցի լուծումը։

1836 թ. եկեղեցական կանոնադրությունը

Հայկական մարզում վարչական նոր կարգեր հաստատելու հետ միաժամանակ ցարական կառավարությունը ձեռնամուխ է լինում վերակազմելու նաև հայ եկեղեցու կառավարությունը։

Հայ հոգևորականությունը, նրա պետերը, վաղ ժամանակներից ընկալած, մանավանդ հայկական պետության անկումից հետո, ակտիվ կերպով մասնակցում էին երկրի ներքին և արտաքին գործերին։ Ազգային պետության բացակայության, Թուրքիայի ու Պարսկաստանի տիրապետության ծանր ու դժվարին պայմաններում հայ հոգևորականությունը մեծ ազդեցություն էր ձեռք բերել ժողովրդի վրա և փաստորեն իր ձեռքում կենտրոնացրել նաև քաղաքական գործերի ղեկավարությունը։

Հայտնի է, որ պարսկական շահի և թուրքական սուլթանի հետ հայ ժողովրդին վերաբերող ազգային գործերի մեծ մասը կատարվում էր էջմիածնի կաթողիկոսության կամ Կոստանդնուպոլսի պատրիարքարանի միջոցով։ Արտաքին հարաբերությունները Հռոմի պապի, արևմտաեվրոպական տերությունների, Ռուսաստանի և ուրիշ երկրների հետ կատարվում էին գերազանցապես էջմիածնի կաթողիկոսի միջոցով։

Արևելյան Հայաստանի միացումից հետո, երբ ցարական կառավարությունն իր ձեռքն էր վերցրել այդ երկրի ներքին և արտաքին գործերի տնօրինությունը, բնական է, չէր կարող թույլ տալ, որ հայ հոգևորականությունը խառնվեր պետական իշխանության ֆունկցիաներին։

Ավելին. նա ցանկանում էր էջմիածնի կաթողիկոսի և հայ հոգևորականության հեղինակությունն օգտագործել իր ազդեցությունը հայ ժողովրդի վրա տարածելու համար։ 1828 թվականին առաջ քաշելով հայկական եկեղեցական կանոնադրության մշակման հարցը, Պասկևիչն առաջարկում էր դրա համար ելակետ ընդունել «տեղական պահանջները» և «տերության ընդհանուր շահերը»։

Այդ նպատակով դեռևս 1830 թվականին Թիֆլիսում, իսկ այնուհետև Պետերբուրգում հիմնված գաղտնի կոմիտեների կատարած ուսումնասիրությունների հիման վրա մշակվում և 1836 թվականի մարտի 11-ին ընդունվում է Կանոնադրություն (Положение) Ռուսաստանի հայ լուսավորչական եկեղեցու գործերի կառավարման վերաբերյալ։

Կանոնադրությունը բաղկացած էր 10 գլխից, 141 հոդվածից։ Առաջին գլուխը վերաբերում էր հայ եկեղեցու ընդհանուր իրավունքներին, նրա ունեցած արտոնություններին, երկրորդը՝ էջմիածնի կաթողիկոսին, երրորդը՝ Սինոդին (եկեղեցական բարձրագույն ժողով), չորրորդը՝ թեմական առաջնորդներին, հինգերորդը՝ հոգևոր կառավարությանը և Կոնսիստորիային (հոգևոր ատյան), վեցերորդը՝ վանքերին, յոթերորդը՝ ամուսնական գործերին, ութերորդը՝ հոգևոր դպրոցներին, իններորդը՝ եկեղեցական գույքին, տասներորդը՝ եկամուտներին և եկեղեցական ստորին պաշտոնյաներին։

Այս կանոնադրության համաձայն Ռուսաստանի տիրապետության տակ գտնվող հայկական շրջանները բաժանվում էին հոգևոր թեմերի (վիճակների)։ Կազմվում է 6 թեմ՝ Երևանի, Ղարաբաղի, Վրաստանի, Շամախու կամ Շիրվանի, Նոր Նախիջևանի— Բեսարաբիայի և Աստրախանի։ Յուրաքանչյուր թեմ ուներ իր թեմական առաջնորդը, վանքերն ու եկեղեցիները, շարժական ու անշարժ գույքերը, դպրոցները և այլն։

Կանոնադրության համաձայն 1837 թ. փետրվարի 22-ին էջմիածնում բացվում է Սինոդը, իսկ մայիսի 1-ին՝ Երևանի Կոնսիստորիան։

1836 թվականի Կանոնադրությունը արգելում էր հայ հոգևորականությանը խառնվելու պետությանը վերաբերող գործերին, որոշակի շրջանակների մեջ էին դրվում նրա իրավունքները։ Կառավարության հսկողության տակ պահպանվում էին էջմիածնի կաթողիկոսի իրավունքները Ռուսաստանի սահմաններում և այդ սահմաններից դուրս գտնվող ամբողջ հայության նկատմամբ։

Հայկական դպրոցների և կուլտուր-կրթական այլ հաստատությունների, ինչպես և ամուսնական, ծննդյան ու թաղման գործերի տնօրինությունը հանձնվում էր հոգևոր իշխանություններին։

Ցարական կառավարությունը օրինականացնում ու ամրապնդում էր էջմիածնի և մյուս վանքերի հողատիրական, կալվածատիրական իրավունքները, հնարավորություն էր տալիս, որ եկեղեցիներն ու վանքերը գնումների, նվիրատվությունների և այլ ճանապարհով ձեռք բերեն կալվածքներ և եկամտի ուրիշ աղբյուրներ։

1836 թվականի մարտի 11-ի եկեղեցական կանոնադրությունը, որն օրենքի ուժ ուներ, սահմանագծեց հայ հոգևորականության իրավունքները ու պարտականությունները, կարգավորեց ցարական կառավարության և հայ եկեղեցու փոխհարաբերությունները։ Այդ կանոնադրությունը նոր պայմաններ ստեղծեց կառավարության ու եկեղեցու ազդեցությունը ժողովրդի վրա ուժեղացնելու, նրան կրկնակի շահագործման ենթարկելու համար։

Հայկական մարզի վերացումը

1830-ական թվականներին կատարված ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ ոչ միայն Հայկական մարզում, այլև ամբողջ Կովկասում վարչական կարգերը գտնվում են անմխիթար վիճակում։ 1830 թվականի ապրիլին թագավորին գրած իր մի զեկուցագրում Պասկևիչը նշում էր, որ Անդրկովկասում ռուսական վարչաձևերի և օրենքների տարօրինակ խառնուրդ է ստեղծվել վրացականի և մուսուլմանականի հետ, հարկերի գանձման սիստեմն անկանոն է, պաշտոնատար անձանց իրավունքների ու պարտականությունների մեջ գոյություն ունի անորոշություն։ Միաս-

նություն չկա ոչ կառավարման ձևի, ոչ օրենքների և ոչ էլ ֆինանսական սիստեմի մեջ։ «Զարիքի արմատը,— ասում է նա,— գտնվում է հենց քաղաքացիական մասի կառավարչության մեջ»։

Սենատորներ Կուտայիսովը և Մեշնիկովը ավելի տխուր գույներով են նկարագրում Անդրկովկասի վարչական կյանքի պատկերը. «Ամենուրեք բազմազանություն կառավարման մեջ, ամեն տեղ դեկավար անձանց իրավունքների ու պարտականությունների անորոշություն, ռուսական օրենքների խառնուրդ վրացականի և սովորույթների հետ, իսկ ուրիշ տեղերում ոչ այս և ոչ այն, այլ լիակատար կամայականություն գործերի վճիռների մեջ...: Անդրկովկասի և ոչ մի տայանում գործերի ձևի ու կառավարման մեջ հետ անգամ չկա այն կարգի, որ սահմանված է օրենքով»:

«Անդրկովկասի տեղական իշխանության պետերը, ավելի քան իրենց վերակացուները, օրենքների խախտման օրինակ են եղել,— գրում են սենատորները։— Գողերին բռնելիս նրանք վերցրել են գողացված իրերն ու դրամը, իսկ հափշտակողներին թաքցրել օրենքի հետապնդումից ու պատժից, որպեսզի կրկին օգտվեն նրանցից...: Ներկա կառավարչությունը չի կարելի թողնել արդի վիճակում, իսկ դժբախտ ժողովրդին՝ ճնշման մեջ»:

Անդրկովկասում գոյություն ունեցող օրենքների և վարչաձևերի խճճվածությունը վերացնելու համար, ինչպես տեսանք, Պասկևիչը պահանջում էր միանգամից ռուսական օրենքներ ու վարչաձևեր մտցնել։ «Լավագույն և իրական միջոցը,— ասում էր նա,— ես համարում եմ ամբողջ Անդրկովկասում ռուսական վարչաձև և օրենքներ մտցնելը»։

1831 թվականին Պասկևիչը տեղափոխվում է Լեհաստան՝ այնտեղ բռնկված ապստամբությունը ճնշելու համար։ Կովկասի նոր կառավարչապետ է նշանակվում բարոն Ռոզենը։

1833 թվականին հիմնվում է «Անդրկովկասի բարեկարգման հատուկ կոմիտե»՝ զինվորական մինիստր Չերնիշևի նախագահությամբ, որին հանձնարարվում է զբաղվել վարչական ռեֆորմների հարցով։

1837 թվականի մարտին Նիկոլայ I-ը Անդրկովկաս է ուղարկում սենատոր Գանին՝ հարցը տեղում ուսումնասիրելու և նախագիծ ներկայացնելու համար։ Սենատոր Գանը նույն տարվա հունիսին գալիս է Թիֆլիս, հավաքում մի քանի տեղեկություններ հավաքում և եղած պատրաստի նյութերի հիման վրա 1838 թ. փետրվարին ներկայացնում իր նախագիծը։ Երկար քննարկումներից հետո, որոշ փոփոխություններով, նրա նախագիծն ընդունվում է։ 1840 թվականի ապրիլի 10-ին թագավորը հաստատում է այդ, որը և օրենքի ուժ է ստանում։

1840 թվականի ապրիլի 10-ի օրենքով Անդրկովկասը բաժանվում է

վարչական երկու միավորի՝ կազմվում է Վրացա-իմերեթական նահանգ և Կասպիական մարզ, որոնք ունեին 18 գավառ, 72 շրջան։

Վրացա-իմերեթական նահանգի մեջ մտնում էին հետևյալ 11 գավառները՝ Թիֆլիսի, Գորիի, Թելավի, Բելոկանի, Քութայիսի, Ելիզավետպոլի, Երևանի, Ալեքսանդրապոլի, Նախիջևանի, Ախալցխայի և Գուրիայի։ Նահանգական կենտրոնն էր Թիֆլիսը։

Կասպիական մարզի մեջ մտնում էին հետևյալ յոթ գավառները՝ Շիրվանի, Ղարաբաղի, Շաքիի, Թալիշի, Բաքվի, Դերբենդի և Կուբայի։ Մարզի կենտրոնն էր Շամախին։

1840 թվականի ապրիլի 10-ի օրենքով Հայկական մարզը որպես ինքնուրույն վարչական միավոր վերացվում է։ Երևանի ու Նախիջևանի գավառները, Օրդուբադի օկրուգը և նոր կազմված Ալեքսանդրապոլի գավառը մտցվում են Վրացա-իմերեթական նահանգի մեջ։

Ընդամենը 12 տարվա կյանք ունեցավ Հայկական մարզը, որի հետ այնքան մեծ հույսեր էին կապում հայերը։

Երևանի նահանգի կազմակերպումը

1840 թվականի ապրիլի 10-ի օրենքը անտեսում էր Անդրկովկասի ժողովուրդների սոցիալ-տնտեսական և ազգային-կուլտուրական կյանքի առանձնահատկությունները, նրանց կենսական պահանջները։ Այդ օրենքն ամբողջապես ելնում էր ցարիզմի մեծապետական, դաղութային քաղաքականության շահերից և չէր համապատասխանում Անդրկովկասի ժողովուրդների ոչ վարչական, ոչ քաղաքական և ոչ էլ տնտեսական պահանջներին։ Այդ պատճառով էլ տեղական ժողովուրդների մեջ առաջացան մասսայական դժգոհություններ ու բողոքներ։ Գուրիայում, Օսեթիայում, Բելոկանում, Հայկական մարզում և Ադրբեջանի մի շարք շրջաններում ապստամբական շարժումներ ծագեցին։

Ժողովրդական հուզումները վերացնելու համար Նիկոլայ I-ը Անդրկովկաս է ուղարկում Կովկասյան կոմիտեի նախագահ Չերնիշևին և պետական քարտուղար Պոզենին։ Մոտիկից ծանոթանալով ստեղծված դրությանը, նրանք հարկադրված էին խոստովանել ապրիլի 10-ի օրենքի աննպատակահարմարությունը և ծանրությունը տեղական բնակիչների համար։ «Նույնիսկ պատժի տեսակները,— գրում է Պոզենը,— չեն համապատասխանում տեղական պայմաններին»։

Ցարական կառավարությունը, վախեցած ժողովրդական հուզումներից, հարկադրված եղավ զիջումներ անել և որոշ փոփոխություններ մտցնել ապրիլի 10-ի օրենքի մեջ։ Դրանից հետո ժողովրդի դժգոհությունը մասամբ թուլացավ, բայց չվերացավ։

Ցարական կառավարությունը միաժամանակ միջոցներ է ձեռք առնում Անդրկովկասում ուժեղացնելու ոստիկանական և ժանդարմական օրգանները, խստացնելու պատիժները։ Նիկոլայ I-ի կարգադրությամբ

1837 թվականին հիմնված Անդրկովկասի ժանդարմական կորպուսը 1842 թվականի հոկտեմբերին վերակազմվում է ու համալրվում որպես ժանդարմական 6-րդ բաժանմունք։

Կովկասի կառավարչապետին իրավունք է վերապահվում անհնազանդ տարրերին 5—8 տարով և կամ ընդմիշտ աքսորել Սիբիր ու այլ վայրեր։ Բայց այդ միջոցներն էլ չեն օգնում. դրությունը Անդրկովկասում մնում է լարված։

Ցարական կարգերն ամրապնդելու նպատակով 1844 թվականին Կովկասում հիմնվում է փոխարքայություն։ Կովկասի փոխարքա է նշանակվում փորձված բյուրոկրատ ու ճարպիկ քաղաքագետ Մ. Ս. Վորոնցովը։ Թագավորը նրան տալիս է լայն իրավունքներ՝ մինիստրներից անկախ տեղում հարցեր լուծել, հարկ եղած դեպքում ուղղակի կապվել իր հետ և այլն։

Հաշվի առնելով Անդրկովկասում ստեղծված լարված դրությունը, Վորոնցովը վարում է զգույշ ու խորամանկ քաղաքականություն։

1840 թվականի ապրիլի 10-ի օրենքով սահմանված միօրինակ վարչաձևի փոխարեն Կովկասի տարբեր մասերում մտցվում են տարբեր վարչաձևեր։ Հայաստանում, Վրաստանում և Ադրբեջանի առանձին շրջաններում հիմնվում են քաղաքացիական վարչություններ, Օսեթիայում, Գուրիայում, Ջարո-Բելոկանում և մի քանի այլ շրջաններում՝ ռազմաքաղաքացիական վարչություններ, իսկ լեռնականների մոտ՝ ռազմական վարչություններ։

Վորոնցովի ժամանակ Անդրկովկասի վարչական, ինչպես և տնտեսական ու կուլտուրական կյանքում մի շարք փոփոխություններ են մտցվում։

1846 թվականի դեկտեմբերի 14-ի օրենքով Անդրկովկասը վարչական նոր բաժանման է ենթարկվում։ Վրացա-իմերեթական նահանգի և Կասպիական մարզի փոխարեն կազմվում է չորս նահանգ՝ Թիֆլիսի, Քութայիսի, Շամախու և Դերբենդի։ 1860 թվականին Շամախու նահանգի փոխարեն կազմվում է Բաքվի նահանգը, իսկ 1868 թվականին՝ Ելիզավետապոլի նահանգը։

Երևանի, Ալեքսանդրապոլի և Նախիջևանի գավառները մտցվում են Թիֆլիսի նահանգի մեջ։ Նահանգական քաղաք մնում է Թիֆլիսը։ Այս բաժանումը նույնպես մեծ դժվարությունների առաջ էր կանգնեցնում Հայաստանի բնակիչներին։

1849 թվականի հունիսի 9-ի հրամանագրով կազմվում է Երևանի նահանգը։ Երևանի նահանգի մեջ մտնում են՝ Երևանի, Ալեքսանդրապոլի, Նախիջևանի և նոր կազմակերպված Օրդուբադի ու Նոր Բայազետի գավառները։ Երևանը գավառական քաղաքից վեր է ածվում նահանգական քաղաքի, ավելանում է գավառական քաղաքների թիվը։

Երևանի նահանգի կազմակերպումը կարևոր նշանակություն ունեցավ Արևելյան Հայաստանի տնտեսական, քաղաքական և կուլտուրական կյանքի հետագա զարգացման համար։

Երևանը, որը մարզային կենտրոնից 1840 թվականին վերածվեց գավառական կենտրոնի և տասը տարի մնաց խղճուկ վիճակում, դառնում է նահանգական քաղաք։ Ավելանում է նրա բյուջեն, պետական և կուլտուր-կրթական հիմնարկների ու աշխատողների թիվը և այլն։

Այդ ժամանակվանից սկսած Երևանը հավասարվում է Անդրկովկասի մյուս նահանգական քաղաքներին՝ Թիֆլիսին, Քութայիսին, Ելիզավետպոլին, Բաքվին և նոր քայլեր կատարում քաղաքային կյանքի զարգացման ուղղությամբ։

Երևանի նահանգի կազմակերպումը դրական նշանակություն ունեցավ նաև ազգաբնակչության համար։ Նահանգական օրգանները մինչև այդ գտնվում էին Թիֆլիսում, հեռու էին ընկած և տեղերից կտրված։ Տասնյակ տարիներ շարունակ Արևելյան Հայաստանի բնակիչները, հաճախ հարկադրված, ոտքով հասնում էին Թիֆլիս՝ իրենց խնդիրները կամ բողոքները նահանգական մարմիններին հաղորդելու համար։

Երևանի նահանգի ստեղծումը դրական ազդեցություն ունեցավ նաև նրան ենթակա գավառների ու գավառական քաղաքների զարգացման վրա։

Այսպիսով, երկարատև ուսումնասիրություններից և վարչական ռեֆորմների մի շարք փորձերից հետո ցարական կառավարությանը հաջողվում է որոշել իր վարչական քաղաքականության հիմնական սկզբունքները և համեմատաբար կայուն, տեղական ադմինիստրատիվ օրգաններ ստեղծել Անդրկովկասում։

1840-ական թվականներին անցկացված ռեֆորմներով ցարական իշխանությունը զգալի չափով ամրապնդում է իր վարչական ապարատը Հայաստանում և ողջ Անդրկովկասում, որը երկրի գաղութացման գլխավոր գործոններից մեկն էր։

Դաշն կնքելով Անդրկովկասի կալվածատիրական և բուրժուական վերնախավերի հետ, ցարական կառավարությունը հետզհետե խստացնում է իր ազգային-գաղութային ճնշումը տեղական ժողովուրդների նկատմամբ։

2. ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Գյուղատնտեսությունը

Երկար ժամանակ գտնվելով հետամնաց ֆեոդալական Թուրքիայի ու Պարսկաստանի տիրապետության տակ, տնտեսական կյանքի լճացման ու դեգրադացիայի պայմաններում, Հայաստանը մնացել էր զարգացման չա-

փազանց ցածր մակարդակի վրա։ Պարսիկ խաների ու թուրք փաշաների բարբարոսական ճնշումները, թալանն ու կողոպուտը, հայերի բռնի գաղթեցումները, երկարատև պատերազմները ավերել ու ամայացրել էին Հայաստանի երբեմնի շեն բնակավայրերը։

XIX դարի սկզբում Հայաստան այցելած անգլիացի ճանապարհորդ Ջեյմս Մորիերը գրել է. «Ամեն ինչ կատարյալ ամայության էր մատնվել, դաշտերում փռված էին մարդկանց ու ձիերի ոսկորներ»։

Երևանի և Նախիջևանի գավառներում ամեն քայլափոխում նկատվում էին պարսկական կառավարության ճնշումների հետքերը՝ փոքր ու մեծ գյուղերի ավերակներ և խանգարված ջրանցքներ։ 1829 թվականին դեպի Էրզրում կատարած իր ճանապարհորդության ժամանակ ռուս մեծ գրող Ա. Ս. Պուշկինը ականատես է լինում ամայացած գյուղերի. «Չորս կողմ երևում էին գյուղեր, բայց դրանք դատարկ էին»,— ասում է նա։

Ռուս-պարսկական և ռուս-թուրքական պատերազմները մեծ վնասներ էին պատճառել Հայաստանի տնտեսությանը։ Պարսկական և թուրքական զորքերը ավերում ու կողոպտում էին հայկական գյուղերը, բնակիչներին քշում երկրի խորքերը, որպեսզի նրանք չկարողանան օգնել ռուսներին։ Ծայրաստիճան քայքայվել էր ոչ միայն գյուղատնտեսությունը, հատկապես այգեգործությունը, այլև արհեստներն ու առևտուրը։

Ռուսաստանին միանալուց հետո Հայաստանն ազատագրվեց պարսկական հետամնաց ֆեոդալիզմի կապանքներից ու բռնեց զարգացման ուղին։ Ժողովուրդը շունչ քաշեց ավերիչ պատերազմներից, խաների միջֆեոդալական ներքին կռիվներից, նրանց կամայականություններից ու բռնություններից։ Գյուղացիները հնարավորություն ստացան ձեռնամուխ լինելու խաղաղ աշխատանքի, մշակելու ամայացած դաշտերն ու այգիները։

Արևելյան Հայաստանի տնտեսական կյանքի զարգացման համար խոշոր նշանակություն ունեցավ պարսկահայերի և արևմտահայերի ներգաղթը, որոնց ճնշող մեծամասնությունը գյուղացիներ ու արհեստավորներ էին։

Ռուսաստանին միանալուց առաջ Արևելյան Հայաստանի 169155 բնակիչներից՝

հայեր էին	—	57305 կամ 33,8%
մահմեդականներ	—	84089 կամ 49,7%
քրդեր	—	26911 կամ 16%
այլ ժողովուրդներ	—	850 կամ 0,5%։

Միացումից հետո (1829—1831 թթ. վիճակագրական տվյալներով) 241112 բնակիչներից՝

հայեր էին	—	141682 կամ 58,8%
մահմեդականներ	—	83165 կամ 34,5%
քրդեր	—	15415 կամ 6,4%
այլ ժողովուրդներ	—	850 կամ 0,3%։

Երևանի և Նախիջևանի խանություններում միացման նախօրեին եղած մոտ 25 հազար հայերի թիվը միացումից հետո հասավ շուրջ 82,5 հազարի։

Հայերի ներգաղթի շնորհիվ հարյուրավոր ամայի ու անմարդաբնակ գյուղեր բնակեցվում են։ Խաների ու փաշաների գերությունից ազատված հայ գաղթականները նոր բնակավայրերում մեծ եռանդով սկսում են մշակել հողը, զբաղվել արհեստներով ու առևտրով։ Հայերի ներգաղթը բառի բուն իմաստով կենդանություն է տալիս Հայկական մարզին։

Արևելյան Հայաստանի բնակչության կազմում տեղի ունեցած այս փոփոխությունը միայն բավական էր, որպեսզի պարզ դառնար, թե ինչպիսի խոշոր նշանակություն ուներ նրա միացումը Ռուսաստանին։

Հայկական մարզի բնակչության ճնշող մեծամասնությունը (մոտ 90 տոկոսը) գյուղացիներ էին։ Նրանք զբաղվում էին հողագործությամբ, այգեգործությամբ ու անասնապահությամբ։ Գյուղացիները մշակում էին ցորեն, գարի, հաճար, բրինձ, բամբակ, ծխախոտ և այլն։

Ռուսաստանին միանալուց հետո Լոռի-Փամբակի, Դիլիջանի և Իջևանի շրջաններում զարկ տրվեց նաև կարտոֆիլի ու կաղամբի մշակությանը, որը հետագայում տարածվեց ամբողջ Հայաստանում։

Դաշտային ու նախալեռնային շրջաններում գյուղերի ու քաղաքների (Երևան, Նախիջևան, Օրդուբադ) բնակչության զգալի մասը զբաղվում էր այգեգործությամբ և բանջարաբոստանային կուլտուրաների մշակությամբ։ Առանձնապես հայտնի էր Հայկական մարզի խաղողը, որից ընտիր գինի և օղի էին պատրաստում։

Գյուղատնտեսության կարևոր ճյուղերից մեկն էլ անասնապահությունն էր։ Բացի այս հիմնական ճյուղերից, առանձին շրջաններում զբաղվում էին նաև շերամապահությամբ, թռչնաբուծությամբ, մեղվաբուծությամբ, ձկնորսությամբ և այլն։

Գյուղատնտեսության զարգացման ընդհանուր մակարդակը շատ ցածր էր։ Հողը մշակվում էր եռադաշտային սիստեմով, նահապետական պրիմիտիվ գործիքներով։ Գյուղատնտեսական տարածված գործիքներն էին արորը, փոցխը, մանգաղը, գերանդին, կամը։ Ունևորները օգտագործում էին նաև գութան, որին լծում էին 8—10 զույգ եզներ կամ գոմեշներ, զբաղեցնում մոտ 10 մարդ։

Ցածր էր աշխատանքի արտադրողականությունն ու բերքատվությու-

նը։ Գյուղացիները ամբողջ տարին աշխատում էին, բայց ապրում էին աղքատ և չարքաշ պայմաններում։

Արհեստները

Հայաստանի բնակչության զգալի մասը զբաղվում էր արհեստներով։ Արհեստները կենտրոնացած էին գլխավորապես քաղաքներում։ Նրանք բռնում էին ամբողջ թաղամասեր, որոնցից շատերը կոչվում էին արհեստի այս կամ այն տեսակի անունով, օրինակ՝ շիլաչի (կարմիր ներկող), դամբչի (երկաթագործ) և այլն։

Հայ արհեստավորության նշանավոր կենտրոններն էին Երևանը, Նախիջևանը, Ալեքսանդրապոլը, Թիֆլիսը, Ախալցխան, Շուշին, Նուխին, Շամախին, Կ. Պոլիսը, Զմյուռնիան, Մալաթիան, Կարսը, Վանը, Էրզրումը, Սեբաստիան, Բիթլիսը և այլն։

Բացի քաղաքներից, մեծ թվով արհեստավորներ ապրում ու աշխատում էին նաև գյուղերում։

Հայաստանում կային մի քանի տասնյակ տեսակի արհեստներ, բայց ամենից ավելի տարածվածներն էին դարբնությունը, պղնձագործությունը, կավագործությունը, ջուլհակությունը, կաշեգործությունը, քարտաշությունը, հյուսնությունը, ներկարարությունը, մետաքսագործությունը, ոսկերչությունը, զինագործությունը և այլն։

XIX դարի 30-ական թվականներին ռուս վիճակագիր Ի. Շոպենը Հայկական մարզում 96 տեսակի արհեստ է հաշվում։ Այդ թվում նա մտցնում է նաև այնպիսի երկրորդական, արտադրական նշանակություն չունեցող զբաղմունքներ (ջրկիր, չիբուխչի, զուռնաչի և այլն), որոնք հազիվ թե կարելի լինի արհեստ համարել։

Արհեստներով զբաղվում էին ավելի քան 10 հազար մարդ, որից Երևանում՝ 2349, Նախիջևանում՝ 715, Օրդուբադում՝ 608, մնացած վայրերում՝ 6476։

Հայկական մարզի 10148 արհեստավորներից 7092-ը գտնվում էին Երևանի, 2031-ը՝ Նախիջևանի գավառներում, իսկ 1025-ը՝ Օրդուբադի օկրուգում։ Արհեստավորների կեսից ավելին՝ 5245 հոգի, ներգաղթածներ էին։

Հայկական մարզում ամենատարածված արհեստներից մեկը ջուլհակությունն էր։ Բնակիչներից շատերն ունեին իրենց դազգահները և բամբակից թել էին մանում ու կտավ գործում։ Դազգահների թիվը հասնում էր 4206-ի, իսկ կտավի տարեկան արտադրանքը կազմում էր մոտ 500 հազար արշին։

Աչքի ընկնող արհեստներից էին նաև կաշեգործությունը և ներկարարությունը։ Երևանը արհեստի այդ ճյուղերի հայտնի կենտրոններից մեկն էր։ Հայկական մարզում կար 29 ներկատուն, որտեղ կարմիր, կապույտ և այլ գույնի ներկվում էին պատրաստի հագուստներ, թել, կտորեղեն և այլն։

Շոպենի տվյալներով 1820-ական թվականների վերջերին և 1830-ական թվականների սկզբներին Երևանում (Հրազդան գետի ափին) 32 «կաշեգործարան» (դաբաղանա) կար, որտեղ մշակվում էին ինչպես տեղական, այնպես էլ դրսից (Մակուի խանությունից, Բայազետի փաշայությունից և այլն) բերվող կաշիները։ Տարեկան մոտ 4000 մեծ և 25000 փոքր կաշիներ էին մշակվում։ Այստեղ պատրաստվում էին գունավոր կաշիներ և կարում մի քանի տեսակ կոշիկներ ու մաշիկներ։ Հայկական մարզում Շոպենը հաշվում է ընդամենը 45 «կաշեգործարան», 112 կաշեգործ և 274 մաշակար։

Խիստ տարածված արհեստներից մեկն էլ կավագործությունն էր։ Հայաստանի ոչ միայն գյուղերում, այլև քաղաքներում լայնորեն օգտագործվում էին բրուտների պատրաստած կավե ամանները՝ ջրի սափորներն ու թասերը, յուղի և պանրի կճուճները, գինու կարասները և այլն։ Հայկական մարզի Յուվա գյուղը (այժմ՝ Շահումյան) կավագործության նշանավոր կենտրոններից էր։

Հայ արհեստավորների արտադրած ապրանքները մեծ համբավ ունեին և հաջողությամբ վաճառվում էին ինչպես երկրի ներսում, այնպես էլ երկրից դուրս։ Արհեստավորները տարիներ շարունակ մասնագիտանում էին արհեստի որոշ ճյուղերի մեջ և շատերը կատարելության էին հասցնում իրենց ձեռքի աշխատանքը։ Հայ արհեստավորների մեջ քիչ չէին այնպիսի վարպետներ, որոնց համբավը տարածված էր ոչ միայն Հայաստանում, այլև նրա սահմաններից դուրս։

Արհեստավորական արտադրությունը հիմնված էր ձեռքի ու ոտքի աշխատանքի վրա. մեքենաներ չկային, ամեն ինչ կատարվում էր պրիմիտիվ գործիքներով։ Ի. Շոպենը, խոսելով Հայկական մարզի արհեստավորների, մասնավորապես ատաղձագործի վարպետության մասին, գրում է. «Նրա ոտքերը վարժված են աշխատել այնպես, ինչպես ձեռքերը... Նրան գրեթե կարելի է անվանել չորսձեռնանի մարդ։ Երևանի ատաղձագործների արվեստը փայլում է ասիական մեծ պատուհաններ պատրաստելու գործում»։

Արհեստավորները մշակում էին տեղական հումքը, որը ձեռք էին բերում բավականաչափ էժան գնով. օգտագործում էին նաև իրենց ունեցած սեփական հումքը։ Նրանցից շատերը միաժամանակ զբաղվում էին գյուղատնտեսական աշխատանքներով։

1850—1860-ական թվականներին Հայաստանում և ողջ Անդրկովկասում արհեստներն ապրեցին իրենց զարգացման վերջին շրջանը, որից հետո, դարի երկրորդ կեսին, սկսվեց նրանց քայքայումն ու անկումը։

Համքարությունները

Արհեստավորներն ունեին իրենց կազմակերպությունը, որն արևելահայերի մոտ կոչվում էր համքարություն, իսկ արևմտահայերի մոտ՝ էսնաֆություն։

Համքարությունը միևնույն արհեստի շուրջը համախմբված աշխատողների մի միություն էր, ցեխային կազմակերպություն։ Բացի արհեստավորներից, համքարությունների մեջ ընդգրկված էին նաև առևտրականները։ Համքարությունների մեջ ընդունվելու համար արգելքներ չկային։ Ավելին. մի շարք տեղերում (Թիֆլիս, Ախալցխա և այլն) համքարություններն իրենք էին պահանջում, որ բոլոր արհեստավորներն ու առևտրականները մտնեն իրենց կազմակերպությունների մեջ, որպեսզի ապրանքների գների և տեսակների սահմանված ռեգլամենտը չխախտվի և մրցություն չառաջանա։ Օրինակ, Ալեքսանդրապոլում գրեթե բոլոր արհեստավորներն ընդգրկված էին համքարությունների մեջ։

Երևանում, Նախիջևանում, Շուշիում, Նոր Բայազետում, Օրդուբադում այդպես չէր։ Այստեղ չէր արգելվում համքարություններից դուրս գտնվող արհեստավորներին աշխատելը և նույնիսկ դրսից բերված ապրանքներ վաճառելը, քանի որ դա նրանց համար առանձին վտանգ չէր ներկայացնում։

Համքարությունները որոշակի դեր էին կատարում մանր արտադրողների տնտեսական և հասարակական կյանքում։ Նրանք ունեին իրենց կանոնադրությունը, դրոշակը, գերբը և փոխադարձ օգնության դրամարկղը։

Համքարություններն իրենց կազմակերպության ներսում օգտվում էին տնտեսական, դատական և վարչական որոշ իրավունքներից։ Նրանք սահմանում էին ապրանքների տեսակները, գները, ընտրում իրենց ավագներին (ուստաբաշի), ժողովներ գումարում, ցույցեր, տոնախմբություններ կազմակերպում և այլն։

Համքարական դատարանը տուգանում, պատժում էր իր անկարգապահ անդամներին, հեռացնում գողերին, վատ վարքի տեր, քայքայված տարրերին։

XIX դարի կեսերին Երևանում կար 27 համքարություն, Ալեքսանդրապոլում՝ 24, Թիֆլիսում՝ 97։ Արհեստավորների մի մասը ընդգրկված չէր համքարությունների մեջ։

Համքարությունները միատարր չէին, կազմված էին վարպետներից, ենթավարպետներից ու աշակերտներից։ Ենթավարպետները և մանավանդ աշակերտները շահագործվում էին վարպետների կողմից։ Ծնողներն իրենց երեխաներին աշակերտ տալիս, սովորաբար, վարպետին ասում էին. «Որդուս հանձնում եմ քեզ, նրա միսը քեզ, ոսկորը՝ ինձ։ Պատժիր նրան, խստորեն պատժիր, միայն թե արհեստ սովորեցրու»։

Աշակերտների ուսուցման ժամկետը սահմանված էր 3—10 տարի, նայած տեղին ու մասնագիտությանը։ Վարպետներն ամեն կերպ աշխատում էին թաքցնել իրենց արհեստի գաղտնիքները ոչ միայն մյուս արհեստավորներից, այլև իրենց աշակերտներից։

Աշակերտների ու ենթավարպետների աշխատանքային և նյութական պայմանները չափազանց ծանր էին։ Առհասարակ հայ արհեստավորությունը՝ մանր արտադրողների բավականաչափ ստվար խավը, ապրում էր կարիքի ու զրկանքի մեջ։

Համքարություններն իրենց էությամբ պահպանողական կազմակերպություններ էին։ Նրանք խանգարում էին երկրի տնտեսական-տեխնիկական զարգացմանը։ XIX դարի երկրորդ կեսից, ռուսական և արևմտաեվրոպական ֆաբրիկա-գործարանային ապրանքների Անդրկովկաս ներմուծելու հետևանքով, արհեստների արտադրանքը հետզհետե դուրս է մղվում, համքարությունները բռնում են քայքայման ուղին։

Արդյունաբերությունը

XIX դարի առաջին կեսին Հայաստանում արդյունաբերություն, այդ բառի իսկական իմաստով, գոյություն չուներ։ Բայց կային արդյունագործական բազմաթիվ մանր ձեռնարկություններ, որոնք, արհեստների հետ միասին, կարևոր դեր էին խաղում ժողովրդի առօրյա կարիքները բավարարելու գործում։ Այդ տիպի ձեռնարկություններից էին օճառի, կաշվի, կավագործական, ներկարարական, օղու, գինու ձեռնարկությունները, ձիթհանները և այլն։

Երևանում XIX դարի կեսերին կար 86 ձեռնարկություն, այդ թվում կաշվի՝ 29, գինու՝ 3, օճառի՝ 1, բրուտի՝ 1, ներկարան՝ 46 և այլն։

Ալեքսանդրապոլում կար 36 ձեռնարկություն, որից օճառի՝ 12, ճարպամոմի՝ 5, կաշվի՝ 3, աղյուսի՝ 1, բրուտի՝ 1, ձիթհան՝ 5 և այլն։

Արդյունաբերության կարևոր ճյուղերից մեկը հանքագործությունն էր։ XIX դարի առաջին կեսին Արևելյան Հայաստանում մշակվում էին Ալավերդու, Ախթալայի և Շամլուղի պղնձահանքերը, Նախիջևանի և Կողբի աղահանքերը։

1830-ական թվականներին պղնձի տարեկան արտադրանքը, միջին հաշվով, կազմում էր 2000 փութ, 1840-ական թվականներին՝ մոտ 5000 փութ։ Աղի արտադրանքը 1830-ական թվականներին կազմում էր մոտ 250 հազար փութ, 1840-ական թվականներին՝ 500 հազար փութ, իսկ 1850-ական թվականներին՝ ավելի քան մեկ միլիոն փութ։

Հայաստանում և հարևան երկրներում հայտնի էր հատկապես Կողբի աղը։ Կողբ գյուղի բնակիչներն ամբողջությամբ զբաղվում էին աղաքար կտրելով։ Ամեն մի աշխատող օրական արտադրում էր 45—60 փութ աղ։ Հայկական մարզից տարեկան արտահանվում էր մոտ 180 հազար բեռ աղ։ Գրեթե ամբողջ Վրաստանը, Ղարաբաղի, Դաղստանի, Չեչենիայի, Օսեթիայի որոշ մասերը, Պարսկաստանի և Թուրքիայի սահմանամերձ շրջանները աղը ստանում էին Հայկական մարզից։

Հայաստանի լեռնարդյունաբերության այս մասնակի աճը կապված էր 1840—1850-ական թվականներին Ռուսաստանում և Անդրկովկասում սկսված առևտրա-արդյունաբերական կյանքի աշխուժացման հետ։ Այդ նույն շրջանից սկսվում է նաև Հայաստանի պղնձարդյունաբերության երկրորդ կարևոր կենտրոնի՝ Զանգեզուրի (Կավարտ, Ղաթար, Հալիձոր, Ագարակ) հանքերի մշակումը։

Հայաստանի ինչպես աղը, այնպես էլ պղինձը, տեղական կարիքների համար օգտագործելուց բացի, մեծ քանակությամբ արտահանվում էր։

Ալավերդու պղնձահանքերում, տեղի հայ և հույն բանվորներից բացի, պարտադիր կարգով աշխատեցնում էին նաև Լոռու և Բորչալուի շրջանների ճորտ գյուղացիներին, որոնք ամրացվում էին հանքերին։ Դրանք պոսեսիոն գյուղացիներ էին, որոնց, դաշտային աշխատանքներն ավարտվելուց հետո, ուղարկում էին հանքերում աշխատելու։ 1850-ական թվականներին պոսեսիոն աշխատանքը վերացվեց, որովհետև արդյունավետ չէր։

Հայաստանի լեռնարդյունաբերության մեջ միջին թվով աշխատում էր 1000—1500 մարդ։ Զգալի թիվ էին կազմում սեզոնային բանվորները։ Հանքերում ու գետնախորշերում աշխատող բանվորների դրությունը չափազանց ծանր էր։ Կապալառուների գիշատիչ շահագործումը, դաժան ծեծը, աշխատանքային ծանր ու վտանգավոր պայմանները և չնչին վարձատրությունը անտանելի էին դարձնում նրանց կյանքը։

Լեռնարդյունաբերությունը և ընդհանրապես Հայաստանի, այսպես կոչված, գործարանային արտադրությունը XIX դարի առաջին կեսին գտնվում էր զարգացման չափազանց ցածր մակարդակի վրա։ Ցարիզմի գաղութային քաղաքականության հետևանքով տեղական արդյունաբերությունը չէր զարգանում, երկրի բնական հարստությունները մեծ մասամբ մնում էին անմշակ։

Առևտուրը

Թուրքիայի ու Պարսկաստանի տիրապետության շրջանում առևտուրը Հայաստանում զարգացած չէր։ Ճիշտ է, հայ վաճառականները երկրի ներսում և երկրից դուրս առևտուր էին անում, բայց ներքին շուկան, փոխանակային կապերը դեռևս չափազանց թույլ էին։ Երկրում տիրող բնատնտեսական հարաբերությունները, մեծ մաքսերը, ճանապարհների անապահովությունը, ժողովրդի ցածր գնողունակությունը արգելակում էին առևտրի զարգացմանը։

Այլ էր դրությունը Ռուսաստանի տիրապետության տակ անցած շրջաններում։

Ցարական կառավարությունը Անդրկովկասը տնտեսապես ու քաղաքականապես Ռուսաստանին ենթարկելու, իր ազդեցությունը Մերձավոր արևելքում տարածելու նպատակով հովանավորում էր առևտրա-

կաններին։ Նա աշխատում էր առևտրական սերտ կապեր ստեղծել Անդրկովկասի և Մերձավոր արևելքի երկրների հետ, ռուսական արդյունաբերական ապրանքները վաճառահանել այդ շուկաներում և անհրաժեշտ հումք ձեռք բերել։

Անդրկովկասի տնտեսական կյանքի զարգացման համար կարևոր նշանակություն ունեցավ 1821 թ. հոկտեմբերի 8-ի օրենքը տարանցիկ ազատ առևտրի վերաբերյալ։

Այդ օրենքի համաձայն Անդրկովկասում ներմուծվող ապրանքների համար տասը տարով սահմանվում էր արտոնյալ մաքս (հինգ տոկոս)։ Առևտրականներն ազատվում էին անձնական ծառայությունից և օթևանի պարհակից, իրավունք էին ստանում ձեռք բերելու անշարժ սեփականություն, հող գնելու պետությունից և ցանկացած ժամանակ վաճառելու, Սև և Կասպից ծովերի միջև ընկած առևտրական ճանապարհի վրա քարվանսարաներ կառուցելու և այլն։

Բացի այդ, Ռեդութ-կալեից Թիֆլիս, Թիֆլիսից Բաքու և Մարաղա առևտրական տրանսպորտի, քարավանների ապահով երթևեկության համար կառավարությունը տրամադրում էր զինվորական մասեր։

Տարանցիկ առևտրի համար ստեղծված արտոնյալ պայմանները խթան հանդիսացան առևտրականների աշխույժ գործունեության համար։ Ազատ առևտրի առաջին հինգ տարում՝ 1822—1826 թթ. Անդրկովկասի առևտրական շրջանառությունը հասավ 20 միլիոն ռուբլու, իսկ 1827—1831 թթ.՝ 39 միլիոնի։

Անդրկովկասի առևտրի մեծ մասը կենտրոնացած էր հայ առևտրականների ձեռքում։ Նրանք Ռուսաստանից (Մոսկվա, Նիժնի Նովգորոդ) և Արևմտյան Եվրոպայից (Լայպցիգ, Մանչեստր, Մարսել) ֆաբրիկա-գործարանային ապրանքներն էին ներմուծում Անդրկովկաս, Թուրքիա, Պարսկաստան, Միջին Ասիա, փոխարենը արտահանում արևելյան ապրանքներ՝ գլխավորապես մետաքս և տորոն։ Անդրկովկասի տարանցիկ առևտրից հայ վաճառականները մեծ շահույթ էին ստանում։ Առևտրական կապիտալը կենտրոնանում էր նրանց ձեռքում։

1831 թվականի հունիսին ցարական կառավարությունը նոր օրենք է հրատարակում, որով վերացվում են տարանցիկ առևտրի արտոնությունները՝ եվրոպական ապրանքների մուտքը Անդրկովկաս և հարևան երկրներ սահմանափակելու և ռուսական ապրանքներն այդ երկրներում տարածելու նպատակով։

1831—1851 թվականներին եվրոպական ապրանքների ներմուծումն Անդրկովկաս խիստ կրճատվում է՝ հասնելով ներմուծման ընդհանուր գումարի մոտ 10 տոկոսին։ Դրանից հետո եվրոպական ապրանքներն սկսում են այլ ճանապարհներով (Տրապիզոնի վրայով) հոսել Թուրքիա և Պարսկաստան։ Անդրկովկասի տարանցիկ առևտուրը մեծ հարված է

ստանում, իսկ 1831 թվականի օրենքն էլ փաստորեն իրեն չի արդարացնում։

1846 թ. դեկտեմբերին վերացվում են եվրոպական ապրանքների համար սահմանված բարձր մաքսերը, բայց Անդրկովկասի տարանցիկ առևտրի երբեմնի բարձր մակարդակը չի վերականգնվում։

Պատմական մի շարք պայմանների բերումով հայ առևտրա-արդյունաբերողներն իրենց գործունեությունն սկսելով Հայաստանից դուրս՝ Անդրկովկասի վարչական և տնտեսական կենտրոն Թիֆլիսում, Սև և Խասպից ծովերի ափին, առևտրական ճանապարհների վրա ընկած եկամտաբեր վայրերում, ամրանում են այդ կենտրոններում։ Նրանք իրենց կապիտալները չներդրեցին առևտրական ճանապարհներից ու կենտրոններից հեռու ընկած Հայաստանում։ XIX դարի առաջին կեսում Հայաստանում գրեթե չստեղծվեցին առևտրա-արդյունաբերական խոշոր կենտրոններ։

XIX դարի կեսերին գնալով ավելի է ուժեղանում առևտրական կապիտալի մուտքը գյուղ։ Առևտրական կապիտալը, ինչպես Կ. Մարքսն է ասում, իր երկվորյակի՝ վաշխառուական կապիտալի հետ նոր ճեղքեր է բացում բնատնտեսության մեջ, հետզհետե քայքայում ու ընչազրկում աշխատավոր գյուղացիությանը։

Քաղաքները

XIX դարի առաջին կեսին շատ քիչ քաղաքներ կային Հայաստանում։ Եղածներն էլ ավելի շուտ ասիական տիպի գյուղաքաղաքներ էին, կառուցված մնալան, մեծ մասամբ միհարկանի հողե տներով, նեղ և ծուռումուռ փողոցներով։ Հազվագյուտ դեպքերում կարելի էր հանդիպել երկհարկանի տների և քարե շենքերի։ Քաղաքի փողոցներում և շատ տներում գիշերները լուսավորություն չէր լինում։ Քաղաքացիներից շատերն իրենց տներում անասուններ էին պահում։

Քաղաքի բնակիչներն զբաղվում էին առևտրով, արհեստներով, արդյունագործությամբ։ Արհեստի և արդյունագործության արտադրանքի մի մասը արտահանվում ու վաճառվում էր գյուղերում, իսկ մյուս մասը՝ քաղաքների շուկաներում և տոնավաճառներում։

1845 թ. Ալեքսանդրապոլում բացվում է Հայաստանում առաջին տոնավաճառանոցը։ Հետագայում տոնավաճառ է կազմակերպվում նաև Երևանում, Գանձակում, Ախալքալաքում, Ախալցխայում, Գորիսում, Սրղնախում և այլ քաղաքներում։

Արևելյան Հայաստանի առավել աշքի ընկնող քաղաքներից էին Երևանը, Ալեքսանդրապոլը, Նախիջևանը։ Դրանք ոչ միայն վարչական, այլև առևտրաարհեստագործական կենտրոններ էին։ Այս քաղաքներում ապրում էին մի քանի հազարից մինչև մի քանի տասնյակ հազար հայեր՝ մեծ մասամբ հարևան ժողովուրդների հետ խառը։ Քաղաքները կուլտուրապես շատ հետամնաց էին, չկային հասարակական-կուլտուրական աշքի ընկնող հիմնարկություններ։

Հայաստանի այդ շրջանի քաղաքների մասին մեզ ավելի կոնկրետ պատկերացում են տալիս Երևանին վերաբերող տվյալները։

Երևանը, որը Հայաստանի հնագույն քաղաքներից է, 1830-ական թվականներին ուներ 11463 բնակիչ, որից 6125-ը՝ հայ, 5338-ը՝ մահմեդական։ Արտոնյալ դասին (աղնվականներ և հոգևորականներ) պատկանողների թիվը կազմում էր 1125 մարդ, մնացածները արհեստավորներ էին, առևտրականներ, հողագործներ և բանվոր-ծառայողներ։

Քաղաքի բնակչության մի մասը զբաղվում էր այգեգործությամբ, բանջարաբուծությամբ, թռչնաբուծությամբ, շերամապահությամբ և այլն։

Ռուս վիճակագիր Ի. Շոպենը, որը 1829—1832 թթ. եղել է Երևանում և ուսումնասիրել է Հայկական մարզը, գրում է. «Առաջին հայացքից Երևանն աննպաստ տպավորություն է թողնում. նա միօրինակ և տխուր տեսք ունի։ Ինչպես ասիական գրեթե բոլոր քաղաքները, այստեղ ևս փողոցները նեղ են և այնքան ծուռումուռ, որ մեկը մյուսին միանում է, գրեթե առանց ուղիղ անկյուն կազմելու։ Այդ փողոցներն անցնում են հում աղյուսից կամ գետաքարերից, հաճախ ցեխից շինված ցածր, անկանոն պատերի միջով։

Գլխավոր փողոցների միջով անցնում են առուներ, որտեղից ջուրն առվակներով բաժանվում է պարտեզներին։ Այդ ջուրը, ողողելով փողոցը և պատերը, վտանգավոր փոսեր է առաջացնում, որտեղ ամռանը զարշահոտ ճահճուտներ են գոյանում, իսկ ձմռանը՝ տեղ-տեղ այնպիսի բարձր սառույցներ, որ երբեմն փակում են ճանապարհը։

Ավելի հաճելի է տների ներսը. դրանցից մեծ մասի բակերում կա ընդարձակ պարտեզ, քարով սալահատակված մաքուր բակ, թթենու կամ ընկուզենու ստվերախիտ դարավոր ծառեր, իսկ բակի կենտրոնում քարից շինված ջրավազան՝ իր ցայտաղբյուրով։ Տները միշտ այնպես են կառուցված, որ արտաքինից որևէ բանով աշքի չընկնեն, ճակատով նայում են բակի կողմը»։

Երևանում կար 1730 տուն, 7 քարվանսարա, 851 առևտրական կրպակ, 8 բաղնիք, 1 ռուսական, 6 հայկական եկեղեցի և 8 մզկիթ։

Քաղաքում չկար ոչ մի քիչ թե շատ կանոնավոր դպրոց։ Առաջին անգամ 1832 թվականի հունվարին բացվեց գավառական երկդասյան դպրոցը։

1850 թվականին Երևանի բնակչությունը կազմում էր 12603 մարդ։ Ինչպես տեսնում ենք, աճը շատ փոքր էր՝ 20 տարվա ընթացքում 1140 մարդ։ Այդ նույն շրջանում Ալեքսանդրապոլն ուներ 11280 բնակիչ։

Որպես Հայկական մարզի, իսկ հետագայում Երևանի նահանգի վարչական կենտրոն, Երևանի քաղաքային կյանքը, մյուս քաղաքների

համեմատությամբ, ավելի զարգացած էր, 1843 թվականին Երևանն իր քաղաքային եկամուտներով, Անդրկովկասի քաղաքների համեմատությամբ, բռնում էր 5-րդ, իսկ Ալեքսանդրապոլը՝ 8-րդ տեղը։

1830—1840-ական թվականներին, երբ Երևանում սկսել էին գործել զավառական և թեմական դպրոցները, հատկապես 1843—1848 թվականներին, երբ մեծ լուսավորիչ Խաչատուր Աբովյանն աշխատում էր Երևանում որպես զավառական դպրոցի տեսուչ, քաղաքի կուլտուրական կյանքը ևս մասամբ կենդանանում է։

Ավելի անմխիթար վիճակում էին գտնվում զավառական մյուս քաղաքները՝ Ալեքսանդրապոլը, Նախիջևանը, Օրդուբադը և Նոր Բայազետը, որը պաշտոնապես քաղաք դարձավ 1850 թվականից։

Բայց, եթե XIX դարի առաջին կեսին Հայաստանում քաղաքները զարգացած չէին, այդ դեռ չի նշանակում, թե առհասարակ հայ ժողովրդի մոտ քաղաքային կյանք չի եղել։ XIX դարի առաջին կեսին Անդրկովկասի քաղաքային բնակչության ճնշող մեծամասնությունը հայեր էին։ Հայերը մեծ թիվ էին կազմում Թիֆլիսում, Գորիում, Ախալցխայում, Շուշիում, Շամախիում, Նուխիում, Ելիզավետպոլում, իսկ հետագայում՝ նաև Բաքվում ու Բաթումում։

Այս կենտրոններում էլ հենց, եղբայրական վրաց և ադրբեջանական ժողովուրդների փոխադարձ կապերի պայմաններում, ստեղծվել ու զարգացել է հայկական քաղաքային կյանքն ու կուլտուրան, ամրապնդվել են Անդրկովկասի ժողովուրդների հասարակական-քաղաքական և կուլտուրական կապերը։

Ցարիզմի գաղութային քաղաքականությունը Հայաստանում

Ինչպես տեսանք, ցարական կառավարությունը Արևելյան Հայաստանի միացումից հետո այնտեղ հաստատեց վարչական նոր կարգեր ու օրենքներ։ Բայց դա հարցի մի կողմն էր։ Չէր կարելի ամրապնդել նոր կարգերը, առանց անհրաժեշտ սոցիալ-տնտեսական բազա և դասակարգային հենարան ստեղծելու։ Ահա թե ինչու ցարական կառավարությունը, վարչական ռեֆորմների հետ միաժամանակ, ձեռնամուխ եղավ Հայաստանում անցկացնելու նաև տնտեսական ռեֆորմներ։

Ցարական կառավարությունը Հայաստանը, ինչպես և ամբողջ Անդրկովկասը, հայտարարում էր իր գաղութը։ Պատահական չէ, որ դեռևս 1827 թվականին Նիկոլայ I-ին ներկայացրած իր մի զեկուցագրում ֆինանսների մինիստր գրաֆ Կանկրինը Անդրկովկասն անվանում էր Ռուսաստանի գաղութ։ «Անդրկովկասյան զավառները,— ասում էր Կանկրինը,— որոշակիորեն կարող են համարվել մեր գաղութը, որն իր հարավային կլիմայի արտադրանքներով պետությանը մեծ օգուտ պետք է բերի։ Անդրկովկասը Ռուսաստանի գաղութ կոչելը առաջին անգամ ակնհայտ կերպով ցույց է տալիս տեղական իշխանության բոլոր ձևերը։ Դա հենց

այն կետն է, որից պետք է նայել նրա վրա և ուղղություն տալ գործողությունների ամբողջ սիստեմին»։

Ցարական գաղութարարները առանց քաշվելու հրապարակորեն հայտարարում էին, թե Անդրկովկասը պետք է լինի Ռուսաստանի գաղութը և հումք մատակարարի նրա ֆաբրիկա-գործարաններին։ «Անդրկովկասը որպես գաղութ,— ասված է 1836 թ. պաշտոնական մի հրատարակության մեջ,— կարող է բավարարել ռուսական մանուֆակտուրայի պահանջները՝ արևադարձային և հարավային արտադրանքների հումքով, ինչպիսիք են՝ մետաքս, բամբակ, լեղակ, քրքում, տորոն, գոճոնաներկ, գինի, բրինձ, ձիթապտուղ, ծխախոտ և այլն»։

1840 թվականին Նիկոլայ I-ին ներկայացված մի այլ պաշտոնական փաստաթղթում ասված է, թե Անդրկովկասի ժողովուրդներին հարկավոր չեն համալսարաններ, ֆաբրիկաներ և գործարաններ, հարկավոր են առևտրական ճանապարհներ՝ Անդրկովկասը Ռուսաստանի հետ կապելու, այնտեղից հումք ստանալու և փոխարենը մանուֆակտուրային արտադրանքներ տալու համար։

XIX դարի առաջին կեսին Անդրկովկասը գաղութացման էր ենթարկվում ֆեոդալական-ճորտատիրական Ռուսաստանի կողմից։ Ցարիզմը այդ շրջանում արտահայտում էր կալվածատեր-ճորտատերերի և առևտրականների շահերը։ Բուրժուազիայի դասակարգային շահերը, ինչպես Վ. Ի. Լենինն է ասում, նա սկսեց արտահայտել ավելի ուշ, Ալեքսանդր II-ի ժամանակ։

Ցարիզմի տնտեսական քաղաքականությունն Անդրկովկասում ամբողջապես համապատասխանում էր նրա դասակարգային էությանը։ Այդ քաղաքականությունը եկավ ամրապնդելու Անդրկովկասի հողատեր-կալվածատերերի իրավունքները գյուղացիների նկատմամբ և նպաստելու առևտրի զարգացմանը։

Բայց եթե ցարական կառավարությունը ձգտում էր գաղութային ճնշման ենթարկել Անդրկովկասի ժողովուրդներին, ապա այլ կերպ էին նայում Անդրկովկասին ռուս ժողովրդի առաջավոր մտածողները։

Այսպես, օրինակ, դեկաբրիստները ծրագրում էին Անդրկովկասը մտցնել ապագա դեմոկրատական Ռուսաստանի կազմի մեջ՝ մյուս մարզերի հետ հավասար իրավունքներով։ Դեկաբրիստների հարավային ընկերության ղեկավար Պ. Պեստելի կոնստիտուցիայով նախատեսվում էր ցարիզմի տապալումից հետո հանրապետական կարգեր հաստատել նաև Անդրկովկասում։

Ճիշտ է, ազգային հարցում Պեստելը սխալ դիրքերի վրա էր կանգնած, անտեսում էր Անդրկովկասի ժողովուրդների ազգային ինքնորոշման իրավունքները, սակայն, որպես ապագա հանրապետության քաղա-

քացիներ, մյուս բոլոր ժողովուրդների հետ միասին, նրանք օգտվելու էին հավասար իրավունքներից։

Դեկաբրիստ Ե. Լաչինովը, ականատես լինելով ռուս-պարսկական պատերազմից հետո Հայկական մարզի բնակիչների սկսած խաղաղաստեղծագործ աշխատանքներին, գրում էր. «Հաճելի է տեսնել կյանք և գործունեություն այնտեղ, որտեղ մոտիկ անցյալում տիրում էր ավերածություն. այդպիսի տեսարանից մարդու հոգին լցվում է ինչ-որ ուրախ զգացումով»։

Ռուս ժողովրդի լավագույն զավակներից մեկը՝ Ա. Ս. Գրիբոեդովը, որի անունը սերտորեն կապված է Անդրկովկասի ժողովուրդների հետ, նույնպես կողմնակից չէր ցարական կառավարության գաղութային քաղաքականությանը։

Ա. Ս. Գրիբոեդովը ձգտում էր Ռուսաստանի ու Անդրկովկասի միջև հաստատել քաղաքական, տնտեսական և կուլտուրական սերտ կապեր, բայց ոչ թե Անդրկովկասը գաղութ դարձնելու, ինչպես այդ անում էին ցարական գաղութարարները, այլ նրա տնտեսությանը և կուլտուրային զարկ տալու, ժողովրդի դրությունը բարելավելու, երկիրը, ինչպես նա էր ասում, «մինչ այդ իրեն անծանոթ նոր կյանքի համար վերածնելու» նպատակով։

Եթե ցարիզմը, հենվելով տեղական շահագործող դասակարգերի վրա, ճնշում էր Անդրկովկասի ժողովուրդներին, ապա այդ նույն ցարիզմի ճնշման տակ գտնվող ռուս ժողովրդի առաջավոր մարդիկ պաշտպան էին կանգնում նրանց։

Հանձին ռուս մեծ ժողովրդի Անդրկովկասի ժողովուրդներն ունեին իրենց հավատարիմ պաշտպանը և լավ բարեկամը։ Ցարիզմի դեմ մղվող համատեղ պայքարում այդ ժողովուրդների եղբայրական կապերը գնալով ավելի ու ավելի էին ամրապնդվում։

Ցարիզմի սոցիալական հենարանը ամրապնդելու փորձերը. 1846 թ. դեկտեմբերի 6-ի օրենքը

Իր տնտեսական քաղաքականության կիրառման ընթացքում ցարական կառավարությունը լուրջ դժվարությունների հանդիպեց հողային հարցում։

Հողային հարցը Անդրկովկասում շատ խճճված էր։ Հողատիրության և հողօգտագործման մի շարք ձևեր էին ստեղծվել Անդրկովկասում, մեկը մյուսից տարբեր ու հակասական։ Օրինակ, Վրաստանի կալվածատերերի ու գյուղացիների իրավունքներն ու պարտականությունները տարբերվում էին Հայաստանից ու Ադրբեջանից, չնայած երեք երկրներն էլ գտնվում էին ֆեոդալական հասարակարգում և մեծ տարբերություն չկար նրանց սոցիալ-տնտեսական կյանքի զարգացման ընդհանուր մակարդակի միջև։

Վրաստանում ճորտատիրական կարգերը, Ռուսաստանի նման, իշխող էին։ Իսկ Հայաստանում և Ադրբեջանում գյուղացիների ճնշող մեծամասնությունը իրավական տեսակետից ազատ էր ճորտական կախումից։ Կալվածատերերն իրավունք չունեին նրանց վաճառել կամ ընծայել, ինչպես այդ անում էին Ռուսաստանում և Վրաստանում։

Ցարական կառավարությունը հենց սկզբից ճանաչեց վրաց ազնվականության իրավունքները և նրանց հավասարեցրեց ռուս ազնվականներին։ Հայաստանի և Ադրբեջանի կալվածատերերի՝ խանների, բեկերի, աղալարների ու մելիքների հողատիրական իրավունքները սկզբնական շրջանում կառավարությունը չճանաչեց. դա վիճելի և ուսումնասիրության կարոտ հարց համարվեց։

1830—1840-ական թվականներին Անդրկովկասի վարչական ու տնտեսական դրության ուսումնասիրության հետ միաժամանակ ուսումնասիրվում են նաև խանների, բեկերի, աղալարների ու մելիքների վարչական և կալվածատիրական իրավունքները։ Նրանցից պահանջվում էր փաստաթղթերով ապացուցել իրենց հողատեր-կալվածատեր լինելը։

Խանները, բեկերը, աղալարներն ու մելիքները կալվածատիրական իրավունք ձեռք բերելու համար դիմում էին ամեն տեսակի խարդախ միջոցների՝ կեղծ փաստաթղթերի հորինման, կեղծ վկայությունների և կաշառքի։ Նրանք ամեն կերպ ձգտում էին ապացուցել, որ իրենք էլ ռուս և վրաց կալվածատերերի նման իրավունքներ ունեն հողի և գյուղացիների նկատմամբ։

Մուլքադարների ու թիուլդարների այդօրինակ քայլերն ուժեղ դիմադրության էին հանդիպում գյուղացիների կողմից։ Ամենուրեք մասսայական դժգոհություններ ու բողոքներ էին ծագում նրանց դեմ։ Գյուղական համայքներն առանձին-առանձին կամ համատեղ բողոքներ էին գրում կառավարությանը և մերկացնում նրանց կեղծիքները, բայց գյուղացիների դիմումները, երկար քաշքշուկից հետո, մերժվում էին։

1830—1840-ական թվականներից սկսած սրվում էր գյուղացիների ու կալվածատերերի դասակարգային պայքարը։ Հողի և ջրի հարցի լուծումը, ֆեոդալական բոլոր տեսակի ճնշումներից ազատագրվելը դառնում էր գյուղացիական շարժման գլխավոր խնդիրը։

Ցարական կառավարությունը պետական եկամուտներն ավելացնելու, բեկերի ու աղալարների վարչական և տնտեսական իրավունքները սահմանափակելու նպատակով սկզբում փորձեց չճանաչել նրանց կալվածատիրական իրավունքները և մասամբ էլ այդ իրագործեց։ Բայց հետագայում նա հիմնովին փոխեց իր վերաբերմունքը։

Ռուսաստանում և Անդրկովկասում սկսված գյուղացիական մասսայական շարժումներն ու դժգոհությունները 1840—1850-ական թվականներին ցարական կառավարությանը է՛լ ավելի մոտեցրին տեղական իշխող դասակարգերին։ Մ. Վորոնցովի փոխարքայության ժամանակ վերջ

տրվեց բեկերի, աղալարների ու մելիքների նկատմամբ մինչ այդ եղած քաղաքականությանը և դաշինք կնքվեց ցարական կառավարության ու Անդրկովկասի, այսպես կոչված, «բարձր դասի» միջև։

1840—1850 թթ. հրատարակվեցին կալվածատիրական-ճորտատիրական բնույթի մի շարք օրենքներ ու կարգադրություններ, որոնք ավելի ամրապնդեցին այդ դաշինքը և ցարիզմի սոցիալական հենարան հանդիսացող Անդրկովկասի հողատեր-կալվածատերերի դիրքերը։

Անդրկովկասում ցարիզմի սոցիալական հենարանն ամրապնդելու տեսակետից առանձնապես կարևոր նշանակություն ունեցավ 1846 թ. դեկտեմբերի 6-ի օրենքը (ռեսկրիպտը), որը մեծ գոհունակությամբ ընդունվեց հողատեր-կալվածատերերի կողմից։

1846 թ. դեկտեմբերի 6-ի օրենքով ցարական կառավարությունը Անդրկովկասի խաներին, բեկերին, աղալարներին և մելիքներին ճանաչեց որպես հողի ժառանգական սեփականատերեր։

Այդ նույն օրենքով նրանց վերադարձվեցին անցյալում խլված հողերը։ Կալվածատերերին, որպես հողի լիակատար սեփականատերերի, իրավունք տրվեց ժառանգելու, ընծայելու և վաճառելու հողը, բայց միայն՝ «բարձր դասի» մարդկանց։

Նրանց տրվեցին նաև որոշ վարչական իրավունքներ։ Թիուլը՝ հողի ժամանակավոր սեփականությունը, 1851 թ. հունիսի 8-ի կանոնադրությամբ, ճանաչվեց որպես ժառանգական սեփականություն։ Թիուլդարների մի մասի և մուլքադարների իրավունքները փաստորեն հավասարվեցին։

Գյուղացիների ու կալվածատերերի փոխհարաբերություններն առանձին նահանգներում կարգավորելու համար հրատարակվում են լրացուցիչ օրենքներ։ 1847 թ. ապրիլի 20-ին օրենք է ընդունվում Շամախու և Դերբենդի նահանգների բեկերի, իսկ դեկտեմբերի 28-ին՝ Բորչալուի, Ղազախի և Շամշադինի աղալարների վերաբերյալ։ 1851 թ. հունիսի 8-ին առանձին օրենք է ընդունվում Երևանի նահանգի և Ախալցխայի գավառի մուլքադարների ու թիուլդարների մասին։

Բեկերի, աղալարների ու մելիքների հողերի վրա ապրող գյուղացիները պարտավոր էին նրանց վճարել մուլք կամ մալջահաթ՝ բերքի 1/10-ի չափով։ Տասը ընտանիքից 1 հոգի 1 տարով ծառա տալ՝ կալվածատիրոջ տնային և դաշտային աշխատանքները կատարելու համար։ Ծառաների սնունդը, հագուստը, ինչպես և հարկը տալիս էր աղան։

Գյուղական յուրաքանչյուր ընտանիքից մի մարդ, իր լծկան անասուններով ու գործիքներով, տարեկան 18 օր պետք է աշխատեր բեկի համար՝ ցանքսի, հնձի, խոտհարքի ժամանակ, կամ փոխարենը օրվա համար վճարեր 20 կոպեկ դրամ։ Աղալարների համար սահմանված էր 8 օր, իսկ դրամական փոխհատուցում՝ 10 կոպեկ։

Բացի այդ գյուղացիները պարտավոր էին այգիների, բոստանների, արոտավայրերի համար դրամ վճարել և տարեկան մի քանի օր տիրոջ համար ձրի աշխատել՝ էվրեզ կատարել։ Քոչվորները (քրդեր և ուրիշներ) պարտավոր էին իրենց ցեղապետներին վճարել տարեկան 4 ռուբլի արծաթով։

1851 թ. հունիսի 8-ի կանոնադրությունը, Ղրիմի վերահաս պատերազմի և նրան հաջորդած շրջանում նախապատրաստվող գյուղացիական ռեֆորմի պատճառով, չիրագործվեց։

Ցարական կառավարության օրենքները բացահայտ ֆեոդալական-ճորտատիրական բնույթ ունեին, բխում էին կալվածատերերի շահերից, ուղղված էին գյուղացիության դեմ։

Այդ օրենքներով ավելի էին ամրապնդվում ֆեոդալական դասի հողային ու վարչական իրավունքները։ Գյուղացիների հողաբաժնի մեջ փոփոխություն չէր մտցվում, ֆեոդալական պարտավորությունները՝ մուլքը, կոռ ու բեգարը և մնացած բոլոր հարկերն ու տուրքերը պահպանվում էին։ Ավելին, կալվածատերերը հնարավորություն էին ստանում իրենց իրավունքները տարածելու ոչ միայն հողի, այլև գյուղացիների վրա, գյուղացիների մի մասն ընկնում էր կիսաճորտական դրության մեջ։

1846 թվականի դեկտեմբերի 6-ի օրենքը և դրանից բխող 1847, 1851 թվականների կանոնադրությունները կոչված էին Անդրկովկասում ամրապնդելու ցարական կարգերը և նրա սոցիալական հենարան հանդիսացող տեղական կալվածատերերի իշխանությունը։ Այդ օրենքները սերտորեն կապված էին ցարիզմի ազգային-գաղութային քաղաքականության հետ, ուղղված էին Անդրկովկասի բնակչության ճնշող մեծամասնություն կազմող գյուղացիության դեմ։

IV ԳԼՈՒԽ

ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ XIX ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ԿԵՍԻՆ

Գյուղացիների դրությունը

Արևելյան Հայաստանում քաղաքական կարգերի փոփոխման հետևանքով փոփոխություններ են տեղի ունենում նաև երկրի տնտեսական կյանքում և բնակչության սոցիալական կազմում։

Խանական կարգերի տապալումից հետո Երևանի սարդարին պատ-

կանող բոլոր հողերը, շարժական ու անշարժ գույքը պետականացվում է։ Պետականացվում է նաև Պարսկաստան փախած խաների ու բեկերի հողերի որոշ մասը։ Հողի մեծ մասը Արևելյան Հայաստանում անցնում է պետության ձեռքը։ Այդ հողերի վրա ապրող գյուղացիները կոչվում էին պետական կամ արքունական գյուղացիներ։

Պարսկաստանի և Թուրքիայի սահմաններից Արևելյան Հայաստան (Ռուսահայաստան) գաղթածների մեծ մասը ևս բնակեցվում է պետական հողերի վրա։ Այսպիսով, պետական գյուղացիները կազմում են արևելահայ գյուղացիների ճնշող մեծամասնությունը՝ ավելի քան 80 տոկոսը։ Մնացած գյուղացիները ապրում էին կալվածատիրական հողերի վրա և կոչվում կալվածատիրական գյուղացիներ։

Օգտվելով իրենց տնտեսական ու վարչական դիրքից, կալվածատերերն անխնա շահագործում ու կեղեքում էին գյուղացիներին։

Անդրկովկասին լավատեղյակ ռուս պաշտոնյա Զուբարևը դեռևս 1829 թվականի մի զեկուցագրում ասում է. «Ղազախի և մյուս բոլոր գավառների գյուղացիները արտաքուստ են միայն ազատ, բայց ուշադիր նայելով կարելի է տեսնել, որ նրանք գտնվում են աղալարների ու մելիքների դաժան ստրկության պայմաններում»։

Հայկական մարզի առաջին ուսումնասիրող Ի. Շոպենը գրում է. «Նախիջևանի և Օրդուբադի շրջանների բնակիչների ներկա դրությունը խղճալի տպավորություն թողեց ինձ վրա։ Չնայած երկրի բնական հարստություններին, բնակիչներն անհամեմատ ավելի աղքատ են... նայիբներն իրենց ազգականների ու մերձավորների հետ, որոնք, տեղիս գլխավոր մուլքադարներն են, ամենևին չհոգալով բնակչության մասին, ամեն ինչ անում են կարելուն չափ մեծ հասույթ ստանալու համար»։

Աշխարհիկ կալվածատերերից ետ չէին մնում նաև հոգևոր կալվածատերերը։ Էջմիածնի, Սանահինի, Տաթևի, Սևանի և մի շարք այլ վանքեր ունեին իրենց կալվածքները, գյուղերը և ոչ պակաս խստությամբ շահագործում էին գյուղացիներին։

Վանքերից ամենաշատ կալվածքներ ունեցողը (ավելի քան 85 հազար հեկտար) Էջմիածինն էր։ Հին ժամանակներից սկսած Էջմիածնի վանքը օգտվում էր կալվածատիրական իրավունքներից, իսկ ռուսական տիրապետության շրջանում Հայաստանի ամենախոշոր հողատեր-կալվածատերն էր։ Էջմիածնի վանքապատկան գյուղերից էին Վաղարշապատը, Օշականը, Եղվարդը և այլն։

Մեծ քանակությամբ կալվածքներ ունեին նաև Տաթևի ու Հաղպատ-Սանահինի վանքերը։ Վերջիններս Լոռիում և այլ վայրերում գյուղացիներից շատերին ճորտական կախման մեջ էին դրել։

Կալվածատերերի դաժան ճնշումից ազատագրվելու համար գյուղացիները հաճախ խույս էին տալիս նրանց հողերից, ձգտում էին բնակվել պետական հողերի վրա և կամ չճանաչել կալվածատիրական իրավունքները։

Գյուղացիների ու կալվածատերերի միջև ծայր առած դասակարգային այս պայքարի շրջանում էր, որ 1846—1851 թվականներին մեկը մյուսի ետևից հրապարակվեցին ցարական կառավարության կալվածատիրական-ճորտատիրական բնույթի օրենքները։

Այդ օրենքներով ցարական կառավարությունը, հավատարիմ իր դասակարգային էությանը, հողային հարցը Անդրկովկասում լուծում էր հօգուտ կալվածատերերի։ Ամրապնդվում և ընդլայնվում էին կալվածատերերի ֆեոդալական իրավունքները գյուղացիների նկատմամբ։

Եթե մինչ այդ գյուղացին իրավունք ուներ կալվածատիրական կախումից ազատվելու հարց հարուցել օրենքի առաջ, իսկ կալվածատերը պետք է համապատասխան փաստաթղթերով ու վկայություններով հաստատեր իր իրավունքը, ապա Վորոնցովի ժամանակ դրությունը հիմնովին փոխվում է։

1849 թ. հոկտեմբերի 30-ին օրենք է հրապարակվում, որի համաձայն գյուղացին պետք է համապատասխան փաստաթուղթ ներկայացներ կալվածատիրոջ կախումից ազատ լինելու իր իրավունքի վերաբերյալ։ «Կալվածատիրական գյուղացին,— ասված է այդ օրենքում,— չի կարող այլ կերպ հարց հարուցել անձնական կախումից ազատ լինելու մասին, քան միայն այն ժամանակ, երբ համապատասխան ապացույցներ կներկայացնի, որ ինքը, իր հայրն ու պապը ազատ կացության մեջ են գտնվել։ Կալվածատերերի մոտ փաստաթղթեր չլինելու հիմունքով այսուհետև չի թույլատրվում նման հարցեր հարուցել։ Այս հիման վրա, ազատություն փնտրող գյուղացին մինչև գործի վերջնական քննությունն ու լուծումը պետք է մնա կալվածատիրոջ լիակատար հպատակության տակ»։

Ստացվում էր, որ եթե իշխող դասին պատկանող որևէ մեկը անօրինական, զարտուղի ճանապարհներով, իսկ այդպիսիների թիվը քիչ չէր, հափշտակել էր գյուղացուն պատկանող հողը և կախման մեջ դրել նրան, կարող էր դառնալ օրենքով ճանաչված կալվածատեր, եթե գյուղացին չապացուցեր դրա կեղծ լինելը։

Անդրկովկասի «բարձր» դասին՝ թավադներին, ազնվաուրներին, բեկերին, խաներին, աղալարներին և մելիքներին ցարական կառավարությունը շնորհել էր նաև մի շարք այլ արտոնություններ։ Միայն ազնվականների, ինչպես նաև հոգևորականների զավակները կարող էին բանակի հրամանատարական կազմի մեջ մտնել և զինվորական դպրոցներում սովորել։ Նույնիսկ հանցագործության դեպքում նրանց համար սահմանված պատիժները մյուսներից տարբերվում էին։

1840—1850-ական թվականների այս ռեֆորմներն ամբողջությամբ

բխում էին ցարական կառավարության գաղութային քաղաքականությունից և համապատասխանում Անդրկովկասի իշխող դասի՝ հողատեր-կալվածատերերի շահերին։ Ցարական ինքնակալության այդօրինակ քաղաքականության հետևանքով դարի կեսերից սկսած ծանր դրություն էր ստեղծվել կալվածատիրական հողերի վրա ապրող գյուղացիների համար։

Լավ վիճակի մեջ չէին նաև պետական գյուղացիները։ Ճիշտ է, նրանք ազատ էին կալվածատերերի ճնշումներից ու կամայականություններից, բայց նրանց վրա էլ ծանրացած էին պետական պարհակները, հարկերն ու տուրքերը։ Նրանք շատ զրկանքներ էին կրում նաև հողի ու ջրի պակասությունից։

Պետական գյուղացիների հողային պայմաններն ավելի վատացան 1840-ական թվականներին, երբ ցարական կառավարությունն սկսեց նրանց հողերը մասսայականորեն խլել և տալ Ռուսաստանի ներքին նահանգներից Անդրկովկաս արտաքսված ռուս աղանդավորներին։

XIX դարի 40-ական թվականներից սկսած Թիֆլիս—Դիլիջան—Երևան գլխավոր ճանապարհի շրջակայքում և ստրատեգիական նշանակություն ունեցող այլ կետերում հիմնվեցին մի շարք ռուսական գյուղեր՝ Վորոնցովկա (այժմ Կալինինո), Պրիվոլնոյե, Սարատովկա, Ալեքսանդրովկա (Մաքսիմ Գորկի), Նիկոլաևկա (Կիրովո), Ռուս-Դերգեր (Պուշկինո), Նիկիտինո (Ֆիոլետովո), Սեմյոնովկա, Ելենովկա (Սևան), Սուխոյ Ֆանտան և այլն։

Ճիշտ է, ցարական կառավարությունը, ելնելով իր գաղութային քաղաքականությունից, տեղական ժողովուրդների հաշվին նրանց որոշ արտոնություններ էր տալիս (մեծ քանակությամբ և ավելի լավ հողեր, արոտավայրեր և այլն), բայց, մյուս կողմից, նրանց ևս ճնշում ու շահագործում էր։

Նոր միջավայրում ցարիզմից դժգոհ ռուս գաղթականները տնտեսական, քաղաքական, կուլտուրական կապեր էին հաստատում տեղացիների հետ, որոնք գնալով ավելի ու ավելի մտերմական բնույթ էին ստանում։

Ռուսական տիրապետության սկզբնական շրջանում ինչպես հողային հարցում, այնպես էլ հարկային սիստեմում կատարյալ քաոս էր ստեղծվել։ Իսկ այդ դրությունից ամենից ավելի տուժում էին գյուղացիները և ամենից ավելի շահում պետական պաշտոնյաները, մանավանդ՝ հարկահավաքները։

Մինչև 1836 թվականը Հայկական մարզում հարկային սիստեմը հիմնականում մնացել էր նույնը, ինչպես որ գոյություն ուներ պարսկական տիրապետության ժամանակ։ Մինչև իսկ հարկահավաքները (սարքյարները) չէին փոխվել։ Հարկերի ու տուրքերի գանձման ժամանակ շատ շարաշահումներ էին տեղի ունենում։

Պետական եկամուտը ավելացնելու նպատակով 1836 թվականից

փոխվում է Հայկական մարզի հարկերի նախկին սիստեմը։ Եթե անցյալում հարկը գանձվում էր տարեկան եկամտի համապատասխան չափով, ապա այժմ 6 տարով (1836—1842 թթ.) սահմանվում էր կայուն հարկ, որը գյուղացիները պետք է վճարեին ինչպես բնամթերքով, այնպես էլ դրամով։ Հարկերն ու տուրքերը գրեթե կրկնապատկվում են։

1843 թվականից Անդրկովկասում և Հայաստանում նատուրալ հարկի փոխարեն մտցվում է դրամական հարկ, որը եթե մի կողմից նպաստում է բնատնտեսության քայքայմանը և կապիտալիստական հարաբերությունների զարգացմանը, ապա մյուս կողմից ավելի է ծանրացնում առանց այդ էլ խեղճ ու աղքատ գյուղացիների դրությունը և դժգոհությունների ու բողոքների նոր ալիք բարձրացնում ցարական կառավարության և կալվածատերերի դեմ։

Գյուղացիական շարժման առաջին քայլերը

Ինչպես տեսանք, գյուղացիները կրկնակի ճնշման էին ենթարկվում՝ թե տեղական հողատեր-կալվածատերերի և թե ցարական կառավարության կողմից։ Միշտ չէ, որ գյուղացիները կարողանում էին տանել այդ ճնշումները։ Հաճախ նրանք ըմբոստանում և պայքարի էին դուրս գալիս իրենց ճնշողների դեմ։

Ցարական տիրապետության սկզբնական շրջանում գյուղացիների պայքարը հիմնականում ուղղված էր տեղական հողատեր-կալվածատերերի՝ խաների, բեկերի, աղալարների ու մելիքների դեմ։ Այդ պայքարում գյուղացիները նույնիսկ օգնություն ու պաշտպանություն էին փնտրում ցարական կառավարության մոտ, շղթայակցելով շահագործող կառավարության և շահագործող դասակարգերի շահերի ընդհանրությունը։

Ցարական չինովնիկների ճնշումները, 1830—1840-ական թվականների վարչական ու տնտեսական ռեֆորմները մասամբ բաց արին գյուղացիների աչքերը։ Նրանք սկսեցին պայքարի դուրս գալ նաև ցարիզմի գաղութային ճնշման դեմ։

Անկազմակերպ, քաղաքական պայքարի փորձ չունեցող գյուղացիների մեջ յուրօրինակ ձևով էր արտահայտվում այդ պայքարը։ Այսպես, օրինակ՝ երբ 1837 թ. հոկտեմբերին Նիկոլայ I կայսրը այցելում է Հայաստան, Արարատյան դաշտի գյուղացիները ճանապարհին, տների կըտուրների վրա կրակ են վառում՝ ցույց տալու համար, որ իրենք էլ այդպես վառվում են կալվածատերերի ու պաշտոնյաների ձեռքին։

Սարդարապատում գյուղացիները թագավորին ցույց են տալիս փետրահան արված մի հավ, կամենալով հասկացնել, որ իրենց էլ այդպես փետրահան են անում։

Երևանի, Էջմիածնի, Սուրմալուի, Նախիջևանի, Դարալագյազի, Զանգեզուրի շրջաններում գյուղացիները մասսայորեն բողոքում, ելույթներ են ունենում մուլքադարների և թիուլդարների դեմ՝ հողի ու ջրի համար,

պետական և կալվածատիրական հարկերի ու պարհակների, ապօրինի բռնագանձումների դեմ։

Սարդարապատի շրջանի Շահրիար գյուղի բնակիչները 1832 թվականին բողոքում են մահալի կառավարիչ Օհան Շահխաթունյանի դեմ, որը նրանց հարկադրում էր իր համար ձրի աշխատել՝ ցանք անել, խոտ հնձել, շինարարական աշխատանքներ կատարել և այլն։

1833 թվականին Կողբի գյուղացիները հրաժարվում են հարկ վճարելուց պատճառաբանելով, որ իրենց հասանելիքից ավելին են պահանջում։ Նրանք գյուղից հեռացնում են հարկահավաքներին։ Գալիս է մահալի կառավարիչը, բայց գյուղացիները դարձյալ հրաժարվում են հարկ վճարելուց։ Մի խումբ զինված պահնորդների ուղեկցությամբ Կողբ է գալիս Հայկական մարզի հարկերի և տուրքերի բաժնի գլխավոր տեսուչը. գյուղացիները նրան էլ չեն ենթարկվում։ Կողբ գյուղի բնակիչները համաձայնում են հարկ վճարել՝ իրենց արդարացի պահանջը մասնակիորեն բավարարելուց հետո միայն։

1837 թվականին Ղարաբաղի մասին գրած իր մի գաղտնի զեկուցագրում կոլեգիական խորհրդական Նեֆեդևը, նկարագրելով Շուշու բնակիչների դժգոհությունները, ասում է. «Ընդհանրապես Ղարաբաղի բնակիչները և հատկապես շուշեցիները զարմանում են բեկերի ունեցած հաջողությունների վրա, որոնք արագ կերպով կալվածք են ձեռք բերում և դառնում են կալվածատերեր... ճնշում ժողովրդին»։

Խոսելով Նախիջևանի դավառում գյուղացիության մեջ սկսված դժգոհությունների մասին, Նեֆեդևը գրում է. «Այս տարվա մայիսին տեղական բնակիչների մեջ բացահայտ խռովություն ծագեց... Հայերն այստեղ շատ զրկանքներ են կրում»։

Զանգեզուրի շրջանի Բռնակոթ գյուղի բնակիչները 1837 թվականին գրած իրենց մի դիմումի մեջ ասում են. «Մեր պետերը ոչխարի նման մտած գայլի նման հոշոտում են մեզ»։ Դարալագյազի շրջանի Կորադիզ և Ալմալու գյուղերի բնակիչները գրում են, որ իրենց աղքատության և թշվառության միակ պատճառը կալվածատերերի ճնշումներն են։

Շիրակի գյուղացիների ելույթը

1838 թվականին գյուղացիական հուզումներ են տեղի ունենում Ալեքսանդրապոլի (Փամբակ-Շորագյալի) շրջանում։ Գյուղացիների պայքարն ուղղված էր գլխավորապես ցարական կառավարության հարկային քաղաքականության և տեղական պաշտոնյաների բռնությունների ու ճնշումների դեմ։

1838 թ. հունվարի 9-ին Կովկասի կառավարչապետը կարգադրում է Վրաստանի քաղաքացիական մասի նահանգապետ, գաղտնի խորհրդական Ն. Պալավանդովին մեկնել Փամբակ-Շորագյալ՝ իշխանության դեմ ըմբոստացողներին պատժելու և «կարգը վերականգնելու» համար։

Գալով Փամբակ-Շորագյալ՝ իշխան Պալավանդովը ականատես է լի-

նում գյուղացիների մասսայական դժգոհությունների ու բողոքների։ «Հունվարի 24-ին գալով Փամբակ-Շորագյալի դիստանցիա և դեռ Ալեքսանդրապոլ չհասած,— գրում է նա Թիֆլիսի զինվորական նահանգապետին,— ես մի քանի անկարգություններ նկատեցի, առավելապես Թուրքիայից եկած գաղթականներով բնակեցված գյուղերում, որոնք, հավանաբար, վտանգավոր ներշնչումներով բաժանվել էին տարբեր պարտիաների, և մեկը պահանջում էր անպայման փոխել գյուղական տանուտերերին, իսկ մյուսը՝ հակադրվում էր նրա ցանկությանը»։

Այնուհետև Պալավանդովը լինում է Ալեքսանդրապոլում և մի քանի գյուղերում, որտեղ գյուղացիական ելույթները սուր բնույթ էին ստացել։ «Ալեքսանդրապոլից,— գրում է նա,— ես գնացի Արփաչայի մոտ ընկած Փոքր-Ղարաքիլիսա, Բայանդուր, Տավշան-Ղշլաղ և Ղազարապատ գյուղերը, որտեղ խռովություններն ավելի նկատելի էին եղել. այստեղ ամենուրեք բողոքում էին ծայրաստիճան ճնշումների դեմ»։

Պալավանդովը կարգադրում է գյուղացիներին ցրվել, հավաքույթներ չանել, ենթարկվել իշխանությանը և այլն, բայց, չնայած դրան, գյուղացիները պահանջում են «տեղն ու տեղը փոխել գյուղապետներին», որը նա կտրականապես մերժում է։

Հունվարի 25-ին Հոռոմ գյուղի բնակիչներից ավելի քան 50 հոգի, զայրացած գլխավոր պրիստավ Շլիպենբախի և նրան ենթակա պաշտոնյաների կամայականությունների ու բռնությունների դեմ, գնում են Գյումրի (Ալեքսանդրապոլ), հարձակվում պրիստավի տան վրա, ջարդում լուսամուտները և փորձում ներխուժել սենյակ։

Ոստիկաններն ու կազակները հարձակվում են գյուղացիների վրա և նրանցից ոմանց ծեծում ու վիրավորում են։ Գյուղացիները դիմադրում են մահակներով ու ճիպոտներով։

Պրիստավի պահանջով, Ալեքսանդրապոլի պարետի կարգադրությամբ, անմիջապես դեպքի վայրն է գալիս զինված մի ջոկատ, բանտարկում 27 մարդու, իսկ մնացածները թաքնվում են։

27 բանտարկյալներին, այդ թվում Հոռոմ գյուղացի Կուրղի Մարտիրոսյանին, Մակար Սարոյանին, Այվազ Հովհաննիսյանին, Հարթենն Ենգոյանին և ուրիշների տեղափոխում են Ալեքսանդրապոլի գլխավոր բանտը։

1838 թ. փետրվարի 2-ին և 9-ին Վրաստանի վարչապետին գրած զեկուցագրում Պալավանդովը հայտնում է, որ Փամբակ-Շորագյալի դիստանցիայում «ժողովրդի տրամադրությունը նկատելի կերպով փոխվել է... Թուրքահայ գաղթականները ձգտում են ազատվել հարկերից ու տուրքերից»։

Այնուհետև նա հայտնում է, որ մի շարք գյուղերում պահանջում են փոխել գյուղապետներին և նույնիսկ ծխական քահանաներին, որ ինքը

հարկադրված է եղել փետրվարի 2-ին բանտարկել հինգ հոգու՝ մեկը տեղացիներից, չորսը՝ գաղթականներից։

Ուշագրավ է, որ Շիրակում բռնկված գյուղացիական այս շարժման մասնակիցներից ոմանց վրա (Ախվալի և այլ գյուղերում) նկատելի էր թոնդրակյան շարժման գաղափարների ազդեցությունը։ Թոնդրակյան գաղափարների հետևորդները պայքարում էին ոչ միայն ցարական իշխանության տեղական օրգանների, այլև հայ հոգևորականների ու եկեղեցու ճնշումների դեմ։

Շարժման մասնակիցների մոտ հայտնաբերվում է «Բանալի ճըշմարտության» հայտնի գիրքը, որը արևմտահայ գաղթականները խնուսի շրջանի Զաուրման գյուղից բերել էին իրենց հետ և պահում էին Ախվալի գյուղում։ Այս գրքի և առհասարակ թոնդրակյան գաղափարների տարածման գործում աչքի են ընկել Մեսրոպ Բուդաղյանը, Տոնո Կիրակոսյանը, գյումրեցի թարգի Սարգիսը, տիրացու Գևորգը և ուրիշներ։

Փամբակ-Շորագյալի դիստանցիայի գյուղացիական հուզումները ճնշվեցին, բայց դրանք ապարդյուն չանցան։ Այդ դեպքերի անմիջական ազդեցության տակ ոտքի կանգնեցին Նոր Բայազետի գյուղացիները։

Գյուղացիական շարժումները Նոր Բայազետում

1830-ական թվականների գյուղացիական շարժումների մեջ ամենից ուշագրավը Նոր Բայազետի շրջանի գյուղացիների ելույթն է։

1837 թվականին լրանում է Թուրքիայի տիրապետության տակ մնացած Բայազետից 1830 թ. հունիսին Գավառ (որը վերանվանվեց Նոր Բայազետ, այժմ՝ Կամո) գաղթած հայերին տրված արտոնությունների ժամկետը։ Նրանցից պահանջվում է հարկ վճարել 1837 թվականի բերքից։

Նոր Բայազետի գաղթականները դիմում են կառավարությանը, հրաժարվում են հարկ վճարելուց, պատճառաբանելով, որ ի վիճակի չեն։ Բայազետի բնակիչները, ինչպես սենատոր Գանն է ասում, հարկադրվել էին «աչքաչափով», առանց հաշվի առնելու նրանց ռեալ եկամուտները։ Նրանք միաժամանակ խնդրում են առհասարակ իրենց ազատել հողային հարկից, համարել քաղաքային բնակիչներ և գավառական դպրոց բացել պետության հաշվին։

Նոր բայազետցիների օրինակին հետևում են շրջանի 27 գյուղերի հայ գաղթականները և մոտակա մի քանի գյուղերի ադրբեջանցիները։

Տեղեկանալով այդ մասին, գավառապետն իր ներկայացուցիչներին ուղարկում է ըմբոստներին կարգի հրավիրելու, բայց գյուղացիները վռնդում են նրանց։

Նոր Բայազետ է գալիս Հայկական մարզի պետ, գեներալ-մայոր Բեհբութովը։ Նա փորձում է իր «խրատներով» և «հորդորներով» ազդել գյուղացիների վրա, բայց իզուր։ «Կատաղի ամբոխը,— ինչպես նա ասում

է Կովկասի կառավարչապետ բարոն Ռոզենին 1838 թ. փետրվարի 19-ին գրած զեկուցագրում,— առիթ էր որոնում անկարգություններ անելու և պատրաստ էր բացահայտ խռովություն բարձրացնելու»։

Բեհբութովը գրավոր կարգադրություն է անում գյուղացիներին և ժամկետ նշանակում հարկերը մուծելու համար։

«Յանկանալով ձեզ ժամանակ տալ, որպեսզի դուք խելքի գաք և կարողանաք պատկերացնել այն բոլոր դժբախտությունները, որ ձեզ կհասնեն ձեր անզուսպ և համառ արարքների հետևանքով,— գրում է Բեհբութովը,— հարկերը մուծելու համար ես ժամկետ եմ նշանակում մինչև մարտի 16-ը..., չկատարելու դեպքում դուք կհամարվեք կառավարության հակառակորդներ և ձեզ հետ կվարվեն որպես խռովարարների և ընդհանուր հանգստությունը խանգարողների»։

Չնայած Բեհբութովի սպառնալիքներին, ըմբոստ գյուղացիները ոչ միայն չեն կատարում նրա կարգադրությունը, այլև մի շարք տեղերում ծեծում և հեռացնում են մելիքներին ու տանուտերերին։ Հավաքված բազմության միջից լսվում են «Մենք չե՛նք ուզում մելիքներ, տանուտերեր և շրջանային պետ» բացականչությունները։ Գեներալ Բեհբութովը, ոչ մի արդյունքի չհասնելով, վերադառնում է Երևան։

1838 թ. մարտի 3-ին բարոն Ռոզենը ռազմական մինիստր Չերնիշևին գրած իր զեկուցագրում հայտնում է, որ ապստամբները համառում են, խաղաղ միջոցառումները նրանց վրա չեն ազդում. «Հետագա ներողամտությունը,— ասում է նա,— կարող է չափազանց վտանգավոր օրինակ ծառայել ոչ միայն Հայկական մարզի, այլև ուրիշ գավառների գաղթականների և տեղացի բնակիչների համար»։

Ստանալով Նիկոլայ I-ի համաձայնությունը, Չերնիշևը կարգադրում է վճռական միջոցներ ձեռք առնել՝ Նոր Բայազետի շրջանի գյուղացիական ելույթները ճնշելու համար։

1838 թվականի մարտին գեներալ Գոլովինը (Ռոզենի հաջորդը) Նոր Բայազետ է ուղարկում եգերական երկու վաշտ, երկու լեռնային հրանոթ և կազակային մեկ հարյուրակ։ Մարտի վերջին ճնշվում է գյուղացիների ելույթը։

Շարժման ղեկավարներից 13 հոգու կալանավորում և հանձնում են ռազմական դատարանին։ Դրանցից 10 հոգու մարմնական պատժի են ենթարկում, իսկ երեք գլխավորներին՝ Բարսեղ Արծրունուն, Գալուստ Շահումյանին և Նահապետ Բուդալյանին, բանտարկում և ուղարկում են Երևանի բերդը։

Հայ մեծ լուսավորիչ Խ. Աբովյանը, որը 1838 թ. հունիսին սենատոր Գանի հետ միասին եղել է Նոր Բայազետում, վերոհիշյալ դեպքերի մասին հետևյալն է գրում.

«Բարոնն առյալ զիս ընդ իւր միայն՝ գնացաք ի Գեօքչայ կամ ի հին

քաղաքն Քեղարքունի, ուր բնակին դաղթական Հայք Բայազեդացիք, որոց իշխանաւորք յուրացեալ զամբաստանութիւն ընդդեմ հարկապահանջութեան տէրութեան ի կապանս կային յամրոցին Երևանի, բաղումք չունելով զյոյս փրկութեան...

Ի մտանելն մեր ի քաղաքն՝ ելին ընդառաջ մեր ծնողք և ազգականք խղճալի բանտարկելոց կական բարձեալ և արտասուօք հայցելով ի նմանէ զհնարս փրկութեան»:

Աբովյանն այստեղ մոտիկից ծանոթանում է գյուղացիների խղճալի դրության և գյուղացիական շարժման մասնակիցների հետ, որն անջնջելի տպավորություն է թողնում նրա վրա:

Նոր Բայազետի շրջանի 30 գյուղերի հայերի և ադրբեջանցիների համատեղ ելույթը Հայկական մարզում առաջին խոշոր ելույթն էր ցարական կառավարության դեմ: Դա օրգանապես կապված էր Փամբակ-Շորագյալի շրջանի գյուղացիության ըմբոստության հետ:

Կովկասի կառավարչապետ Ռոզենը ռազմական մինիստր Չերնիշևին 1838 թ. մարտի 3-ին գրած գաղտնի զեկուցագրում ասում է, որ նորբայազետցիք «համառ կերպով որոշել են չենթազանվել, նկատի ունենալով Փամբակ-Շորագյալի դիստանցիայի դեպքերը»:

Նոր Բայազետի և շրջակա գյուղերի բնակիչների առաջին մասսայական ելույթը ճնշվեց, բայց դա կարևոր նշանակություն ունեցավ Հայաստանի գյուղացիական շարժումների հետագա զարգացման համար:

Գյուղացիական ելույթները Ախտայի և Կոտայքի շրջաններում

XIX դարի 40—50-ական թվականների կալվածատիրական-ճորտատիրական բնույթի ցարական օրենքներն ինչպես Վրաստանի և Ադրբեջանի, այնպես էլ Հայաստանի գյուղացիության մեջ առաջ բերին դասակարգային պայքարի նոր ալիք: Հողազուրկ և սակավահող գյուղացիները հնարավոր բոլոր միջոցներով շարունակում էին պայքարել հողատեր-կալվածատերերի և նրանց շահերի պաշտպան ցարական կառավարության դեմ:

Կոտայքի և Ախտայի շրջաններում կալվածատեր Գեղամյանների ու Մելիք-Աղամալյանների դեմ համառ ու տևական պայքար են մղում Բջնի, Արզական, Ելդովան, Գյո-Քիլիսա, Կարենիս և այլ գյուղերի բնակիչները:

Համառ և տևական բնույթ է ստանում հատկապես Ախտայի (այժմ՝ Հրազդան) շրջանի Բջնի գյուղի հայ և ադրբեջանցի բնակիչների համատեղ պայքարը կալվածատեր Արսեն Գեղամյանի դեմ:

Բջնի գյուղի թիուլական իրավունքը Արսենի հայրը ձեռք էր բերել դեռևս Երևանի Հուսեին խանի ժամանակ: Հոր մահից հետո 1840 թվականին Երևանի գավառական դատարանը որոշում է դադարեցնել նրա

թիուլական իրավունքը: Բայց ճարպիկ ու ագահ կալվածատիրոջ ճանկերից գյուղացիները չեն կարողանում ազատվել:

1846 թվականին Կովկասի փոխարքա Վորոնցովը կարգադրում է թույլատրել Գեղամյանին օգտվելու Բջնի, Գյո-Քիլիսա և Ելդովան գյուղերի թիուլական իրավունքից:

Կալվածատեր Գեղամյանը Բջնիի գյուղացիներից պահանջում էր իրեն վճարել բահրա՝ բերքի 7/30 մասը, ծխահարկ՝ 2 ռ. 50 կ., հնձած խոտի ու կալսած դարմանի 7/30 մասը, համփայից մեկ բաթման յուղ, 2-ական բեռ վառելափայտ և ածուխ, փոխադրական միջոցներ՝ բահրան Երևան տեղափոխելու, ընտանիքը ամառանոց տանելու և վերադարձնելու, մթերքներ մատակարարելու համար և այլն:

Գյուղացիները պարտավոր էին կալվածատիրոջ համար (իրենց սերմացուով) տարեկան 10 խալվար ցանել, հնձել, կալսել և բերել լցնել նրա ամբարը: Գյուղացիները պարտավոր էին կալվածատիրոջ և նրա հյուրերի համար, ամառանոց եկած ժամանակ, մատակարարել գառ, հավ, ճուտ, յուղ, հաց, ձու, իսկ ձիերի համար՝ առվույտ:

Գյուղացիները պետք է հինգ ընտանիք, ամբողջ տարով, ծառա տային Արսեն աղա Գեղամյանին և մի մշտական պահակ՝ Երևանում նրա տունը պահպանելու համար:

Չկարողանալով տանել ֆեոդալական այս ստորացուցիչ պայմանները, 1850 թ. մարտին բջնեցիք, 40 հայերի ու ադրբեջանցիների ստորագրությամբ, Գեղամյանի դեմ բողոքում են Երևանի նահանգապետին, որտեղ թվարկելով վերոհիշյալ պարտավորությունները, գրում են. «Արդեն վեց տարի է, որ նա մեզանից կրկնակի ավել մուլք է գանձում... Այս բոլորից, Ձերդ գերազանցություն, կարող եք տեսնել, որ մենք մեզ համար համարյա թե ոչինչ ձեռք բերել չենք կարող, ավելացրած և այն, որ տարեկան 153 ռ. վճարում ենք պետությանը: Եվ այսպիսի պայմաններում Արսեն սուլթանը մեզ հետ դաժան է վարվում, վիրավորում է որպես իր ճորտ գյուղացիների և մեզ հասցրել է այսպիսի ծայրաստիճան աղքատության, որ հազիվ ենք կարողանում մեր ընտանիքներին սնունդ մատակարարել»:

Երևանի նահանգապետի կարգադրությամբ հատուկ հանձնարարությունների չինովնիկ Սալտիկովը գնում է Բջնի և հարցաքննում մի շարք գյուղացիների: Գյուղացիները միահամուռ կերպով մերկացնում են մուլքադարի գիշատիչ դեմքը և խնդրում իրենց տեղափոխել պետական հողերի վրա:

Իր ցուցմունքի ժամանակ 40-ամյա Սարո Դրմոյանը ասում է. «Արսեն սուլթան Գեղամովը մեզ հասցրել է ծայրահեղության և մենք զրկվել ենք գրեթե մեր ամբողջ ունեցվածքից..., մենք նրա համար ամեն ինչ անում ենք որպես նրա ճորտերը...

Ես ոչ մի կերպ չեմ կարող մնալ նրա մոտ գյուղում, թեկուզ նա ամբողջ բաներն ինձ նվիրի և ինձնից, իմ ընտանիքից անցյալում ամբողջ վերցրածը վերադարձնի: Մի բան եմ խնդրում՝ ինձ տեղափոխել պետական հողերի վրա, որտեղ ուզում է լինի... միայն թե չմնամ սուլթանի հողի վրա»:

Բջնի գյուղի բնակիչ 60-ամյա Կուլի Մուրադ Օղլին իր ցուցմունքի ժամանակ ասում է. «Այլևս չեմ կարող մնալ Արսեն սուլթանին պատկանող հողի վրա, նրա ճնշումների պատճառով: Ցանկանում եմ տեղափոխվել պետական հողի վրա, որտեղ հարմար գտնեք»:

Բջնեցիների ըմբոստությունը խեղդելու համար գյուղ է գալիս Նոր Բայազետի գավառապետը, իր զինված ոստիկաններով, բայց այդ էլ չի օգնում: Նա հավաքված բազմությունից մի քանիսին հրապարակով ենթարկում է մարմնական պատժի, բանտարկում է շարժման երեք պարագլուխներին՝ Ազատ Գրիգորյանին, Օհան Հարությունյանին, Խալիլ Ահմեդ Օղլուն և ուղարկում Երևանի բանտը:

Այս դեպքից հետո ամբողջ գյուղը, կանանց ու երեխաների հետ, բանտարկյալների ետևից գալիս է Երևան՝ նահանգապետին բողոքելու: Նահանգապետը փորձում է հանգստացնել գյուղացիներին և պահանջում է հարկերը վճարել մուլքադարին: Ըմբոստ գյուղացիները այստեղ ևս մնում են անդրդվելի: Նրանցից մի քանիսին ենթարկում են մարմնական պատժի և զինվորական պահակախմբի հսկողության տակ վերադարձնում գյուղ: Կարգադրվում է Հայաստանից աքսորել Բջնիի գյուղացիական ելույթի պարագլուխներին՝ «ընդհանրապես բոլոր գյուղացիներին սանձահարելու համար»:

Բջնիի գյուղացիների պայքարը կալվածատեր Գեղամյանի դեմ շարունակվում է նաև XIX դարի երկրորդ կեսին:

Գյուղացիական ելույթները Դարալագյազում

XIX դարի առաջին կեսի գյուղացիական շարժումների կարևոր էջերից է նաև Դարալագյազի շրջանի հայ և ադրբեջանական գյուղացիների համատեղ պայքարը կալվածատեր Թառումյանների դեմ:

Շուշու բնակիչ, հայտնի հարուստ կապալառու Սարգիս Թառումյանը գնումների և այլ ճանապարհով Դարալագյազում մեծ քանակությամբ հող էր ձեռք բերել և անողոք շահագործում էր տեղի գյուղացիներին:

1842 թվականից սկսած Այնազոր, Արփա, Խաչիկ, Կնիշիկ, Ռինդ, Իրտիշ, Քեշիշքենդ գյուղերի համայնքները բողոքում են տեղական ու վերադաս իշխանություններին և խնդրում՝ Թառումյանին զրկել անօրինական ճանապարհով ձեռք բերած մուլքադարական իրավունքից:

Մոտ կես դար է տևում Դարալագյազի շրջանի 7 գյուղերի և կալվածատեր Թառումյանների պայքարը: Պետական մարմինների կողմից մի շարք անգամներ քննվում է այդ հարցը: Շրջանի հայ և ադրբեջանական

գյուղերի բնակիչները համայնքներով և անհատապես միահամուռ կերպով վկայություն են տալիս ընդդեմ կալվածատիրոջ:

1845 թվականին կառավարության կողմից կատարված հարցաքննությունների ժամանակ 80-ամյա Ասատուր Տեր-Հովհաննիսյանն ասում է. «Հիրթիչու թագավորական ռանաթն մուլքադարի բաներա չի տվել ինչպես զզլբաշի ժամանակ, նմանապես ռուսի թագավորության. Թառումովն անարդարությամբ է նրանցից հողի բաներա պահանջում»:

1846 թ. հուլիսին Դարալագյազի գավառապետին գրած դիմումի մեջ գյուղացիները, բողոքելով Թառումյանի դեմ, խնդրում են. «Օրենքով թույլ չտալ, որ նա յոթ գյուղ զավթի, եթե ոչ նա իր զորությամբ կամաց-կամաց ամբողջ մահալին կտիրանա»:

1849 թվականին Ռինդ գյուղի բնակիչները Դարալագյազի գավառապետին բողոքում են, որ իրենք նորոգել են իրենց հին առուն, 1840—1848 թթ. օգտվել են այդ առվի ջրից, վարել, ցանել են իրենց հողերը և հարկը տվել պետությանը: Իսկ այժմ, ասում են նրանք, Թառումյանը եկել և բռնությամբ կտրում է իրենց ջուրը, ուզում է զավթել հողերը: «Գյուղի վերևը Թառումովն է կտրել, ներքևն էլ Հասան Ալի սուլթանը, էսի կորա մենք մնացել ենք անհար և ընկել ենք մեծ աղքատության մեջ և մեր ընտանիքը չենք կարում պահել: Կամ մեր հողն ու ջուրը մեզ տվեք և կամ նրաման տվեք դուրս իկանք»:

Պետական իշխանության տեղական և վերադաս մարմիններին նման բողոքներ են ներկայացնում նաև Քեշիշքենդ, Արփա, Խաչիկ և մյուս գյուղերի բնակիչները: Բայց ցարական չինովնիկները ուշադրություն չէին դարձնում աշխատավոր գյուղացիների արդարացի բողոքների վրա:

Ուշագրավ է, որ Դարալագյազի շրջանի գյուղացիների պայքարը չէր սահմանափակվում միայն Թառումյանի և ուրիշ անհատ կալվածատերերի դեմ ուղղված ելույթներով, այն ընդունում էր հակամուլքադարական, հակաֆեոդալական բնույթ: Իրենց վկայությունների մեջ գյուղացիներն ասում են. «Մենք ամենևին չենք լսել և չենք տեսել, որ Դարալագյազում մուլք եղած լինի»:

Դարալագյազի գյուղացիների պայքարը կալվածատեր Թառումյանների և մյուսների դեմ ավելի սուր բնույթ ընդունեց XIX դարի երկրորդ կեսին:

Գյուղացիական ելույթները Արարատյան դաշտում և այլ վայրերում

1840—1850-ական թվականներին գյուղացիական շարժումները լայն ծավալ են ստանում նաև Արարատյան դաշտի գյուղերում: Այս տեսակետից բնորոշ են Էջմիածնի, Սարդարապատի, Սուրմալուի և Ղամարլուի գավառների կալվածատիրական և պետական գյուղացիների պայքարը մուլքադարների ու թիուլդարների դեմ:

Երևանի գավառի Սաֆիաբադ, Ղարղաբազար, Ղամարլու, Վերին և

Ներքին Խաթունարխ գյուղերի հայ և ադրբեջանցի բնակիչները, 1840-ական թվականներից սկսած, մի քանի տասնամյակ շարունակ հողի և ջրի համար սուր վեճերի մեջ էին գտնվում մուլքադար Եղիազարովների հետ։

Գյուղական համայնքները բազմաթիվ դիմումներ ու բողոքներ են գրում տեղական իշխանությանը։ Ցարական չինովնիկները, հաճախ կաշառվելով կալվածատերերի կողմից, ամեն կերպ աշխատում են խեղդել գյուղացիների արդար բողոքը։ Բայց գյուղացիները չեն լռում. դիմում են Կովկասի փոխարքային և նույնիսկ թագավորին։

1840—1850-ական թվականներին նման բողոքները այնպիսի մասսայական չափեր են ընդունում, որ Կովկասի փոխարքան տեղական իշխանություններին հատուկ կարգադրություն է անում՝ արգելել գյուղացիներին, որպեսզի նրանք իրենց անվերջ բողոքներով «չանհանգստացնեն իշխանության վերադաս մարմիններին»։

XIX դարի առաջին կեսին գյուղացիական շարժումներին ակտիվ մասնակցություն են ունենում նաև Հայաստանում ապրող ադրբեջանցի գյուղացիները։ Սրանք հայ գյուղացիների հետ համերաշխ պայքարի են դուրս գալիս իրենց ընդհանուր դասակարգային թշնամիների՝ խաների, բեկերի, աղալարների ու մելիքների դեմ։ 1840-ական թվականներից սկսած Երևանի գավառի Սևանի շրջանի Ջոդ, Մեծ Մազրա, Փոքր Մազրա, Ջախրլու և Ղոշա-Բուլաղ գյուղերի բնակիչները հրաժարվում են իրենց աղալարների համար ծառայություն կատարելուց։ Գյուղացիների ներկայացուցիչները գնում են Թիֆլիս՝ փոխարքա Վորոնցովին բողոքում աղալարների ապօրինի պահանջների ու ծանր հարկերի դեմ։ Փոխարքան մերժում է գյուղացիների պահանջը, բայց նրանք չեն դադարեցնում իրենց պայքարը աղալարների դեմ։

Գյուղացիական հուզումներ և ելույթներ են տեղի ունենում նաև Էջմիածնի, Սանահինի, Տաթևի վանքապատկան կալվածքներում, Զանգեզուրի շրջանի Վերին Թաղավար, Տեղ ու Բանազուր գյուղերում և այլ վայրերում։

Կալվածատերեր Մելիք Աղամալյաններն ու Գեղամյանները՝ Կոտայքում ու Ախտայում, Թառումյանները՝ Դարալագյազում, Արղությանները, Լոռիս-Մելիքյանները՝ Լոռիում, Շահխաթունյանները, Խան-Մամիկինսկին, Խան-Էրիվանսկին, Սարտիպ Մամադ խանը և ուրիշներ՝ Երևանի գավառում, Նախիջևանում, Զանգեզուրում և այլուր տզրուկի նըման ծծում էին աշխատավոր գյուղացու արյունը, խլում, հափշտակում նրա չարքաշ աշխատանքի վաստակը։

Ահա այս պարազիտների ու նրանց պաշտպան ցարական բյուրոկրատիայի դեմ էր ուղղված գյուղացիների պայքարը։ Դա ֆեոդալիզմի պայմաններում շահագործվող հիմնական դասակարգի՝ գյուղացիության մըղած դասակարգային պայքարն էր շահագործողների դեմ։

«Ճորտատիրական իրավունքի ամբողջ էպոխան,— ասում է Վ. Ի. Լենինը,— լի է գյուղացիների մշտական ապստամբություններով»։ Հայաստանը բացառություն չի կազմել և չէր էլ կարող կազմել։ Մեր պատմությունը նույնպես հարուստ է գյուղացիության մղած պայքարի դրվագներով։

XIX դարի առաջին կեսի գյուղացիական շարժումները հողի ու ազատության համար մղված տարեռային շարժումներ էին։ Ճիշտ է, դրանք չվերածվեցին հուժկու մասսայական ելույթների, զինված ապստամբությունների, բայց գնալով ավելի ու ավելի սուր բնույթ ստացան, ոտի հանեցին կալվածատիրական ու պետական գյուղացիների նորանոր շերտեր, ուղի հարթեցին XIX դարի երկրորդ կեսի գյուղացիական շարժումների համար։

V ԳԼՈՒԽ

ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ 1830—1850 ԹԹ.

1. ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Թուրքական թանզիմաթը և հայերը

1828—1829 թթ. ռուս-թուրքական պատերազմը Արևմտյան Հայաստանի սոցիալ-տնտեսական կյանքում էական փոփոխություններ չմտցրեց։ Մընալով հետամնաց ֆեոդալական Թուրքիայի տիրապետության տակ, Արևմտյան Հայաստանն ընկավ տնտեսական և քաղաքական ավելի ծանր պայմանների մեջ։

Հետպատերազմյան շրջանում թուրքական կառավարությունն ուժեղացրեց իր ճնշումներն ու հալածանքները հայերի նկատմամբ։ Նրանց արդեն խոսկ անապահով վիճակը ավելի վատթարացավ։ Պատերազմի տարիներին քայքայված տնտեսությունը, ավերված գյուղերն ու քաղաքները գրեթե չվերականգնվեցին։ Կարինի, Կարսի և Բայազետի շրջանների հայերի մասսայական գաղթը Արևելյան Հայաստան իր հերթին զգալի հարված հասցրեց Արևմտյան Հայաստանի տնտեսական կյանքին։

Այն ժամանակ, երբ Արևելյան Հայաստանը, Ռուսաստանի տիրապետության տակ անցնելով, թևակոխեց զարգացման մի նոր շրջան, Արևմտյան Հայաստանը, ընդհակառակը, մնաց սոցիալ-տնտեսական զարգացման համեմատաբար ցածր մակարդակի վրա։

Թուրքիան հետամնաց ֆեոդալական երկիր էր։ Կարլ Մարքսի խոս-

քերով ասած՝ նա գտնվում էր «ֆեոդալիզմի ամենացածր և բարբարոսական սատղիայում»: Ամբողջ երկիրը ներքին քայքայման պրոցես էր ապրում և գլորվում դեպի անկում: Դրան նպաստում էր նաև Անգլիայի ու Ֆրանսիայի գաղութային քաղաքականությունը Թուրքիայում և ամբողջ Մերձավոր արևելքում: Նման պայմաններում, բնական է, հայ ժողովրդի համար Թուրքիայում ավելի լավ վիճակ գոյություն ունենալ չէր կարող:

Թուրքիայի ֆեոդալական կարգերի ճգնաժամը ամենից ավելի ծանր էր անդրադառնում նրա լծի տակ գտնվող քրիստոնյա ժողովուրդների՝ հայերի, հույների, բուլղարների, սերբերի և ուրիշների վրա: Սուլթանական բռնակալության լուծը թեթև չէր նաև թուրք ժողովրդի համար:

Քաղաքական, տնտեսական և ֆինանսական ճգնաժամից դուրս գալու, ճնշված ժողովուրդների ազգային-ազատագրական շարժումները կանխելու նպատակով թուրքական կառավարությունը 1839 թ. նոյեմբերի 3-ին հրապարակում է Գյուլխանեի Խաթթը-Շերիֆ[1] կոչվող թանզիմաթը (բարենորոգումների հրովարտակ):

Այդ օրենքի համաձայն Թուրքիայի բոլոր հպատակներին, առանց կրոնական ու ազգային խտրականության, խոստանում էին կյանքի ու գույքի ապահովություն, հարկերի ու տուրքերի հավասար բաշխում՝ ըստ ունեցվածքի, զինվորական ծառայության, դատական գործի կարգավորում և այլն:

1839 թվականի թանզիմաթի հռչակած սկզբունքները գոհունակությամբ ընդունեցին հպատակ ժողովուրդները, այդ թվում և հայերը: Բայց այդ խոստումները չիրագործվեցին, մնացին թղթի վրա որպես մեռած տառ:

Սուլթանական կառավարությունը, թուրք փաշաներն ու քուրդ բեկերը շարունակում էին իրենց բռնություններն ու կամայականությունները հայերի նկատմամբ:

Այս տեսակետից շատ բնորոշ է հետևյալ փաստը: 1839 թվականին Պոլսում մոլորված մի հայ երիտասարդ՝ Հովակիմ Թավուքչյանը, մահմեդականություն է ընդունում, բայց հետո զղջում է: Թուրքական կառավարությունը, իմանալով այդ մասին, բանտարկում է նրան և, չնայած ծնողների աղերսանքներին, պատրիարքի միջնորդությանը, բազմաթիվ տանջանքներից ու չարչարանքներից հետո, 1843 թ. օգոստոսի 17-ին գլխատում է:

Թանզիմաթի հրապարակումից մի քանի տարի հետո չապացուցված

---

1 Գյուլխանե — սուլթանի պալատներից մեկի պարտեզը Կոստանդնուպոլսում: Խաթթը — պարգևագիր, հրովարտակ: Շերիֆ — սրբազան. բառացի նշանակում է արքունի սրբազան հրովարտակ:

աննշան հանցանքի համար փաշան հրամայում է շիկացած թաս դնել մի հայ գյուղացու գլխին, հանել նրա ատամներն ու եղունգները և պարանը վզին կապած քարշ տալ բանտ:

Նման դեպքերը սուլթանական Թուրքիայում եզակի չէին, չնայած նրան, որ թանզիմաթով հպատակներին «իրավահավասարություն» էր տրված: Թղթի վրա՝ իրավահավասարություն, իսկ իրականում՝ բացարձակ իրավազրկություն, բիրտ ու դաժան ճնշում ու հալածանք: Այդպիսին էր, անա, հայերի վիճակը Թուրքիայում:

Թանզիմաթը Թուրքիայի տնտեսական-քաղաքական կյանքում էական փոփոխություններ չմտցրեց: Ինչպես թուրք ժողովրդի, առավել ևս հպատակ քրիստոնյա ժողովուրդների դրությունը չբարելավվեց: Աշխատավորական մասսաների, հատկապես գյուղացիության դրությունը գընալով ավելի ու ավելի վատացավ:

Հողային հարաբերությունները

Արևմտյան Հայաստանում գոյություն ունեցող հողատիրության և հողօգտագործման ձևերը հիմնականում համապատասխանում էին ամբողջ Թուրքիայում տիրող հողային հարաբերություններին: Հողը Թուրքիայում, ինչպես Արևելքի մյուս երկրներում, իրավական տեսակետից համարվում էր պետական սեփականություն: Պետությունը հողի և առհասարակ երկրի ընդերքի բոլոր հարստությունների գերագույն տերն էր:

Արևմտյան Հայաստանում հողի և երկրի հարստությունների մեծ մասը պատկանում էր կառավարությանը, բարձրաստիճան պետական ու զինվորական պաշտոնյաներին և կրոնական հաստատություններին: Հայ գյուղացիների ճնշող մեծամասնությունը հողազուրկ էր և սակավահող:

Թուրքիայում, ինչպես և նրա տիրապետության տակ գտնվող Արևմտյան Հայաստանում, գոյություն ունեին հողատիրության և հողօգտագործման հետևյալ ձևերը.

ա) **Պետական հողեր** (էրազի միրիե), որոնք տրվում էին գյուղական համայքներին և առանձին մարդկանց՝ օգտագործման իրավունքով: Պետությունը այդ հողերից գանձում էր իր հիմնական եկամտահարկը՝ աշարը:

բ) **Վակուֆային հողեր**, որոնք պատկանում էին կրոնական և բարեգործական հաստատություններին: Այս կարգի հողերը ազատ էին պետական հարկերից ու տուրքերից:

գ) **Մուլք** կամ մասնատիրական, կալվածատիրական հողեր, որոնք ձեռք էին բերվում գնումների կամ նվիրատվությունների միջոցով:

դ) **Մերրուֆե** կամ հանրային օգտագործման ենթակա հողեր (արոտավայրեր, անտառներ, ճանապարհներ և այլն):

ե) Թափու—կապալով տրվող կամ վարձակալությամբ օգտագործվող հողեր։

Հողատիրության ամենատարածված ձևերը պետական, կալվածատիրական և վակուֆային ձևերն էին։ Մյուս կատեգորիայի հողերը Թուրքիայում համեմատաբար քիչ էին։

Թուրքական կառավարության ազգային և ագրարային քաղաքականության հետևանքով Արևմտյան Հայաստանում հայ կալվածատիրությունը փաստորեն կազմալուծվել էր, կորցրել իր տնտեսական-քաղաքական ազդեցությունը. փոխարենը առաջացել ու զարգացել էր քրդական, մասամբ թուրքական հողատիրությունը։

Քուրդ բեկերը, շեյխերն ու աղաներն իրենց ձեռքում էին կենտրոնացրել հողի մեծ մասը։ Արևմտյան Հայաստանի ֆեոդալական վերնախավի գերակշռող մասը քուրդ հողատեր-կալվածատերերն էին։ Նրանք օժտված էին նաև վարչական իրավունքներով, հանդիսանում էին տեղի ամենազորեղ և ռազմունակ տարրերը։

Քրդերի հետ համեմատած թուրք ֆեոդալները փոքր թիվ էին կազմում և երկրորդական դեր կատարում։ Հայ կալվածատիրությունը, որպես այդպիսին, փաստորեն գոյություն չուներ։ Հայ կալվածատերերի թիվը շատ աննշան էր, նրանք գտնվում էին երերուն վիճակում, չունեին կյանքի ու գույքի ապահովություն։

Արևմտյան Հայաստանում կալվածքներ, գույք ու զանազան ձեռնարկություններ ունեին նաև հայկական վանքերը։ Այսպես, օրինակ, Վասպուրականի գավառում Լիմ անապատն ուներ ընդարձակ հողեր, դաշտեր, մեկ այգի, 4 ջրաղաց, խանութներ (Վանում) և այլն։ Կտուց անապատն ուներ 1500—2000 օրավար հող, ծառաստան, Վանում՝ տներ, խանութներ և այլն։ Ախթամարի վանքը, որը Վասպուրականի ամենահարուստ վանքերից էր, ուներ մշակելի դաշտեր, անտառներ, շարժական ու անշարժ գույք. Վարագա վանքն ունեցել է 619 կտոր վարելահող և մեծ տարածությամբ արոտատեղի։

Ինչպես Արևելյան, այնպես էլ Արևմտյան Հայաստանում հոգևոր կալվածատերերը անխնա շահագործում ու կեղեքում էին աշխատավորական մասսաներին։

Արևմտահայ գյուղացիների դրությունը

Արևմտյան Հայաստանի հիմնական բնակիչները՝ երկրի իսկական տերերը հայերն էին։ Ժամանակի ընթացքում այստեղ բնակություն էին հաստատել նաև թուրքերն ու քրդերը։ Հայերը հիմնականում զբաղվում էին գյուղատնտեսությամբ, արհեստներով ու առևտրով, թուրքերը՝ երկրագործությամբ և մասամբ արհեստներով, իսկ քրդերը՝ անասնապահությամբ և երկրագործությամբ։ Երկրի տնտեսական և կուլտուրական կյանքի զարգացման հիմնական լծակը հայ տարրն էր։

Թուրքիայի տիրապետության տակ գտնվող ավելի քան երկու և կես միլիոն հայերի ճնշող մեծամասնությունը գյուղացիներ էին։ Գյուղացիներն զբաղվում էին հողագործությամբ, անասնապահությամբ, այգեգործությամբ, մեղվապահությամբ, շերամապահությամբ և այլն։

Գյուղատնտեսությունը ինչպես ամբողջ Թուրքիայում, այնպես էլ Արևմտյան Հայաստանում գտնվում էր չափազանց հետամնաց վիճակում։ Գյուղատնտեսական աշխատանքը կատարվում էր պրիմիտիվ գործիքներով՝ վաղեմի արորով, փոցխով, մանգաղով, կատով և այլն։ Գյուղացիներից շատերը նույնիսկ զուրկ էին մի շարք անհրաժեշտ գործիքներից։

Չափազանց ցածր էր աշխատանքի արտադրողականությունը։ Ոչ մի շահագրգռվածություն չկար աշխատանքի արտադրողականության, գյուղատնտեսության տեխնիկական կատարելագործման ու բերքատվության բարձրացման համար։

Գյուղացիները գտնվում էին սուլթանական կառավարության և տեղական շահագործողների կրկնակի լծի տակ։ Նրանք զուրկ էին հողից, շարքաշ աշխատանքով մշակում էին պետությանը, կալվածատերերին, մզկիթներին ու վանքերին պատկանող հողերը, իսկ արդյունքի մեծ մասը յուրացնում էին հողատեր կալվածատերերը։

Ով ասես, որ չէր ճնշում ու շահագործում արևմտահայ գյուղացուն, չէր հափշտակում դառն քրտինքով ձեռք բերած նրա վաստակը։ Սուլթանական կառավարությունը, բուրժուաները, հուրդ բեկերն ու աղաները, կապալառուներն ու հարկահավաքները, հայ հոգևորականները ու վաշխառուները տգրուկի նման ծծում էին հայ գյուղացու աշխատանքի հյութը, ապրում նրա հաշվին։

Հաճախ էր պատահում, որ թուրք զինվորներն ու ոստիկանները, հայկական գյուղերը շրջելիս, օրը ցերեկով խլում էին գյուղացիների ունեցվածքը, փչացնում ցանքերն ու այգիները, առևանգում կանանց ու աղջիկներին։ Հայ գյուղացին կարող էր մեկ օրում կորցնել այն ամենը, ինչ ձեռք էր բերել երկար տարիների չարքաշ աշխատանքով։

Ավելի ծանր էր թուրք փաշաների ու քուրդ բեկերի հողերի վրա ապրող գյուղացիների դրությունը։ Թուրքիայում առհասարակ օրենքն ուժ չուներ, իսկ ռազմա-ֆեոդալական վերնախավի՝ փաշաների, բեկերի ու աղաների համար ոչ մի օրենք գոյություն չուներ։ Նրանք գյուղացիներին դրել էին ճորտական ու ստրկական վիճակում և շահագործում, կեղեքում էին այնքան, որքան իրենք էին կամենում։

Արևմտյան Հայաստանում գոյություն ուներ հողազուրկ, սեփականազուրկ գյուղացիների մի ստվար մասսա, որը կոչվում էր մարաբա։ Մարաբաները հիմնականում ապրում էին աղաների հողի վրա, աղա-

յից ստանում սերմ, լծկան և գործիքներ, մշակում հողը և բերքի 2/3-ը հանձնում նրան։

Բացի այդ, մարաբա կոչվող գյուղացին, իր ընտանիքով, աղայի համար կատարում էր նաև տնային ու դաշտային այլ աշխատանքներ, որը կոչվում էր օլամ։

Միատեսակ ու միակերպ չէր մարաբայությունը։ Տարբեր տեղերում տարբեր փոխհարաբերություններ կային մարաբայի ու հողատիրոջ միջև։

Մարաբան անձնապես ազատ էր, ամրացված չէր աղայի հողին և իրավունք ուներ հեռանալ նրա մոտից։ Աղան, իր հերթին, ցանկացած ժամանակ կարող էր մարաբային հեռացնել իր հողից։ Մարաբաներն իրավական տեսակետից ճորտեր չէին, բայց փաստորեն ճորտական կախման մեջ էին գտնվում հողատերերից։

1828—1829 թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո մարաբայությունը գնալով ավելի ուժեղանում է հատկապես Բերկրիի, Մուշի, Էրզրումի և Բայազետի շրջաններում։ Բերկրի-Աբաղայի շրջանի 77 հայկական և քրդական գյուղերից 62-ը մի քանի քուրդ ցեղապետների պատկանող մարաբա գյուղեր էին։

Մարաբաների դրությունը չափազանց ծանր էր։ Դրանք գյուղացիության ամենաաղքատ, ընչազուրկ տարրերն էին, կարելի է ասել գյուղական բատրակներ։ Ծանր էր մարաբաների աշխատանքի պայմանները, շատ չնչին՝ ստացած արդյունքը։ Հողատերերը բառի բուն իմաստով կողոպտում ու կեղեքում էին մարաբաներին, նրանց համար ստեղծելով կյանքի դառն ու չարքաշ պայմաններ։

Վանի, Շատախի, Մոկսի, Մուշի, Բիթլիսի, Սասունի և Դիարբեքիրի շրջաններում քուրդ ֆեոդալները, բեկերն ու շեյխերը գյուղացիներին իրենց ընտանիքի, գույքի հետ նվիրում կամ վաճառում էին ուրիշի։

Քուրդ ցեղապետները, բեկերն ու շեյխերը, իրենց զինված հրոսակախմբերով, կատարյալ պատուհաս էին հայ գյուղացիների համար։ Նրանք հաճախակի հարձակումներ էին գործում հայկական գյուղերի վրա, կոտորում էին խաղաղ բնակիչներին, կողոպտում նրանց գույքը, եկեղեցիներն ու վանքերը։ Դրան հակառակ, քուրդ աշխատավորությունը պաշտպանում էր հայերին, նրանք միմյանց հետ ապրում և աշխատում էին հաշտ ու համերաշխ։

Սուլթանական Թուրքիայի տնտեսական, քաղաքական և ազգային ճնշումներն ու հալածանքները, գյուղատնտեսության քայքայումը, պարբերաբար կրկնվող անբերրիությունը, սովն ու համաճարակը, տարեցտարի աճող պանդխտությունը անօրինակ ծանր դրություն էին ստեղծել արևմտահայ գյուղացիության համար։

Հարկերը

Սուլթանական կառավարությունը բազմաթիվ ու բազմապիսի ուղղակի և անուղղակի հարկեր ու տուրքեր էր գանձում ժողովրդից։ Հարկային բեռը ամենից ավելի ծանրացած էր հպատակ ժողովուրդների և թուրք գյուղացիների վրա։

Հարկերն ու տուրքերը հպատակ ժողովուրդներին կեղեքելու հիմնական միջոցներից էին։ Արևմտյան Հայաստանում հարկերի ու տուրքերի ամբողջ ծանրությունն ընկած էր գյուղացիների վրա։ Մի քանի տասնյակ հարկեր ու տուրքեր էին վճարում գյուղացիները։ Ծանոթանանք դրանցից մի քանիսին։

Աշար.— գլխավոր եկամտային հարկն էր, որը օրենքով կազմում էր բերքի 1/10 մասը, բայց ըստ էության հասնում էր կրկնակի ու եռակի չափերի։

Կառավարությունը աշարը հրապարակային աճուրդով վաճառում էր կապալառուներին։ Մեծ կապալառուները, որոնք սովորաբար լինում էին բարձրաստիճան պաշտոնյաներ, գնելով վիլայեթների աշարը, իրենց հերթին առանձին գավառների ու շրջանների աշարը ավելի բարձր գներով վաճառում էին մանր կապալառուներին։ Աշարի կապալը սովորաբար ընկնում էր մի քանի հոգու ձեռք, և ամեն մեկն աշխատում էր ոչ միայն իր տված կաշառքը կամ ավելի վճարածը ետ ստանալ, այլև ձեռք բերել որոշակի օգուտ։

Հնձի ժամանակ աշարառուն կամ նրա հարկահանները (մուլթեզիմները) ոստիկանների և զինվորների ուղեկցությամբ շրջում էին գյուղերը և որոշում բերքի չափը։ Գյուղացին իրավունք չուներ իր արտը հնձել առանց կապալառուի թույլտվության։

Գյուղացին հունձը կատարում էր, կալսում և բերքը դիզում կալում։ Մինչև հարկահանը չգար, չչափեր և իրեն հասանելիքը չվերցներ, գյուղացին իրավունք չուներ դրան ձեռք տալու։ Այս և նման պրոցեսները երբեք առանց կաշառքի չէին կատարվում։ Աշարի գանձման այս սիստեմը չափազանց հարստահարիչ էր գյուղացիների համար։

Այգիների, բանջարանոցների, խոտի, առվույտի և մի քանի այլ եկամուտների աշարը գանձվում էր դրամով։ Մի փոքր այգու կամ բանջարանոցի համար գյուղացին պարտավոր էր վճարել մոտ 2 ոսկի։ Եթե գյուղացին հարկահանի նշանակած ժամկետին չմուծեր այդ դրամը, ապա վերջինս աճուրդով վաճառում էր նրա ունեցվածքը, մինչև իսկ բնակարանը։

Խարաջ.— հողային գլխավոր հարկն էր, ֆեոդալական ռենտան, որը բնամթերքով տրվում էր հողատեր-կալվածատերերին տարեկան բերքի 1/10 չափով կամ երբեմն ավելին։ Աշարն ու խարաջը՝ պետական և կալվածատիրական այս հարկերը, գյուղացիների համար ամենածանրն էին։

Գլխահարկ կամ ջիզիե.— գանձվում էր բոլոր չափահաս տղամարդկանցից։ Տարբեր ժամանակներում գլխահարկը տարբեր չափեր է ունեցել։ 1820—1830-ական թվականներին այն գրեթե կրկնապատկվել է. 1827 թվականին 24 ղուռուշից[1] հասել է 36-ի, 1829-ին՝ 48-ի, իսկ 1834-ին՝ 60-ի։ Հաճախ պատահում էր, որ գլխահարկ գանձում էին նույնիսկ մեռածներից։ Արևմտյան Հայաստանից շատերը գնում էին պանդխտության և այլևս չէին վերադառնում կամ մեռնում էին օտարության մեջ։ Եվ քանի որ օրենքի համաձայն գլխահարկը գանձվում էր գյուղից և ոչ թե առանձին անձերից, ուստի, անկախ գյուղում եղած անձերի թվից, գյուղական համայնքը պարտավոր էր վճարել սահմանված գլխահարկը։

Կալվածատիրական հարկ.— վճարում էին տների, խանութների, ջրաղացների, տնամերձ հողերի և շենքերի համար։ Սա բաժանվում էր երկու մասի՝ հողային հարկ կամ արազի և շինությունների հարկ կամ էմլաք։

Արոտների հարկ կամ խամշուռ.— Թուրքիայում արոտավայրերը համարվում էին պետական սեփականություն, որից օգտվելու համար գյուղացիները պարտավոր էին արոտահարկ վճարել։ Օրինակ՝ մեկ ոչխարի կամ այծի համար վճարում էին տարեկան 3—4 ղուռուշ։

Ճանապարհների հարկ.— Թուրքիան ընդհանրապես, իսկ Արևմտյան Հայաստանը մասնավորապես, չափազանց աղքատ էր ճանապարհներով։ Երկրում քիչ թե շատ կանոնավոր ճանապարհ չկար, բայց կառավարությունը ժողովրդից ճանապարհների հարկ էր գանձում։ 20—50 տարեկան տղամարդիկ իրենց սայլերով ու գործիքներով տարեկան 4—5 օր պարտավոր էին աշխատել ճանապարհների վրա կամ 13 ղուռուշ փող վճարել։

Զբաղմունքի հարկ կամ թեմեթ-թուճաթ.— վճարում էին գլխավորապես արհեստավորներն ու առևտրականները, ինչպես նաև այն գյուղացիները, որոնք տնային փոքրիկ արհեստանոցներ ունեին։ Վարպետներից վերցնում էին 40—60 ղուռուշ, ենթավարպետներից՝ 10—40 ղուռուշ։ Առևտրականներից գանձում էին 60—400 ղուռուշ՝ նայած նրանց կարողության և առևտրի ծավալին։

Զինվորական հարկ կամ բեդելի-ասկերի.— գանձում էին հայ տղամարդկանցից զինվորական ծառայության փոխարեն, քանի որ քրիստոնյաներն իրավունք չունեին զենք կրելու։

Նշված հարկերից բացի, արևմտահայ աշխատավորները վճարում էին նաև մի շարք այլ հարկեր՝ ամուսնության, կրթական, բանջարանոցների, խոտհարքի, յայլաղների և այլն։

---

1 100 ղուռուշը հավասար է օսմանյան մեկ ոսկու։

Թուրքիայում օրենքով սահմանված բազմաթիվ ուղղակի և անուղղակի հարկերից ոչ պակաս հարստահարիչ, կեղեքիչ էր դրանց գանձման եղանակը։ Օսմանյան կառավարության կենտրոնական և տեղական պաշտոնյաների, հարկահավաքների ու ոստիկանների կեղծիքները, կամայականությունները ու բռնությունները կատարյալ չարիք էին դարձել ժողովրդի համար։

Ականատես հեղինակներից մեկը գրում է, որ «Թուրքիան գեղծումների ու ապօրինությունների կլասիկ երկիր է. ով ուժեղ է, ով ընդունակ է կաշառք տալու, նա ազատ է հարկից, ով թույլ է, ով կաշառքի համար դրամ չունի, նրա վրա էլ ծանրանում է հարկը, նա էլ կեղեքվում է»։

Հաճախ էր պատահում, որ գյուղացին, ի վիճակի չլինելով վճարել ուժից վեր հարկերն ու տուրքերը, ստիպված դիմում էր վաշխառուին, պարտք վերցնում, ընկնում նրա ցանցի մեջ, կեղեքվում նաև վաշխառուի կողմից։

Արհեստները և արդյունագործությունը

Արևմտյան Հայաստանի բնակչության գլխավոր զբաղմունքը, գյուղատնտեսությունից հետո, արհեստն էր։ Արհեստները կենտրոնացած էին հայերի ձեռքում։ Թուրք և քուրդ արհեստավորների թիվը համեմատաբար փոքր էր։ Արհեստագործական արտադրանքի մեծ մասը և ամենաընտիր տեսակները տալիս էին հայ արհեստավորները։

Արևմտյան Հայաստանում արհեստները բավականաչափ զարգացած էին։ Արդյունաբերական և ֆաբրիկա-գործարանային ապրանքների բացակայության պայմաններում բնակչության առօրյա կարիքները բավարարվում էին արհեստի արտադրանքներով։

Արհեստները գլխավորապես կենտրոնացած էին քաղաքներում։ Բայց գյուղերում նույնպես քիչ չէին արհեստով զբաղվողները։ Արևմտահայ նշանավոր քաղաքներից և արհեստավորական կենտրոններից էին Կարինը, Վանը, Բիթլիսը, Սեբաստիան, Երզնկան, Խարբերդը, Մալաթիան, Մուշը, Մանազկերտը, Շատախը, Արաբկիրը, Բաբերդը և այլն։ Մեծ թվով հայ արհեստավորներ կային նաև Պոլսում և Զմյուռնիայում։

XIX դարի կեսերին Կարինն ուներ մոտավորապես 50—60 հազար բնակիչ[1], Դիարբեքիրը՝ 45—50 հազար, Վանը՝ 30—35 հազար, Բաղեշը՝ 15—20 հազար, Երզնկան՝ 15 հազար, Խարբերդը՝ 10 հազար, Մուշը՝ 8 հազար, Բաբերդը՝ 6 հազար։

Արևմտյան Հայաստանի քաղաքներում, ինչպես և գյուղերում, բնակվում էին հայեր, թուրքեր և քրդեր, կային նաև ասորիներ, հույներ, հրեաներ և այլն։

---

1 Ոմանք հաշվում են մոտ 75 հազար։ Ամբողջ Թուրքիայում, ինչպես և Արևմտյան Հայաստանում, բնակչության թվի, ազգային և սոցիալական կազմի ճիշտ վիճակագրություն չկար։ Բերված թվական տվյալները մոտավոր են։

Քաղաքների բնակիչները, արհեստից ու առևտրից բացի, զբաղվում էին նաև հողագործությամբ, այգեգործությամբ, անասնապահությամբ և այլն։ Բոլոր քաղաքներն էլ անխտիր ասիական տիպի գյուղաքաղաքներ էին։

Արհեստի մի քանի տասնյակ տեսակներ կային Արևմտյան Հայաստանում՝ ջուլհակություն, դերձակություն, ներկարարություն, մանուսագործություն (ծաղկավոր կտավ), մետաքսագործություն, դարբնություն, պղնձագործություն, երկաթագործություն, թիթեղագործություն, ոսկերչություն, ժամագործություն, կավագործություն, անագագործություն, կոշկակարություն, համեստագործություն, քարտաշություն, մոմագործություն, կաշեգործություն, պայտարություն և այլն։

Հայաստանի մի քանի հնագույն քաղաքներում (Վան, Կարին, Տիգրանակերտ, Երզնկա և այլն) արհեստները և արհեստավորները մեծ համբավ ունեին։ Վանի ոսկերիչների ու արծաթագործների, Կարինի պղնձագործների ու զինագործների, Երզնկայի մանուսագործների ձեռքի աշխատանքը արհեստի սահմաններից դուրս էր գալիս և թեակոխում արվեստի բնագավառը։

Երզնկայի շալագործների մասին գովեստով է խոսում դեռևս XIII դարի իտալացի ճանապարհորդ Մարկո-Պոլոն։ Արևմտահայերի մեջ տարածված ժողովրդական ասացվածք էր դարձել՝ «Երզնկայի կտավը, Քեմախի աղը, Բաբերդի աղջիկը»։

Երզնկայում մանուսագործության հին արհեստը XIX դարի կեսերին այնքան էր զարգացել, որ գրեթե ամեն տուն դազգահ ուներ, թել էր մանում և կտավ գործում։ Հետագայում թելը բերում էին Անգլիայից (Մանչեստրից)։

Հայտնի էր նաև Երզնկայի պղնձագործ վարպետների աշխատանքը. նրանք պատրաստում էին կաթսաներ, թասեր, ափսեներ, գեղեցիկ և նուրբ ջրամաններ ու թեյամաններ։ Երզնկայի պղնձագործ վարպետների արտադրանքները մի քանի անգամ ցուցադրվել են Փարիզի, Վիեննայի, Ֆիլադելֆիայի համաշխարհային ցուցահանդեսներում և արժանացել մրցանակի։

Արհեստի կարևոր ճյուղերից մեկն էլ կավագործությունն էր։ Երզնկայից կես ժամվա հեռավորության վրա 4—5 բրուտագործական մեծ արհեստանոցներ կային, որոնք պատկանում էին հայերին։ Այստեղ պատրաստում էին գինու և օղու կարասներ, սափորներ, կճուճներ, թոնիր, ջրի խողովակներ, կղմինդր՝ տանիքը ծածկելու և հատակը սալապատելու համար և այլն։ Բրուտագործական արհեստանոցներ կային նաև գյուղերում։ 24 տեսակի արհեստներ գոյություն ունեին Երզնկայում։

Արհեստագործական կարևոր կենտրոններից էր նաև Խարբերդը։

Այստեղ կարելի էր գտնել արհեստի բոլոր տեսակները։ Բայց ամենից ավելի հռչակված էին Խարբերդի մետաքսագործները, կոշկակարները ու երկաթագործները։

Քաղաքի վերին թաղում գտնվում էր Քյուրքչյանների մետաքսի գործարանը, որն արտադրում էր տեսակ-տեսակ ծաղկավոր կերպասներ։ Այդ ընտանիքը մի դարից ավելի մետաքսագործությամբ էր զբաղվում։ Նրանք կապեր ունեին Փարիզի և Լիոնի հետ, որտեղ ուսումնասիրում էին մետաքսի արտադրությունը, մեքենաներ բերում Խարբերդ և կատարելագործում ու ընդարձակում իրենց գործարանը։

Քյուրքչյանների գործարանի արտադրած մետաքսի մի մասը ըստ պատվիրատուի, իսկ մյուս մասը վաճառահանվում Հայաստանից դուրս։ «Անոր մետաքսե ծաղկյալ կերպասները և վարագույրները կարտածեին հեռավոր քաղաքներ»,— գրում է ականատեսներից մեկը։

Մետաքսի ավելի մեծ գործարան կար Խարբերդի մոտ գտնվող Մեզիրե (Մամուրեթ-ուլ-Ազիզ) ավանում, որը հետո դարձավ մութասարիֆության (կուսակալության) կենտրոն։

1837 թվականին Արաբկիրից Խարբերդ է գալիս մետաքսագործ Գրիգոր Իփեքճյանը և այստեղ հիմնում մետաքսի գործարան։ Նա գնում է Անգլիա, ծանոթանում մետաքսի արտադրության տեխնիկային, Անգլիայից ապա Ամերիկայից մեքենաներ է բերում և իր որդիների հետ ծավալում մետաքսի արտադրությունը։ Իփեքճյանի մետաքսի գործարանում տարբեր ժամանակներում աշխատում էին 200—300 բանվորներ և բանվորուհիներ։ Իփեքճյաններին տեղացիներն անվանում էին «ֆաբրիկաթորներ»։

Խարբերդը հայտնի էր նաև իր կաշեգործության և կոշկակարության արհեստով։ Այստեղ պատրաստում էին գունավոր ընտիր կաշիներ և կարում մի քանի տեսակ կոշիկներ։ Քաղաքի մեծ շուկայում կային 100-ից ավելի խանութներ, որոնցից յուրաքանչյուրում մի քանի կոշկակար էր աշխատում։ Նրանք կարում էին եվրոպական ձևի նուրբ կիսակոշիկներ, որ հագնում էին հարուստները, և էժանագին տրեխներ՝ գյուղացիների ու չքավորների համար։

Երկաթագործներն ունեին ավելի քան 50 արհեստանոց, որոնց մեծ մասը պատկանում էր հայերին, իսկ մի քանիսը՝ թուրքերին։ Նրանք պատրաստում և նորոգում էին ամեն տեսակի արհեստագործական և գյուղատնտեսական գործիքներ, տնային գործածության իրեր, բահ, բրիչ, կացին, մուրճ և այլն։

Բիթլիսում XIX դարի 50-ական թվականներին կար 24 ներկարան, որտեղ տորոնով ընտիր ներկ էին պատրաստում, և 400 դազգահ, որոնցով ապիտակ կտավ, չիթ և այլ կտորներ էին գործում։ Այստեղ տղամարդ-

կանց և կանանց հետ միասին արհեստանոցներում աշխատում էին նաև մեծ թվով երեխաներ։

Իրենց ընտիր ձեռագործներով և գորգերով աչքի էին ընկնում նաև Բաբերդի արհեստավորները, հատկապես կանայք ու աղջիկներ։

Արհեստի գրեթե բոլոր ճյուղերն էլ այս ու այն չափով զարգացած էին Արևմտյան Հայաստանի քաղաքներում։ Մեծ թվով արհեստավորներ ապրում և աշխատում էին նաև գյուղերում։

Արհեստագործության զարգացումը Արևմտյան Հայաստանում պայմանավորված էր երկրի տնտեսական-տեխնիկական հետամնացությամբ, կապիտալիզմի սաղմնային վիճակով։

Էսնաֆությունները

Արհեստավորներն ունեին իրենց ցեխային կազմակերպությունը, որը կոչվում էր էսնաֆություն կամ եղբայրություն։ Դրանք մեզ ծանոթ համքարություններին հար և նման կազմակերպություններ էին, որոնց մասին խոսվել է իր տեղում։

Էսնաֆություններ կային արևմտահայ արհեստավորական բոլոր կենտրոններում։ Իրենց կազմակերպված ու ակտիվ գործունեությամբ առանձնապես աչքի էին ընկնում Կ. Պոլսի, Էրզրումի, Երզնկայի, Վանի, Կարսի և Խարբերդի արհեստավորական կազմակերպությունները։

Էսնաֆությունները միակ մասսայական կազմակերպություններն էին Արևմտյան Հայաստանում։ Հայ արհեստավորների մեծ մասը ընդգրկված էր նրանց մեջ։

Սուլթանական Թուրքիայում հայ ժողովրդի համար ստեղծված տընտեսական և քաղաքական ծանր պայմանները հարկադրում էին մանր արտադրողներին միավորվել արհեստավորական կազմակերպությունների մեջ, որոնք այս ու այն չափով պաշտպանում էին նրանց աշխատանքային իրավունքները։

Էսնաֆությունները քաղաքական կազմակերպություններ չէին։ Նրանց հիմնական նպատակը արհեստի արտադրանքի ու նրա վաճառքի հարցերի կարգավորումն էր։ Սակայն այդ չէր խանգարում, որպեսզի արհեստավորական կազմակերպությունները միջամտեին իրենց անդամների կենցաղային, կրոնական, բարոյական, ինչպես նաև հայ համայնքի ազգային-քաղաքական և կուլտուրական կյանքին։

Հայտնի է, թե ինչպես Կ. Պոլսում և այլ վայրերում էսնաֆները, XIX դարի առաջին կեսից սկսած, պայքար էին մղում ամիրաների դեմ, որն ինչպես տնտեսական, այնպես էլ քաղաքական բնույթ ուներ։

Արհեստների և արհեստավորական կազմակերպությունների հայտնի ուսումնասիրողներից մեկը՝ Ս. Եղիազարյանը, ցույց է տվել, թե ինչպես էսնաֆները հաճախ դուրս էին գալիս արհեստավորական նեղ շրջանակներից և ակտիվորեն մասնակցում հայ համայնքի ընդհանուր գործերին։ Նա հենվում է Կարինի դարբինների էսնաֆության 1825 թվականի կանոնադրության վրա, որը չափազանց հետաքրքրական փաստաթուղթ է առհասարակ համքարությունների պատմության վերաբերյալ։

Այդ կանոնադրությամբ Կարինի դարբինների էսնաֆության կամ եղբայրության անդամներից պահանջվում էր հեռու մնալ անիրավությունից, խռովությունից, բամբասանքից, անեծքից, հայհոյանքից և ամեն տեսակ չար գործերից, լինել ճշմարիտ, բարեհամբույր, քաղցրախոս, եղբայրասեր և այլն։

Կանոնադրությամբ խիստ պատիժներ էին նախատեսված հատկապես զեղծարարների ու խաբեբաների նկատմամբ։ Իրենց եկամուտները թաքցնողներին և սահմանված գումարը գանձարկղ չմուծողներին համարում էին գողեր։ «Գող ըլնալուն համար ասուուծո բարևը չիպիտի անոր տամք և առնումք,— ասված է այդ կանոնադրության մեջ։ Թէ կամապաշտութեամբ անզեղջ մնայ խանութն ապրանքովն ձեռքէն կառնումք և բէռահ կընեմք։ Իսկ եթե մեղքը ճանչնայ և մեղայական զղջումով թողութիւն խնդրէ, ըրած անիրաւութեան և գողութեան մէկ փարային տեղը չորս փարայ պիտի առնումք գանձանակին և խազան դէվիրմիշ ընել տալով, ապա թէ մեր էսնաֆին մեջ պիտի ընդունեմք»։

Ուշագրավ է, որ պատժի այս միջոցները նախատեսված էին բոլորի համար, անկախ մարդկանց դիրքից։ Պահանջվում էր հանցագործին պատժել. «Թէ մեծ ըլնայ այն անիրաւը և թէ փոքր, թէ երևելի մարդ ըլնայ, և թե աղքատ»։

Կարինի դարբինների էսնաֆության այս կանոնադրությունը կառուցված էր դեմոկրատական սկզբունքներով։ Էսնաֆության գանձարկղը օգնում էր աղքատներին, որբերին, հաշմանդամներին, մուծում նրանց հարկերն ու տուրքերը։

1828—1829 թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո գաղթելով Ախալցխա, Կարինի բնակիչներն իրենց հետ բերեցին նաև արհեստավորական կազմակերպությունների հարուստ տրադիցիաները։

Առևտուրը

Օսմանյան Թուրքիայում տիրող ռազմա-ֆեոդալական կարգերը արգելակում էին ժողովրդի տնտեսական ու կուլտուրական զարգացմանը։ «Հիրավի,— գրում է Ֆ. Էնգելսը,— թուրքական, ինչպես և արևելյան ամեն մի բռնակալություն, անհամատեղելի է կապիտալիստական կարգի հետ։ Հավելյալ արժեքը ոչնչով ապահովված չէ սատրապների ու փաշաների գիշատիչ ձեռքերից։ Չկա բուրժուական շահույթի առաջին հիմնական պայմանը՝ առևտրական անձի ու սեփականության ապահովությունը»[1]։

Խոսելով Թուրքիայի առևտրի մասին, Էնգելսն ասում է, որ այնտեղ

[1] *К. Маркс и Ф. Энгельс*, Соч. т. XVI, ч.II, с. 22.

«առևտուր անելու եղանակը բարվան կտրելն է»: «Առևտրականներն ամենից ավելի տուժում էին թուրքական փաշաների ենշումներից»:

Թուրք փաշաներն ու քուրդ բեկերը զանազան պատրվակներով առևտրականներից խլում էին նրանց ապրանքներն ու դրամը: Հաճախ էր պատահում, որ ճանապարհներին կողոպտում ու սպանում էին առևտրականներին:

XIX դարի կեսերին քրդական ու թուրքական զինված հրոսակախմբերը Տրապիզոնից Թավրիզ տանող ճանապարհին, Մասիսի ստորոտներում, հարձակվում են առևտրական մի մեծ քարավանի վրա, սպանում են բոլոր առևտրականներին, կողոպտում նրանց ամբողջ ունեցվածքը: Դրանից հետո երկար ժամանակ այլևս ոչ մի առևտրական չէր անցնում այդ ճանապարհով:

Չնայած աննպաստ պայմաններին, այնուամենայնիվ, հայ և հույն առևտրականները, մանավանդ Թուրքիայի ծովափնյա քաղաքներում, չէին դադարում առևտուր անելուց:

«Թուրքիայում,— *գրում է Էնգելսը,*— առևտրականները համենայն դեպս թուրքերը չեն... հույները, հայերը, սլավոնները և ֆրանկները, տեղավորվելով ծովային մեծ նավահանգիստներում, իրենց ձեռքում են պահում ամբողջ առևտուրը... թող Եվրոպայից հեռացնեն բոլոր թուրքերին, առևտուրը դրանից բնավ չի տուժի»[1]:

Արևմտյան Հայաստանում ևս առևտուրը կենտրոնացած էր հայերի ձեռքում: Կային նաև թուրք, հույն, հրեա առևտրականներ, բայց դրանք անհատներ էին:

Առևտրական աչքի ընկնող կենտրոններ էին Կարինը, Վանը, Խարբերդը, Բիթլիսը, Երզնկան, Բաբերդը, Դիարբեքիրը, Տրապիզոնը և այլն: Այս քաղաքներում կային առևտրական մեծ շուկաներ ու խաներ, որտեղ վաճառահանվում էին տեղական արհեստի արտադրանքներ և գյուղատնտեսական զանազան մթերքներ, ինչպես նաև այլ քաղաքներից ու արտասահմանից ներմուծվող ապրանքներ: Բացի այդ, մի շարք վայրերում գործում էին կիրակնօրյա շուկաներ և տոնավաճառանոցներ:

Կարինը, որն Արևմտյան Հայաստանի ամենամեծ քաղաքն էր, վարչական և զինվորական խոշոր կենտրոն, ակտիվ դեր էր խաղում ներքին և արտաքին առևտրի մեջ: Նրա աշխարհագրական նպաստավոր դիրքի՝ առևտրական ճանապարհների վրա ընկած լինելու շնորհիվ ամբողջ տարին այնտեղ աշխույժ առևտուր էր կատարվում:

Կարինի շուկաներն ու խանութները միշտ լիքն էին տեղական և ներմուծվող ապրանքներով: Տեղի հայ վաճառականները արևելյան ապրանքներ էին տանում Ֆրանսիա, Հոլանդիա, Անգլիա, Ռուսաստան, իսկ այնտեղից բերում ֆաբրիկա-գործարանային ապրանքներ:

Երզնկան ուներ երեք գլխավոր և բանուկ շուկա, որտեղ կային բազմաթիվ խանութներ ու կրպակներ: Այստեղ վաճառահանվում էին տեղական և եվրոպական ապրանքներ:

Առևտրական աչքի ընկնող կենտրոն էր նաև Բաբերդը: Ընկած լինելով Տրապիզոն — Կարին — Պարսկաստան գլխավոր ճանապարհի վրա, Բաբերդը ակտիվորեն մասնակցում էր ինչպես ներքին, այնպես էլ արտաքին առևտրին: Տարվա բոլոր եղանակներին Բաբերդից անպակաս էին Տրապիզոն — Էրզրում եկող-գնացող քարավանները: Քաղաքի ծածկած շուկան միշտ լիքն էր տեղացի և եկվոր առևտրականներով:

Հայ առևտրականների ձեռքում էր կենտրոնացած ոչ միայն ներքին, այլև արտաքին առևտուրը: Նրանք Արևմտյան Եվրոպա, Ռուսաստան և այլ երկրներ արտահանում էին մետաքս, տորոն, ծխախոտ, բամբակ, խեժ, բուրդ, մորթիներ, կերպաս, մեղրամոմ, չորացած մրգեր, ընկուզենու կոճղեր և այլն:

Մի շարք երկրներից (Անգլիայից, Ֆրանսիայից, Ռուսաստանից և Ամերիկայից) ներմուծում էին երկաթեղեն, շաքար, նավթ, օճառ, չիթ, մահուդ, թել, արհեստագործական և գյուղատնտեսական գործիքներ:

Սուլթանական Թուրքիայում տիրող ասիական հետամնաց ֆեոդալիզմի պայմաններում ներքին և արտաքին փոխանակային կապերը տեղի էին ունենում գերազանցապես հայ առևտրականների միջոցով: Ինչպես հայ արհեստավորները, այնպես էլ հայ առևտրականները տնտեսության այդ երկու կարևոր ճյուղերում առաջատար դեր էին կատարում:

2. ՊՈԼՍԻ ՀԱՅ ԳԱՂՈՒԹԸ

Կոստանդնուպոլիսը, որը հայկական հնագույն գաղութներից էր, XIX դարի կեսերին դարձել էր արևմտահայերի տնտեսական, քաղաքական և կուլտուրական խոշոր կենտրոն:

Կոստանդնուպոլսում ապրում էին հասարակական տարբեր շերտերի պատկանող ավելի քան 200 հազար հայեր: Այդտեղ էր գտնվում արևմտահայ հոգևոր կենտրոն Պատրիարքարանը: Բոսֆորի շահաբեր ափերին էին ծվարել հայ ամիրաները, սարաֆները, առևտրա-վաշխառուական կապիտալի ներկայացուցիչները: Այդտեղ էին կենտրոնացել հայ արհեստավորները, պանդուխտ մշակները, արևմտահայ ինտելիգենցիան:

Պոլսի հայ համայնքի այսօրինակ խայտաբղետ սոցիալական կազմը իր կնիքն էր դնում նրա հասարակական-քաղաքական և կուլտուրական կյանքի վրա:

Ամիրաներն ու սարաֆները կամ սեղանավորները (վաշխառուներ,

[1] *К. Маркс и Ф. Энгельс,* Соч. т. IX, с. 25, М. 1957.

բանկիրներ) իրենց կապիտալի ու ճարպիկ գործարարության շնորհիվ ազդեցիկ դիրք էին ձեռք բերել և ակտիվ դեր էին խաղում երկրի ոչ միայն տնտեսական, այլև քաղաքական կյանքում։ Նրանցից մի քանիսը ժառանգաբար իրենց ձեռքում էին պահում արքունի դրամահատության (Տուզյան), արքունի վառոդապետության (Տատյան) և արքունի ճարտարապետության (Պալյան) պաշտոնները։ Ազդեցիկ ամիրաներից էր նաև Հարությունամիրա Պեզճյանը և ուրիշներ։

Տնտեսական շահերով, պաշտոններով կապված լինելով թուրքական կառավարության հետ, ամիրաներից շատերը փաստորեն հանդիսանում էին տիրող կարգերի պաշտպաններ և անխնա շահագործում էին հայ աշխատավորներին։

Պոլսահայ համայնքի ամենաբազմամարդ խավը աշխատավորական խավն էր, որը կազմված էր արհեստավորներից, պանդուխտ մշակներից և սեպագործ բանվորներից։

Պոլիսը հայ արհեստավորության աչքի ընկնող կենտրոններից էր։ XIX դարի կեսերին այնտեղ 65 էսնաֆություն կար։ Պոլսում ու Պոլսից դուրս մեծ համբավ ունեին հայ ոսկերիչները, ակնագործները, քանդակագործները, ճարտարապետները, որմնադիրները, մետաքսագործները և ժամագործները։

Արհեստավորությունն այստեղ ևս, ինչպես ամբողջ Արևմտյան Հայաստանում, միատարր չէր։ Ցածր խավը՝ աշակերտներն ու ենթավարպետները, ճնշման ու շահագործման էին ենթարկվում վերնախավի ու սուլթանական կառավարության կողմից։ Նրանք վաղ առավոտից մինչև ուշ երեկո աշխատում էին, բայց ապրում էին նյութական սուղ պայմաններում։

Ավելի ծանր էր պանդուխտների, մշակների ու սեպագործ բանվորների դրությունը։ Պանդուխտները Կ. Պոլիս էին գալիս մեծ մասամբ Արևմտյան Հայաստանի գավառներից։ Դրանք քայքայված, աղքատացած գյուղացիներ ու արհեստավորներ էին, որոնք միայնակ, երբեմն էլ ընտանիքով չվում էին Պոլիս մի կտոր հաց վաստակելու, իրենց մերկությունը ծածկելու և կամ կառավարության ու վաշխառուի պարտքերը մարելու համար։

Աշխատավորական այդ տարրերը հոծ բազմություններով ապրում էին Պոլսի խաներում, մութ ու խոնավ նկուղներում, կեղտի, մրի ու գարշահոտության մեջ։ Պանդուխտներից շատերը, չդիմանալով կյանքի այդ դժնդակ պայմաններին, մեռնում էին օտարության մեջ՝ հարազատների ու հայրենիքի կարոտը սրտերում։

Այս տեսակետից շատ բնորոշ է Իփլիկ-խանե կոչված (առագաստ պատրաստող) ֆաբրիկայում և արքայական նավարանում աշխատեցնելու համար 1832 թվականին հավաքած 6000 հայ պատանիների ու երի-

տասարդների տխուր պատմությունը։ 1832—1844 թվականներին, 12 տարվա ընթացքում, նրանցից ավելի քան 1000 հոգի խեղդվում են՝ նավերի ընկղմման ժամանակ, 3400 հոգի մեռնում են չարաչար տանջանքներից, 1000 հոգի փախչում են և միայն 600 հոգի են մնում՝ խղճալի ու վշտալի վիճակում։

Օսմանյան կառավարությունն ամեն տարի Արևմտյան Հայաստանից և Թուրքիայի հայաբնակ շրջաններից հարյուրավոր երեխաների բռնությամբ հավաքում, բերում էր և ձրի աշխատեցնում այդ գործարանում։ Պատանի բանվորներն ստանում էին միայն հագուստ ու սնունդ։ Մեզ հասած փաստաթղթում հեղինակը նրանց անվանում է «անձնավոր ծառայք» կամ «արծաթագին ծառայք»։ Այդ դժբախտ պատանիները փաստորեն կատարում էին տաժանակիր աշխատանք։

Շատերը մահմեդականություն էին ընդունում, որպեսզի կարողանային փրկել իրենց ֆիզիկական գոյությունը։ Երեխաների ծնողներից շատերը գալիս էին Պոլիս, աղերսագրեր ներկայացնում սուլթանին, աղաչում, պաղատում, որպեսզի վերադարձնեն իրենց զավակներին կամ նրանց դիակները, բայց ոչ ոք չէր լսում նրանց ձայնը։

Պոլսի հայ համայնքի մեջ փոքր թիվ չէր կազմում նաև մտավորականությունը։ Լինելով հայկական ինքնույն գաղթավայրերից մեկը և մոտիկից շփվելով Արևելքի ու Արևմուտքի հետ, Պոլիսը աստիճանաբար դառնում է հայ հասարակական-քաղաքական մտքի ու կուլտուրայի զարգացման աչքի ընկնող կենտրոններից մեկը։

Հայ մտավորականները ակտիվորեն մասնակցում էին ոչ միայն պոլսահայ համայնքի, այլև ամբողջ արևմտահայության հասարակական-քաղաքական կյանքին։ Հայ մտավորականության առաջավոր ջոկատները էին գլխավորում և ուղղություն տալիս արևմտահայ լուսավորական շարժմանը և կղերա-ամիրայական վերնախավի դեմ ուղղված պայքարին։

Հայտնի է նաև այն դերը, որ հայ մտավորականները կատարել են Թուրքիայի կուլտուրական կյանքում։ XIX դարի սկզբներին Կ. Պոլսի հայկական տպագրության նշանավոր դեմքերից մեկը՝ Պողոս Արապյանը, հայերեն տառերի, տպագրության և փորագրության կատարելագործման հետ միաժամանակ հնարում է նաև թուրքերեն տառեր, որոնք իր անունով կոչվում են «Արապօղլու գրեր»։ 1816 թվականին նա նշանակվում է արքունի տպարանի վարիչ։

Պոլսահայ նշանավոր տպագրիչ վարպետ Հովհաննես Մյուհենտիսյանը ևս հնարում է թուրքական նոր տառեր, որոնք լայն գործածություն են գտնում թուրքական տպարաններում։

Կ. Պոլսում և ամբողջ Թուրքիայում պոլիգրաֆիայի, ցինկոգրաֆիայի, ստերեոտիպի, փորագրության, նկարչության, ճարտարապետու-

թյան, գիտության, տեխնիկայի և արվեստի մի շարք ճյուղեր գտնվում էին հայ մտավորականների ձեռքում:

Կոստանդնուպոլսի հայ գաղութը զերծ չէր և չէր էլ կարող զերծ լինել արտաքին ազդեցությունից: Լինելով Թուրքիայի մայրաքաղաքը, Պոլիսը միաժամանակ, ինչպես Կ. Մարքսն է ասում, ոսկե կամուրջ էր Արևելքի և Արևմուտքի միջև: Օգտագործելով թուրքական լծի տակ գտնվող հայերի և մյուս քրիստոնյա ժողովուրդների ծանր դրությունը, եվրոպական և ամերիկյան գաղութարարները քրիստոնեական կրոնը պաշտպանելու և այլ պատրվակներով աշխատում էին նրանց գցել իրենց ազդեցության տակ: Նրանք մեծ թվով միսիոներներ էին ուղարկում Արևելք, կաթոլիկ և բողոքական ընկերություններ կազմակերպում, կրոնական դպրոցներ բացում և այլն:

Այդպիսի խարդախ ճանապարհներով անգլո-ամերիկյան և ֆրանսիական միսիոներներին հաջողվել էր արևմտահայերի մեջ ևս կաթոլիկ ու բողոքական համայնքներ հիմնել, կրոնա-դավանաբանական զազրելի վեճեր հրահրել, պառակտել ու ջլատել նրանց առանց այդ էլ ջլատված և թույլ ուժերը:

Կրոնա-դավանաբանական այդ վեճերի հետևանքով էր, որ 1827 թվականի դեկտեմբերին և 1828 թվականի հունվար-փետրվար ամիսներին սուլթանի հրամանով ավելի քան 12000 հայ կաթոլիկներ Պոլսից աքսորվեցին Փոքր Ասիայի զանազան գավառները: Աքսորյալները շատ զրկանքներ ու նեղություններ կրեցին. ձմռան ցրտից ու քաղցից ճանապարհին մեռան մոտ 400 երեխաներ:

XIX դարի առաջին կեսին կաթոլիկ և բողոքական քարոզիչներն իրենց ճյուղերը տարածել էին հայկական մի շարք բնակավայրերում՝ Պոլսում, Զմյուռնիայում, Էրզրումում, Խարբերդում, Վանում, Տիգրանակերտում, Սեբաստիայում, Տրապիզոնում և այլուր: Նրանք մի քանի տեղերում գիշերօթիկ դպրոցներ էին հիմնել և հայ պատանիներին դաստիարակում էին իրենց ոգով:

1844 թվականին Կ. Պոլսից Էջմիածնի կաթողիկոսին հայտնում են, որ Պոլսի մոտ գտնվող Պեպեկ գյուղում ամերիկացի բողոքական միսիոներները պրոպագանդայի համար կրոնական գիշերօթիկ դպրոց են բացել և հայերից շատերին գրավել իրենց կողմը: Պատրիարքը ոչ մի կերպ չի կարողանում արգելել այդ, որովհետև անգլիական դեսպանը հովանավորում է նրանց, իսկ տերությունը չէր կամենում հակառակվել անգլիական դեսպանի կամքին: Պատրիարքը շվարել էր և չգիտեր, թե ինչպես կարելի է վերացնել այս չարիքը:

Անգլիական, ֆրանսիական և ամերիկյան միսիոներների պրոպագանդան, նրանց հրահրած դավանաբանական պայքարը հայերի մեջ այնպիսի սպառնալից բնույթ էին ընդունել, որ 1844 թվականին Ներսես

Աշտարակեցի կաթողիկոսը հատուկ կոնդակով դիմում է հայ ժողովրդին և կոչ անում միաբան լինել: «Զանազան եվրոպական ազգեր... ուրախանում են հայ ժողովրդի դժբախտ վիճակի համար»,— գրում է նա և զգուշացնում՝ հեռու մնալ այդ վնասակար ազդեցությունից:

Հայ լուսավորչականների, կաթոլիկների ու բողոքականների միջև տեղի ունեցած դավանաբանական վեճերը կատարյալ չարիք էին սուլթանական բռնապետության լծի տակ ճնշող հայ ժողովրդի համար: Դրանք մեծ հարված հասցրին մեր ժողովրդի միասնությանը:

3. ԱՐԵՎՄՏԱՀԱՅ ԴԵՄՈԿՐԱՏԻԱՅԻ ՊԱՅՔԱՐԸ ՍՈՒԼԹԱՆԱԿԱՆ ԲՌՆԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՄԻՐԱՆԵՐԻ ԴԵՄ

XIX դարի առաջին կեսին Արևմտյան Հայաստանի, ինչպես և Պոլսի, Զմյուռնիայի և Թուրքիայի այլ վայրերի հայ բնակչության պատմությունը ընթանում էր դասակարգային ու ազատագրական պայքարի բարդ իրադրության պայմաններում: Դրան ավելանում էր միջազգային հակամարտությունների սրումը Թուրքիայում և ամբողջ Մերձավոր արևելքում, որը մեծապես վնասում էր հայ ժողովրդի ազատագրության գործին:

Արևմտահայերը դեռ վաղ ժամանակներից մի շարք փորձեր էին կատարել օսմանյան բռնակալության դաժան լծից ազատագրվելու համար: Սակայն նրանց այդ փորձերը հաջողություն չէին ունեցել:

Հույների, արաբների և բալկանյան ժողովուրդների ազատագրական շարժումները թուրքական լծի դեմ՝ XIX դարի սկզբներին նոր թափ հաղորդեցին հայերի ազատագրական պայքարին: Դրան օբյեկտիվորեն նպաստեցին նաև Թուրքիայի դեմ Ռուսաստանի մղած պատերազմները, որոնց հետ, ինչպես տեսանք, մեծ հույսեր էին կապում արևմտահայերը:

Ազատագրական պայքարի համար ամենից ավելի խոր արմատներ կային արևմտահայ գյուղացիության մեջ: Թուրքիայի տիրապետության տակ գտնվող հայ ժողովրդի սոցիալական խավերից և ոչ մեկը այնքան չէր հարստահարվում ու կեղեքվում, որքան գյուղացիությունը: Օսմանյան բարբարոսական ֆեոդալական կարգերի ամենադառն պտուղները բաժին էին ընկնում հայ գյուղացիությանը:

Սա, իհարկե, բնավ չի նշանակում, թե թուրք, քուրդ, ասորի, արաբ և մյուս ազգություններին պատկանող գյուղացիները չէին ճաշակում սուլթանական ռեժիմի դառնությունը: Նրանց դրությունը նույնպես ծանր էր, և քիչ չեն եղել դեպքեր, երբ հակառակ օսմանյան կառավարության ազգային թշնամանք հրահրելու նենգ ու խարդախ քաղաքականության, հայ, թուրք, քուրդ, ասորի, արաբ գյուղացիները փոխադարձա-

բար կարեկցել և օգնության ձեռք են մեկնել միմյանց, համատեղ պայքար մղել իրենց ճնշողների դեմ։

Արևմտահայ գյուղացիները XIX դարի առաջին կեսին քանիցս ըմբոստացել և ապստամբել էին թուրքական կառավարության ու նրա տեղական մարմինների ազգային ու սոցիալական ճնշումների դեմ։ Այս տեսակետից հատկապես աչքի էին ընկել ազատասեր Զեյթունն ու Սասունը, Վանի, Էրզրումի, Մուշի և Բայազետի շրջանների գյուղացիները։

Զեյթունցիք 1808—1848 թվականներին քանիցս ինքնապաշտպանական կռիվներ են մղում Մարաշի թուրք փաշաների դեմ՝ իրենց ազատության ու անկախության համար։

1808 թվականին Գալենտեր փաշան, 1829 թվականին Քեոսե փաշան, 1830 և 1832 թվականներին Սուլեյման փաշան, 1835 թվականին Թոսուն փաշան, 1842 թվականին Յուսուֆ փաշան, 1844 թվականին Հաջի աղան և ուրիշներ իրենց զինված հրոսակախմբերով հարձակումներ են գործում Զեյթունի վրա, ապօրինի հարկեր ու տուրքեր պահանջում, բայց ազատասեր զեյթունցիք միշտ էլ հերոսաբար դիմադրում և թույլ չեն տալիս թշնամուն ոտք դնել Զեյթուն։

XIX դարի 40—50-ական թվականներին գյուղացիական և արհեստավորական մի շարք ելույթներ են տեղի ունենում նաև Էրզրումի, Վանի, Խարբերդի և Բայազետի վիլայեթներում։ Այդ ելույթները տարերային բնույթ էին կրում, ցածր էր գյուղացիության դասակարգային գիտակցությունը, չկար բանվոր դասակարգը՝ գյուղացիների հավատարիմ դաշնակիցը, ուստի և դրանցից ոչ մեկը չվերածվեց կազմակերպված մասսայական գյուղացիական շարժման։

Ժողովրդի մեջ դժգոհությունը մասսայական էր, բայց նրա անկազմակերպ լինելը, դասակարգային և ազգային-ազատագրական շարժման ուժերի մեջ եղած ներքին հակասությունները, ազգային և կրոնադավանաբանական երկպառակությունները թույլ չեին տալիս, որ մասսայական այդ դժգոհությունները զարգանային ու վերածվեին կազմակերպված համաժողովրդական հուժկու շարժման։

Համեմատաբար ավելի կազմակերպված ու սուր բնույթ են ստանում պոլսահայ դեմոկրատիայի ելույթները։

Կ. Պոլսի արհեստավորների ու պանդուխտների մեջ գնալով ավելի ու ավելի էր աճում դժգոհությունը ամիրաների ու նրանց դրածո պատրիարքների դեմ։ Այդ հողի վրա 1820-ական թվականներից սկսած հետզհետե սրվում էր պոլսահայ դեմոկրատիայի պայքարը ամիրաների ու պատրիարքարանի դեմ։

Առաջին խոշոր ելույթը Կ. Պոլսում տեղի է ունենում 1820 թվականի օգոստոսին։ Արհեստավորների մեջ լուրեր են տարածվում, թե ամիրաների դրածո Պողոս պատրիարքը կաթոլիկություն է ընդունել։

Օգոստոսի 8-ի կիրակի օրը, կեսարացի կոշկակարների նախաձեռնությամբ, հազարավոր արհեստավորներ և այլ զբաղմունքի տեր մարդիկ հարձակվում են պատրիարքարանի վրա, ջարդում դռներն ու լուսամուտները և ներխուժում պատրիարքի սենյակը՝ դատաստան տեսնելու նրա հետ։ Պատրիարքին հաջողվում է ետևի լուսամուտից՝ պարտեզով փախչել ու թաքնվել։ Ապստամբ ժողովուրդը պատրիարքարանի մոտից չի հեռանում։ Վրա են հասնում 5—6 հարյուր հոգի թուրքական ենիչերիներ և զենքի ուժով ցրում ցուցարարներին։

Հաջորդ օրը, օգոստոսի 9-ին, մի խումբ արհեստավորներ Պողոս պատրիարքի դեմ գրավոր բողոք են ներկայացնում կառավարությանը։ Մեծ վեզիրի կարգադրությամբ բոլոր դիմողներին բանտարկում են և սոսկալի չարչարանքների ենթարկելով հարկադրում հայտնել ցույցի կազմակերպիչների անունները։

Չնայած գերազանցապես արհեստավորական այս ելույթը ուղղված է Պողոս պատրիարքի և նրան հովանավորող ամիրաների դեմ, այնուամենայնիվ, սուլթանական կառավարությունը, օգտագործելով առիթը, դաժան դատաստան է տեսնում ցուցարարների հետ։ Տեղի են ունենում մասսայական ձերբակալություններ, բանտերը լցվում են անմեղ զոհերով։

Այդ գործի քննությունը տևում է ավելի քան 40 օր։ Բազմաթիվ անմեղ մարդիկ բանտերում սարսափելի տանջանքների են ենթարկվում։ Ոմանք, չդիմանալով խոշտանգումներին, բանտերում մահմեդականություն են ընդունում։

1820 թվականի սեպտեմբերի 18-ին, երկարատև տանջանքներից հետո, կեսարացի Հակոբը և 80-ամյա Գրիգոր Սաքայանը հրապարակավ գլխատվում են։ Դելի-Բաղդասարը, Կարապետ սարկավագը և Ազարիա պատանին կախաղան են բարձրացվում։ Բազմաթիվ մարդիկ՝ Կարապետ Աղնավուրյանը, Մկրտիչ Արփիարյանը, Պողոս Մարգարյանը, Պողոս Կելկելյանը և ուրիշներ աքսորվում են զանազան կղզիներ։

Պոլսահայ դեմոկրատական խավերի և առհասարակ արևմտահայ աշխատավորության ազատագրական պայքարն ավելի աշխուժացավ 1828—1829 թվականներին ռուս-թուրքական պատերազմի տարիներին։ Արևմտահայերը, ինչպես արդեն նշվել է, իրենց ազատության հույսերը կապելով Ռուսաստանի հաղթանակի հետ, ձգտում էին թոթափել թուրքական լուծը, միանալ իրենց արևելահայ եղբայրների հետ և վերականգնել Հայաստանի անկախությունը։ Բայց նրանց այդ հույսերը չիրականացան։

Արևմտահայերի հասարակական-քաղաքական և մտավոր շարժումները նոր թափ ստացան 1839 թվականի թանզիմաթից հետո։ Աղ 3

Օգտվելով թանզիմաթից, արևմտահայ դեմոկրատական խավերը

եռանդուն պայքար ծավալեցին ամիրաների բռնություններից ու ճնշումներից ազատագրվելու համար։ Մինչ այդ ազգային բոլոր գործերի տնօրինությունը գտնվում էր ամիրաների ու պատրիարքարանի ձեռքում։ Ժողովուրդը զրկված էր ազգային գործերին մասնակցելու իրավունքից։

Ամիրաների ու արհեստավորների (էսնաֆների) միջև այդ շրջանում պայքարն առանձնապես սրվում է ազգային կրթական հաստատությունների շուրջը։ 1838 թվականի դեկտեմբերին Կ. Պոլսի Սկյութար թաղում բացվում է գիշերօթիկ դպրոց, որը կոչվում էր Սկյութարի ճեմարան։

Ճեմարանի ծախսերի մի մասը պետք է հոգային արհեստավորները, իսկ մյուս մասը՝ ամիրաները։ Հետագայում ամիրաները հրաժարվում են ծախսեր հոգալուց։ Ճեմարանի դրությունը գնալով վատանում է։ 1841 թվականին կազմվում է Միական ընկերությունը և 24 արհեստավորներից բաղկացած հոգաբարձություն՝ ազգային կրթական այդ հաստատությունը պահելու համար։ Ամիրաները և նրանց ձեռքում գործիք դարձած պատրիարքը դրա դեմ բողոքում են կառավարությանը։ Կառավարությանը բողոքում են նաև ճեմարանի աշակերտներն ու հոգաբարձուները։ Կառավարությունը, պաշտպանելով ամիրաներին, բանտարկում է 24 արհեստավորներին։

Այս բացահայտ անարդարությունից զայրացած, 1841 թվականի օգոստոսի 24-ին ավելի քան երեք հազար արհեստավորներ փակում են իրենց արհեստանոցներն ու խանութները, բողոքի ցույց են կազմակերպում, շարժվում դեպի սուլթանի պալատը և պահանջում ազատել բանտարկյալներին։

Բողոքի այս ցույցը գլխավորում է Ալեքսանդր (Իսկենդեր) անունով «զայրն ճարտարախոս» մի արհեստավոր։ Ցուցարարները միաբերան աղաղակում են՝ «Չենք ուզում մեր պատրիարքին, չենք ճանաչում ամիրաներին»։

Կառավարությունը ցույցերը ցրելու նպատակով հարկադրված ազատում է բանտարկյալներին, բայց շատ չանցած շարժման ղեկավարներից մի շարք մարդկանց՝ ոսկերիչ Անդրեասին, Գևորգ Տիվաճյանին, պասմաճի Պետրոսին և ուրիշների, աքսորում է Պոլսից։ Ալեքսանդրը փախչում է Օդեսա. շատերը թաքնվում են զանազան վայրերում։

Այս դեպքերից հետո, հոկտեմբերին, Սկյութարի ճեմարանը որպես խռովությունների պատճառ փակվում է և վերաբացվում միայն հինգ տարի հետո՝ 1846 թվականին։ Արհեստավորների պայքարն ամիրաների դեմ չի դադարում։ Երկու ամիս հետո նրանք կազմակերպում են նոր ցույց, կառավարությանը բողոքագիր ներկայացնում, որտեղ գրում են. «Մենք ամիրաների սարուկներն ու գերիները չենք. մենք միաբերան ընտրել ենք մեռնել, բայց չկատարել ամիրաների հրամանները»։

Վախեցած արհեստավորական ցույցերից, 1841 թվականին նրանց ներկայացուցիչներից 27 հոգու իրավունք է տրվում մասնակցելու ազգային մարմիններին։

1844 թվականին Պոլսում կազմված Ազգային ժողովի 30 անդամներից 16-ը ամիրաներ էին, իսկ 14-ը՝ արհեստավորներ։ 1847 թվականի մայիսի 9-ին պատրիարքարանում կազմվում է այսպես կոչված Գերագույն ժողով՝ ամիրաների ու արհեստավորների մասնակցությամբ։ 1846 թվականին Պոլսում հիմնվում է հայտնի «Համազգային ընկերությունը», որի նպատակն էր համախմբել ազգի ցրված ուժերը և համերաշխ ու միասնական գործունեություն ծավալել։

Կ. Պոլսի հայ արհեստավորների և աշխատավորական մյուս խավերի պայքարը շահագործող վերնախավի՝ ամիրաների ու սարաֆների դեմ տեղի էր ունենում այնպիսի մի շրջանում, երբ աշխատավորների նյութական դրությունը գնալով վատանում էր, նրանց ճնշումն ու շահագործումն ավելի էր ուժեղանում։

Բացի այդ, 1830—1840-ական թվականներին Կ. Պոլսում և Թուրքիայի մի շարք այլ վայրերում հաճախակի տեղի էին ունենում երաշտ, սով և համաճարակ, պարբերաբար կրկնվող մեծ հրդեհներ, որոնցից ամենից ավելի տուժում էին ժողովրդական մասսաները։

1831 թվականին Կ. Պոլսում սարսափելի ժանտախտ է տարածվում և 4 անգամ հրդեհ է բռնկվում։ 1838—1839 թվականներին 10 անգամ հրդեհ է առաջանում։ Գումգափու թաղում բռնկված հրդեհից, ինչպես աղբյուրներն են վկայում, «եղև վնաս մեծ աղքատաց հայոց բնակելոց անդ»։

1841 թվականի հուլիսին Զմյուռնիայում բռնկված մեծ հրդեհից այրվում, մոխիր է դառնում քաղաքի գրեթե 1/3-ը։ 3500 այրված տներից 870-ը պատկանում էր հայերին։ Այրվում են ս. Ստեփանոս եկեղեցին՝ 100 հազար դահեկանի հասնող իր զարդերով, ոսկի-արծաթով, Մեսրոպյան վարժարանի, «Արշալույս Արարատյան» թերթի տպարանները, խմբագրատունը, Սարգսյան օրիորդաց դպրոցը և այլն։ 20 ժամ է տևում այս հրդեհը։

Հաճախակի կրկնվող բնական աղետները, թուրք փաշաների ու ֆուրդ բեկերի վայրագությունները, ամիրաների ու սարաֆների ճնշումները երբեք չկարողացան ընկճել արևմտահայ աշխատավորության ազատասիրական ոգին։

XIX դարի կեսերից արևմտահայերի ազգային-ազատագրական, ճասարակական-քաղաքական և մտավոր շարժումները նոր թափ ու ավելի լայն ծավալ ստացան։

VI ԳԼՈՒԽ

ՀԱՅԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՆ XIX ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ԿԵՍԻՆ

Հայկական կուլտուրայի օջախները

Հայ ժողովուրդը, որ հին ժամանակներից սկսած ստեղծել էր կուլտուրայի համաշխարհային նշանակություն ունեցող կոթողներ, Թուրքիայի և Պարսկաստանի լծի տակ ընկնելով, զրկվել էր իր կուլտուրական հարուստ ժառանգությունը պահպանելու և զարգացնելու տարրական պայմաններից։ Հայաստանի տընտեսական և քաղաքական ծանր դրությունը մեծ արգելք էր կուլտուրայի զարգացման համար։

XIX դարի սկզբներից Ռուսաստանի, Եվրոպայի ու Ասիայի հայկական գաղթօջախներում կուլտուրական կյանքը նկատելի կերպով առաջադիմում է։

Ռուսաստանի հետ Հայաստանի միացումից հետո առանձնապես զգալի է լինում կուլտուրական կյանքի աշխուժացումը, որն արդյունք էր ռուսական կուլտուրայի բարերար ազդեցության։ XIX դարի առաջին կեսին Մոսկվան, Պետերբուրգը, Նոր Նախիջևանը, Աստրախանը, Դորպատը դառնում են հայկական կուլտուրայի աչքի ընկնող օջախներ։

Կովկասահայերի ամենախոշոր կուլտուրական կենտրոնը Թիֆլիսն էր։ Ռուսաստանին միանալուց հետո Թիֆլիսում արագ թափով սկսում է զարգանալ ինչպես վրացական, այնպես էլ հայկական կուլտուրան՝ դպրոցները, տպագրությունը, գրականությունն ու արվեստը։ Արևելահայերի կուլտուրական կյանքին տոն տվողը Թիֆլիսն էր։

Հայկական կուլտուրայի նշանավոր օջախներից էր նաև Կոստանդնուպոլիսը։ Ինչպես հայտնի է, Վենետիկի առաջին հայկական տպագրությունից հետո (1512 թ.) Կ. Պոլսում է սկսվում հայկական տպագրությունը (1567 թ.)։ XIX դարի առաջին կեսին Կ. Պոլսի, ինչպես և Զմյուռնիայի հայկական գաղթավայրերում տպագրությունը և առհասարակ մտավոր կյանքի զարգացումը ավելի լայն ծավալ է ստանում։ Նա աստիճանաբար դառնում է արևմտահայ կուլտուրայի, գրականության, գիտության ու արվեստի աչքի ընկնող կենտրոններից մեկը։ Պոլիսն ու Թիֆլիսը հայ հասարակական-քաղաքական կյանքի ու կուլտուրայի ամենախոշոր կենտրոններն էին։

Չի կարելի անտեսել նաև այն դրական դերը, որ հայկական տպագրության, լեզվի, գրականության, գիտության ու արվեստի զարգացման գործում կատարել են Վենետիկի ու Վիեննայի Մխիթարյանները։ Հարելով կաթոլիկությանը, Մխիթարյան միաբանության անդամները միաժամանակ պրոպագանդել են կաթոլիկ եկեղեցու գաղափարները։

XIX դարի առաջին կեսի հայկական կուլտուրայի օջախներից էր

նաև հնդկահայ գաղութը։ Դեռևս XVIII դարի երկրորդ կեսին հնդկահայ գաղութը հայ հասարակական-քաղաքական առաջավոր մտքի կենտրոնն էր։ XIX դարի առաջին կեսին նա տակավին չէր կորցրել իր դերը։ Այս շրջանում հնդկահայերի մեջ ազգային-դեմոկրատական առաջավոր ուղղությունը գլխավորում էր նշանավոր գրող Մեսրոպ Թաղիադյանը։ Հընդկահայ գաղութը ևս քիչ բան չի ներդրել մեր կուլտուրայի գանձարանը։

Ինչպես տեսնում ենք, XIX դարի առաջին կեսին հայկական կուլտուրան հիմնականում զարգանում էր բուն երկրից դուրս, հայկական գաղթավայրերում։ Դա մեր ժողովրդի հանցանքով չէր, այլ նրա մեծ ողբերգության՝ թուրքական ու պարսկական բռնակալների լծի տակ ընկնելու անխուսափելի հետևանքը։

Տնտեսական-քաղաքական ծանր ու դժվարին պայմաններում հայ ժողովուրդը հավատարիմ մնաց իր կուլտուրական մեծ ավանդներին։ Օգտագործելով անցյալի հարուստ ժառանգությունը, նա ստեղծեց XIX դարի իր նոր, ավելի բարձր ու առաջավոր կուլտուրան։

Պարբերական մամուլը

XIX դարի առաջին կեսին հրատարակվում էին մոտ 40 անուն հայկական թերթեր ու ամսագրեր, բայց բոլորն էլ Հայաստանից դուրս։ Հրատարակվող գրքերի ու թերթերի բովանդակությունը գերազանցապես կրոնա-բարոյական էր, լեզուն՝ մեծ մասամբ գրաբար, ժողովրդի համար անյախոսական էր, մատչելի։ Թերթերն ու գրքերը կարված էին մասսայից, տարածվում էին շատ նեղ, սահմանափակ շրջանում։

1794—1796 թվականներին Մադրասում հրատարակված մեր անդրանիկ պարբերական «Ազդարար»-ից հետո 1800—1803 թվականներին Վենետիկում լույս է տեսնում «Տարեգրություն» պարբերականը՝ կրոնական, քաղաքական և բանասիրական բովանդակությամբ։ «Տարեգրությունը»-ը հրատարակվում էր աշխարհաբար լեզվով։ Նրա հիմնադիրը և խմբագիրը նշանավոր հայագետ-պատմաբան Ղուկաս Ինճիճյանն էր։

Վենետիկում Մխիթարյան միաբանության հրատարակությամբ լույս են տեսնում «Եղանակ Բուզանդյան» (1803—1820 թթ.), «Յիշատակարան» (1807—1808 թթ.), «Դիտակ Բուզանդյան» (1812—1816 թթ.) և «Բազմավեպ» (1843—մինչև մեր օրերը) պարբերականները։

1816 թվականին Աստրախանում Կ. Շահվերդյանի խմբագրությամբ լույս է տեսնում «Արևելյան ծանուցմունք» շաբաթաթերթը՝ տեղում հրատարակվող «Восточная известия»-ի հետ միասին։ «Արևելյան ծանուցմունք»-ը ոչ միայն մեր առաջին ռուսահայ պարբերականն էր, այլև առաջին ռուսերեն-հայերեն երկլեզվյան թերթը։

Հայ պարբերական մամուլի աչքի ընկնող կենտրոններից էր նաև Հնդկաստանի հայ գաղութը։ Հայկական կուլտուրայի հիմնական օջախը այս շրջանում դարձել էր Կալկաթան։

1820 թվականին Կալկաթայում հրատարակվում է «Հայելի Կալկաթյան» շաբաթաթերթը, 1821—1823 թվականներին՝ «Շտեմարան» ամսագիրը։ Մ. Թաղիադյանի խմբագրությամբ 1845—1848 թվականներին լույս է տեսնում «Ազգասեր», իսկ 1848—1851 թվականներին՝ «Ազգասեր Արարատյան» թերթերը՝ քաղաքական, տնտեսական, գրական, ազգային, կրթական հարուստ բովանդակությամբ։ Այդ թերթերը ժամանակի հայ պարբերական մամուլի աչքի ընկնող օրգաններից էին։

Հայկական տպագրության և պարբերական մամուլի կարևոր կենտրոններից էր նաև Կոստանդնուպոլիսը։ Կ. Պոլսի առաջին հայերեն թերթը կոչվում էր «Լրո գիր մեծի տերությանն Օսմանյան» (1832—1840 թթ.)։ 1841—1846 թվականներին այդ թերթը լույս էր տեսնում «Հայտարար գիր լրո մեծի տերությանն Օսմանյան», իսկ 1846—1849 թվականներին՝ «Հայտարար լրագիր» վերնագրով։ Պոլսում տպագրվում էին նաև «Ազգարար Բուզանդյան» (1840—1841 թթ.), «Ընտանի իմաստասեր» (1845—1855 թթ.) և «Հայաստան» (1846—1852 թթ.) թերթերը։

Այդ նույն շրջանում Զմյուռնիայի հայ գաղութում հրատարակվում էին «Շտեմարան պիտանի գիտելյաց» (1839—1854 թթ.) և «Արշալույս Արարատյան» (1840—1887 թթ.) թերթերը։ Վերջինս քաղաքական բանասիրական և առևտրական օրգան էր, ուներ պահպանողական ուղղություն. նրա խմբագիր-հրատարակիչն էր Ղ. Պալտազարյանը, որին արևմտահայ դեմոկրատ Մ. Մամուրյանը անվանում էր «գիշերասեր» (այսինքն՝ խավարամոլ) խմբագիր։

Կովկասում հայ պարբերական մամուլը սկիզբ է առնում XIX դարի 40-ական թվականներից։ Առաջին հայերեն թերթը «Կովկաս» անունով լույս է տեսնում Թիֆլիսում 1846 թվականին՝ քաղաքական, տնտեսական, բանասիրական բովանդակությամբ։ Թերթի խմբագիրներն էին սկզբում Հակոբ Կարենյանը և Միքայել Պատկանյանը, ապա՝ Մոսկվայի համալսարանն ավարտած Հակոբ Արզանյանը։ «Կովկաս»-ը կարճատև կյանք է ունենում. 1847 թվականին նա դադարում է։

1850—1851 թվականներին Թիֆլիսում հրատարակվում է «Արարատ» քաղաքական, առևտրական և բանասիրական լրագիրը, հայտնի Գաբրիել վարժապետ Պատկանյանի խմբագրությամբ։ Այս թերթերի հանդես գալը կովկասահայ իրականության մեջ նշանակալից երևույթ էր։

Հայ պարբերական մամուլը ինչպես այդ շրջանում, այնպես էլ հետագայում խոշոր դեր է կատարել մեր ժողովրդի տնտեսական, քաղաքական և կուլտուրական զարգացման գործում։

Դպրոցը

XIX դարի առաջին կեսին Հայաստանում և Հայաստանից դուրս գտնվող հայաբնակ վայրերում հիմնվում են մի շարք դպրոցներ, որոնք նշանակալից դեր են խաղում հայ ժողովրդի մտավոր զարգացման գործում։

1810 թվականին Աստրախանում բացվում է Աղաբաբյան դպրոցը, 1815 թվականին Մոսկվայում՝ Լազարյան ճեմարանը, 1824 թվականին Թիֆլիսում՝ Ներսիսյան դպրոցը, 1832 թվականին Երևանում՝ գավառական դպրոցը, 1837 թվականին՝ Երևանի, իսկ 1838 թվականին Շուշիի թեմական դպրոցները և այլն։

Հայկական դպրոցներ են բացվում նաև Վենետիկում, Կալկաթայում, Կոստանդնուպոլսում, Զմյուռնիայում, Վանում, Էրզրումում, Փարիզում և այլ տեղերում։

Բացի այդ դպրոցներից, Հայաստանի առանձին շրջաններում ու գյուղերում բացվում են նաև ծխական դպրոցներ, որոնք, սակայն, գտնվում էին շատ անմխիթար վիճակում։

Վերը հիշված դպրոցներից հայ իրականության մեջ ամենից ավելի աչքի ընկնող դեր են խաղացել Մոսկվայի Լազարյան ճեմարանը, Թիֆլիսի Ներսիսյան դպրոցը, Երևանի ու Շուշիի թեմական դպրոցները և Վենետիկի Մուրադ-Ռաֆայելյան դպրոցը, որը բացվեց 1836 թվականին։

Լազարյան ճեմարանն իր ուրույն տեղն ունի հայ դպրոցի պատմության մեջ։ Դա ռուսահայերի առաջին աչքի ընկնող ուսումնական հաստատությունն էր, հայկական կուլտուրայի ջահակիրներից մեկը Ռուսաստանում։ Երբ դեռ Հայաստանը գտնվում էր պարսիկ խաների ու թուրք փաշաների բարբարոսական լծի տակ և ոչ մի կանոնավոր դպրոց չկար, Մոսկվայի Լազարյան ճեմարանում համախմբվեցին ժամանակի նշանավոր հայ մտավորականները, այդտեղ կրթություն ստացան ուսումնասեր հայ պատանիները, այդտեղ դասավանդվեցին հայոց լեզու, գրականություն, պատմություն և բնական գիտություններ։

Լազարյան ճեմարանը եղել է ոչ միայն մեր առաջին բարեկարգ դպրոցներից մեկը, այլև հայ կուլտուրայի օջախը Մոսկվայում, հայ-ռուսական կուլտուրական կապերի կենտրոնը։ Ճեմարանի շրջանավարտներից շատերը աչքի ընկնող դեր են կատարել լուսավորության, գրականության, գիտության և արվեստի, ինչպես և հասարակական-քաղաքական կյանքի ասպարեզում։

Թիֆլիսի Ներսիսյան դպրոցը Կովկասի առաջին խոշոր ուսումնական հաստատությունն էր և առհասարակ XIX դարի հայկական լավագույն դպրոցներից մեկը։ Չնայած իր հոգևոր կոչմանը, դպրոցում մեծ մասամբ դասավանդվում էին աշխարհիկ առարկաներ՝ պատմություն, գրականություն, ֆիզիկա, թվաբանություն, հանրահաշիվ, տրամաբանություն, նկարչություն, հայերեն, ռուսերեն, ֆրանսերեն և այլն։ Հայ մանկավարժներից, գիտության, գրականության ու արվեստի ականավոր դեմքերից շատերը Ներսիսյան դպրոցի սաներ են եղել։

Կովկասում բարձրագույն դպրոց չլինելու հետևանքով առանձին երիտասարդներ գնում են Ռուսաստան (Մոսկվա, Պետերբուրգ, Դոր-

պատ) և Արևմտյան Եվրոպա՝ բարձրագույն կրթություն ստանալու համար։ Ռուսաստանում և Եվրոպայում կրթություն ստացած հայ մտավորականների այդ առաջին սերունդը (Հ. Ալամդարյան, Մ. Թաղիադյան, Խ. Աբովյան, Ստ. Նազարյան, Մ. Նալբանդյան, Ղ. Ալիշան, Ն. Զորայան, Ստ. Ոսկան, Ն. Ռուսինյան, Մ. Մամուրյան, Ռ. Պատկանյան և ուրիշներ) աչքի ընկնող դեր խաղաց հայ նոր կուլտուրայի զարգացման գործում։

Գիտությունը

XIX դարի առաջին կեսին որոշ քայլեր են կատարվում նաև գիտության զարգացման բնագավառում։ Պատմության, լեզվաբանության, բնագիտության, բժշկության և գիտության այլ ճյուղերի վերաբերյալ հրատարակվում են մի շարք ուսումնասիրություններ։

Իրենց գիտական գործունեությամբ աչքի են ընկնում պատմաբան-աշխարհագրագետ Ղ. Ինճիճյանը (1768—1843), լեզվաբան Մ. Ավգերյանը (1762—1854), Խ. Աբովյանը, Մ. Թաղիադյանը, բժիշկներ Ստ. Շահրիմանյանը, Միքայել Բեստենը (1774—1844) և ուրիշներ։

Ղ. Ինճիճյանը, Ստեփանոս Գուվեր Ագոնցի հետ միասին, 1802—1808 թվականներին հրատարակում է «Աշխարհագրություն չորից մասանց աշխարհի» վեց հատորից բաղկացած աշխատությունը, գրում է Ասիային նվիրված հատորը, որը կոչվում է «Նոր Հայաստան»։

1822 թվականին տպագրվում է նրա «Ստորագրություն հին Հայաստանյայց» ուսումնասիրությունը, որտեղ հունա-հռոմեական և ասորական աղբյուրներից հավաքած փաստական հարուստ նյութերի հիման վրա տալիս է Մեծ Հայքի պատմա-աշխարհագրական պատկերը։

1835 թվականին լույս է տեսնում Ինճիճյանի «Հնախոսություն աշխարհագրական Հայաստանյաց աշխարհի» եռահատոր աշխատությունը։ Մ. Չամչյանի նշանավոր Հայոց պատմությունից հետո դա առաջին ծավալուն պատմական երկն էր։

Չնայած իր իդեալիստական և կրոնական հայացքներին, Ինճիճյանի աշխատությունները փաստական հարուստ նյութ են պարունակում Հայաստանի պատմական անցյալի վերաբերյալ, որը պետք է քննադատաբար օգտագործել։

Աչքի ընկնող պատմաբաններից էր նաև Հովսեփ Գաթրճյանը (1820—1882)։ Նա գրել է «Տիեզերական պատմություն ի սկզբանե աշխարհի մինչև ցմեր ժամանակս» երկհատոր աշխատությունը։ Առաջին հատորը (հին շրջան) լույս է տեսել Վիեննայում 1849 թվականին, իսկ երկրորդ հատորը (միջին շրջան)՝ 1852 թվականին։

Ընդհանուր պատմության հետ շաղկապված, ժամանակագրական կարգով, հեղինակը համառոտակի շարադրել է նաև հայոց պատմության նշանավոր դեպքերը, առաջնորդվելով, ինչպես ինքն է ասում, Ցիցերոնի

հայտնի խոսքերով՝ «Պատմության մեջ չկա ավելի հաճելի բան, քան պարզ ու հստակ համառոտությունը»։

Գաթրճյանի պատմական կոնցեպցիան նույնպես իդեալիստական է, կրոնական։ «Պատմութիւն է միանգամայն պատմութիւն արտաքին գործոցն աստուծոյ կամ տեսչութեան նորա»,— գրում է նա։ «Առանց Քրիստոսի որպես ինքնին իսկ մարդկութիւնն, նույնպես համարեն տիեզերական պատմութիւն չէր այլ ինչ՝ բայց առեղծված ինչ անհնարին»։ Նա, Ինճիճյանի նման, հետևում էր հայ կղերա-ֆեոդալական պատմագրությանը։

Պատմությամբ զբաղվում և մի շարք աշխատություններ են հրատարակում նաև Գաբրիել վարդապետ Այվազովսկին՝ «Պատմություն օսմանեան պետության», երեք հատոր (1841), Մ. Բժշկյանը՝ «Պատմություն Պոնտոսի» (1819), Ե. Սեթյանը՝ «Համառոտ պատմություն հայոց» (1843), Ի. Փափազյանը, Ե. Զագճյանը և ուրիշներ։

XIX դարի առաջին կեսին պատմական մի շարք աշխատություններ են հրատարակվում նաև Ռուսաստանում։

1809 թվականին Պետերբուրգում Հովսեփ Հովհաննիսյանի թարգմանությամբ ռուսերեն լեզվով լույս է տեսնում Մովսես Խորենացու «Հայոց պատմությունը», 1811 թվականին՝ Գ. Խուբովի 1778—1809 թվականների դեպքերի՝ ժամանակագրությունը, 1813 թվականին՝ Հարություն Արարատյանի կյանքի պատմությունը՝ երկու հատորով։ Ա. Խուդաբաշյանը ֆրանսերենից ռուսերեն թարգմանում է Շահան Ջրպետյանի Փարիզում հրատարակված աշխատությունը՝ Ասիայի հին պատմությանը նվիրված, որը լույս է տեսնում 1816 թվականին։

Մոսկվայում 1827 թվականին ռուսերեն լեզվով հրատարակվում է Հակոբ և Դավիթ Արղանյան եղբայրների «Հայկական թագավորության պատմության ուրվագծման փորձ» գիրքը, իսկ 1832—1833 թվականներին՝ ռուս առաջավոր գործիչ և պատմաբան Սերգեյ Գլինկայի «Обозрение истории армянского народа» երկու մասից բաղկացած աշխատությունը։

1833—1838 թվականներին Լազարյան ճեմարանի հրատարակությամբ լույս է տեսնում պատմական վավերագրերի արժեքավոր մի ժողովածու՝ «Собрание актов, относящихся обозрению истории армянского народа», երեք ստվար հատորից բաղկացած։ Սա արխիվային վավերագրերի հրատարակման առաջին փորձն էր։

Պատմագիտական, ազգագրական և բանասիրական արժեքավոր ուսումնասիրություններ են կատարում նաև մեր նշանավոր գրողներ Խ. Աբովյանն ու Մ. Թաղիադյանը։

Խ. Աբովյանը գրել է պատմական, ազգագրական, լեզվաբանական, մանկավարժական մի շարք աշխատություններ, քրդերի կյանքին ու

կենցաղին վերաբերող հոդվածներ, որոնք գիտական մեծ հետաքրքրություն են ներկայացնում։

Մ. Թաղիադյանը 1841 թվականին Կալկաթայում տպագրում է «Պատմություն Հին Հնդկաստանի», 1846 թվականին՝ «Պատմություն պարսից», 1847 թվականին՝ «Ճանապարհորդություն ի Հայս» և այլ աշխատություններ։

Պայքար մղելով հայագիտության մեջ տիրող կղերա-ֆեոդալական ուղղության դեմ, Աբովյանն ու Թաղիադյանը հիմք դրեցին դեմոկրատական-լուսավորական ուղղության, որը խոշոր նշանակություն ունեցավ հայագիտության և առհասարակ հայ հասարակական մտքի հետագա զարգացման համար։

Հայագիտական արժեքավոր աշխատանքներ են կատարում նաև լեզվաբաններն ու բանասերները։ 1836—1837 թվականներին Վենետիկում լույս է տեսնում շուրջ 50 տարվա կոլեկտիվ աշխատանքի արդյունք հանդիսացող «Նոր բառգիրք Հայկազյան լեզվի»՝ երկու ստվար հատորից բաղկացած նշանավոր Հայկազյան բառարանը, որը կուլտուրապատմական խոշոր արժեք է ներկայացնում։

Արվեստը

XIX դարի առաջին կեսին զարգանում է նաև հայկական արվեստը՝ նկարչությունը, երաժշտությունն ու թատրոնը։ Արվեստի զարգացումը սերտորեն կապված էր ժողովրդի ընդհանուր կուլտուրական մակարդակի բարձրացման հետ։

Հայ մեծ լուսավորիչ Խ. Աբովյանը դեռևս 1835 թվականին գրել է. «Երաժշտության և նկարչության արվեստների տարածելն իմ վաղեմի ջերմ ցանկությունն է եղել։ Դրանց միջոցով կրակոտ արևելցիք ավելի շուտ կհասնեն կուլտուրայի, քան որևէ այլ միջոցով»։

Խ. Աբովյանը, Մ. Թաղիադյանը, Ստ. Նազարյանը և մյուս լուսավորիչները արվեստը համարում էին ժողովրդի առաջադիմության կարևոր լծակներից մեկը։

Թուրք-պարսկական տիրապետության շրջանում հայկական արվեստը շատ հետ էր մնացել։ Ռուսաստանի հետ Հայաստանի միացման ժամանակ, գրում է Շոպենը, Երևան քաղաքում կար միայն երկու նկարիչ, որոնք մեկենասներ չգտնելով իրենց համեստ տաղանդի համար, ընկել էին խեղճ վիճակի մեջ։

Նկարչության ասպարեզում աչքի էին ընկնում շնորհալի արվեստագետներ Հովնաթանյանները։ Հակոբ Հովնաթանյանը (1809—1884) դիմանկարչության անզուգական վարպետ էր, իր ժամանակի նշանավոր հայ նկարիչը։ Նա ապրել և ստեղծագործել է մեծ մասամբ Թիֆլիսում, եղել է նաև Երևանում, որտեղ նույնպես մի շարք գործեր է նկարել։ Նրա գործերից մեզ հասել է մոտ 60-ը, այդ թվում՝ Շ. Նադիրյանի, Ն. Թումանյանի, Անանյանի, Գուրգենբեկյանի, անհայտ կնոջ դիմանկարները, որոնք այսօր էլ զարդարում են մեր թանգարանները։

Հակոբ Հովնաթանյանի հայրը՝ Մկրտումը (1765—1842), և կրտսեր եղբայրը՝ Աղաֆոնը (1815—1893), նույնպես նկարիչներ էին։ Վերջինս 1836 թվականին ընդունվում է Պետերբուրգի Գեղարվեստի ակադեմիան, սովորում է ռուս նշանավոր նկարիչ Բրյուլովի մոտ, ավարտելուց հետո զբաղվում է գեղազանցապես վիմագրությամբ (լիտոգրաֆիայով)։

1833 թվականին Պետերբուրգի Գեղարվեստի ակադեմիան է ընդունվում և 1837 թվականին ժամկետից շուտ ոսկե մեդալով ավարտում Ղրիմի Թեոդոսիա քաղաքի հայ ընտանիքի զավակ Հովհաննես Այվազովսկին, որը հետագայում դարձավ աշխարհահռչակ ծովանկարիչ։ Այդ նույն ակադեմիայում ռուս ականավոր նկարիչների մոտ սովորում են նաև Մովսես Մելիքյանը, Հովհաննես Քաթանյանը, Ստեփան Ներսիսյանը, Գևորգ Դոդոխյանը և ուրիշներ։

Ստեփան Ներսիսյանը (1807—1884) երևանցի էր, Խ. Աբովյանի մանկության ընկերներից. սովորել էր Էջմիածնի դպրոցում, ապա՝ Թիֆլիսի Ներսիսյան դպրոցում։ Աբովյանի օգնությամբ 1838 թվականին նա ընդունվում է Գեղարվեստի ակադեմիան, 1842 թվականին ավարտում այն, ստանում նկարչի կոչում և վերադառնում Թիֆլիս, զբաղվում ստեղծագործական աշխատանքով։ Նրա գործերից հայտնի են Մեսրոպ Մաշտոցի, Վ. Բեհբութովի, Մելիք-Ադամյանի դիմանկարները, «Խնջույք գետափին» նկարը և այլն։

Հակոբ Հովնաթանյանը և Ստեփան Ներսիսյանը զարկ տվեցին ռեալիստական դիմանկարչությանը։

Երաժշտության բնագավառում աչքի են ընկնում Համբարձում Լիմոնջյանը (1768—1839), Արիստակես Հովհաննիսյանը (1812—1878), Գաբրիել Երանյանը (1827—1862) և ուրիշներ։

Հ. Լիմոնջյանը ծնվել է Կ. Պոլսում, աղքատ ընտանիքում։ Փոքր հասակից երաժշտական ընդունակություն է դրսևորում և հետաքրքրվում նոտագրությամբ։ Հայկական հին խաղերի սկզբունքով նա ստեղծում է հայկական նոտաներ, որոնք հնարավորություն են տալիս գրի առնել երաժշտական հնչյունների բարձրությունն ու տևողությունը։

Այս նոտաներով Հ. Լիմոնջյանն ու նրա հետևորդները՝ Ա. Հովհաննիսյանը, Գ. Երանյանը, Ե. Տնտեսյանը և ուրիշներ, ձայնագրում են սկզբում եկեղեցական շարականներ, ապա ազգային, ժողովրդական երգեր ու տաղեր։ Մեր անմահ Կոմիտասը բարձր է գնահատել Հ. Լիմոնջյանի դերը։

Ժողովրդի մեջ այդ շրջանում տարածված ու սիրված երաժշտությունը տակավին արևելյան գործիքային երաժշտությունն էր՝ թառ,

քյամանչա, ղուռնա, դհոլ և այլն։ XIX դարի կեսերից միայն Ռուսաստանում և Արևմտյան Եվրոպայում երաժշտական-մասնագիտական կրթություն ձեռք բերած կադրերը զարկ տվեցին մեր նոր, ազգային երաժշտությանը։

XIX դարի առաջին կեսին աշխուժություն է նկատվում նաև թատրոնի բնագավառում։ Ճիշտ է, մշտական, պրոֆեսիոնալ թատրոն դեռ չկար, բայց թատերասեր երիտասարդները դպրոցներում, ինչպես և տներում, հաճախակի ներկայացումներ էին տալիս։ Այդպիսի ներկայացումներ են տրվել Թիֆլիսի Ներսիսյան դպրոցում, Գանձակում, Նոր Նախիջևանի, Ղրիմի, Կ. Պոլսի, Վենետիկի և Հնդկաստանի հայ գաղթավայրերում։ Թատրոնի զարգացման գործում մեծ դեր է կատարել ուսանող երիտասարդությունը։

1820-ական թվականներից սկսած, Հ. Ալամդարյանի տեսչության շրջանում, հաճախակի ներկայացումներ են տրվում Թիֆլիսի Ներսիսյան դպրոցի դահլիճում։ Այդ դպրոցի աշակերտ, հայտնի թատերասեր Գալուստ Շերմազանյանը գրում է «Ասրիբեկ և Գիքի» պիեսը, որտեղ ցույց է տալիս պարսկական լծի տակ հայերի կրած տառապանքները և նրանց մղած ազատագրական պայքարը օտար ճնշողների դեմ։

1840-ական թվականներին նա գրում է մի ուրիշ պիես («Նկարագրություն ինչ-ինչ գործոց Կարապետ եպիսկոպոսի...»), որտեղ մերկացնում է ցարական կաշառակեր չինովնիկներին ու տգետ հոգևորականներին։ Պիեսը բեմադրվում է հեղինակի տանը, որը կոչվում էր Շերմազանյան դարպաս։ Առաջին ներկայացումից հետո ցարական կառավարությունն արգելում է այդ պիեսի բեմադրությունը։

1832 թվականին Թիֆլիսում ռուս, վրացի և հայ թատերասերների ուժերով բեմադրվում է ռուս նշանավոր գրող Ա. Ս. Գրիբոեդովի «Խելքից պատուհաս» պիեսը։ Մինչ այդ «Խելքից պատուհասի» առաջին և հեղինակի ներկայությամբ միակ բեմադրությունը տեղի էր ունեցել Երևանում՝ 1827 թվականին, նրա տաղանդի երկրպագու և գաղափարակից դեկաբրիստ սպաների ջանքերով։

1824—1825 թվականներին և հետագա տարիներին մի շարք ներկայացումներ են տրվում նաև Ղրիմի հայկական գաղութում, որոնք մեծ հետաքրքրություն են առաջ բերում հայ և ռուս հանդիսականների մեջ։

1846 թվականին Գանձակում ուսուցիչ Կարապետ Մատինյանցի ղեկավարությամբ բեմադրվում է «Արտաշիր թագավոր հայոց» ողբերգությունը։ Նոր Նախիջևանում 1830—1840-ական թվականներին, Մոսկվայի համալսարանի շրջանավարտ Սարգիս Տիգրանյանի նախաձեռնությամբ, բեմադրվում են Ռասինի «Գոթոդիա» ողբերգությունը և ուրիշ պիեսներ։ Այդ ողբերգությունը, որը 1834 թվականին լույս էր

տեսել Մոսկվայում Լազարյան ճեմարանի հրատարակությամբ, ֆրանսերենից հայերեն էր թարգմանել ինքը՝ Ս. Տիգրանյանը։

XIX դարի առաջին կեսի հայկական թատրոնի և դրամատուրգիայի պատմության մեջ իրենց ուրույն տեղն են գրավում մեծ գրող Խ. Աբովյանի գործերը։

Բարձր գնահատելով թատրոնի դերն ու նշանակությունը ժողովրդի կրթության ու դաստիարակության գործում, Աբովյանն առաջին անգամ ժողովրդին հասկանալի աշխարհաբար լեզվով գրում է իր հայտնի «Ֆեոդորա կամ որդիական սեր» դրաման, որը 1841 թվականին Թիֆլիսում բեմադրվել է նրա աշակերտների համար։

Խ. Աբովյանի, Գ. Շերմազանյանի և մյուս հեղինակների ինքնուրույն դրամատիկական երկերն ու պիեսները նպաստեցին հայկական թատրոնի ու դրամատուրգիայի հետագա զարգացմանը։

Գրականությունը

Մինչև հայ նոր գրականության սկզբնավորումը, գրականության մեջ տիրող ուղղությունը կլասիցիզմն էր։ Կլասիցիզմի աչքի ընկնող ներկայացուցիչը հայ գրականության մեջ եղել է Արսեն Բագրատունին (1790—1861)։

Փոքր հասակից սովորելով կլասիկ լեզուներ, Ա. Բագրատունին թարգմանում է Հոմերոսի, Սոֆոկլեսի, Վերգիլիոսի գործերը։ Թարգմանությունից բացի, նա զբաղվում է նաև ինքնուրույն ստեղծագործությամբ։ Նրա գրչին է պատկանում 22 հազար տողից բաղկացած «Հայկ Դյուցազն» պոեմը։ Պոեմի նյութը վերցված է Մովսես Խորենացու Հայոց պատմության մեջ եղած Հայկի և Բելի առասպելից։

«Հայկ դյուցազն» պոեմը գրված է Հոմերոսի «Իլիական»-ի ազդեցությամբ, հայկական տաղաչափությամբ։ Լեզուն խրթին գրաբար է, որը և գրեթե անհնար է դարձնում մեծածավալ պոեմի ընթերցումը։

XIX դարի 20—30-ական թվականներից հայ գրականության մեջ սկսվում է նոր էտապ։ Դա կապված էր Անդրկովկասի տնտեսական ու քաղաքական կյանքում առաջացած նոր փոփոխությունների, առանձնապես Թուրքիայի ու Պարսկաստանի լծից հայ ժողովրդի մի մասի ազատագրության և Ռուսաստանի տիրապետության տակ անցնելու հետ։

Հայ գրականության այս նոր էտապի սկզբնավորումը կապված է XIX դարի առաջին կեսի ամենախոշոր գրող, մեծ դեմոկրատ-լուսավորիչ Խաչատուր Աբովյանի անվան հետ։

Մինչև Աբովյանը, հայ նոր գրականության զարգացման համար նախապատրաստական զգալի աշխատանք են կատարել Հարություն Ալամդարյանն ու Մեսրոպ Թաղիադյանը։

Հարություն Ալամդարյանը (1796—1834) ծնվել է Աստրախանում, սովորել է տեղի Աղաբաբյան դպրոցում, ապա, տեղափոխվելով Մոսկվա, տասը տարի որպես ուսուցիչ աշխատել է Լազարյան ճեմարանում։

Այստեղ նա սովորում է մի քանի լեզուներ և հիմնավորապես ծանոթանում ռուսական ու արևմտաեվրոպական գրականությանը։ 1821 թվականին Մոսկվայում լույս է տեսնում նրա կազմած առաջին ռուս-հայերեն բառարանը, որը կուլտուրական խոշոր նվաճում էր իր ժամանակի համար։

1824 թվականին Ալամդարյանը Մոսկվայից տեղափոխվում է Թիֆլիս, որտեղ Ներսիսյան դպրոցում որպես տեսուչ և ուսուցիչ աշխատում է մինչև 1830 թվականը։ Թիֆլիսում Ալամդարյանն ակտիվ մասնակցություն է ունենում կովկասահայերի հասարակական-քաղաքական և կուլտուրական գործերին։ Որպես Ներսես Աշտարակեցու մտերիմ անձնավորություն, նա հալածանքի է ենթարկվում Պասկևիչի կողմից և փաստորեն զոհ է գնում այդ հալածանքներին։ 1834 թվականին Նոր Նախիջևանի մոտ գտնվող ս. Խաչ վանքում նա սպանվում է անհայտ չարագործների կողմից։

Ալամդարյանը քնարերգու բանաստեղծ է։ Նա երգել է աշխարհիկ կյանքը, բնությունը, սերը։ Այս տեսակետից առավել արժեքավոր են նրա «Պարերգություն», «Գարուն» և «Անուրջ» բանաստեղծությունները։ Նա գրել է նաև պատմական, կրոնական բովանդակությամբ գործեր, «Հրամիզդ և Զենոբիա» ողբերգությունը, որը չի տպագրվել։

Իր ստեղծագործության մեջ Ալամդարյանը, հիմնականում հաղթահարելով կլասիցիզմը, այնուամենայնիվ, չկարողացավ լիովին ազատագրվել նրանից։ Լեզվի հարցում նույնպես նա հանդես բերեց սահմանափակություն և գրաբարի շրջանակներից դուրս չեկավ։

Ալամդարյանի բանաստեղծությունները զետեղված են մի ժողովածուում, որը «Զափաբերականք» խորագրով 1884 թվականին տպագրվել է Պետերբուրգում։

Մեսրոպ Թաղիադյանը (1803—1858) հայ նոր գրականության ականավոր դեմքերից մեկն է։ Պատանի հասակում կորցնելով հորը, նա ընկնում է էջմիածնի վանքը, սովորում վանական դպրոցում։ Ուսման ծարավ երիտասարդը ցանկանում է Եվրոպա գնալ, բայց ընկնում է Հնդկաստան, 1826 թվականին մեծ դժվարությամբ ընդունվում է Կալկաթայի անգլիական հոգևոր դպրոցը և 1830 թվականին ավարտում՝ ստանալով արվեստի մագիստրոսի կոչում։

Հայրենիքի սերը Թաղիադյանին հանգիստ չի տալիս։ 1831 թվականին նա վերադառնում է հայրենիք՝ դպրոց ու տպարան բացելու, կրթություն ու լուսավորություն տարածելու վառ հույսերով։ Էջմիածնի վանականները որոգայթներ են լարում և խորտակում նրա հույսերը։ Երկար ժամանակ նա մնում է անգործ և օրվա հացի կարոտ։

1838 թվականին Թաղիադյանը գնում է Կոստանդնուպոլիս, որտեղ զբաղվում է ուսուցչությամբ։ Բայց այստեղ էլ հայ կղերականները և

ամիրաները նրան հանգիստ չեն տալիս։ 1839 թվականին նա փախչում է Հնդկաստան։

Տասնութ տարի Հնդկաստանում մնալուց հետո Թաղիադյանը տեղափոխվում է Իրան, այնտեղից հայրենիք վերադառնալու մտադրությամբ։ Ճանապարհին ծանր հիվանդանում է և 1858 թվականին վախճանվում Շիրազում։

Չնայած իր կյանքի դժնդակ պայմաններին, Թաղիադյանը գրական, գիտական և մանկավարժական բեղմնավոր գործունեություն է ունեցել և մեզ թողել է գրական հարուստ ժառանգություն։

Նրա գրչին են պատկանում «Ճանապարհորդություն ի Հայս», «Պատմություն պարսից», «Պատմություն հնդկաց» պատմական ուսումնասիրությունները, «Դիցաբանություն», «Մեսրոպյան այբբենարան» դասագրքերը, Ռիչինալդ Հիբբի «Պաղեստին» պոեմի և այլ երկերի թարգմանությունները, իր խմբագրած «Աղգասեր» և «Աղգասեր Արարատյան» թերթերում տպագրած բազմաթիվ հոդվածներ։

Բացի այդ, Թաղիադյանը գրել է նաև պոեմներ («Սոս և Սոնդիպի», «Թութակ Թաղիադյան», «Եղերգություն ի Թանգա Թաղիադյան») և վեպեր («Վեպ Վարդգեսի», «Վեպ Վարսենկան»)։

Թաղիադյանի մոտ առանձնապես գնահատելի է նրա ջերմ հայրենասիրությունը և այն քննադատական վերաբերմունքը, որ երևան է բերել ֆեոդալական կարգերի ու հայ կղերականության, ինչպես և արևմտաեվրոպական պետությունների գաղութային քաղաքականության նկատմամբ։ Իր հոդվածներից մեկում, դիմելով հնդկահայերին, Թաղիադյանն ասում է. «Մեր արմատը մեր հայրենիքն է... Ով ուզում է երջանիկ լինել, նա պետք է նախ և առաջ ձգտի հայրենիքի երջանկության»։

Ապրելով Հնդկաստանում, մոտիկից շփվելով հնդիկ ժողովրդի հետ, Թաղիադյանը ջերմորեն պաշտպանում էր անգլիական գաղութարարների դեմ նրա մղած հերոսական պայքարը, հայերին կոչ էր անում ամրապնդել բարեկամական կապերը հնդիկ մեծ ժողովրդի հետ։

Ականատես լինելով անգլիական գաղութարարների թալանի ու կողոպուտի քաղաքականությանը Հնդկաստանում, Թաղիադյանը գրում է. «Անգլիացիք տարեկան 700 միլիոն լիրա հարկ են վերցնում Հնդկաստանից, բայց գոնե մի միլիոն չեն ծախսում հարկատուների մեծ բազմության ուսման համար։ Մի՞թե այս ծայրագույն աստիճանի բռնություն չէ... Աշխարհը թող աչք բացի և տեսնի, թե արդյո՞ք կա ավելի դժնդակ բարբարոսություն, քան այս»։

Նա առաջին հայ մանկավարժն էր, որ բարձրացրեց աղջիկների համար դպրոցներ բացելու հարցը։ 1845 թվականին Կալկաթայում նրա նախաձեռնությամբ բացվում է օրիորդաց դպրոց։

Թաղիադյանի ստեղծագործությունները զերծ չեն կլասիցիզմի ազդեցությունից։ Ինչ վերաբերում է լեզվին, պետք է ասել, որ նա, մասամբ միայն օգտագործելով աշխարհաբարը, հիմնականում պահեց գրաբարը։ Թաղիադյանի այդ թերությունն իր ժամանակին քննադատել է Միքայել Նալբանդյանը, նշելով, որ «Խոսելու և գրելու խոռհուրդը այն է, որ ժողովուրդը կարդա և բան հասկանա»։

Ոչ Ալամդարյանը և ոչ էլ Թաղիադյանը չկարողացան լուծել նոր լեզվի և նոր գրականության ստեղծման բարդ ու դժվարին պրոբլեմները։ Այդ վիճակված էր նրանց հաջորդին՝ հայ նոր գրականության հիմնադիր, մեծ լուսավորիչ Խաչատուր Աբովյանին։

Խաչատուր Աբովյան *(1805—1848)*։ Խաչատուր Աբովյանը XIX դարի առաջին կեսի հայ գրականության ամենախոշոր դեմքն է։ Նա հայ նոր գրականության հիմնադիրն է, մեծ հայրենասեր, լուսավորիչ, դեմոկրատ։ Աբովյանն աչքի ընկնող հասարակական գործիչ է, տաղանդավոր վիպասան, բանաստեղծ, առակագիր, թարգման, մանկավարժ, պատմաբան, լեզվաբան, ազգագրագետ։ Այս բոլոր բնագավառներում նա հանդես է եկել որպես նոռարար։

Դուրս գալով ժողովրդի ծոցից, նա իր ամբողջ կյանքը նվիրում է ժողովրդի գործին, առաջին հերթին՝ խավարի թանձր քողով պատած իր հայրենի աշխարհում կրթություն ու լուսավորություն տարածելու գործին։ Դիմելով ժողովրդին, Աբովյանն ասում է. «Ուզածս էն ա, սիրելի ազգ, որ քեզ ծառայեմ, քեզ իմ կյանքս տամ, քանի շունչս բերանումս ա»։

Աբովյանը հենց սկզբից ըմբռնեց, որ դաստիարակը ինքը պետք է դաստիարակված լինի, և անօրինակ համառությամբ ու ջանասիրությամբ հետամուտ եղավ իր կրթության գործին։

Սկզբում էջմիածնի վանքում, ապա Թիֆլիսի Ներսիսյան դպրոցում, իր սիրելի ուսուցիչ Ալամդարյանի մոտ, իսկ այնուհետև 1830—1836 թվականներին Դորպատի (այժմ Էստոնական ՍՍՀ, Տարտու) համալսարանական միջավայրում, պրոֆեսոր Պարրոտի մոտ, Աբովյանը բազմակողմանի կրթություն է ձեռք բերում, հիմնավորապես ծանոթանում եվրոպական և ռուսական կուլտուրայի նվաճումներին։ Իր բացառիկ աշխատասիրության և ընդունակության շնորհիվ նա սովորում է վեց լեզու։

1836 թվականին Աբովյանը վերադառնում է հայրենիք՝ համակված իր ձեռք բերած հարուստ գիտելիքները ժողովրդին հաղորդելու վառ հույսերով ու ցանկություններով։ Բայց նրա հույսերը խորտակվում են, երբ կաթողիկոսը նրան՝ այդ ամենակրթված, առաջադեմ մարդուն ասում է. «Դու լավ կարող ես խմորել անմեղ երեխաների միտքը, նրանց կրթելը քո գործը չէ»։

Էջմիածնի խավարամոլ հոգևորականության կողմից հալածված ու լքված, Աբովյանը անգործ, կիսաքաղց օրեր է անցկացնում Թիֆլիսում։ 1837 թվականին, կարիքից դրդված, նա մտնում է պետական ծառայության, որպես Թիֆլիսի գավառական դպրոցի տեսչի պաշտոնակատար և միաժամանակ զբաղվում մասնավոր դասերով։

1843 թվականին Աբովյանը նշանակվում է Երևանի գավառական դպրոցի տեսուչ, որտեղ աշխատում է մինչև 1848 թվականը։ Այդ շրջանում նա իրեն ամբողջապես նվիրում է Երևանի գավառի դպրոցները քայքայված, հետամնաց վիճակից դուրս բերելու և նոր, գիտական-մանկավարժական հիմունքների վրա դնելու գործին։

Պերճ Պռոշյանի վկայությամբ Աբովյանը շտեսնված և չլսված նորություններ է մտցնում Երևանի գավառի դպրոցական գործերում և դրանով իսկ իր դեմ լարում ռեակցիոն չինովնիկներին ու հոգևորականներին։ Նրա նախաձեռնությամբ դպրոցներում բարձրացվում է գիտակցական կարգապահությունը, վերացվում են մարմնական պատիժները, էքսկուրսիաներ են կազմակերպվում և այլն։

1848 թվականի մարտին Աբովյանն ազատվում է տեսչի պաշտոնից, իսկ ապրիլի 2-ին անհետանում, և այդպես էլ մինչև օրս չի պարզվում նրա կորուստը։

Աբովյանը ջերմ հայրենասեր էր. «Ապրել ու մեռնել հայրենիքի համար, ահա այն խնդիրը, որը ես ընտրել եմ պատանեկական տարիներից ի վեր»,— ասում է նա։

Աբովյանը մեծ մանկավարժ էր, հումանիստ, որն իր կյանքի իմաստը, իր երջանկությունը տեսնում էր մանուկ սերնդի կրթության ու դաստիարակության մեջ։ «Մանուկներին կրթելը աշխարհիս երեսին ամեն բան է ինձ համար»։ «Ուսուցիչը պետք է սիրի աշակերտին այնպես, ինչպես հայրը որդուն»,— գրում է նա։

Աբովյանը Անդրկովկասի ժողովուրդների բարեկամության ջերմ պաշտպաններից էր և անձամբ մտերմական կապեր ուներ ադրբեջանական նշանավոր գրող, լուսավորիչ Միրզա Ֆաթալի Ախունդովի, բանաստեղծ Միրզա Շաֆու և ուրիշների հետ։ Աբովյանը ջերմորեն պաշտպանում էր ռուս և հայ ժողովուրդների բարեկամության գաղափարը, հայ ժողովրդի բախտը անխզելիորեն կապում Ռուսաստանի հետ։

Իր բեղմնավոր մանկավարժական գործունեության հետ միաժամանակ Աբովյանը զբաղվել է գրական ու գիտական աշխատանքով։ Հայերեն, ռուսերեն և գերմաներեն լեզուներով նա գրել է բազմաթիվ աշխատություններ ու հոդվածներ, առաջին անգամ կազմել է աշխարհաբար դասագրքեր։ Չափազանց հարուստ է նրա թողած գրական ժառանգությունը, որը, սակայն, միայն սովետական կարգերում ըստ արժանվույն գնահատվեց և դարձավ ժողովրդի սեփականությունը։

Աբովյանը գրել է բանաստեղծություններ, պատմվածքներ, առակներ, պիեսներ։ Թարգմանություններ է կատարել Հոմերոսից, Գյոթեից, Շիլլերից, Կարամզինից, Կռիլովից, Դիմիտրևից, Խեմնիցերից։ Անձամբ ծանոթ է եղել Ժուկովսկու հետ։

Աբովյանի ստեղծագործության թագն ու պսակը նրա հռչակավոր «Վերք Հայաստանի, ողբ հայրենասերի» պատմական վեպն է։

«Վերք Հայաստանի» վեպում գեղարվեստորեն վերարտադրված են XIX դարի առաջին քառորդի պատմական իրադարձությունները, հայ ժողովրդի ծանր, մղձավանջային դրությունը պարսիկ խանների տիրապետության շրջանում, հայերի ազատագրական ձգտումներն ու հայ-ռուսական միացյալ կռիվները պարսկական զավթիչների դեմ, Երևանի գրավումը և այլն։

Աբովյանը այստեղ հանդես է գալիս որպես ջերմ հայրենասեր և դրվատում է Ռուսաստանի կատարած դրական դերը հայ ժողովրդին պարսկական դաժան լծից ազատագրելու գործում։ «Օրհնվի էն սհաթը,— ասում է Աբովյանը,— որ Ռսի օրհնած ոտը հայոց լիս աշխարհը մտավ ու ղզլբաշի չար շունչը մեր երկրիցը հալածեց»։

«Վերք Հայաստանի» պատմական վեպի հիմնական մոտիվը հայրենասիրությունն ու ազատասիրությունն է, հայրենիքը և ժողովուրդը օտար բռնակալների լծից ազատագրելու վեհ գաղափարը, որն Աբովյանը խտացրած ձևով արտահայտել է հետևյալ քառյակում.

Վայ էն ազգին, որ աշխարհումս անտեր ա,
Վայ էն երկրին, որ թշնամու գերի ա,
Վայ էն խալխին, որ ինքն իր կյանքն, աշխարքը
Չի պահպանիլ ու հարամու ձեռ կտա։

Մի այլ տեղ Աբովյանը գրում է. «Շունչդ տուր, կյանքդ, բայց քո հայրենիքը ոչ ոքի մի տուր»։

«Վերք Հայաստանի»-ն աշխարհաբար լեզվով գրված առաջին վեպն է հայ իրականության մեջ։ Դա ինչպես գեղարվեստական, այնպես էլ պատմական մեծ արժեք ներկայացնող գործ է, որով սերունդներ են դաստիարակվել։

Խ. Աբովյանը հայ ժողովրդի պատմության նոր դարագլխի ամենախոշոր դեմքն է։ 1830—1840-ական թվականներին նա հիմք դրեց հայ հասարակական մտքի դեմոկրատական-լուսավորական ուղղության։ «Վերք Հայաստանի»-ն հանդիսացավ այդ նոր ուղղության մանիֆեստը։

Խ. Աբովյանը մեծ չափով առաջ մղեց հայ գրականությունը, հայոց լեզուն, հայ հասարակական միտքը։ Նա լուսավոր ճանապարհ բացեց գալիք սերունդների համար։

ԲԱԺԻՆ ԵՐԿՐՈՐԴ

ՖԵՈԴԱԼԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՔԱՅՔԱՅՈՒՄԸ ԵՎ ԿԱՊԻՏԱԼԻԶՄԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ (XIX ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍ)

VII ԳԼՈՒԽ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ 1850—1860-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

1. ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Անցում ֆեոդալիզմից կապիտալիզմին

XIX դարի առաջին կեսին հայ ժողովրդի հասարակական-քաղաքական կյանքում տեղի ունեցած պատմական շրջադարձը՝ Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին, խոշոր նշանակություն ունեցավ նաև նրա սոցիալ-տնտեսական կյանքի հետագա զարգացման համար։ Դարի երկրորդ կեսից Արևելյան Հայաստանը, ողջ Անդրկովկասի հետ միասին, բռնեց ֆեոդալիզմից կապիտալիզմին անցնելու ուղին, որն առաջընթաց մի խոշոր քայլ էր նրա բազմադարյան պատմության մեջ։

XIX դարի 50—60-ական թվականները ջրբաժան գիծ հանդիսացան հին ու նոր կարգերի, ֆեոդալական ու կապիտալիստական ֆորմացիաների միջև։

Ֆեոդալական ֆորմացիայի ընդերքում վաղուց առաջացած կապիտալիզմի տարրերն այդ շրջանում թևակոխեցին իրենց զարգացման նոր փուլը։ Ամբողջ միջնադարում, երկար ու ձիգ դարեր շարունակ տիրապետող ֆեոդալական հարաբերությունները տեղի տվեցին նոր, կապիտալիստական հարաբերություններին։ Արտադրողական ուժերի զարգացմանը համապատասխան, աստիճանաբար փոխվեցին նաև արտադրական հարաբերությունները։

Ֆեոդալիզմից կապիտալիզմին անցնելու պատմական պրոցեսը Հայաստանում և ամբողջ Անդրկովկասում սերտորեն կապված էր Ռուսաստանի սոցիալ-տնտեսական կյանքի զարգացման հետ։ XIX դարի կեսե-

ին, հատկապես 1861 թվականի գյուղացիական ռեֆորմից հետո, Ռուսաստանում բուռն թափով զարգացող կապիտալիզմը վճռական նշանակություն ունեցավ Անդրկովկասում ֆեոդալիզմի քայքայման և կապիտալիզմի զարգացման համար: Առանց Ռուսաստանի, ծայրաստիճան հետամնաց ֆեոդալական երկրների շրջապատում, Անդրկովկասի ժողովուրդները հազիվ թե կարողանային այդքան կարճ ժամանակամիջոցում ազատագրվել ֆեոդալիզմի դարավոր կապանքներից և կանգնել կապիտալիզմի ուղու վրա: Համառուսական մասշտաբով զարգացող կապիտալիզմի պայմաններում միայն Անդրկովկասը կարողացավ ֆեոդալիզմից անցնել կապիտալիզմին:

Թուրքիայի տիրապետության տակ գտնվող Արևմտյան Հայաստանի օրինակը, այս տեսակետից, շատ բնորոշ է: Արևելյան Հայաստանը, ազատագրվելով հետամնաց ֆեոդալական Պարսկաստանի լծից և Ռուսաստանին միանալով, մի քանի տասնամյակի ընթացքում կարողացավ ֆեոդալիզմից անցնել կապիտալիզմին, հասնել զարգացման ավելի բարձր աստիճանի: Իսկ Արևմտյան Հայաստանը չկարողացավ ազատագրվել Թուրքական լծից, մնաց Թուրքիայում տիրող ֆեոդալական հետամնաց կարգերում, տնտեսական զարգացման համեմատաբար ցածր աստիճանի վրա:

1850—1860-ական թվականները բեկման տարիներ հանդիսացան հայ ժողովրդի պատմության մեջ: Էական փոփոխություններ կատարվեցին երկրի սոցիալ-տնտեսական կյանքի, ազատագրական պայքարի, հասարակական մտքի, կուլտուրայի, լեզվի, գրականության ու արվեստի բոլոր բնագավառներում:

Կապիտալիզմի մուտքը գյուղ քայքայեց բնատնտեսական հարաբերությունները, ընդլայնեց ու ամրապնդեց ներքին և արտաքին տնտեսական կապերը: Կապիտալիզմի զարգացումը լուրջ հարվածներ հասցրեց գյուղական համայնքին ու համայնական հողատիրությանը: Ուժեղացավ գյուղացիության հողազրկման, պաուպերիզացիայի ու սոցիալական շերտավորման պրոցեսը: Քայքայվող գյուղացիները ստիպված վաճառում էին իրենց հողաբաժինը և դիմում արտագնացության կամ բատրակության: Երևանի նահանգից միայն 1869 թվականին արտագնացության է դիմել ավելի քան 2500 մարդ:

Կապիտալիստական հարաբերությունների զարգացման հետևանքով միանգամից բարձրանում է փողի դերը:

Փողն ու փոխանակությունը XIX դարի երկրորդ կեսին գնալով ավելի ու ավելի էին ընդլայնում իրենց ազդեցության ոլորտը: Ֆեոդալական հասարակարգը աստիճանաբար իր տեղը զիջում էր կապիտալիստական հասարակարգին, Արևելյան Հայաստանում և ամբողջ Անդրկովկասում սկսվում էր կապիտալիզմի դարաշրջանը:

Սոցիալ-տնտեսական կյանքի զարգացումը

Հայաստանի տնտեսական կյանքի զարգացումը XIX դարի կեսերին ավելի նկատելի դարձավ: 1850—1860-ական թվականներին գյուղատնտեսության, արհեստի, առևտրի ու արդյունաբերության մեջ զգալի տեղաշարժեր կատարվեցին: Երկրի տնտեսական կյանքն ավելի աշխուժացավ, ժողովրդի կենսամակարդակն սկսեց բարձրանալ:

1830—1860 թվականներին, 40 տարվա ընթացքում, ցանքսերի ընդհանուր տարածությունն աճեց 2,5 անգամ, այգիների տարածությունը՝ ավելը քան 14 տոկոսով, իսկ անասունների գլխաքանակը՝ մոտ 2 անգամ:

Անցյալի հետ համեմատած զգալի չափով բարձրանում է նաև գյուղատնտեսության մեջ բերքատվությունը: Ցորենի և գարու համախառն արտադրանքն աճում է մոտ 3 անգամ, բրնձինը՝ 2,5 անգամ, բամբակինն ու վուշինը՝ մոտ 4 անգամ:

1860-ական թվականներին Երևանի նահանգում առանձնապես ուժեղ թափով զարգանում է բամբակի արտադրությունը. 1861 թ. արտադրվում է 30 հազար փութ, 1863 թ.՝ 150 հազար, 1864 թ.՝ մոտ 300 հազար:

Բամբակի արտադրության աճը կապված էր Ռուսաստանում արագ թափով զարգացող ֆաբրիկա-գործարաններին հումք մատակարարելու, այսպես կոչված բամբակի սովի հետ: Հայաստանի բամբակի մեծ մասն արտահանվում էր Ռուսաստան և ուրիշ երկրներ, իսկ մի մասը օգտագործվում տեղական կարիքների համար:

1870 թվականի վիճակագրական տվյալներով Երևանի նահանգում ցորենի ցանքսերի տարածությունը կազմում էր 46 տոկոս, գարունը՝ 22, բամբակինը՝ 12, բրնձինը՝ 10, այլ կուլտուրաներինը՝ 10: Ցանքատարածությունների մոտ 3/4-ը զբաղեցնում էին հացահատիկային, իսկ 1/4-ը՝ տեխնիկական կուլտուրաները:

Հայաստանը լինելով գերազանցապես գյուղատնտեսական երկիր, բնակչության մոտ 90 տոկոսը զբաղվում էր հողագործությամբ, անասնապահությամբ և այգեգործությամբ: Քաղաքային, ինչպես և գյուղական բնակչության որոշ մասը զբաղվում էր նաև արհեստներով ու առևտրով:

1850—1860-ական թվականներին արհեստները դեռևս ապրում էին իրենց վերելքի շրջանը. աճել էր արհեստավորների թիվը, բարձրացել նրանց արտադրանքի քանակն ու որակը: Արհեստի որոշ ճյուղերում (քարտաշություն, դերձակություն, կոշկակարություն և այլն) արհեստավորների թիվն աճել էր 4—6 անգամ: Պաշտոնական վիճակագրական տվյալների համաձայն 1863 թվականին Երևանի նահանգում արհեստավորների թիվը կազմում էր 9500 մարդ, որից քաղաքներում՝ 5000, գյու-

ղերում՝ 4500։ Զգալի թվով արհեստավորներ աշխատում էին համքարությունների դուրս։

Նահանգի քիչ թե շատ աչքի ընկնող արհեստագործական և առևտրա-արդյունաբերական կենտրոններն էին Երևանը և Ալեքսանդրապոլը։ 1860-ական թվականներին Ալեքսանդրապոլում արհեստավորական և առևտրական համքարությունների մեջ ընդգրկված էր մոտ 2900 մարդ, իսկ Երևանում՝ 2200 մարդ։

XIX դարի վերջին քառորդին, երբ բուրժուական հարաբերությունները ավելի ու ավելի են զարգանում ու ամրապնդվում, աճում է ռուսական և արևմտա-եվրոպական ֆաբրիկա-գործարանային ապրանքների մուտքն Անդրկովկաս, արհեստներն ու համքարություններն սկսում են քայքայվել ոչ անկում ապրել։

Արհեստավորները հեշտությամբ չէին զիջում իրենց դիրքերը. նրանք համառ պայքար էին մղում արհեստի ու համքարությունների պահպանման համար։ Այս տեսակետից շատ ուշագրավ են Թիֆլիսի արհեստավորների 1865 թվականի հունիսյան ելույթները։

Թիֆլիսը Անդրկովկասի ամենախոշոր արհեստավորական և առևտրական կենտրոնն էր։ Արհեստավորների ու առևտրականների ճնշող մեծամասնությունը հայեր էին։ 1865 թվականին Թիֆլիսի քաղաքային ինքնավարությունը 25 տոկոս լրացուցիչ հարկ է դնում համքարությունների վրա։ Դա մեծ դժգոհություն է առաջ բերում արհեստավորական և առևտրական համքարությունների մեջ։ Հունիսի 15-ին և 24-ին նրանք բողոքի ցույցեր են կազմակերպում և հրաժարվում լրացուցիչ հարկ վճարելուց։ Ցույցերին վերջ տալու համար ուստաբաշիներին կանչում են քաղաքային ոստիկանատուն և բանտարկում։

Հունիսի 27-ին Թիֆլիսի բոլոր համքարությունները գործադուլ են հայտարարում, փակում են արհեստանոցներն ու խանութները և, ավելի քան 10 հազար հոգի, բողոքի հսկա ցույց կազմակերպում ոստիկանատան առաջ, պահանջում ազատել իրենց ուստաբաշիներին։

Ոստիկանապետը և դեպքի վայրը եկած գեներալ-ադյուտանտ իշխան Օրբելիանին հրամայում են ցուցարարներին ցրվել։ Բայց նրանք չեն ենթարկվում։ Ցուցարարները հարձակվում են քաղաքագլուխ Շերմազան Վարդանյանի տան վրա և քարուքանդ անում։ Քաղաքագլուխը կնոջ շորեր հագած մի կերպ կարողանում է փախչել և ազատվել։ Այնուհետև ցուցարարները հարձակվում են հարկահավաք, իր խարդախություններով հայտնի Բաժբեուք Մելիքովի տան վրա, ավերում են տունը և սպանում նրան։ Ցույցեր են տեղի ունենում նաև հունիսի 28-ին և 29-ին։

Թիֆլիսի արհեստավորների և դեմոկրատական մյուս խավերի առաջին մասսայական այս ելույթը ցարական կառավարությունը ճնշեց

զենքի ուժով, բանտարկվեցին և արտաքսվեցին ղեկավարներից շատերը, սահմանափակվեցին համքարությունների իրավունքները։

1850—1860-ական թվականներին լայն թափ ստացավ նաև ներքին և արտաքին առևտուրը։ Ապրանքափոխանակային և առևտրական սերտ կապեր ստեղծվեցին Անդրկովկասի ներքին մարզերի միջև, ինչպես և հարևան Թուրքիայի, Պարսկաստանի ու Դաղստանի հետ։ Առևտրական կապերը գնալով ավելի ու ավելի աշխուժացան Ռուսաստանի և Արևմտյան Եվրոպայի հետ։ Եվրոպական ապրանքների ներմուծումն Անդրկովկաս աճեց ավելի քան 12 անգամ։ Դրան հակառակ ասիական ապրանքներինը՝ նվազեց։ Արտաքին առևտուրն ընդհանրապես եռապատկվեց ու քառապատկվեց։

XIX դարի 50—60-ական թվականներին նկատելի տեղաշարժեր են կատարվում նաև Երևանի նահանգի առևտրի ու արդյունաբերության մեջ։ Նահանգի քիչ թե շատ աչքի ընկնող առևտրա-արդյունաբերական կենտրոններն էին Երևանը և Ալեքսանդրապոլը, մասամբ նաև մյուս երեք քաղաքները՝ Նախիջևանը, Օրդուբադն ու Նոր Բայազետը։ Պղնձի արտադրության կենտրոններն էին Ալավերդին ու Ղափանը, իսկ աղինը՝ Կողբը և Նախիջևանը։

1850—1860-ական թվականներին Հայաստանում ֆաբրիկա-գործարանային խոշոր արդյունաբերություն դեռևս գոյություն չուներ։ Պաշտոնական վիճակագրության մեջ բերված «ֆաբրիկա-գործարանները» ընդհանրապես նայնագործական, արհեստագործական տիպի մանր ձեռնարկություններ էին, որտեղ տիրապետողը ձեռքի աշխատանքն էր։ Ռուսաստանից մեքենաներ ներմուծվեցին միայն 1860-ական թվականներից սկսած, այն էլ շատ սահմանափակ քանակությամբ։

1864 թվականին Երևանի նահանգում կար 14 տեսակի 424 ձեռնարկություն, որտեղ աշխատում էին 2672 բանվոր և տալիս տարեկան մոտ 404 հազար ռուբլու արտադրանք։ 1865 թվականին ձեռնարկությունների թիվը հասնում է 451-ի, բանվորներինը՝ 2219-ի, արտադրանքը՝ 557 հազար ռուբլու։ Ինչպես տեսնում ենք, 1865 թվականին չնայած բանվորների թիվը պակասում է, այնուամենայնիվ, արտադրանքն ավելանում է։ 1864 թվականի 952 ռուբլի տարեկան միջին արտադրանքը 1865 թվականին հասնում էր 1235 ռուբլու։

Ավելի արագ թափով է զարգանում պղնձի և աղի արտադրությունը։ Հայաստանի պղնձաձուլական գործարանները (Ալավերդի, Շամլուղ, Ախթալա, Սիսիմադան, Կավարտ, Փիրդոուդան, Ագարակ, Հալիձոր) 1857 թվականին արտադրում են 6460 փութ պղինձ, իսկ 1867 թվականին՝ 16952 փութ։ Պղնձի արտադրությունը տասը տարում գրեթե եռապատկվում է։ Զանգեզուրի պղնձարդյունաբերության մեջ աճն ավելի բարձր էր։

Պղնձարդյունաբերության մեջ աշխատող բանվորների թիվը 1863 թվականին կազմում էր 1064 հոգի, իսկ 1866-ին՝ 1657։

Հայաստանի հարուստ աղահանքերը հայտնի էին պատմական վաղ ժամանակներից։ XIX դարում աղի արտադրությունը գնալով ավելի ու ավելի ընդարձակվեց։ Կողբի աղահանքերից 1852 թվականին արտահանվել է 530 հազար փութ, 1860-ին՝ 827 հազար, 1870-ին՝ 1 միլիոն 67 հազար։ Նախիջևանի աղահանքերից 1852 թվականին արտադրվել է 203 հազար փութ, 1860-ին՝ 204 հազար, 1870-ին՝ 174 հազար։ Այսպիսով, 1850—1860-ական թվականներին աղի արտադրությունն աճում է մոտ 70 տոկոսով։ 1868 թվականից աղի արտադրության մեջ մտցվում է ազատ վարձու աշխատանք։

Հայաստանի սոցիալ-տնտեսական կյանքի, մասնավորապես առևտրի ու արդյունաբերության զարգացմանը մեծապես նպաստում է նաև ճանապարհների շինարարությունը։

1865 թվականին սկսվում է Թիֆլիս—Երևան—Ջուլֆա խճուղու կառուցումը՝ ավելի քան 500 կիլոմետր երկարությամբ։ Տասը տարվա ընթացքում ավարտվում է Թիֆլիս-Դիլիջան—Երևան խճուղու կառուցումը։ 1870-ական թվականներին արագ թափով կառուցվում է Դիլիջան—Ղարաքիլիսա—Ալեքսանդրապոլ ռազմական նշանակություն ունեցող խճուղին, որը, սակայն, լրիվ չի ավարտվում՝ 1877 թթ. ռուս-թուրքական պատերազմի պատճառով։

Հետագայում կառուցվում է Երևան—Էջմիածին, Ելենովկա—Բայազետ, Ախտա—Ծաղկաձոր, Նախիջևան—Բիչանակ, Շուշի—Գորիս—Նախիջևան ճանապարհները։

1864 թվականին հեռագրական կապ է հաստատվում Թիֆլիսի և Երևանի միջև։

Երկրի սոցիալ-տնտեսական կյանքում տեղի ունեցող այս և նմանօրինակ այլ փոփոխությունները որոշ պայմաններ են ստեղծում նաև քաղաքների զարգացման համար։ Ճիշտ է, շատ դանդաղ, բայց աճում է քաղաքների բնակչությունը, քաղաքային բյուջեն, տնտեսությունն ու կուլտուրան, առաջանում են նոր քաղաքներ։ 1850 թվականին Նոր Բայազետը դառնում է գավառական քաղաք։

1862—1872 թվականներին Երևանի նահանգի հինգ քաղաքների բնակչությունը հետևյալ պատկերն ունի.

	1862 թ.	1872 թ.
Երևան	12170	15040
Ալեքսանդրապոլ . .	14935	20600
Նախիջևան . . .	6189	8772
Նոր Բայազետ . . .	4160	4870
Օրդուբադ	4001	4321
Ընդամենը՝	41453	53603

Այսպիսով, տասը տարվա ընթացքում Երևանի նահանգի քաղաքային բնակչությունն ավելանում է 12150 մարդով կամ մոտ 13 տոկոսով։ 1860-ական թվականներին Երևանի նահանգի քաղաքային բնակչությունը ամբողջ աղգաբնակչության 10 տոկոսից պակաս էր։ Նահանգի աղգաբնակչության ընդհանուր թիվը այդ շրջանում գրեթե եռապատկվել էր։

2. ՂՐԻՄԻ ՊԱՏԵՐԱԶՄԸ ԵՎ ՀԱՅԵՐԸ

Արևելյան ճգնաժամը

XIX դարի կեսերին Արևելյան հարցն իր ամբողջ հասակով կանգնեց մեծ տերությունների առջև։ Անգլո-ֆրանսիական դաղութարարները ձգտում էին իրենց ազդեցության տակ գցել Թուրքիան և ամբողջ Մերձավոր արևելքը, Ռուսաստանից կտրել Ղրիմը և Կովկասը։ Թուրքերն իրենց հերթին երազում էին համեղ պատառ ձեռք բերել՝ զավթել Կովկասը։

Ցարական Ռուսաստանը ձգտում էր ամրապնդել իր դիրքերը Բալկաններում և նեղուցներում, ազատ ելք ունենալ դեպի Միջերկրական ծով, նոր տերիտորիաներ ձեռք բերել Մերձավոր արևելքում։

Այսպիսով, պատերազմի նախօրեին Արևելյան հարցի շուրջը, մի կողմից Անգլիայի, Ֆրանսիայի ու Թուրքիայի, իսկ մյուս կողմից՝ Ռուսաստանի միջև ստեղծվել էր շահերի սուր բախում, որը և նրանց հանգեցրեց պատերազմի։ Ղրիմի կամ Արևելյան պատերազմը անարդարացի պատերազմ էր։ Ինչպես Ռուսաստանը, այնպես էլ Անգլիան, Ֆրանսիան և Թուրքիան զավթողական, ագրեսիվ նպատակներ էին հետապնդում։

Պատերազմական գործողությունները Կովկասյան ռազմաճակատում

1853 թվականի հոկտեմբերին Թուրքերը, Անգլիայի ու Ֆրանսիայի դրդմամբ, սկսում են պատերազմը։ Թուրքական զորքերը միաժամանակ հարձակման են անցնում Բալկանյան և Կովկասյան ռազմաճակատներում։

Կովկասյան ռազմաճակատում թուրքական զորքերը, ներխուժելով Հայաստանի և Վրաստանի սահմանամերձ շրջանները, անխնա կոտորում էին խաղաղ բնակիչներին, կողոպտում ու ավերում գյուղերն ու քաղաքները։ Սև ծովից մինչև պարսկական սահմանը ընկած ռազմաճակատի գոտում, հատկապես Սուրմալուի, Շիրակի, Ախալցխայի գավառներում, թուրքական զորքերը պատերազմի սկզբում մեծ կորուստներ պատճառեցին տեղական բնակիչներին։

Կովկասյան կորպուսի հրամանատար գեներալ Վ. Բեհբութովը, ականատես լինելով նման տեսարանների, 1853 թվականին Ալեքսանդրապոլից Էջմիածին՝ կաթողիկոսին հետևյալն է գրում. «Ցավալի է ինձ ականատես լինել մեր ազգի դառնակրությունների... Առավել ևս Շիրակի ու

Սուրմալուի գավառների մեր խեղճ ազգի դառն վիճակին, որ ծագել է օսմանյան զորքերի հարձակման հետևանքով»։

Մի ուրիշ ականատես, ռուս զինվորական Միրսկին, 1853 թվականին Ալեքսանդրապոլից գրում է. «Սահմանամերձ գյուղերի բնակիչները փախուստի էին դիմում՝ բաշիբոզուկների և քրդերի հարձակումներից փրկվելու համար։ Ճանապարհները լցված էին ընտանիքներով ու զույգով բեռնված սայլերով։ Բոլոր կողմերից քշում էին անասուններին։ Հայկական շատ գյուղեր արդեն կողոպտվել էին, մի քանիսը սրի քաշվել։ Պատկերը սարսափելի էր»։

1853 թ. հոկտեմբերին թուրքական 40-հազարանոց կորպուսը Աբդի փաշայի հրամանատարությամբ Կարսից հարձակվում է Ալեքսանդրապոլի վրա։ Ճանապարհին թուրքերը ներխուժում են Բայանդուր գյուղը, կոտորում ու գերի վերցնում բնակիչների մեծ մասին։

Գեներալ Բեհբութովը պաշտպանական և հետախուզական նպատակներով Բայանդուր է ուղարկում գեներալ Օրբելիանու յոթհազարանոց ջոկատը, որտեղ կային շուրջ 800 հայեր։ Բայանդուրի մոտ թուրքերն անակնկալ հարձակվում են ռուսների վրա. սկսվում է մի անհավասար ու արյունահեղ զոտեմարտ։ Ռուսները ծանր կորուստների գնով արիությամբ պաշտպանվում են, մինչև օգնության են հասնում հիմնական ուժերը։

1853 թ. նոյեմբերի 14-ին ռուսական զորքերը գեներալ Բեհբութովի հրամանատարությամբ անցնում են հակահարձակման։ Անցնելով Ախուրյան գետը, նրանք գրավում են Բաշ-Շորագյալը և, հետապնդելով նահանջող հակառակորդին, հասնում Բաշ-Կադրքլար։ Նոյեմբերի 14-ին ռուսական մի այլ զորաբաժին գեներալ Անդրոնիկովի հրամանատարությամբ, հայերի ու վրացիների ակտիվ մասնակցությամբ, ջարդում և ետ է շրջբրտում Ախալցխայի վրա արշավող Ալի փաշայի 15-հազարանոց բանակին։

Կովկասյան ռազմաճակատում 1853 թվականի ամենախոշոր ճակատամարտը տեղի է ունենում Բաշ-Կադրքլար գյուղի մոտ։ Ռուսական 10-հազարանոց զորամասը գեներալ Բեհբութովի հրամանատարությամբ նոյեմբերի 19-ի լուսաբացին հարձակվում է թուրքական 36-հազարանոց կորպուսի վրա։ Կորպուսի նոր հրամանատար Ահմեդ փաշան, նկատի ունենալով իր զորքերի թվական գերակշռությունը, գոռոզամտորեն հայտարարում է. «Ռուսները խելքները կորցրել են. ալլահը վկա, բոլորին պիտի ջարդեմ»։ Նա հրամայում է թոկեր պատրաստել գերիներին կապելու և սուլթանին նվեր ուղարկելու համար։

Բայց, ինչպես ասում են, շաբաթն ավելի շուտ եկավ, քան ուրբաթը։ Ռուսական քաջարի զորքերը վաղ առավոտից մինչև ժամը 3-ը համառ ու վճռական մարտեր մղելով թշնամու գերազանց ուժերի դեմ, ծանր կորուստներ պատճառեցին նրանց և հարկադրեցին փախչել դեպի Կարս։

Բաշ-Կադրքլարի ճակատամարտում թուրքերը կորցրին ավելի քան 6 հազար մարդ, 24 հրանոթ, մեծ քանակությամբ զենք ու ռազմամթերք։ Ռուսներից սպանվեց 317 մարդ, վիրավորվեց՝ 926։

Ռազմական մասնագետները շատ բարձր են գնահատել Բաշ-Կադրքլարի ճակատամարտի նշանակությունը։ Գեներալ-լեյտենանտ Բոգդանովիչը ասում է. «Բաշ-Կադրքլարի հաղթանակը խոշոր նշանակություն ունեցավ ամբողջ Կովկասյան ռազմաճակատի համար... Բնականից մեծ ընդունակություններով օժտված Բեհբութովն աչքի ընկավ իր երևելի վճռականությամբ ու քաջությամբ»։

Բաշ-Կադրքլարի ճակատամարտում տարած հաղթանակի համար Բեհբութովը պարգևատրվում է Գեորգի երկրորդ աստիճանի շքանշանով։

1853 թվականի պատերազմական գործողություններն ակնհայտորեն ցույց տվեցին, որ Թուրքիան մենակ ի վիճակի չէ կռվել Ռուսաստանի դեմ։ Չկարողանալով այլևս հաշտվել ռուսական զորքերի տարած հաղթանակների հետ, Անգլիան ու Ֆրանսիան, ինչպես և սարդինական փոքրիկ թագավորությունը, թաքնվելով «Թուրքիայի պաշտպանության» քողի տակ, 1854 թվականի մարտին մտան պատերազմի մեջ։ Նրանք միաժամանակ սկսեցին ավելի շատ զենք ու ռազմամթերք մատակարարել Թուրքիային ու Շամիլին, որը վաղուց ապստամբվել և կռվում էր ցարական կառավարության դեմ։

1854 թ. սեպտեմբերին դաշնակիցները դեսանտ իջեցրին Ղրիմում և պաշարեցին Սևաստոպոլը։ Սևաստոպոլի կայազորը ծանր ու դժվարին պայմաններում 11 ամիս շարունակ հերոսաբար պաշտպանվեց, փառքով պսակեց ռուս ծովայինների անունը։

1854—1855 թվականներին, երբ Ղրիմի ռազմաճակատում հաղթանակի նժարը արդեն իսկ թեքվել էր դաշնակիցների կողմը, Կովկասյան ռազմաճակատում պարտության դառն մրուրը շարունակում էին քամել թուրքերը։ Ռուսական զորքերը, տեղական ժողովուրդների օգնությամբ, ինչպես միշտ, հաղթանակ-հաղթանակի հետևից էին տանում։

1854 թվականին դաշնակիցների օգնությամբ համալրած իրենց բոլոր ուժերը թուրքերը կենտրոնացրին Կովկասյան ռազմաճակատում։

Ռուսական զորքերն ամբողջությամբ կաշկանդված էին Ղրիմում։ Կովկասյան կորպուսը դրսից գրեթե չհամալրվեց. մոբիլիզացվեցին տեղական ուժերը։

1854 թ. հուլիսի 24-ին Զարիֆ Մուստաֆա փաշայի մոտ 60-հազարանոց բանակը Կարսի շրջանի Քյուրուկդարա գյուղի մոտ հարձակվում է Բեհբութովի 18-հազարանոց զորամասի վրա։ Ճակատամարտն սկսվում

է առավոտյան ժամը 5-ին երկուստեք հրետանային ուժեղ կրակով։ Թուրքերն օգտվելով իրենց թվական գերակշռությունից փորձում են պաշարել և գերի վերցնել ռուսական հեծելազորը, բայց հաջողություն չեն ունենում։ Նրանց բոլոր գրոհները ետ են մղվում։

Նկարագրելով Քյուրուկդարայի ճակատամարտը ականատես հայ հեղինակներից մեկը գրում է. «Այնտեղ պետք է տեսնեիք քաջաբազուկ ռուս զորքերի զորությունը։ Այնտեղ պետք է տեսնեիք մեր քաջամարտիկ հեծելազորի ու հետևակազորի կորովությունը, նիզակների ու հրացանների շողշողումը, շաչյունն ու շառաչյունը։

Ընկնողների գոչմունքը, վիրավորների կերկերուն հառաչանքները և փախչողների անռելի ձայները լցնում էին Քյուրուկդարայի ձորը»։

Քյուրուկդարայի ճակատամարտն ավարտվում է ռուսական զորքի փայլուն հաղթանակով։ Թուրքերը մարտի դաշտում թողնելով ավելի քան 2200 սպանված, 2000 գերի, 15 հրանոթ, մեծ քանակությամբ զենք և ռազմամթերք, խուճապահար փախչում են Կարս։ Ռուսների կորուստն էր՝ 599 սպանված, 483 վիրավոր։

Նիկոլայ I-ը տեղեկանալով Քյուրուկդարայի հաղթանակի մասին, ասում է. «Բեհբութովն ուզում է ինձ զարմացնել իր հաղթանակներով, ես էլ նրան կզարմացնեմ իմ պարգևներով»։ Գեներալ Բեհբութովը պարգևատրվում է Անդրեյ Նախավկայի շքանշանով, որից Ռուսաստանում մի քանի բարձրաստիճան զինվորականներ էին ստացել, իսկ Կովկասյան պատերազմների մասնակիցների և հայ զինվորականների մեջ նա առաջինն էր։

Քյուրուկդարայի ճակատամարտը ռուսական զորքերի 1854 թվականի ամենախոշոր հաղթանակն էր։ Կովկասյան ռազմաճակատի մի շարք այլ տեղամասերում (Հին Բայազետում, Զոլոկ գետի մոտ և այլն) նույնպես ռուսական զորքերը ծանր հարվածներ են հասցնում թուրքերին։

1856 թվականին Ֆրիդրիխ Էնգելսը խոսելով Կովկասյան ռազմաճակատի պատերազմական գործողությունների մասին գրում է. «Հայկական սարահարթը պաշտպանելու համար կենտրոնացված էր երկու բանակային կորպուս՝ փոքրասիականն ու մեսոպոտամիականը և սիրիական կորպուսի մի մասը։ Այդ զորքերն ուժեղացված էին պահեստի գումարտակներով և կազմում էին քրդական ու բեդվինական անկազմակերպ մեծաքանակ զորամասերի միջուկը։

Սակայն 1853 և 1854 թվականներին Ախալցխայի ու Բայազետի միջև տեղի ունեցած չորս-հինգ անհաջող ճակատամարտերը փշրեցին այդ զորքերի համերաշխությունը և մարտական եռանդը, իսկ հանդերձանքի ու պարենամթերքի բացակայությունը ձմեռային ամիսներին վերջնականապես կազմալուծեց նրանց»[1]։

[1] *К. Маркс и Ф. Энгельс*, Сочинения, т. X, стр. 586.

1855 թվականին Կովկասյան ռազմաճակատում պատերազմական գործողությունները գնում էին հիմնականում Կարսի համար։ Կարսի նշանավոր ամրոցը փակում էր ռուսների ճանապարհը դեպի Էրզրում և բացում թուրքերի ճանապարհը դեպի Թիֆլիս։

1855 թվականի մայիսին Կովկասյան գործող կորպուսի հրամանատար է դառնում Կովկասի նոր փոխարքա Նիկոլայ Նիկոլաևիչ Մուրավյովը։ Բեհբութովը նշանակվում է Կովկասի քաղաքացիական մասի կառավարիչ և Թիկունքի հատուկ զորամասի հրամանատար։

Հունիսի սկզբներին ռուսական զորքերը գեներալ Մուրավյովի հրամանատարությամբ պաշարում են Կարսը։ Սեպտեմբերի 17-ին նրանք գրոհում են Կարսի բերդի վրա, բայց հաջողություն չեն ունենում. ծանր կորուստներ կրելով (մոտ 2300 սպանված, 4800 վիրավոր) ետ են քաշվում։ Այսքան մեծ կորուստ ռուսներն առաջին անգամ էին տալիս։

Հրաժարվելով գրոհի մտքից, Մուրավյովը որոշում է բլոկադայի միջոցով գրավել Կարսը, ինչպես սկզբից ևեթ մտածում էին նրա փորձված գեներալներից Բակլանովը, Կովալևսկին և ուրիշներ։

Արագ վերադասավորելով իրենց ուժերը, ռուսական զորքերը օղակում են Կարսը։ Կարսի կայազորի փաստական ղեկավար, անգլիացի գեներալ Վիլյամսը (Վիլյամս փաշա, թուրքերն անվանում էին նաև Ինգլիզ փաշա) շատ ճիգ ու ջանք է գործադրում Կարսը պաշարումից փրկելու համար, բայց ոչ մի արդյունքի չի հասնում։ Նրա պահանջով դաշնակիցները Օմեր փաշայի հրամանատարությամբ շուրջ 40-հազարանոց դեսանտ են իջեցնում Սուխումի մոտ՝ թիկունքից հարվածելու համար, բայց այդ էլ չի օգնում։

Կարսի թուրքական կայազորի դրությունը գնալով ավելի ու ավելի է ծանրանում։ Ծայր է առնում դասալքությունը. գլուխ են բարձրացնում սովն ու համաճարակը, մասսայական մահացությունը։ Միակ փրկությունը հանձնվելն էր։

1855 թ. նոյեմբերի 13-ին Վիլյամսը ներկայանում է Մուրավյովին և հայտնում Կարսի կայազորի կապիտուլյացիայի պայմանները։ Նոյեմբերի 15-ին ստորագրվում է կապիտուլյացիայի ակտը, իսկ 16-ին՝ ռուսական զորքերը մտնում են Կարս։

Կարսի գրավումը ռուսական զորքերի խոշորագույն հաղթանակն էր։ Թուրքական կայազորն ամբողջությամբ՝ 16 հազար հոգի, գերի է վերցվում, գրավվում է 130 հրանոթ, մեծ քանակությամբ զենք և ռազմամթերք։

Վիլյամսին և մյուս օտարերկրացիներին իրավունք է տրվում գնալ Թուրքիա, վիրավորներին և սովյալներին օգնություն է տրվում։

1856 թ. ապրիլին գրած «Կարսի անկումը» հոդվածաշարում Կարլ Մարքսն ասում է. «Կարսի անկումը շրջադարձային կետ է հանդիսանում

Ռուսաստանի դեմ մղված կարծեցյալ պատերազմի պատմության մեջ»[1]:

Կովկասյան ռազմաճակատում գործող ռուսական զորքերի և տեղական ժողովուրդներից կազմված կամավորական ջոկատների հաղթանակները, հատկապես Կարսի նշանավոր ամրության գրավումը, փշրեցին թուրքական զորքերի մարտական եռանդը և լիովին ձախողեցին Կովկասը գրավելու նրանց ագրեսիվ պլանները: Այդ հաղթանակները որոշ չափով մեղմեցին Ղրիմում գործող ռուսական զորքերի կրած պարտության տպավորությունը, զգալի դեր խաղացին Փարիզի հաշտության պայմանագրի կնքման ժամանակ:

Հայերի մասնակցությունը պատերազմական գործողություններին

Ինչպես նախորդ ռուս-թուրքական պատերազմները, այնպես էլ Արևելյան պատերազմը ազատագրական վառ հույսեր արթնացրին սուլթանական Թուրքիայի լծի տակ հեծող Արևմտյան Հայաստանի բնակչության մեջ:

Արևմտահայերի ճնշող մեծամասնությունը, հատկապես գյուղացիությունը, որն ամենից ավելի վատթար պայմանների մեջ էր գտնվում, ձգտում էր ազատագրվել թուրքական լծից և անցնել Ռուսաստանի տիրապետության տակ, միանալ իրենց արևելահայ եղբայրների հետ: Պատերազմի հենց սկզբից նրանք ոտքի էին կանգնել և օգնում էին ռուս զորքերին՝ իրենց ազատագրությունը կապելով նրանց հաղթանակի հետ:

Հայերը կազմում էին հետևակ և հեծյալ կամավորական ջոկատներ և ակտիվ մասնակցում պատերազմական գործողություններին: Ծանոթ լինելով տեղական պայմաններին, գիտենալով տեղական լեզուներ, նրանք ուղեցույցի և թարգմանչի դեր էին կատարում, հետախուզության գնում, հակառակորդի թիկունքն անցնում, անհրաժեշտ տեղեկություններ բերում և այլն: Բացի այդ, հայ գյուղացիները նյութական օգնություն էին ցույց տալիս ռուս զորքերին, պատսպարում ու խնամում էին վիրավորներին ու հիվանդներին:

Պատերազմի տարիներին հայերը, վրացիներն ու ադրբեջանցիները բացառիկ մեծ դեր խաղացին թիկունքի ապահովության ամրապնդման գործում: Թուրքերն ու նրանց դաշնակիցներն ամեն կերպ աշխատում էին քայքայել Կովկասյան ռազմաճակատում գործող ռուսական զորքերի թիկունքը, խռովություններ ու պատակտումներ առաջ բերել տեղական ժողովուրդների և ռուսների միջև:

Պատերազմի տարիներին Անդրկովկասի համար առանձնապես մեծ վտանգ էր ներկայացնում լեռնականների առաջնորդ Շամիլը, որը Թուրքիայի ու նրա դաշնակիցների հետ միացած, նրանց օգնությամբ կռվում էր Ռուսաստանի դեմ: 1853—1855 թվականներին Շամիլի զորքերը քանիցս հարձակվում են Ադրբեջանի և Վրաստանի վրա, բայց ռուս զորքերի և տեղական ժողովուրդների միացյալ ջանքերով ետ են մղվում: Շամիլի դեմ մղված մարտերում աչքի ընկնող դեր են կատարում ադրբեջանցիներից, վրացիներից, հայերից կազմված ինքնապաշտպանական ջոկատները:

[1] *К. Маркс и Ф. Энгельс,* Сочинения, т. X, стр. 551.

Անդրկովկասի բոլոր ժողովուրդները Ղրիմի պատերազմի ժամանակ թե ու թիկունք հանդիսացան Կովկասյան ռազմաճակատում գործող ռուսական զորքերին, ռազմական, նյութական և բարոյական մեծ օգնություն ու օժանդակություն ցույց տվեցին նրանց:

Ղրիմի պատերազմում իրենց ռազմական արվեստով ու քաջագործություններով ամենից առաջ աչքի ընկան ռուսական բանակի կովկասցի հրամանատարները՝ գործող կորպուսի գլխավոր հրամանատար գեներալ-լեյտենանտ Վ. Օ. Բեհբութովը, գեներալ Անդրոնիկովը, գեներալ Բագրատիոն Մուխրանսկին և ուրիշներ:

Պատերազմի տարիներին ինչպես Արևելյան, այնպես էլ Արևմտյան Հայաստանի մի շարք վայրերում (Երևան, Վաղարշապատ, Ալեքսանդրապոլ, Կարս, Շիրակ, Նախիջևան, Բայազետ, Իգդիր և այլուր) կազմակերպվեցին կամավորական ջոկատներ, որոնք ռուսական զորքերի հետ միասին ամենագործուն մասնակցությունն ունեցան թշնամու դեմ մղվող կռիվներին:

1853 թվականին Վաղարշապատում Գևորգ Մալինցյանի և Ստեփան Սամսոնյանի ղեկավարությամբ ստեղծվում է 300 հոգուց կազմված մի դրուժինա, որն ակտիվ մասնակցություն է ունենում թուրքական զավթիչների դեմ մղված ինքնապաշտպանական կռիվներին և հետագա պատերազմական գործողություններին:

Շիրակի և Փամբակի հայ գյուղացիներից 1853—1854 թվականին կազմավորվում են մի քանի աշխարհազորային և միլիցիոն ջոկատներ, որոնք ոչ միայն արթուն կերպով սահմաններն էին պաշտպանում, այլև դիպուկ հարվածներ հասցնում թուրքական զորքերին, զգալի կորուստներ պատճառում նրանց:

1854 թ. հունիսի սկզբներին 2 հազար հոգուց կազմված թուրքական հեծելազորը հանկարծակի հարձակվում և պաշարում է Բայանդուր գյուղը: Շիրակի հայ կամավորները Թարխանյանի գլխավորությամբ 10 ժամ արիաբար մարտնչում են թուրքերի դեմ, մինչև օգնության են հասնում ռուսական զորքերը: Գեներալ Բեհբութովը հատուկ շնորհակալություն է հայտնում Թարխանյանին և նրա ջոկատին այդ սխրագործության համար:

Ալեքսանդրապոլում 1854 թվականին կազմվում է 300 հոգուց բաղկացած հետևակ և 100 հոգուց կազմված հեծյալ ջոկատ՝ սահմանները և

գյուղացիներին պաշտպանելու, որպեսզի նրանք կարողանան բերքը հավաքել։

1854 թ. գարնանը 500 հոգուց բաղկացած կամավորական մի գունդ է կազմակերպվում Երևանի նահանգի հայ և ադրբեջանական բնակիչներից։ Բացի այդ, նահանգի ազնվականներից ստեղծվում է նաև առանձին բեկական դրուժինա՝ 200 հոգուց բաղկացած։ Մայիսին Երևանի նահանգի Նախիջևանի գավառի հայ բնակիչ Ավետիս Տեր-Գրեկուրովի միջոցներով կազմվում է 125 հոգուց բաղկացած հեծյալ ջոկատ, որը մեկնում է ռազմաճակատ և մասնակցում թուրքերի դեմ մղվող կռիվներին։

Նման գնդեր ու ջոկատներ կազմակերպվում են նաև Անդրկովկասի մյուս քաղաքներում՝ Շուշիում, Շամախիում, Նուխիում, Գանձակում, Թիֆլիսում, Ախալցխայում և այլ վայրերում։ 1855 թվականին Թիֆլիսում ձևավորվում են ավելի քան 6 հազար հոգուց կազմված 6 աշխարհազորային ջոկատներ, որտեղ կային վրացիներ, հայեր, ադրբեջանցիներ, ռուսներ և այլ ազգության պատկանող մարդիկ։

Ուշագրավ է, որ Երևանի նահանգի քրդերից նույնպես կամավորական խմբեր են կազմվում և ուղարկվում Իգդիր՝ Երևանյան ջոկատի հետ ռազմաճակատ մեկնելու համար։ Պատերազմի մասնակից գեներալ Լիխուտինի վկայությամբ, քրդերի համակրանքը ռուսների կողմն էր։ Դա, իհարկե, չի վերաբերվում բոլոր քրդերին, քանի որ, ինչպես հայտնի է, քուրդ բեկերից ու շեյխերից շատերը թուրքերի հետ միացած կռվում էին ռուսների դեմ։

Հայտնի է, որ պատերազմի տարիներին թուրքական կառավարության դեմ քրդական մի հուժկու ապստամբություն ծագեց Եզդանշիրի գլխավորությամբ։ Քրդերին միացան հայերը, ասորիները, արաբները։ Շարժումը գնալով լայն ծավալ ստացավ Բաղդատի ու Վանի միջև ընկած շրջաններում։ 1855 թվականի հունվարին ապստամբները գրավեցին Բաղեշը, Մուշը և մի շարք այլ կարևոր կենտրոններ։ Եզդանշիրի գլխավորած մասսայական տարերային այդ շարժումը թուրքական կառավարությունը ճնշեց Անգլիայի օգնությամբ։

Ականատեսները վկայում են, որ Կարսի պաշարման ժամանակ ինչպես տեղի բնակիչները, այնպես էլ հայ կամավորներն ամեն ինչ անում էին Հայաստանի այդ նշանավոր կենտրոնի ազատագրման համար։ Երիտասարդ գնդապետ Լոռիս-Մելիքովի կամավորական ջոկատը, ինչպես գեներալ Մուրավյովն է վկայում, գիշերային սրընթաց գրոհներ էր գործում թուրքական զորքերի կոմունիկացիաների վրա, կտրում Կարսի պաշարված կայազորին օգնության եկող զորքերի ճանապարհը, նրանց կապը, խլում ռազմամթերքն ու սննդամթերքը։

«Հակառակորդի համար այնքան զգալի չէին փոքր կորուստները,— գրում է Մուրավյովը,— որքան գիշերային տագնապները, որոնց համար

մեծ մասամբ ուղարկվում էր Լոռիս-Մելիքովի կամավորներից մեկը՝ ճարպիկ հայ, միլիցիայի յունկեր Դանիել Հարությունովը։ Նա առանձին հաճույքով էր դուրս գալիս գիշերային ուղևորությունների, իր հետ վերցնելով մի քանի հեծյալներ և ոչ ավելի երեք կամ չորս նռնակային հրթիռներ»։ Ռազմաճակատում Հարությունյանը հայտնի էր «Քաջ Դանիկի» անունով։

1855 թ. օգոստոսին Կարսի շրջակայքում հայ կամավորները Թումանյանի ղեկավարությամբ հարձակվում են թուրքական զորամասերի վրա և գերի վերցնում հրամանատար Ալի փաշային։ Երբ փաշային ներկայացնում են գեներալ Մուրավյովին, նա ասում է. «Սարդար, ինձ գերի վերցնելը հավասար է Կարսը գրավելուն»։

Ղրիմի պատերազմի տարիներին ստեղծված մի քանի տասնյակ կամավորական ջոկատներում ընդգրկված հազարավոր հայ հայրենասերներ ամենուրեք արիությամբ ու քաջությամբ կռվել են թուրքական զավթիչների դեմ՝ իրենց ազատության համար։

Հայերից շատերը պարգևատրվել են մարտական շքանշաններով ու մեդալներով։ Իրենց քաջագործություններով առավել աչքի են ընկել Դ. Հարությունյանը, Գ. Մանուկյանը, Ի. Թարխանյանը, Ս. Սամսոնյանը, Գ. Մալինցյանը, Լոռիս-Մելիքյանը, Դանիելյանը, Թումանյանը, Դոլուխանյանը, Ավետյանը, Տեր-Ստեփանյանը, Արարատսկին, Սահակյանը, Գեղամյանը, Արղությանը և շատ ուրիշներ։

Ուշագրավ է, որ հայերն ինչպես ռազմական, այնպես էլ նյութական օգնություն են ցույց տվել նաև Ղրիմի ռազմաճակատում գործող ռուսական զորքերին։ Օրինակ, Ստավրոպոլի հայերը նվիրել են 4267 ռուբլի, Պյատիգորսկի հայերը՝ 1000 ռուբլի և այլն։

Հայերի մասնակցությունը Ղրիմի պատերազմին բարձր են գնահատել հենց իրենք՝ այդ պատերազմի մասնակից ռուս զինվորականները, ականատես և իրազեկ մարդիկ՝ Ն. Մուրավյովը, Մ. Բոգդանովիչը, Մ. Լիխուտինը, Ֆ. Գեյրոտը և ուրիշներ։ «Հայերը,— գրում է Բոգդանովիչը,— ամբողջ պատերազմի ընթացքում նորից մնում էին ռուսական բանակի ամենաճուալի դաշնակիցները և օգնում էին նրան թե նյութական միջոցներով և թե կամավորներով»։

Հայերի և կովկասյան մյուս ժողովուրդների ակտիվ մասնակցությունը պատերազմական գործողություններին մեծապես նպաստեց ռուսական զորքերի հաղթանակին։ Բայց Կովկասյան ռազմաճակատը օժանդակ նշանակություն ուներ և քանի որ գլխավոր ռազմաճակատում՝ Ղրիմում, գերակշռությունը դաշնակիցների կողմն էր, ուստի ցարական Ռուսաստանը պարտություն կրեց։

Դաշնակիցները՝ Անգլիան, Ֆրանսիան, Սարդինիան և Թուրքիան, 1856 թվականի Փարիզի պայմանագրով Ռուսաստանի իրավունքները

խիստ կերպով սահմանափակեցին։ Անդրկովկասում գրավված բոլոր տերիտորիաները վերադարձվեցին Թուրքիային։ Կարսը վերադարձվեց Թուրքիային, իսկ Սևաստոպոլը, որը 1855 թվականին գրավել էին դաշնակիցները՝ Ռուսաստանին։

Ղրիմի պատերազմը մեծ ազդեցություն ունեցավ ինչպես Ռուսաստանի, այնպես էլ Անդրկովկասի տնտեսական և քաղաքական կյանքի վրա։ Ցարական Ռուսաստանի պարտությունը ակներև դարձրեց ճորտատիրական կարգերի նեխվածությունն ու փտածությունը։ Ղրիմի պատերազմը նպաստեց նաև ռուսական կայսրության մեջ մտնող բոլոր ժողովուրդների, այդ թվում և հայ ժողովրդի հասարակական-քաղաքական կյանքի և ազատագրական շարժումների աշխուժացմանը։

VIII ԳԼՈՒԽ

ՀԱՅ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՀՈՍԱՆՔՆԵՐԸ 1850—1860-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

Արևելյան կամ Ղրիմի պատերազմից հետո Եվրոպայի ու Ասիայի մի շարք երկրների ու ժողովուրդների կյանքում նկատելի փոփոխություններ կատարվեցին։ Արևելյան հարցն ու արևելյան ճգնաժամը, Փարիզի 1856 թվականի պայմանագիրը, Իտալիայի ու Բալկանյան երկրների ազգային-ազատագրական շարժումները, ռուս ժողովրդի հեղափոխական-դեմոկրատական պայքարը, 1863 թ. լեհական ապստամբությունը և համաշխարհային պատմության մյուս նշանակալից իրադարձություններն իրենց որոշակի ազդեցությունն ունեցան նաև հայ կյանքի վրա։

XIX դարի առաջին կեսի համեմատաբար դանդաղ ու խաղաղ զարգացման շրջանին հաջորդում է հայ հասարակական-քաղաքական կյանքի բուռն զարգացման, սուր պայքարի ու բախումների փոթորկալից մի շրջան։ Սոցիալ-տնտեսական հարաբերությունների, քաղաքական ու մշտավոր կյանքի անխիր բոլոր ոլորտներում պայքարը գնում էր հնի ու նորի միջև, իր դարն ապրած կղերա-ֆեոդալական հետամնաց հարաբերությունների վերացման ու կապիտալիստական կարգերի հաստատման համար։

XIX դարի կեսերին ստեղծված ներքին և արտաքին կոնկրետ իրադրության պայմաններում ավելի-ու ավելի սահմանազատվում ու համախմբվում են պայքարող ուժերը, մշակվում են նրանց գաղափարախոսությունը, պայքարի ձևերն ու մեթոդները։ Հասարակության սոցիալական շերտավորման ու դասակարգային պայքարին համապատասխան ձևավորվում են հասարակական-քաղաքական հոսանքները։

Հասարակական հոսանքները, ինչպես ամենուրեք, այնպես էլ հայ իրականության մեջ, սոցիալական և դասակարգային փոխհարաբերությունների ու պայքարի ծնունդ են, որոշակի սոցիալական շերտի, դասակարգի շահերի արտահայտիչ ու պաշտպան։ Հասարակական հիմնական դասակարգերին համապատասխան գոյություն են ունեցել նաև հասարակական-քաղաքական հիմնական հոսանքներ։

1850—1860-ական թվականներին հայ իրականության մեջ պայքարը գնում էր հասարակական մտքի երեք հիմնական ուղղությունների, հասարակական երեք գլխավոր հոսանքների միջև՝ կղերա-ֆեոդալական, լիբերալ-բուրժուական և հեղափոխական-դեմոկրատական։

1. ԿՂԵՐԱ-ՖԵՈԴԱԼԱԿԱՆ ՀՈՍԱՆՔ

Կղերա-ֆեոդալական հոսանքն արտահայտում էր հայ կղերականության, ֆեոդալական, աղայական շահագործող խավերի շահերը։ Այդ հոսանքը հայ կյանքում ամենառեակցիոնն էր՝ ֆեոդալական, միապետական կարգերի, կյանքի հին, իր դարն ապրած ձևերի, կրոնական դոգմաների ջատագովը։

Կղերա-ֆեոդալական հոսանքի պարագլուխներն էին արևելահայերի մեջ Գաբրիել վարդապետ Այվազովսկին (1812—1880), իսկ արևմտահայերի մեջ՝ Հովհաննես Զամուռյանը—Տերոենցը (1801—1888)։ Նրանց գաղափարակիցներից ու գինակիցներից էին Մսեր Մագիստրոս Մսերյանը, Սարգիս արքեպիսկոպոս Ջալալյանը, Ստեփանոս քահանա Մանդինյանը, Առաքել Արարատյանը և ուրիշներ։ Կղերա-պահպանողականներն ունեին իրենց թերթերը։ Մամուլի միջոցով նրանք պրոպագանդում էին իրենց գաղափարները և պայքարում հակառակորդների դեմ։

Կղերա-ֆեոդալական ուղղության ներկայացուցիչները դեմ էին հայ ժողովրդի ազատագրական պայքարին, նրա առաջադիմությանը, աշխարհաբար լեզվին, աշխարհիկ դպրոցին։ Նրանք ամուր կառչել էին հնից ու ամեն կերպ աշխատում էին ժողովրդի առաջ փակել լուսավորության դռները, կասեցնել նրա առաջընթացը։

Կղերա-ֆեոդալական ուղղության ներկայացուցիչները եկեղեցին համարում էին ազգի գոյության միակ հենարանը, կրոնն ու գրաբարը՝ ազգության սյուները։ Նրանք ձգտում էին խավարի մեջ պահել ժողովրդին՝ նրա վրա հեշտ ու հանգիստ իշխելու և շահագործելու համար։ Նրանք աշխատում էին դպրոցը դարձնել եկեղեցու գավիթ՝ մատաղ սերնդին կրոնական ոգով դաստիարակելու, ժողովրդին հլու հնազանդ պահելու համար։

Կղերա-ֆեոդալական ուղղության պարագլուխները կատաղի պայքար էին մղում հայ ժողովրդի ազատության ու առաջադիմության հա-

մար մարտնչողների դեմ։ Նրանք հեղափոխական-դեմոկրատ Մ. Նալբանդյանի ու նրա զինակիցների մոլի հակառակորդներն էին, Մ. Նալբանդյանին և Ստ. Նազարյանին հերետիկոսներ էին անվանում։

Կղերա-ֆեոդալական հոսանքը, որը 1850—1860-ական թվականներին ջախջախիչ հարվածներ ստացավ լուսավորիչներից և հատկապես հեղափոխական-դեմոկրատ Մ. Նալբանդյանից, կապիտալիզմի զարգացման հետևանքով ավելի ու ավելի թուլացավ, մղվեց հետին պլան և կորցրեց իր երբեմնի ազդեցությունը։

Ինչպես կղերա-ֆեոդալական, այնպես էլ լիբերալ-բուրժուական և հեղափոխական-դեմոկրատական հոսանքները միատարր ու միաձույլ չէին։ Թե արևելահայ և թե արևմտահայ իրականության մեջ հասարակական այդ հիմնական հոսանքների ներսում տարբեր ժամանակներում, տարբեր հարցերի նկատմամբ դրսևորվել են արմատական և չափավոր հայացքներ։ Դա արտահայտվել է, օրինակ, կրոնի, քաղաքական կողմնորոշման և այլ հարցերում։ Հասարակական գլխավոր հոսանքների հետ մեկտեղ եղել են միջանկյալ ուղղություններ։

2. ԼԻԲԵՐԱԼ-ԲՈՒՐԺՈՒԱԿԱՆ ՀՈՍԱՆՔ

Լիբերալ-բուրժուական հոսանքը ձևավորվեց կապիտալիզմի զարգացման, հայ բուրժուազիայի տնտեսական, քաղաքական ու գաղափարական դիրքերի հաստատման ու ամրապնդման շրջանում։

Լիբերալ-բուրժուական հոսանքը պաշտպանում էր զարգացող բուրժուազիայի շահերը։ Այդ հոսանքի ներկայացուցիչները պայքարում էին ֆեոդալական, միապետական հետամնաց կարգերի դեմ և ձգտում հաստատել բուրժուական կարգեր։ «Լիբերալները,— ասում է Վ. Ի. Լենինը,— եղել են և մնում են բուրժուազիայի գաղափարախոսներ»[1]։

Լիբերալները աշխատում էին հին, ֆեոդալական կարգերը փոխել խաղաղ ճանապարհով, ռեֆորմների միջոցով։ Նրանք դեմ էին հեղափոխական պայքարին, ժողովրդական-մասսայական շարժումներին, ներքևից եկող ազատությանը։

Լիբերալ-բուրժուական մտածողները հանդես եկան կղերա-ֆեոդալական հոսանքի դեմ՝ հայ հասարակական կյանքի եվրոպականացման-բուրժուականացման նշանաբանով, ազգային կրթության, լուսավորության, դպրոցի, լեզվի, գրականության ու գիտության զարգացման համար։ Ինչքանով ֆեոդալիզմի համեմատությամբ կապիտալիզմը առաջընթաց էր, այդքանով էլ լիբերալ-բուրժուական հոսանքը կղերա-ֆեոդալականի համեմատությամբ առաջադիմական էր։ Այդ հոսանքի աչքի

1 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 17, էջ 133.

ընկնող ներկայացուցիչներից էին Ստեփանոս Նազարյանը, Նահապետ Ռուսինյանը, Գրիգոր Օտյանը և ուրիշներ։

Ստ. Նազարյանը (1812—1879) հայ լուսավորական շարժման ականավոր դեմքերից էր։ Նա մեծ լուսավորիչ Խ. Աբովյանի մտերիմ ընկերն էր։ Դորպատի համալսարանի շրջանավարտ, փիլիսոփայական գիտությունների թեկնածու, արևելագիտության դոկտոր, Կազանի համալսարանի և Լազարյան ճեմարանի պրոֆեսոր, իր ժամանակի կրթված ու լուսամիտ մարդկանցից մեկը. գիտեր հայերեն, ռուսերեն, գերմաներեն, պարսկերեն և արաբերեն։

Մեծ է Ստ. Նազարյանի դերը հայ ժողովրդի հասարակական կյանքի, լուսավորության, հայոց լեզվի, գրականության, գիտության ու արվեստի զարգացման գործում։ 1958 թվականին Մոսկվայում, Մ. Նալբանդյանի հետ միասին, նա հիմք դրեց իր ժամանակի ամենաառաջադիմական ամսագրին՝ «Հյուսիսափայլ»-ին, որի առաջին էջի վրա դրոշմված էին հետևյալ նշանավոր խոսքերը. «Այսուհետև ոչինչ Եգիպտոսյան խորամանկ ֆուրմեր, որ կամին լինել գիտության միայնակ պահապանը. այսուհետև ոչինչ Չինեական պարիսպ, որ պիտո էր փակեր լուսավոր գաղափարների մուտքը ազգերի մեջ։ Այսուհետև լույս և ճշմարտություն և ազատություն խավարի բաբելոնյան գերությունից»։

Լինելով ջերմ հայրենասեր, Ստ. Նազարյանը համարձակ կերպով պաշտպանում էր հայ ժողովրդի ազգային իրավունքները։ 1860 թվականին նա գրում էր. «Հյուսիսափայլն համարձակ բերանով ասել է և միշտ ասելու է հայոց ժողովրդին, թե նա ևս, որպես մի առանձին ազգ ազգերի մեջ — արդարև մի ազգ առանց քաղաքական ինքնիշխանության — ունի յուր բարոյապես անխզելի իրավունքը, որ չէ պիտո տմարդաբար ոտնակոխ անել»։

Ստ. Նազարյանը խստորեն քննադատում էր ասիական հետամնաց ֆեոդալական բռնապետությունը և դրական երևույթ համարում Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին, որը հայ ժողովրդի մի մասին ազատեց անտանելի ստրկությունից և նրա առաջ քաղաքական կյանքի մի նոր ասպարեզ բացեց։

Նա հանդես եկավ գրաբարի դեմ, պաշտպանեց ու ամրապնդեց աշխարհաբար գրական լեզուն։ «Հայոց ազգի տունը կարող է և պիտո է միայն շինվել նորա լեզվի շինությամբ»,— ասում է Ստ. Նազարյանը։ «Ժողովուրդը պարտական է կատարելապես ուսանել խոսել, զգալ, հասկանալ և մտածել յուր մայրենի լեզվով»։

Քննադատելով գրաբարի պաշտպաններին, նա գրում է. «Շատ ավելի դյուրին է հարուցանել մեռելներին գերեզմաններից, քան թե հին լեզվի միջնորդությամբ նոր ժողովուրդ լուսավորել. խավարը լուսով

է փարատվում և ոչ խավարով. կյանքը կենդանությունից է աղբյուրառնում և ոչ մեռելությունից»:

Ստ. Նազարյանը հայ ժողովրդի լուսավորության, կրթության ու դաստիարակության ջատագովներից էր։ «Հայկական կյանքի վերանորոգությունը,— գրում է նա,— պիտի սկսանի ժողովրդական դպրոցից, որ արմատն է ամենայն ազգային լուսավորության, ամենայն ազգային առաջադիմության»:

Կշտամբելով մեծատուններին ու հարուստներին, որոնք «միշտ հեռի են մնացած ազգային լուսավորության գործից և միշտ սառնասիրտ կամ անսիրտ դեպի այդ խնդիրը», Ստ. Նազարյանը հետևյալ ջերմ խոսքերով է բնութագրում հասարակ ժողովրդին. «Մի ազգի գլխավոր ուժը և զորությունը հասարակի մեջ է, որովհետև հասարակի բազմությունը հարյուր հազարավոր, իսկ մեծատունների թիվը տասն ու քսան է. բացի դրանից, աշխարհիս բոլոր ականավոր գործերը իմաստության և ճարտարության մեջ, առաջացած են ժողովրդի միջակ և չքավոր դասակարգերից. աշխարհաշեն գյուտերը և հայտնագործությունքը արած են ժողովրդական կարգի մարդերի ձեռքով, որովհետև դոցա մեջ են ամփոփված մեր ազգի երևելի քանքարքը և շնորհները։

Այսքանս թող բավական լինի, պարզ ու բացահայտ հասկանալու մեր հայոց հասարակին յուր իրավունքը, յուր կշիռը, խորհրդավոր կոչումը ազգի մտավորական և բարոյական վերաշինության համար»։

Այս տողերի մեջ արդեն խոսում է աբովյանական ժողովրդասիրությամբ ու դեմոկրատիզմով տոգորված հեղինակը։

Այսպիսով, ազգային լուսավորության, աշխարհաբար լեզվի, գրականության, թատրոնի զարգացման և մի շարք այլ հարցերում Ստ. Նազարյանը կանգնած էր առաջադիմական դիրքերում, Մ. Նալբանդյանի հետ միասին գլխավորում էր կղերա-ֆեոդալական ռեակցիայի դեմ մղվող պայքարը:

Բարձր գնահատելով Ստ. Նազարյանի լուսավորական գործն ու գաղափարները, միաժամանակ չի կարելի չնշել, որ հասարակական-քաղաքական մի շարք հիմնական հարցերում նա կանգնած էր լիբերալ-բուրժուական դիրքերում և հանդիսացավ արևելահայ լիբերալ-բուրժուական հոսանքի պարագլուխը։

Ստ. Նազարյանը դեմ էր հեղափոխական շարժումներին, ապստամբություններին, ներքևից եկող ազատությանը։ Նա աստիճանական զարգացման կողմնակից էր։ Հասարակական, պետական կարգերը հեղափոխական ճանապարհով վերափոխելու գաղափարը նրա համար խորթ էր և անընդունելի։

Հայտնի է, որ նա բացասաբար է արտահայտվել անգամ XVIII դարի ֆրանսիական բուրժուական հեղափոխության և նրա գաղափարախոսների նկատմամբ, դեմ է եղել Մ. Նալբանդյանի հեղափոխական-դեմոկրատական հայացքներին։

Լինելով բուրժուական լուսավորիչ, լիբերալ մտածող, Ստ. Նազարյանը հայ ժողովրդի ազատության ու առաջադիմության ուղին նույնպես կապում էր ռեֆորմների հետ։ Նա դեմ էր ասիական բռնակալությանը, բայց սուլթանական Թուրքիայի լծի տակ հեծող արևմտահայերին ակտիվ պայքարի կոչ չարեց և գրեթե չարձագանքեց նրանց ազատագրական շարժումներին։ Իսկ արևելահայերին նա խորհուրդ էր տալիս ռուսաց կայսեր հլուհնազանդ, բարի հպատակներ լինել։ «Հայերս,— գրում է նա,— քաղաքական մտքով ռուս ենք, այսինքն՝ ռուսաց կայսեր հպատակք և անդամք այդ տերութենական մարմնի, և ունիմք նույն օգուտը և վնասքը, ինչ որ ունի թագավորությունը ներքուստ և արտաքուստ»։

Չնայած իր լիբերալիզմին, Ստ. Նազարյանը հանդիսանում է 1840—1860-ական թվականների հայ լուսավորական շարժման ջահակիրներից մեկը։

XIX դարի կեսերին լուսավորական շարժումն իր վերելքն է ապրում նաև արևմտահայերի մեջ։ Օսմանյան Թուրքիայի ֆեոդալական բռնապետական կարգերը, տնտեսական և կուլտուրական ծայրաստիճան հետամնացությունը, ամբողջ երկրին պատած թանձր խավարը չկարողացան և չէին կարող հայերի առաջ փակել լուսավորության դրոները։ Մեծ դժվարություններ հաղթահարելով, նրանք դեռ վաղ ժամանակներից ստեղծել էին իրենց կուլտուրական օջախները, կապեր հաստատել Արևմտյան Եվրոպայի, հատկապես Իտալիայի ու Ֆրանսիայի հետ, այս ու այն չափով հաղորդակից դարձել Եվրոպայի առաջավոր հասարակական-քաղաքական և մտավոր կյանքին։

XIX դարի կեսերին այդ կապերն ավելի ուժեղացան. Եվրոպա սովորելու գնացող հայ երիտասարդների թիվն ավելացավ։ Եվրոպական կրթություն ստացած այդ երիտասարդներն էլ հենց դարձան արևմտահայ լուսավորական շարժման առաջնորդները։

Արևմտահայ կյանքում բուրժուական լիբերալիզմի գաղափարների տարածման, լուսավորական շարժման զարգացման ուղղությամբ առանձնապես մեծ դեր խաղացին Փարիզում կրթություն ստացած Նիկողոս Զորայանը (1821—1859), Նահապետ Ռուսինյանը (1819—1876) և Գրիգոր Օտյանը (1834—1887)։

Հանդես գալով կղերա-ամիրայական ռեակցիայի դեմ, նրանք առաջ քաշեցին լուսավորության, ժողովրդական կրթության, աշխարհաբար լեզվի, աշխարհիկ գրականության ու արվեստի զարգացման հարցերը։ Արևմտահայ լիբերալիզմի ճանաչված օրգանն էր «Մասիս»-ը (1852—1908)։

Ն. Զորայանը դեռևս 1840-ական թվականներին, Խ. Աբովյանի նման, հանդես եկավ գրաբարի դեմ, մի շարք արժեքավոր աշխատություններ գրեց և հրապարակեց աշխարհաբար։ Նա պահանջում էր ստեղծել ժողովրդին հասկանալի «հասարակաց լեզու»։ «Գրաբարը,— գրում է Ն. Զորայանը,— հասարակաց լեզու չենք կրնար ընել, այլ փոխարեն մեր աշխարհաբար լեզուն զարդարելու ու տարածելու է»։

1851 թ. Պոլսում տպագրված «Առաջարկություն աշխարհաբար լեզվի վրա» աշխատության մեջ Գր. Օտյանը ևս պահանջում էր ստեղծել «Լեզու մը ամենուն հասկանալի, դյուրին ու պարզ ոճով, որ գրելու ալ դժվար չըլլա, կարգ ու կանոն ունենա»։

Արևմտահայ իրականության մեջ տիրող կղերա-ամիրայական ռեակցիոն հոսանքի դեմ եռանդուն պայքար ծավալեց նաև Ն. Ռուսինյանը, որին ժամանակակիցները բնութագրում են որպես ուղղամիտ և գաղափարի մարդ։ Նա մասնագիտությամբ բժիշկ էր, բայց միաժամանակ նաև նշանավոր հրապարակախոս, փիլիսոփա մտածող։ Փարիզում ուսանողական տարիներին նա համակվել էր ֆրանսիական հեղափոխության և լուսավորիչների գաղափարներով, մտահոգվել հայ կյանքի վերանորոգության հարցերով։

1851 թվականին վերադառնալով Պոլիս, 1853 թ. ընտրվում է Ազգային խորհրդի անդամ և եռանդուն գործունեություն ծավալում նոր, լուսավոր գաղափարների, աշխարհաբար լեզվի, կրթության ու դաստիարակության զարգացման ուղղությամբ։ Ն. Ռուսինյանը համարձակ կերպով հանդես է գալիս գրաբարի դեմ, պաշտպանում աշխարհաբարը։

1853 թվականին, երբ լույս է տեսնում Ն. Ռուսինյանի «Ուղղախոսություն» աշխատությունը, նրա դեմ վայնասուն են բարձրացնում կղերա-ամիրայական ռեակցիոն տարրերը, պահանջում այրել այդ գիրքը, իսկ հեղինակին անվանում են հերետիկոս։ Սակայն Ն. Ռուսինյանը և նրա համախոհները չնահանջեցին ու չընկրկեցին ռեակցիայի առաջ. նրանք շարունակեցին իրենց պայքարը և հանդես եկան, ինչպես կտեսնենք, միաժամանակ որպես արևմտահայերի առաջին սահմանադրական շարժման պարագլուխներ։

Ն. Ռուսինյանը արձագանքել է նաև արևմտահայ ազատագրական շարժումներին։ Զեյթունի 1862 թվականի ապստամբության նախօրյակին նա գրեց լայն ժողովրդականություն վայելող իր նշանավոր «Կիլիկիա» բանաստեղծությունը, որտեղ վառ հույսեր ու ակնկալություններ է հայտնում մեր չքնաղ երկրի՝ Արմենիայի համար.

Երբ որ բացվին դռներն հուսո
Եվ մեր երկրեն փախ տա ձմեռ,

Չքնաղ երկիրն մեր Արմենիո,
Երբ փայլե յուր քաղցրիկ օրեր։

Երբ որ ծիծառն ի բույն դառնա,
Երբ որ ծառերն հագնին տերև,
Ցանկամ տեսնել զիմ Կիլիկիա,
Աշխարհ, որ ինձ ետուր արև։

3. ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ-ԴԵՄՈԿՐԱՏԱԿԱՆ ՀՈՍԱՆՔ

Հեղափոխական-դեմոկրատական հոսանքը 1850—1860-ական թվականների հայ հասարակական-քաղաքական կյանքի ամենաարմատական, ամենաառաջավոր ուղղությունն էր, աշխատավորական լայն խավերի, հասարակ ժողովրդի շահերի արտահայտիչը։

Եթե կղերա-ֆեոդալական և լիբերալ-բուրժուական հոսանքներն արտահայտում էին շահագործող դասակարգերի գաղափարախոսությունը, ապա հեղափոխական-դեմոկրատական հոսանքը՝ շահագործվողների՝ գյուղացիության, արհեստավորության, դեմոկրատական լայն խավերի գաղափարախոսությունը։

Հեղափոխական-դեմոկրատական հոսանքը հայ իրականության մեջ հանդես եկավ ու ձևավորվեց XIX դարի կեսերին, ներքին և արտաքին կեղեքիչների դեմ հայ ժողովրդի մղած սոցիալական և ազգային-ազատագրական պայքարի վերելքի պայմաններում։ Այդ հոսանքի հանդես գալը հայ հասարակական կյանքի պատմության մեջ մի թռիչք էր, նոր ու ավելի բարձր էտապ, որի նախապատրաստման համար խոշոր դեր խաղացին Խ. Աբովյանը և մյուս դեմոկրատ-լուսավորիչները։

Հայ հեղափոխական-դեմոկրատական ուղղության առաջացման ու զարգացման համար մեծ նշանակություն ունեցան նաև Ռուսաստանի և Արևմտյան Եվրոպայի ազատագրական շարժումները։ Ռուսաստանում ստեղծված հեղափոխական սիտուացիայի, ռուս մեծ հեղափոխական-դեմոկրատներ Չերնիշևսկու, Գերցենի, Դոբրոլյուբովի և մյուսների բարերար ազդեցության պայմաններում աճեց ու զարգացավ հայ հեղափոխական-դեմոկրատական ուղղությունը։

XIX դարի 50—60-ական թվականների հայ հասարակական մտքի ամենախոշոր և կենտրոնական դեմքը, հեղափոխական-դեմոկրատական հոսանքի հիմնադիրն ու պարագլուխը Միքայել Նալբանդյանն (1829—1866) էր։

Դուրս գալով ժողովրդի ծոցից, նա իր շողշողուն տաղանդը, իր ամբողջ կյանքը նվիրաբերեց հասարակ ժողովրդի ազատագրության գործին։

Հասարակական կյանք մտնելու առաջին իսկ օրերից Մ. Նալբանդ-

յանն անհաշտ պայքարի մեջ մտավ հայ կղերա-ազգայական պորտաբույծ տարրերի դեմ։ Հետագայում, իր դեմ սկսված հալածանքներից խույս տալու նպատակով, 1853 թվականին նա Նոր Նախիջևանից տեղափոխվեց Մոսկվա, որտեղ և մոտիկից շփվեց ու ծանոթացավ ռուսական առաջավոր հասարակական մտքի ու կուլտուրայի հետ, թևակոխեց իր կյանքի ու գործունեության նոր, ավելի հասուն շրջանը։

1850-ական թվականների վերջերին ձևավորվեցին Մ. Նալբանդյանի հեղափոխական-դեմոկրատական հայացքները, նա կանգնեց ռուս նշանավոր հեղափոխական-դեմոկրատներ Բելինսկու, Գերցենի, Չերնիշևսկու, Դոբրոլյուբովի դիրքերում, հիմք դրեց հայ հասարակական-քաղաքական մտքի մի նոր ուղղության, որն ամենադեմոկրատական ու ամենաառաջավոր ուղղությունն էր հայ իրականության մեջ։

1850—1860-ական թվականների հայ կյանքի այրող հարցը ժողովրդի սոցիալական ու ազգային ազատագրության հարցն էր, սուլթանական ու ցարական բռնակալության լծից և ազգային կեղեքիչների ճնշումներից հայ աշխատավորության ազատագրության հարցը։ Մ. Նալբանդյանն առաջինն էր, որ իր ամբողջ խորությամբ ըմբռնեց այդ հարցի կարևորությունը և, ինչպես ինքն է ասում, զինվորագրվեց այդ վեհ գաղափարին։

«Մենք ազատակամ նվիրեցինք մեզ հասարակ ժողովրդի իրավունքը պաշտպանելու։ Մեր անձը և գրիչը չնվիրեցինք հարուստներին, նոքա յուրյանց արծաթե թումբերի տակ միշտ անխոցելի են նաև բռնակալների իշխանության մեջ։ Բայց այն խեղճ հայը, ոչ միայն ճնշված օտարներից և բարբարոսներից, այլև յուր հարազատներից, յուր հոգևորներից և կիսագրագետ ուսումնական կամ փիլիսոփա ասվածներից, անա այն հայը ամենայն արդարացի իրավունքով գրավում է մեր ուշադրությունը և նորան դարձյալ առանց և վայրկենական երկմտության նվիրեցինք մեր բոլոր կարողությունը։ Պաշտպանել այն հայի առաքուր կոխված իրավունքը է մեր կյանքի բուն խորհուրդը և նպատակը։ Եվ այս նպատակին հասնելու համար չէ պիտո ընկրկինք ոչ բանտի և ոչ աքսորի առջև, ոչ միայն բանիվ և գրչով, այլև զենքով և արյունով, եթե մի օր արժանի լինենք զենք առնուլ մեր ձեռքը և մինչև այժմ քարոզած ազատությունը նվիրել և սրբել մեր արյունով։*

Անավասիկ մեր դավանությունը, որի մեջ տեսնում ենք ազգի փրկությունը»։

Մեծ հեղափոխական-դեմոկրատի բոցաշունչ այս մտքերը մի ամբողջ ծրագիր հանդիսացան հայ ժողովրդի ազատագրական պայքարին որդեգրված բոլոր իսկական հայրենասերների համար։

Մ. Նալբանդյանը ժողովրդին զինված պայքարի կոչ էր անում ցարիզմի ու սուլթանիզմի դեմ, պաշտպանում էր Հայաստանի ազատության ու անկախության գաղափարը.

Ներկա օրերում այլ ի՞նչ սև քնար,
Սուր է հարկավոր կարիճի ձեռքին,
Արյո՛ւն ու կրա՛կ թշնամու վերա,
Այս պիտի լինի խորհուրդ մեր կյանքին։

Մ. Նալբանդյանն անհաշտ պայքար էր մղում բռնակալության և ժողովուրդների գաղութային ճնշման դեմ։ «Մենք թշնամի ենք բռնակալության,— *գրում է նա,—* ուր կամ ինչ կերպով որ հայտնվի»։ *Նա անարգանքի սյունին էր գամում գաղութարար տերություններին, որոնք կողոպտում ու ստրկացնում էին միլիոնավոր մարդկանց։* «Անգլիան ամիսը երեք շոգենավ ափիոն բռնությամբ ներս է տանում Չինաստան, թունավորում է մարդկությանը և այդ թույնի փոխարեն ամիսը երեք շոգենավ արծաթ է ստանում. այս անբարոյականություն է»։

Մ. Նալբանդյանն ազգերի իրավահավասարության և եղբայրության գաղափարի ջերմ պաշտպանն էր։ «Մենք ուրախ չենք, որ մի ազգ ճնշում է, հարստահարում է մյուս ազգը,— *գրում է նա։* Հերիք է, ասում ենք, որ մի ազգություն յուր մի շամփուր խորոված ի համար մորթում է մյուս ազգության եզը»։

Մ. Նալբանդյանը պայքարում էր երկու ճակատով՝ արտաքին և ներքին թշնամիների դեմ։ Ժողովրդի ազգային ազատագրությունը նա սերտորեն կապում էր նրա սոցիալական ազատագրության հետ։ Առանց սոցիալական ազատագրության, առանց տնտեսական հարցի լուծման, չկա և չի կարող լինել ազգի ազատություն, ասում էր Նալբանդյանը։

«Տնտեսական խնդիրը մահու և կյանքի խնդիր է»,— *ասում է նա։* «Եթե ազգության ներքին և էական խորհուրդը չէ տնտեսական խնդիրը, անիմն է այդ ազգությունը, սուտ է այդ ազգությունը և նա կկործանվի... Թու հազար տարի քարոզէ ինձ քո վերացական ազգությունը, ես միշտ չպիտի հասկնամ»։

Հայ ժողովրդի ճնշող մեծամասնությունը կազմող գյուղացիության ազատագրությունը նա կապում էր հողային հարցի լուծման, գյուղացուն հողով ապահովելու հետ։ «Թող քառասուն անգամ, եթե կամենան, փոփոխեն կառավարության ձևը, բայց քանի որ հասարակության մի մասը տիրապետել է հողին, իսկ մյուս մասը մնում է մուրացիկ, այստեղ թագավորում է բռնությունը»։

Հակառակ բուրժուական լիբերալների, Մ. Նալբանդյանը հանդես էր գալիս ռեֆորմների դեմ, ժողովրդին պայքարի կոչ էր անում։ «Հին խելքերը,— *ասում էր նա,—* երբեք համաձայնելու չեն խաղաղությամբ

տեղի տալ նոր գաղափարներին»: «Նորը պատերազմով պիտի կանգնեցնեք իր դրոշակը հնության ավերակների վրա»:

Քննադատելով վերևից եկող ազատության պատրանքը, Նալբանդյանը գրում է. «Վայ այն ծառին և բուսականին, որի հույսը դրված է միմիայն, գիշերային և առավոտյան, բարձրերից գալու ցողի վրա... Մարդու համար վերևից եկած ազատությունը այն ցողից ավելի չէ»: *Մ. Նալբանդյանը ներքևից եկող ազատության, հին կարգերը հեղափոխական ճանապարհով փոխելու կողմնակից էր։*

Մ. Նալբանդյանն առաջինն էր, որ հայ ժողովրդի ազատագրությունը կապեց ռուսական հեղափոխության հետ, ոսկե կամուրջ ստեղծեց հայ և ռուս ժողովուրդների *միջև։ Նա պարզ ու հստակ տեսնում էր երկու Ռուսաստան՝ ցարական և դեմոկրատական։*

Անձնական և գաղափարական սերտ կապեր հաստատելով նշանավոր հեղափոխական-դեմոկրատներ Չերնիշևսկու, Գերցենի, Օգարյովի և ուրիշների հետ, Մ. Նալբանդյանը կարողացավ ճիշտ գնահատել ռուսական հեղափոխության դերը ճնշված ազգերի ու ամբողջ մարդկության ազատության համար։ Ռուսիո ազատությունը ընդհանուր մարդկության ազատության վերաբերությամբ մեծ խորհուրդ ունի»,— *գրում է նա։*

Լինելով ճնշված ազգի զավակ, Նալբանդյանն արիաբար պաշտպանում էր բոլոր ճնշված ազգերի՝ իտալացիների, լեհերի, վրացիների և մյուսների իրավունքները և դրանով իսկ ամրապնդում մեր ժողովրդի ինտերնացիոնալ կապերը։

Մ. Նալբանդյանն առաջինն էր, որ փորձեց համախմբել հայ ժողովրդի բոլոր առաջավոր, հեղափոխական ուժերը, ընդհանուր միասնական ճակատ ստեղծել ներքին և արտաքին հարստահարիչների դեմ։ Նա մեծ ջանքեր գործադրեց և անգնահատելի գործ կատարեց արևելահայ ու արևմտահայ դեմոկրատական շարժումը միավորելու ուղղությամբ, որը խոշոր նշանակություն ունեցավ մեր ժողովրդի երկու հատվածների հասարակական-քաղաքական կյանքի հետագա զարգացման համար:

Մեծ է Մ. Նալբանդյանի դերը նաև հայ ժողովրդի կուլտուրայի, լեզվի, գրականության ու արվեստի զարգացման գործում։ Այս ասպարեզում ևս նա ավելի համարձակ, ավելի հետևողական, քան որևէ մեկ ուրիշը, հանդես եկավ կղերա-ֆեոդալական ուղղության, Չամուռճյանի, Այվազովսկու, Չերքեզյանի, Պալտաղարյանի և նրանց համախոհների դեմ.

Ես պիտի դուրս գամ դեպի հրապարակ
Առանց քնարի, անզարդ խոսքերով,
Ես պիտի գոչեմ, պիտի բողոքեմ,
Խավարի ընդդեմ պատերազմելով։

Մեծ հայրենասերն ու հեղափոխական-դեմոկրատը իբրև արի զինվոր մարտնչեց հայ ժողովրդի ոչ միայն սոցիալական ու ազգային ազատագրության, այլև նրա մտավոր ուժերի, նրա մշակույթի զարգացման համար։ Նա 1850—1860-ական թվականների մեր լուսավորական շարժման առաջամարտիկն է։

Մ. Նալբանդյանի գործով ու գաղափարներով դաստիարակվեց ազատասեր ու հայրենասեր գործիչների մի ամբողջ սերունդ: Նա ունեցավ իր հետևորդներն ու համակիրները: Նրա նվիրական անունը գալիք սերունդների համար դարձավ ազատության ու առաջադիմության դրոշ, ոսկե տառերով գրվեց մեր ժողովրդի պատմության մեջ:

XIX դարի կեսերին կղերա-ամիրայական վերնախավի ու սուլթանական բռնակալության դեմ մղվող պայքարում ձևավորվում է արևմտահայ դեմոկրատական ուղղությունը։ Այդ ուղղության աչքի ընկնող ներկայացուցիչներից էին Ստ. Ոսկանը, Հ. Սվաճյանը, Մ. Մամուրյանը և ուրիշներ։

Ստեփան Ոսկանը *(Ոսկանյան) (1825—1901) արևմտահայ դեմոկրատներից առաջինը հանդես եկավ կղերա-ֆեոդալական ռեակցիայի դեմ և ժողովրդին լուսավորության ու ազատության կոչ արեց։ Սորբոնի համալսարանի (Փարիզ) ուսանող եղած ժամանակ նա մասնակցեց 1848 թվականի հեղափոխությանը։* «Այո, Լուի Ֆիլիպին դեմ ապստամբողներու հետ էինք,— *գրում է Ոսկանը,—* այո, բրինք ազատության համար ինչ, որ ամեն մարդու պարտքն է, և զեն ի ձեռին Թյուլրի մտնելու պատիվը ունեցանք»:

Ստ. Ոսկանը Փարիզում 1855—1856 թվականներին հրատարակում է «Արևելք», իսկ 1859—1865 թվականներին՝ «Արևմուտք» թերթերը, որոնք ունեին առաջադիմական ուղղություն և խոշոր դեր խաղացին հայ ժողովրդի լուսավորության ու ազատագրական շարժման զարգացման գործում։

Նա համարձակ կերպով քննադատում էր հայ ժողովրդի ներքին և արտաքին թշնամիներին, պաշտպանում ճնշված ազգերի ազատության ու անկախության իրավունքը։ «Ուր և գտնվինք,— *ասում է նա,—* ազատության հետ պիտի մնանք և բռնությունը չպիտի սիրենք երբեք, թե հայերուն և թե օտարներուն մեջ»:

Ստ. Ոսկանը ազգերի ազատության, անկախության ու հավասարության կողմնակից էր. «Չ'Իտալիա կսիրենք, միշտ սիրել ենք, Իտալիա, իր արյունաթաթավ ճակտով միշտ երևած է մեզ իբրև կենդանի պատկեր նկուն ազգերու»։ Մեր ազգը պետք է ճանաչի ու պաշտպանի իր պատիվը, ասում էր նա։ «Հայաստանեն դուրս հայերուն լուսավորություն չկա», «սարկության մեջ լուսավորություն չի կարող լինել», «ազգը կրոնի տակ դնել, նշանակում է ուրանալ այն», «վառոդի ամանը

պետք է, խնկման կպատրաստեն, վայ Հայկին թոռները, վայ»,— *ահա այն վեհ գաղափարները, որ ազատախոս հեղինակը սերմանում էր ժողովրդի մեջ։*

Արևմտահայ դեմոկրատիայի ամենահետևողական և փայլուն դեմքերից էր Հարություն Սվաճյանը (1831—1874)։ *Նա Պոլսի խասգյուղի աղքատ ընտանիքի զավակ էր։ Տակավին երիտասարդ, մտնելով հասարակական կյանքի ասպարեզ, իրեն նվիրաբերում է հասարակ ժողովրդի շահերի պաշտպանությանը։*

1856—1872 թթ. Հ. Սվաճյանը խմբագրում էր «Մեղու» *թերթը, որն իր ժամանակի աչքի ընկնող դեմոկրատական թերթերից էր, ինչպես Մ. Նալբանդյանն է ասում «երիտասարդների և կենդանի ժողովրդի մաքուր բերանը, ազգի ցավերի և ուրախության ճշմարտապես հայտարարը»։*

Հ. Սվաճյանը արևմտահայ դեմոկրատների հետ միասին պայքարի ելավ կղերա-ֆեոդալական հոսանքի դեմ՝ հայ ժողովրդի առաջադիմության, նրա ընդհանուր զարգացման համար։ Իր գործունեության առաջին շրջանում նա հանդես եկավ որպես բուրժուական դեմոկրատ-լուսավորիչ։

1860-ական թվականներին, Մ. Նալբանդյանի հետ անձնական և գաղափարական սերտ կապեր հաստատելուց հետո, նա գաղափարական էվոլյուցիա ապրեց, կանգնեց հեղափոխական-դեմոկրատական ուղու վրա, դարձավ Նալբանդյանի ամենամոտ գաղափարակիցն ու զինակիցը։ Հանդես գալով Զամուռճյանի և մյուս ռեակցիոներների դեմ, Սվաճյանն ամենայն վճռականությամբ աղդարարեց, որ ինքը պատկանում է Նալբանդյանի բանակին. «Մենք պ. Նալբանդյանցի գրած նույն հոդվածին ամեն մեկ տողին, ամեն մեկ բառին պատասխանատու ու պաշտպան ենք»։

Հ. Սվանյանը *արևմտահայ դեմոկրատիայի ամենախոշոր դեմքն էր, ազգային-ազատագրական շարժման ականավոր գաղափարախոսներից մեկը։ Նա, Մ. Նալբանդյանի օրինակով, ժողովրդին ազատագրական պայքարի էր կոչում ներքին և արտաքին թշնամիների դեմ։ «Հիմա ազգը շատ թշնամի ունի,— գրում է Սվաճյանը,— մեր թշնամիները կարի զորավոր են, իսկ մենք տկար... Եթե այս սուրբ պատերազմին մեջ ըլնինք՝ ազգին ամենամաքուր նահատակները պիտի ըլլանք. երանի այն անձերուն, որ ազգի մը ազատարարն ըլլալու փառքին պիտի արժանանան»։ Մի այլ տեղում ասում է.* «Մենք ավելի կսիրենք ազատության հետ գերեզման մտնել, քան անոր մահը տեսնել»։

Հետևելով Մ. Նալբանդյանին, նա համարձակորեն առաջ էր քաշում հայ ժողովրդի սոցիալական և ազգային ազատագրության հարցը, կոչ անում հեղափոխական ճանապարհով թոթափել ներքին և արտաքին

բռնակալների լուծը։ Այդ գաղափարի իրագործման համար, ինչպես հայտնի է, Հ. Սվաճյանը Մ. Նալբանդյանի, Ս. Թագվորյանի և ուրիշների հետ զինվորագրվեց նաև գաղտնի հեղափոխական աշխատանքի, մասնակցեց 1862 թ. Զեյթունի ապստամբության նախապատրաստմանը և այլն։

Գյուղացիության ազատագրության հարցում նույնպես Հ. Սվաճյանը կանգնած էր նալբանդյանական դիրքերում, հողը գյուղացուն հանձնելու տեսակետի վրա։ Երկրագործությունը համարելով որպես ապրուստի ու հարստության աղբյուր, Սվաճյանն ասում է. «Այն ազգը, որ հող ու երկիր չունի, թող երբեք չհուսա, որ պիտի հարստանա, քանզի անբնական է այս և ասոր հուսալը տեսակ մը խելագարություն է»։ «Ով որ այսօր հող չունի, վաղը հաց չունի»։

Հ. Սվաճյանը ջերմ հայրենասեր էր, ժողովրդասեր։ «Թող չկարծվի, թե հայրենասիրությունը մտքի պատրանք մըն է,— ասում է Սվաճյանը։— Հայրենասիրությունը մարդուս հոգուն բնական զորություններեն մեկն է»։

«Հայրենասիրություն, հայեր, հայրենասիրություն. հոգ տանինք մեր հայրենյաց, եթե կուզենք ապրիլ և մարդ ապրիլ։ Թող կորնչին այսօրվա համար ապրող հայերը, որոնք և ոչ իսկ կարող են մինչև իրենց կենաց վախճանը տեսնելու»։

Հ. Սվաճյանի գործն ու գաղափարները բարձր են գնահատել Մ. Նալբանդյանը, Հ. Պարոնյանը, Մ. Մամուրյանը և ուրիշներ։ Իր բոցաշունչ զինակցին ու բարեկամին Մ. Նալբանդյանը հետևյալ սրտառուչ տողերն է նվիրել.

Քեզ սիրեց Հայաստան, քեզ օրհնում է բյուր բերան,
Քեզ դափնի պսակներ հյուսում է ապագան։
Ընդունիր այս երկտող իմ անշուք հյուսվածը,
Պակասը թող լցնի, սիրած իմ, քո ազգը։

Արևմտյան դեմոկրատական շարժման երրորդ կարկառուն դեմքը Մաթևոս Մամուրյանն *(1830—1901) էր։ Նա բազմակողմանի զարգացած, մեծ էրուդիցիայի տեր մարդ էր, փայլուն հրապարակախոս, գրչի ու մտքի մեծ վարպետ։ Մ. Նալբանդյանի, Ստ. Ոսկանի, Հ. Սվաճյանի և մյուս ականավոր դեմոկրատ-լուսավորիչների նման, նա իրեն նվիրեց ժողովրդի ազատության ու առաջադիմության գործին և իր արժանի տեղը գրավեց հայ հասարակական մտքի պատմության մեջ։*

Տակավին երիտասարդ հասակում նա սուր պայքարի մեջ մտավ կղերա-ամիրայական ռեակցիոն ուղղության դեմ, անխնա քննադատության ենթարկեց Զամուռճյանին, Պալտազարյանին և նրանց շուրջն համախմբված խավարամոլներին։ «Կան նոր մարդիկ, որ դիակներու

հետ կապրին,— գրում է Մ. Մամուրյանը Զամուռճյանին ու Պալտազարյանին նկատի ունենալով,— ասոնք գիշերասեր կենդանյաց ցեղեն են»։ Բնութագրելով Զամուռճյանին, նա գրում է. «Գլուխը սև-սև խորհուրդներու պահարան մը... ահա Երևակի նշանով մոլորական հրեշն ալ, որուն միակ պաշտոնն է զրպարտել ու դարձյալ զրպարտել. հավատաքննության խարույկներու մոխիրը կխառնե, որ կայծ մը գտնե և բոլոր աշխարհը կրակի տա»։

Մ. Մամուրյանն անարգանքի սյունին է գամում ազգային կեղեքիչներին, մեծատուններին, վաճառականներին, որոնք «թաղեր են ազգային շահն ու ապագան», «ժողովուրդը մատներ են գայլերու բերանը», «ջուրի տեղ արյուն կխմեն, հացի տեղ մարդու միս կուտեն»։

Դատապարտելով Թուրքիայում տիրող բռնապետական կարգերը, որտեղ հայերը «արցունքը լռելյայն կուլ կուտան», որտեղ «քաղաքական ազատության նշույլ չկա», նա բացականչում է. «Գահերու վրա չէ ազատությունը, այլ գերեզմանի մեջ»։

Քննադատելով միապետական կարգերը, մեծ պետությունների գաղութարար քաղաքականությունը, Մամուրյանն ասում էր՝ «Մեծ ձուկը պզտիկը կկլլե», «Մեծ պետությանց մեջ ազգերը դեռ իրենց ճակատագրին տերը չեն և կենոռտ քաղաքականության մը ծուղակն ընկած են»։ Նա գրվատում է ֆրանսիական հեղափոխությունը և Իտալիայի ազգային-ազատագրական պայքարը, հայ ժողովրդին կոչ անում հետևելու այդ օրինակին, հույս չկապել վերից եկող ազատության հետ։ «Հուսալ, որ օտար ազգ մը Հիսուսի ըրած հրաշքը պիտի գործե, ցնորք է։ Սպասել, որ արտաքին փրկիչները գան և հայ ժողովրդյան սև պատանքը քակեն՝ հիմարություն է։ Հեք և ստրուկ ժողովրդյան առաջին և միակ ազատարարն ինքն է, իր աշխատությունն է, իր ներքին ուժն է, իր լույսն, միությունն ու հաստատ կամքն է»։

Մ. Մամուրյանը Հ. Սվաճյանի և արևմտահայ մյուս արմատական դեմոկրատների նման բարձր է գնահատել Մ. Նալբանդյանին։ 1866 թվականին «Ծաղիկ» հանդեսում Մ. Նալբանդյանի մահվան առթիվ տպագրված հոդվածում Մամուրյանը նրան անվանում է «մեծ մարդ», «ճշմարտության և ազատության համար հոգի և շունչ տվող գործուն իմաստասեր», որի հանդեպ «ազգը նվիրական պարտք մը ունի կատարելու»։

Ստ. Ոսկանը, Հ. Սվաճյանը, Մ. Մամուրյանը 1850—1860-ական թվականների արևմտահայ դեմոկրատիայի ամենափայլուն աստղերն էին։ Դեմոկրատական ուղղության աչքի ընկնող ներկայացուցիչներից էին նաև Ա. Հայկունին, Ս. Թագվորյանը, Գ. Չիլինկիրյանը, Ծերենցը, Մ. Պեշիկթաշլյանը, Հ. Պարոնյանը, Կ. Փանոսյանը և ուրիշներ։

1850—1860-ական թվականների դեմոկրատական և լուսավորական շարժումը հայ ժողովրդի քաղաքական և գաղափարական հասունության արտահայտությունն էր։ Այդ շարժումն իր անջնջելի կնիքը դրեց գալիք սերունդների վրա և մեծ դեր կատարեց հայ ազատագրական պայքարի, հասարակական մտքի ու կուլտուրայի հետագա զարգացման համար։

IX ԳԼՈՒԽ

ԱՐԵՎՄՏԱՀԱՅԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՎ ԱԶԳԱՅԻՆ-ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԸ

1. ԱՐԵՎՄՏԱՀԱՅԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Սահմանադրական շարժման նախադրյալները

Ղրիմի պատերազմից հետո արևմտահայերի դրությունը ավելի ծանրացավ։ Թուրքիան, որն ինչպես տեսանք, Կովկասյան ռազմաճակատում ծանր պարտություն կրեց, իր դաշնակիցների օգնությամբ ոչ միայն ետ ստացավ Արևմտյան Հայաստանում կորցրած տերիտորիաները, այլև սկսեց դաժան դատաստան տեսնել հայերի հետ, որոնք համակրում էին Ռուսաստանին և պատերազմի ժամանակ օգնել էին նրան։

Ղրիմի պատերազմը ցույց տվեց օսմանյան կայսրության փտածությունն ու նեխվածությունը։ Երկրի տնտեսական, քաղաքական և կուլտուրական խիստ հետամնաց վիճակը, սուլթանական միապետական ռեժիմի, ռազմա-ֆեոդալական վերնախավի ճնշումներն ու կամայականությունները ծանր պայմաններ էին ստեղծել ոչ միայն քրիստոնյա հպատակների, այլև թուրք ժողովրդի համար։ Դժգոհությունները տիրող կարգերի դեմ երկուստեք գնալով ավելի ու ավելի աճում էին։

Օգտվելով Թուրքիայի տնտեսական-քաղաքական ծանր դրությունից և պատերազմում Ռուսաստանի կրած պարտությունից, Անգլիան ու Ֆրանսիան իրենց գաղութարար թաթը դրին նրա վրա։ Թուրքիան ինչպես պատերազմի տարիներին, այնպես էլ հետպատերազմյան շրջանում կախյալ վիճակի մեջ ընկավ անգլո-ֆրանսիական գաղութարարներից։

Ներքին և արտաքին աննպաստ կացությունից դուրս գալու նպատակով սուլթան Մեջիդը 1856 թ. փետրվարի 18-ին հարկադրված նոր թանզիմաթ հրատարակեց, որով խոստանում էր բոլոր հպատակներին հավասարություն օրենքի առաջ, դավանանքի ազատություն, անձի ու

գույքի ապահովություն, հարկերի ու տուրքերի, դատարաններում վկայություն տալու, պետական և զինվորական ծառայության ընդունվելու հավասարություն, կաշառակերության, շարաշահումների ու կեղեքումների վերացում և այլն։

1856 թվականի Խաթթը-Հումայունը[1], 1839 թվականին հրապարակված Խաթթը-Շերիֆի նման, մեծազորդ խոստումներից հեռու չընաց և փաստորեն մնաց թղթի վրա։ Սուլթան Մեջիդի այս ռեֆորմները ավելի շուտ ներքին դժգոհությունները և արտաքին միջամտությունները կանխելու խաբուսիկ միջոցառումներ էին, քան գործողության ռեալ ծրագրեր։

Չնայած դրան, թանզիմաթը, ինչպես նաև 1856 թ. մարտի 30-ին կնքված Փարիզի պայմանագիրը, որի 9-րդ հոդվածը ճանաչում էր Թուրքիայի տիրապետության տակ գտնվող քրիստոնյաների իրավունքները, օբյեկտիվորեն որոշ նպաստավոր պայմաններ ստեղծեցին հայերի հասարակական-քաղաքական կյանքի աշխուժացման և առհասարակ երկրի հակաֆեոդալական պրոգրեսիվ ուժերի գործունեության համար։

Մինչև XIX դարի կեսերը արևմտահայ իրականության մեջ ամիրաները իշխող դիրք ունեին։ Նրանց ձեռքում էր կենտրոնացած արևմտահայերի տնտեսական և հասարակական-քաղաքական կյանքի ղեկավարությունը։ Կղերա-ամիրայական վերնախավը ճնշում ու կեղեքում էր հայ աշխատավորությանը։ Արևմտահայ ժողովրդական մասսաները գտնվում էին սուլթանական կառավարության և ազգային կեղեքիչների կրկնակի լծի տակ։

Ներքին և արտաքին նման իրադրության պայմաններում էր, որ ծագեց ու զարգացավ արևմտահայերի սահմանադրական շարժումը։

Պայքար Ազգային սահմանադրության համար

XIX դարի 50—60-ական թվականներին արևմտահայերի հասարակական-քաղաքական շարժումները նոր թափ են ստանում։ Ամիրաների ու արհեստավորների (էսնաֆների) միջև մղվող պայքարն ավելի է սրվում։ Այդ պայքարը կազմակերպված բնույթ է ստանում, երբ շարժման գլուխ է կանգնում արևմտահայ դեմոկրատական ինտելիգենցիան։

Եվրոպական կրթություն ստացած, XVIII դարի ֆրանսիական լուսավորիչների և 1848 թվականի հեղափոխական դաղափարներով տոգորված հայ երիտասարդները, բնական է, չէին կարող հաշտվել սուլթանական բռնակալության բիրտ ու դաժան կարգերի և կղերա-ամիրայական ռեակցիոն տարրերի հետ։ Ծանր ու դժվարին պայմաններում

1 Խաթթը — հրովարտակ, Հումայուն — արքունի, Խաթթը Հումայուն — արքունի հրովարտակ։

նրանք համարձակ կերպով հանդես եկան հին կարգերի՝ կղերա-պահպանողական ուժերի դեմ, ժողովրդի ազատության ու առաջադիմության համար։

Առաջադիմական ու հետադիմական ուժերի պայքարի հիմնական ճարցերից մեկը արևմտահայ իրականության մեջ դարձավ Ազգային սահմանադրություն կամ կանոնադրություն ստեղծելու ճարցը։

1853 թվականին Պոլսում հիմնված Ուսումնական խորհրդի մի խումբ անդամներ՝ Ն. Ռուսինյան, Գր. Օտյան, Ն. Պալյան, Ս. Վիշենյան (Սերվիչեն), Կ. Յուրուճյան և ուրիշներ, ձեռնամուխ են լինում ազգային կյանքի, հասարակական և կրոնական գործերի վերաբերյալ կանոնադրության մշակմանը։ 1857 թ. փետրվարին նրանք ավարտում են իրենց աշխատանքը և մշակված կանոնադրությունը ներկայացնում Պոլսի Ազգային ժողովի հաստատմանը։

Դեմոկրատական լայն խավերն այս կանոնադրությունն ընդունում են մեծ ոգևորությամբ։ Սակայն նրա դեմ կատաղի պայքար են սկսում կղերա-ամիրայական հոսանքի պարագլուխները։ Նրանք պատճառաբանում են, թե կանոնադրությունը չի բխում կրոնի և ազգի, ինչպես և պետության շահերից և կարողացան սուլթանական կառավարության միջոցով տապալել այն։

Ազգային սահմանադրության առաջին փորձերը ձախողվեցին, բայց պայքարը սահմանադրության համար շղդարեց։ 1859 թ. դեկտեմբերին սահմանադրական հանձնաժողովը, Ն. Ռուսինյանի, Գ. Օտյանի, Սերվիչենի գլխավորությամբ, Ազգային ժողովին ներկայացնում է նոր, բարեփոխված կանոնադրություն։ Նորից բորբոքվում է պայքարը սահմանադրության կողմնակիցների ու հակառակորդների միջև։

Կղերա-պահպանողական տարրերը, օգտվելով Գևորգ պատրիարքի հովանավորությունից, այս անգամ ևս խիստ թշնամական դիրք են բռնում սահմանադրության նկատմամբ։

Սահմանադրության կողմնակիցները վճռականապես բողոքում են պատրիարքի և նրա համախոհների բռնությունների ու կամայականությունների դեմ։ Մասսայական դժգոհություններ և հուզումներ են առաջանում արհեստավորների և դեմոկրատական մյուս խավերի մեջ։ Ժողովրդական զանգվածները հավաքվելով պատրիարքարանի առաջ, բացականչում են՝ «Կանոնադրությո՛ւն կուզենք»։

Ազգային սահմանադրության շուրջն սկսված պայքարը լայն արձագանք է գտնում նաև մամուլի էջերում։ Առաջադիմական ուղղության թերթերը ջերմորեն պաշտպանում են սահմանադրությունը, իսկ հետադիմական թերթերը հանդես են գալիս նրա դեմ։ Հ. Սվաճյանի «Մեղու»-ն, Կ. Փանոսյանի «Մյունատի»-ն, Զմյուռնիայի դեմոկրատների

օրգան «Մաղիկ»-ը եռանդուն պայքար են մղում սահմանադրության համար, ժողովրդին ոտքի հանում նրա թշնամիների դեմ։

Տեսական ու համառ պայքարի գնով սահմանադրության կողմնակիցները հաղթում են։ 1860 թ. ապրիլին նրանք տապալում են Գևորգ պատրիարքին, իսկ մայիսի 24-ին Ազգային ընդհանուր ժողովն ընդունում ու հաստատում է կանոնադրությունը, որը Ն. Ռուսինյանի առաջարկությամբ կոչվում է «Ազգային սահմանադրություն»։

Սակայն, որպեսզի Ազգային սահմանադրությունը իրավական ուժ ունենար և գործադրվեր, այն պետք է հաստատվեր Թուրքական կառավարության կողմից։ Սահմանադրությունը ներկայացվում է հաստատման, բայց, այս անգամ ևս, նա հանդիպում է կղերա-ամիրայական ռեակցիայի ու սուլթանական կառավարության դիմադրությանը։ Ընկրկվում է պայքարի մի նոր էտապ՝ մի կողմից սահմանադրության հաստատման, իսկ մյուս կողմից՝ տապալման համար։

1860 թ. մայիսից մինչև 1863 թ. մարտը, մոտ երեք տարի, սուլթանական կառավարությունը ձգձգում է Ազգային սահմանադրության հաստատումը։ Հավատարիմ իր նենգ ու խարդախ քաղաքականությանը, Թուրքական սուլթանը աշխատում էր ավելի բորբոքել հայերի մեջ տեղի ունեցող ներքին պայքարը, ջլատել նրանց ուժերը, թուլացնել նրանց միասնությունը։ Նա այդպես էր վարվում իր բոլոր հպատակ ազգությունների հետ։

Ազգային սահմանադրության համար մղվող պայքարի այս էտապում ժողովրդական մասսաների բողոքներն ու դժգոհություններն ավելի են սաստկանում։ 1861 թ. հուլիսին Պոլսի փողոցներում մասսայական ցույցեր են տեղի ունենում։ Ցուցարարները ներխուժում են Գում-Գափու թաղամասի հայկական եկեղեցին, որտեղ ընդհարումներ են լինում սահմանադրության կողմնակիցների ու հակառակորդների միջև։

Սահմանադրության թշնամիները Հ. Ջամուռճյանի գլխավորությամբ ամեն ջանք գործադրում էին սուլթանի ձեռքով խպառ ջնջել և ոչնչացնել սահմանադրությունը։ Նրանք, ինչպես Մ. Մամուրյանն է ասում, տքնում էին «մուր քսել սահմանադրության վրա», կործանել այն։

Հեղափոխական-դեմոկրատ Մ. Նալբանդյանը, խոսելով առաջադիմական և հետադիմական ուժերի միջև Ազգային սահմանադրության շուրջ ծավալված պայքարի մասին և պաշտպանելով սահմանադրականներին, գրում է. «Սորանից մի քանի տարի առաջ «Սահմանադրություն» բառը մեր ազգայինք արտասանեցին։ Սահմանադրությո՜ւն, կրկնեց հարստահարված ու կիսաշունչ ժողովուրդը. Սահմանադրությո՜ւն, լսվեցավ եգիպտական բուրգերից մինչև Վարագա սարը, Սահմանադրությո՜ւն, աղաղակեցին և հրճվեցան կենդանի երիտասարդները...

Սահմանը դրվեցավ։ «Կեցցե՜ Սահմանադրություն». տակավին լսվում էր այս խոսքը հազարավոր բազմության բերանից,— գրում է Նալբանդյանը,— երբ յուրյանց խավարային որջերից դուրս սողացին ազգի արյունով յուրյանց քիթ ու պռունկը ներկած բռնակալները և աղաղակեցին. «Ի՞նչ ասել է Սահմանադրություն, տերության մեջ տերություն կանգնեցնել», «Ազգը սալթ անհավատ ընել, տերության դեմ ապստամբեցնել»։ «Ազգի դավանանքների համար ամեն հնար սուրբ էր և շուն կարելի էր մատաղ անել, միայն թե Սահմանադրությունը կործանվեր»։

1862 թ. փետրվարին, Թուրքական կառավարության պահանջով և նրա ներկայացուցչի մասնակցությամբ, վերանայվում է սահմանադրությունը։ Նույն տարվա ապրիլին փոփոխված սահմանադրության տեքստը ներկայացվում է Բարձրագույն Դռանը, բայց նորից ձգձգվում է նրա հաստատումը։

Ժողովրդի զայրույթը հասնում է գագաթնակետին. 1862 թ. օգոստոսի 1-ին Պոլսում տեղի է ունենում բազմահազարանոց մի հուժկու ցույց։ Ցուցարարները ներխուժում են պատրիարքարանի շենքը և պահանջում անհապաղ գործադրել սահմանադրությունը։ Պոլսահայ դեմոկրատիայի այս ցույցը ցրվում է ոստիկանության ու զորքի միջոցով։

Ուշագրավ է, որ Պոլսի հայ աշխատավորության մասսայական այս ցույցերը համընկան Զեյթունի գյուղացիության 1862 թ. օգոստոսի 2-ին բռնկված ապստամբության հետ։ Անտարակույս, պատահական զուգադիպություն չէր այս։ Զեյթունի, Պոլսի և մյուս վայրերի հայկական շարժումների միջև գոյություն ուներ մի ընդհանուր, ներքին օրգանական կապ։

Թուրքական կառավարությունը, վախեցած ժողովրդական հուզումներից, 1863 թ. մարտի 17-ին վավերացրեց վերափոխված կանոնադրությունը, որից հետո այն գործադրության մեջ դրվեց։

Ինչպես տեսնում ենք, արևմտահայերի Ազգային սահմանադրությունը «բարեխնամ» սուլթանը չշնորհեց, ինչպես միակողմանի և սխալ ներկայացնում են որոշ հեղինակներ։ Ազգային սահմանադրությունը ձեռք բերվեց արևմտահայ դեմոկրատների համառ ու տեսական պայքարի գնով, հակառակ կղերա-ամիրայական վերնախավի և սուլթանական կառավարության կամքի ու ցանկության։ Հետագայում էլ սահմանադրության թշնամիները չդադարեցրին իրենց պայքարը և քանիցս արգելվեց նրա գործադրությունը։

1860 և 1863 թվականների սահմանադրությունը

1860 թ. մայիսի 24-ին և 1863 թ. մարտի 17-ին հաստատված սահմանադրությունների միջև կան էական տարբերություններ։

1860 թ. սահմանադրությունը բաղկացած էր 150 հոդվածից, իսկ 1863-ինը՝ 99։ Կրճատվել էին համեմատաբար արմատական և Թուրքական կառավարության համար անընդունելի կետերը։

Ավելացվել էին «հավատարիմ մնալ տերությանը» բառերը, որոնք առաջինի մեջ չկային։

1860 թ. սահմանադրության մեջ սկզբում տրված էր Ազգային վարչությանը և Ազգային ընդհանուր ժողովին վերաբերող հոդվածները, իսկ հետո՝ պատրիարքին վերաբերողները։ Հաստատված օրինակում պատրիարքին վերաբերող մասը բերված է առաջ, իսկ Ազգային ընդհանուր ժողովին վերաբերող հոդվածները տրված են վերջում։

Էական փոփոխություններից մեկն էլ այն էր, որ Ազգային ընդհանուր ժողովի 400 անդամների թիվը կրճատվել, հասցվել էր 140-ի։ Դրա գլխավոր նպատակը գավառի ներկայացուցիչների թվի կրճատումն էր, ժողովրդական մասսաներին հասարակական-քաղաքական կյանքից հեռու պահելը։

Ազգային սահմանադրության 1860 և 1863 թթ. տեքստերում կան նաև այլ փոփոխություններ, կրճատումներ ու լրացումներ։

Ազգային սահմանադրության սկզբում շարադրված են նրա հիմնական սկզբունքները։ Այդտեղ ասված է. «Ազգն ու ազգայինք փոխադարձ պարտեռք կապված են իրարու հետ. անանկ, որ մեկին պարտավորությունքը մյուսին իրավունքն է»։ «Ազգին պարտականությունն է՝ ազգայնոց բարոյական, մտավորական և նյութական պիտոյիցը հոգ տանել, ազգային հաստատությունքը պայծառ պահել, ազգային առաջադիմության անձնվեր աշխատիլ»։

«Ազգայինք պարտավոր են ազգին պիտոյիցը պահանջած ծախքերուն մասնակցիլ, ծառայությանց հոժարակամ հանձնառու ըլլալ, անոր ըրած տնօրենությանցը սիրով հնազանդիլ»։

Ուշագրավ են նաև հետևյալ կետերը. «Վարչությունը՝ ազգային ըլլալու համար, պետք է երեսփոխանական (ներկայացուցչական։—Վ. Պ.) ըլլա», երեսփոխանական վարչության հիմը՝ իրավանց և պարտեաց սկզբունքն է, որ արդարության սկզբունք է. իր ուժը ձայնից բազմության մեջ կը կայանա, որ օրինավորության սկզբունքն է»։

Արևմտահայերի ներքին գործերը վարելու համար, սահմանադրության համաձայն, կազմում են՝ Ազգային ժողով (օրենսդիր մարմին), Ազգային կենտրոնական վարչություն (գործադիր մարմին), Ազգային կրոնական ժողով (հոգևոր գործերը վարելու) և Քաղաքական ժողով (աշխարհիկ գործերը վարելու)։

Բացի այդ, հիմնվում են ուսումնական, տնտեսական, դատաստանական, վանքերի և թաղական խորհուրդներ, Ազգային գավառական վարչություն, ելևմտից, կտակների, հիվանդանոցների հոդաբարձություն և այլն։ Առանձին հոդվածներով սահմանվում էր աշխարհիկ և կրոնական մարմինների ու պաշտոնյաների ընտրության կարգը, նրանց իրավունքներն ու պարտականությունները։

Ընտրական իրավունք սահմանվում էր 25 տարին լրացած մարդկանց համար, իսկ ընտրվելու իրավունք՝ 30 տարին։ Ազգային մարմիններն ընտրվում էին գաղտնի քվեարկությամբ, ձայների մեծամասնությամբ։ Թաղական խորհուրդը ընտրում էին տվյալ թաղի բնակիչները։ Ընդհանուր ժողովը պետք է վերընտրվեր 5 տարին մեկ անգամ։ Սահմանադրության վերաքննությունը նույնպես պետք է 5 տարին մեկ անգամ կատարվեր՝ չփոխելով հիմնական սկզբունքները։

Ազգային սահմանադրության դերն ու նշանակությունը

Արևմտահայ կյանքում Ազգային սահմանադրությունը նոր երևույթ էր։ Առաջին անգամն էր մշակվում ու գործադրվում նման սահմանադրություն։

Ֆեոդալական Թուրքիայի ծայրաստիճան հետամնացության ու խավար իրականության ընդհանուր ֆոնի վրա Ազգային սահմանադրությունը մի լուսավոր էջ էր, արևմտահայ հասարակական-քաղաքական մտքի հասունության արտահայտություն, նրա առաջադիմական ուժերի պայքարի արդյունք։

Ազգային սահմանադրությունը, իհարկե, իսկական սահմանադրություն (կոնստիտուցիա) չէր այդ բառի բուն իմաստով։ Դա արևմտահայերի ներքին կյանքին վերաբերող մի կանոնադրություն էր։ Ի դեպ. այդպես էլ կոչվել է թուրքական պաշտոնական գրագրությունների մեջ՝ «նիզամնամե» (կանոնադրություն)։ Այդ կանոնադրությունը Ազգային սահմանադրություն կոչել են նրա հեղինակները և այդ անունով էլ մտել է մեր գրականության մեջ։ Անկասկած, ավելի ճիշտ կլիներ Ազգային կանոնադրություն կոչել, քան սահմանադրություն. դա թե ըստ ձևի և թե ըստ բովանդակության ավելի կհամապատասխաներ նրա էությանը։

Սուլթանական Թուրքիայում տիրող միահեծան, բռնապետական կարգերում, երբ ինքը՝ թուրք ժողովուրդը սահմանադրություն չուներ, հասկանալի է, որ խոսք անգամ չէր կարող լինել թուրքական լծի տակ հեծող ճնշված ազգերի սահմանադրության մասին։ Արևմտահայերի Ազգային սահմանադրությունը երբեք չի կարելի ու չպետք է շփոթել պետական սահմանադրության հետ։

Ազգային սահմանադրության իրավունքները, նրա ուժն ու կարողությունը վերջանում էր այնտեղ, որտեղից սկսվում էր սուլթանական կառավարության քաղաքականությունը, թուրք փաշաների ու քուրդ բեկերի ապօրինություններն ու կամայականությունները։ Իրավացի է միջազգային իրավունքի հայտնի մասնագետ Ռոլեն Ժաքմենը, երբ գրում է. «Այս սահմանադրության մեջ ոչ մի տեղ լուրջ երաշխավորություն չկա հայ ազգի ոչ հավաքական և ոչ էլ նրա առանձին անդամների անձնական իրավունքների մասին»։ «Այստեղ ամեն ինչ կա,—գրում է նա,—

բացի մի հոդվածից, որի վրա հայը կարողանար հենվել, որպեսզի քուրդը չխլեր նրա ոխշարները, բեյը չբռնաբարեր նրա աղջիկներին և չըկողոպտեր նրա ունեցվածքը, հարկահավաքը երկու կամ երեք անգամ չպահանջեր միևնույն հարկը, մի խոսքով՝ ամեն ինչ կա, բացի մի այնպիսի կարգադրությունից, որն իրոք երաշխիք լիներ թուրքական կառավարության կամայականության դեմ»։

Նալբանդյանը, որը պաշտպանում ու տոն էր տալիս կղերամիրական վերնախավի ու սուլթանական բռնակալության դեմ սահմանադրության կողմնակիցների մղած պայքարին, միաժամանակ նըշում է, որ Ազգային կանոնադրությունը սահմանադրություն կոչելը ճիշտ չէ։ Սահմանադրությունը մի անուն է, ասում է նա, որ «անիմաստ է թե հայ ազգի և թե այս իսկ կանոնադրության վերաբերյալ»։

Իր բոլոր թերություններով հանդերձ, Ազգային սահմանադրությունը պատմական ուշագրավ մի փաստաթուղթ է, արևմտահայերի հասարակական-քաղաքական կյանքի առաջընթաց մի քայլ։

Ազգային սահմանադրությունը ծնվեց արևմտահայ դեմոկրատիայի և ամիրաների միջև մղվող պայքարում և դարձավ այդ պայքարի հիմնական հարցերից մեկը։ Ազգային սահմանադրության հեղինակներն ու սահմանադրական պայքարի ղեկավարները արևմտահայության առաջավոր ներկայացուցիչներն էին։ Նրանց մեջ կային արմատական դեմոկրատներ և բուրժուական լիբերալներ։ Բայց նրանք ևս, Նալբանդյանի ու Նազարյանի նման, չնայած հայացքների տարբերությանը, ընդհանուր ճակատ էին կազմել սահմանադրության թշնամիների, կղերամիրական ռեակցիայի դեմ։ Արմատական դեմոկրատների (Հ. Սվաճյան, Մ. Մամուրյան և ուրիշներ) գործունեությունը չէր սահմանափակվում միայն Ազգային սահմանադրությամբ, նա ընդգրկում էր սոցիալ-դասակարգային և ազգային-ազատագրական պայքարի ավելի լայն շրջանակներ։ Այս երկու ուղղությունները գնալով ավելի էին սահմանազատվում։

Ազգային սահմանադրությունն ուղղված էր կղերա-ամիրական վերնախավի դեմ։ Նրա նպատակն էր ամիրաներին զրկել ազգային գործերի կառավարման մենաշնորհ իրավունքներից, ինչպես Միքայել Նալբանդյանն է ասում, ազատելով ազգը մի քանի բռնակալ թշվառականների լծից։

Ազգային սահմանադրության ընդունումը արևմտահայ դեմոկրատիայի հաղթանակն էր, ամիրաների, ռեակցիայի պարագլուխ Զամուռճյանի և սահմանադրության մյուս թշնամիների պարտությունը։ Դա ծանրը ու վճռական հարված էր ամիրաներին, որով նրանք, կարելի է ասել, վերջնականապես կորցրին իրենց երբեմնի ազդեցիկ դիրքերը։

Ազգային սահմանադրությամբ առաջին անգամ ամիրաներից ան-

կախ կազմվում էին ազգային մարմիններ, որտեղ մասնակցում էին նաև դեմոկրատական խավերի ներկայացուցիչները։ Որոշակի կարգ ու կանոն, իրավունքներ ու պարտականություններ էին սահմանվում կրոնական և հասարակական գործերում։ Նկատելի կերպով սահմանափակվում էր հոգևորականների մասնակցությունը ազգային գործերին։ Ազգային ընդհանուր ժողովի 140 անդամներից 20-ը հոգևորականներ էին, 120-ը աշխարհական, վարչական ժողովներում և խորհուրդներում, 24-ը եկեղեցական, իսկ 62-ը աշխարհական, թաղական խորհուրդներում բոլորը աշխարհականներ էին։

Սահմանադրությամբ կյանքի կոչված կենտրոնական և տեղական օրգանները պետք է հոգ տանեին արևմտահայության ազգային առաջադիմության, նյութական դրության բարելավման, կրթության, դպրոցների բարեկարգման և այլ հարցերի մասին։

Ազգային սահմանադրության նպատակն էր նաև այս կամ այն չափով, ուղղակի և անուղղակի ձևով արևմտահայերի իրավունքները պաշտպանել թուրքական իշխանությունների ու պաշտոնյաների ոտնձգություններից, նրանց ճնշումներից ու հալածանքներից, արևմտահայության համար ստեղծել համեմատաբար ապահով վիճակ, հասարակական, քաղաքական և կուլտուրական կյանքի զարգացման նպաստավոր պայմաններ։

Ահա թե ինչու ճիշտ չեն այն հեղինակները, որոնք, չխորանալով հարցի մեջ, հախուռն կերպով արևմտահայերի Ազգային սահմանադրությունը համարում են «Ազգային-եկեղեցական կարկատան» կամ «սոցիալ-քաղաքական ոչ մի լուրջ հարց չշոշափող», «աննշան հարցերի վերաբերող թղթի կտոր»։

Արևմտահայերի սահմանադրական շարժումն իր ժամանակի պատմական պայմաններում առաջադիմական շարժում էր։ Այդ շարժումը ջերմորեն պաշտպանում էին ինչպես արևմտահայ, այնպես էլ արևելահայ դեմոկրատները, առաջավոր գրողները, արվեստագետները, հասարակական-քաղաքական գործիչները։ Սահմանադրության դեմ պայքարում էին հետադիմական ուժերը։

Չպետք է թերագնահատել և ոչ էլ գերագնահատել արևմտահայերի Ազգային սահմանադրության դերն ու նշանակությունը։ Դա մեր անցյալի հասարակական-քաղաքական պայքարի ուշագրավ էջերից է և պետք է իր արժանի տեղը գտնի մեր պատմության մեջ։

2. ԶԵՅԹՈՒՆԻ 1862 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅՈՒՆԸ

Ապստամբության պատճառները

Զեյթունը կամ Ուլնիան գտնվում է լեռնային Կիլիկիայում, Մարաշից հյուսիս, Տավրոսի լեռներում։ Վաղ ժամանակներից այդտեղ բնակություն հաստատած հայերն ապրում էին համայնական կյանքով, փակ բնատնտեսության պայմաններում։ Նրանց հիմնական զբաղմունքը հողագործությունն էր, անասնապահությունը և արհեստները։ Զեյթունի ինքնապաշտպանության համար խիստ կարևոր նշանակություն ուներ Պերիտի երկաթահանքերի մշակությունը. տեղական հումքից երկաթագործ վարպետները ոչ միայն գյուղատնտեսական գործիքներ, այլև ընտիր զենքեր էին պատրաստում։

XIX դարի կեսերին Զեյթունի գավառակում ապրում էին շուրջ 30 հազար հայեր, որից մոտ 18 հազարը՝ Զեյթուն գյուղաքաղաքում։ Հայերի հետ խառն և առանձին գյուղերում ապրում էին նաև շուրջ 8 հազար մահմեդականներ։

Զեյթունը մեղ հետաքրքրող ժամանակաշրջանում սոցիալ-տնտեսական առումով արդեն իսկ բավականաչափ շերտավորված էր։ Այնտեղ կային հարուստներ, իշխաններ և միջակ ու չքավոր խավեր, որոնք շահագործվում էին իշխող վերնախավի կողմից։

Զեյթունի հայ համայնքի կառավարման գործը գտնվում էր տեղի ունևոր խավի ձեռքում։ Գյուղերը կառավարում էին գյուղապետները կամ քեհյաները, որոնք ընտրվում էին համայնքի կողմից։ Զեյթուն գյուղաքաղաքը բաժանված էր չորս թաղի, ամեն մի թաղն ուներ իր թաղապետը, որն իշխանական տոհմից էր և միանձնյա տնօրինում էր իրեն ենթակա թաղի գործերը։

Հայ համայնքին վերաբերող ընդհանուր, ծանրակշիռ հարցերը քննվում էին բոլոր կառավարիչների և հոգևոր պետի համատեղ ջանքերով։ Հոգևոր առաջնորդը ակտիվ մասնակցություն էր ունենում համայնքի աշխարհիկ գործերին։

Զեյթունցիք, օգտվելով բնական, աշխարհագրական նպաստավոր պայմաններից, բանուկ ճանապարհներից հեռու ընկած անառիկ լեռների ու ձորերի գրկում, վաղուց ի վեր մի տեսակ կիսաանկախ կյանք էին վարում և միայն որոշ քանակությամբ տուրք էին վճարում Թուրքական կառավարությանը։ Զեյթունցիների այդօրինակ վիճակը դուր չէր գալիս Մարաշի փաշաներին և մոտակա շրջանների մահմեդական ցեղապետներին։ Նրանք քանիցս փորձել էին վերացնել Զեյթունի կիսաանկախությունը, բայց այդ նրանց չէր հաջողվել։

Այսպես, օրինակ, դեռևս 1780 թվականին Մարաշի Էմեր փաշան հարձակվում է Զեյթունի վրա, յոթ ամիս պաշարում է Զեյթունը, բայց

դրավել չի կարողանում։ Զեյթունի վրա թուրք փաշաները արշավում են նաև 1808, 1819, 1829, 1832, 1835 և 1842 թվականներին։

1860 թ. հունիսին Մարաշի Խուրշիդ փաշան 12 հազար զորքով հարձակվում է Զեյթունի վրա, անցնում Ջահան գետը և Ջերմուկի դաշտում կռվի բռնվում զեյթունցիների հետ։ Թուրքական զորքերը, չդիմանալով քաջարի զեյթունցիների դիպուկ հարվածներին, մեծ կորուստներ տալով, նահանջում են։

Զեյթունի քաջերի ազատասիրությունն ու հայրենասիրությունը, ըմբոստ ու խիզախ գործողությունները ոգեշնչում էին թուրքական լծի տակ գտնվող արևմտահայությանը և մյուս ճնշված ժողովուրդներին։

1850—1860-ական թվականներին Կ. Պոլսում և գավառներում աշխուժացող արևմտահայ ազգային-ազատագրական շարժումները տագնապ առաջացրին Թուրքիայի կառավարող շրջաններում։ Հարստահարությունները, հալածանքներն ու բռնությունները հայերի նկատմամբ ավելի սաստկացան։ Զեյթունը, որը հայ ժողովրդի համար պայքարի դրոշ էր, բնական է, չէր կարող վրիպել սուլթանական կառավարության տեսադաշտից։ Հավաստի տեղեկություններ կան այս մասին, որ Զեյթունի ապստամբությունից առաջ թուրքական մեծ վեզիրը ասել է. «Կիլիկիո լեռներուն մեջ կան քանի մը ապստամբ ժողովուրդ, հուսամ, թե քիչ ատենեն զանոնք անհետ կանենք»։

1862 թ. գարնանը հողային վեճեր ծագեցին Զեյթունում, ընդհարումներ ու սպանություններ տեղի ունեցան հայերի ու թուրքերի միջև։ Մարաշի Ազիզ փաշան, որը հրահրում էր այդ վեճերը, 1862 թվականի հուլիսին, ավելի քան տասը հազար[1] կանոնավոր զորքի և բազմաթիվ բաշիբոզուկների գլուխ անցած, արշավում է Զեյթունի վրա։

Ավերելով մի քանի գյուղեր, կոտորելով խաղաղ բնակիչներին, թուրքական զորքերը հուլիսի վերջերին պաշարում են Զեյթունը։ Ազիզ փաշան զեյթունցիներից պահանջում է հանձնել իրենց զենքերն ու ղեկավարներին, վճարել մի քանի տարվա հարկերը։ Զեյթունցիք մերժում են նրա պահանջը և դիմում ինքնապաշտպանության։

Զեյթունի 1862 թվականի ճերոսամարտերը

Զեյթունի հայերի համար անակնկալ չէր թուրքական զորքերի արշավանքը։ Նրանք վաղօրոք գիտեին այդ մասին և պատրաստվել էին դիմագրավել թշնամուն։

Ոտքի էին կանգնել տասնհինգ տարեկանից բարձր զենքի ընդունակ բոլոր տղամարդիկ, զենք էին վերցրել կանայք ու ծերերը։ Զեյթունում էին կենտրոնացել շրջակա գյուղերից փախած հայերը՝ թշնամուց

---

[1] Որոշ աղբյուրներ Ազիզ փաշայի զորքերի թիվը հաշվում են 30—40 հազար, որը հավանական չէ։

պատսպարվելու և նրա դեմ կռվելու համար։ Զեյթունը վեր էր ածվել մի անառիկ ամրոցի։ Քաջասիրտ զեյթունցիք մի մարդու պես վճռել էին՝ կռվել մինչև արյան վերջին կաթիլը, չճանձնվել անարգ թշնամուն։

Զեյթունի չորս թաղապետներից յուրաքանչյուրը՝ Նազարեթ Սուրենյան, Մկրտիչ Յաղուբյան, Աստուր Ենի-Տունյան և Ղազարոս Շովրոյան, ուներ 1500 հոգուց կազմված իր զորաբաժինը, պաշտպանության որոշակի բնագիծն ու դիրքերը։ Հայերի կռվող ուժը հաշվվում էր 5—6 հազար մարդ։ Թշնամու ուժերը մի քանի անգամ ավելի էին։ Հակառակորդը գերակշռում էր ոչ միայն իր քանակով, այլև զենքի տեսակներով ու ռազմապաշարով։ Թուրքերն ունեին երկու հրանոթ, հայերը նրանց դեմ կռվում էին կայծքարի հրացաններով, ինքնաշեն սառը զենքերով, ժայռերից քարեր գլորելով։

1862 թվականի օգոստոսի 2 (14)-ի վաղ առավոտյան թուրքական բազմահազար զորքերը մի քանի ուղղությամբ սկսում են գրոհել Զեյթունի վրա։ Զեյթունի լեռներն ու ձորերը սկսում են դղրդալ ու թնդալ հրանոթների ու հրացանների որոտից։ Անվեհեր զեյթունցիք զանգակների զողանջների տակ ընդունում են անհավասար մարտը։

Ազիզ փաշան, հույսը դրած իր զորքերի թվական գերակշռության վրա, հավատացած էր, թե մի հարվածով կջախջախի զեյթունցիներին և կգրավի Զեյթունը։ Բայց նրա հույսերը ի դերև ելան, երբ ականատես եղավ զեյթունցիների դիպուկ գնդակներից գետին գլորվող իր ասկյարներին։ Գազազած փաշան հրամայում է իր ունեցած երկու հրանոթներն ավելի մոտեցնել քաղաքին և ավերել այն։

Թուրքական հրանոթները բավականաչափ ծանր դրություն են ստեղծում Զեյթունի պաշտպանների համար։ Չնայած նրան, որ աղյուսակերտ տները հեշտությամբ չէին փլվում և հրդեհ չէր առաջանում, բայց մարդկային զոհեր էին լինում։

Ուստի զեյթունցիք որոշում են անհապաղ շարքից հանել թշնամու հրանոթները։ Այդ անձնազոհ գործն իր վրա է վերցնում երիտասարդ հայրենասեր Մարկոս Թաշճյանը։ Երբ ընկերները փորձում են նրան թույլ չտալ և ասում են. «Անմիտ մեռնելու կերթաս», Թաշճյանը պատասխանում է. «Այո՛, գիտեմ պիտի մեռնիմ, բայց ուրիշները պիտի ապրեցնեմ»։

Խիզախ հայրենասերն անցնում է թշնամու դիրքերը, սողալով մոտենում և սպանում է թնդանոթաձգին, բայց ինքն էլ հերոսի մահով ընկնում է թշնամու գնդակից։ Զեյթունցիք միշտ վառ են պահում հերոսի հիշատակը. «Ախ, Թաշճյան, քաջ Մարկոս,— ասում են նրանք,— Զեյթունի համար հոգին տվավ. թնդանոթաձիգը սպանեց, դյուղի հոգին ալ աղատեց»։

Քաջարի զեյթունցիք Ազիզ փաշայի զորքերի դեմ փայլուն հաղթանակներ են տանում Աքդաղի և Սաղրի բարձունքներում, սբ. Աստվածածնի վանքի մոտ մղված մարտերում։

Ականատեսները պատմում են, որ սբ. Աստվածածնի վանքի մոտ 75 տարեկան մահտեսի Գրիգորը, երիտասարդ կտրիճների հետ, հերոսաբար մարտնչում է մի քանի հարյուր թուրքերի ու չերքեզների դեմ և փախուստի մատնում նրանց։

Տեղեկություններ են պահպանվել նաև 20-ամյա երիտասարդ Մելիքսեթ Խասյանի սխրագործությունների մասին։ Զաքր-Դերեի կիրճում տեղի ունեցած կռիվների ժամանակ նա համարձակ կերպով նետվում է թշնամու վրա, շատերին սպանում ու վիրավորում, բայց ինքն էլ ծանր վերքեր է ստանում և մահամերձ ընկնում կռվի դաշտում։ Խասյանի մայրը իր միակ որդուն գտնում է սպանվածների մեջ, արյունաթաթախ ու մահամերձ վիճակում։

Զեյթունի ներկայացուցիչները Կ. Պոլսում այս մասին պատմում են մեր մեծանուն բանաստեղծ Մ. Պեշիկթաշլյանին, որը և ներշնչված գրում է իր նշանավոր «Մահ Քաջորդվոյն» բանաստեղծությունը.

Դու զո՞վ խնդրես, մա՜յր իմ անուշ,
Ե՛կ, մի դողար, մոտեցիր հոս,
Անլաց աչոք դիտե զորդիդ
Ու յուր վերքերն արյունահոս։
Թուրքաց մայրեր թող լան՝ ու դուն
Ուրախ լուրեր տար ի Զեյթուն։

Օգտագործելով բնական նպաստավոր պայմանները՝ անառիկ լեռները, ձորերն ու կիրճերը, զեյթունցիք հաճախ դիմում էին ռազմական խորամանկության և թակարդ լարում թշնամու համար։ Զեյթունցիներից 500 հոգի հարձակվում են թուրքական զորքերի վրա ու որոշ ժամանակ կռվելուց հետո դիտավորյալ նահանջում Զեյթունի ձորը, որտեղ երկու կողմից դիրք մտած նրանց ընկերները սպասում էին թշնամուն։ Երբ թուրքական զորքերն իրենց «հաղթանակով» ոգևորված, հետապնդելով փախչող հակառակորդին, լցվում են ձորը, զեյթունցիք երկու կողմից սկսում են կրակ տեղալ և քարեր գլորել նրանց վրա։ Ծուղակն ընկած թուրքերը, կորցնելով ավելի քան 750 մարդ, հազիվ են կարողանում այնտեղից դուրս պրծնել։ Զեյթունցիք այդ ձորն անվանում են «Կոտորածի ձոր»։

Իբրև կանոն զեյթունցիք ինքնապաշտպանական ակտիվ կռիվներ էին մղում թուրքական զորքերի դեմ։ Բայց այդ չէր խանգարում, որ առանձին խիստ անհրաժեշտ դեպքերում նրանք հարձակումներ գործեն թշնամու վրա։ Այսպես, օրինակ, երբ զեյթունցիք տեղեկանում են,

որ Ահմեդ փաշան 5000 հոգով գտնվում է Ավաղ-Կեսիկի կիրճում և պատրաստվում է հարձակվել իրենց վրա, որոշում են իրենք նախահարձակ լինել։ Իրիկնամուտին զեյթունցիք մի քանի հարյուր հոգով հանկարծակի ու սրընթաց գրոհում են Ահմեդ փաշայի զորքերի վրա, Թուրքերը մեծ կորուստներ տալով, խուճապահար փախուստի են դիմում։

Զեյթունի համար մղվող դաժան մարտերում միշտ չէ, որ հաղթանակը հայերի կողմն էր լինում։ Մի անգամ Բերկին-Կալի և Աքդաղի ուղղությամբ Թուրքերին հաջողվեց ճեղքել հայկական պաշտպանության գիծը և ներխուժել Զեյթուն։ Բայց Թշնամու հաղթանակը շատ կարճատև եղավ։ Սուրենյանի զինվորներն առյուծի պես հարձակվեցին Թուրքերի վրա և նրանց դուրս շպրտեցին քաղաքից։

Ուշագրավ է, որ տեղացի Թուրքերից ոմանք, որ տարիներ շարունակ բարիդրացիական հարաբերությունների մեջ էին հայերի հետ, մասնակցեցին Զեյթունի հերոսական պաշտպանությանը։ Դրանցից առանձնապես աչքի ընկան Ֆերիզ Օղլի Մեհմեդճիկը և Չեքյուկ Մեհմեդը, որոնք Չաքր-Դերեում արիաբար կռվեցին Ազիզ փաշայի զորքերի դեմ և ընկան մարտի դաշտում։

1862 թ. օգոստոսի 2-ին մղված վճռական մարտերում զեյթունցիք փայլուն հաղթանակ տարան։ Նրանք հաղթական կռիվներ շատ էին մղել, բայց նման ծանր ու դժվարին կռիվներ և մեծ հաղթանակներ Զեյթունը չէր տեսել։ Այս կռիվը կենաց և մահու կռիվ էր. ամբողջ Զեյթունը՝ մեծ ու փոքր, կին թե տղամարդ ծառս էր եղել դաժան թշնամու դեմ։ Զեյթունցիներից ամեն մեկը մի մարտիկ էր։ Նրանք միասնական էին ավելի քան երբևէ. բոլորը տոգորված էին հաղթանակի հավատով, մարտնչում էին հաղթանակի համար, արիության ու քաջության օրինակ հանդիսանում։

Զեյթունի հերոսական պաշտպանությունը ձախողում է Ազիզ փաշայի բոլոր պլանները։ Կորցնելով ավելի քան 2000 մարդ, իրենց ունեցած երկու հրանոթը, մեծ քանակությամբ զենք ու ռազմամթերք, Թուրքական զորքերը խուճապահար փախչում են Զեյթունից։ Զեյթունցիք համեմատաբար փոքր ուժերով մեծ հաղթանակ են ձեռք բերում։ Զեյթունի հերոսներն իրենց անառիկ լեռների պես մնում են անսասան։

Ազիզ փաշայի զորքերի խայտառակ պարտությունը մեծ իրարանցում առաջ բերեց Թուրքիայի կառավարող շրջաններում։ Ազիզ փաշան ազատվեց իր պաշտոնից, նրա փոխարեն նշանակվեց Աշիր փաշան, որը հայտնի էր որպես բալկանյան ժողովուրդների դահիճ։ Նրան հանձնարարվեց նոր արշավանք կազմակերպել Զեյթունի վրա և խստորեն պատժել ապստամբներին։

Զեյթունի աչքի ընկնող գործիչներից մի քանիսը խաբեությամբ

Մարաշ կանչվեցին և բանտ նետվեցին։ Որոշեցին տնտեսական բլոկադայի ենթարկել Զեյթունը. փակեցին բոլոր ճանապարհները, կտրեցին կապը Մարաշի, Հաճընի, Ադանայի, Ալբիստանի և մյուս հայկական բնակավայրերի հետ, որտեղից նրանք երբեմն օգնություն էին ստանում։ Զեյթունը կանգնեց սովի սպառնալիքի առաջ։

Ստեղծված ծանր դրությունից դուրս գալու համար զեյթունցիները պատվիրակներ ուղարկեցին Կ. Պոլիս, դիմեցին ֆրանսիական կառավարության և Պոլսի հայ պատրիարքի միջամտության։

Ֆրանսիան և Անգլիան, որոնք այդ ժամանակ մեծ ազդեցություն ունեին Մերձավոր արևելքում, աշխատում էին Թուրքիայի լծի տակ գտնվող ճնշված ժողովուրդների ազգային-ազատագրական պայքարն օգտագործել իրենց նվաճողական նպատակների համար։ Նրանք փարիսեցիաբար կեղծ խոստումներ էին տալիս, բայց ըստ էության դեմ էին ճնշված ժողովուրդների ազատագրությանը։ Ֆրանսիան խոստացավ զեյթունցիներին օգնել՝ կաթոլիկություն ընդունելու պայմանով։ Զեյթունի վերնախավի ներկայացուցիչները, կաթոլիկ հայերի առաջնորդ Անտոն արքեպիսկոպոս Հասունյանի հորդորանքով, հարկադրված համաձայնում են օգնության դեպքում կաթոլիկություն ընդունել։

Սուլթանը և Կ. Պոլսի հայ պատրիարքը վախենալով, որ կաթոլիկություն ընդունելով զեյթունցիք ամբողջապես կընկնեն Ֆրանսիայի ազդեցության տակ, ստիպված դիմում են կոմպրոմիսի։ Թուրքական կառավարությունը հրաժարվում է Զեյթունի վրա նոր արշավանք կազմակերպելուց։ Զեյթունցիք պարտավորվում են վերադարձնել գրաված 2 հրանոթը, ռազմական ավարը և վճարել հարկերը։ Քննիչ հանձնաժողով է ուղարկվում Զեյթուն և փոխադարձ զիջումներով հաշտություն կնքվում։

1865 թվականին Զեյթունում նշանակվում է Թուրք կառավարիչ (կայմակամ)։ Զեյթունցիք զրկվում են իրենց նախկին կիսանկախ վիճակից։ Նրանց թողնվում են որոշ սահմանափակ իրավունքներ՝ համայնական ու եկեղեցական ներքին գործերը վարելու համար։ Ներքին և արտաքին ուժերի ճնշման տակ զեյթունցիք փաստորեն զրկվեցին հերոսական պայքարի գնով ձեռք բերած իրենց հաղթանակի պտուղներից։ Բայց դա նրանց ոչ միայն չընկճեց, այլև նոր պայքարի մղեց Թուրքական բռնակալների դեմ։

Զեյթունի ապստամբության պատմական նշանակությունը

Զեյթունի 1862 թվականի ապստամբությունը հայ ազատագրական պայքարի փառավոր դրվագներից է։ Մեծ է եղել այդ ապստամբության նշանակությունը հայ ժողովրդի ազգային գիտակցության բարձրացման, հայ ազատագրական շարժումների հետագա զարգացման համար։

Զեյթունի գյուղացիության հերոսական օրինակը երկար տարիներ ոգեշնչել և ազատագրական պայքարի է մղել հայ ժողովրդին, օրինակ հանդիսացել Թուրքիայի լծի տակ հեծող մյուս ճնշված ժողովուրդների համար: Այս տեսակետից XIX դարի հայ իրականության մեջ ազգային-ազատագրական ոչ մի շարժում այնքան մեծ դեր չի խաղացել, որքան Զեյթունի ապստամբությունը:

Պատահական չէ, որ հայ մեծ հեղափոխական-դեմոկրատ Մ. Նալբանդյանը, արևմտահայ նշանավոր դեմոկրատներ Հ. Սվաճյանը, Ս. Թագվորյանը, Մ. Մամուրյանը, Մ. Պեշիկթաշլյանը, Ծերենցը (Հ. Շիշմանյան), Գր. Չիլինկիրյանը, Ա. Հայկունին, Կ. Փանոսյանը և ուրիշներ ամեն կերպ խրախուսում ու պաշտպանում էին զեյթունցիներին, նրանց օրինակով ազատագրական պայքարի կոչում ամբողջ հայ ժողովրդին:

Զեյթունի ապստամբությունը տեղի ունեցավ պատմական այնպիսի իրադրության պայմաններում, երբ Արևմտյան Եվրոպայի և Ռուսաստանի հեղափոխական շարժումների հուժկու ալիքներն արդեն իսկ հասել էին Հայաստան: Գերցենի և Չերնիշևսկու, Գարիբալդիի ու Մաձզինիի բարեկամ Մ. Նալբանդյանը ազատության զանգն էր հնչեցնում, ցարական ու սուլթանական բռնակալության դեմ հայ ժողովրդին պայքարի կոչում, կապելով այդ համառուսական և համաեվրոպական հեղափոխական շարժման հետ:

Փաստեր կան այն մասին, որ 1860—1861 թվականներին, երկու անգամ Պոլսում եղած ժամանակ, Մ. Նալբանդյանն անձնական և գաղափարական մոտիկ կապեր է հաստատել արևմտահայ դեմոկրատներ Հ. Սվաճյանի, Ս. Թագվորյանի, Մ. Մամուրյանի և ուրիշների հետ: Մ. Նալբանդյանի նախաձեռնությամբ Պոլսում ստեղծվել է գաղտնի հեղափոխական մարմին, որը պետք է գլխավորեր արևմտահայերի ազատագրական պայքարը: Այդ գաղտնի կազմակերպության ղեկավարներն էին Հ. Սվաճյանը և Ս. Թագվորյանը:

1862 թ. մայիսի 14-ին Պոլսից Մ. Նալբանդյանին գրած Սերոբե Թագվորյանի ծածկագիր նամակից երևում է, որ նրանք գործնական և գաղափարական մասնակցություն են ունեցել Զեյթունի 1862 թ. ապստամբության նախապատրաստմանը:

Զեյթունի ապստամբությանը յուրովի արձագանքեցին նաև հայ լիբերալները: Եթե դեմոկրատներն ու նրանց օրգանները («Մեղու», «Ծաղիկ», «Մյունատի» և այլն) համարձակ կերպով դրվատում ու պաշտպանում էին զեյթունցիների ազատագրական պայքարը, աշխատում էին նոր թափ հաղորդել նրան, ապա լիբերալները նեղ ազգասիրական ու բարեգործական շրջանակներից հեռու չէին գնում:

1862 թվականի Զեյթունի ապստամբությունը գիշերվա խավարում պայթած ռումբի պես լայն արձագանք գտավ հայ ժողովրդի մեջ: Զեյթունը ազատագրական պայքարի խորհրդանիշ դարձավ ամբողջ հայության համար:

Ժամանակակիցներից մեկը՝ Սրբուհի Երիցյանը (մեր նշանավոր պատմաբան Ալեքսանդր Երիցյանի կինը) գրում է. «Այն տարին Զեյթունի անցքերը մեծ ազդեցություն ունեցան Պոլսո և այլ տեղերի հայոց վերա. ամենայն ոք Կիլիկիան ուներ ի բերան, ամենայն ոք մասնակից էր դրամական հանգանակության: Ընկերություններ էին կազմվում, թանգարաններ ու դպրոցներ հաստատվում և վարժապետներ ուղարկվում Կիլիկիա»:

Զեյթունի ապստամբության անմիջական ազդեցության տակ ազատագրական խոշոր ելույթներ և բողոքի ցույցեր տեղի ունեցան Վանում, Մուշում, Զարսանջակում, Էրզրումում, Պոլսում և այլ վայրերում: Ժողովրդական այդ հուզումները դաժանորեն ճնշվեցին թուրքական զորքերի օգնությամբ: Բայց Զեյթունի կրակը այլևս անկարելի էր մարել:

Հայ աշխատավորությունն իր խրոխտ ձայնը հնչեցրեց ի պաշտպանություն հերոս Զեյթունի: Հաշվի առնելով զեյթունցիների համար ստեղծված ծանր դրությունը և սովի վտանգը, թե արևմտահայերը և թե արևելահայերը մի շարք տեղերում դրամական օգնություն կազմակերպեցին: Թիֆլիսում ստեղծվեց առանձին կոմիտե՝ Զեյթունին օգնելու համար: Միայն Պոլսի հայերը 2000 ոսկի հավաքեցին և ուղարկեցին Զեյթուն:

Զեյթունի ապստամբությունը նոր մղում տվեց ոչ միայն մեր ազատագրական պայքարին, այլև հասարակական-քաղաքական մտքին, գրականությանն ու արվեստին:

Խիզախեց ու պայքարի ելավ մինչ այդ համեմատաբար «խաղաղ» ու «հնազանդ» մամուլը: Դեմոկրատական թերթերը Զեյթունի օրինակով պայքարի կոչեցին ժողովրդին. «Մյունատին» փակվեց, նրա խմբագիր Կ. Փանոսյանը բանտ նետվեց և թուրքական եղանակով լլկանքների ենթարկվեց:

Խիզախեցին ու պայքարի ելան գրողներն ու արվեստագետները, բանաստեղծություններ ու երգեր գրվեցին հերոս Զեյթունի մասին: Մեր նշանավոր գրողներից Ս. Շահազիզը, Մ. Պեշիկթաշլյանը, Ռ. Պատկանյանը և ուրիշներ իրենց ստեղծագործություններում անմահացրին Զեյթունի փառքը:

1860-ական թվականների դեմոկրատ բանաստեղծ Սմբատ Շահազիզը, որը Զեյթունի ապստամբությունը համարել է «Հայկական քաջասրտության փառավոր ապացույց», «Եզվիտներ և Զեյթուն» բանաստեղծության մեջ գրել է.

Ո՛վ ազատություն, դու սպառազեն
Տավրոս լեռներից մեզ երևեցար,
Եվ արինարբու Ազիզն անօրեն
Տարավ նշավակ, անկավ չարաչար։

Ո՛վ Զեյթո՜ւն, Զեյթո՜ւն, վերջին շունչ զոհիր,
Սուրբ անկախության, ազգիդ պարծանքին...
Ազատ ծնել ես, թող ազատ մեռնի,
Զեյթունի որդին, քեզ անմահություն։

Զեյթունցիների քաջագործությունների մասին բազմաթիվ երգեր հյուսվեցին։ Լայն տարածում գտավ առանձնապես Հ. Չագրյանի «Զեյթունցիներ» քայլերգը, որը մինչև օրս էլ ժողովրդի մեջ երգվում է։

Արևն ելավ զեյթունցիներ,
Դե՛հ ձի հեծնենք, առնենք զենքեր
Դիմենք առաջ։
Ինչու՞, ինչու՞ գլուխ ծռենք
Բռնավորին մեր վիզ պարզած։
Կեցցե՛ Զեյթուն, ապրե՛ Զեյթուն,
Թող չտեսնե ստրկություն։
Քանի ունի մեզ պես որդիք,
Ապրի՛ Զեյթուն, կեցցե՛ Զեյթուն։

Զեյթունի մի բուռ հայ քաջերի օրինակը ոգեշնչել, ազատասիրության ու հայրենասիրության վեհ գաղափարներով տոգորել է ամբողջ սերունդների, նրանց մղել ազնիվ ու արդարացի պայքարի։ Լինելով ժողովրդա-ազատագրական առաջին խոշոր ընդվզումը թուրքական բռնակալության դեմ, Զեյթունի ապստամբությունը միշտ քաջության, ազատասիրության ու հայրենասիրության կենդանի օրինակ է հանդիսացել։

Անհա թե ինչու հայ ժողովուրդը բարձր է գնահատում Զեյթունի ապստամբության պատմական նշանակությունը։

X ԳԼՈՒԽ

ԲՈՒՐԺՈՒԱԿԱՆ ՌԵՖՈՐՄՆԵՐԸ ԵՎ ԿԱՊԻՏԱԼԻԶՄԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

1. ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ՌԵՖՈՐՄԸ ԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Ռեֆորմի նախադրյալներն ու նախապատրաստումը

XIX դարի երկրորդ կեսին, ինչպես Ռուսաստանում, այնպես էլ նրա մի ծայրամասը կազմող Արևելյան Հայաստանում, սոցիալ-տնտեսական, հասարակական-քաղաքական և մտավոր կյանքը թևակոխել էր իր զարգացման նոր, կապիտալիստական փուլը։ Բայց, ինչպես միշտ և ամենուրեք, նորը հեշտությամբ չէր ծնվում ու զարգանում։ Հին, ֆեոդալական հարաբերությունները արգելակում էին նոր, կապիտալիստական հարաբերությունների զարգացումը։ Տեղի էր ունենում հնի և նորի բախում։ Արտադրողական ուժերի և արտադրական հարաբերությունների պարտադիր համապատասխանության օրենքը պահանջում էր փոխել իր դարն ապրած ֆեոդալական արտադրական հարաբերությունները։ Ֆեոդալական կարգերը ճգնաժամ էին ապրում։

1850-ական թվականների վերջերին և 1860-ականի սկզբներին երկրում ստեղծվել էր հեղափոխական իրադրություն, երբ վերինները այլևս չէին կարող, իսկ վարիները չէին կամենում ըստ հնույն։ Այդ դրությունից դուրս գալու համար կար երկու ելք, երկու ուղի՝ հեղափոխության և ռեֆորմի։

Ցարական կառավարությունը վախեցած ներքևից եկող հեղափոխությունից, շտապեց վերևից, ռեֆորմի միջոցով լուծել այդ հարցը։ Ալեքսանդր II-ը դեռևս 1856 թվականին դիմելով Մոսկվայի մարզի ազնվականներին ասում էր. ավելի լավ է ճորտերին ազատել վերևից, քան սպասել, որ նրանք ազատվեն ներքևից։

Դրան հակառակ ռուս հեղափոխական դեմոկրատները, Ն. Գ. Չերնիշևսկու գլխավորությամբ, կանգնած էին ճորտատիրական կարգերը տապալելու, ճորտ գյուղացիներին ազատագրելու հեղափոխական ուղու վրա։ Հայ իրականության մեջ այդ տեսակետը պաշտպանում էր հեղափոխական-դեմոկրատ Մ. Նալբանդյանը։

1861 թ. փետրվարի 19-ի օրենքով Ռուսաստանում վերացվեց ճորտատիրական իրավունքը։ 1860—1870-ական թվականներին անցկացվեցին նաև վարչական, դատական, զինվորական և ուրիշ ռեֆորմներ։ Ֆեոդալական միապետությունը տեղի տվեց բուրժուական միապետությանը։

Ինչպես Ռուսաստանում, այնպես էլ Հայաստանում և ամբողջ Ան-

դրկովկասում ֆեոդալիզմի և կապիտալիզմի միջև մղվող պայքարը ռեֆորմի նախօրյակին ավելի սրվեց, հակասությունները հին և նոր հարաբերությունների միջև ավելի խորացան։

Անդրկովկասի սոցիալ-տնտեսական կյանքի օբյեկտիվ ընթացքը, կապիտալիզմի զարգացումը, գյուղացիական շարժումների, դասակարգային ու ազգային-ազատագրական պայքարի վերելքը ճարկադրեցին ցարական կառավարությանը ռեֆորմներ անցկացնել նաև Անդրկովկասում։

1864—1865 թվականներին ռեֆորմ անցկացվեց Թիֆլիսի և Քութայիսի նահանգներում, որտեղ ճորտատիրական հարաբերությունները իշխող էին։ Հաշվի առնելով Երևանի, Բաքվի և Ելիզավետպոլի նահանգների հողատիրության ձևերի, կալվածատերերի ու գյուղացիների փոխհարաբերությունների նմանություններն ու ընդհանրությունները, որոշում են այդ նահանգների համար մշակել մեկ ընդհանուր կանոնադրություն։

Ռեֆորմը նախապատրաստելու համար վերոհիշյալ նահանգներում կազմվում են այսպես կոչված բեկական հանձնաժողովներ, որոնք պետք է ուսումնասիրեին և որոշեին բեկերի, աղալարների ու մելիքների հողատիրական իրավունքները, գյուղացիների հետ նրանց ունեցած փոխհարաբերությունները։

Երևանի նահանգի բեկական հանձնաժողովն իր աշխատանքներն սկսում է 1865 թ. հոկտեմբերին և ավարտում 1867 թվականին։ Հանձնաժողովն իր ուսումնասիրած 586 տոհմից բեկական դասին պատկանող ճանաչում է 282 տոհմ, որից 142-ը՝ Երևանի, Էջմիածնի և Նոր Բայազետի, իսկ 140-ը՝ Նախիջևանի և Օրդուբադի գավառներում։ Մերժում է 304 տոհմի։

1869 թվականի վերջերին մշակում է Երևանի, Բաքվի և Ելիզավետպոլի նահանգներում ու Թիֆլիսի նահանգի մի մասում բեկերին, մելիքներին ու աղալարներին պատկանող գյուղացիներին վերաբերող ռեֆորմի նախագիծը և ուղարկում Պետերբուրգ հաստատման։

1870 թ. մայիսի 14-ին Ալեքսանդր II-ը հաստատում է ներկայացված կանոնադրությունը (поселянское положение), որը և օրենքի ուժ է ստանում։

1870 թ. մայիսի 14-ի կանոնադրությունը

1870 թ. մայիսի 14-ի կանոնադրության հիմքում դրված էին 1846, 1847 և 1851 թվականների օրենքները, որոնք, ինչպես տեսանք, ամբողջապես բխում էին ցարական կառավարության և հողատեր-կալվածատերերի շահերից։ 1870 թ. մայիսի 14-ի կանոնադրությունը նույնպես ցարիզմի և տեղական կալվածատերերի շահերից էր բխում և ըստ էության հակագյուղացիական բնույթ ուներ։

Մայիսի 14-ի կանոնադրությունը կամ, այսպես կոչված, գյուղացիական ռեֆորմը տարածվում էր Հայաստանի գյուղացիության մի փոքր մասի վրա։ Գյուղացիության ճնշող մեծամասնությունը՝ 80 տոկոսից ավելին, ռեֆորմից դուրս էր մնում։

Պաշտոնական տվյալների համաձայն ռեֆորմի նախօրյակին Երևանի նահանգի մոտ 47 հազար գյուղացիական տնտեսություններից պետական գյուղացիները կազմում էին մոտ 32 հազար կամ 69 տոկոսը, իսկ կալվածատիրական գյուղացիությունը (մուլքադարական-վանքապատկան և այլն)՝ մոտ 15 հազար կամ 31 տոկոսը։

Գյուղացիական ռեֆորմը վերաբերվում էր միայն մուլքադարական գյուղացիներին, այն էլ ոչ բոլորին։ Այդ ռեֆորմը չէր տարածվում, այսպես կոչված, «բարձր դասին» չպատկանող հողատերերի, թիուլական և վանքապատկան հողերի, ինչպես նաև այն գյուղացիների վրա, որոնք «կամավոր» կերպով աշխատում էին «բարձր դասին» պատկանող կալվածատերերի մոտ։ Գյուղացիական ռեֆորմը վերաբերում էր մոտ 15 տոկոս կազմող մասնատիրական հողերին, իսկ պետական և վանքապատկան հողերը ռեֆորմից դուրս էին մնում։

Մայիսի 14-ի կանոնադրությամբ չէր լուծվում նաև ջրային (ոռոգման) հարցը, որը կենսական նշանակություն ուներ գյուղացիների համար։ Անգամ գյուղացիների անասունները ջրելու հարցը թողնվում էր կալվածատիրոջ հայեցողության, եթե այդ ջրերը գտնվում էին նրա տերիտորիայում։

1870 թվականի կանոնադրության համաձայն, 15 տարին լրացած արական մեկ շունչը իրավունք ուներ փրկագնման միջոցով ձեռք բերել մինչև 5 դեսյատին հող։ Բայց մինչ այդ կալվածատերը պետք է վերցներ մշակության համար պիտանի հողի 1/3-ը։ Այդ նորման չլրանալու դեպքում կալվածատիրոջն իրավունք էր տրվում պակասը կտրել և վերցնել գյուղացու հողաբաժնից։ Օգտվելով այդ իրավունքից կալվածատերերը շատ տեղերում հափշտակեցին գյուղացիների լավագույն հողակտորները։ Անտառները, լավ արոտավայրերն ու խոտհարքները մնում էին կալվածատիրոջը։ Գյուղացիների մշտական օգտագործման տակ թողնվում էին նրանց տնատեղերը, այգիներն ու արհեստագործական շենքերը, որոնք կարող էին ժառանգվել ու վաճառվել։

Նոր օրենքի համաձայն շինականները հողի փրկավճարը միանվագ և լրիվ մուծելուց հետո միայն կարող էին ազատվել կալվածատիրոջ կախումից։ Եվ քանի որ նրանք ի վիճակի չէին իրենց հասանելիք հողաբաժինը ետ գնելու, ուստի մնում էին կախյալ կամ կիսակախյալ վիճակում, սակավահողության և հողազրկության ծանր պայմաններում։ Գյուղացիների այդ կախյալ վիճակը շարունակվեց ավելի քան 40 տարի՝ մինչև 1912 թ. դեկտեմբերի 20-ի օրենքը, նույնիսկ դրանից էլ հետո։

Առանձնապես ծանր էին հողի եռգնման պայմանները։ Ռուսաստանում հողի եռգնման համար պետությունը գյուղացիներին վարկ էր բաց թողնում։ Հայաստանում և Ադրբեջանում գյուղացիները պետությունից ոչ մի օժանդակություն չէին ստանում։

Բացի այդ, Երևանի և Ելիզավետպոլի նահանգներում չափազանց բարձր էին հողի եռգնման վճարները։ Թիֆլիսի նահանգում մեկ դեսյատինի արժեքը սահմանված էր 60 ռ. 50 կոպ., Բաքվի նահանգում՝ 69 ռ., Երևանի նահանգում՝ 122 ռ., Ելիզավետպոլի նահանգում՝ 202 ռուբլի։ Սրանք ոչ թե ռեալ, այլ սպեկուլյատիվ գներ էին և ցարական չինովնիկների ու կալվածատերերի համար գաղտնիք չէր, որ գյուղացիները երբեք չէին կարող նման գներով հող եռգնել։ Պատահական չէ, որ Երևանի նահանգում 30 տարվա ընթացքում եռգնվեց միայն 41 դեսյատին հող։ Այդպիսի տեմպերով մի քանի հազար տարի կտևեր ռեֆորմի կենսագործումը։ Եվ եթե նկատի ունենանք, որ 1870 թվականի ռեֆորմի հիմնական հարցը եռգնման հարցն էր, ապա հասկանալի կլինի, թե որքան քիչ բան էր տալիս գյուղացիներին «ազատարար» ցարի այդ նոր օրենքը։ 1870 թ. գյուղացիական ռեֆորմը իր այս հիմնական մասով փաստորեն մնաց թղթի վրա, չիրագործված։

1870 թ. մայիսի 14-ի կանոնադրությունը գրեթե ամբողջությամբ պահպանում էր կալվածատերերի հանդեպ գյուղացիների նախկինում ունեցած պարտավորությունները։ Ըստ այդ կանոնադրության գյուղացիները պարտավոր էին հողատիրոջը վճարել բահրա կամ մալջահաթ՝ բերքի 4/30 մասը։ Այգիների ու բանջարանոցների համար նրանք պետք է վճարեին դրամական հարկ։ Հողատերերին հասանելիք պարհակները գանձվում էին պետական հարկերի համար սահմանված խստությամբ։ Բացի այդ, գյուղացիները պետք է կոռ ու բեգար կատարեին և այլն։

1877 թ. սեպտեմբերի 5-ի և 1883 թ. մարտի 15-ի լրացուցիչ օրենքներով 1870 թվականի կանոնադրությունը տարածվեց նաև այն կալվածատիրական գյուղացիների վրա, որոնք այդ կանոնադրությունից դուրս էին մնացել։ Ինչպես 1870 թվականի, այնպես էլ այս կանոնադրությունները ոչ միայն պահպանում էին կալվածատերերի իրավունքները, այլև լայն հնարավորություն ստեղծում աշխատավոր գյուղացիությանը շահագործելու ու կողոպտելու համար։

Աշխատավոր գյուղացիները, հողի մշակները, հիասթափված ռեֆորմից, բացահայտ տրտնջում ու բողոքում էին ցարական չինովնիկների ու կալվածատերերի դեմ.— չափն էլ է իրենց ձեռքը, կշեռքն էլ,— ասում էին գյուղացիները,— ինչպես ուզում են, այնպես էլ չափումձևում են։ Մենք սպասում էինք, որ մեր դրությունը թեթևանա, բայց ավելի վատացավ։

Քաղաքային և դատական ռեֆորմները

1861 թ. փետրվարի 19-ի գյուղացիական ռեֆորմից հետո ցարական կառավարությունը հարկադրված եղավ մի շարք ռեֆորմներ անցկացնել նաև վարչական սիստեմում։ Երկրի սոցիալ-տնտեսական կյանքում կատարված փոփոխությունները, բնական է, չէին կարող իրենց արտահայտությունը չգտնել կառավարչական սիստեմում։ 1863—1874 թվականներին անցկացված զեմստվոյական (տեղական ինքնավարություն), դատական, քաղաքային, զինվորական, ֆինանսական և այլ ռեֆորմները որոշակի քայլեր էին ֆեոդալական միապետությունից բուրժուական միապետության անցման ճանապարհին։ Բայց եթե ցարական կառավարությունը մետրոպոլիայում ընդառաջում, զիջումներ էր անում զարգացող կապիտալիզմին, ապա ծայրամասերում, գաղութներում արգելակում էր տեղական ժողովուրդների բնականոն առաջընթացը, աշխատում էր նրանց պահել խավարի ու հետամնացության մեջ։

Ցարիզմի ռեակցիոն գաղութային քաղաքականությանը բնորոշ է այն, որ 1864 թ. հունվարի 1-ի տեղական ինքնավարության վերաբերյալ օրենքը չգործադրվեց Անդրկովկասում։ Ցարական միապետական չինովնիկները գտնում էին, որ Անդրկովկասի, ինչպես և Սիբիրի ու Միջին Ասիայի ժողովուրդներին վաղաժամ է ինքնավարություն տալը։

1870 թ. հունիսի 16-ի քաղաքային ռեֆորմը Անդրկովկասում գործադրվեց ձգձգումներով ու սահմանափակումներով։ 1874 թ. հոկտեմբերի 28-ին միայն Ալեքսանդր II-ը թույլատրեց այդ ռեֆորմը կիրառել Անդրկովկասի քաղաքներում։

Այդ օրենքի համաձայն ինչպես Թիֆլիսում, Բաքվում, այնպես էլ Երևանում ընտրվում էր քաղաքային ինքնավարություն, Քաղաքային դուման։ Երևանում Քաղաքային դուման բացվում է 1879 թ. հոկտեմբերի 1-ին։ Դումայի պարտականությունն էր՝ հոգ տանել քաղաքի բարեկարգման, նրա տնտեսության, հասարակական կարգի, բնակչության նյութական մատակարարման, առողջապահության, լուսավորության, առևտրի ու արդյունաբերության զարգացման, քաղաքային տուրքերի գանձման և այլ հարցերի մասին։

Քաղաքային դուման ընտրվում էր 4 տարին մեկ, գույքային ցենզի հիման վրա։ Ընտրական սիստեմն այնպիսին էր, որ մեծ մասամբ հարուստ աղնվականներն ու վաճառականներն էին ընտրվում Դումայի կազմում։ Բանվորները, ծառայողները, մտավորականները հնարավորություն չունեին մասնակցելու ընտրություններին։ Քաղաքային դուման գտնվում էր քաղաքային մեծահարուստ աղաների ձեռքին։

Քաղաքային ինքնավարությունն ուներ իր վարչությունը, որի նախագահը քաղաքագլուխն էր։ Վարչության նախագահն ուներ երկու օգ-

նական, իր գրասենյակը և իրեն ենթակա ընտրովի մի շարք պաշտոնյաներ։

1870 թվականի քաղաքային ինքնավարության կանոնադրությունը տեսական կյանք չունեցավ։ 1892 թվականին հրատարակվեց նոր կանոնադրություն, որով քաղաքային «ձայնավորների» (Դումայի անդամների) թիվը կրճատվում էր, լայն տեղ տրվում բուրժուական տարրերին։ Դուման ավելի քան կախման մեջ էր դրվում պետական օրգաններից, սեղմվում էր նրա իրավունքների ու գործունեության շրջանակը և փաստորեն կորցնում իր ինքնուրույնությունը։

1864 թ. նոյեմբերի 20-ի դատական ռեֆորմը Անդրկովկասում կիրառվեց գյուղացիական ռեֆորմի հետ գրեթե միաժամանակ։ Մյուս ռեֆորմների հետ համեմատած դա թերևս ամենից ավելի բուրժուական ռեֆորմն էր։ Հին դասային դատարանը վաղուց սպառել էր իրեն և ոչ մի հեղինակություն չուներ ժողովրդի մեջ։

Նոր օրենքով դասային դատարանի փոխարեն մտցվում էր ընդհանուր, բոլոր քաղաքացիների համար միատեսակ դատավարություն։ Անկախ իրենց դասային պատկանելիությունից հանցագործները պետք է դատվեին միևնույն դատարանում, միևնույն օրենքով, բաց դատավարությամբ։

1864 թ. նոյեմբերի 20-ի Կանոնադրությամբ դատավորներն ու երդվյալ հավատարմատարներն ընտրվում էին, բայց դրա համար պահանջվում էր բավականաչափ բարձր գույքային ցենզ կամ եկամտի աղբյուր, համապատասխան գրագիտություն։

Օրենքով դատարանը անկախ էր, դատարանի նախագահին ու անդամներին, հաշտարար դատավորներին ու երդվյալ հավատարմատարներին վարչական կարգով ազատել չէր կարելի։

Մեծ մասամբ հաշտարար դատավորներ նշանակվում էին ռուս չինովնիկները, որոնք չգիտեին տեղական ժողովուրդների լեզուն, նրանց բարքերն ու սովորությունները։ Նրանք աշխատում էին թարգմանիչների օգնությամբ, որը մեծապես վնասում էր արդարադատության գործին և պայմաններ ստեղծում կաշառակերության ու չարաշահումների համար։

Ընդհանուր առմամբ նոր դատարանը, հնի հետ համեմատած, մի քայլ առաջ էր ֆեոդալական հասարակարգից բուրժուական հասարակարգին անցնելու ճանապարհին։ Բայց այդ ևս կոչված էր ծառայելու շահագործող դասակարգերին, նրանց ձեռքին մի զենք էր աշխատավոր մասսաներին ճնշելու համար։

Ռեֆորմների ճշգրտությունը

Ցարական և լիբերալ-բուրժուական պատմաբանները 1860—1870-ական թվականների ռեֆորմները ներկայացրել են որպես Ալեքսանդր II-ի «ազատարար» հայացքների և հպատակների նկատմամբ ունեցած «հայրական հոգատարության» արտահայտություն։ Իրականում, ինչպես տեսանք, ցարական կառավարությունը ռեֆորմների դիմեց ոչ թե ժողովրդին ազատություն տալու, նրա դրությունը բարելավելու նպատակով, այլ ժողովրդական հեղափոխության վերահաս վտանգը կանխելու, իր տիրապետությունն ամրապնդելու համար։

Ռեֆորմը գյուղացուն հող և ազատություն չտվեց և չէր էլ կարող տալ։ Դա կալվածատերերի համար նպաստավոր և գյուղացիների համար աննպաստ պրուսական զարգացման ուղին էր, որին դիմեց ցարական կառավարությունը՝ խուսանավելով հեղափոխության վտանգից։

Գյուղացիական ռեֆորմի նշանակությունը անհամեմատ փոքր, կարելի է ասել, աննշան եղավ Հայաստանում։ Ինչպես տեսանք, Հայաստանի գյուղացիության ճնշող մեծամասնության վրա չտարածվեց գյուղացիական ռեֆորմը։

Հետռեֆորմյան շրջանում զգալի չափով ավելացան գյուղացիների պարհակներն ու դրամական հարկերը։ Հողի եկամտաբերության հետ համեմատած պարհակներն այստեղ շատ բարձր էին և ծանր բեռ դարձան գյուղացիների համար։

Ցարական ռեֆորմները կյանքի կոչեցին, այսպես կոչված, հաշտարար միջնորդներին ու հաշտարար դատավորներին, առերևույթ ժողովրդի իրավունքները պաշտպանելու և օրինականություն պահպանելու համար։ Բայց իրականում նրանք դարձան ցարական բյուրոկրատիայի հլու կամակատարներ, իրենց հիմնական մասով զեղծարարության ու կաշառակերության «հերոսներ», ժողովրդի կեղեքիչներ։

Ընդհանուր առմամբ ռեֆորմը ոչ միայն չբարելավեց, այլ ավելի վատացրեց գյուղացիների վիճակը, ուժեղացավ նրանց ճնշումն ու շահագործումը, նրանց քայքայման ու աղքատացման պրոցեսը։ Գյուղացիական ռեֆորմը էական փոփոխություն չմտցրեց Հայաստանի գյուղատնտեսության զարգացման, երկրի հիմնական արտադրողական ուժի՝ հողի ինտենսիվ մշակման ու բերքատվության բարձրացման գործում։

Այս ամենից հետո, իհարկե, սխալ կլիներ գերագնահատել գյուղացիական ռեֆորմի դերն ու նշանակությունը։ Բայց ճիշտ չէր լինի նաև թերագնահատել այդ։

1860—1870-ական թվականների ռեֆորմները Վ. Ի. Լենինը բնութագրել է որպես բուրժուական ռեֆորմներ։ «Եթե մի ընդհանուր հայացք ձգենք ռուսաստանյան պետության ամբողջ կացութաձևի փոփոխման վրա 1861 թվականին, ապա անհրաժեշտ է ընդունել, որ այդ փոփոխությունը եղել է քայլ ֆեոդալական միապետությունը բուրժուական միապետության վերածելու ուղղությամբ։ Այդ ճիշտ է ոչ միայն

տնտեսական, այլև քաղաքական տեսակետից»[1]։ Մի այլ տեղ Վ. Ի. Լենինն ասում է. «Գյուղացիական ռեֆորմը» ճորտատերերի ձեռքով իրագործվող բուրժուական ռեֆորմ էր»[2]։

Անդրկովկասում, այդ թվում և Հայաստանում, անցկացված ռեֆորմները օրգանապես կապված էին Ռուսաստանում անցկացված ռեֆորմների հետ և այս ու այն չափով համապատասխանում էին նրանց բուրժուական էությանը։ Ճիշտ է, ցարիզմի գաղութային քաղաքականությունն իր որոշակի կնիքն էր դնում Անդրկովկասի ռեֆորմների վրա, կաշկանդում էր կապիտալիզմի զարգացումը, բայց և այնպես երկրամասի տնտեսական կյանքի օբյեկտիվ ընթացքը տանում էր դեպի կապիտալիզմ։

Մեր պատմական գրականության մեջ այն տեսակետն է արտահայտվել, թե գյուղացիական ռեֆորմի բուրժուական բովանդակությունը Հայաստանում ավելի ուժեղ է դրսևորվել, քան Ռուսաստանում։ Դա, իհարկե, ճիշտ չէ, դա ռեֆորմի նշանակության գերագնահատության արտահայտություն է։

Չպետք է մոռանալ, որ ցարական գաղութարարների անցկացրած ռեֆորմը ծայրերկրամասերում չէր կարող ունենալ և չուներ ավելի շեշտված բուրժուական բովանդակություն, քան մետրոպոլիայում։ Գյուղացիական ռեֆորմի ամբողջ բովանդակությունը և նրա արդյունքները հակառակն են ապացուցում։

Այսպիսով, 1860—1870-ական թվականների գյուղացիական և մյուս բուրժուական ռեֆորմները, չնայած իրենց նեղ, սահմանափակ բնույթին, այնուամենայնիվ, ինչպես Ռուսաստանում, այնպես էլ Անդրկովկասում նպաստեցին կապիտալիզմի զարգացմանը, նրա տնտեսական և քաղաքական դիրքերի ամրապնդմանը։

2. ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԸ ՀԵՏՌԵՖՈՐՄՅԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ

Հայաստանի ամենաբազմամարդ և ամենաճնշված դասակարգը գյուղացիությունն էր։ Նա գտնվում էր կրկնակի լծի տակ, սոցիալական և ազգային ճնշված պայմաններում։ Գյուղացիները դարերով պայքարում էին հողի և ազատության համար, բայց գյուղացիական ռեֆորմը ոչ միայն հող և ազատություն չտվեց, այլև ծանր պայմաններ ստեղծեց նրանց համար։

«Տխրահռչակ «ազատագրումը»,— ասում է Վ. Ի. Լենինը,— գյուղացիների ամենաանխիղճ թալանում էր, բռնությունների շարան և կատարյալ ծաղրանք էր նրանց նկատմամբ...

Ընդհանրապես 60-ական թվականների ամբողջ «ռեֆորմների դարաշրջանը» գյուղացուն թողեց աղքատ, ընկճված, խավար, կալվածատեր-ճորտատերերին ենթարկված և՛ դատարանում, և՛ վարչության մեջ, և՛ դպրոցներում, և՛ զեմստվոյում»[1]։

Գյուղացիական շարժումները թևակոխեցին զարգացման նոր էտապ, մեծ թափ ու լայն ծավալ ստացան։ Այս էտապի շարժումներն անհամեմատ ավելի գիտակցված ու կազմակերպված էին։ Շարժումն ուղղված էր թե՛ հողատեր կալվածատերերի և թե՛ նրանց պաշտպան ցարական իշխանությունների դեմ։

Գյուղացիների պայքարն արտահայտվում էր տարբեր ձևերով։ Նրանք հրաժարվում էին մուլք վճարելուց և պարհակներ կատարելուց, անհատապես կամ համայնքով բողոքում էին կալվածատերերի դեմ, հաշտարար միջնորդներին արգելում էին կանոնագրեր կազմել, իսկ երբեմն էլ դուրս էին վռնդում գյուղից, բռնի կերպով օգտագործում կալվածատիրական հողերը, արոտավայրերը, անտառները և այլն։

1871 թ. ապրիլին Երևանի գավառի Մուղամլու գյուղի մուլքադար Մամեդ աղան հայտնում է հաշտարար միջնորդին, որ «Չնայած Երևանի զինվորական նահանգապետի քանիցս արած գրավոր և բանավոր կարգադրություններին, Մուղամլուի հասարակությունն ինձ չի վճարել անցյալ՝ 1870 թվականի չորս և կես ախչա* մուլքը»։ Այնուհետև թվարկելով չորս գլխավոր «խոռվարարների» անունները, մուլքադարը խնդրում է նրանց դատի տալ։

1872 թվականին Ախտալի շրջանի Բջնի գյուղի բնակիչները բողոքում են կալվածատեր Գեղամյանի ճնշումների դեմ և խնդրում իրենց տեղափոխել պետական հողերի վրա։ Բջնիի գյուղացիների և կալվածատեր Գեղամյանների հողային վեճերը համարյա 100 տարվա պատմություն ունեն։ Ագահ և ճարպիկ կալվածատերը, որը սերտ կապեր ուներ պետական օրգանների հետ, այն տեղն էր հասցրել, որ գյուղացիներն ուրիշ ելք չգտնելով, որոշել էին թողնել իրենց ծննդավայրը և վերաբնակվել պետական հողերի վրա։ Նրանց միջև բազմիցս սուր ընդհարումներ էին տեղի ունեցել։ 1871 թվականի ամռանը գյուղացիները հարձակվում են կալվածատիրոջ տան վրա, այրում ձիանոցը* և խոտի դեղերը։ 1875—1893 թվականներին նրանց միջև պայքար էր գնում «Քյոթուկլու» կոչվող խոտհարքի շուրջը։

---

[1] Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 17, էջ 122։

[2] Նույն տեղում, էջ 131։

[1] Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 17, էջ 130—131։

* Ախչա — տարբեր տեղերում տարբեր իմաստ է ունեցել։ Երևանի նահանգում գործ է ածվել կալվածքի, գույքի 1/6 մասի, բաժնի, չափի իմաստով։ Եղել է նաև դրամի չափ։

Գեղամյաններից ոչ պակաս դաժանությամբ գյուղացիներին ճնշում ու կեղեքում էր նաև Էջմիածնի գավառի Շահրիար գյուղի կալվածատեր Օհան Շահխաթունյանը։ 1875 թ. մայիսին գրած իրենց բողոքագրում շահրիարցիք Շահխաթունյանին անվանում են իրենց հասարակության համար «աստծո պատիժ»։ «Շահխաթունյանը մեր հասարակության հետ վարվում է որպես կատարյալ պարսկական տիրակալ»,— ասում են գյուղացիները,— խառնվում է բոլոր գործերին, ստիպում է գյուղի ավագ ընտրել իր ուզած մարդուն, խլում է համայնական հողերը, չի մասնակցում առուների մաքրմանը, բայց ջրից առաջինն ինքն է օգտվում, հարկադրում է գյուղացիներին ձրի աշխատել իր համար և այլն։ «Մենք այլևս անզոր ենք տանել Օհան սուլթան Շահխաթունյանի ճնշումները»,— գրում են գյուղացիք և խնդրում թեթևացնել իրենց ծանր վիճակը։

Երևանի գավառի Նովրուզլու գյուղի բնակիչները 1875 թվականին հրաժարվում են մուլք վճարել Ահմեդ բեկ Քերիմբեկովին։ Վերջինս դիմում է հաշտարար միջնորդին, որը և հրամայում է «անհապաղ բավարարել կալվածատիրոջ պահանջը»։

Նովրուզլուի գյուղացիների պայքարը մուլքադարների դեմ հետագայում ևս չի դադարում։ 1880 թվականին մուլքադարները հաշտարար միջնորդին գրում են. «Ամեն տարի մենք մուլքադարներս Նովրուզլու գյուղից ստացել ենք մեզ հասանելիք մուլքը... այս տարի գյուղացիք հրաժարվեցին մեզ մուլք վճարելուց»։

1883 թվականին Նովրուզլուի գյուղացիները վերստին հրաժարվում են մուլք վճարելուց։ Այս անգամ հաշտարար միջնորդը հրամայում է՝ «10 օրվա ընթացքում Նովրուզլուի գյուղացիներից անմիջապես բռնագանձել մուլքադարին հասանելիք, ինչպես և մյուս չմուծված պարհակները»։

Հետռեֆորմյան շրջանում սուր բնույթ է ստանում նաև Նոր Բայազետի գավառի Զոդի, Մեծ Մազրայի, Կըզլբուլաղի և Ալիղշլաղի գյուղացիների պայքարը աղալարների դեմ։ 1870 թ. մայիսի 14-ի Կանոնադրությունը չտարածվեց վերոհիշյալ աղալարական չորս գյուղերի վրա։ Գյուղացիներն ապրում էին պետական հողերի վրա, վճարում պետական պարտավորությունները, բայց միաժամանակ աղալարներին աշխատողներ ու ծառաներ էին տալիս, խոտ և փայտ բերում, զանազան այլ ծառայություններ կատարում։

1877 թվականի ապրիլին կառավարության կարգադրությամբ որոշվում է Նոր Բայազետի գավառի պետական հողերի վրա ապրող չորս գյուղերի բնակիչներին ազատել անձնական պարհակներից, որ նրանք կատարում էին աղալարների համար, իսկ դրա փոխարեն աղալարներին անվճար տալ յուրաքանչյուրին 150 դեսյատին հող որպես սեփականություն, ընդամենը 1350 դեսյատին։ Այսպես էր լուծում ցարական կառավարությունը գյուղացիների ու կալվածատերերի հողային վեճերը։

Պտղնի գյուղի մուլքադար Աղաջան բեկ Մելիք-Ղարագյոզյանը 1881 թ. հուլիսի 2-ին դիմում է Երևանի գավառի հաշտարար միջնորդին և խնդրում գյուղացիներից բռնագանձել իրեն հասանելիքը՝ բերքի 7/30 մասը։ «Այս տարի,— գրում է նա,— ինձ պատկանող Պտղնի գյուղի բնակիչները համաձայնության են եկել, բոլորը երդվել ինձ հեռացնել Պտղնի գյուղից և ոչ մի հարկ չվճարել։ Նրանք այդպես էլ արեցին։ Նրանց վիրավորանքների ու ահաբեկման հետևանքով ես հարկադրված եղա թողնել իմ ունեցվածքն ու տնտեսությունը և գալ Երևան՝ կառավարության օգնությանը դիմելու»։

1881 թ. հուլիսի 13-ին Պտղնի է գալիս հաշտարար միջնորդը և փորձում ի կատար ածել կալվածատիրոջ պահանջը։ Գյուղացիները՝ Ռուստամ Ավետյանի, Մելիք Գրիգորյանի, Պողոս Աբրահամյանի և Համբարձում Ավագյանի գլխավորությամբ մասսայորեն ապստամբվում են և հայտարարում, որ «չեն ճանաչում ոչ մի իշխանություն», սպառնում են հրդեհել առվյուտի դեղերը, գյուղապետի տունը և այլն։

Հաշտարար միջնորդն ահաբեկված փախչում է Պտղնիից և դիմում Երևանի գավառի ոստիկանական վարչության օգնությանը։ Ոստիկանական վարչության կողմից Պտղնի է ուղարկվում Տեր-Մարուքյանը՝ երկու կազակների ուղեկցությամբ։ Գյուղացիք սրանց ևս չեն ենթարկվում։ Երբ Տեր-Մարուքյանը կազակներին հրամայում է առվույտի դեղերից բռնությամբ վերցնել կալվածատիրոջ բաժինը, այդ ժամանակ ամբողջ գյուղացիք, կանայք ու երեխաները քարերով ու փայտերով հարձակվում են նրանց վրա, ծեծում և դուրս վռնդում գյուղից։

Պտղնիի գյուղացիների համառ պայքարը կալվածատեր Մելիք-Ղարագյոզյանի դեմ հաջողություն չի ունենում։ Թագավորի կարգադրությամբ կառավարող սենատը 1894 թվականին ճանաչում է Մելիք-Ղարագյոզյանի թիուլական իրավունքը։

Մելիք-Աղամալյանները Հայաստանի հին և հայտնի ազնվականներից էին։ Պարսկական և ռուսական տիրապետության ժամանակ նրանք սերնդե-սերունդ օգտվում էին կալվածատիրական իրավունքներով, ճնշում ու շահագործում աշխատավոր գյուղացիությանը։

1881 թվականին Աղամալ Մելիք-Աղամալյանը դիմում է հաշտարար միջնորդին, բողոքում, որ Էլարի գյուղացիները, չնայած քանիցս արված պահանջներին, չեն վճարել իրենց հասանելիք պարհակները և խնդրում է խիստ միջոցների դիմել՝ բավարարելու իր պահանջները։

1882 թվականին Էլարի գյուղացիները դարձյալ հրաժարվում են

ծխահարկ և այգիների ու բոստանների համար դրամ վճարելուց։ Հաշտարար միջնորդը հրամայում է մի շաբաթվա ընթացքում բավարարել կալվածատիրոջ պահանջը։

Գյուղացիական ելույթներն անհամեմատ սուր և կազմակերպված բնույթ են ստանում Ղամարլուի (Արտաշատ) շրջանի Գյոդաքլու և Դալլար գյուղերում։ 1883—1884 թվականներին նշված գյուղերի բնակիչները հրաժարվում են մուլք վճարելուց և առհասարակ չեն ճանաչում իրենց մուլքադարի իրավունքները։

1884 թ. սեպտեմբերին հաշտարար միջնորդը գալիս է այդ գյուղերը և պահանջում բավարարել մուլքադարին։ Գյուղացիները միահամուռ կերպով մերժում են նրա պահանջը և հայտարարում.— Ոչ մի կալվածատեր չենք ճանաչում, մենք բանտ կնստենք, Սիբիր կգնանք, բայց կալվածատերերին ոչինչ չենք վճարի:

Զայրացած Դալլարի և Գյոդաքլուի գյուղացիների ըմբոստ ու համարձակ վարմունքից, հաշտարար միջնորդը վերադաս օրգաններին հայտնում է. «Գյոդաքլու և Դալլար գյուղերի բնակիչների արարքը ես գտնում եմ, որ իրենց կալվածատերերին չբավարարելու հարց չէ միայն, այլ ինչ-որ լուրջ բան, նման հուզումների ու բունտի (երբ նրանք ցանկանում են աքսոր գնալ, քան հարկ վճարել) որոնք անմիջապես պետք է վերացվեն ամենախիստ հարկադրման միջոցներով... Մանավանդ որ գյուղացիների այդ կոչերը տարածվել և տարածվում են ուրիշ գյուղերում, ինչպես օրինակ, Էվջիլարում, Ղամարլվում, Զոհրաբլվում, Դվինում և այլուր»:

Բերված օրինակները ցույց են տալիս, որ հետռեֆորմյան շրջանում գյուղացիական շարժումներն ավելի էին ծավալվել, կալվածատիրական և պետական գյուղացիների պայքարը հողի ու ջրի համար ավելի էր սրվել։

Հայաստանի գյուղացիության այդ ելույթները չվերածվեցին մասսայական շարժումների, գյուղացիական ապստամբությունների, ինչպես Ռուսաստանում և Վրաստանում, որտեղ ճորտատիրություն գոյություն ուներ։ Ներքին և արտաքին մի շարք պատճառներով մեզ մոտ գյուղացիական շարժումները համեմատաբար թույլ արտահայտվեցին։ Այդ շարժումները տակավին տարերային, անկազմակերպ էին, չունեին գիտակից, փորձված առաջնորդներ, չկար բանվոր դասակարգ, որի ղեկավարությամբ միայն գյուղացիության պայքարը կարող էր հաղթանակի հասնել։

Սակայն, իրենց բոլոր թույլ կողմերով հանդերձ, XIX դարի երկրորդ կեսի գյուղացիական շարժումները պատմական խոշոր նշանակություն ունեցան: Չպետք է մոռանալ, որ մեր պատմության տվյալ էտապում գյուղացիությունն էր հիմնական շահագործվող դասակարգը, նա էր շա-

հագործողների ու տիրող կարգերի դեմ պայքարող գլխավոր ուժը: Այդ շրջանում գերազանցապես գյուղացիական շարժումների միջոցով էր արտահայտվում դասակարգային պայքարը:

3. ԿԱՊԻՏԱԼԻԶՄԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ԵՎ ԲԱՆՎՈՐ ԴԱՍԱԿԱՐԳԻ ԱՌԱՋԱՑՈՒՄԸ

Անդրկովկասը ռուսական կապիտալիզմի ոլորտում

Հետռեֆորմյան շրջանում Ռուսաստանում կապիտալիզմն սկսեց արագ թափով զարգանալ։ Ճորտատիրական իրավունքի վերացումը արձակեց երկրի տնտեսական զարգացման կապանքները. ֆեոդալական միապետությունն իր տեղը զիջեց բուրժուական միապետությանը։ «61 թվականից հետո,— գրում է Վ. Ի. Լենինը,— կապիտալիզմի զարգացումը Ռուսաստանում ընթացավ այնպիսի արագությամբ, որ մի քանի տասնամյակներում կատարվեցին այնպիսի փոփոխություններ, որպիսիները եվրոպական մի քանի երկրներում տևել էին ամբողջ հարյուրամյակներ»[1]։

Կապիտալիզմը Ռուսաստանում զարգանում էր և՛ խորությամբ, և՛ լայնությամբ, իր ոլորտի մեջ ընդգրկում ծայրամասերը, այդ թվում՝ և Անդրկովկասը։

«Կապիտալիզմի զարգացումը Ռուսաստանում» իր նշանավոր աշխատության մեջ Վ. Ի. Լենինը գրում է, որ Ռուսաստանի հարավային և արևելյան ծայրամասերը տնտեսական իմաստով նրա գաղութներն են, իսկ գաղութի այդ հասկացությունը ավելի է համապատասխանում Կովկասին։

«Հետռեֆորմյան դարաշրջանում մի կողմից Կովկասը սաստիկ գաղութացման էր ենթարկվում, գաղութականները մեծ չափերով հերկում էին հողերը (առանձնապես Հյուսիսային Կովկասում), արտադրելով վաճառքի համար ցորեն, ծխախոտ և այլն ու մեծ թվով գյուղական վարձու բանվորներ զրավելով Ռուսաստանից։ Մյուս կողմից՝ տեղի էր ունենում բնիկ դարավոր «տնայնագործական» արհեստագործությունների արտամղումը, որոնք Մոսկվայից ներմուծվող ֆաբրիկատների մրցման հետևանքով ընկնում էին։ Ընկնում էր զենքի հինավուրց արտադրությունը՝ Տուլայից ու Բելգիայից ներմուծվող ատրանքների մրցման շնորհիվ, ընկնում էր երկաթի տնայնագործական մշակումը՝ ներմուծվող ռուսական արտադրանքի մրցման շնորհիվ, նմանապես ընկնում էր պղնձի, ոսկու և արծաթի, կավի, ճարպի ու սոդայի, կաշիների

[1] Վ. Ի. Լենին, *Երկեր*, հ. 17, էջ 132։

տնայնագործական մշակումը և այլն. այս բոլոր արդյունքներն ավելի էժան էին արտադրվում ռուսական գործարաններում, որոնք իրենց արտադրանքը Կովկաս էին ուղարկում։

Այսպիսով, ռուսական կապիտալիզմը Կովկասը ներգրավում էր համաշխարհային ապրանքային շրջանառության մեջ, համահարթում էր հինավուրց նահապետական ինքնամփոփվածության մնացորդ հանդիսացող նրա տեղական առանձնահատկությունները, իր գործարանների համար շուկա էր ստեղծում»[1]։

Հետռեֆորմյան շրջանում ցարիզմի գաղութային քաղաքականությունն Անդրկովկասում ավելի է ուժեղանում։ Անդրկովկասի տնտեսական նվաճումը, նրա հարստությունների շահագործումը իր վրա է բևեռում ցարական կառավարության և ռուս առևտրա-արդյունաբերողների ուշադրությունը։

Դարի երկրորդ կեսին ուժեղանում է ռուսական կապիտալի մուտքն Անդրկովկաս։ Ռուս առևտրա-արդյունաբերողները որոշակի քայլեր են կատարում Անդրկովկասի բնական հարստություններն իրենց ձեռքը գցելու, այնտեղից էժան հումք ստանալու և իրենց ապրանքները վաճառահանելու համար։

Հետռեֆորմյան շրջանում գնալով ավելի ու ավելի են ընդլայնվում ու ամրապնդվում Անդրկովկասի և Ռուսաստանի տնտեսական կապերը։ Կապիտալիզմի զարգացումը Ռուսաստանում, ռուսական և արտասահմանյան կապիտալի մուտքն Անդրկովկաս մեծապես նպաստում են երկրի ամբողջ տնտեսական կյանքի, մասնավորապես լեռնարդյունաբերության, նավթարդյունաբերության, բամբակագործության, գինեգործության, մետաքսագործության և տնտեսական մի շարք այլ կարևոր ճյուղերի զարգացմանը։

Ռուսական կապիտալիզմն իր ոլորտի մեջ քաշելով Անդրկովկասը, նրան դրեց կապիտալիզմի ուղու վրա։ Բայց կապիտալիզմի զարգացումն Անդրկովկասում միայն արտաքին ազդեցության արդյունք չէր. նա ուներ նաև իր ներքին նախադրյալները։

Կապիտալիզմի զարգացումը գյուղատնտեսության մեջ

Կապիտալիզմի զարգացումն իր հետ բերում է գյուղացիության քայքայում ու աղքատացում, սոցիալական հակամարտությունների ու դասակարգային պայքարի սրում։ Ինչպես տեսանք, XIX դարի առաջին կեսին հայ գյուղը նույնպես շերտավորված էր, բնատնտեսությունը քայքայման պրոցես էր ապրում, գյուղում գոյություն ուներ դասակարգային պայքար։ Սակայն դարի երկրորդ կեսին, կապիտալիզմի զարգացման հետևանքով, գյուղի սոցիալ-տնտեսական դեմքը նկատելիորեն փոխվում

[1] Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 3, էջ 770—771։

է։ Ուժեղանում է գյուղական համայնքի սոցիալական շերտավորման ու քայքայման պրոցեսը, հողի և գույքի անհավասարությունը։ Հողը կենտրոնանում է կալվածատերերի ու կուլակների ձեռքում։

Հետռեֆորմյան շրջանում Հայաստանում լայն տարածում է գտնում հողի վաճառքի և վարձակալության (արենդի) պրակտիկան։ Երկու դեպքում էլ օգտվում էին գյուղի ցեցերը։ Հողի վարձակալական գինն այնքան բարձր էր, որ աշխատավոր գյուղացիներից քչերին էր մատչելի։ Այդ պատճառով էլ վարձակալությամբ տրվող հողերի 2/3-ից ավելին գտնվում էր ունևորների ձեռքում։

Պետական հողերից մեծ քանակությամբ վարձակալությամբ տրվում էր բարձրաստիճան պաշտոնյաներին։ Երևանի գավառում 6 հոգի վարձակալել էին ավելի քան 11 հազար դեսյատին պետական հող, Ալեքսանդրապոլի գավառում 6 հոգի՝ 6 հազար դեսյատին, Շարուր-Դարալագյազում 4 հոգի՝ 3600 դեսյատին և այլն։

Գեներալ Կախանովը 65 տարով վարձակալել էր Արազդայանի հողերը՝ 10 հազար դեսյատին։ Կարճ ժամանակամիջոցում նա 50 հազար ռուբլի օգուտ է ունենում։ 1887 թվականին Արազդայանի հողերի վարձակալությունն անցնում է գեներալ-ադյուտանտ գրաֆ Շերեմետևին։ Երևանի նահանգի Նախիջևանի գավառում «Ղռեր» կոչված հողամասը, 1950 դեսյատին, 24 տարով վարձակալում է նախկին գավառապետ, ռուս ազնվական Շան-Գիրեյը։ Բացի սրանցից, Հայաստանում կային նաև բազմաթիվ ուրիշ մեծ ու փոքր արենդատորներ։

Աշխատավոր գյուղացիության քայքայման ու պաուպերիզացիայի հիմնական պատճառներից մեկն էլ ծանր հարկերն ու տուրքերն էին։ Հարկերի 80 տոկոսից ավելին վճարում էին գյուղացիները։

Ժամանակին չկարողանալով վճարել հարկերն ու տուրքերը, գյուղացիք ստիպված դիմում էին վաշխառուներին, ահռելի տոկոսներով (մինչև 300 տոկոս) պարտք վերցնում, որը երբեմն սերնդե-սերունդ չէին կարողանում մարել։ Հաճախ նրանք իրենց հողերը և ամբողջ ունեցվածքը գրավ էին դնում, վաշխառուների ճիրանների մեջ մխրճվում։

Հայաստանում գյուղ չկար, որ պարտք չունենար։ 1890-ական թվականներին Հայաստանն ուսումնասիրած Դանիլովիչը գրում է, որ «Արաքսի հովտում հազվադեպ կարելի է հանդիպել գյուղերի, որոնք պարտք չունենան։ Հաճախ գյուղի բոլոր ծխերի $^1/_4$—$^1/_2$-ը ծանրաբեռնված են պարտքերով, որոնք երբեմն մեծ չափերի են հասնում»։

Նույն հեղինակի վկայությամբ Ֆռանգանոց գյուղի 77 տնտեսություններից միայն 5-ը պարտքեր չուներ, Կողբ գյուղում՝ 332 տնտեսությունից 105-ը պարտքերի պատճառով զրկվել էին իրենց հողաբաժիններից։

Գյուղացիության քայքայմանը նպաստում էր ոչ միայն կապիտա-

լիզմի մուտքը գյուղ և ապրանքա-դրամային հարաբերությունների զարգացումը, այլև հենց հողաբաժանության ու ջրաբաժանության սիստեմը: Տասնամյակներ շարունակ գյուղերում հողաբաժանություն չէր լինում, հողն իրենց ձեռքում էին պահում ունևորները. հողազուրկ և սակավահող գյուղացիներին ոչ մի կերպ չէր հաջողվում հող ձեռք բերել: Ջրաբաժանությունը դարձել էր գյուղացիներին շահագործելու և կողոպտելու միջոց: Հողաբաժանության և ջրաբաժանության հարցը գյուղի ամենացավոտ հարցերից էր:

Գյուղացիության մի զգալի մասը, առանձնապես չքավորները, զուրկ էին լծկան անասուններից: 1880-ական թվականներին անասուն չունեցող տնտեսությունները Երևանի գավառում կազմում էին 37 տոկոս, Էջմիածնի գավառում՝ 42 տոկոս: Շարուր-Դարալագյազի գավառում լծկան անասուններ չունեցող տնտեսությունները կազմում էին 19 տոկոս, Նոր-Բայազետում՝ 13 տոկոս:

1880-ական թվականներին գյուղացիության մոտ 33 տոկոսը կազմում էին չքավորները, 54 տոկոսը՝ միջակները, 13 տոկոսը՝ ունևորները: 1890-ական թվականներին չքավորները կազմում էին 47 տոկոս, միջակները՝ 40 տոկոս, ունևորները՝ 13 տոկոս: Գյուղի սոցիալական պատկերի նման փոփոխությունը կապիտալիզմի զարգացման հետևանք էր: Գյուղացիության քայքայումը, չքավորների աճը տեղի էր ունենում միջակի հաշվին:

Տնտեսական ծանր պայմանները չքավոր գյուղացիներին հարկադրում էին դիմել վարձու աշխատանքի գյուղում և երկրի ներսում, արտագնացության ու պանդխտության՝ երկրից դուրս: 1890-ական թվականներին Երևանի գավառի գյուղացիության 10 տոկոսից ավելին վարձու աշխատանք էր կատարում: Նոր Բայազետի գավառի տղամարդկանց 18—20 տոկոսը գնում էր երկարատև կամ կարճատև աշխատանքի, Շարուր-Դարալագյազում՝ 14 տոկոսը, Արարատյան դաշտից տարեկան մոտ 5 հազար մարդ անձնագիր էր վերցնում՝ դրսում աշխատանքի գնալու համար: Երևանի նահանգից տարեկան դուրս էր գնում մոտ 15—20 հազար մարդ: Արտագնացները մեծ մասամբ գնում էին Բաքու, Թիֆլիս, Բաթում, անցնում Ռուսաստան և արտասահման:

1880-ական թվականներին միայն Զանգեզուրի գավառի 57 գյուղերից Բաքու էին գնացել ավելի քան 2900 մարդ, այդ թվում՝ Խընձորեսկից 392, Գորիսից 167, Ախլաթյանից 142, Խոտից 131, Ուզից 111, Շաղախից 110, Տաթևից 103, Շինուհերից 92, Բռնակոթից 88, Ղարաքիլիսայից 86 մարդ և այլն:

Կապիտալիզմի մուտքը գյուղատնտեսության մեջ ինչպես Ռուսաստանում, այնպես էլ մեզ մոտ զարկ տվեց առևտրական հողագործությանը, տեխնիկական կուլտուրաների մշակությանը: XIX դարի երկրորդ

կեսին Հայաստանում առանձնապես ուժեղ թափով զարգացան բամբակագործությունն ու խաղողագործությունը:

Բամբակագործության զարգացումը Հայաստանում կապված էր Ռուսաստանի ֆաբրիկա-գործարանների պահանջի հետ: Հայաստանից բամբակի հումքը գրեթե ամբողջապես գնում էր Ռուսաստան: Համաշխարհային շուկայում ստեղծված բամբակի սովը, Ամերիկայից բամբակ չներմուծելը մեծապես զարկ տվեցին Հայաստանի բամբակի մշակությանը: 1880—1890-ական թվականներին՝ 20 տարվա ընթացքում, բամբակի արտադրությունն աճում է մոտ 9 անգամ: 1890 թվականին մաքրված բամբակ է արտադրվում 580 հազար փութ, 19 անգամ ավելի, քան 30 տարի առաջ: Երևանի նահանգի բամբակի մոտ 50 տոկոսը տալիս էր Սուրմալուի գավառը: Ցանքսերի երկու երրորդից ավելին այդտեղ բամբակ էր:

XIX դարի երկրորդ կեսին, հատկապես 90-ական թվականներին, արագ թափով զարգանում է նաև խաղողագործությունը, դրա հետ կապված՝ գինու, օղու, կոնյակի արտադրությունը: 1870-ական թվականների համեմատությամբ դարի վերջին խաղողի այգիների տարածությունն ավելանում է մեկուկես անգամ, իսկ բերքը՝ 82 տոկոսով: Չնայած դրան, պաշտոնական տվյալների համաձայն, Հայաստանի այգեգործական շրջանների բնակչության 1/3-ը զուրկ էր խաղողի այգիներից:

Բացի բամբակագործությունից ու այգեգործությունից, դարի երկրորդ կեսին զարգանում է նաև ծխախոտի, բրնձի և ուրիշ տեխնիկական կուլտուրաների մշակությունը: Տեխնիկական կուլտուրաների աճը կապված էր առևտրական հողագործության, գյուղատնտեսության մեջ կապիտալիզմի զարգացման հետ: Ուշագրավ է, որ այս շրջանում կապիտալիստական հարաբերությունները մուտք են գործում նաև անասնապահության մեջ՝ մսի, կաթի, յուղի, պանրի, բրդի արտադրության ու վաճառահանման բնագավառը:

Առևտրական հողագործությունը զարկ տվեց վարձու աշխատանքին, որն առանձնապես լայն չափերով կիրառվում էր բամբակագործության ու այգեգործության ասպարեզում:

Առևտրի ու արդյունաբերության զարգացումը

Կապիտալիզմի զարգացումն ինչպես ամենուրեք, այնպես էլ մեզ մոտ, իր հետ բերեց առևտրի ու արդյունաբերության աշխուժացում: Հետռեֆորմյան շրջանում արագ թափով սկսեց զարգանալ ներքին և արտաքին առևտուրը:

1850—1860-ական թվականներին երկրի սոցիալ-տնտեսական կյանքում սկսված շրջադարձն ավելի խորացավ: Տնտեսական բարձունքները և հասարակական-քաղաքական կյանքի հիմնական լծակները

գրավեցին առևտրա-արդյունաբերողները, մեծ գրող Բաֆֆու խոսքերով ասած «մռայլ դասակարգը»:

XIX դարի երկրորդ կեսին Երևանի նահանգում, ինչպես և 1878 թվականից Ռուսաստանի տիրապետության տակ անցած Կարսի մարզում առևտուրն ավելի ու ավելի լայն ծավալ էր ստանում: Դարի վերջին Երևանի նահանգի առևտրական շրջանառությունը տարեկան միջին հաշվով կազմում էր 14 միլիոն ռուբլի, որից 10 միլիոնը քաղաքներում: Երևանի և Ալեքսանդրապոլի առևտրական շրջանառությունը 1860-ական թվականների հետ համեմատած աճեց ավելի քան երեք անգամ:

Աճեց մեծաքանակ առևտուրը. եռապատկվեց տարեկան 50 հազարից ավելի առևտրական շրջանառություն ունեցողների թիվը: Երևանի մեծահարուստ վաճառականներ Առաքել աղա Աֆրիկյանը, Բարսեղ Եղիազարյանը, Սարգիս Հախնազարյանը տարեկան 70—80 հազար ռուբլու առևտուր էին անում:

1880—1890-ական թվականներին աճում է նաև հացի առևտուրը: Հացի արտահանումն Անդրկովկասում աճում է 4 անգամ: Երևանի նահանգից (գլխավորապես Ալեքսանդրապոլի գավառից) տարեկան մոտ 2 միլիոն փութ հաց էր արտահանվում: Անդրկովկասից հացն արտահանվում էր Իտալիա, Հունաստան, Ֆրանսիա, Անգլիա, Թուրքիա, Բելգիա, Հոլանդիա, Գերմանիա:

Դարի երկրորդ կեսին առանձնապես արագ տեմպերով աճում է բամբակի, գինու, օղու, կոնյակի, ինչպես նաև մետաքսի, ծխախոտի, մսի, բրդի, կաշվի, չոր մրգի առևտուրն ու արտահանումը:

1880-ական թվականներից Մոսկվայի, Լոձի, Պողնանի տեքստիլ արդյունաբերողները իրենց ձեռքն են վերցնում Հայաստանի բամբակի արտադրությունը: 1891 թվականին Հայաստանի բամբակի 66 տոկոսը, 225 հազար փութ, արտահանվում էր Ռուսաստան և Լեհաստան. 1893 թվականին դա հասավ 243 հազար փթի: 1880—1890-ական թվականներին Հայաստանից մոտ 20 հազար փութ բուրդ էր արտահանվում Արևմտյան Եվրոպա, իսկ ամբողջ Անդրկովկասից՝ մոտ 191 հազար փութ, ավելի քան մեկկես միլիոն ռուբլու արժողությամբ:

Այդ տարիներին արագ թափով աճում է արտաքին առևտուրը. 1884 թվականին Անդրկովկասից արտահանվում է 21,5 միլիոն ռուբլու ապրանք, ներմուծվում՝ 8,6 միլիոն. 1886-ին արտահանվում է մոտ 28 միլիոն, ներմուծվում մոտ՝ 12 միլիոն: 1861—1900 թթ. Անդրկովկասի արտաքին առևտուրն աճում է մոտ 9 անգամ (Ռուսաստանում աճել էր 4 անգամ): Անդրկովկասի արտաքին առևտրի մեջ կարևոր տեղ էին գրավում հարևան Պարսկաստանը և Թուրքիան: Հայաստանի արտաքին առևտուրը տարեկան հասնում էր մոտ 4 միլիոն ռուբլու:

Անդրկովկասի առևտրի և առհասարակ կապիտալիստական հարաբերությունների զարգացման համար կարևոր նշանակություն ունեցավ Առևտրական բանկի, Փոխադարձ վարկային ընկերության և նրանց ճյուղերի հիմնումը: 1872 թ. հիմնվում է Թիֆլիսի Առևտրական բանկը և Փոխադարձ վարկի ընկերությունը: Հետագայում նրանց բաժանմունքները բացվում են Բաքվում, Բաթումում, Քութայիսում, Երևանում և այլուր: 1874 թ. պետբանկի բաժանմունք է բացվում Բաքվում, 1886-ին՝ Բաթումում, 1893-ին՝ Երևանում: Երևանի բաժանմունքն իր ճյուղերն ուներ գավառներում:

Առևտրի հետ համեմատած արդյունաբերությունն ամբողջ Անդրկովկասում, բացառությամբ Բաքվից և Բաթումից, դանդաղ էր զարգանում: Այդ պատճառով էլ արդյունաբերական խոշոր կենտրոններ չստեղծվեցին: Չնայած դրան, դարի երկրորդ կեսին նկատելի տեղաշարժեր կատարվեցին նաև արդյունաբերության բնագավառում: Առանձնապես նկատելի եղավ լեռնարդյունաբերության և գինու-կոնյակի արտադրության զարգացումը:

Լեռնարդյունաբերությունը Հայաստանի արդյունաբերության հնագույն և գլխավոր ճյուղն էր: Դա իր մեջ ընդգրկում էր պղնձի և աղի արտադրությունը: Պղինձն արտադրվում էր Ալավերդում և Ղափանում, աղը՝ Կողբում և Նախիջևանում:

XIX դարի երկրորդ կեսին Անդրկովկասում պղնձարդյունաբերական 12 գործարան կար, բայց դրանցից ամենախոշորը և կատարելագործվածը Գետաբեկինն էր (Գանձակի գավառում), որը պատկանում էր գերմանացի Սիմենս եղբայրներին: Գետաբեկի գործարանը 1870 թվականին արտադրում էր 44 հազար փութ պղինձ, 1900-ին՝ 148 հազար: Հայաստանում 1870 թ. պղինձ արտադրվում էր 13 հազար փութ. 1900-ին՝ 72 հազար: Դարի վերջին քսանամյակում պղնձի արտադրությունը Գետաբեկում աճում է մոտ 5 անգամ, իսկ Հայաստանում՝ 13 անգամ:

1865 թվականին Ալավերդու և Շամլուղի պղնձի արտադրությունը կենտրոնանում է փայատիրական մի ընկերության ձեռքում, որն ուներ միայն 15 հազար ռուբլու կապիտալ: 1887 թվականին Ալավերդու պղնձահանքերի կոնցեսիան գնում են ֆրանսիական կապիտալիստները: Նրանք կառուցում են նոր գործարան և էլեկտրական, մեքենայացնում աշխատանքի որոշ պրոցեսներ, ռելսային ուղի անցկացնում հանքերի ու գործարանի միջև, 5 կիլոմետր երկաթգծով գործարանը կապում Սանահինի կայարանի հետ և այլն: Ալավերդու պղնձի կոնցեսիայի փայատերերից մեկը ֆրանսիացի հայտնի կապիտալիստ Բոնդարելին էր, որը խոշոր կոնցեսիաներ ուներ նաև Ռուսաստանում և Լեհաստանում: Դարի վերջին Անդրկովկասի պղնձի արտադրության 77 տոկոսը

գտնվում էր ֆրանսիական և գերմանական, իսկ 23 տոկոսը՝ տեղական կապիտալիստների ձեռքում։

Ղափանի պղնձահանքերը գտնվում էին հայ և հույն կապիտալիստների ձեռքում։ 1897 թ. կապիտալիստ Ա. Մելիք-Ազարյանը կառուցում է «Սյունիք» կոչվող պղնձաձուլական խոշոր գործարանը, նոր (ֆրանսիական) տեխնիկայով հագեցված, որտեղ ձուլվում էր ոչ միայն իրեն, այլև մի քանի ուրիշ հանքատերերին պատկանող պղինձը։ 1900 թվականին Մելիք-Ազարյանի գործարանում ձուլվում է մոտ 39 հազար փութ պղինձ, իսկ մյուս 4 գործարաններում՝ 14 հազար։ Ղափանի պղնձաձուլարաններում 1858 թ. արտադրվել է մոտ 2500 փ. պղինձ, 1900-ին՝ 50 հազար։ 1858—1900 թթ. Ղափանում արտադրվել է մոտ 600 հազար փութ պղինձ։

XIX դարի վերջին տասնամյակում Հայաստանի պղնձի արտադրությունը գրեթե եռապատկվում է։ Աղի արտադրությունը դարի երկրորդ կեսին գրեթե կրկնապատկվում է, հասնելով տարեկան մոտ երկու միլիոն փթի։

Արևելյան Հայաստանում մեծ թափով աճում է նաև գինու, օղու և հատկապես կոնյակի արտադրությունը։ Արարատյան բարեբեր և հոյակապ դաշտի տարբեր տեսակի խաղողներից պատրաստվում էր ընտիր գինի ու կոնյակ։ Օղին պատրաստվում էր խաղողից, թթից, հոնից, մորգերից, ինչպես և հացից։

Առևտրական հողագործության և շուկայական հարաբերությունների զարգացումը արագ թափով առաջ մղեց նաև արդյունաբերության այս ճյուղը։ 1887 թվականին կապիտալիստ Ն. Թայիրյանը Երևանում հիմնում է գինու գործարան, իսկ 1890-ին՝ կոնյակի։ 1893 թ. կոնյակի գործարան են հիմնում նաև Կ. Աֆրիկյանը, Գ. Գյոդալյանը, Ե. Մկրտչյանը, իսկ 1894-ին՝ Դ. Սարաջևը։

1899 թվականին ռուս կապիտալիստ Լ. Շուստովը գնում է Թայիրյանի կոնյակի գործարանը, վերակառուցում, ընդարձակում է և շուտով իր ձեռքում կենտրոնացնում Հայաստանի կոնյակի ու սպիրտի արտադրության 50 տոկոսը։

Պաշտոնական տվյալների համաձայն Երևանի նահանգում 1890 թվականին կար 172 գործարան, որոնք արտադրում էին մոտ 160 հազար դույլ գինի և 2500 աստիճան սպիրտ, իսկ 1900 թ. կար 517 գործարան, որտեղ արտադրվում էր 1 միլիոն 180 հազար դույլ գինի և մոտ 9 հազար աստիճան սպիրտ։ Այսպիսով, 10 տարվա ընթացքում գործարանների թիվն աճում է 3 անգամ, գինու արտադրությունը՝ 7 անգամ, սպիրտինը՝ մոտ 4 անգամ։ Այդ նույն տարիներին կոնյակի արտադրությունն աճում է 36 անգամ։ Երևանից բացի, գինու, օղու,

կոնյակի գործարաններ կային նաև Էջմիածնի, Ղամարլուի, Աշտարակի և ուրիշ շրջաններում։

Ավելի մեծ էր ու ընդարձակ հայ բուրժուազիայի գործունեությունը Հայաստանից դուրս՝ Անդրկովկասի առևտրա-արդյունաբերական կենտրոններում՝ Թիֆլիսում, Բաքվում և Բաթումում։ Պաշտոնական վիճակագրության տվյալներով, դարի վերջին Թիֆլիսի առևտրի և արդյունաբերության մեջ հայերին պատկանում էր ձեռնարկությունների 62 տոկոսը, իսկ շրջանառության 73 տոկոսը։ Ծխախոտագործությունն ամբողջապես կենտրոնացած էր հայերի ձեռքում։ Անդրկովկասում կտավի միակ գործարանը, 380 բանվորով, պատկանում էր հայ կապիտալիստի, կաշեգործության մեջ (Ադելխանյան և ուրիշներ) նույնպես հայկական կապիտալը գերակշռում էր։ 1900 թ. Թիֆլիսի 71 արդյունաբերական ձեռնարկություններից 36-ը, իսկ ակցիոներական 6 բանկերից 4-ը պատկանում էր հայերին։

Բաքվի նավթարդյունաբերության մեջ հայ կապիտալիստները (Միրզոյան և ուրիշներ) հենց սկզբից գերիշխող դեր ունեին։ 1879 թվականին 70 հայ ձեռնարկատերեր զբաղվում էին նավթարդյունաբերությամբ, նրանք շահագործում էին 155 նավթահոր, ռուսները և եվրոպացիները՝ 79, մյուսները՝ 61։

Երկաթուղիների կառուցումը

XIX դարի երկրորդ կեսին Անդրկովկասի ժողովուրդների սոցիալ-տնտեսական կյանքում տեղի ունեցած խոշոր իրադարձություններից մեկը երկաթուղիների կառուցումն էր։

Երկաթուղիները երկրի արյունատար երակներն են։ Անդրկովկասի պայմաններում, որտեղ չկային քիչ թե շատ կանոնավոր հաղորդակցության միջոցներ, ցամաքային ու ջրային ճանապարհներ, կարելի է ասել, որ երկաթուղիները հեղաշրջիչ դեր կատարեցին։ Երկաթուղիների կառուցման դերն ու նշանակությունը առանձնապես մեծ եղավ Հայաստանի համար, որն ընկած էր կայսրության հեռավոր ծայրամասում, մայրուղիներից կտրված, Թուրքիայի ու Իրանի սահմանագլխին։

Երկաթուղիների կառուցումը ցարական կառավարության ամենախոշոր շինարարությունն էր Անդրկովկասում նրա ավելի քան կեսդարյա տիրապետության ընթացքում։ Դա բխում էր ցարիզմի գաղութային քաղաքականությունից, նրա ներքին ու արտաքին տնտեսական-քաղաքական շահերից, նրա ռազմաստրատեգիական պլաններից։

1860-ական թվականների կեսերից սկսվեց Անդրկովկասի երկաթուղիների կառուցումը։ Գլխավոր խնդիրն էր Սև ծովը երկաթգծով կապել Կասպից ծովի հետ. դրա համար անհրաժեշտ համարվեց առաջին հերթին կառուցել Փոթի—Թիֆլիս երկաթգիծը, ապա Թիֆլիսը միացնել Բաքվի հետ։ Այդ գծի կառուցումը այնքան հրատապ էր, որ Կով-

կասի փոխարքա իշխան Բարյատինսկին առաջարկում էր 60 հազար զինվոր աշխատեցնել շինարարության վրա։ Դա պետք է լիներ Իրանի վրայով դեպի Հնդկաստան տանող մեծ երկաթգծի սկիզբը։

1865 թվականին սկսվում և 1872 թ. հոկտեմբերին ավարտվում է Փոթի—Թիֆլիս երկաթուղու կառուցումը (316 կմ)։ 1883 թվականին ավարտվում է Թիֆլիս—Բաքու երկաթգծի կառուցումը (550 կմ)։ 1877—1878 թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո, երբ Բաթումն անցավ Ռուսաստանին, Սամտրեդի կայարանից 1883 թվականին երկաթգիծ անցկացվեց մինչև Բաթում (105 կմ)։ Այսպիսով, Բաքուն երկաթուղով կապվեց Կովկասի վարչական կենտրոն Թիֆլիսի և Բաքումի նավահանգստի հետ, Բաքվի նավթն սկսեց հոսել դեպի Բաթում, այդտեղից էլ՝ ռուսական և համաշխարհային շուկա։ Երկաթուղին դարձավ Բաքվի նավթարդյունաբերության և առհասարակ Անդրկովկասում կապիտալիզմի զարգացման ամենազորեղ լծակը։

1877 թվականին կառուցվեց Ռիոն—Քութայիսի երկաթուղին (12 կմ). 1880-ին՝ Բաքու—Սարուխանի—Սաբունչի (33 կմ), 1887-ին՝ Քութայիսի—Թկվիբուլի (44 կմ)։ Մինչև 1889 թվականը Անդրկովկասի երկաթուղին պատկանում էր անգլիական մասնավոր ընկերության, որի հիմնադիրներն էին Պերկիսը և Պաուերը։ 1889-ին երկաթուղին անցավ պետությանը։

Բաքու—Թիֆլիս—Բաթում երկաթգիծն ավարտվելուց հետո ցարական կառավարությունը ձեռնամուխ եղավ Թիֆլիս—Ալեքսանդրապոլ—Կարս և Ալեքսանդրապոլ—Երևան—Ջուլֆա երկաթուղու կառուցմանը։ Մշակվել էր մի քանի տարբերակ. առաջինի համաձայն գիծը պետք է անցներ Թիֆլիս—Մառնեուլ—Եկատերինֆելդ—Վորոնցովկա—Ջալալօղլի—Բզովդալի լեռնանցք—Ալեքսանդրապոլ։ Վերջնական ընդունելություն գտավ տնտեսական և տեխնիկական տեսակետից ավելի նպատակահարմար երկրորդ տարբերակը՝ Թիֆլիս—Բորչալու—Ալավերդի—Մեծ Ղարաքիլիսա—Համամլու—Ջաջուռի լեռնանցք—Ալեքսանդրապոլ—Երևան։ Նախատեսվում էր մի ճյուղով (14 կմ) Ջալալօղլին միացնել հիմնական մագիստրալին, որը չիրագործվեց։

1895 թվականին սկսվում է Թիֆլիս—Երևան երկաթուղու կառուցումը։ Երբ պայթեցվում էին Լոռու չքնաղ լեռները և կտրատվում կուսական անտառները, լոռեցիք բողոքում էին դրա դեմ, անգամ հարձակվում բանվորների վրա, ծեծում նրանց։ Իր հայրենակիցների այդ օրինակ տրամադրությունները մեր մեծ բանաստեղծ Հ. Թումանյանն արտահայտել է «Երկաթուղու շինությունը» պատմվածքում։ 1898 թվականին երկաթուղին մտնում է Լոռու ձորը։ Գյուղացիք վիճում են նրա օգուտի ու վնասի մասին. մեկն ասում է. «Այ տղա, ինչի՞ ես էդպես ասում, ի՞նչ մի վնաս բան ա երկաթուղին»։

— «Վնաս չի, բա ինչ ա,— ասում է մեկ ուրիշը,— եկավ ձորերումը ծղրտաց, էլ պախրա չըմնաց, կխտար չըմնաց, ձենիցը խրտնեցին. փախան կորան»։

1899 թվականի հունվարին ավարտվում է Թիֆլիս—Ալեքսանդրապոլ երկաթուղու շինարարությունը։ Փետրվարի 7-ին գնացքը հասնում է Ալեքսանդրապոլ։ 1899 թ. նոյեմբերին ավարտվում է նաև Ալեքսանդրապոլ—Կարս գծի կառուցումը (72 կմ)։ 1899 թ. դեկտեմբերի 1-ից սկսվում է կանոնավոր երթևեկություն Թիֆլիս—Ալեքսանդրապոլ—Կարս ուղղությամբ (283 կմ)։

1899 թվականին շարունակվում է Ալեքսանդրապոլ—Երևան գծի կառուցումը (150 կմ), որը հիմնականում ավարտվում է 1901 թ. դեկտեմբերին, իսկ պաշտոնական բացումը տեղի է ունենում 1902 թ. դեկտեմբերի 5-ին։ 1908 թվականին ավարտվում է Երևան—Ջուլֆա երկաթուղու կառուցումը (204 կմ)։

Հայաստանում XIX դարի վերջերին և XX դարի սկզբներին, շուրջ 10 տարվա ընթացքում կառուցվում է 352 կմ երկաթգիծ։ XX դարի սկզբին Անդրկովկասի գլխավոր երկաթգիծը հասավ մոտ 1400 կիլոմետրի։

Այսպիսով, երկաթուղիների կառուցումն Անդրկովկասում խոշոր նշանակություն ունեցավ տեղական ժողովուրդների հետագա զարգացման համար և միանգամայն առաջադիմական դեր կատարեց։ Երկաթուղիները մեծապես նպաստեցին երկրամասի տնտեսական զարգացմանը, ներքին և արտաքին առևտրի աշխուժացմանը, տնտեսական և կուլտուրական կապերի ընդլայնմանն ու ամրապնդմանը։

Երկաթուղիներն Անդրկովկասի բնական հարստությունների (նավթ, պղինձ, մարգանեց, բամբակ, գինի, կոնյակ և այլն) դռները լայնորեն բաց արին ռուսական և արտասահմանյան կապիտալի առաջ, Անդրկովկասը ներքաշեցին համաշխարհային ապրանքաշրջանառության ոլորտի մեջ, նոր թափ հաղորդեցին կապիտալիզմի զարգացմանը։

Բնակչության աճը։ Քաղաքների զարգացումը

Կապիտալիզմի զարգացման հետևանքով փոխվում է Հայաստանի բնակչության սոցիալական կազմը, աճում է ամբողջ երկրի և հատկապես քաղաքների բնակչությունը, աշխուժանում է քաղաքային կյանքը։

Երևանի նահանգում 1873 թվականին հաշվվում էր մոտ 548 հազար բնակիչ, 1886-ին՝ 670 հազար, 1897-ին՝ 830 հազար։ Այսպիսով, դարի վերջին քառորդում բնակչությունն ավելացել էր 282 հազարով։ Բնակչության աճն առանձնապես բարձր էր լեռնային շրջաններում (Զանգեզուր, Դարալագյազ, Նոր Բայազետ, Լոռի և այլն)։

Ռուսաստանի, Վրաստանի ու Ադրբեջանի հետ համեմատած Հա-

յաստանում բնակչությունն ավելի խիտ էր։ 1897 թվականի համառուսական ընդհանուր մարդահամարի տվյալների համաձայն Ռուսաստանում 1 քառ. վերստի վրա միջին հաշվով ապրում էր մոտ 7 մարդ, Բաքվի նահանգում՝ 24, Թիֆլիսի նահանգում՝ 27, Երևանի նահանգում՝ 33։

Հայաստանի բնակչության ճնշող մեծամասնությունը գյուղացիությունն էր։ 1897 թ. մարդահամարի տվյալներով այժմյան տերիտորիայում ապրող 830 հազար բնակիչների մոտ 87 տոկոսը գյուղացիներ էին, 8 տոկոսը՝ առևտրա-արդյունաբերողներ, 5 տոկոսը՝ անարտադրող խավը։

Բնակչության սոցիալ-դասակարգային կազմը մոտավոր տվյալներով հետևյալ պատկերն ուներ. կալվածատերեր և բուրժուաներ՝ մոտ 3 տոկոս, ունևոր տնտեսատերեր՝ 14, միջակ տնտեսատերեր՝ 38, պրոլետարներ և կիսապրոլետարներ՝ 45։

Ազգային կազմը. 1897 թ. մարդահամարի տվյալներով Երևանի նահանգում հայերը կազմում էին 53 տոկոս, ադրբեջանցիները՝ 38, քրդերը 6, ռուսները 1,6, ասորիները, ուկրաինացիները, հույները, լեհերը, հրեաները, վրացիները և ուրիշներ՝ 1,4։ Կովկասի հայ բնակչությունը կազմում էր 1,243 հազար, որից Երևանի նահանգում՝ 506, Ելիզավետպոլի՝ 294, Թիֆլիսի՝ 221, Բաքվի՝ 89, Կարսի մարզում՝ 83, Արևմտյան Անդրկովկասում՝ 21, Հյուսիսային Կովկասում՝ 29։

Արևելյան Հայաստանի (այժմյան տերիտորիայի) քաղաքային բնակչությունը 1873 թվականին կազմում էր մոտ 38 հազար, 1886-ին՝ 46 հազար, 1897-ին՝ 68 հազար։ Մոտ 25 տարվա ընթացքում քաղաքային բնակչությունն աճել էր գրեթե 2 անգամ, իսկ գյուղական բնակչությունը՝ 1,5 անգամ։ Քաղաքային բնակչությունը կազմում էր մոտ 8,5 տոկոսը։

Երևան, Ալեքսանդրապոլ և Նոր Բայազետ քաղաքների բնակչության աճը դարի վերջին տասնամյակում հետևյալ պատկերն է ներկայացնում.

	1886 թ.	1897 թ.
Երևան	14738	29006
Ալեքսանդրապոլ	24230	30616
Նոր Բայազետ	7488	8486

Հայաստանի քաղաքային բնակչության աճը համեմատաբար դանդաղ էր կատարվում, որովհետև քայքայվող գյուղացիների և արհեստավորների մեծ մասը, ինչպես նշել ենք, գնում էր Բաքու, Թիֆլիս, Բաթում, Ռուսաստան և արտասահման։ 1876 թվականին հայերը կազ-

մում էին Թիֆլիսի բնակչության 32 տոկոսը, իսկ 1886-ին՝ 47 տոկոսը։ 1878 թվականին, երբ Բաթումն անցավ Ռուսաստանի տիրապետության տակ, մոտ 1000 բնակիչ ունեցող գյուղ էր։ 1890 թ. Բաթումն ուներ 14700 բնակիչ, որի 21 տոկոսը հայեր էին։ Բաքուն 1873 թ. ուներ 15 հազար բնակիչ, որից 5 տոկոսը հայ, իսկ 1897 թ.՝ 222 հազար, որից 23 տոկոսը հայ։ Բաթումի և մյուս վայրերի հայ բնակչության թիվն աճեց նաև 1894—1896 թվականների հայկական կոտորածների ժամանակ Անդրկովկաս փախած տասնյակ հազարավոր արևմտահայերի հաշվին։

Խոսելով Կովկասի բնակչության աճի մասին Վ. Ի. Լենինը նշում է, որ եթե 1851—1897 թթ. Կովկասի ամբողջ բնակչությունն աճել էր 95 տոկոսով, ապա քաղաքային բնակչությունը 1863 թ. 350 հազարից 1897-ին հասել էր մոտ 900 հազարի, աճել էր ավելի քան 150 տոկոսով[1]։

Անդրկովկասի քաղաքային բնակչության մեջ, մյուս ազգությունների հետ համեմատած, հայերն իրենց թվով գերակշռում էին։ Քաղաքներում և առհասարակ ամբողջ Անդրկովկասում հայերը, վրացիները, ադրբեջանցիները, ռուսները և մյուս ժողովուրդները ապրում ու աշխատում էին միասին, կողք կողքի, կիսում միմյանց ուրախությունն ու տխրությունը, կռում ու կոփում եղբայրական կապերը։

Բանվոր դասակարգի առաջացումը

Կապիտալիզմի զարգացման կարևոր հետևանքներից մեկն էլ բանվոր դասակարգի առաջացումն էր։ Կապիտալիզմը ծնեց հասարակական այդ նոր, ամենահեղափոխական դասակարգին, Կ. Մարքսի խոսքերով ասած, բուրժուազիայի գերեզմանափորին։

Հայաստանում և Անդրկովկասի մյուս վայրերում, դեռևս ֆեոդալական ֆորմացիայում, կային որոշ թվով բանվորներ, որոնք աշխատում էին լեռնարդյունաբերության մեջ և մանուֆակտուրայի տիպի այլ ձեռնարկություններում։ Սակայն Անդրկովկասում բանվոր դասակարգը հաստատվեց XIX դարի երկրորդ կեսին. այդ շրջանում ձևավորվեցին կապիտալիստական հասարակարգի հիմնական դասակարգերը՝ բուրժուազիան և պրոլետարիատը։

Բանվոր դասակարգի առաջացման հիմնական աղբյուրը քայքայվող, սեփականազրկվող գյուղացիներն էին և արհեստավորները։ Հետռեֆորմյան շրջանում գնալով ավելի էր ուժեղանում գյուղի և քաղաքի մանր արտադրողների քայքայման ու պրոլետարականացման պրոցեսը։ 1880—1890-ական թվականներին մի քանի անգամ կրկնվող ան-

[1] Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 3, էջ 772։

բերրիությունն ու սովը արտադնացության նոր ալիք առաջ բերին Անդրկովկասի առանց այդ էլ կարիքի ու զրկանքի պայմաններում ապրող չքավոր գյուղացիության մեջ։ Գյուղացին դիմում էր քաղաք՝ աշխատանք և գոյության միջոցներ որոնելու, ընկնում էր կապիտալիստական շահագործման ոլորտի մեջ։

Հայաստանում, ինչպես տեսանք, արդյունաբերական խոշոր կենտրոններ չստեղծվեցին, այդ պատճառով էլ մեզ մոտ չստեղծվեցին նաև բանվորական խոշոր կենտրոններ։ Հայաստանի քիչ թե շատ աչքի ընկնող արդյունաբերական և բանվորական կենտրոններն էին Ալավերդին, Ղափանը, Երևանը, Ալեքսանդրապոլն ու Կարսը։

Բանվոր դասակարգի առաջին ջոկատները Հայաստանում ձևավորվեցին պղնձարդյունաբերության, աղի, գինու և կոնյակի արտադրության բնագավառում։ Արդյունաբերության այդ և մյուս ճյուղերի զարգացման, ինչպես նաև երկաթուղու կառուցման շնորհիվ աճեց բանվորների թիվը։ Դարի վերջին Ալավերդու պղնձարդյունաբերության մեջ աշխատող բանվորների թիվը հասավ մոտ 4 հազարի, իսկ Ղափանում՝ մոտ 2 հազարի։

Այդ նույն շրջանում, պաշտոնական տվյալների համաձայն, Երևանի նահանգում կար 3469 ֆաբրիկա-գործարան, 8290 բանվոր։ Սրանք գերազանցապես մանր արդյունաբերական ձեռնարկություններ էին, որտեղ աշխատում էին մի քանիսից մինչև մի քանի տասնյակ բանվորներ։ Միջին հաշվով յուրաքանչյուր ձեռնարկությանն ընկնում էր մոտ 2,5 բանվոր։

Մեծ թվով բանվորներ («Մշակ»-ի տվյալներով մոտ 10 հազար) աշխատում էին Թիֆլիս—Երևան երկաթգծի շինարարության վրա։ Բանվորների մի մասը կտրվում էր գյուղից, մշտական բնակություն հաստատում աշխատանքի վայրերում, իսկ մյուս մասը՝ սեզոնային բանվորները չէին խզում իրենց կապերը գյուղի հետ։ Հայաստանի բանվորների ընդհանուր թիվը բնակչության մի տոկոսն էլ չէր կազմում։

Ինչպես կապիտալիզմի զարգացումը, այնպես էլ բանվոր դասակարգի առաջացումը և բանվորական շարժումն Անդրկովկասում, որոշ առանձնահատկություններով հանդերձ, մի ամբողջական, միասնական պրոցես էր։ Մեր պատմության այդ և մի շարք այլ հանգուցային հարցեր անհնարին է հասկանալ և ճիշտ լուսաբանել առանց հաշվի առնելու Անդրկովկասի բոլոր ժողովուրդների սոցիալ-տնտեսական և հասարակական-քաղաքական կապերը, նրանց զարգացման ընդհանուր օրինաչափությունները։

Պատմական մի շարք հանգամանքների բերումով հայ բանվորների մեծ մասը գտնվում էր Հայաստանից դուրս, Անդրկովկասի առևտրա-

արդյունաբերական կենտրոններում՝ Թիֆլիսում, Բաքվում, Բաթումում։ Բաքվի և Բաթումի բանվորների մոտ 1/3-ը հայեր էին։ 1897 թվականին Անդրկովկասի արդյունաբերական կենտրոնի՝ Բաքվի բանվորների 29 տոկոսը հայեր էին, 19-ը պարսիկներ, 17,5-ը ռուսներ, 15-ը լեզգիներ, 12-ը ադրբեջանցիներ, 4-ը թաթարներ և այլն։ Բաքվի և Թիֆլիսի կաշեգործական, ծխախոտագործական, գործվածքային ֆաբրիկաների աշխատող բանվորների ճնշող մեծամասնությունը հայեր էին։ Հայ բանվորները մեծ թիվ էին կազմում նաև Անդրկովկասյան երկաթուղում և մի շարք ուրիշ ձեռնարկություններում։

Հայաստանի, ինչպես և ամբողջ Անդրկովկասի բանվոր դասակարգը ինտերնացիոնալ կազմ ուներ։ Հայեր, վրացիներ, ադրբեջանցիներ, ռուսներ, ուկրաինացիներ, հրեաներ, պարսիկներ, հույներ և ուրիշներ ապրում և աշխատում էին կողք կողքի, եղբայրական փոխհարաբերությունների պայմաններում։ Այս տեսակետից բացառիկ դեր էր կատարում Անդրկովկասի արդյունաբերության սիրտը՝ պրոլետարական Բաքուն։

XIX դարի երկրորդ կեսին ձևավորվելով որպես դասակարգ, հայ պրոլետարիատը դարձավ Անդրկովկասի և Ռուսաստանի պրոլետարիատի մարտական ջոկատներից մեկը, հայ հասարակական-քաղաքական կյանքի առաջատար ուժը։

Այսպիսով, չնայած նրան, որ ֆեոդալիզմի մնացորդները և ցարիզմի գաղութային քաղաքականությունը արգելակում էին Անդրկովկասում կապիտալիզմի զարգացումը, այնուամենայնիվ, նոր հասարակարգը գնալով ավելի ու ավելի էր առաջադիմում ու ամրապնդվում։ XIX դարի երկրորդ կեսին Անդրկովկասն անշեղ կերպով ընթանում էր կապիտալիզմի ուղիով։

Կապիտալիզմի զարգացումը առաջադիմական երևույթ էր Անդրկովկասի ժողովուրդների բազմադարյան պատմության մեջ։ Նա ոչ միայն խորտակեց հին, ֆեոդալական կարգերը, այլև առաջ մղեց երկրի տնտեսությունն ու կուլտուրան, նպաստեց արտադրողական ուժերի, գիտության ու տեխնիկայի զարգացմանը, անհրաժեշտ նախադրյալներ ստեղծեց գալիք սոցիալիստական հեղափոխության հաղթանակի համար։

XI ԳԼՈՒԽ

1877—1878 ԹԹ. ՌՈՒՍ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ

1. ՌՈՒՍ ԹՈՒՐՔԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ ԵՎ ՀԱՅԵՐԸ

Պատերազմի սկիզբը: Երևանյան ջոկատի մարտական գործողությունները

1877 թ. ապրիլի 12(24)-ին սկսվում է ռուս-թուրքական պատերազմը: Պատերազմական գործողությունները տեղի են ունենում բալկանյան և կովկասյան ռազմաճակատներում: Թուրքական 55 հազարանոց բանակի դեմ գործող Կովկասյան կորպուսը, որի հրամանատարն էր գեներալ Լորիս-Մելիքովը, բաղկացած էր 52 հազար հոգուց: Գլխավոր ուժերը (27 հազար) կենտրոնացած էին Ալեքսանդրապոլ-Կարս ուղղությամբ. ձախ թևում՝ Իգդիր—Բայազետ ուղղությամբ գեներալ Ա. Տեր-Ղուկասովի Երևանյան ջոկատն էր (13 հազար), իսկ աջ թևում՝ Ախալցխա—Արդահան ուղղությամբ գեներալ Դևելի ջոկատը (12 հազար): Բաթումի ուղղությամբ գործում էր Ռիոնի միավորումը գեներալ Օկլոբժիոյի հրամանատարությամբ: Կովկասյան բանակի գլխավոր հրամանատարն էր փոխարքա Միխայիլ Նիկոլաևիչը:

Ռուսական զորքերի գլխավոր հրամանատարությունը մշակել էր հարձակողական պլան, և ինչպես բալկանյան, այնպես էլ կովկասյան ռազմաճակատում ապրիլի 12-ին սկսվում են հարձակողական գործողությունները:

1877 թ. ապրիլի 15-ին Երևանյան ջոկատը, հայ նշանավոր գեներալ Տեր-Ղուկասովի հրամանատարությամբ, Իգդիրից հարձակվում է Բայազետի վրա: Երևանյան ջոկատի հետ էին նաև հայերից ու տեղական մյուս ժողովուրդներից կազմված աշխարհազորայինները:

Բայազետի Ալի-Քեմալ փաշան, լսելով ռուսական զորքերի հարձակման լուրը, փախուստի է դիմում: Ապրիլի 18-ին նրանք առանց կռվի մտնում են Բայազետ: Տեղի բնակիչներն աղ ու հացով են դիմավորում ռուսական զորքին:

Բայազետի բերդում թողնելով փոքրաթիվ կայազոր, ապրիլի 24-ին գեներալ Տեր-Ղուկասովը շարժվում է դեպի Դիադին: Ապրիլ-մայիս ամիսներին նա մեկը մյուսի հետևից գրավում է Դիադինը, Ղարաքիլիսան, Ալաշկերտը, Զեյդեկանը: Ռուս զորքերին մեծ օգնություն էին ցույց տալիս տեղի հայերը:

Խոշոր հաղթանակներ է տանում նաև գեներալ Դևելի զորամասը: 1877 թ. մայիսի 5-ին ռուսները գրոհով վերցնում են Արդահանը, որն ամրացրել էին անգլիական զինվորական ինժեներները: Թուրքերը կորցնում են 2000 մարդ, 95 հրանոթ, 6 միլիոն փամփուշտ, մեծ քանակությամբ զենք ու զինամթերք: Գերի է վերցվում 3000 հոգի, այդ թվում՝ Ալի փաշան: Արդահանը գրավելուց հետո Ախալցխայի ջոկատը լիկվիդացվում է. զորքերի մեծ մասը տեղափոխվում է կենտրոնական ռազմաճակատ: Մայիսի 20-ին ռուսական զորքերը պաշարում են Կարսը:

Տեր-Ղուկասովի զորամասը հետապնդելով նահանջող թշնամուն հասնում է Դրամ-դաղի լեռները: Այստեղ, նպաստավոր դիրքեր բռնելով, թուրքական զորքերը վճռել էին կանգնեցնել և ջախջախել ռուսներին: Թուրքական զորքերի հրամանատար Մահմեդ փաշան մեծ հույսեր էր կապում տեղանքի և իր բանակի թվական գերակշռության հետ:

1877 թ. հունիսի 4-ի լուսաբացին Դրամ-դաղի լեռներում սկսում են որոտալ ռուսական և թուրքական հրանոթները: Մարտերը գնալով ավելի ու ավելի են բորբոքվում: Հրետանային նախապատրաստությունից անմիջապես հետո Տեր-Ղուկասովը հրամայում է անցնել գրոհի: Լսվում է ռուսական հուժկու «ուռա»-ն, սկսվում է սվինամարտը: Ռուսները միաժամանակ գրոհում են հակառակորդի կենտրոնի ու թևերի վրա: Վեց ժամ տևող արյունահեղ մարտերում զոհվում է Մահմեդ փաշան, թուրքական զորքերը, ծանր կորուստներ տալով, դիմում են փախուստի:

Տեր-Ղուկասովի զորամասի առաջխաղացումը կանգնեցնելու և իր աջ թևում ստեղծված վտանգը լիկվիդացնելու համար թուրքական զորքերի գլխավոր հրամանատար Մուխտար փաշան, մոտ չորս անգամ գերակշռող ուժերով, հարձակվում է նրա վրա: Հունիսի 9-ին Դհարի բարձունքներում տեղի է ունենում խոշոր ճակատամարտ: Վաղ առավոտից մինչև ուշ երեկո շարունակվում են արյունահեղ մարտերը: Ռուս քաջարի զինվորները ետ են մղում հակառակորդի բոլոր գրոհները, մեծ կորուստներ պատճառում նրան:

Հաջորդ օրը կռիվներ տեղի չեն ունենում. երկու կողմերն էլ զբաղվում են սպանվածներին ու վիրավորներին հավաքելով: Մուխտար փաշան տեղեկանալով, որ Կարսի ուղղությամբ ռուսական զորքերը հարձակման են անցել, այլևս ճակատամարտը չի վերսկսում և շտապում է կանգնեցնել Լորիս-Մելիքովի զորքերի առաջխաղացումը: Ջևինի մոտ հունիսի 13-ին նա հարձակվում է գեներալ Գեյմանի զորաբաժնի վրա, ծանր հարված հասցնում նրան և հարկադրում նահանջել: Պաշարման վտանգից խուսափելու համար հունիսի 15-ին նահանջի հրաման է ստանում Տեր-Ղուկասովը:

Բայազետի ազատագրումը

Ծանր ապրումների մեջ է ընկնում հարձակողական մարտերի ու հաղթանակների սովոր անվանի զորավարը, երբ ստանում է նահանջի անսպասելի հրամանը: Տեր-Ղուկասովի առաջ կանգնում է մի այլ դժվարին խնդիր՝

Ալաշկերտի հովտի տասնյակ հազարավոր հայերի փրկության հարցը։ Հայերը նրան խնդրում են իրենց չթողնել գերության մեջ, օգնել գաղթելու ռուսական տիրապետության տակ։

Այդ ծանր ու դժվարին պահին նա ստանում է Բայազետի պաշարման և կայազորի օրհասական վիճակի տխուր լուրը։ 1877 թ. հունիսի 6-ին թշնամին մեծ ուժեր հավաքելով պաշարում է Բայազետը։ Ռուսական փոքրաթիվ կայազորը և մի քանի հարյուր հոգուց կազմված հայ կամավորները, քաջարի կապիտան Ֆեոդոր Շտոկվիչի գլխավորությամբ, ամրանում են բերդում և դիմում ինքնապաշտպանության։ Թուրքական զորքերն ու բաշիբոզուկները կատաղի գրոհներ են գործում բերդի վրա, բայց ամեն անգամ ծանր կորուստներ կրելով ետ են շպրտվում։

Չորս կողմից օղակված, անընդհատ անհավասար մարտեր մղելով թշնամու դեմ, Բայազետի կայազորը սպառել էր իր նյութական ու ռազմական բոլոր պաշարները։ Նրանց օրվա սնունդը մի կտոր ձիու միս էր և մի ճաշի գդալ ջուր։ Ջուրը մեծ դժվարությամբ, մարդկային կորուստների գնով բերվում էր դրսից։ Չնայած այդօրինակ ծանր կացության, կայազորը երդվել էր պաշտպանվել մինչև վերջին շունչը և չհանձնվել թշնամուն։

Իրենց օրհասական դրության մասին Բայազետի հերոս պաշտպանները քանիցս փորձել էին տեղեկացնել Տեր-Ղուկասովին, բայց չէր հաջողվել. Թուրքերը բռնել, սպանել էին նամակատարներին։ Վերջապես Ճարպիկ և խիզախ հայ կամավոր Սամսոն Տեր-Պողոսյանը, քրդական հագուստով, մի խավար գիշեր ծպտյալ անցնում է թշնամու օղակով և լուր հասցնում Տեր-Ղուկասովին։

Կատարելով իր հայտնի նահանջը, թշնամու հարձակումներից ու հետապնդումներից անկորուստ ռուսական սահման հասցնելով իր զորամասը, այդ թվում 600 հիվանդ և վիրավոր, ինչպես նաև 2500 ընտանիք հայ գաղթականներ, Տեր-Ղուկասովը կարողացավ օգնության հասնել նաև Բայազետի կայազորին։ Ռազմական մասնագետները նրա այս նահանջը համեմատում են Քսենոֆոնի 10 հազար հույն զինվորների հայտնի նահանջի հետ, դա համարում հերոսական քայլ, օրինակելի նահանջ։

Ութ օր է տևում Տեր-Ղուկասովի նահանջը՝ հունիսի 16—24-ը։ Իգդիր հասնելուն պես, պարեն և ռազմամթերք վերցնելով, հունիսի 26-ին նա շտապում է հասնել Բայազետ և փրկել պաշարվածներին։ «Եղբայրնե՛ր,— ասում է նա իր մարտիկներին,— մեռոնց սովամահ են անում, մեռոնք տանջվում են և մեռնում Բայազետում։ Գնանք նրանց հետ մեռնելու»։

Հունիսի 28-ի լուսաբացին սկսվում են Բայազետի ազատագրության համար մղվող մարտերը։ Տեր-Ղուկասովի կտրիճները սրընթաց գրոհում են հակառակորդի դիրքերի վրա։ 8 ժամ շարունակ համառ մարտեր են մղվում թուրքական 13-հազարանոց կորպուսի և բազմաթիվ բաշիբոզուկների դեմ։ Օրվա ընթացքում երկուստեք իրար են հաջորդում կատաղի գրոհները։ Ռուս զինվորներից շատերի սվինները ծռվել էին, հրացանների խզակոթերը ջարդվել։ Թուրքական կորպուսը պարտվում և փախուստի է դիմում։ Երեկոյան ջոկատը հաղթական կերպով մտնում է Բայազետ և 23 օրվա գերությունից փրկում կայազորի անձնուրաց մարտիկներին։

Բայազետի ազատագրման համար Տեր-Ղուկասովն ստանում է Գեորգի երրորդ աստիճանի շքանշան։

Պատմական այս իրադարձություններն են, որ մեր մեծ գրող Րաֆֆին պատկերել է իր նշանավոր «Խենթը» վեպում։

Կարսի և Էրզրումի գրավումը

Գեներալ Գեյմանի դեմ տարած հաղթանակը և ռուսական զորքերի նահանջը ոգեշնչում են Մուխտար փաշային։ Նա որոշում է անցնել հակահարձակման և հրամայում է Իսմայիլ փաշային, Վանի ջոկատի հրամանատար Ֆաիկ փաշային ներխուժել Երևանի նահանգը, որից հետո ընդհանուր ուժերով արշավել դեպի Թիֆլիս։ Թուրքերին հաջողվում է խռովություններ կազմակերպել Չեչնիայում, Աբխազիայում, Դաղստանում և լուրջ վտանգ ստեղծել Կովկասյան կորպուսի թիկունքում։ Այդ դժվարին շրջանում ռուս զորքերը ոչ միայն կարողանում են պաշտպանվել, այլև գրավել Սուխումը՝ թուրքերի գլխավոր հենակետերից մեկը Սև ծովում։

Մուխտար փաշայի այս ագրեսիվ պլանը բարեբախտաբար չիրագործվեց։ Առաջին լուրջ հարվածը նրան հասցրեց Տեր-Ղուկասովը՝ Բայազետում ջախջախելով և ցիր ու ցան անելով Ֆաիկ փաշայի զորքերին։ Դրանից հետո Իսմայիլ փաշան, որը ներքուստ դեմ էր Մուխտար փաշայի պլանին, ձգձգեց և չհարձակվեց Երևանի վրա։ Ամառվա ամիսներին ռազմաճակատում էական փոփոխություններ տեղի չունեցան։ Օգոստոսի 25-ին միայն Բաշկադըլարի մոտ տեղական նշանակություն ունեցող մարտեր տեղի ունեցան, որտեղ թուրքերը կորցրեցին 1500 մարդ, իսկ ռուսները՝ 900։

1877 թ. սեպտեմբերի վերջերին, ստանալով նոր համալրումներ, Կովկասյան կորպուսը նորից հարձակման է անցնում։ Հոկտեմբերի 3-ին Կարսի մոտ, Ալաջայի բարձունքներում, տեղի է ունենում խոշոր ճակատամարտ։ Ռուսական քաջարի զորքերը, Լոռիս-Մելիքովի, Գեյմանի, Լազարևի, Օբրուչևի և մյուս հմուտ զորավարների ղեկավարությամբ, գլխովին ջախջախում և ցիրուցան են անում Մուխտար փաշայի բանակը։ Թուրքերը կորցնում են 18—20 հազար մարդ, 35 հրանոթ, մեծ քանակությամբ զենք, ռազմամթերք և խուճապահար փախուստի դիմում։ Ռուսների կորուստը հաշվվում է 1500 մարդ։

Հոկտեմբերի 23-ին Դեմ-Բոյնի ճակատամարտում Մուխտար փաշան և նրան միացած Իսմայիլ փաշան, կորցնելով մոտ 7 հազար մարդ, նահանջում են դեպի Էրզրում։

Այս հաղթանակներից հետո ռուսական զորքերի մի մասը շարժվում է դեպի Էրզրում, իսկ մյուս մասը երկրորդ անգամ պաշարում Կարսը, որը թողել էին հունիսյան նահանջի ժամանակ։

Կարսի բերդը Հայաստանի ամենանշանավոր ամրությունն էր։ Ղրիմի պատերազմից հետո անգլիական զինվորական մասնագետների ղեկավարությամբ թուրքերն այն ավելի էին ամրացրել։ Բերդի պաշտպանների թիվը հասնում էր մոտ 30 հազարի, որոնք ունեին 300 հրանոթ, երեք ամսվա պաշար։

Նոյեմբերի 5-ի երեկոյան ռուսական զորքերը յոթ շարասյուներով գրոհում են թշնամու ամրությունների վրա։ Հակառակորդը կատաղի դիմադրություն է ցույց տալիս. միայն Քանլիի մոտ ռուսներից 1000 հոգի սպանվում և վիրավորվում են։ Լոռիս-Մելիքովն իմանալով այդ մասին, կարգադրում է գրոհող զորքերի հրամանատար գեներալ Լազարևին նահանջել։ Լազարևը նրան պատասխանում է. «Ես գրոհում եմ անդառնալիորեն, եթե Կարսը չվերցնեմ գիշերը, ապա կվերցնեմ ցերեկը կամ կկռվեմ մինչև հաջորդ գիշերը»։

Նոյեմբերի 5-ի ամբողջ գիշերը Կարսի պարիսպների տակ կատաղի մարտեր են մղվում։ Անվեհեր ռուս զինվորները սվինամարտով ճեղքում են թշնամու պաշտպանության գիծը, կոտրում նրա համառ դիմադրությունը։ Նոյեմբերի 6-ի առավոտյան ռուսական զորքերը գրավում են Կարսի հռչակավոր ամրոցը։

Կարսի համար մղված մարտերում թուրքերը կորցնում են 2500 սպանված, 18 հազար գերի, այդ թվում 5 փաշա, 800 սպա, մեծ քանակությամբ ռազմամթերք և սննդամթերք։ Ռուսները կորցնում են 2300 սպանված և գերի։ Գեներալ Հ. Լազարևը պարգևատրվում է Գեորգի երկրորդ աստիճանի շքանշանով։

Կարսի գրավումը կովկասյան բանակի ամենախոշոր հաղթանակն էր։ Կարսի գիշերային գրոհը ռուսական զորքերի տարեգրության անջնջելի էջերից է։ Կարսի առումը վճռեց ոչ միայն կովկասյան ռազմաճակատի բախտը, այլև կարևոր նշանակություն ունեցավ ամբողջ պատերազմի ելքի համար։

1877 թ. դեկտեմբերի վերջերին Կարսում գտնվող ռուսական զորքերը, հաղթահարելով ուժեղ սառնամանիքները, հասնում են Արևմտյան Հայաստանի նշանավոր կենտրոն Էրզրում (Կարին)։ 1878 թ. հունվարի սկզբին բալկանյան ռազմաճակատում գործող զորքերը գրավում են Ադրիանապոլիսը։ Հունվարի 19-ին կնքված զինադադարի համաձայն դադարում են պատերազմական գործողությունները. Էրզրումի թուրքական

կայազորը փետրվարի 8-ին քաղաքը հանձնում է ռուսական զորքերին՝ տեղում թողնելով խոլերայով հիվանդ 5 հազար մարդ։ Ռուսներն անհապաղ միջոցներ են ձեռնարկում խոլերան վերացնելու համար։

Հայերի մասնակցությունը 1877—1878 թթ. ռուս-թուրքական պատերազմին

1877—1878 թթ. ռուս-թուրքական պատերազմը նոր հեռանկարներ էր բացում օսմանյան բռնակալության դաժան լծի տակ տառապող արևմտահայ աշխատավորության համար։ Հայերը, հույներն ու բալկանյան սլավոն ժողովուրդները վաղուց ի վեր ձգտում էին ազատագրվել սուլթանական բռնակալության լծից։ Ռուս-թուրքական պատերազմները ազատության հույսեր էին արթնացնում նրանց մեջ, պայքարի հանում նրանց։

Հայերը բազմիցս ցույց էին տվել իրենց հավատարմությունը Ռուսաստանի նկատմամբ։ Ինչպես միշտ, այս անգամ ևս, նրանց համակրանքը Ռուսաստանի կողմն էր։ Այդ էր պատճառը, որ երբ սկսվեց 1877—1878 թթ. ռուս-թուրքական պատերազմը, հայերը ռազմական, նյութական և բարոյական մեծ օգնություն ցույց տվին ռուսական զորքերին։ Ականատեսները վկայում են, թե ինչպես արևմտահայ գյուղացիներն ամենուրեք գրկաբաց էին ընդունում ռուս զորքերին, իսկ վերջիններս իրենց զգում էին հարազատ միջավայրում։ Պատերազմի մասնակից գեներալ Ս. Քիշմիշևը գրում է. «Անցած պատերազմում թուրքահայերն իրոք այնպիսի անձնազոհություն ցույց տվին, չխնայելով իրենց գույքը և նույնիսկ կյանքը, այնպիսի հավատարմություն մեր նկատմամբ, որ մենք չէինք կարող չհամոզվել, թե ճիշտ է այն միտքը, որ մեր միակ դաշնակիցները Փոքր Ասիայում հայերն են։ Բարքերի մաքրությունը, սերը դեպի ընտանիքը, աշխատասիրությունն ու հողագործության հետ կապված լինելը հաստատում են նրանց մասին անցած և ներկա դարերի ճանապարհորդների արտահայտած կարծիքները»։

Պատերազմի հենց սկզբից Անդրկովկասի հայերը, վրացիների ու ադրբեջանցիների հետ միասին, բազմաթիվ կամավորական ջոկատներ կազմակերպեցին, որոնք ակտիվ մասնակցություն ունեցան կովկասյան ռազմաճակատի պատերազմական գործողություններին։

Հայկական, ադրբեջանական և վրացական խառը հեծյալ ու հետևակ դրուժինաներ ստեղծվեցին Երևանում, Էջմիածնում, Նախիջևանում, Ալեքսանդրապոլում, Ախալցխայում, Թիֆլիսում, Ղարաբաղում, Գանձակում, Բաքվում և մի շարք այլ վայրերում։ Հազարավոր հայեր, վրացիներ, ադրբեջանցիներ մտան մարտական այդ դրուժինաների շարքերը և պատերազմի ամբողջ ժամանակաշրջանում, ռուս զինվորների հետ ձեռք ձեռքի տված, քաջաբար կռվեցին ընդհանուր թշնամու դեմ։

Մոտավոր տվյալներով պատերազմի տարիներին ռազմաճակատում

և թիկունքում գործելու համար Անդրկովկասի ժողովուրդներից մոբիլիզացվել էր շուրջ 42 հազար մարդ: Եվ եթե ինչպես նախորդ, այնպես էլ այս պատերազմում ռուսական զորքերը միշտ էլ հաղթանակներ էին տանում, ապա դրանց մեջ իրենց բաժինն ունեին նաև Անդրկովկասի ժողովուրդները:

Կամավորական շարժումը և ռուս զորքերին ցույց տրվող օգնությունը էլ ավելի լայն ծավալ ստացավ արևմտահայերի մեջ: Բայազետի, Ալաշկերտի, Դիադինի, Կարսի, Արդահանի, Էրզրումի հայերը նույնպես կամավորական ջոկատներ կազմակերպեցին և ռուս զորքերի հետ կամ առանձին կռիվներ մղեցին իրենց կեղեքիչների դեմ: Արևմտահայ գյուղացիները ռուս զորքերին ամենուրեք դիմավորում էին որպես իրենց փրկիչների, հաց, միս և այլ սննդամթերք մատակարարում, հիվանդ ու վիրավոր զինվորներին խնամում, բեռներ փոխադրում և այլն: Այդ ամենը նրանք կատարում էին թուրք փաշաների ու ֆուրդ բեկերի բարբարոսական լծից ազատագրվելու նպատակով:

Առնասարակ 1877—1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի ժամանակ ինչպես արևելահայերը, այնպես էլ արևմտահայերը հանդես եկան ավելի ակտիվ, ավելի կազմակերպված ու միասնական, քան նախորդ պատերազմների շրջանում:

Հայերի ակտիվ մասնակցությունը 1877—1878 թթ. ռուս-թուրքական պատերազմին դրսևորվեց ինչպես ռազմաճակատում, այնպես էլ թիկունքում: Երբ 1877 թ. ապրիլին գեներալ Արշակ Տեր-Ղուկասովի զորամասը մտավ Բայազետի փաշայության սահմանը, տեղի հայերն ամենուրեք ցնծությամբ դիմավորեցին նրան: Ռուսական զորքերը գրեթե առանց կռվի, հայերի օգնությամբ, գրավեցին ոչ միայն Բայազետը, այլև Ալաշկերտն ու Դիադինը:

Երևանյան ջոկատի նահանջի ծանր ու դժվարին պայմաններում, նրա մատակարարման, հարյուրավոր հիվանդների ու վիրավորների խնամքի գործում մեծ դեր էին կատարում հայերը: Բայազետի պաշարված կայազորի հետ միասին մեծ թվով հայ կամավորներ հերոսաբար մարտնչում էին թշնամու դեմ՝ դիմանալով ամեն տեսակի զրկանքների: Հանրահայտ է Ղարաջորան գյուղացի հայ կամավոր Սամսոն Տեր-Պողոսյանի բացառիկ սխրագործությունը, որը լուր հասցրեց Տեր-Ղուկասովին, և նրա օգնությամբ օրհասական վիճակից փրկվեց վերջին ճիգերը գործադրող Բայազետի կայազորը:

Հայերն աչքի ընկնող դեր են կատարում Կաղզվանի և Արդահանի գրավման ժամանակ: Կաղզվանի վրա գրոհող ռուսական զորամասերին առաջնորդում էին հայ կամավորներ Ասո Հակոբյանը և Հարություն Մկրտչյանը, որոնց թուրքերը բռնում և խոշտանգում են: Արդահանի գրավմանը գործուն մասնակցություն են ունենում Սուրենյանը, Միրզոյանը և ուրիշներ:

Հայերը խոշոր դեր կատարեցին նաև Կարսի գրավման ժամանակ: Կարսի բերդի գիշերային գրոհի ուղեցույցները հայեր էին: Նրանք զինվորական շինել հագած գնում էին գլխավոր շարասյուների առջևից: Նրանցից շատերը սպանվեցին և վիրավորվեցին: Կարսի և շրջակայքի կռիվներին մասնակցել են նաև հայ կամավորական ջոկատները: Միայն Երևանի գավառից երեք հարյուրյակ է մասնակցել Կարսի գրավմանը: Հայերից այստեղ աչքի ընկան և պարգևատրվեցին Լազարևը, Ալխազյանը, Հարությունյանը, Դոլուխանյանը, Քիշմիշևը, գնդապետ Լոռիս-Մելիքովը, Եղիգարյանը և ուրիշներ:

Մենք լրիվ տվյալներ չունենք հայ կամավորների թվի վերաբերյալ: Բայց դատելով այն փաստից, որ Երևանի նահանգի բոլոր գավառներում, Անդրկովկասի հայաբնակ վայրերում, Արևմտյան Հայաստանի մի շարք շրջաններում հետևակ և հեծյալ դրուժիններ են կազմակերպվել, ապա կարելի է ասել, որ հայ դրուժիններկների թիվը մոտավորապես 15—20 հազարի է հասել: Միայն Ղարաբաղից գնդապետ Գրիգոր Մելիք-Շահնազարյանի և Համբարձում Հախումյանի ղեկավարությամբ 1877 թ. հունիսի սկզբներին Բայազետ են հասել հազար հեծյալ կամավորներ: Նրանցից 400 հոգի սպանվում և անհայտ կորչում են:

Երևանի նահանգից մեկնած երկու հեծյալ և երկու հետևակ ջոկատներ մասնակցում են Տեր-Ղուկասովի զորամասի մղած մարտերին, կամավորական մի գումարտակ, բաղկացած ավելի քան 700 հոգուց, մասնակցում է Կարսի մոտ, Զինգիլի բարձունքներում տեղի ունեցած կռիվներին: Մեծ թվով հայ կամավորներ Շիրակից և այլ վայրերից մասնակցում են Ալաջայի նշանավոր ճակատամարտին:

Կովկասյան ռազմաճակատում չի եղել փիչ թե շատ աչքի ընկնող պատերազմական գործողություն, որին հայերը մասնակցած չլինեն: *Նրանցից շատերը, հարյուրավոր հրամանատարներ ու շարքայիններ, պարգևատրվել են մարտական շքանշաններով ու մեդալներով: Իրենց քաջագործություններով առավել աչքի են ընկել Ղրիմի պատերազմի վետերան հարյուրապետ Գաբրիել Գեղամյանը և նրա օգնական Սմբատ Մուշեղյանը, Ղրիմի պատերազմում քաջի անուն վաստակած, հմուտ հետախույզ Դանիել Հարությունյանը, երևանյան միավորման հեծյալ գնդի հրամանատար մայոր Ավետյանը, շարքայիններ Կ. Հունանյանը, Ղ. Տեր-Ղազարյանը, Ս. Սարգսյանը, Գ. Տեր-Կարապետյանը, Կողբ գյուղացի Եփրեմ Կիրակոսյանը, Ղարաբաղի կամավորներից Ռոստոմ Մելիք-Բեգլարյանը, Գրիգոր Ծատուրյանը, Սևի Աբրահամյանը, Պողոս Մելիքյանը և շատ ուրիշներ:*

Մեզ հասած պաշտոնական վավերագրերի համաձայն, պատերազ-

մում ցուցաբերած արիության ու քաջության համար էջմիածնի կամավորներից 8 հոգի պարգևատրվել են շքանշաններով, 31 հոգի՝ մեդալներով։ Ելիզավետպոլի նահանգի 2320 հայ և ադրբեջանցի հեծյալ կամավորներից շատերն իրենց կատարած սխրագործությունների համար պարգևատրվում են։ Հայ-վրացական աշխարհազորի խիզախ մարտիկ Սարգսյանը մեն-մենակ հարձակվում է մի խումբ զինվորների վրա, շորսին սպանում, մնացածին փախուստի մատնում։

Հայ, ինչպես և վրացի ու ադրբեջանցի կամավորների մի մասը զենք և ռազմամթերք ստանում էր պետությունից։ Թուրքերի ներխուժումից պաշտպանվելու համար կառավարությունը զինում էր նաև սահմանամերձ շրջանների բնակիչներին։

Ինչպես նախորդ, այնպես էլ այս պատերազմի ժամանակ քրդերի մի մասը ոչ միայն չօգնեց թուրքերին, այլև հայերի հետ միացած հանդես եկավ նրանց դեմ։ Օրինակ, 1877 թվականին, երբ թուրքական կառավարությունը զենքի կոչեց Դերսիմի քրդերին, նրանք պատասխանեցին՝ «Մենք ոչ հարկ կտանք և ոչ էլ զորք»։ Դերսիմի ապստամբությունը ճնշելու համար թուրքական կառավարությունը զորք ուղարկեց։ Կատաղի մարտեր տեղի ունեցան հրանոթներով զինված թուրքական 4-րդ բանակի կանոնավոր զորամասերի և Դերսիմի բնակիչների միջև։ Քրդերն ու հայերը միացյալ ուժերով չտեսնված քաջությամբ էին կռվում թուրքական զորքերի դեմ և մի քանի փայլուն հաղթանակներ տարան։ Բայց ուժերն անհավասար էին, նրանք չկարողացան երկար դիմանալ. ներքին անհամաձայնություններ ծագեցին։ Թուրքերը գրավեցին Դերսիմը և դաժանաբար սրի քաշեցին հայերից ու քրդերից շատերին։

1877—1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի տարիներին հայերը ոչ միայն ռազմական, այլև նյութական մեծ օգնություն ցույց տվին ռուսական զորքերին։ Ռուսական զորքերի հաղթանակի հետ կապելով թուրքական բռնակալության ծանր լծից ազատագրվելու իրենց հույսերը, հայերը բոլոր հնարավոր միջոցներով օգնում էին նրանց։ Նրանք ռուսական բանակին անվճար կամ մատչելի գներով մատակարարում էին հաց, միս, խմիչք, անասնակեր, փոխադրական միջոցներ և այլն։

Ռուսական գործող կորպուսի ականատես հրամանատարներից մեկը պատմում է, թե «ինչպես ճանապարհին հայ հովիվները մի քանի ոչխար են նվիրում իրենց որպես մատաղ՝ հաղթանակի համար։ Ալեքսանդրապոլում, էջմիածնում, Իգդիրում և այլուր տեղական բնակիչները ռուս զորքերին ջերմորեն ընդունում, հաց, ճաշ և խմիչք էին տալիս, նրանց համար հաց թխում և այլն։ Ն. Ախտայի բնակիչները Ղրիմյան 73-րդ գնդի 1500 զինվորների ձրի ճաշ են տալիս, իսկ Արզնիի գյուղացիները մի սայլ թխած լավաշ են նվիրում։ Գնդի հրամանատարը նահանգապետին գրավոր շնորհակալություն է հայտնում բնակիչների ջերմ ու հոգատար վերաբերմունքի համար։

1877 թվականին ռուսական զորքերի համար Անդրկովկասում մթերվում է 336 հազար չետվերտ[1] հացահատիկ։ 1877—1878 թթ. պատերազմի տարիներին Անդրկովկասի ժողովուրդները ռուսական զորքերին տրամադրում են 646 հազար սայլ, 9270 ձի, 8390 ուղտ, Երևանի նահանգի բնակիչները՝ ավելի քան 44 հազար սայլ, 6500 ուղտ, 1600 ձի, Ալեքսանդրապոլի գավառի բնակիչները՝ 500 սոմար[2] ցորեն, 900 սոմար գարի և այլն։

Երևանի նահանգի գյուղացիները մեծ քանակությամբ անասնակեր են մատակարարում կովկասյան բանակին։ Ալեքսանդրապոլի գավառը տալիս է 320 հազար փ. խոտ, 640 հազար փ. հարդ, 24 հազար փ. գարի, Նոր Բայազետի գավառը՝ 270 հազար փ. խոտ, 320 հազար փ. հարդ, էջմիածնի գավառը՝ 253 հազար փ. խոտ, 505 հազար փ. հարդ և այլն։

Հայ բնակիչներն առանձին հոգատարությամբ պահում, խնամում էին հիվանդ և վիրավոր ռուս զինվորներին։ Երևանում, Ալեքսանդրապոլում, Դիլիջանում, Կարսում, Էրզրումում և այլուր նրանց բնակարաններ էին տրամադրում, անկողին, տաք հագուստ, սնունդ։ Հնարավոր բոլոր պայմաններն ստեղծվում էին նրանց առողջության վերականգնման համար։ Ռուս զինվորները հայերի մեջ իրենց զգում էին հարազատ միջավայրում։ Կյանքի պայմանները մոտեցնում էին հայերին ու ռուսներին, մտերմական կապեր ստեղծում նրանց միջև։

Հայ ժողովուրդը 1877—1878 թթ. ռուս-թուրքական պատերազմին մասնակցում էր իր կյանքի ու գույքի ապահովության, իր հայրենիքի ազատության, իր լավ ապագայի համար։ Նրա պայքարն ուղղված էր ճնշողների դեմ և միանգամայն արդարացի էր։

Կարսի մարզի կազմակերպումը

1877—1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի խոշոր հաղթանակներից մեկը Հայաստանի նշանավոր կենտրոն Կարսի գրավումն էր և նրա միացումը Ռուսաստանին։ 50 տարվա ընթացքում ռուսական զորքերը երեք անգամ գրավեցին Կարսը, բայց միայն այս անգամ նա մնաց Ռուսաստանի ձեռքում։

Կարսը ռազմա-ստրատեգիական և տնտեսական կարևոր նշանակություն ունեցող կենտրոն էր, պատմական Հայաստանի ամենահարուստ ու բարեբեր երկրամասերից մեկը։

1878 թվականի Սան-Ստեֆանոյի և ապա Բեռլինի պայմանագրերով, երբ Կարսը, Արդահանը և Բաթումը միացվեցին Ռուսաստանին,

[1] Մեկ չետվերտը հավասար է հինգհակես փթի։

[2] Մեկ սոմարը Ալեքսանդրապոլի գավառում հավասար էր 19 փթի։

կազմվեց Կարսի մարզ։ Մարզի մեջ մտան Կարսի, Արդահանի, Զարուշադի, Չլդրի, Շորագյալի, Կաղզվանի, Օլթիի, Տախտիի և Խորասանի շրջանները։ Մարզային կենտրոնն էր Կարս քաղաքը։

Կարսի մարզում ստեղծվում է զինվորական և քաղաքացիական միացյալ վարչություն, որը մտնում էր Կովկասի փոխարքայության մեջ և ենթարկվում փոխարքային։ Մարզը կառավարում էր զինվորական նահանգապետը։ Սկզբնական շրջանում տեղական իշխանության ներքին օղակներում էական փոփոխություններ չկատարվեցին։

1881 թվականին Կարսի մարզը բաժանվեց չորս գավառի կամ օկրուգի՝ Կարսի, Արդահանի, Կաղզվանի և Օլթիի։ Հետագայում վարչական նոր փոփոխություններ կատարվեցին։ Դարի վերջին Կարսի մարզում կար մոտ 800 գյուղ, 290—300 հազար բնակիչ։ Մարզում ապրում էին հայեր, թուրքեր, քրդեր, ռուսներ, հույներ և այլն։ Հայերը կազմում էին բնակչության մոտ մեկ երրորդը։ Մարզի ընդհանուր տարածությունը կազմում էր 16463 քառ. վերստ։

Ազատագրվելով օսմանյան հետամնաց ֆեոդալական բռնակալության լծից և միանալով զարգացման ավելի բարձր աստիճանի վրա գտնվող Ռուսաստանին, Կարսի, ինչպես և Բաթումի մարզերը թևակոխեցին զարգացման նոր շրջան։ Պատմական կարճ ժամանակամիջոցում մարզի բնակիչները հաղթահարեցին իրենց տնտեսական-կուլտուրական հետամնացությունը և կանգնեցին զարգացման այն ուղու վրա, որով ընթանում էին Անդրկովկասի ժողովուրդները։

Կարսի միացումը Ռուսաստանին առաջադիմական խոշոր երևույթ էր և միանգամայն դրական ազդեցություն ունեցավ տեղի բնակչության հետագա զարգացման համար։ Դժբախտաբար այդ երկար չտևեց։ 42 տարի հետո Կարսը նորից ընկավ թուրքական զավթիչների ձեռքը և դուրս մղվեց իր զարգացման հունից։

2. ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԴԻՎԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ

Սան-Ստեֆանոյի պայմանագիրը և հայկական հարցի ծագումը

Հայկական հարցը, որպես միջազգային դիվանագիտության հարց, ծագել է 1877—1878 թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո և սերտորեն կապված էր Արևելյան հարցի հետ։ Հայկական հարցն առաջին անգամ իր արտահայտությունն է գտել 1878 թ. փետրվարի 19-ին (մարտի 3-ին) Ռուսաստանի և Թուրքիայի միջև Սան-Ստեֆանոյում կնքված հաշտության պայմանագրում։ Ուստի ճիշտ չեն այն հեղինակները, որոնք հայկական հարցի ծագումը կապում են հայ ժողովրդի ծագման կամ միջին դարերի հայ ազատագրական պայքարի հետ։

Հայկական հարցը ծագել և միջազգային դիվանագիտության մեջ

մտել է որպես օսմանյան Թուրքիայի լծի տակ գտնվող արևմտահայերին վերաբերող հարց։ Ոչ Սան-Ստեֆանոյի և ոչ էլ Բեռլինի պայմանագրում խոսք չկա Ռուսաստանի կամ Պարսկաստանի տիրապետության տակ գտնվող հայերի մասին։

Հայկական հարցը մեր պատմության բոլոր ժամանակների հետ կապված հարց չէ, այն առաջացել է պատմական կոնկրետ պայմաններում, ունեցել է իր կոնկրետ նախադրյալները, կոնկրետ բովանդակությունը։

Դեռևս 1877—1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի նախօրյակին և պատերազմի ժամանակ հայ հասարակական գործիչներից շատերը առաջ քաշեցին թուրքական բռնակալության ծանր լծից արևմտահայերի ազատագրության հարցը։ Գր. Արծրունին, Բաֆֆին, Սպ. Սպանդարյանը, Ստ. Պալասանյանը և ուրիշներ հայերին կոչ էին անում ոտքի կանգնել, բալկանյան ժողովուրդների օրինակով, նրանց հետ միասին թոթափել թուրքական բռնակալության դարավոր լուծը։

1876 թ. «Մշակ»-ում Սպ. Սպանդարյանը «Արևելյան խնդիրը և հայերը Թուրքիայում» հոդվածում գրում է. «Արդեն մեկ տարի է, որ Բալկանյան թերակղզում քրիստոնյա ազգերը զենքը ձեռներին մարտնչում են յուրյանց ազատության համար։ Ամեն տեսակ չարաչար նեղությունների ընդդիմանալով՝ լավ են համարում պատերազմի դաշտում մեռնել, քան թե կրկին օսմանյան տերության ծանր լծի տակ մտնել, որտեղ մարդը զուրկ է ամենահասարակ մարդկային իրավունքներից՝ նա կրում է այդ անունը իբրև ծաղր միայն»։

Այնուհետև խոսելով հայերի ծանր դրության մասին, նա գրում է. «Ոչ մեկ քրիստոնյա ազգ չկա Արևելքում, որ այնչափ հալածանքի, նեղությունների ենթարկված լինի, ինչպիսին է մեր թշվառ հայոց ազգը... Հայերը կրում են դառն ստրկության լուծը։ Ինչ կա ավելի բարձր, ավելի սուրբ, քան թե յուր անձը, յուր պատիվը պաշտպանել, թե այդ ևս մարդ յուր կյանքով վճարեր։ Հայերի համար օտարը ծամելու չէ, որ իրենք կուլ տան։ Եթե հայերը ուզում են մարդավայել կյանք վարեն և խաղաղ ապրեն, պետք է իրենց շրջապատող ազգերից պատվված լինեն»։

1877—1878 թթ. «Փորձ» հանդեսում տպագրված իր հոդվածներում Ստ. Պալասանյանը նույնպես կոչ էր անում հայերին՝ «բարձրաբարբառ հայտնել իր անբռնաբարելի իրավունքները»։ «Երբեք Հայաստանը այնքան տառապանքներ չի կրել, որքան ներկա պատերազմի ժամանակ,— գրում է նա,— ամբողջ հայ գյուղեր ու քաղաքներ մոխրակույտերի տակ ծածկվեցան, անթիվ, անհամար հայերի անմեղ արյունը հեղեղի պես հոսեցավ»։ Այստեղից էլ նա հանգում էր այն եզրակացության, թե հայերը, բալկանյան ժողովուրդների նման, բոլոր իրավունքներն ունեն

անկախություն ստանալու համար։ «Արդ՝ ինչի՞ մի բուռն զարաղաղցիք (հաղիվ 200 հազար), մեկուկես միլիոնի չափ սերբիացիք, նույնպես սակավաթիվ ռումինացիք կարող են ազատ լինել, իշխան և ինքնավարություն ունենալ, իսկ չորս միլիոնանոց հայ ազգը չպիտի ունենա միևնույնը»։

Ռուս-Թուրքական պատերազմը ոտքի էր հանել հայ ժողովրդին։ Բալկանյան ժողովուրդների նման նա մեծ հույսեր էր կապում Ռուսաստանի հաղթանակի հետ։ Պատերազմը վերջացավ Ռուսաստանի հաղթանակով, զինադադար կնքվեց, որն ընկավ հաշտության պայմանագրի հիմքում, բայց հայերը դիվանագիտական սեղանին դնելու համար դեռևս չունեին իրենց մշակված ծրագրերը։ Զինադադարի պայմանների մեջ հայերի պահանջները տեղ չգտան, դա խիստ բացասաբար անդրադարձավ հարցի հետագա ընթացքի վրա։

Հասարակական կարծիքի ճնշման տակ, ուշացումով, Կ. Պոլսի պատրիարք Ն. Վարժապետյանը 1878 թ. փետրվարի 1-ին դիմում է ռուսական պատվիրակությանը և խնդրում՝ հայերին ևս տալ այն իրավունքներն ու երաշխավորությունները, ինչ տրվելու է բալկանյան ժողովուրդներին։

Սան-Ստեֆանոյի պայմանագիրը կնքվում է միջազգային լարված իրադրության պայմաններում։ Անգլիան և Ավստրիան սպառնում էին Ռուսաստանին նոր պատերազմով։ Թուրքական պատվիրակությունը, հույսը դրած նրանց վրա, դիմադրում էր ռուսական պատվիրակության պահանջներին։ Չնայած դրան, պատվիրակության ղեկավար կոմս Ն. Իգնատևը հարկադրում է թուրքերին ընդունելու Բալկաններին վերաբերող իրենց պահանջները, որոնք առաջնահերթ նշանակություն ունեին։

Սան-Ստեֆանոյի պայմանագրի գլխավոր հարցերը լուծելուց հետո կոմս Իգնատևը մեծ դժվարությամբ կարողանում է կոտրել թուրքական պատվիրակների համառությունը և Ռուսաստանին միացնել Կարսի, Արդահանի, Բաթումի, Բայազետի և Ալաշկերտի շրջանները։ Թուրքական պատվիրակները շատ ճիգ ու ջանք են գործադրում Ալաշկերտը, Կարսը և Բաթումը իրենց ձեռքում պահելու համար, բայց հաջողություն չեն ունենում։

Չկարողանալով գրված բոլոր շրջանները միացնել Ռուսաստանին, Իգնատևը մշակում և Սան-Ստեֆանոյի պայմանագրի մեջ մտցնում է Թուրքիայի տիրապետության տակ գտնվող հայերի վերաբերյալ 16-րդ հոդվածը՝ հետևյալ բովանդակությամբ.

«Նկատի ունենալով, որ Հայաստանում գրված, բայց Թուրքիային վերադարձվելիք վայրերից ռուսական զորքերի հեռանալը կարող է կռիվների ու բարդություններ տեղիք տալ և բացասաբար անդրադառնալ երկու պետությունների բարյացակամ հարաբերությունների վրա,

Բարձրագույն Դուռը պարտավորվում է Հայկական մարզերում, առանց ուշացման, գործադրել տեղական պահանջներից բխող բարեփոխություններ ու ռեֆորմներ և պաշտպանել հայերի ապահովությունը քրդերից ու չերքեզներից»։

Երբ այս հոդվածը ներկայացվում է թուրքական պատվիրակության ղեկավար Սաֆվետ փաշային, նա տեղից վեր է թռչում և գազազած աղմկում. «Դուք մեզ համարյա զրկել եք եվրոպական մարզերից. գոնե մեզ հանգիստ թողեք Ասիայում»։ Թուրքական պատվիրակները ոչ մի կերպ չէին ցանկանում ընդունել 16-րդ հոդվածը, բայց այդ նրանց չի հաջողվում։

Սան-Ստեֆանոյի պայմանագրի 25-րդ հոդվածի համաձայն ռուսական զորքերը գրավված վայրերից պետք է դուրս բերվեին 6 ամսվա ընթացքում, մինչև որ Բարձրագույն Դուռը կիրագործեր 16-րդ հոդվածով ստանձնած պարտավորությունները։ 27-րդ հոդվածը պարտավորեցնում էր թուրքական կառավարությանը չհետապնդել այն հպատակներին, որոնք պատերազմի ժամանակ օգնել էին ռուսական զորքերին, և արգելք չհանդիսանալ երկրից գաղթողների համար։

Հայերը գոհ չմնացին Սան-Ստեֆանոյի պայմանագրից. նրանք ցանկանում էին բալկանյան երկրների նման ինքնավարություն ձեռք բերել, բայց այդ չհաջողվեց։ Նրանք շտապում են իրենց դժգոհությունը հայտնել Իգնատևին. նա պատասխանում է, որ ավելին հնարավոր չէր անել։ «Հայերը,— ասում է Իգնատևը,— մեզանից չպետք է պահանջեն ավելին, քան այն, որ այժմ իրականում մենք կարող ենք ձեռք բերել։ Համենայն դեպս, եթե մեզ հաջողվի Դռան հետ համաձայնության գալ պայմանագրում առաջարկված հոդվածի իմաստով, ապա Ռուսաստանի պաշտոնական հովանավորությունը նրանց (հայերի— Վ. Պ.) նկատմամբ կապահովվի և դա կլինի կարևոր քայլ նրանց ապագայի բարեկարգման ճանապարհին»։

Հաջողությամբ ավարտելով Սան-Ստեֆանոյի բանակցությունները, Իգնատևը կանցլերին և Կովկասի փոխարքային հեռագրում է, որ «երկարատև ու ծանր վիճաբանություններից հետո թուրքերը մեզ զիջեցին Կարսը, Բաթումը, Բայազետը, Արդահանը, Օլթին, Արդանուջը, Արդվինը, Ալաշկերտը, Կաղզվանը և Խամուրը»։

Ինչպես էլ որ գնահատելու լինենք ռուսական պատվիրակության ղեկավար Իգնատևի դերը Սան-Ստեֆանոյի բանակցությունների ժամանակ, այնուամենայնիվ, չենք կարող չնշել այն առաջին դրական քայլերը, որ նա կատարեց հայկական հարցի լուծման ուղղությամբ։ Եթե չլիներ Թուրքիայի և նրա թիկունքում կանգնած Անգլիայի կատաղի դիմադրությունը, անտարակույս, հայերն էլ, բուլղարների և մյուսների նման, կազատագրվեին օսմանյան բռնակալության լծից, անկախու-

թյուն ձեռք կբերեին կամ կմիանային Ռուսաստանին։ Ռուսաստանը հոժարությամբ չէ, որ վերադարձնում էր Արևմտյան Հայաստանում գրավված տերիտորիաները։

Սան-Ստեֆանոյի պայմանագրով հայկական հարցը ցանկալի լուծում չստացավ ոչ թե Ռուսաստանի, այլ Թուրքիայի և Անգլիայի հանցանքով։ Ուստի ճիշտ չեն պրոֆ. Լեոն, Բ. Բորյանը և մյուսները, որոնք մեղադրում են Ռուսաստանին, 16-րդ հոդվածը համարում «մեծագույն չարիք ու ոճիր»։

Իր ժամանակի պատմական պայմաններում, երբ արյունարբու սուլթան Աբդուլ Համիդը ձգտում էր նույնիսկ աշխարհագրական քարտեզից ջնջել Հայաստան անունը, իսկ Թուրքիայի մեծ վեզիր Քյամիլ փաշան ցինիկաբար հայտարարում էր, թե «պետք է ջարդել այն բոլոր ծնոտները, որոնք կարտասանեն Հայաստան բառը», 16-րդ հոդվածը հայերի համար նպաստավոր ու դրական երևույթ էր։

Սան-Ստեֆանոյի պայմանագրի 16-րդ հոդվածով առաջին անգամ հայկական հարցը մտնում էր միջազգային պայմանագրի մեջ, պարտավորեցվում էր Թուրքիայի կառավարությանը ռեֆորմներ անցկացնել Արևմտյան Հայաստանում, պաշտպանել հայերի կյանքն ու գույքը։ 16-րդ հոդվածի կատարման հսկողությունը դրվում էր Ռուսաստանի վրա, ռուսական զորքերը մնալու էին գրավված տերիտորիաներում մինչև ռեֆորմների գործադրությունը և այլն։ Այս ամենը քիչ թե շատ ռեալ երաշխիքներ էին, Ռուսաստանի շահերին համապատասխան, հայկական հարցի լուծման համար։

Նկատի ունենալով հայ ժողովրդի ազգային ընդհանուր շահերը, Ռուսաստանի և Թուրքիայի տիրապետության տակ գտնվող հատվածների վերամիավորման ու միացյալ Հայաստանի վերականգնման հեռանկարները, Ռուսաստանի տիրապետության տակ հայ ժողովրդի համախմբման պատմական առաջադիմական նշանակությունը, կարելի է ասել, որ 16-րդ հոդվածը՝ հայկական հարցի լուծման ռուսական ծրագիրը, հայերի համար ավելի ռեալ ու նախընտրելի էր։

Հայկական հարցի սկզբնավորման տվյալ էտապում հայ ժողովրդի և Ռուսաստանի շահերը համընկնում էին ավելի, քան Թուրքիայի կամ արևմտաեվրոպական որևէ այլ տերության շահերը։ Ուստի ճիշտ էին վարվում այն բոլոր հայերը, որոնք կողմնորոշվում էին դեպի Ռուսաստանը, իրենց բախտը կապում Ռուսաստանի հաղթանակի հետ։

Հայկական հարցը Բեռլինի կոնգրեսում

Ռուս-թուրքական պատերազմում Ռուսաստանի տարած հաղթանակը և Սան-Ստեֆանոյի պայմանագիրը մեծ իրարանցում առաջ բերին Անգլիայի ու Ավստրիայի կառավարող շրջաններում։ Նրանք վճռական քայլերի դիմեցին Ռուսաստանին զրկելու իր հաղթանակի պտուղներից։ Անգլիան և Ավստրիան միացյալ ուժերով պահանջեցին միջազգային կոնգրես հրավիրել և վերանայել Սան-Ստեֆանոյի պայմանագիրը։ Ֆրանսիան անցավ նրանց կողմը։ Գերմանիայի կանցլեր Բիսմարկը չնայած հայտարարել էր, որ ինքը արևելյան հարցում «աղնիվ մակլեր» կլինի, բայց երկդիմի դեր էր կատարում, աշխատում էր սրել անգլո-ռուսական հակամարտությունները։

Միջազգային այդպիսի աննպաստ պայմաններում Ռուսաստանը հարկադրված եղավ ընդունել Անգլիայի ու Ավստրիայի պահանջները։ 1878 թ. մարտի 18-ին եղբորը գրած նամակում Ալեքսանդր II-ը ասում է. «Անգլիան միայն առիթ է փնտրում, որպեսզի մեզ պատերազմ հայտարարի»։ Հաշվի առնելով Ղրիմի պատերազմի դառն փորձն ու դասերը, ցարական կառավարությունը խուսափեց պատերազմից և դիվանագիտական պայքարի մեջ մտավ իր հակառակորդների հետ։

Մինչև կոնգրես հրավիրելը, 1878 թ. մայիսի 30-ին, Լոնդոնում գաղտնի համաձայնագիր է կնքվում Անգլիայի և Ռուսաստանի միջև, որտեղ նախնական համաձայնության են գալիս վիճելի հարցերի շուրջը։ Այդ համաձայնագրով Կարսը և Բաթումը պետք է մնային Ռուսաստանին, իսկ Բայազետը և Ալաշկերտը վերադարձվեցին Թուրքիային։

Այդ նույն շրջանում Անգլիան գաղտնի բանակցություններ էր վարում նաև Թուրքիայի հետ, խոստանում էր «զենքի ուժով» Ռուսաստանից վերցնել Կարսը, Բաթումը, Արդահանը և Բայազետը։ Դրա համար որպես ռազմական բազա պահանջում էր Կիպրոսը, պայմանով, որ պատերազմ չլինելու դեպքում կվերադարձնի, բայց խաբում է և չի վերադարձնում։

1878 թ. հունիսի 4-ին կնքվում է անգլո-թուրքական գաղտնի պայմանագիր, որն ուղղված էր Ռուսաստանի դեմ, և փաստորեն չեղյալ էր հայտարարվում Սան-Ստեֆանոյի պայմանագիրը։ Օկուպացնելով Կիպրոսը, Անգլիան ձգտում էր ամրապնդել իր ռազմական դիրքերը Միջերկրական ծովում, նեղուցների վրա, Թուրքիայում և ամբողջ Մերձավոր արևելքում։ Մայիսի 30-ին Լոնդոնում կնքված պայմանագրով Անգլիան համաձայնվում էր Կարսը, Արդահանը, Բաթումը թողնել Ռուսաստանին, իսկ հունիսի 4-ի Կիպրոսի պայմանագրով պարտավորվում էր դրանք վերադարձնել Թուրքիային, պաշտպանել նրա տերիտորիալ ամբողջականությունը, նրա շահերը կոնգրեսում։

Ցանկանալով առհասարակ Ռուսաստանին դուրս մղել Արևելքից, միջազգային պայմանագրից վերացնել 16-րդ հոդվածը, հայերին զրկել Ռուսաստանի հովանավորությունից ու պաշտպանությունից, Անգլիան Կիպրոսի պայմանագրով համաձայնության է գալիս Թուրքիայի հետ՝ ռեֆորմներ անցկացնել քրիստոնյա հպատակների դրությունը բարելավելու նպատակով։ Պայմանագրի այդ կետը առերևույթ կարծես հայերի

օգտին էր, բայց իրականում մեծ վնաս հասցրեց նրանց։ Դրանով Անգլիան աշխատում էր արևմտահայերին գցել իր ազդեցության տակ, նրանց հանել Ռուսաստանի դեմ, սեպ խրել, ինչպես այդ անում էին Թուրքական ուժերները, հայ ժողովրդի արևմտահայ ու արևելահայ հատվածների միջև։ Ճիշտ է նկատել Բաֆֆին՝ «Հայերի վիճակը շատ չէր հետաքրքրում անգլիացիներին։ Նրանց մի ուրիշ բան էր հարկավոր։ Նրանց հարկավոր էր մի զորավոր պատնեշ, որ կանգնեցնեին ռուսների առաջ»։

Անգլիայի պահպանողական կառավարության նենգ ու խարդախ դիվանագիտությունն իր ամբողջ էությամբ դրսևորվեց Կիպրոսի պայմանագրում։ Այդ պայմանագիրը միջազգային դիվանագիտության պատմությանը հայտնի կեղծ ու խարդախ պայմանագրերից մեկն է. դա մեծ վնասներ պատճառեց հայ, թուրք և հույն ժողովուրդներին։

Հայերը, ինչպես և բալկանյան ժողովուրդները, դժգոհությամբ ընդունեցին Սան-Ստեֆանոյի պայմանագրի վերանայման լուրը։ Նրանք գիտեին, որ դա ուղղված է ոչ միայն Ռուսաստանի, այլև իրենց դեմ։ Տեսնելով, որ հայկական հարցի լուծումը այլևս միայն Ռուսաստանից չի կախված, հայերը որոշեցին պատվիրակություն ուղարկել Բեռլին և իրենց դիմումները ներկայացնել միջազգային կոնգրեսին։

Հայկական պատվիրակության ղեկավար նշանակվեց ժամանակի աչքի ընկնող հոգևորականներից ու հայրենանվեր գործիչներից մեկը՝ Մկրտիչ Խրիմյանը։ Պատվիրակության անդամներն էին՝ Խորեն եպիսկոպոս Նարբեյը, Մինաս Չերազը և Ստեփան Փափազյանը։

1878 թ. մարտի 8 (20)-ին Մ. Խրիմյանը և նրա քարտուղար Մ. Չերազը մեկնում են Եվրոպա, իրենց հետ տանելով օսմանյան (Արևմտյան) Հայաստանի ապագա ինքնավարության կազմակերպական ծրագիրը, Կ. Պոլսի պատրիարք Ներսես Վարժապետյանի հուշագիրը, որտեղ փաստերով հիմնավորվում էր Հայաստանի ինքնավարության անհրաժեշտությունը, վիճակագրական տվյալներ հայերի թվի մասին, Հայաստանի քարտեզը և այլն։

Պատվիրակության մյուս անդամ Խորեն Նարբեյը մեկնում է Պետերբուրգ, տեսակցում Գորչակովի և Իգնատևի հետ, Ալեքսանդր II-ին ներկայացնում Ն. Վարժապետյանի դիմումը և Հայաստանի ինքնավարության ծրագիրը։ Կոնգրեսի նախօրեին պատվիրակները պետք է միանային Բեռլինում։

Հայկական պատվիրակության ղեկավար Մ. Խրիմյանը, ինչպես իրավացի նկատել է մեր անվանի պատմաբան Լեոն, «ժողովրդական մարդու դյուրահավատություն, բանաստեղծի երազուն հակումներ» ունեցող մարդ էր, չգիտեր եվրոպական ոչ մի լեզու։ Եվ երբ նրան հարցնում են, թե Եվրոպայում ինչ լեզվով պետք է խոսի և պաշտպանի

հայ դատը, նա պատասխանում է. «Պիտի խոսեմ լեզու մը, որ համաշխարհային է և տառապանքի լեզուն է միևնույն ժամանակ, այսինքն պիտի լամ»։

Մեկնելով Եվրոպա, Խրիմյանը և Չերազը նախ գնում են Հռոմ, մարտի 15(27)-ին հանդիպում արտաքին գործերի մինիստր Կորտիի հետ, որը խոստանում է պաշտպանել հայերի պահանջը։ Մարտի 19 (31)-ին նրանք հասնում են Փարիզ։ Ապրիլի 5-ին սկսում են պաշտոնական տեսակցությունները։ Արտաքին գործերի մինիստր Վադինկտոնը, ծանոթանալով հայ պատվիրակների ներկայացրած փաստաթղթերին, հարցուփորձ անելով, վերջում ասում է. «Կարող եք ապահով լինել, որ Ֆրանսիան անտարբեր չէ Հայաստանի վիճակին։ Ես անձամբ համակրում եմ ձեր դատին... ես տրամադիր եմ ձեր դատը պաշտպանել կոնգրեսում, որ ոչ ոք ինձանից լավ չի ճանաչում ձեր ազգն ու ձեր երկիրը»։

Փարիզում Խրիմյանն ու Չերազը տեսակցություն են ունենում գերմանական և անգլիական դեսպանների հետ, որոնք հայերի պահանջներն իրավացի են համարում։ Անգլիական դեսպանն ասում է. «Ապահով եմ, որ Լոնդոնում լավ ընդունելություն կգտնեք, եթե չափավոր լեզու գործածեք»։

Ապրիլի 11-ի երեկոյան պատվիրակները հասնում են Լոնդոն։ Այստեղ մոտ երկու ամիս նրանք եռանդուն գործունեություն են ծավալում Մանչեստրի և Լոնդոնի հայ գաղութի օգնությամբ, մի շարք տեսակցություններ ունենում պետական և հասարակական գործիչների հետ։ Քենտրբերիի արքեպիսկոպոսի հետ հանդիպման ժամանակ արտասանած իր ճառում Խրիմյանն ասում է. «Կհավատամք նաև, որ նախախնամության կողմեն պատրաստված հայոց հինգդարյան գերության շղթան արձակող ձեռքը Մեծին Բրիտանիո համատարած պետության հզոր և աղատասեր ձեռքն է, որ ստրկացած ազգերուն ազատություն կը բաշխե։ Ահավասիկ այդ պաշտպանող ձեռքեն հայոց ազգը ևս իր արդար բաժինը կխնդրե»։

Խրիմյանը, Վարժապետյանը և ուրիշներ միամտաբար կարծում էին, թե Բեռլինի կոնգրեսում Անգլիան պետք է հանդես գա հայկական դատի պաշտպանությամբ։ «Անգլիան որ ուզե՝ Հայաստանը փրկված է»,— ասում էր Վարժապետյանը։ «Մեր քաղաքականությունն է Ռուսիո երախտագետ ըլլալով՝ հուսալ Անգղիա և Անգղիո շնորհիվ ապահովել մեր բարոյական և նյութական բարեկեցությունը»։

Լոնդոնում Խրիմյանը տեսակցություն է ունենում նաև Գլադստոնի հետ։ Անգլիայի հայտնի քաղաքական գործիչը դժվարանում է հայկական դատի մասին իր խոսքն ասել, պատճառաբանելով, թե իշխանությունից հեռացել է և այլևս մեծ ազդեցություն չունի։

Հայ պատվիրակները երկար ժամանակ սպասում էին Անգլիայի վարչապետ լորդ Բիկոնսֆիլդի և արտաքին գործերի մինիստր լորդ Սոլսբերիի ընդունելությանը: Վերջապես մայիսի 10-ին Սոլսբերին ընդունում է Խրիմյանին ու Չերազին, լսում նրանց խնդիրը, իր «անկեղծ» համակրանքը հայտնում, բայց, ինչպես ինքն է գրում Կ. Պոլսի դեսպան Լեյերդին, հարկ չի համարում «կոնգրեսի կողմից գործադրելի մասնավոր միջոցների նկատմամբ խոստումներ տալ»: Սոլսբերին, ինչպես և Բիկոնսֆիլդը, դեմ էին Հայաստանի ինքնավարությանը, պաշտպանում էին Թուրքիային և նրան օգտագործում Ռուսաստանի դեմ: Նրանք մերժում են Հայաստանի ինքնավարության պահանջը՝ պատրվակ բռնելով, թե Թուրքիայի տիրապետության տակ գտնվող հայերը խառն են մահմեդականների հետ, ուստի դա հնարավոր չէ և անգամ չէին քաշվում ցինիկաբար ասել, թե հայերն ընդունակ չեն ինքնավարության:

Լոնդոնում հայ պատվիրակները լսում են ոչ միայն շատ կեղծավոր, այլև անկեղծ ու զգաստացնող խոսքեր: Պառլամենտի ազատամիտ անդամներից մեկը՝ Ֆորստերը, Խրիմյանին ասում է. «Մի վշտացնեք Ռուսաստանին, որ ձեր դրացին է. մի դառնամ այստեղ գործիք ոչ պանսլավական կուսակցության և ոչ էլ մեր, ազատամիտների ձեռքը: Անգլիայի օգնության վրա հույս չի կարելի դնել»:

Հայ պատվիրակները, դժգոհ անգլիական կառավարության վերաբերմունքից, թողնում են Լոնդոնը, գալիս Փարիզ, ապա՝ Բեռլին, որտեղ միանում են Խ. Նարբեյի և Ստ. Փափազյանի հետ:

Բեռլինի կոնգրեսն սկսվում է 1878 թ. հունիսի 1(13)-ին և տևում մեկ ամիս: Կոնգրեսին տոն տվողը անգլիական պատվիրակությունն էր, որը Բիկոնսֆիլդի գլխավորությամբ գործում էր շատ ագրեսիվ և սպառնալից ոգով: Բեռլինի կոնգրեսը վերանայեց ու վերափոխեց Սան-Ստեֆանոյի պայմանագիրը, Ռուսաստանին զրկեց իր հաղթանակի պտուղներից:

Բեռլինի կոնգրեսը քննության առավ նաև հայկական հարցը: Հայ պատվիրակները, կոնգրեսի նախագահ Բիսմարկին ներկայացնելով իրենց դիմումը, Կ. Պոլսի հայոց Ազգային ժողովի և պատրիարքի անունից խնդրում են Սան-Ստեֆանոյի 16-րդ հոդվածի հիման վրա քննության առնել Հայաստանում վարչական բարենորոգումներ մտցնելու հարցը: Դիմումին կից ներկայացնում են վարչական ռեֆորմների ծրագիր, վիճակագրական տվյալներ Արևմտյան Հայաստանի հայ բնակչության թվի վերաբերյալ և այլն:

Բացի այդ, կոնգրեսին դիմում և իր առանձին ծրագիրն է ներկայացնում նաև եգիպտահայ հայտնի գործիչ Նուբար փաշան, որը, սակայն, քննության չի դրվում: Բիսմարկը համաձայնվում է կոնգրեսի

օրակարգի մեջ մտցնել հայկական հարցի քննարկումը, բայց երբ հայ պատվիրակները ցանկանում են տեսակցություն ունենալ նրա հետ և անհրաժեշտ բացատրություններ տալ, իր խորհրդականի միջոցով հայտնում է, որ ժամանակ չունի:

Ինչպես Սան-Ստեֆանոյում, այնպես էլ Բեռլինում հայկական հարցի դեմ կատաղի կերպով հանդես են գալիս թուրքական ներկայացուցիչները: Անգլիական պատվիրակության օգնությամբ նրանք ամեն կերպ աշխատում են թույլ չտալ, որ հայկական հարցը կոնգրեսում քննվի: Նրանք հայ պատվիրակներին կանչում են թուրքական դեսպանատուն, առաջարկում դադարեցնել իրենց գործունեությունը, վերադառնալ Կ. Պոլիս, խոստանալով տեղում լուծել նրանց խնդիրը: Թուրքական կեղծ խոստումներին լավատեղյակ Խրիմյանը մերժում է նրանց առաջարկը:

Թուրքական պատվիրակության ղեկավար Կարաթեոդորի փաշան փորձում է սուլթանի միջոցով հարկադրել Ն. Վարժապետյանին, որ նա ետ կանչի հայ պատվիրակներին: Բայց Վարժապետյանը չի կատարում սուլթանի պահանջը, պատասխանելով, որ Ազգային ժողովն է ուղարկել և միայն նա կարող է ետ կանչել: Թուրքական կառավարության և պատվիրակության բոլոր դավերը՝ հայկական հարցը Բեռլինում տապալելու ուղղությամբ ապարդյուն են անցնում: Ռուսաստանի և Ֆրանսիայի ներկայացուցիչների օգնությամբ այդ հարցը դրվում է քննարկման:

Հուլիսի 4-ին, կոնգրեսի 12-րդ նիստում, քննվում է հայկական հարցը: Սոլսբերին առաջարկում է 16-րդ հոդվածից պահել միայն ռեֆորմներին վերաբերող վերջին տողերը: Շուվալովն առարկում է. հարցը հետաձգվում է: Ռուսական և անգլիական ներկայացուցիչներն այդ հարցը քննարկում են առանձին: Անգլիացիք, հակառակ Լոնդոնի կոնվենցիայի, պահանջում են Կարսը, Արդահանը, Բաթումը և մյուս գրաված շրջանները վերադարձնել Թուրքիային: Ռուսները կտրականապես մերժում են: Երկար վիճաբանություններից հետո, փոխադարձ զիջումներով, համաձայնվում են վերադարձնել միայն Բայազետն ու Ալաշկերտը, իսկ 16-րդ հոդվածի շուրջը համաձայնության չեն գալիս:

Բոլորովին հաշվի չառնելով Հայաստանի ինքնավարության պահանջը, Անգլիայի ներկայացուցիչները, նախապես համաձայնության գալով թուրքական պատվիրակության հետ, խմբագրում և կոնգրեսին առաջարկում են «հայկական մարզերում» ռեֆորմներ անցկացնելու վերաբերյալ անորոշ մի հոդված: Նորից վիճաբանություններ են ծագում, հարցը նորից հետաձգվում է:

Այդ ժամանակ հայտնի է դառնում Կիպրոսի անգլո-թուրքական

դաղտնի պայմանագիրը, որն արդեն իսկ կանխորոշել էր հայկական հարցի ձախողումը Բեռլինի կոնգրեսում: Կիպրոսի պայմանագիրը ճընշող տպավորություն է թողնում կոնգրեսի մասնակիցների վրա: Հայ պատվիրակները դռնեդուռ ընկած բողոքում են, աղերսում, բայց ոչ ոք նրանց չի լսում: Ուզում են անձամբ տեսնել Բիսմարկին և Սոլսբերիին, երկուսն էլ մերժում են: Ֆրանսիական պատվիրակության նախագահ Վադինկտոնն ասում է. «Թեպետ ես պաշտպանում եմ ձեր դատը, բայց չեմ կարող իմ ընկերներին ստիպել, որ նրանք անպատճառ ընդունեն իմ առաջարկները»:

Ռուսաստանի ներկայացուցիչ Շուվալովը կանչում է հայ պատվիրակներին և նրանց հայտնում դառն ճշմարտությունը՝ «կոնգրեսը ժամանակ չունի զբաղվելու Ձեր հարցով, իշխան Բիսմարկն ուղում է վերջ տալ կոնգրեսի պարապմունքներին»:

Հուլիսի 8-ին, 15-րդ նիստում, հակառակ ռուսական պատվիրակության կամքին, կոնգրեսն ընդունում է անգլիական ներկայացուցչի առաջարկած հետևյալ հոդվածը.

«Բարձրագույն Դուռը պարտավորվում է, առանց ուշացնելու, հայաբնակ վայրերում գործադրել տեղական պահանջներից բխող բարեփոխություններ ու ռեֆորմներ և ապահովել հայերի անվտանգությունը չերքեզներից ու քրդերից: Այդ նպատակի համար ձեռք առած միջոցների մասին նա պետք է պարբերաբար հաղորդի պետություններին, որոնք պետք է հսկեն դրանց գործադրության վրա»:

Ռուսաստանի ներկայացուցիչներ Գորչակովը և Շուվալովը առարկում են, որ կոնգրեսը երաշխավորություն հաստատի այդ հոդվածի գործադրության համար: Կարաթեոդորի փաշան հանդես է գալիս նրանց դեմ: Սոլսբերիին պաշտպանում է նրան: Բիսմարկը քվեարկում է. ռուսական առաջարկը չի ընդունվում: Եվ այդպես, Բեռլինի կոնգրեսի դիվանագիտական գզվռտոցում ծնվում է շարաբաստիկ 61-րդ հոդվածը:

Հայ պատվիրակները, որոնց թույլ չտվեցին մասնակցել իրենց դիմումի քննարկմանը և նույնիսկ կոնգրեսի շենքը մտնել, նորից դռնեդուռ ընկած խնդրում էին 61-րդ հոդվածի «հայաբնակ վայրերի» փոխարեն գոնե մտցնել «Հայաստան» բառը, բայց ոչ ոք ուշադրության չառավ նրանց այդ խնդիրը: Կոնգրեսի վերջին նիստերի ժամանակ առհասարակ բոլորն էլ խուսափում էին հայ պատվիրակներից:

Նկարագրելով այդ օրերի իրենց ծանր վիճակը, Ստ. Փափազյանն իր հուշերում գրում է. «Ես ու Ձերազ երկու երեք անգամներ մտախոհ և հուզված սկսանք պտտիլ Քոնկրեսին տան առաջ, խնդրեցինք աստուծմե, որ ողորմի բյուրավոր անմեղ զոհերու արյունին և միլիոնավոր հայերու աղաղակին ու ապա աչքներիս արցունքով լի տուն դարձանք»:

Հայ պատվիրակներին այլևս ոչինչ չէր մնում անելու Բեռլինում: 1878 թ. հուլիսի 13-ին նրանք բողոք են ներկայացնում կոնգրեսի նախագահ Բիսմարկին, որտեղ ասված է. «Հայ պատվիրակությունն իր ցավն է հայտնում, որ իր օրինավոր և միանգամայն չափավոր պահանջները կոնգրեսի կողմից չընդունվեցին... Մենք կարծեցինք, թե այսպիսի մի ազգ, որևէ քաղաքական փառասիրություն չունենալով, իրավունք կստանա իր սեփական կյանքով ապրելու և հայկական հողի վրա հայ պաշտոնյաների ձեռքով կառավարվելու: Հայերը հասկացան, թե խաբվել են, թե նրանց իրավունքները չի ճանաչվել...

Հայ պատվիրակությունը պիտի ետ դառնա Արևելք, իր հետ տանելով այդ դասը: Բայց նա, այնուամենայնիվ, հայտնում է, թե հայ ժողովուրդը երբեք պիտի չդադարի աղաղակ հանելու, մինչև որ Եվրոպան իր պահանջներին արդար գոհացում չտա»:

Դառն էր խոստովանությունը, բայց արդեն ուշ էր: Եվրոպայից հուսախաբված ու հիասթափված, հայ պատվիրակները տուն վերադարձան: Արևմտահայությունը, ամբողջ հայ ժողովուրդը հուզմունքի ու ծանր ապրումների մեջ էր: Մեր պատմության այդ ծանր ու դժվարին պահին, ընդհանուր հուսահատության մեջ լսվեցին հուսատու ձայներ, գործելու, պայքարելու կոչեր:

Խոսելով Բեռլինի կոնգրեսի մասին, Խրիմյանն ասում է. «Գնացի Եվրոպա ձեզ ազատություն բերելու և ի՞նչ տեսա այնտեղ. Բեռլինում դրված էր մի մեծ պղինձ, մեջը լիքը հարիսա: Գալիս էին զանազան ազգերի պատվիրակներ երկաթե շերեփներով և հարիսայից վերցնում ու գնում... բուլղարը, սերբը, զարադաղցին ամենն ալ առին իրենց մասերը: Կարգը գալով մեզ հայոցս, ես ալ ձեռքիս աղերսաթուղթը ցուցնելով աղաչեցի, որ ամենս ալ լնուն հարիսա: Յայնժամ կաթսայի գլուխն սպասող մեծավորները ինձ հարցուցին, թե ո՞ւր է քո շերեփը: Հիրավի հոս հարիսա կբաժնվի, բայց շերեփ չունեցողն չի կարող անոր մոտենալ: Զայս իմացիր, որ եթե մոտ ատենեն այս հարիսան կրկին բաժնվի, յայնժամ առանց շերեփի չգաս, զի կրկին պարապ ետ կդառնաս:

Յայնժամ դարձրի իմ երես և իբր թե կփնտրեի իմ զեյթունցի, սասունցի և մշեցի քաջերս. ո՞ւր էին, պետք չէ՞ր, որ անոնցմե՛ մեկ երկու հոգի ալ իմ քովս գտնվեին և նոցա արյունոտ թուրերը եվրոպացոց աչքը խոթելով բարձրաձայն աղաղակեի, թե տեսեք, ահա հոս է շերեփը: Բայց չկար... Մի աղերսաթուղթ ունեի ձեռքիս, ան ալ թրջվեց ու հարիսին մեջ մնաց. ուստի և եկած եմ այսպես դատարկաձեռն. շերեփների մասին մտածեցեք»:

Մի այլ տեղ Խրիմյանն ասում է. «Կոնգրեսի դռան վրա գրված էր՝ իրավունքը ուժովինն է, քաղաքագիտությունը գթություն չունի, իրա-

վունքն ալ սուրի ծայրին է։ Հայաստանցինե՛ր, սիրեցե՛ք երկաթը, ձեր փրկությունը երկաթով կլինի»։

Բեռլինի կոնգրեսը ալեկոծեց հայ ժողովրդի սիրտն ու միտքը, շրջադարձային կետ հանդիսացավ հայկական հարցի պատմության մեջ։ Հայ հասարակական գործիչներից շատերը, որոնք անհեռատես և անհետևողական գտնվելով, Սան-Ստեֆանոյից ավելի մեծ հույսեր էին կապում Բեռլինի կոնգրեսի հետ, սկսեցին վերանայել իրենց դիրքերը։ Գր. Արծրունին և նրա համախոհները «Մշակ»-ում, Ծերենցն ու Գ. Սրվանձտյանը «Փորձ»-ում, Բաֆֆին, Ռ. Պատկանյանը և ուրիշներ գեղարվեստական գրականության մեջ սկսեցին խարազանել «ապերախտ» Եվրոպային։

«Հայաստանի մեջ է բուն հայկական խնդիրը, մենք Պեռլինի մեջ կորոնենք զայն»,— գրում էր արևմտահայ կյանքին լավատեղյակ, ջերմ հայրենասեր Գ. Սրվանձտյանը։ «Մեզ՝ վրա պետք է հույս դնենք և ոչ թե Բեռլինի». «Այն ազգը, ոչ ինքն իր վրա հույս չունի, նա ապագա չունի»,— ազդարարում էր Գր. Արծրունին։

Բեռլինի կոնգրեսը հայկական հարցը դարձրեց մեծ պետությունների շահերի հետ կապված մի հարց, նրա լուծումն անհամեմատ ռեալ ճանապարհից շեղեց ու դրեց միանգամայն աննպաստ, վերջին հաշվով կորստաբեր ճանապարհի վրա։ Արևելահայերի ու արևմտահայերի վերամիավորման փորձերը տապալվեցին։ Արևմտահայերին չհաջողվեց ինքնուրույնություն ձեռք բերել կամ միանալ Ռուսաստանին և կանգնել զարգացման համեմատաբար առաջադիմական այն ուղու վրա, որով ընթանում էին արևելահայերը։ Իր ժամանակին դա ամենածանր հարվածն էր, որ հայ ժողովուրդն ստանում էր գլխավորապես անգլիական իմպերիալիստներից։

Օսմանյան բռնակալության լծից Արևմտյան Հայաստանի ազատագրության հարցը Սան-Ստեֆանոյի և Բեռլինի պայմանագրերով միջազգային դիվանագիտության մեջ մտավ որպես «Հայկական հարց»։ Մեծ տերությունների միջև եղած հակասությունների հետագա սրման հետևանքով այդ հարցը գնալով ավելի խճճվեց և նորանոր դժբախտություններ ու աղետներ բերեց հայ ժողովրդին։

Համաշխարհային պատմության մեջ հայկական հարցը ցայտուն մի օրինակ է, թե գաղութարար պետությունները ինչպիսի ոճրագործ խաղեր են խաղում փոքր ժողովուրդների բախտի հետ։

XII ԳԼՈՒԽ

ՀԱՅ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԸ XIX ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՆ

1. ԱԶԳԱՅԻՆ-ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ ՎԵՐԵԼՔԸ. ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ԽՄԲԱԿՆԵՐԻ ԱՌԱՋԱՑՈՒՄԸ

Հայ ժողովրդի տընտեսական և քաղաքական ծանր դրությունը

XIX դարի երկրորդ կեսին հայ ժողովրդի տնտեսական և քաղաքական դրությունը գնալով ավելի վատացավ։ 1877—1878 թթ. ռուս-թուրքական պատերազմը, Սան-Ստեֆանոյի և Բեռլինի պայմանագրերը շարդարացրին հայերի հույսերը. Արևմտյան Հայաստանը մնաց օսմանյան Թուրքիայի լծի տակ։ Արևմտահայերի դրությունն ավելի ծանրացավ։

Հայաստանի երկփեղկված, բաժան-բաժան վիճակը մեծագույն շարիք էր հայ ժողովրդի սոցիալ-տնտեսական և ազգային-քաղաքական կյանքի զարգացման համար։ Հայ ժողովուրդը, Ֆ. Էնգելսի խոսքերով արտահայտված, դժբախտություն ուներ գտնվելու սուլթանական բռնակալության Սցիլլայի և ցարական բռնակալության Խարիբդայի արանքում։

Աշխարհի շուրջ հինգ միլիոն հայերից մոտ երեք միլիոնը գտնվում էր Թուրքիայի տիրապետության տակ, մոտ մեկուկես միլիոնը՝ Ռուսաստանի, մնացածը՝ Ասիայի, Եվրոպայի ու Ամերիկայի մեծ ու փոքր հայկական գաղթօջախներում։ Պետական իշխանությունից և քաղաքական իրավունքներից զրկված, տարբեր պետությունների տիրապետության տակ, տնտեսական, քաղաքական, կուլտուրական տարբեր պայմաններում հայերը բառի բուն իմաստով մահառում էին իրենց ֆիզիկական գոյության պահպանման, իրենց ազատության ու անկախության համար։

Հայ ժողովուրդն աշխարհի ամենաճնշված ժողովուրդներից մեկն էր։ Նրա դրությունն առանձնապես ծանր էր օսմանյան բռնակալության լծի տակ, որն ամենից վայրագն ու բարբարոսականն էր ամբողջ աշխարհում։ Հայերն օսմանյան Թուրքիայում ենթարկվում էին ազգային և սոցիալական դաժան ճնշման ու շահագործման, ազգային-կրոնական հալածանքի, ֆիզիկական բնաջնջման ու ասիմիլյացիայի։

Կ. Պոլսի Ազգային ժողովին և պատրիարքին 1868 թվականին գրած մի դիմումի մեջ Տարոնի հայ բնակիչներն ասում են. «Մեր Մշո դըժբախտ երկիր ցարդ ոչ Թանզիմաթի և ոչ ալ Թուշքյուլաթի օգուտներ

վայելեց և դեռ առաջին բարբարոսության պես զմեզ անխնա կնեղեն, կշարշարեն և կհարստահարեն»։

Մի ուրիշ դիմումի մեջ Տարոնի հայերը գրում են. «Ազգին բնավ ապահովություն չկա... *Երկու տարի առաջ Մատնավանք կողոպտեցին ու վանահայր Պողոս վարդապետը սպանեցին... այս մեկ տարվան մեջ յոթ եկեղեցի իրարու հետև կողոպտեցին. հայեր մահու տագնապ կկրեն։*

Ազգն արդեն իր հուսահատութենեն երես դարձուցեր կփախչե Ռուսաստան, վասնզի անտանելի է խղճալյաց վիճակը, արդեն բավական տներ գնացին երկրեն և զրեթե առհասարակ ամենու գաղափարն երբալն է»։

1869 թվականի իր մի զեկուցագրում Էրզրումի անգլիական հյուպատոս Թեյլերն ասում է. «*Ամեն տեղ այս գավառներում հայերը դառն կերպով գանգատվում էին թուրք կառավարության դեմ և միևնույն ժամանակ անչափ գովում էին Ռուսաստանը, բացե ի բաց հայտնելով, թե որոշել էին այնտեղ գաղթել... Պետք է խոստովանել, որ հայերը դժգոհության համար լի ու լի պատճառներ ունեն, որոնք են՝ թուրք կառավարության իսկապես հոռի վարչական սիստեմը, հարկերի անհավասար բաշխումը, դրանց, ինչպես և տասանորդի չափազանց անկարգ հավաքումը, արդարության կատարյալ բացակայությունը, անընդհատ կատարվող զեղծումները»։*

1872 թվականին Շատախի հայ գյուղացիները բողոքում են տեղի քուրդ բեկերի դեմ, որոնք «գայլի պես հոշոտում», «տզրուկի պես ծծում» էին նրանց արյունը։ «*Շատախու գավառի հայերս 600 տունեն ավելի ենք, ամենքս ալ երկրագործ ու արհեստավոր մարդիկ,— ասված է նրանց հանրագրերից մեկում,— բայց գերիի պես ենք կարգ մը Քոչար և Գրավցի ըսված քրդերու ձեռքը»։*

Խոսելով արևմտահայերի ծանր դրության մասին «Մասիս» թերթը գրում է. «*Բոլոր Հայաստանի մեջ գյուղաբնակ ժողովրդյան վիճակը հույժ ողբալի է, մասնավորապես տնտեսական տեսակետով։ Երկրագործությունն ու անասնապահությունը աղետալի կերպով ետնյալ վիճակի մեջ են։ Սովյալք գյուղեր և քաղաքներ թողլով խմբովին դեպի Ռուսիո սահմանն կգաղթեն»։*

Արևմտահայ գյուղացիները շատ էին տուժում նաև հարկերի, հատկապես աշարի գանձման ժամանակ տեղի ունեցող կամայականություններից։ «*Աշարի մյուլթեզիմները (գանձողները — Վ. Պ.),— ասված է Գ. Սրվանձտյանին ուղղված մի նամակում,— ուզածի պես կկողոպտեն խեղճ ժողովուրդը*»։

Թուրք փաշաների ու քուրդ բեկերի հարստահարություններից պաշտպանվելու, իրենց «*հազարավոր ցավերին դարման խնդրելու*» *համար Տարոնի հայերը* «*բոչնոց երամի նման*» *թափվում էին Գ. Սրբ-*

վանձտյանի վրա։ Խրիմյանին ուղղած իր նամակներից մեկում նա գրում է. «Որ կողմը դառնամ գայլերու կճանդիպիմ. գիտե ասված, որ միտերս ճալեցան ակամա համբերելես, և ըղեղս ու կարողությունս մաշեցավ այստեղ»։

Արևմտահայերի իրավական և տնտեսական ծանր վիճակին լավատեղյակ, նրանց հոգսերի ու ցավերի արտահայտիչ հեղինակը երազում էր, թե՝ «Կգա՞ արդյոք մի օր, երբ հայ գյուղացին հանգիստ կերպով վայելե իր հալալ աշխատանքը և այս երկրում տիրե արդարություն ու խաղաղություն։ Կգա՞ արդյոք մի օր, երբ մեր այս ձորերում, ուր միայն ավազակների հրացանի տրաքոց է լսվում, լսվի երկաթուղու շոգեկառքի սուլոցը և մենք էլ ունենանք հեռագիր, փոստ, դպրոցներ, համալսարան»։

Խոսելով արևմտահայերի անտանելի վիճակի մասին, մեծ երգիծաբան Հակոբ Պարոնյանը գրում է. «*Շաբաթ չանցնիր, որ Հայաստանեն ցավալի լուրեր չառնվին, շաբաթ չանցնիր, որ հայ սիրտերն ցավոք և տրտմությամբ չլլնա։* Տանկաստանի մեջ բանտ, բանտին մեջ բանտ»։ *Մի այլ տեղ նա ասում է.* «*Հայաբնակ գյուղերն այնպես են կողոպտվել, որ գողանալու բան չի մնացել*»։

Անտարակույս, մխիթարական չէր նաև ցարիզմի տիրապետության տակ գտնվող արևելահայերի դրությունը։ Նրանք ազգային-գաղութային ճնշման էին ենթարկվում ցարական կառավարության կողմից, զրկված էին ազգային-քաղաքական իրավունքներից։ Բայց արևմտահայերի հետ համեմատած արևելահայերի դրությունը նախընտրելի էր։ Թուրքիայում տիրող հետամնաց ֆեոդալական կարգերը, արևելյան դեսպոտիզմը կապարի ծանրությամբ ճնշում էին արևմտահայերին, արգելակում նրանց տնտեսական, քաղաքական և կուլտուրական առաջընթացը։

Տարբեր էր արևելահայերի զարգացման ընթացքը։ Տնտեսական, քաղաքական և կուլտուրական սերտ կապեր հաստատելով Թուրքիայից շատ ավելի բարձր մակարդակի վրա կանգնած Ռուսաստանի հետ, արևելահայերը հիմնականում կանգնեցին զարգացման այն ուղու վրա, որով ընթանում էր ռուս ժողովուրդը։

Արևելահայերի ու արևմտահայերի սոցիալ-տնտեսական և հասարակական-քաղաքական կյանքի պայմաններն իրենց կնիքն էին դնում նրանց ազգային-ազատագրական պայքարի վրա։

XIX դարի երկրորդ կեսին հայ ազատագրական պայքարն իր սուր ծայրով ուղղված էր թուրքական բռնակալության դեմ, որը հայ ժողովրդի ամենագլխավոր և ոխերիմ թշնամին էր։ *Այդ պայքարի առաջին խոշոր արտահայտությունը 1862 թ. Զեյթունի ապստամբությունն էր։ Զեյթունի ապստամբությունը շրջադարձային կետ հանդիսացավ հայ ազատագրական շարժման մեջ։ Ազատագրական պայքարի կայծերը տա-*

բածվեցին Սասունում, Մուշում, Էրզրումում, Վանում, Զարսանջակում և այլ վայրերում։ Տարերային, անկազմակերպ ելույթներին հաջորդեցին մասսայական ու կազմակերպված շարժումները։ 1860—1870-ական թվականներին ազատագրական պայքարը մտավ իր զարգացման նոր շրջանը՝ հանդես եկան ազատագրական խմբակներ, իսկ այնուհետև՝ 1880—1890-ական թվականներին՝ քաղաքական կուսակցություններ։

Ազատագրական առաջին խմբակներն Արևելյան Հայաստանում

Մեզ հայտնի ազատագրական առաջին խմբակը հիմնվել է Ալեքսանդրապոլում 1869 թվականի ապրիլին։ Այդ խմբակը կոչվել է «Բարենպատակ ընկերություն». նրա հիմնադիրն ու ղեկավարը եղել է ուսուցիչ Աբսեն Կրիտյանը (1850—1910)։ Խմբակի աչքի ընկնող և ղեկավար գործիչներից էր Պետրոս Հայկազունին (1839—1927)։ Ա. Կրիտյանը և Պ. Հայկազունին իր ժամանակի կրթված մարդկանցից էին, Մ. Նալբանդյանի հայրենասիրական ու ազատասիրական գաղափարների ջերմ պաշտպաններն ու հետևորդները։

1874 թ. հունիսին Ղարաքիլիսայում (Կիրովական) հիմնվում է մի նոր խմբակ, որը կոչվում էր «Հայրենիքի սիրո գրասենյակ»։ Խմբակի հիմնադիրն էր «Բարենպատակ ընկերության» անդամ, Փամբակի հաշտարար ատյանի թարգման Համբարձում Բալասանյանցը (1840—1900)։ Դա փաստորեն Ալեքսանդրապոլի խմբակի մի ճյուղն էր, նրանք սերտորեն կապված էին միմյանց հետ։

1875 թվականի ապրիլին Երևանի ժանդարմական վարչությունը, ոմն մատնիչ վարդապետի տված տեղեկությունների համաձայն, խուզարկություններ ու մասսայական ձերբակալություններ է կատարում Ղարաքիլիսայում և Ալեքսանդրապոլում, հայտնաբերում ու ջախջախում է ազատագրական այդ խմբակները։

Ժանդարմական վարչության տվյալներով «Բարենպատակ ընկերությունն» ունեցել է 43 անդամ։ Անհավանական չէ, որ ընկերության անդամների թիվն ավելին եղած լինի, որոնց չեն կարողացել հայտնաբերել ցարական ոստիկանները։ Ինչպես Ալեքսանդրապոլի, այնպես էլ Ղարաքիլիսայի խմբակներն ունեցել են սոցիալական խայտաբղետ կազմ։ Նրանց մեջ մտել են ուսուցիչներ, աշակերտներ, ծառայողներ, արհեստավորներ, մանր առևտրով ու երկրագործությամբ զբաղվողներ։ Քաղաքական-գաղափարական առումով էլ այս խմբակների անդամների մեջ միասնություն չկար. նրանց մեջ կային չափավոր և արմատական տարրեր։

1875 թ. հունիսի 5-ին Թագավորին ներկայացված ժանդարմական վարչության զեկուցագրում ասված է. «Երևանի նահանգի Ալեքսանդրապոլի գավառի Ղարաքիլիսա գյուղում հայտնաբերված է «Հայրենիքի սիրո գրասենյակ» անունով գաղտնի ընկերություն։ Այդ ընկերությունը

հիմնել են հայերը, նպատակ ունենալով իրենց հավատակիցների մեջ բարձրացնել հայրենասիրական ոգին և ձեռք բերել անկախություն...

Ալեքսանդրապոլում գոյություն ունի մի այլ գաղտնի ընկերություն՝ «Բարենպատակ ընկերություն» անունով, որի հիմնադիր հայ Աբսեն Կրիտյանցի մոտ հայտնաբերվել են հայերին ուղղված կոչեր, որոնք հրավիրում են վերհիշել իրենց նախորդների քաջարի ոգին և իրենց արյունով ազատել Հայաստանը»։

Ա. Կրիտյանը և նրա ընկերներից շատերը բանտարկվում ու դատի են տրվում գաղտնի խմբակներ կազմակերպելու, հակակառավարական կոչեր գրելու և տարածելու համար։ Դա առաջին քաղաքական դատավարությունն էր Հայաստանում։ Ա. Կրիտյանի դեմ սկսված դատական գործը հասնում է Կովկասի փոխարքային և Թագավորին։ Տխրահռչակ ժանդարմական երրորդ բաժանմունքը պահանջում է՝ «որպես տեղում չափազանց վնասակար անձնավորություն» Ա. Կրիտյանին, բանտից ազատվելուց հետո, ցմահ ոստիկանական հսկողության տակ պահել։

Ցարական կառավարության այսօրինակ հալածանքներն ու հետապնդումները պատահական չէին։ Դաժան դատաստան տեսնելով հայ մեծ հեղափոխական-դեմոկրատ Մ. Նալբանդյանի հետ, ցարական կառավարությունը կրնկակոխ հետևում ու հետապնդում էր ազատության մեծ մարտիկի բոլոր համակիրներին ու հետևորդներին։

Ա. Կրիտյանը, Պ. Հայկազունին և մյուսները ժողովրդի, հատկապես սովորող երիտասարդության մեջ տարածում էին Մ. Նալբանդյանի նկարը, նրա ազատասիրական, հայրենասիրական բանաստեղծությունները։ Նրանք մեծ դժվարություններով իրենց համակիր Հ. Եսայանի միջոցով Կ. Պոլսից բերել էին Մ. Նալբանդյանի «Երկրագործությունը որպես ուղիղ ճանապարհ» նշանավոր աշխատությունը և գաղտնի կարդում ու տարածում էին այն։ Ցարական ոստիկանությունը «Երկրագործությունը» հայտնաբերում է Ա. Կրիտյանի տանը, խուզարկության ժամանակ։ Դա Մ. Նալբանդյանի գլուխգործոցի, մեր հայրենասիրական ու ազատասիրական գրականության ամենանշանավոր գործի առաջին մուտքն ու տարածումն էր Արևելյան Հայաստանում։

Ա. Կրիտյանը և ընկերները երազում էին ազատ տեսնել իրենց հայրենիքն ու ժողովրդին։ Իր մի գողտրիկ բանաստեղծության մեջ Կրիտյանն ասում է.

Ա՜խ, իմ հայրենիք,
Հայաստան քաղցրիկ,
Ինչո՞ւ քեզանից
Մնամ ըղձալից։

Երանի այն,
Միայն այն մարդո,
Որ քո մեջ ազատ
Ման գա հարազատ։

1869 թվականին գրած նրա մի կոչում մենք կարդում ենք. «Իմ սիրելի հանճարներ, դժբախտ Հայաստանը, մոռացված, տխրությամբ ու ցավով լեցուն, կոչ է անում ձեզ՝ հայերիդ, սիրելի ազգակիցներ, մի՞թե կարելի է բավարար լույսին ապրել իբրև կույր...

Իմ սիրելիք, եթե որբացած մեր հայրենիք Հայաստանը իր սիրով չի մոռացել իր սերունդներին և այժմ լայնատարած բազուկներով պատրաստ է իր գիրկն առնել ճշմարիտ հայերին ու հայրենասերներին, ապա ո՞վ ենք մենք այսուհետև։ Մի՞թե մենք հայեր չենք, մի՞թե մենք հայերի սերունդ չենք, մի՞թե մեր երակներում չի եռում հայրենասիրական արյունը, արյուն, որով միայն կարելի է փրկել ազգը»։

Ալեքսանդրապոլի «Բարենպատակ ընկերությունը» հայ ժողովրդի ազատության ու անկախության համար հիմնված առաջին խմբակն էր Արևելյան Հայաստանում։ «Բարենպատակ ընկերությունը» գոյություն ունեցավ 6 տարի։ Նա բեղմնավոր աշխատանք կատարեց ազգային ու սոցիալական ճնշման դեմ պայքարելու, կրթություն և լուսավորություն տարածելու ուղղությամբ։ Իր աճման ու հասունացման ճանապարհին նա ջախջախվեց։

Արևելահայ առաջին ազատագրական խմբակներն ազգային-դեմոկրատական, հայրենասիրական բնույթ ունեին։ Նրանց նպատակն էր՝ համախմբել դեմոկրատական տարրերին, պայքարել ցարիզմի ու սուլթանիզմի դեմ Հայաստանի ազատության ու անկախության համար։

1872-74

Վանի «Միություն ի փրկություն» խմբակը

1872 թ. մարտին Վանում հիմնվում է «Միություն ի փրկություն» գաղտնի ընկերությունը։ Ընկերության նպատակն էր պայքարել Թուրք և քուրդ հարստահարիչների դեմ, հայ ժողովրդի ազատագրության համար։

Վանը արևմտահայ ազատագրական պայքարի հնագույն և նշանավոր կենտրոններից էր։ XIX դարի երկրորդ կեսին Մ. Խրիմյանի, Գ. Սրվանձտյանի և ուրիշների եռանդուն գործունեության շնորհիվ ազատագրական պայքարը Վանում և ամբողջ Վասպուրականում նոր թափ էր ստացել։ Նրանց գաղափարական ազդեցության տակ էլ հենց ձևավորվեց «Միություն ի փրկություն» խմբակը։

Թուրքական կառավարությունն ամեն կերպ աշխատում էր խեղդել Վասպուրականում ծայր առած ազատագրական շարժումները։ Հավատարիմ «բաժանիր, որ տիրես» գիշատիչ սկզբունքին, թուրքական սուլթանները թշնամանք էին սերմանում հայ և քուրդ ժողովուրդների

միջև, քրդական վերնախավին հրահրում էին հայերի դեմ, բիրտ ու դաժան ձևերով հալածում, ճնշում ու կողոպտում էին հայ գյուղացիներին։

Վասպուրականի հայերի համար ստեղծված ծանր դրությունը նրանց ոտքի է հանում անագորույն թշնամու դեմ։ «Միություն ի փրկություն» ընկերության 1872 թ. մարտի 3-ի կոչում ասված է. «Գնաց մեր պատիվը, պղծվեցան մեր եկեղեցիք, առևանգվեցին մեր հարսունքն ու երիտասարդունք, հայտնապես կխլեն մեր իրավունքը մեր ձեռքեն և իսպառ սպուտ մեր ազգության սերունդը ջնջելու կնգնին։ Վասնորո կամ պետք է մեռնել ու չտեսնել այս սարսափելի վիճակը և կամ վերակենդանություն ստանալ ի ծոց հայրենյաց»։

Տեղեկանալով Վանում ստեղծված «Միություն ի փրկություն» գաղտնի ընկերության մասին, Վասպուրականի Անգղ, Հորոտանց և մի շարք այլ գյուղերի բնակիչները 1872 թ. ապրիլին դիմում են նրան միացյալ ուժերով «անկրելի լծից դարման մը գտնելու համար։ Մենք ստորագրյալքս մեր կրած նեղության, հարստահարության և զրկանաց երեսեն բոլորովին հուսահատված ըլլալով, և միջոցներս լսելով, որ քաղաքամեջդ ալ նույն ցավոք ժողովուրդը վարակված է և զգացած են այն անտանելի չարության իրենց վրա ծանրանալը, ընկերություն մը կազմած եք Միություն ի փրկություն անվամբ, ուստի ալ չկարենալով տոկալ սույն անկրելի լուծին՝ ձեզ կդիմենք, ձեզ հետ միանալու՝ թերևս դարման մը գտնինք թե ի՞նչ միջոցով որ կարելի է այս չարիքներեն փրկվելու։

Պատրաստ եմք արյան և մանու չափ ձեզ հետ քալելու, ուր որ ալ մեր փրկության հույս մեզ տանի. թե ռուսանալ հարկ է, ռուսանանք, թե գաղթել՝ գաղթենք, թե վերջապես մեռնիլ՝ մեռնինք, բայց փրկվինք»։

«Միություն ի փրկություն» ընկերությունը Վասպուրականի հայերի ազատագրությունը կապում էր Ռուսաստանի օգնության հետ։ 1872 թ. մայիսին ընկերության ղեկավարներից Հակոբ Կալոյանը և Նշան Շիրվանյանը ուղարկվում են Երևան և Թիֆլիս, օգնություն խնդրում ռուսական կառավարությունից, ռուսահպատակություն ընդունելու ցանկություն հայտնում։ «Վանա խղճալի և թշվառ ժողովուրդը,— ասված է Կովկասի փոխարքային ուղղված նրանց դիմումի մեջ,— որ միշտ այս-գունակ հալածանաց մեջ կգտնվի և ձեռն բարբարոսաց և անհավատից, որուն համար դառն արտասվոք ձայն բարձած յուր կրոնակցեն և միանգամայն բարի և արի դրացիեն օգնություն կհայցե»։

Առաջին անգամ չէ, որ սահմանամերձ Վասպուրականի հայերը դիմում էին Ռուսաստանի օգնությանը։ Նրանք սերտ կապեր ունեին արևելահայերի հետ, ձգտում էին ռուսահպատակություն ընդունելու միջոցով

ազատագրվել Թուրք փաշաների և քուրդ բեկերի ճանկերից. բայց այդ նրանց չհաջողվեց։

«Միություն ի փրկություն» խմբակը գոյություն ունեցավ մոտ երկու տարի և զգալի աշխատանք կատարեց Վանի ու շրջակա գյուղերի հայ բնակիչների մեջ ազատագրական գաղափարներ տարածելու ուղղությամբ։ Ռուսաստանից չստանալով սպասած օգնությունը, օսմանյան բռնակալության դաժան իրականության պայմաններում այդ խմբակը չկարողացավ հարատևել և լայն գործունեություն ծավալել։

Կարինի (Էրզրումի) «Պաշտպան հայրենյաց» կազմակերպությունը

1881–82 թթ.
Խ. Կարեքեյան

Կարինը կամ Էրզրումը Արևմտյան Հայաստանի ամենախոշոր և հայաշատ քաղաքներից էր, վարչական, տնտեսական և կուլտուրական աշխի ընկնող կենտրոն։ Նա միաժամանակ Արևմտյան Հայաստանի ազատագրական պայքարի անմար օջախներից մեկն էր։ 1877—1878 թթ. ռուս-Թուրքական պատերազմից և Բեռլինի կոնգրեսից հետո ազատագրական պայքարն այստեղ նոր թափ էր առել։ 1879 թ. հունիսի 27-ին Կարինի հայ բնակիչները բարենորոգումների մի ընդարձակ և հետաքրքիր ծրագիր ներկայացրին Թուրքական կառավարությանը, որը, սակայն, մնաց անհետևանք։ 1881 թվականին Ռուսաստանի հովանավորությամբ Կարինում բացված Սանասարյան դպրոցը ոչ միայն կրթական, այլև հասարակական-քաղաքական գործունեության վայր էր դարձել։

Կարինի և ամբողջ Արևմտյան Հայաստանի ազատագրության գաղափարն այրում էր տեղի աշխատավորության, հատկապես հայրենասեր երիտասարդության միտքն ու հոգին, նրանց պայքարի մղում։

1881 թվականին արհեստավոր Խաչատուր Կարեքեյանի (1846—1891) գլխավորությամբ Կարինում հիմնվում է «Պաշտպան հայրենյաց» գաղտնի կազմակերպությունը։ Կազմակերպության հիմնադիրներից ու ղեկավարներից էին նաև Կարապետ Նշկյանը, Հակոբ Թերզիբաշյանը, Հովհաննես Աստուրյանը, Եղիշե Տուրսունյանը, Ալեքսան Էթալիկյանը և ուրիշներ։ Ժամանակակիցները վկայում են, որ Խ. Կարեքեյանը «տիրապետում էր Կարնո երիտասարդության հոգու և մտքի վրա», իսկ Կ. Նշկյանին անվանում են «աղնիվ, քաջ, բանիբուն եռանդուն երիտասարդ»։

Կարինի «Պաշտպան հայրենյաց» ընկերության նպատակն էր համախմբել հայ աշխատավորությանը, միացյալ ուժերով կազմակերպված պայքար մղել հայրենիքի պաշտպանության համար, զինված ապստամբության միջոցով ազատագրվել Թուրքական բռնակալության լծից։

«Պաշտպան հայրենյաց» կազմակերպության մեջ Կարինից և շրջակայքից ընդգրկվել էին շուրջ երկու հարյուր արհեստավորներ, գյուղացիներ, մտավորականներ, մանր առևտրով զբաղվողներ և ուրիշներ, որոնց ճնշող մեծամասնությունը երիտասարդներ էին։ Կարծիքներ կան, որ ընկերության անդամների թիվը հասել է մոտ հինգ հազարի։ Մենք հավանական չենք համարում այդ. հաղիվ թե Թուրքական բռնակալության դաժան իրականության պայմաններում կարճ ժամանակամիջոցում այդքան մեծ թվով մարդիկ ներգրավվեին գաղտնի կազմակերպության մեջ։ Համենայն դեպս, այդ, ինչպես և ընկերության հետ կապված մի շարք ուրիշ հարցեր ուսումնասիրման ու ճշտման կարիք ունեն։

Կարինի գաղտնի կազմակերպությունը կապեր ուներ Վանի, Պոլսի, Երևանի և Թիֆլիսի հայ հայրենասերների հետ։ Կազմակերպության ղեկավարներից Խ. Կարեքեյանը և Կ. Նշկյանը եղել էին Թիֆլիսում, որոշ օգնություն և օժանդակություն ստացել արևելահայերից։ Հայ ազատագրական շարժման հայտնի գործիչներից մեկը՝ բժիշկ Բագրատ Նավասարդյանը, 1882 թ. հուլիսին եղել է Կարինում, Կարեքեյանի և մյուս ղեկավարների հետ մշակել ընկերության կանոնագրությունը, երդմնագիրը, կարգի բերել «խառնիխուռն գործերը»։

«Պաշտպան հայրենյաց» ընկերությունն ուներ իր ընթերցարանը, որտեղ հավաքվում, գրքեր էին կարդում, խորհրդակցում, հարցեր քննարկում ու վճռում։ Ընկերության հիմնադիրները Կ. Պոլսից բերել էին տվել հեկտոգրաֆ, որի վրա տպում և տարածում էին հայրենասիրական կոչեր, երդմնագրեր։ Նրանք ընկերության անդամներից և այլ աղբյուրներից դրամ էին հավաքում՝ զենք ձեռք բերելու, զինված ապստամբություն նախապատրաստելու համար։

«Պաշտպան հայրենյաց» ընկերությունը նոր էր սկսել ամրապնդվել ու ճյուղավորվել, երբ 1882 թ. նոյեմբերին Թուրքական ոստիկանությունը պատահական դիպվածով և մատնությամբ հայտնաբերեց ու դաժան դատաստան տեսավ նրա հետ։ Էրզրումի փաշան և սուլթանական կառավարությունը սկզբում մեծ աղմուկ բարձրացրեցին հայերի կողմից զինված ապստամբություն կազմակերպելու վերաբերյալ։ Թուրքական զորքերը պաշարեցին Էրզրումը, հրանոթների փողերն ուղղելով հայկական թաղերի վրա։ Սկսվեցին մասսայական խուզարկություններն ու ձերբակալությունները, հարյուրավոր մարդիկ (մոտ 400 հոգի) բանտարկվեցին և վայրագ կտտանքի ենթարկվեցին։ Խուզարկություններ ու բանտարկություններ կատարվեցին նաև Պոլսում, Վանում, Մուշում և այլ վայրերում։ Բանտարկյալներին պահում էին անձուկ խուցերում, 10 թզաչափ երկարություն, 5 թզաչափ լայնություն և մարդու բարձրություն ունեցող խոնավ ու ցուրտ գետնահարկերում։

1883 թ. ապրիլին Կարինում տեղի է ունենում «Պաշտպան հայրենյաց» ընկերության անդամների դատավարությունը։ Պատասխանատվության են կանչվում 76 մարդ, որից դատապարտվում են 56-ը։ Մեղադրյալների բողոքների և պատրիարքարանի միջամտության հիման

վրա Պոլսից գործը վերադարձվում է Կարին՝ նոր քննության։ 1883 թ. հունիսին Կարինի դատարանը, ղեկավարվելով գործը չբարդացնելու և մեծ տերությունների միջամտության առիթ չտալու կառավարության քաղաքականությամբ, 16 հոգու ևս ազատում է, իսկ մնացած 40 հոգուն դատապարտում 5—15 տարվա բանտարկության։

Ընկերության ղեկավարներից Խ. Կարեքցյանը և Կ. Նշկյանը (հեռակա) դատապարտվում են 15 տարվա բանտարկության, Հ. Աստուրյանը և Հ. Թերզիբաշյանը (Իշղալացյանը)՝ 10, Ա. Էթալիկյանը՝ 7, մնացածը՝ 5—6 տարվա։ Կարինի դեպքերը լայն արձագանք գտան հայկական, ռուսական և եվրոպական մամուլում։ Թուրքական կառավարությունը հարկադրված եղավ 1884 թ. նոյեմբերին ազատ արձակել բանտարկյալների մեծ մասին, պահելով նրանց ոստիկանության խիստ հսկողության տակ։

«Պաշտպան հայրենյաց» գաղտնի ընկերությունը Կարինի հայ աշխատավորության առաջին հայրենասիրական, ազատագրական կազմակերպությունն էր։ Այդ ընկերությունը սուլթանական կառավարության կողմից ջախջախվեց, բայց նրա գործն ու գաղափարները ապրեցին ու տարածվեցին ժողովրդի մեջ։

Մոսկվայի «Հայրենասերների միությունը» 1882-84

Հայ ազատագրական շարժումների պատմության մեջ իր արժանի տեղն ունի 1882 թվականին Մոսկվայի հայ ուսանողների հիմնադրած «Հայրենասերների միությունը»։

XIX դարի երկրորդ կեսին Մոսկվայի, Պետերբուրգի, Խարկովի, Կիևի, Օդեսայի բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորող հայ երիտասարդներից շատերը ակտիվ մասնակցություն ունեցան Ռուսաստանի նարոդնիկական գաղտնի խմբակների աշխատանքներին։ Հայ ժողովրդի ազատագրությունը կապելով Ռուսաստանի բոլոր ժողովուրդների ազատագրության հետ, նրանք համատեղ պայքարի էին ելնում ցարական ինքնակալության դեմ, կանգ չառնելով բանտի ու աքսորի առաջ։ Նարոդնիկական խմբերի հայտնաբերման ու ջախջախման ժամանակ նրանցից շատերը նետվեցին ցարական մութ ու խոնավ բանտերը, անվերադարձ աքսորվեցին Սիբիրի ու Սախալինի աքսորավայրերը։

Մոսկվայի «Հայրենասերների միությունը» մի կողմից Հայաստանի, իսկ մյուս կողմից Ռուսաստանի ազատագրական շարժումների վերելքի ծնունդ էր։ Թե մեկը և թե մյուսը իրենց խոր կնիքն են դրել նրա վրա։ Ինչպես ցույց է տալիս խմբակի անունը, նա հայրենասիրական բնույթ ուներ, նրա հիմնական նպատակը Հայաստանի ազատագրությունն էր ցարիզմի ու սուլթանիզմի լծից։ «Հայաստանի բազմաչարչար ժողովրդի դարավոր վիշտը և նրա ազատության գաղափարը սկիզբ և կյանք տվին «Հայրենասերների միությանը»,— ասում են նրանք։

«Հայրենասերների միության» հիմնադիրն ու ղեկավարը հայ ազատագրական շարժման աչքի ընկնող գործիչներից մեկն էր՝ Ներսես Աբելյանը (1855—1933)։ 1883 թվականին Մոսկվայում նրա խմբագրությամբ հրատարակվում է միության անլեգալ օրգան «Ազատության ավետաբեր» թերթը։ Դա մեր առաջին հեղափոխական լրագիրն էր։

Հետևելով Մ. Նալբանդյանին և ռուս հեղափոխական-դեմոկրատներին, նրանք ժողովրդին ազատագրական պայքարի էին կոչում, պաշտպանում նրա ազգային և սոցիալական ազատագրության գաղափարը։ «Ժողովրդի ազատության հիմնաքարը նրա տնտեսական անկախությունն է»,— ասված է «Ազատության ավետաբեր»-ում։ Եթե երկրագործը, արհեստավորը, բանվորը տնտեսապես հարստահարվում են, ապա քաղաքականապես ազատ լինել չեն կարող։ Նրանք պահանջում էին պետական և կալվածատիրական հողերը տալ համայնքին, պաշտպանում էին մեկը ընդհանուրի և ընդհանուրը մեկի համար սկզբունքը։

«Հայրենասերների միությունը» ճիշտ դիրքերի վրա էր կանգնած նաև ազգային հարցում։ Ազգերի համերաշխությունը նրանց հիմնական պատգամներից մեկն էր։ «Մենք քարոզում ենք սերտ համերաշխություն Հայաստանում բնակվող ազգերի մեջ,— կարդում ենք «Ազատության ավետաբեր»-ում։ Մենք հավասարաշափ հարգում ենք յուրաքանչյուր ազգի լեզուն, կրոնը և անկախությունը, եթե միայն նա չէ ձգտում հարստահարել ուրիշներին, արգելք չի դառնում ուրիշների կանոնավոր զարգացման»։

«Հայրենասերների միության» առաջնահերթ խնդիրը հայկական հարցի լուծումն էր, Արևմտյան Հայաստանի ազատագրումը օսմանյան բռնակալության լծից։ 1883 թվականին տպագրած իրենց անլեգալ մի կոչում նրանք ջերմորեն ողջունում են «Հայաստանի սրտում գտնվող Կարինի» ապստամբությունը, անվանելով դա բռնակալության ու անիրավության դեմ կենդանի ժողովրդի կենդանի բողոք՝ մարդավայել գոյության իրավունքի համար։

Դատապարտելով սուլթանական կառավարության բարբարոսությունները և Բեռլինի կոնգրեսի 61-րդ հոդվածի իրագործման ձգձգումները, կոչի հեղինակները գրում են. «Տաճկաց այժմյան կառավարությունից որևէ բարենորոգում սպասել, մեր կարծիքով, նշանակում է երկնային մանանայի սպասել։ Մենք մեր բոլոր հույսերը Եվրոպայի վրա ենք դնում... Մի՞թե Եվրոպան իր շահերը թողած մերը կպաշտպանե»։ «Ազատություն և իրավունք մուրալ — մի չեղած և անիրագործելի բան է աշխարհի ազգերի կյանքում։ Հայաստանի ժողովուրդը բարբարոսների լծից ազատվելու համար ունի միայն մի միջոց, այն է՝ արյունով գնել ազատությունը»։

Խոսելով հույների ու բալկանյան սլավոն ժողովուրդների ազատա-

գրության մասին, «Հայրենասերների միությունը» հատկապես երիտասարդությանը կոչ է անում մտնել ժողովրդի մեջ, անձնվիրաբար պայքարել հայրենիքի ազատության վսեմ գաղափարի համար: «Հայ երիտասարդներ, հայրենիքի փրկությունը ձեզանով պետք է լինի, ազատության դրոշակ բարձրացնելը ձեզ է նախասահմանված, ձեր պարտականությունն է առաջնորդ հանդիսանալ այդ սուրբ գործում... Դուք եք ազատության այդ վսեմ գաղափարի առաքյալները»:

Ուշագրավ է, որ «Հայրենասերների միությունը» իր այս մարտաշունչ կոչի բնաբան էր ընտրել Մ. Նալբանդյանի «Ազատություն» բանաստեղծության վերջին հրաբորբոք տողերը.

Պիտի գոռամ, պիտ կրկնեմ
Անդադար՝ ազատություն:

«Հայրենասերների միությունը» իր գաղափարական-քաղաքական մակարդակով ավելի բարձր էր կանգնած, քան XIX դարի երկրորդ կեսի մյուս ազատագրական խմբակները: Մեզ հասած նրա նշանավոր կոչը և «Ազատության ավետաբեր» թերթը մեր ազգային-ազատագրական շարժման աճի ու հասունության վավերագրեր են: Միությունը հաջող սկսեց իր գործունեությունը, բայց այդ կարճ տևեց: Նա չդիմացավ ցարական ոստիկանության հետապնդումներին և 1884 թվականին դադարեց գործելուց:

Երևանի «Հայասեր և Ազգասեր» խմբակը 1882–23

Ազգային-ազատագրական պայքարի օջախներից էր նաև Երևանը: 1882 թվականին այստեղ ձևավորվում է «Հայասեր և Ազգասեր» խմբակը: Ժանդարմական վարչության տվյալներով խմբակն ունեցել է շուրջ 40 անդամ: Նրա աշքի ընկնող անդամներից են եղել տեղի «Պսակ» թերթի խմբագիր Վասակ Պապաջանյանը, մասնավոր հավատարմատարներ Ռուբեն Ջալալյանը և Վասիլ Եղիազարյանը, դատական քարտուղարների օգնական Հովհաննես Տեր-Զաքարյանը, բժիշկ Լևոն Տիգրանյանը, մանկավարժներ Սարգիս Բեկնազարյանը, Գայանե Հովհաննիսյանը, Արամ Մելյանը, դատարանի քարտուղար Հայկ Մատակյանը, նոտար Տրդատ Վարդանյանը, հոգաբարձու Թովմաս Մհերյանը և ուրիշներ:

«Հայասեր և Ազգասեր» խմբակը նպատակ էր դրել հայրենասիրական, ազգային-ազատագրական գաղափարներ տարածել ժողովրդի, առաջին հերթին երիտասարդության մեջ, պայքարել ազգային ճնշման դեմ, պաշտպանել ու զարկ տալ հայ մշակույթին:

Խմբակի անդամները կապեր ունեին Ալեքսանդրապոլի, Թիֆլիսի, Մոսկվայի, Վանի և Կարինի հայ հայրենասերների հետ:

1883 թ. մարտի 19-ին Երևանի քաղաքային այգում Թ. Մհերյանը

ապտակում է դիմնազիայի տեսուչ, մեծապետական շովինիստ Բրաժնիկովին՝ իրեն «արմյաշկա» անվանելու համար: Մհերյանին բանտարկում են, նրա արաքը դիտում կազմակերպված, քաղաքական բնույթի գործ: Խուզարկություններ են կատարվում Հ. Տեր-Զաքարյանի, Վ. Պապաջանյանի, Ռ. Ջալալյանի, Լ. Տիգրանյանի, Գ. Հովհաննիսյանի և ուրիշների բնակարաններում: Հայտնաբերում են Մոսկվայի «Հայրենասերների միության» հայտնի կոչը և արգելված գրականություն: Ժանդարմական վարչության պետը գրում է, որ հայտնաբերված պրոկլամացիայում հայ ժողովրդին կոչ է արվում «մասնակցել ժողովրդական շարժմանը և արյուն թափել Հայաստանի ազատության համար»:

Այնուհետև խուզարկություններ են կատարվում Թիֆլիսում՝ «Մշակ»-ի խմբագրատանը, Գր. Արծրունու և Բաֆֆու բնակարաններում, Մոսկվայում՝ «Հայրենասերների միության» անդամ Ս. Տեր-Գրիգորյանի բնակարանում, որտեղ հայտնաբերում են Միության կնիքը և «Ազատության ավետաբեր» թերթը:

Ժանդարմական մարմիններին հաջողվում է որոշ տեղեկություններ ձեռք բերել Երևանի «Հայասեր և Ազգասեր» խմբակի անդամների վերաբերյալ. բայց դատական գործ կազմակերպել չի հաջողվում: Որոշվում է նրանց պատժել վարչական կարգով: Խմբակի անդամների մի մասը արտաքսվում է քաղաքից, մի մասը հեռացվում աշխատանքից և հսկողության տակ դրվում:

Թիֆլիսի հայրենասիրական խմբակը 1882/83 – 85/86

1870—1880-ական թվականներին Թիֆլիսը կովկասահայերի ազատագրական պայքարի գլխավոր կենտրոնն էր: Ռուս-թուրքական պատերազմից ու Բեռլինի կոնգրեսից հետո այստեղ նոր թափ էր առել ժողովրդին ոտքի հանելու, սեփական ուժերով Հայաստանն ազատագրելու գործն ու գաղափարը: Գ. Արծրունու, Բաֆֆու, Ռ. Պատկանյանի և մյուսների ազատագրական կոչերը պայքարի էին հանում օտար բռնակալների լծի տակ հեծող հայ աշխատավորությանը: Թիֆլիսն ուղղություն էր տալիս Երևանի, Ալեքսանդրապոլի, Բաքվի, Գանձակի, Շուշու, ինչպես նաև արևմտահայերի ազատագրական շարժումներին:

Նման իրադրության պայմաններում 1882 թ. վերջերին կամ 1883 թ. սկզբներին Թիֆլիսում ձևավորվում է հայրենասիրական գաղտնի մի խմբակ: Այդ խմբակի հիմնադիրներն ազգային-ազատագրական և նարոդնիկական գաղափարներով տոգորված մի խումբ երիտասարդներ էին՝ Քր. Միքայելյան, Սանդալ (Ալ. Պետրոսյան), Խ. Մալումյան, Գ. Միրզոյան, Գ. Ղարաջյան և Կ. Մելիքյան:

Կազմակերպական տեսակետից խմբակը շատ հեղհեղուկ է եղել, անգամ կանոնադրություն չի ունեցել: Նա գործել է Թիֆլիսում, որոշ կապեր է ունեցել Գանձակի և այլ գավառների հետ: Գ. Ղարաջյանի

վկայությամբ, խմբակը ձեռք է բերել Մ. Նալբանդյանի «Երկրագործությունը որպես ուղիղ ճանապարհ» արգելված աշխատությունը և 1884 թվականին հեկտոգրաֆով բազմացրել ու տարածել Թիֆլիսում և գավառներում։ Հեկտոգրաֆի համար գիրքն արտագրել են աշակերտներ (հետագայում նշանավոր գրողներ) Նար-Դոսը և Ալ. Ծատուրյանը։

Այս խմբի գործունեության ամենաուշագրավ էջը ցարիզմի ազգային-գաղութային քաղաքականության դեմ նրա մղած պայքարն է։ 1884—1885 թվականներին ցարական կառավարությունը փակում է հայկական դպրոցները և հալածում հայ մտավորականներին։ Այս կապակցությամբ 1885 թ. փետրվարի 22-ին խմբակը տպագրում ու տարածում է «Հայ եղբայրներ և հայ քույրեր» թռուցիկը, որտեղ խիստ կերպով քննադատվում ու մերկացվում է ցարական կառավարության մեծապետական ռեակցիոն քաղաքականությունը։

«Այսօր ամենքիդ առաջ կատարվում է մի սարսափելի ավազակություն, մի հանդուգն բաշիբոզուկություն, մի խայտառակ բռնաբարություն՝ Ռուսաց միապետությունը իրեն հատուկ բռնակալությամբ փակում է մեր դպրոցները.— ասված է այդ թռուցիկում։ Բռնակալ Ալեքսանդրը երրորդը քար ու քանդ է անում հայոց դպրոցը — մի ահագին պետության թագավորը պատերազմ է հայտնում մի փոքրիկ ազգության»։

Բայց ինչո՞ւ ենք զարմանում՝ գրում են նրանք. ցարական բռնակալության լծի տակ տնքում են հարյուր միլիոն ռուս ժողովուրդը, վրացիները և ուրիշներ։ «Փոքրիկ ազգություններին խեղդելու համար ցարը ցանկանում է խեղդել նրանց լեզուն. սիրելի եղբայրներ և քույրեր, լավ իմացեք, դա մեզ համար մահու և կենաց խնդիր է»։ Տաճիկ բռնակալը հափշտակում է մեր սեփականությունը, ցարական բաշիբոզուկը փակում է մեր դպրոցները. «մենք փոխանակ բռունցք ցույց տալու, մեր վզերն էլ դնում ենք անամոթ դահճի կացնի տակ»։

Վերջում ասված է. «Մեր դպրոցները փակվում են... յուրաքանչյուր հայ ընտանիք թող ներկայացնի իրենից առանձին հայ դպրոց։ Այսուհետև մեր միակ հույսը թող մենք ինքներս լինենք... հաղթությունը արդարի կողմն է լինելու»։

Հայկական դպրոցների, հայոց լեզվի համար մղվող պայքարը հայ ժողովրդի գոյության, նրա ազգային իրավունքների համար մղվող պայքար էր։ Խմբակը միանգամայն արդարացի, ազգային-ազատագրական կռիվ էր մղում ցարիզմի ազգային-գաղութային ճնշման դեմ։ Այդպես լինելով հանդերձ, թռուցիկը զերծ չէ առանձին սխալներից, կղերական և ազգայնական մտայնությունից։

1885—1886 թվականներին Թիֆլիսի ազգային-դեմոկրատական ուղղության այս խմբակը քայքայվում է։ Գերազանցապես հայկական հարցով տարված մարդիկ (Քր. Միքայելյան և ուրիշներ) բռնում են ազ-

գային շարժման ուղին և մի քանի տարի անց հիմք դնում դաշնակցություն կուսակցության։ Իսկ Գ. Ղարաջյանը և ուրիշներ, «հայկական հարցը համարելով գրեթե բացառապես հենց իրենց՝ տաճկահայերի ազատության գործ», ընտրում են քաղաքական գործունեության նոր ուղի, հարում սոցիալիստական, մարքսիստական ուղղության։

Ազգային-ազատագրական այս խմբակները կոչված էին պայքարելու մի ընդհանուր նպատակի՝ ժողովրդի և հայրենիքի ազատության համար։ 1860—1880-ական թվականներին հայ ազատագրական շարժումն ավելի մասսայական բնույթ ստացավ, ընդլայնվեցին ու ամրապնդվեցին այդ շարժման ներքին և արտաքին կապերը, նա թևակոխեց իր զարգացման նոր էտապը։ Ազգային-ազատագրական խմբակներին փոխարինելու եկան քաղաքական կուսակցությունները։

2. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԵՎԱՎՈՐՈՒՄԸ

Արմենականներ

1885 թվականին Ֆրանսիայի Մարսել քաղաքում հիմնվում է Արմենականների կուսակցությունը։ Դա հայ իրականության մեջ ստեղծված առաջին քաղաքական կուսակցությունն էր։ Նրա հիմնադիրն էր արևմտահայ մտավորական Մկրտիչ Փորթուգալյանը (1848—1921)։

Մ. Փորթուգալյանը ծնվել և կրթություն է ստացել Կ. Պոլսում։ 1869 թվականին Եվդոկիայում աշխատել է որպես ուսուցիչ, սուր պայքարի մեջ մտել աղաների հետ և հարկադրված վերադարձել Կ. Պոլիս։ 1874—1875 թթ. նա խմբագրում է ազգային քաղաքական-բանասիրական «Ասիա» (Ձայն Հայաստանի) լրագիրը, որտեղ տպագրում է իր առաջին հայրենասիրական գործերը։

1875 թվականին Մ. Փորթուգալյանը մեկնում է Վան, զբաղվում ուսուցչությամբ և հասարակական-քաղաքական աշխատանքով։ Այստեղ նա պարարտ հող է գտնում իր հայրենասիրական գործունեության համար, Մ. Խրիմյանի, Գ. Սրվանձտյանի և ուրիշների հետ ազատագրական գաղափարներ տարածում Վանում և Վասպուրականում։ Վանի կենտրոնական վարժարանը, որի տնօրենն էր Փորթուգալյանը, դառնում է հեղափոխական աշխատանքի կենտրոն։ Վանում հիմնվում է «Հառաջադիմական միություն» երիտասարդական կազմակերպությունը, «Զինակիր» ընկերությունը և «Քաղաքական ակումբ»-ը։ Նրա աշակերտներից շատերը (Մկրտիչ Ավետիսյան և ուրիշներ) հետագայում դառնում են Վանի արմենական կազմակերպության հիմնադիրներն ու ղեկավարները։

Թուրքական կառավարությունը սկսում է հետապնդել Մ. Փորթուգալյանին. 1885 թվականին նա փախչում է արտասահման, բնակվում

Մարսելում, տպարան հիմնում և 1885 թ. հույիսից հրատարակում «Արմենիա» թերթը, որի անունով էլ կոչվում է Արմենականների կուսակցությունը։

«Արմենիա»-ն 1880-ական թվականների առաջադիմական թերթերից էր, նրա տպաքանակի 3/4-ը տարածվում էր Արևմտյան Հայաստանում։ 1885 թվականին արգելվեց նրա մուտքը Թուրքիա, 1886-ին՝ Ռուսաստան։ «Արմենիա»-ում Մ. Փորթուգալյանը խիստ կերպով քննադատում էր հայ ժողովրդի արտաքին և ներքին կեղեքիչներին. «Քաղաքական ստրկությունը, ապահովության բացակայությունը, տնտեսական անստույգ և միշտ աղետաբեր վիճակը, հարստահարող և ճնշող ձեռքեր, որոնք թե ներսեն և թե դրսեն ծանրացած են մեր խեղճ ազգի գլխին վրա, մի այնպիսի անտանելի դժոխային վիճակ ստեղծած են մեր հայրենիքի մեջ, որ այդ վայրերե հեռի գտնվողները ոչ միայն կրել, այլ երևակայել անգամ չեն կարող»։

Խոսելով 1886 թ. հայերի և թուրքերի միջև Վանում տեղի ունեցած արյունահեղ ընդհարումների մասին, Փորթուգալյանը մեղադրում է Վանի Համիդ փաշային և առաջնորդական տեղապահ Պողոս եպիսկոպոսին, որի ռեակցիոն դեմքը դեռևս իր ժամանակին մերկացրել էր Մ. Նալբանդյանը։ «Ո՞վ են այս արյունահեղության պատճառ եղողները,— գրում է նա։ Մի եպիսկոպոս և մի թուրք փաշա. կրոնական և քաղաքական ազդակներ, որոնք խեղճ հայ ժողովրդի արյունը անխնա ծծելէ հետո գետին կթափեն այժմ»։

Հայաստանի հողերը, ասում էր հայրենասեր գործիչը, անդադար ողողվում են հայի արցունքով, հայ գյուղացին ապրում է դառն ու խեղճ վիճակում, Թուրքիայում հայերեն լեզվով երգելն իսկ արգելված է։ Նա կոչ էր անում միանալ և միացյալ ուժերով թոթափել բռնակալության լուծը։ Ուշագրավ է, որ այդ պայքարում նա չէր անտեսում նաև կանանց դերը. «Ազգային վերանորոգության և առաջադիմության մեջ կնոջ դերը շատ մեծ է»,— ասում էր Փորթուգալյանը։

Արմենականներն ունեին իրենց ծրագիրը, որը կոչվում էր «Վարդապետարան Հայաստանի ազատագրության»։ Դա Հայաստանի ազատագրության վերաբերյալ հարց ու պատասխանի ձևով գրված, ազգային-դեմոկրատական բովանդակություն ունեցող մի ծրագիր էր։ Վարդապետարանի առաջին հարցն էր. «Ո՞վ պիտի ազատե Հայաստանը օտարների ձեռքեն». պատասխանն էր. «Ինքը՝ հայ ազգը»։ Հարց. «Ի՞նչ հնարներով». պատասխան. «Հնարները զանազան են, նայելով հանդամանքին. երբեմն սեփական զենքով, երբեմն փողով և երբեմն օտարի օգնությամբ»։

Այնուհետև հարցնում է. «Ո՞րն է հայերի նշանաբանը» և պատասխանում՝ «Ազատություն կամ մահ»։ Հարց. «Ո՞վ պիտի բարձրացնե

ազատության դրոշակը և սուրը». պատասխան. «Դրոշակը պիտի բարձրացնե հայ վարդապետը, իսկ սուրը՝ բոլոր հայ պատանեկությունը, երիտասարդությունը և տղամարդիկ, 16 տարեկանից բռնած մինչև 45 տարեկանը»։

Վարդապետարանում ասված է, որ հայի աղոթքը պետք է լինի. «Աստված օգնե ինձ Հայաստանը ազատելու», հայրենիքի համար զոհվածների հոգին գնում է արքայություն, հայի կրոնն ու հավատն է՝ «Հայաստանը պիտի ազատվի օտարի լծեն», պետք է պահպանել հայ լեզուն, զենք գործածել սովորել, «ստացվածքն ու արյունը նվիրել Հայաստանի ազատության սուրբ գործին» և այլն։

Մարսելում Մ. Փորթուգալյանը հիմնել էր «Հայոց հայրենասիրական միություն», որի նպատակն ու խնդիրները համառոտակի շարադրված են Վարդապետարանի վերջում։ Այդտեղ ասված է, որ Հայոց հայրենասիրական միության նպատակն է աշխատել տեղական պահանջներից բխող բարենորոգումներ մտցնել Թուրքահայաստանում, ապա կառավարվելու իրավունք ստանալ, որով միայն հնարավոր կլինի վերջ տալ ժողովրդի հարստահարություններին ու թշվառությանը։

Արմենականների ծրագրի հիմքում ընկած էր Հայաստանի ազատության և անկախության գաղափարը։ Նրանց նպատակն էր ազատագրել Հայաստանը օտար բռնակալների լծից և ստեղծել բուրժուա-դեմոկրատական կարգեր։ Բայց նրանց ծրագիրը տակավին շատ հեղհեղուկ էր, հստակ պատկերացում չունեին ոչ միայն ապագա ազատագրված Հայաստանի սոցիալական ու քաղաքական հարաբերությունների, այլև նրա ազատագրման ուղիների մասին։

Վարդապետարանում նրանք գրում էին, թե Հայաստանը պետք է ազատագրել զենքի միջոցով, դա, ինչպես տեսանք, ժամանակի գրեթե բոլոր ազատագրական խմբերի ու գործիչների ընդհանուր և ճիշտ պահանջն էր։ Բայց դրա հետ մեկտեղ նրանք գտնում էին, թե Հայաստանը կարելի է ազատագրել նաև մեծ պետությունների օգնությամբ և նույնիսկ՝ փողով։ Նրանք ասում էին, որ «ազատագրված Հայաստանի մեջ քաղաքացիական հավասարություն պիտի լինի», կողմ էին մասնավոր սեփականության, մանր հողատիրության։

Արմենականների գլխավոր խնդիրը Արևմտյան Հայաստանի ազատագրումն էր։ Այդ պատճառով էլ նրանք իրենց գործունեությունը հիմնականում կենտրոնացրել էին Արևմտյան Հայաստանում, հատկապես Վանում, որտեղ նրանք մեծ ազդեցություն և շատ համակրողներ ունեին։ Արմենականները Գ. Արծրունու և մյուսների նման հայերին կոչ էին անում հետևել բուլղարների օրինակին։ Բուլղարիայի ազատագրումը առհասարակ ոգեշնչում էր հայերին։

Արմենականների կուսակցությունը կյանքի կոչվեց Արևմտյան

Հայաստանը Թուրքական բռնակալության դաժան լծից ազատագրելու համար։ Իր էությամբ դա ազգային-ազատագրական կազմակերպություն էր։ Արևմտահայ իրականության մեջ, իր ժամանակի պատմական պայմաններում, նա ոչ թե հետադիմական, այլ առաջադիմական դեր էր կատարում՝ արտահայտելով արևմտահայ բուրժուազիայի, ինչպես և գյուղացիության ու դեմոկրատական մյուս խավերի շահերը։

Ամենականներին չհաջողվեց մասսայական և կուռ կազմակերպություն ստեղծել։ 1921 թվականին Պոլսում նրանք վերակազմվեցին և կոչվեցին Ռամկավար-ազատական կուսակցություն։ Ներկայումս սփյուռքում ռամկավարներն ունեն իրենց մի շարք կազմակերպությունները, որոնք պայքարում են արևմտահայ դատի արդարացի լուծման համար, կանգնած են Սովետական Հայաստանի, խաղաղության լագերի պաշտպանության դիրքերում։

Հնչակյաններ

1887 թվականին մի խումբ կովկասահայ ուսանողներ Ժնևում (Շվեյցարիա) հիմք են դնում Հնչակյան կուսակցության։ Նրանք հրատարակում էին «Հնչակ» թերթը, որի անունով էլ կոչվեց կուսակցությունը։

Հնչակյան կուսակցության հիմնադիրներն էին Ավետիս Նազարբեկյանը (Նազարբեկ), Մարո Վարդանյանը (հետագայում՝ Նազարբեկ), Ռուբեն Խանազատյանը (Խանազատ), Գաբրիել Կաֆյանը և ուրիշներ։ Նրանց ղեկավարն էր Ավետիս Նազարբեկը, որը մինչ այդ կապ ուներ Մ. Փորթուգալյանի հետ, աշխատակցում էր «Արմենիա»-ին, բայց հետո, ընդհանուր լեզու չգտնելով նրա հետ, հեռացավ։

Հնչակյան կուսակցության հիմնադիրները կապեր ունեին նշանավոր ռուս մարքսիստ Գ. Վ. Պլեխանովի և նրա ժնևի խմբակի, ինչպես և հեղափոխական նարոդնիկների հետ։ Նրանք գտնվում էին մի կողմից մարքսիզմի, իսկ մյուս կողմից մանր-բուրժուական սոցիալիզմի ու նարոդնիկության ազդեցության տակ։ Դա իր արտահայտությունն է գտել 1887 թվականին կազմված և 1888 թվականին «Հնչակ» թերթում տպագրված նրանց ծրագրում։

Ծրագրում շարադրված են հնչակյան կուսակցության հիմնական սկզբունքները, նրա հեռավոր և մոտակա նպատակները։ Քննադատելով կապիտալիստական կարգերը, մարդկային հարաբերությունների մեջ ստեղծված անհավասարությունն ու անարդարությունը, փոքրամասնության կողմից մեծամասնության ճնշումն ու շահագործումը, ծրագիրը դրա վերացման միակ միջոցը համարում է սոցիալիստական կազմակերպությունը։ «Հնչակի խումբը,— ասված է ծրագրում,— իր հիմնական համոզումներով լինելով սոցիալիստ, այդ հասարակական կազմակերպությունը համարում է իր թեռալը, նրա հեռավոր նպատակը՝ հայ ժողովրդի ու նրա հայրենիքի վերաբերությամբ»։

Հնչակյան կուսակցության ծրագրի այս և մյուս ընդհանուր, տեսական մասերի վրա անտարակույս նկատելի է Գ. Վ. Պլեխանովի «Աշխատանքի ազատագրության խմբակի» ծրագրի և նարոդնիկության գաղափարական ազդեցությունը։ Բայց այդ հնչակյանների համար պրակտիկ նշանակություն չուներ և գրեթե չունեցավ. դա լոկ խոսք էր, վերացական գաղափար։

Հնչակյան կուսակցության համար գլխավորը մոտակա նպատակն էր՝ հայկական հարցի լուծումը, Արևմտյան Հայաստանի ազատագրումը։ «Ներկայումս Թուրքաց Հայաստանում հայ ժողովրդի դրությունը քաղաքականապես ու տնտեսապես հանդիսանում է իբրև ստրկական կացության կերպերի մի շղթայակապ զանգված»,— ասված է ծրագրում։ «Մեր համոզումն այն է, որ այդ թշվառ վիճակից ժողովրդին փրկելու և նրան դնելու այն ուղիի վրա, որը նրան միջոց տար դիմելու դեպի սոցիալիստական կազմակերպությունը, դեպի այն հեռավոր նպատակը. անհրաժեշտ է Թուրքաց Հայաստանում ձեռք բերել ընդարձակ ռամկապետական, քաղաքական ազատություն և ազգային անկախություն, որոնք և դառնում են մոտակա նպատակ»։

Հնչակյաններն արևմտահայերի ազատագրությունը համարում էին առաջնահերթ խնդիր, որովհետև նրանց դրությունն ամենից ավելի ծանր էր։ Նրանք դնում էին նաև արևելահայերի ու պարսկահայերի ազատագրության հարցը։ «Թուրքահայ ժողովրդի դրությունն այսօր հայության ամենահիվանդոտ կողմն է,— ասված է ծրագրում։ Առանձնապես Թուրքահայ ժողովրդի ազգային անկախությունն ու քաղաքական ազատությունը ձեռք բերելուց և հաստատելուց հետո՝ այդպիսի զորությամբ շարունակել ընդհանուր հայության ազատության գործը, ազատել օտարների լծից ռուսահայն ու պարսկահայը և կազմել այդ երեքից մի դաշնակցային ռամկապետական հանրապետություն, որ համայն հայության համար ճամփա կբանա դիմելու դեպի հեռավոր նպատակը, դեպի իդեալական հասարակական կազմակերպությունը, դեպի սոցիալիստական աշխարհը, դեպ ուր պիտի դիմե համայն մարդկությունը»։

Իրենց նպատակին հասնելու միջոցը հնչակյանները համարում էին հեղափոխությունը, զինված պայքարը. «Հեղափոխական-ապստամբական գործունեության ասպարեզն է Թուրքաց Հայաստանը»։ Նրանք լայնորեն սկսում են պրոպագանդել արևմտահայերի ազատագրության գաղափարը, իրենց գլխավոր ուժերը և պրակտիկ գործունեությունը կենտրոնացնել Արևմտյան Հայաստանում, գաղտնի կազմակերպություններ ստեղծել, ցույցեր, զինված ելույթներ, տեռորիստական ակտեր կազմակերպել և այլն։ 1895 թ. սեպտեմբերին Կ. Պոլսում նրանք կազմակերպեցին Բապը Ալիի հայտնի ցույցը, որին մասնակցեցին մոտ 4000 մարդ։ Ցույցի նպատակն էր մեծ պետությունների ուշադրությունը

հրավիրել հայկական ռեֆորմների վրա և ստիպել սուլթանին գործադրել այն։

1880—1890-ական թվականներին Հայաստանում հնչակյաններն ստեղծեցին առաջին խոշոր կազմակերպությունը։ Սուլթանական բռնակալության դեմ մղված պայքարում նրանք մեծ ճիգեր գործադրեցին և շատ զոհեր տվեցին, բայց ցանկալի արդյունքի չհասան և չէին էլ կարող հասնել, որովհետև նրանց ընտրած ուղին ճիշտ չէր։ Նրանք մեկուսացված, անջատ պայքար էին մղում այնպիսի միջավայրում և այնպիսի բարդ ու խճճված քաղաքական իրադրության պայմաններում, երբ հայ ժողովրդի և մյուս ճնշված ժողովուրդների համատեղ պայքարը միայն կարող էր հաղթանակի հասցնել։ Նրանք հույսեր էին կապում մեծ տերությունների օգնության հետ, որոնք հայկական հարցն օգտագործում էին իրենց շահերի համար։

Հնչակյաններն իրենց համարել են և այժմ էլ համարում են մարքսիստական, սոցիալ-դեմոկրատական կուսակցություն։ Սկզբում նրանք իրենց կոչեցին «Հայ սոցիալիստ հեղափոխականների կազմակերպություն», փորձեցին միանալ նորաստեղծ Դաշնակցության հետ և այլն։ Պատմական, գիտական անաչառ մոտեցումը պահանջում է ասել, որ իրոք հնչակյաններին խորթ չի եղել մարքսիզմը և սոցիալիզմը։ Նրանք այս ու այն չափով պրոպագանդել են այդ գաղափարները։ Ուստի, ճիշտ չեն նրանք, ովքեր հնչակյաններին համարում են հակահեղափոխականներ, բուրժուական նացիոնալիստներ։

Հնչակյան կուսակցությունն իրականում եղել է մանրբուրժուական ազգային կուսակցություն։ Արևմտյան Հայաստանում և նույնիսկ Կովկասում նրանք գործել են ազգային և ոչ թե ինտերնացիոնալ սկզբունքով։ Սոցիալիզմը նրանց համար եղել է հեռավոր ապագայի խնդիր։ Մարքսիզմի, գիտական սոցիալիզմի կրողը հայ իրականության մեջ հանդիսացել է կոմունիստական, բոլշևիկյան կուսակցությունը։

Հնչակյան կուսակցությունը դեռևս 1890-ական թվականներից սկսած, ներքին տարաձայնությունների հետևանքով, քանիցս պառակտվել է։ 1896 թվականին հին հնչակյաններից անջատվեցին երիտասարդները՝ վերակազմյալ հնչակյանները։ 1905—1907 թթ. հեղափոխությունն ավելի խորացրեց նրանց շարքերի քայքայումը. աշխատավորական, հեղափոխական տարրերը հեռացան և մտան ՌՍԴԲԿ շարքերը։

1917 թ. Հոկտեմբերյան հեղափոխությունից և Հայաստանում սովետական կարգերի հաստատումից հետո հնչակյանները կանգնեցին սովետական իշխանության կողմը, շատերն անցան կոմունիստական կուսակցության շարքերը։

Ներկայումս հնչակյան կուսակցությունը գործում է սփյուռքի հայկական կենտրոններում, ռամկավարների և մյուս առաջադիմական ու-

ժերի հետ միացած, պայքարում է աշխարհով մեկ ցրված հայ աշխատավորության արդար դատի համար, պաշտպանում Սովետական Միության և Սովետական Հայաստանի շահերը։

Դաշնակցություն

Դաշնակցությունը կուսակցությունը հանդես եկավ հայ բուրժուական ազգի զարգացման և նրա գաղափարական ազդեցության տարածման շրջանում։ Ազգային բուրժուազիայի տնտեսական-քաղաքական պահանջները կյանքի կոչեցին դաշնակցությանը։ Նա հանդես եկավ ամբողջ ազգի անունից և ժամանակի ընթացքում դարձավ հայ կյանքի ազդեցիկ քաղաքական կուսակցություններից մեկը։

Դաշնակցությունը կամ, ինչպես իրենք էին անվանում, «Հայ հեղափոխական դաշնակցությունը» հիմնվեց 1890 թվականին Թիֆլիսում։ Նրա հիմնադիրներն ու ղեկավարներն էին Քրիստափոր Միքայելյանը, Սիմոն Զավարյանը, Ստեփան Զորյանը (Ռոստոմ), Խաչատուր Մալումյանը (Ակնունի) և ուրիշներ։ Նրանց պաշտոնական օրգանն էր «Դրոշակ» թերթը, որը 1891 թվականից հրատարակվում էր Թիֆլիսում, հետո՝ արտասահմանում։

Դաշնակցության պարագլուխները, արմենականների ու հնչակյանների նման, հանդես եկան ազգային-ազատագրական դրոշով։ Նրանց գաղափարախոսության և պրակտիկ գործունեության հիմքում ընկած էր հայկական դատի լուծման, Արևմտյան Հայաստանի ազատագրության հարցը։

Պատահական չէ, որ 1890 թվականին դաշնակցականներն ու հնչակյանները փորձեցին միանալ, միացյալ կուսակցություն ստեղծել, հրատարակեցին իրենց մանիֆեստը, որտեղ ասված էր. «Հայ հեղափոխականների դաշնակցությունը սրանով դիմում է բոլոր հայերին և հրավիրում կանգնել մի դրոշակի տակ, նպատակ դնելով Թուրքաց Հայաստանի տնտեսական և քաղաքական ազատությունը»։ Մանիֆեստում կոչ էր արվում բոլոր հայերին՝ երիտասարդներին, ծերերին, կանանց, հոգևորականներին, հարուստներին միանալ՝ հանուն հայրենիքի ազատության։

Պայքարի ինչպիսի՞ ձևերի և մեթոդների էին դիմում դաշնակցականները։ Նրանք ցույցեր, արշավանքներ, զինված ելույթներ, տեռորիստական ակտեր էին կազմակերպում՝ ժողովրդին ոտքի հանելու, թուրքական կառավարությանն ու պաշտոնյաներին ահաբեկելու և, որ գլխավորն է, հարկադրելու մեծ տերություններին լուծել հայկական հարցը։

Դաշնակցականները, հնչակյանների նման, ձգտում էին ազատագրել Արևմտյան Հայաստանը, բայց շատ աղոտ, մակերեսային պատկերացում ունեին այդ երկրի ու ժողովրդի, հայ գյուղի ու գյուղացու վի-

ճակի մասին։ Եվ, առհասարակ, միշտ չէ, որ նրանք իրենց հաշիվ էին տալիս, թե տեղական ժողովրդի համար ինչ հետևանքներ կունենա իրենց արկածախնդրական գործունեությունը։

Դաշնակցականների ու հնչակյանների միավորման փորձերը ձախողվեցին. նրանք ոչ միայն ընդհանուր լեզու չգտան, իրենց ուժերը չմիավորեցին ընդհանուր թշնամու դեմ, այլև հաճախ խիստ թշնամական դիրք բռնեցին միմյանց նկատմամբ, պառակտեցին ժողովրդին և դրանով իսկ թուլացրին նրա ազատագրական պայքարը։

XIX դարի 90-ական թվականներին դաշնակցականներն իրենց ամբողջ գործունեությունը կենտրոնացրին Արևմտյան Հայաստանում, իրենց գրեթե բոլոր ուժերը նվիրեցին հայկական հարցին։ Նրանք գաղտնի կազմակերպություններ ստեղծեցին և հայդուկային գործունեություն ծավալեցին Արևմտյան Հայաստանի ու Թուրքիայի մի շարք վայրերում։

1890 թ. սեպտեմբերին Սարգիս Կուկունյանը, շուրջ 100 հոգուց կազմված իր զինված արշավախմբով, փորձում է անցնել Արևմտյան Հայաստան։ Սահմանազլխին նրանք հանդիպում են թուրքական և քրդական զինված ուժերի. կռիվներ, սպանություններ են տեղի ունենում։ Նրանց մի մասը փախչում է, մի մասը ընկնում ռուսական սահմանապահների ձեռքը։ Երևանում բանտարկվածներին դատում են, 26 հոգու աքսորում Սիբիր։ Ս. Կուկունյանն աքսորվում է Սախալին, որտեղ մընում է 15 տարի։

1896 թ. օգոստոսի 14-ին, ռումբերով և ատրճանակներով զինված մի խումբ հայեր Կ. Պոլսում մտնում են Օտոմանյան բանկը և պահանջում գործադրել 61-րդ հոդվածը, հակառակ դեպքում սպառնում են պայթեցնել բանկը։ Հայդուկների և թուրքական զորքերի միջև կռիվներ ու սպանություններ են լինում։ Դեսպանների միջամտությամբ նրանք թողնում են բանկը և անցնում արտասահման, առանց որևէ արդյունքի հասնելու։

Ուղիղ մեկ տարի հետո, 1897 թ. օգոստոսին, տեղի է ունենում մեծ աղմուկ հանած Խանասորի արշավանքը։ Արևելահայ, արևմտահայ և պարսկահայ մի քանի հարյուր ֆիդայիներ, Նիկոլ-Դումանի, Վարդանի, Իշխանի և ուրիշների ղեկավարությամբ, Պարսկաստանի վրայով անցնում են «ավետյաց երկիր»։ Խանասորի դաշտում նրանք կռվի են բռնվում քրդական ու թուրքական զինված ուժերի հետ. 19 սպանված և բազմաթիվ վիրավորներ տալով նահանջում, ցրվում են։

Դաշնակցականների հայդուկային գործողությունները շոշափելի արդյունք չտվեցին և չէին էլ կարող տալ։ Մեծ պետությունները հետամուտ էին իրենց շահերին, նրանց չէր մտահոգում հայ ժողովրդի տառապանքները։ Իսկ սուլթանական կառավարությունը, օգտագործելով այդ և նման առիթները, գործի էր դնում իր հայաջինջ քաղաքականությունը։ Անցնում էին տարիները, բայց 61-րդ հոդվածը մնում էր թղթի վրա։

Հայկական հարցում մի շարք անհաղթահարելի դժվարությունների և անհաջողությունների հանդիպելով, դաշնակցականների շարքերում, հնչակյանների նման, պառակտում ու քայքայում սկսվեց։ XIX դարի վերջում և XX դարի սկզբում Ռուսաստանում և Կովկասում աճող հեղափոխական իրադրությունը, արևելահայերի մեջ իրենց ազդեցությունը կորցնելու վտանգը հարկադրեցին նրանց իրենց գործունեությունը 1903 թվականից տեղափոխել Կովկաս։ 1905—1907 թթ. հեղափոխության տարիներին դաշնակցականներն իրենց էկլեկտիկ ծրագրից (որի մի մասը արտագրել էին նարոդովոլցիներից) առաջ քաշեցին սոցիալիզմի գաղափարը, իրենց բուրժուական դեմքը քողարկելու համար անգամ սոցիալիստական դիմակ հագան, 1907 թվականի համագումարում վերափոխեցին իրենց ծրագիրը և մտան Երկրորդ ինտերնացիոնալի մեջ։

Սոցիալիզմը դաշնակցություն կուսակցության համար մի ճող էր, մի միջոց աշխատավորական մասսաներին խաբելու, նրանց իր ազդեցության տակ գցելու համար։ Ականավոր մարքսիստ Ստ. Շահումյանը ժամանակին մերկացրեց դաշնակցականների այդ կեղծ սոցիալիստական մետամորֆոզը։ «Շարունակեցեք «սոցիալիստ» հայտարարել ձեզ որքան կամենում եք,— գրում է Ստ. Շահումյանը 1906 թվականին,— ձեր «սոցիալիստական» փետուրները չեն կարող ծածկել ոչ ոքից ձեր տգեղ բուրժուական կերպարանքը»[1]։

Դաշնակցականները պայքար մղելով բոլշևիկների և հնչակյանների դեմ, միշտ և ամենուրեք խոսում էին ամբողջ ազգի, ամբողջ ժողովրդի անունից, իսկ իրականում պաշտպանում էին ոչ թե հայ աշխատավորի, այլ հայ բուրժուազիայի շահերը։ Իրավացի է Ստ. Շահումյանը, երբ ասում է. «Կովկասի հայ բուրժուազիան բնականորեն «Դաշնակցություն» կուսակցության մեջ տեսնում էր իր հարազատ զավակին, իր լավագույն դաշնակցին, իր շահերի լավագույն արտահայտիչն և պաշտպանին»[2]։

Մի այլ տեղ, նույն 1906 թվականին, խոսելով դաշնակցության բուրժուական էության մասին, Շահումյանը գրում է. «Արդյո՞ք նա դադարել է բուրժուական, նացիոնալիստական և ռեակցիոն պարտիա լինելուց, ինչպիսին եղել է 15 տարվա ընթացքում։ Ավաղ, այդ պարտիայի գործունեությունը մեր աչքերի առաջ է, և նա ներկայումս թերևս ավելի բուրժուական է, թե՛ նացիոնալիստական, թե՛ ռեակցիոն, քան երբևիցէ»[3]։

Դաշնակցությունը որպես ազգային քաղաքական կուսակցություն երբեք իր բարձրության վրա չի եղել, չնայած զգալի թվով համոզված և մոլորված հետևորդներ է ունեցել։ Իր անհեռատես, հեղհեղուկ ու նա-

---

1 Ստ. Շահումյան, Երկեր, հ. 1, էջ 185։

2 Նույն տեղում։

3 Նույն տեղում, էջ 284։

ցիոնալիստական քաղաքականության հետևանքով նա մեծ վնասներ է հասցրել հայ ժողովրդի ազգային-ազատագրական և հեղափոխական պայքարին։

Հոկտեմբերյան սոցիալիստական հեղափոխության հաղթանակից հետո դաշնակցությունը բացահայտ թշնամական դիրք բռնեց Սովետական Միության և Սովետական Հայաստանի նկատմամբ։ Այժմ էլ սփյուռքի հայության մեջ նա շարունակում է իր հակասովետական գործունեությունը։

3. ՀԱՅԿԱԿԱՆ ԿՈՏՈՐԱԾՆԵՐԸ ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ

1894—1896 թվականների կոտորածները

Թուրքական սուլթանները միշտ և ամենուրեք շափազանց բիրտ ու դաժան քաղաքականություն էին վարում իրենց լծի տակ գտնվող ժողովուրդների, այդ թվում և հայերի նկատմամբ։ XIX դարի երկրորդ կեսին, հատկապես հայկական հարցի արծարծման և հայ ազատագրական պայքարի վերելքի շրջանում, սուլթանական կառավարության ճնշումներն ու հալածանքներն ավելի խստացան։

Սուլթան Աբդուլ Համիդը, որը գահ բարձրացավ 1876 թվականին, ծրագրել էր հայերի մասսայական կոտորածներ կազմակերպել և լիտիաբար հայտարարում էր, թե հայկական հարցը պետք է լուծել հայերին կոտորելով։ 1891 թվականին նրա նախաձեռնությամբ ստեղծվում են համիդիե կոչվող հատուկ զինված ջոկատներ, որոնց խնդիրը հայերին կոտորելն էր։

Սուլթան Համիդը շատ սահմանափակ, վախկոտ ու կասկածամիտ, բայց վերին աստիճանի խորամանկ, նենգ ու դաժան մարդ էր։ Իր ամբողջ գահակալության շրջանում նա երկու գիշեր միևնույն սենյակում չքնեց և մահվան սարսափից հանգիստ չունեցավ։ Կեղծիքի, կաշառքի ու ահաբեկման ճանապարհով նա հպատակ ազգերին լարում էր միմյանց դեմ, թշնամանք սերմանում նրանց մեջ։ Նա կարողացավ սեպ խրել հայերի և քրդերի միջև, ստեղծեց հայ-քրդական կնճիռը, իր կողմը գրավելով քուրդ ցեղապետերի ու դերեբեյների մի մասին, նրանց հանեց հայերի դեմ։ Համիդիեական ջոկատները համալրվում էին քրդական վերնախավի հենց այդ կարգի վաճառված, թալանի ու կողոպուտի հակված տարրերից։ Դժբախտաբար, ոչ հայ և ոչ էլ քուրդ գործիչները չկարողացան ընդհանուր լեզու գտնել և երկուսն էլ շատ տուժեցին սուլթանական կառավարության նենգ քաղաքականությունից։

Հայերի մասսայական կոտորածները Թուրքիայում սկսվեցին 1890-ական թվականներից, սուլթան Աբդուլ Համիդի օրոք։ Դրանց առաջին գոհը դարձավ հերոսական Սասունը։ Սասունը հայ ազատագրական պայքարի աչքի ընկնող կենտրոններից էր։ Հնչակյանները Մ. Տամադյանի և Մուրադի ղեկավարությամբ եռանդուն աշխատանք էին տարել Սասունի բնակչության մեջ, նրանց նախապատրաստել ազատագրական և ինքնապաշտպանական կռիվների համար։

1892 թվականին թուրքական կառավարությունը բանտարկում է Տամադյանին, հալածում ու հետապնդում սասունցիներին։ Նա, ինչպես միշտ, հրահրում և հայերի դեմ է հանում քուրդ ցեղապետներին։ Մուշի և Բիթլիսի կառավարիչների օգնությամբ քրդական զինված բանդաները հարձակումներ են գործում հայ գյուղերի վրա, կողոպտում ու կոտորում խաղաղ բնակիչներին։ Հայերը դիմում են ինքնապաշտպանության և մի շարք հաղթական կռիվներ մղում հակառակորդի դեմ։

1894 թ. օգոստոսին Սասունի վրա է արշավում թուրքական 4-րդ բանակը՝ Զեքի փաշայի հրամանատարությամբ։ Սասունցիք Մուրադի գլխավորությամբ հերոսական մարտեր են մղում թնդանոթներով զինված թուրքական զորքերի դեմ։ Սասունը դառնում է արյունահեղ մարտերի թատերաբեմ։ 1894 թ. օգոստոսի 14-ին, վաղ առավոտից մինչև ուշ երեկո, Սասնա քաջերը կենաց և մահու կռիվներ են մղում տասնապատիկ ավելի թուրքական զորքերի, համիդիեական ջոկատների ու քրդական բանդաների դեմ, բայց չեն կարողանում մինչև վերջ դիմանալ։ Ուժերն անհավասար էին, սասունցիները վատ էին զինված, թշնամին դաժան էր ու անողոք։

Ծանր կորուստներ տալով, հոգնած և ուժասպառ սասունցիք քաշվում են լեռներն ու անտառները։ Թուրքական զորքերն ու հրոսակախմբերը ներխուժում են հայկական գյուղերը, կողոպտում, հրի ու սրի մատնում, առևանգում ու անարգում կանանց ու աղջիկների։ Մուրադին բանտարկում և շղթայակապ ուղարկում են սուլթանին։ Ավելի քան 40 գյուղ ավերվում է, 10—15 հազար մարդ սրի քաշվում։ Սասունը վեր է ածվում ավերակույտի։

Սուլթանական կառավարությունն ամեն կերպ աշխատում էր թաքցնել Սասունի արյունահեղությունը, բայց այդ նրան չհաջողվեց։ Միջազգային հասարակական կարծիքի ճնշման տակ մեծ պետությունների Պոլսի դեսպանները պահանջեցին քննիչ հանձնաժողով ուղարկել Սասուն։ Պարզվեց, որ ահավոր ոճրագործություն է կատարվել։ Սուլթանն արդարանալու ուրիշ միջոց չգտնելով մեղքը գցեց հայերի ու քրդերի վրա։

1895 թ. մայիսի 11-ին Անգլիայի, Ֆրանսիայի և Ռուսաստանի Կոստանդնուպոլսի դեսպանները մշակում և թուրքական կառավարությանն են ներկայացնում հայկական նահանգներում (Կարին, Բաղեշ, Վան, Տիգրանակերտ, Խարբերդ և Սեբաստիա) բարենորոգումներ անցկացնելու ծրագիր։ Սուլթանական կառավարությունը երկար ձգձգումներից հետո հարկադրված ընդունեց մայիսյան ռեֆորմների ծրագիրը,

բայց այս անգամ ևս, օգտվելով մեծ տերությունների միջև եղած հակասություններից, չիրագործեց։ Ավելին. նա նոր ու ավելի կատաղի հարձակման անցավ հայ ժողովրդի դեմ, 1895—1896 թվականներին ընդհանուր և մասնայական կոտորածներ կազմակերպեց Արևմտյան Հայաստանում և Թուրքիայի հայաբնակ վայրերում։

Արյունարբու սուլթան Աբդուլ Համիդի հրամանով թուրքական զորքերը, համիդիե ջոկատները, քրդական ու չերքեզական հրոսակախմբերը ամենուրեք նետվեցին հայերի դեմ։ Ամենից առաջ նրանք կողոպտում, խլում էին հայերի ունեցվածքը, իսկ այնուհետև ամենավայրագ, բարբարոսական ձևերով կոտորում՝ առանց սեռի ու հասակի խտրության։ Թուրք և քուրդ ջարդարարները գազանաբար հոշոտում էին երեխաներին, կանանց, ծերերին։ Շատերին կախում էին ծառերից, կենդանի թաղում, հարյուրներով լցնում մարագներն ու եկեղեցիները, կրակ տալիս այրում։ Հայկական ջարդերն իրենց դաժանությամբ հիշեցնում էին թուրքական վանդալների կազմակերպած ազատասեր բուլղար ժողովրդի 1876 թվականի կոտորածները։

1895—1896 թթ. կոտորածներին զոհ գնացին Կ. Պոլսում 10 000 մարդ, Ուրֆայում՝ 7000, Կարինում՝ 5000, Շաբին-Գարահիսարում՝ 5000, Ակնում՝ 4000, Մալաթիայում՝ 3000, Արաբկիրում՝ 2800, Սեբաստիայում՝ 1500, Մարաշում՝ 1400, Տիգրանակերտում՝ 1200, Հալեպում՝ 1000, Կեսարիայում՝ 1000, Այնթափում՝ 1000 և այլն։ Արևմտյան Հայաստանում և Թուրքիայի հայաբնակ վայրերում գյուղ չմնաց, քաղաք չմնաց, որ կողոպուտի ու կոտորածի չենթարկվեր։ Որոշ դեպքերում ջարդերը կրկնվեցին երկու-երեք անգամ։

1890-ական թվականների կոտորածներին զոհ գնաց մոտ 300 հազար հայ։ Մոտ 100 հազար հոգի փախան և ապաստան գտան Կովկասում, Ռուսաստանում, Բուլղարիայում և այլուր։ Հարյուրավոր գյուղեր կողոպտվեցին, հրի ու սրի մատնվեցին։

Առաջադեմ մարդկությունն իր բողոքի ձայնը բարձրացրեց սուլթանական կառավարության գազանությունների դեմ, Աբդուլ Համիդին անվանեցին «մարդասպան», «մեծ ոճրագործ», «արյունոտ սուլթան»։ Անատոլ Ֆրանսը, Մաքսիմ Գորկին, Ժան Ժորեսը, Գեորգ Բրանդեսը, Էմիլ Զոլան, Բոլեն Ժեկմենը, ֆրանսիացի կին գրող Սևերինը և շատ ուրիշ ականավոր գործիչներ պաշտպան կանգնեցին հայ ժողովրդին ու նրա արդար դատին։ Կովկասում, Ռուսաստանում, Բուլղարիայում, Անգլիայում, Ամերիկայում և այլուր նյութական ու բարոյական օգնություն ցույց տվեցին հայ փախստականներին։

Սուլթան Համիդը ծանր հարված հասցրեց հայ ժողովրդին, բայց չկարողացավ ընկճել նրա ազատասիրական ոգին, վերացնել հայկական հարցը։

Հայերի ինքնապաշտպանությունը

Արևմտահայերի համար միանգամայն անակնկալ եղան սուլթանական կառավարության գործադրած մասսայական կոտորածները, թալանն ու կողոպուտը։ Մեծ պետությունների միջամտության վրա հույս դրած, նրանք սպասում էին, որ 61-րդ հոդվածը կգործադրվի, իրենց ծանր դրությունը որոշ չափով կթեթևանա։ Բայց երբ արդեն դանակը ոսկրին էր հասել, մի շարք տեղերում հայերը դիմեցին ինքնապաշտպանության։

Հերոսական ինքնապաշտպանության օրինակ հանդիսացան քաջարի զեյթունցիները։ 1895 թ. հոկտեմբերին նրանք, 75-ամյա Ղազար Շովրոյանի և հնչակյան հայտնի գործիչ Աղասու գլխավորությամբ, ապստամբության դրոշ բարձրացրին, զինաթափ արեցին տեղի թուրքական կայազորը, գրավեցին 600 հրացան, 2 հրանոթ, մեծ քանակությամբ ռազմամթերք ու սննդամթերք և նախապատրաստվեցին դիմագրավելու Զեյթունի վրա արշավող թուրքական զորքերին։

1895 թ. նոյեմբերին Զեյթուն են հասնում Ադանայից Այի բեյի, իսկ Մարաշից՝ Մուստաֆա Ռեմզի փաշայի բանակները։ Թուրքերը ծրագրել էին սրի քաշել ըմբոստ զեյթունցիներին, Սասունի պես ավերել Զեյթունը։ Թուրքական զորքերի թիվը հասնում էր 50—60 հազարի (ոմանք հաշվում են մոտ 110 հազար, որը չափազանցություն պետք է համարել)։ Զեյթունցիների կռվող ուժը հասնում էր 6000-ի։

Նոյեմբերի վերջերին և դեկտեմբերի սկզբներին թուրքական զորքերը մի քանի ուղղությամբ գրոհում են Զեյթունի վրա, բայց հաջողություն չեն ունենում։ Դեկտեմբերի 1-ին Ալի բեյը 30 հազար զորքով հարձակվում է Ֆոնուզ գյուղի վրա. հայերը փոքրաթիվ ուժերով երեք օր դիմադրում են թշնամուն և մեծ կորուստներ պատճառում նրան։ Դեկտեմբերի 13-ին Ռեմզի փաշայի բանակը հարձակվում է Սանդուխ լեռան ստորոտում դիրքեր գրաված 1500 հայերի վրա. 4 ժամ շարունակ կատաղի կռիվներ են տեղի ունենում. թուրքերը կորցնելով 400 մարդ, մեկ հրանոթ, նահանջում են։

Սուլթանը դժգոհ Ռեմզի փաշայից, նրան ազատում է, փոխարինը նշանակում է Էդհեմ փաշային։ Սակայն Հունաստանի այս դահիճն էլ չի կարողանում ընկճել հերոս զեյթունցիներին։

Ավելի քան երկու ամիս մի բուռ զեյթունցիներ դյուցազնական մարտեր մղեցին թուրքական տասնապատիկ ավելի զորքերի դեմ, ամեն տեսակի զրկանքներ կրեցին, բայց մնացին անընկճելի և գլուխ չխոնարհեցին թշնամու առաջ։

1896 թ. հունվարին մեծ պետությունների միջամտությամբ հաշտություն է կնքվում, որի համաձայն թուրքական զորքերը պետք է հեռանային Զեյթունից, ընդհանուր ներում պետք է տրվեր բոլորին, ապահովվեր զեյթունցիների կյանքն ու գույքը, հնչակյան ղեկավարները պետք

է հեռանային Թուրքիայից, Զեյթունում պետք է հաստատվեր եվրոպացի քրիստոնյա կառավարիչ, իսկ տեղական պաշտոնյաները պետք է լիներին զեյթունցիներից, զեյթունցիք պետք է վերադարձնեին գրաված զենքերն ու հրանոթները:

Զեյթունցիք, ինչպես 1862 թվականին, այս անգամ էլ քաջության և հերոսության օրինակ հանդիսացան. նրանք ծառս եղան թուրքական յաթաղանի դեմ, զենքով պաշտպանեցին իրենց կյանքն ու պատիվը:

Ինքնապաշտպանական կռիվներ տեղի ունեցան նաև Վանում: 1896 թ. հունիսի 3-ին, երբ համիդիական ջոկատներն ու քրդական հրոսակախմբերը հարձակվեցին Վանի վրա, նրանք հանդիպեցին կազմակերպված դիմադրության: Շուտով նրանց օգնության հասան հրանոթներով զինված թուրքական զորքերը:

Վանի պաշտպանները, արմենականների պարագլուխ Մկրտիչ Ավետիսյանի (Թերլեմեզյանի) գլխավորությամբ, դիրքեր և բարիկադներ են կառուցում, ծառերը կտրում, փողոցները փակում են հեծելազորի առաջ, ամբողջ կռվող ուժը բաժանում են 35 խմբի և անօրինակ քաջությամբ դիմադրում թշնամուն: Հունիսի 8-ին թուրքական զորքերը գերմանական Կրուպի սիստեմի մեծ հրանոթներով սկսում են ռմբակոծել և հրդեհել հայկական տները: Տեսնելով, որ հրդեհը տարածվում է և ամբողջ քաղաքը մոխրակույտերի պիտի վերածվի, հայերը հյուպատոսների միջնորդությամբ բանակցություններ են վարում Վանի փաշայի հետ և հանձն առնում դադարեցնել կռիվը ու հեռանալ քաղաքից: Թուրքերն ընդունում են այդ պայմանը և երբ 700 հոգի Մ. Ավետիսյանի ղեկավարությամբ փորձում են անցնել Պարսկաստան, ճանապարհին հարձակման են ենթարկվում և անխնա կոտորվում: 1896 թ. ամռանը Վանը և Վասպուրականը մատնվում են կողոպուտի ու կոտորածի: Ֆրանսիացի հեղինակ Էդուարդ Տրիոն նկարագրելով այդ դեպքերը, գրում է. «1896 թ. հունիսի 15—25-ը Վանը և շրջակա հարուստ դաշտի գյուղերը հրդեհվեցին... Կանայք առևանգվեցին, շարաշար բռնաբարվեցին, տասը տարեկանից բարձր բոլոր արու հայերը կոտորվեցին: Բոլոր եկեղեցիները, բոլոր վանքերը և մանավանդ Վարագա նշանավոր վանքը, կողոպտվեցին ու ավերվեցին: Ավելի քան 20 հազար հայեր կորան, չհաշված նրանց, որոնք մեռան թշվառությունից, որը հաջորդեց այդ դեպքերին և մինչև այժմ տիրող է»:

1895—1896 թվականների կոտորածների ժամանակ ինքնապաշտպանական կռիվներ տեղի ունեցան նաև Սուետիայում, Տիգրանակերտում և ուրիշ վայրերում: Սուլթանական բռնակալության դեմ ուղղված հայերի ինքնապաշտպանական կռիվները արդարացի, ազատագրական կռիվներ էին: Այդ անհավասար, ծանր ու դաժան պայքարում ծնվեցին ժողովրդական հերոսներ, ազատասեր ու հայրենասեր մարտիկներ Գևորգ

Զաուշը, Սերոբ Ագբյուրը, Մուրադը, Անդրանիկը, Քարամազը և շատ ուրիշներ:

Մեծ պետությունների դիրքը

Կապիտալիզմի պայմաններում փոքր ժողովուրդների իրավունքները միշտ էլ զոհաբերվել են մեծ տերությունների իմպերիալիստական շահերին: Դեռևս 1876 թվականին արևմտահայ նշանավոր դեմոկրատ Մաթևոս Մամուրյանը, ելնելով իր ժողովրդի վիճակից, գրում էր. «Մեծ պետությանց մեջ ազգերը դեռ իրենց նակատագրի տերը չեն և կենոռտ քաղաքականության մը ծուղակն ընկած են... Մեծ ծուկը պզտիկը կկլլե»:

Հայերն այն փոքր ժողովուրդներից էին, որոնք դժբախտություն ունեցան ընկնելու մեծ պետությունների ծուղակը: Բեռլինի պայմանագրի համաձայն Թուրքիան պետք է ռեֆորմներ անցկացներ Արևմտյան Հայաստանում. նա քաշքշում էր և չէր կատարում իր պարտավորությունները, որովհետև մեծ պետությունները վճռական քայլերի չէին դիմում:

1894—1896 թվականների հայերի մասսայական կոտորածների ժամանակ, երբ ավելի շատ զոհեր եղան, քան 1870—1871 թվականների ֆրանս-պրուսական պատերազմում, Եվրոպան լուռ ու մունջ մնաց:

Թուրքիան գաղութացնելու, Արևելքում իր ազդեցությունը տարածելու նպատակով Վիլհելմ II կայսրը սեղմեց սուլթան Համիդի արյունոտ ձեռքը, իրեն հայտարարեց Թուրքերի և բոլոր մահմեդականների պաշտպան: Ռայխստագում սոցիալիստ պատգամավորները քննադատեցին կառավարության վարքագիծը, Ա. Բեբելը և ուրիշներ պաշտպան կանգնեցին հայերին, բայց ոչ ոք չլսեց նրանց ձայնը:

Անգլիան, որի հարաբերություններն այդ շրջանում Թուրքիայի հետ այնքան էլ լավ չէին, հայկական հարցն օգտագործում էր Եգիպտոսի և առաջնահերթ նշանակություն ունեցող այլ հարցեր կարգավորելու համար, Գլադստոնը «հայասիրական» ճառերից հեռու չգնաց և գործնական ոչ մի քայլ չարեց հայկական կոտորածները կանխելու համար: Անգլիայի պրեմիեր-մինիստր լորդ Սոլսբերին հայերի դիմումներին պատասխանում էր. «Անգլիական նավերը չեն կարող բարձրանալ Հայաստանի լեռները»:

Ցարական կառավարությունը նույնպես մատը մատին չխփեց հայկական կոտորածները կանխելու համար: Ալեքսանդր III-ի ռեակցիոն կառավարության արտաքին գործերի մինիստր, մեծապետական շովինիստ Լոբանով-Ռոստովսկին հայտարարում էր. «Հայաստանը մեզ հարկավոր է առանց հայերի»:

Ֆրանսիական կառավարությունը ելնելով Անգլիայի հետ, հատկապես Եգիպտոսի հարցում, ունեցած հակասություններից, պաշտպանում է Թուրքիայի այսպես կոչված «ամբողջականության» գաղափարը: Եվ

երբ ֆրանսիական սոցիալիստները պառլամենտում առաջարկեցին քննության առնել հայկական հարցը, դատապարտեցին սուլթանի ոճրագործությունները, նրանց առաջարկը մերժվեց։ Ֆրանսիայի արտաքին գործերի մինիստր Գ. Հանոտոն իր ջերմեռանդ թրքասիրության համար սուլթանից շքանշան ստացավ և «Հանոտո փաշա» ծաղրական անունը վաստակեց։

Խոսելով հայկական կոտորածների մասին, էդ. Տրիոն ասում է. «Ապագա մարդկությունը պիտի զարմանա, թե ինչպես Եվրոպան թույլ տվեց, որ նման ոճրագործություն կատարվի»։ Հարկավ, ոչ միայն զարմանալի, այլև զայրացուցիչ է, որ հայկական դատի «պաշտպան» մեծ տերությունները, իրենց իմպերիալիստական շահերից ելնելով, հանդուրժում էին հայերի մասսայական կոտորածները, անմեղ մանուկների, կանանց, ծերերի վայրագ ու բարբարոսական հոշոտումները, Թուրքիայում հայերի ցեղասպանության նախաքայլերը։

Եթե մեծ տերություններն ուզենային, կարող էին կանխել հայերի մասսայական կոտորածները։ Նրանք, անխտիր բոլորը, հայկական հարցն օգտագործում էին իրենց գաղութարար նպատակների համար։ Հայ ժողովրդի ազատության ու անկախության գաղափարը ինչպես թուրքական կառավարության, այնպես էլ նրանց համար խորթ էր ու անընդունելի։ Իրավացի է Ռ. Պատկանյանը, որը, հիասթափված Բեռլինի վեհաժողովից, 1879 թ. գրում է՝

Գիտեմ, խեղճ հային չեն տալ Հայաստան,
Մեզ ազգ կազմելու ամենքն են խափան։

XIII ԳԼՈՒԽ

ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ՍԿԻԶԲԸ։ ՄԱՐԲՍԻԶՄԻ ՏԱՐԱԾՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

1. ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ԱՌԱՋԻՆ ՔԱՅԼԵՐԸ

Արևելյան Հայաստանում և ամբողջ Անդրկովկասում բանվոր դասակարգը ձևավորվում է XIX դարի 70—80-ական թվականներին։ Այդ տարիներին էլ հենց սկիզբ է առնում Անդրկովկասի բանվորական շարժումը։ Մինչ այդ եղել էին բանվորական առանձին ելույթներ, բայց դրանք մասնակի ելույթներ էին և էական դեր չեն կատարել։

Բանվորական շարժումը, ինչպես ամենուրեք, Անդրկովկասում ևս

բանվորների ու կապիտալիստների միջև մղվող դասակարգային պայքար էր։ Բանվոր դասակարգի և բանվորական շարժման հանդես գալով դասակարգային պայքարը թևակոխում էր իր զարգացման նոր փուլը։

Բանվորական շարժումն Անդրկովկասում ինտերնացիոնալ բնույթ ուներ։ Անդրկովկասի ժողովուրդների պատմա-աշխարհագրական և սոցիալ-տնտեսական համատեղ կյանքի պայմաններում այլ կերպ էլ լինել չէր կարող։ Հայ, վրացի, ադրբեջանցի բանվորներն ապրում ու աշխատում էին միասին, միևնույն քաղաքում, միևնույն գործարանում կամ հանքահորում, իրար հետ կիսում իրենց ուրախությունն ու տրխրությունը։ Նրանք ազգակից չէին, բայց բախտակից էին, աշխատանքի ու վաստակի ընկեր, որը մարդկանց ոչ միայն մոտեցնում, այլև մտերմացնում, հարազատ է դարձնում։

Հայաստանի և ողջ Անդրկովկասի բանվորական շարժումն իր սկզբնավորման օրից սերտորեն կապված էր Ռուսաստանի բանվորական շարժման հետ։ Ռուսական առաջավոր, հեղափոխական պայքարի մեծ փորձ ունեցող պրոլետարիատը խոշոր դեր է կատարել ինչպես Ռուսաստանի բոլոր ծայրամասերի, այնպես էլ Անդրկովկասի տարբեր ազգության պատկանող բանվորների ինտերնացիոնալ համախմբման, նրանց դասակարգային գիտակցության բարձրացման գործում։ Հայ, վրացի, ադրբեջանցի բանվորների առաջին ուսուցիչները ռուս առաջավոր բանվորներն էին, Մոսկվայի և Պետերբուրգի հեղափոխական պրոլետարիատը։

Ռուսաստանի արդյունաբերական կենտրոններում սկսված բանվորական շարժումները, բանվորական առանձին կազմակերպությունները մեծ ազդեցություն են ունենում նաև Անդրկովկասի բանվոր դասակարգի վրա։ Արևմտյան Եվրոպայի բանվորական շարժումները նույնպես անհետևանք չէին անցնում նրանց համար։ 1870—1880 թվականների Անդրկովկասի բանվորական կենտրոններում՝ Բաքվում, Բաթումում, Թիֆլիսում տեղի են ունենում մի շարք գործադուլներ։

1872 թ. Թիֆլիսում գործադուլ են անում քաղաքի ամենախոշոր արդյունաբերական ձեռնարկության՝ Միրզոյանի տեքստիլ ֆաբրիկայի ավելի քան 600 բանվորները, որոնց ճնշող մեծամասնությունը հայեր էին։ 1881 թ. գարնանը Բաքվում տեղի է ունենում ծխախոտի ֆաբրիկայի բանվորների գործադուլը, որոնց 90 տոկոսը հայեր էին։ 1882 թ. գործադուլ են անում Բաթումի բանվորները, որտեղ հայերը նույնպես մեծ թիվ էին կազմում։ 1889 թ. Թիֆլիսում տեղի է ունենում երկաթուղային գլխավոր արհեստանոցների մի քանի հազար վրացի, հայ, ադրբեջանցի, ռուս, ուկրաինացի և այլ ազգության պատկանող բանվործառայողների գործադուլը։ Դա Անդրկովկասի բանվորների առաջին խոշոր ինտերնացիոնալ ելույթն էր, որը մեծ ազդեցություն ունեցավ ամ-

բողջ երկրամասի հեղափոխական շարժման հետագա ընթացքի վրա։

Բանվորական այս առաջին գործադուլները գերազանցապես տնտեսական բնույթ էին կրում։ Դրանք գործարանատերերի դաժան շահագործման ու ճնշման դեմ ուղղված տակավին անկազմակերպ, տարերային ելույթներ էին։

Անդրկովկասի ֆաբրիկա-գործարանային կյանքին լավատեղյակ Ստեփան Գուլիշամբարովի վկայությամբ բանվորների դրությունը շատ ծանր էր, նրանք աշխատում էին օրական 12 ժամ, առավոտից մինչև երեկո և ստանում չնչին աշխատավարձ։ Բանվորներն ապրում էին կենցաղային անմխիթար պայմաններում, կեղտի ու մրի մեջ, մութ ու խոնավ նկուղներում ու հանրակացարաններում, զուրկ էին բժշկական օգնությունից։

Մեր նշանավոր գրող Ալեքսանդր Շիրվանզադեն 1881 թվականին «Մշակ» թերթում, խոսելով Բաքվի բանվորների աշխատանքային և բնակարանային ծանր պայմանների և նրանց ստացած ցածր աշխատավարձի մասին, պահանջում էր բարելավել բանվորների դրությունը։

«Ամենայն տեղ,— ասում է նա,— ամենայն հասարակությունների մեջ մշակների տնտեսական դրության բարվոքման հարցը վաղուց արդեն մտել է հասարակական ամենակարևոր հարցերի շրջանը»։

Այնուհետև, նկարագրելով Անդրկովկասի զանազան անկյուններից «օրական ապրուստ հայթայթելու նպատակով իրենց ընտանիքը և զավակները թողած» և Բաքու եկած բանվորների վիճակը, Շիրվանզադեն գրում է. «Ահա այդ մառախլապատ երկնքի տակ է անցկացնում իր տարիները Բաքու գաղթող մշակների մեծամասնությունը խմբերով, տեղավորված այս ու այն գործարանում, և հենց այստեղ պիտի ծանոթանաս, սիրելի ընթերցող, նրա վիճակի հետ, որ իմանաս, թե որքան դառն և անտանելի է նա»։

Ռուսաստանի և Անդրկովկասի արդյունաբերական կենտրոններում սկսված բանվորական շարժման ալիքը հասնում է նաև Հայաստան։ Տնտեսական բնույթի ելույթներ ու գործադուլներ են տեղի ունենում Երևանում, Ալեքսանդրապոլում, Նախիջևանում, Կողբում, Ալավերդում, Ղափանում։ Դժգոհություններն ու բողոքներն առանձնապես սուր կերպարանք են ընդունում Թիֆլիս—Երևան երկաթգծի շինարարության վրա աշխատող բանվորների մեջ։

1895 թվականին, երբ սկսվեց Թիֆլիս—Երևան երկաթուղու շինարարությունը, կարճ ժամանակամիջոցում այդտեղ կենտրոնացան տարբեր ազգությունների պատկանող հազարավոր աշխատողներ՝ սեզոնային ու որակյալ բանվորներ, տեխնիկներ, ինժեներներ, ծառայողներ և այլն։ 1896 թվականին «Մշակ»-ի թղթակիցը երկաթգծի շինարարության վրա աշխատող բանվորների թիվը հաշվում է մոտ 10 հազար։

Մոտակա ու հեռավոր վայրերից երկաթգծի շինարարության վրա աշխատելու էին եկել հայեր, վրացիներ, ադրբեջանցիներ, ռուսներ, ուկրաինացիներ, հույներ, պարսիկներ, լեհեր, իտալացիներ և ուրիշներ։ Հայաստանն առաջին անգամ էր տեսնում բազմազգ ու բազմալեզու աշխատավորների նման համախմբում։ Նրանց մոտեցնում, միմյանց հետ կապում էին կյանքի ու աշխատանքի միատեսակ պայմանները։

Բանվորների մեծ մասն աշխատում էր օրավարձով, փոքր մասը՝ գործավարձով։ Աշխատանքը կատարվում էր կապալային սիստեմով։ Կապալառուները բառի բուն իմաստով կեղեքում էին մանավանդ գյուղերից եկած անփորձ և անգիտակից բանվորներին։ Աշխատանքի չափումներն ու հաշվումները նրանք այնպես էին կատարում, որ բանվորի 50—70 կոպեկ օրավարձի առնվազն $^1/_3$-ը հափշտակում էին։ Հազարավոր բանվորներ ապրում էին գետնախորշերում, բարաքներում, վրանների տակ, բացօթյա, կեղտի ու մրի մեջ, իրար վրա թափված։ Ականատեսները շատ մռայլ գույներով են նկարագրում նրանց այդ վիճակը. «Բանվորական հանրակացարանները,— գրում է ականատես հեղինակը,— մեծ մասամբ լուսամուտից զուրկ, մեկ դռնով, երբեմն էլ առանց դռան, մի կլոր անցքով միայն մեծ գետնախորշեր էին, 6 արշին[1] լայնություն, 7 արշին երկարություն և երկուսուկես արշին բարձրություն ունեցող այդ գետնախորշերում տեղավորված են 10—12 մարդ...

Բանվորական կացարաններում հիգիենա չպահպանելու հետևանքով, ինչպես և աշխատանքի ծանրությունից ու այլ պատճառներով բանվորների մեջ չափազանց շատ են մահացությունները. ձմռան ընթացքում շիրիմներ են գոյացել Ախթալայում, Ղարաքիլիսայում, Ջաջուռի մոտ և այլ վայրերում՝ շինարարության երկարությամբ»։

Բանվորների այդօրինակ ծանր պայմանները, դաժան ճնշումներն ու շահագործումը, բնական է, նրանց մեջ պետք է առաջ բերեին դժգոհություններ ու բողոքներ։ Ռուսաստանից և Անդրկովկասի երկաթուղային կառույցներից եկած փորձված գիտակից բանվորների գլխավորությամբ շուտով այստեղ ևս սկիզբ է առնում բանվորական շարժումը՝ բողոքի ցույցեր, հուզումներ ու գործադուլներ։

Մեզ հայտնի առաջին գործադուլը տեղի է ունեցել Ախթալայում, 1896 թ. ապրիլի 8-ին։ Այդ օրը 200 բանվոր, որոնք երկար ժամանակ աշխատավարձ չէին ստացել, դադարեցնում են աշխատանքը և Ախթալայի տեղամասի կապալառու Բելոբորոդովից պահանջում վճարել իրենց հասանելիքը։ Երբ նա պատասխանում է, թե Թիֆլիսից փող չի ստացել, բանվորներն առաջարկում են միասին գնալ Թիֆլիս և հաշիվները փա-

[1] Արշինը հավասար է մոտ 71 սանտիմետրի։

կել։ Բանվորների գործադուլի մասին անմիջապես հայտնում են Բորչալուի գավառապետին։ Նա Ախթալա է ուղարկում ոստիկանական պրիստավին մի խումբ ժանդարմների հետ։ Մի քանի օր գրությունը «խաղաղվում» է։

Ապրիլի 15-ին 400 բանվոր հավաքվում են կապալառուի գրասենյակի առաջ և պահանջում վճարել իրենց աշխատավարձը։ Ժանդարմները փորձում են ցրել բանվորներին, բայց չեն կարողանում. տեղի են ունենում ընդհարումներ, կրակոցներ, բանտարկվում ու դատի են տրվում 8 հոգի։

1896 թ. օգոստոսին բանվորական ելույթներ տեղի ունեցան նաև Ղարաքիլիսայի, իսկ դեկտեմբերին՝ Զամալուի շինարարական տեղամասում։ Այստեղ էլ նրանց պայքարի առանցքը աշխատավարձի հարցն էր։ Երկաթուղային վարչությունը փորձեց ոստիկանության և կազակների օգնությամբ խեղդել բանվորների բողոքը, բայց այդ նրան չհաջողվեց։ Զայրացած բանվորները գործիքներով ու քարերով զինված հարձակվում են կապալառու Դեմոսիի գրասենյակի վրա, ջարդ ու փշուր անում ապակիները։ Կապալառուն իր պահակների ու ոստիկանների օգնությամբ փրկվում է. նրանք կրակում են բանվորների վրա և վիրավորում 3 հոգու։

1897 թ. հոկտեմբերին բանվորական հուզումներ տեղի ունեցան նաև Կարսում, երկաթգծի շինարարության հինգերորդ տեղամասում։ Այստեղ պայքարն ավելի սուր և տևական բնույթ ստացավ։ Հոկտեմբերի 24-ին 250 բանվոր, թողնելով աշխատանքը, հավաքվում են շինարարության գրասենյակի բակը և պահանջում վճարել իրենց աշխատավարձը։ Կարսի զինվորական նահանգապետի կարգադրությամբ բանվորների ելույթը ցրելու համար գալիս է ոստիկանապետը, բայց բանվորները նրան չեն ենթարկվում։ Տեղի են ունենում ընդհարումներ, ոստիկանները սրերը մերկացրած հարձակվում են բանվորների վրա, ցրում նրանց, բանտարկում ղեկավարներին։ Բանվորները չեն ընկճվում. մի քանի հարյուր հոգով գնում են Թիֆլիս, բողոքում Կովկասի կառավարչապետին և կարողանում մասամբ բավարարել իրենց պահանջները։ Այս դեպքերը արձագանք են գտնում նաև ժամանակի թերթերում։

Հայաստանի տերիտորիայում տեղի ունեցած բանվորական առաջին այս ելույթները նույնպես տնտեսական բնույթ էին կրում և ճնշվեցին ցարական ոստիկանության կողմից։ Դրանք բանվորական շարժման առաջին ծիլերն էին, դեռևս թույլ, անկազմակերպ ու տարերային, բայց անհետևանք չանցան և կարևոր նշանակություն ունեցան ոչ միայն բանվորների, այլև տեղի գյուղացիության դասակարգային պայքարի հետագա զարգացման համար։

2. ՄԱՐՔՍԻԶՄԻ ՏԱՐԱԾՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Մարքսիստական գաղափարների մուտքը հայ իրականության մեջ

Մարքսիստական գաղափարներն առաջին անգամ հայ իրականության մեջ մուտք են գործել դեռևս 1860—1870-ական թվականներին։ Մարքսիզմի հիմնադիրների ու նրանց հետևորդների գործի և գաղափարների մասին այս ու այն չափով գրվել ու խոսվել է ինչպես արևմտահայ, այնպես էլ արևելահայ պարբերական մամուլում և գրականության մեջ։

Արևմտահայ նշանավոր դեմոկրատներ Ստ. Ոսկանի և Մ. Մամուրյանի աշխատություններից երևում է, որ նրանք ծանոթ են եղել մարքսիստական գրականությանը, Առաջին ինտերնացիոնալի, Փարիզի կոմունայի գործին ու գաղափարներին։ Ստ. Ոսկանը Սորբոնի համալսարանում սովորելու տարիներին ակտիվ մասնակցություն էր ունեցել Փարիզի հեղափոխական շարժումներին։ 1855—1865 թվականներին Փարիզում նա հրատարակում էր առաջադիմական ուղղության «Արևելք» և «Արևմուտք» թերթերը, քաջ ծանոթ էր Եվրոպայի հասարակաքաղաքական կյանքին, մտավոր ու քաղաքական ուղղություններին։ Որոշ տվյալներ կան ենթադրելու, որ նա ոչ միայն ծանոթ է եղել, այլև համակրել է Մարքսի, Էնգելսի և նրանց կողմնակիցների պաշտպանած հայացքներին։

Մ. Մամուրյանը Զմյուռնիայում իր խմբագրությամբ հրատարակվող «Արևելյան մամուլ» հանդեսում խոսում է Առաջին ինտերնացիոնալի հիմնադրման, նրա կանոնադրության, գաղափարների ու գործունեության մասին։ Կ. Մարքսին նա համարում է Առաջին ինտերնացիոնալի «հիմնադիր և գլխավոր»։ Խոսելով Փարիզի կոմունայի մասին, «Արևելյան մամուլ»-ը գրվատում է կոմունարների հերոսությունը։

Առաջին ինտերնացիոնալի հիմնադրման, նրա գործունեության և պաշտպանած սկզբունքների մասին ավելի հանգամանորեն խոսվում է «Մշակ» թերթի 1872 թ. մարտ-ապրիլի համարներում տպագրված «Եվրոպայի աշխատողների ընկերությունը» հոդվածաշարում։ Հեղինակը համակրանքով է խոսում Ինտերնացիոնալի գործի ու գաղափարների, մշակների շահերի պաշտպանության և բանվորական շարժման մասին։ Նա մեջբերումներ է կատարում Ինտերնացիոնալի ժամանակավոր կանոնադրությունից, որը կազմել էր Կ. Մարքսը։ Ինտերնացիոնալի նպատակն է, ասված է այդ հոդվածում, «Ազատել մշակներին դրամագլխի հպատակությունից», «Կազմել մի ընդհանրական դաշնակցություն Եվրոպայի երկրների մշակներից դրամագլխի դեմ պատերազմելու համար»։

Խոսելով Ինտերնացիոնալի կատարած դերի մասին, հեղինակը

գրում է. «Ինչ որ Եվրոպայի մշակներն արին Լոնդոնի համաշխարհային հանդեսից հետո, ոչ այլ ինչ էր, եթե ոչ մի փոքրիկ սերմ այն ընկերության, որ այժմ այնպիսի անհանգստություն է պատճառում եվրոպական կառավարություններին և նյութական ապահովության տեր մարդկանց»։ Հոդվածագիրը համակրանքով է խոսում բանվորական շարժման ճանաչված առաջնորդների՝ Ա. Բեբելի, Վ. Լիբկնեխտի և ուրիշների մասին։

Առաջադիմական ուղղության պատկանող «Մուրճ» հանդեսի խմբագիր Ավ. Արասխանյանցը, որը «Կապիտալ»-ի առաջին հայ թարգմանիչն էր, 1895 թվականին Ֆ. Էնգելսի մահվան կապակցությամբ տպագրում է նրա կենսագրությունը, բարձր գնահատում նրա գործունեությունը։

Նման հոդվածներ և թղթակցություններ տպագրվել են նաև հայկական այլ թերթերում ու հանդեսներում, որոնց ուղղությունը բնավ մարքսիստական չէր, և նման առանձին հոդվածներով չէ, որ պետք է որոշել նրանց ուղղությունը։

Մարքսիստական գրականության հայերեն թարգմանությունները

Մարքսիստական գրականության հայերեն թարգմանության առաջին փորձերը կատարվել են 1880-ական թվականներին։ Դրանք վերաբերում են առաջին հերթին հռչակավոր «Կոմունիստական մանիֆեստ»-ին՝ Կ. Մարքսի և Ֆ. Էնգելսի հանրածանոթ աշխատությանը։

Առաջին հայ մարքսիստներից մեկը՝ Գևորգ Ղարաջյանը, 1887 թվականին ժնևում ֆրանսերենից, ռուսերենի հետ համեմատելով, թարգմանում է «Կոմունիստական մանիֆեստ»-ը և ուղարկում Մ. Փորթուգալյանին՝ «Արմենիա»-ում տպագրելու համար։ Բայց այդ չի տպագրվում, ձեռագիրն էլ կորչում է։ Գ. Ղարաջյանն այդ տարիներին ժնևում կապեր և հանդիպումներ է ունեցել Գ. Պլեխանովի, Վ. Զասուլիչի և այլ մարքսիստների հետ, գտնվել նրանց գաղափարական ազդեցության տակ։

Նույն 1887 թվականին, ինչպես Ֆ. Էնգելսն է գրում «Կոմունիստական մանիֆեստ»-ի առաջաբանում, Կ. Պոլսում մի հրատարակչի առաջարկվում է տպագրել «Մանիֆեստ»-ի հայերեն թարգմանությունը, բայց նա հրաժարվում է Մարքսի անունով տպագրել, խորհուրդ է տալիս թարգմանչին իր անունով հրատարակել. վերջինս հրաժարվում է, աշխատությունը չի տպագրվում։

«Կոմունիստական մանիֆեստ»-ի գերմաներենից հայերեն թարգմանությունն 1894 թվականին Շտուտգարդում կատարում է կովկասահայ ուսանող Հովսեփ Աթաբեկյանցը (1870—1916)։ Գերմանիայում նա անձնական և գաղափարական կապեր է հաստատում Կ. Կաուցկու, Պարվուսի, Կ. Յետկինի և ուրիշների հետ, ոգեշնչվում մարքսիստական

գաղափարներով և ձեռնամուխ լինում «Կոմունիստական մանիֆեստ»-ի հայերեն թարգմանությանը։ Մինչ այդ նա Մ. Հովհաննիսյանի հետ թարգմանել էր Ֆ. Էնգելսի «Սոցիալիզմի զարգացումը ուտոպիայից դեպի գիտություն» աշխատությունը, որը տպագրվել էր 1894 թվականին ժնևում։

1894 թ. նոյեմբերի 1-ին Հ. Աթաբեկյանցը մի ընդարձակ նամակ է ուղարկում Ֆ. Էնգելսին և խնդրում «Մանիֆեստ»-ի հայերեն թարգմանության համար առաջաբան գրել։

Ֆ. Էնգելսը, ստանալով Հ. Աթաբեկյանցի նամակը և իր գրքի հայերեն հրատարակությունը, շնորհակալություն է հայտնում, բայց նրա խնդիրը չի կատարում հետևյալ պատճառաբանությամբ. «Ցավոք սրտի ես ի վիճակի չեմ կատարելու Ձեր խնդիրը... ինձ համար դժվար է գրել մի բան, որը պետք է հրատարակվի մի լեզվով, որը ես չեմ հասկանում։ Բացի այդ, որքան էլ ես շնորհակալ լինեմ Հայաստանի դրության մասին Ձեր հետաքրքիր նկարագրության համար, այնուամենայնիվ, ճիշտ և իրավացի չէր լինի կարծիք հայտնել մի խնդրի մասին, որը ես անձամբ չեմ ուսումնասիրել։ Առավել ևս, երբ ներկա դեպքում խոսքը վերաբերում է մի ճնշված ժողովրդի, որը դժբախտություն ունի գտնվելու Թուրքական բռնապետության Սցիլլայի և ռուսական բռնակալության Խարիբդայի արանքում, երբ ռուսական ցարիզմը շարաշահում է ազատագրողի դերը, իսկ ռուսական ստորաքարշ մամուլը առիթը բաց չի թողնում հայերի ազատագրության օգտին ասված ամեն մի համակրական խոսք օգտագործել հօգուտ նվաճողական ցարիզմի»։

Նամակի վերջում Ֆ. Էնգելսն ասում է. «Իմ անհատական կարծիքն այն է, որ Հայաստանի ազատագրությունը Թուրքերից, ինչպես և ռուսներից, հնարավոր կլինի այն ժամանակ, երբ կտապալվի ռուսական ցարիզմը» (К. Маркс и Ф. Энгельс, Соч., т. XXIX, с. 341)։

«Կոմունիստական մանիֆեստ»-ի Հ. Աթաբեկյանցի թարգմանությունը նույնպես չտպագրվեց, բայց նրա ձեռագիրն օգտագործվեց հետագա թարգմանությունների համար։

1894 թվականին Աթենքում հրատարկվող հնչակյան «Գաղափար» հանդեսում տպագրվում են «Մանիֆեստ»-ի առաջին և երկրորդ գլուխները։ Թարգմանությունը ֆրանսերենից կատարել էին Մարո և Ավետիս Նազարբեկյանները։ Դա «Կոմունիստական մանիֆեստ»-ի առաջին տպագրությունն էր հայերեն լեզվով։ Նախատեսված էր հանդեսում տպագրել նաև «Մանիֆեստ»-ի մյուս գլուխները և հրատարակել առանձին գրքով, բայց թե մեկը և թե մյուսը մնացին անկատար։ Դրանից մեկ տարի առաջ 1893 թվականին Աթենքում առանձին գրքույկով հայերեն թարգմանությամբ տպագրվել է Կ. Մարքսի «Վարձու աշխատանք և կապիտալ» աշխատության «Ի՞նչ է աշխատավարձը» գլուխը։

1901—1902 թվականներին Թիֆլիսում և Ժնևում «Կոմունիստական մանիֆեստ»-ի հայերեն թարգմանության նոր փորձեր են կատարվում, բայց մնում են չհրապարակված։

«Կոմունիստական մանիֆեստ»-ի հայերեն առաջին լրիվ հրատարակությունը իրագործվում է 1904 թվականին Ժնևում։

Այդ թարգմանությունը գերմաներենից կատարել էին Ստ. Շահումյանը և Մ. Մանուչարյանը։ Դա կոմունիզմի երգ երգոցի ամենահարազատ և հաջողված թարգմանությունն էր, որը կատարվեց Վ. Ի. Լենինի նախաձեռնությամբ Ժնևում ՌՍԴԲԿ կենտրոնական կոմիտեին կից ստեղծված հայերեն և վրացերեն լեզուներով սոցիալ-դեմոկրատական գրականություն հրատարակող հանձնաժողովի ջանքերով։

Բացի «Կոմունիստական մանիֆեստ»-ից, հանձնաժողովը հայերեն և վրացերեն լեզուներով հրատարակում է նաև Կ. Մարքսի «Վարձու աշխատանք և կապիտալ», Ֆ. Էնգելսի «Ընտանիքի, մասնավոր սեփականության ու պետության ծագումը», Գեդի ու Լաֆարգի «Ի՞նչ են ուզում սոցիալ-դեմոկրատները», Գ. Վ. Պլեխանովի «Աշխատանքի ազատագրության խմբակը», Դիկշտեյնի «Ով ինչով է ապրում» և մի շարք այլ աշխատություններ։

Ռուսաստանում գործող հայ մարքսիստները

1880—1890-ական թվականներին մարքսիզմը հայ իրականության մեջ տարածվում է նաև Ռուսաստանից Անդրկովկաս աքսորված ռուս մարքսիստների և Ռուսաստանում կրթություն ստացած հայ հեղափոխականների միջոցով։ Ռուսաստանի առաջին աշքի ընկնող հայ մարքսիստ-հեղափոխականներից էր Կազանի համալսարանի ուսանող Իսահակ Լալայանցը (1870—1933)։ 1888—1889 թվականներին նա Կազանում Ն. Ֆեդոսեևի մարքսիստական խմբակի անդամ էր։ 1889 թվականին նա հեռացվում է համալսարանից, 1893-ին աքսորվում Սամարա, որտեղ մոտիկ կապեր է հաստատում Վ. Ի. Լենինի և Ա. Վ. Պոպովի հետ, գաղտնի հեղափոխական աշխատանք կատարում։ «Ես սերտորեն մոտեցա երկուսի հետ էլ,— գրում է Լալայանցը իր հուշերում։ Շուտով քաղաքում հասարակությունը մեզ այլ կերպ չէր անվանում, քան եռյակ... Մեր եռյակը կամ ինչպես ոմանք անվանում էին «խմբակը» իրոք միաձույլ էր»։

Ի. Լալայանցը կրթված մարքսիստ էր։ Ընդհատակյա հեղափոխական աշխատանքի համար նա քանիցս բանտարկվում է և աքսորվում Սիբիր։ Աքսորավայրից նա փախչում է արտասահման և ակտիվ մասնակցություն ունենում լենինյան «Իսկրա»-ի հրատարակությանը։

Ականավոր հայ մարքսիստներից էր նաև Բոգդան Կնունյանցը (1878—1911)։ Նա Վ. Ի. Լենինի հիմնադրած Պետերբուրգի «Բանվոր դասակարգի ազատագրության պայքարի միության» անդամ էր։ Պայքարի միության անդամ են եղել նաև Ա. Զուրաբյանը, Ս. Ավետիսյանը, Հ. Մելիք-Հովսեփյանը։ 1896 թ. Բ. Կնունյանցը ընդունվում է Պետերբուրգի տեխնոլոգիական ինստիտուտը և ղեկավար մասնակցություն ունենում ուսանողական հեղափոխական շարժումներին։ 1901 թ. սկզբներին նա Պետերբուրգից աքսորվում է Բաքու, որտեղ և շարունակում է իր հեղափոխական գործունեությունը, դառնում Անդրկովկասի բոլշևիկյան կազմակերպությունների աշքի ընկնող ղեկավարներից մեկը։

1890-ական թվականներին Անդրկովկասում մարքսիստական պրոպագանդա էին մղում և ընդհատակյա հեղափոխական աշխատանք կատարում Ռուսաստանից եկած հեղափոխական սոցիալ-դեմոկրատներ Ի. Լուզինը, Գ. Ֆրանչեսկին, Վ. Ռոձևիչ-Բելևիչը, Ն. Պոլետաևը, Ի. Կոգանը, Ն. Կոզերենկոն, Մ. Ալիլուևը և ուրիշներ։ Տեղի հեղափոխական գործիչների հետ միասին նրանք համախմբում էին հայ, վրացի, ադրբեջանցի առաջավոր բանվորներին ու սովորող երիտասարդներին, խմբակներ հիմնում, մարքսիստական գրականություն ուսումնասիրում։

XIX դարի վերջերին և XX դարի սկզբներին Կ. Մարքսի, Ֆ. Էնգելսի, Վ. Ի. Լենինի, Գ. Պլեխանովի և այլ ականավոր մարքսիստների աշխատությունների հայերեն թարգմանությունները, հայ պարբերական մամուլում տպագրված Ստ. Շահումյանի, Բ. Կնունյանցի, Գ. Զարաջյանի, Ա. Զուրաբյանի և ուրիշների ինքնուրույն մարքսիստական հոդվածները խոշոր նշանակություն ունեցան հայ իրականության մեջ մարքսիզմի տարածման համար։ Ինչպես Ռուսաստանից, այնպես էլ Արևմտյան Եվրոպայից մարքսիստական գաղափարներն ավելի ու ավելի տարածվեցին առաջավոր հայ բանվորների, մտավորականների, երիտասարդների և աշխատավորության մյուս խավերի մեջ, աստիճանաբար դարձան նրանց համար հեղափոխական պայքարի հզոր զենք։

3. ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ԵՎ ՄԱՐՔՍԻՍՏԱԿԱՆ ԽՄԲԱԿՆԵՐԻ ԱՌԱՋԱՑՈՒՄԸ

1890-ական թվականներին մարքսիզմը Ռուսաստանում թևակոխեց իր զարգացման նոր շրջանը։ Ռուսաստանի և միջազգային բանվորական շարժման վերելքի պայմաններում հանդես եկավ Վ. Ի. Լենինը՝ Կ. Մարքսի և Ֆ. Էնգելսի գործի ու գաղափարների շարունակողն ու զարգացնողը, ռուսական և համաշխարհային հեղափոխության մեծ առաջնորդը, կոմունիստական կուսակցության հիմնադիրն ու ղեկավարը։

Մարքսիզմի տարածումն ու զարգացումը Ռուսաստանում միանգամայն բարերար ազդեցություն ունեցավ նաև Անդրկովկասի վրա։ 1890-ական թվականներից սկսած այստեղ հանդես եկան առաջին մարքսիստական-հեղափոխական խմբակները։ 1892—1893 թվականներին Թիֆլիսում ձևավորվում է վրացական «Մեսամե դասի» (երրորդ խումբ)

մարքսիստական խմբակը, որտեղ կային նաև հայեր և ռուսներ։ 1896 թվականին Թիֆլիսում գործում էին մարքսիստական մի շարք խմբակներ։ Մարքսիստական բանվորական խմբակներ կային նաև Բաքվում։ Այդ խմբակներն ֆնտերնացիոնալ կազմ ունեին, նրանց մեջ կային հայեր, վրացիներ, ադրբեջանցիներ, ռուսներ և ուրիշ ազգության պատկանողներ։

95

1892 թվականին Թիֆլիսում հիմնվում է «Հայ բանվոր հեղափոխականների ասոցիացիան»։ Նրա հիմնադիրներն ու ղեկավարներն էին Ա. Խումարյանը, Ա. Խաժակյանը, Ս. Տեր-Ստեփանյանը, Ս. Խանոյանը, Ս. Տեր-Սիմոնյանը, Պ. Մնացականյանը (Պիեր), Ս. Մարտիկյանը և ուրիշներ։ Ասոցիացիան կազմված էր բանվորներից, արհեստավորներից, ուսուցիչներից ու աշակերտներից, մեծ մասը 17—20 տարեկան երիտասարդներ էին։ Ասոցիացիան ուներ իր գաղտնի տպարանը, որտեղ 1893—1894 թթ. հրատարակվում էր «Ազատ Հայաստան», իսկ 1894—1895 թթ.՝ «Կռիվ» անլեգալ թերթերը։

Ասոցիացիայի օրգան «Ազատ Հայաստանը»-ը և «Կռիվը»-ը հայ բանվորական հեղափոխական առաջին թերթերից էին և նշանակալից դեր խաղացին մարքսիստական գաղափարների տարածման, բանվորների դասակարգային գիտակցության բարձրացման գործում։

1893 թվականին առանձին գրքով լույս է տեսնում հայ բանվոր հեղափոխականների ասոցիացիայի ծրագիրը։ Ասոցիացիան պահանջում էր գործարանները հանձնել բանվորներին, հողը դարձնել հանրային սեփականություն, վերացնել ազգային խտրականությունը, խոսքի, խղճի, մամուլի լիակատար ազատություն, պարտադիր տարրական կրթություն, զինվորական պարտադիր ծառայության վերացում և այլն։

Ասոցիացիան առաջին բանվորական կազմակերպությունն էր, որ հայ իրականության մեջ սկսեց մարքսիստական, սոցիալիստական գաղափարներ տարածել, բանվորներին դասակարգային պայքարի կոչել բուրժուազիայի դեմ, պաշտպանել բանվոր դասակարգի տնտեսական և քաղաքական շահերը։

Ասոցիացիայի ծրագրում և նրա գործունեության մեջ հատուկ տեղ էր գրավում ազգային հարցը և հատկապես Արևմտյան Հայաստանի ազատագրության խնդիրը։ Ասոցիացիան իր մոտակա խնդիրն էր համարում «Ազատել հայ ժողովրդին ապստամբության միջոցով սուլթանական անարգ բռնակալ լծից, կատարել քաղաքական հեղափոխություն և անպայման իշխանությունը հանձնել ժողովրդին»։ Ասոցիացիայի նպատակն էր ազատագրել Հայաստանը օտար բռնակալների լծից, ապագա ազատ Հայաստանում ստեղծել ժողովրդա-դեմոկրատական կարգեր։ Նրանք փառաբանում էին թուրքական բռնակալության դեմ ուղղված 1894 թ. Սասունի հերոսական ապստամբությունը, բանվորներին և աշխատավորներին կոչ էին անում համախմբվել և միացյալ ուժերով խորտակել «սուլթանի կաշկանդող լուծը հանուն հայ ժողովրդի երջանկության»։ Նրանք իրենց համարում էին բոլոր երկրների ու ճնշված ժողովուրդների եղբայրներ։

Ուշագրավ է, որ 1893 թվականին «Հնչակ»-ը Ա. Նազարբեկի բերանով ողջունեց ասոցիացիայի հանդես գալը, նրան անվանելով «կրտսեր եղբայր», իսկ «Ազատ Հայաստան»-ն իր հերթին գովերգում էր «Հնչակ»-ին։ Դրան հակառակ, ասոցիացիան քննադատում էր դաշնակցականներին, մեղադրում նրանց, որ հայկական հարցի լուծումը կապում էին մեծ տերությունների օգնության հետ։ «Ազատ Հայաստան»-ը եվրոպական պետություններին անվանում էր «սուտ մարդասերներ», իսկ դաշնակցականների մասին գրում էր. «Գնացեք մաշեք օտարների շեմքերը, որոնք ձեզ միայն ծաղրում են»։

Հայ բանվոր հեղափոխականների ասոցիացիան փորձեց իր ճյուղերը տարածել Անդրկովկասում և նույնիսկ Արևմտյան Հայաստանում։ 1894—1895 թվականներին ասոցիացիայի անդամներից գործուղվեցին Ալեքսանդրապոլ, Կարս, Գանձակ, Բաքու, իսկ Ս. Տեր-Սիմոնյանն ու Ս. Մարտիկյանը գնացին Թուրքիա՝ արևմտահայերի մեջ խմբակներ կազմակերպելու համար, բայց հաջողություն չունեցան։

1895 թվականի ամռանը ցարական կառավարությունը հայտնաբերում ու ջախջախում է Հայ բանվոր հեղափոխականների ասոցիացիան։ Ասոցիացիայի անդամներից շատերը բանտ են նետվում, մի մասին հաջողվում է թաքնվել ու ազատվել։ Հետագայում ասոցիացիայի անդամների մի մասը մտնում է հնչակյան կուսակցության, մի մասը՝ ՌՍԴԲԿ-ի շարքերը։ Ա. Խումարյանը, Ս. Խանոյանը և Ս. Մարտիկյանը դառնում են ականավոր բոլշևիկներ։

Հայ բանվոր հեղափոխականների ասոցիացիան իր ուրույն տեղն ունի Անդրկովկասի բանվորական և հեղափոխական շարժումների պատմության մեջ։ Լինելով առաջին բանվորական կազմակերպությունը, նա այս ու այն չափով ուղի հարթեց հայ պրոլետարիատի և աշխատավորական մյուս խավերի հետագա պայքարի ու հաղթանակի համար։ Ճիշտ է, նա չկարողացավ հաղթահարել նարոդնիկական և հնչակյան մանրբուրժուական սոցիալիզմի ազդեցությունը և կանգնել գիտական սոցիալիզմի դիրքերում, բայց այն, ինչ նա կատարեց, անհետևանք չանցավ, իր ժամանակի համար առաջադիմական նշանակություն ունեցավ։

1901

1898 թվականին Թիֆլիսում կազմակերպվում է հայ բանվորների մարքսիստական խմբակ, որը կրում էր նաև «Թիֆլիսի բանվորների միություն» անունը։ Այդ խմբակի մեջ մտնում էին առաջավոր բանվորներ Մելիք Մելիքյանը (Դեղուշկա), Հայկ Փիլոսյանը (Ադամյան), Ասա-

տուր Կախոյանը (Բանվոր Խեչո), սոցիալ-դեմոկրատ, պրոպագանդիստ Գևորգ Ղարաջյանը (Ս. Տ. Արկոմեդ) և ուրիշներ։ Խմբակը գաղտնի հեղափոխական աշխատանք էր տանում բանվորների մեջ, նրանց պայքարի հանում բուրժուազիայի և ցարիզմի դեմ։

1900—1901 թվականներին խմբակը լույս է ընծայում անլեգալ ձեռագիր «Բանվոր» թերթը, որի ճակատին գրված էր «Պրոլետարներ բոլոր երկրների, միացե՛ք» մարքսիստական հռչակավոր նշանաբանը, իսկ վերնագրի տակ՝ «Հայկական սոցիալիստական բանվորական organ»։ «Բանվոր»-ը փոքր ծավալով գրվում էր 50—100 օրինակ, ձեռքից-ձեռք անցնում և սիրով ընթերցվում բանվորների կողմից. լույս է տեսել ընդամենը 22 համար։

Թիֆլիսի հայ բանվորների միությունը գործում էր ինտերնացիոնալ սկզբունքով, նա սերտ կապ ուներ վրացական բանվորական մարքսիստական խմբակների հետ, նրա աշխատանքներին ակտիվ մասնակցում էին վրացի առաջավոր բանվորներ Սանդրո Բաջիաշվիլին, Ի. Մանջավիձեն և ուրիշներ։ Նրանց գաղտնի ժողովները, ցույցերն ու գործադուլները ընթանում էին ինտերնացիոնալ դրոշի տակ, լիակատար համերաշխությամբ։ Խմբակի ղեկավարներից Գ. Ղարաջյանը և Մ. Մելիքյանը Թիֆլիսի սոցիալ-դեմոկրատական կազմակերպության անդամներ էին։

Թիֆլիսի հայ բանվորական միությունը կանգնած էր մարքսիստական, սոցիալ-դեմոկրատական ճիշտ դիրքերի վրա։ Նա հայ բանվորներին կոչ էր անում առանց ազգի խտրության համախմբվել և միասնական ուժերով տապալել շահագործողների լուծը։ XX դարը նա համարում էր սոցիալիզմի դար, բանվոր դասակարգի վերջնական հաղթանակի ժամանակաշրջան։ «Բանվոր ժողովուրդը համոզված է, որ այս դարում պետք է իրագործվի իր սրտի անկեղծ ցանկությունը, նրա փրկությունը, նրա ազատությունը, մի խոսքով նրա իդեալները,— գրում է «Բանվոր» թերթը։ Այս 20-րդ դարում նա կհասնի վերջնական հաղթանակի, ոչնչացնելով մասնավոր սեփականությունը, հաստատելով մեքենաները, գործարանները, շինությունները... դա երազ չէ, այլ անհրաժեշտություն»։

Միությունը բանվորներին ոչ միայն դասակարգային պայքարի էր կոչում, այլև հույս ու հավատ ներշնչում իրենց ուժերի, իրենց հաղթանակի նկատմամբ. «Առաջ ցարն ու բուրժուան ամեն ինչ էին, բանվորը՝ ոչինչ։ Այժմ բանվորն ամեն ինչ է, ցարն ու բուրժույը՝ ոչինչ, ահա կյանքը»,— գրում է «Բանվոր»-ը։ Նա հայ բանվորների և ամբողջ ժողովրդի ազատագրությունը կապում էր Անդրկովկասի և Ռուսաստանի պրոլետարիատի հաղթանակի հետ։

Միությունը քննադատում էր հնչակյաններին ու դաշնակցականներին, որոնք հայ բանվորներին ու աշխատավորներին սնում էին միայն ազգային գաղափարներով, մեկուսացնում նրանց իրենց դասակարգային եղբայրներից, շեղում հեղափոխական պայքարի ճանապարհից, ջլատում նրանց ուժերը։ «Քիչ թե շատ զարգացած, հասկացող բանվորը չի կարող սոցիալիստ չլինել,— ասում է միության ղեկավարներից Հ. Փիլոսյանը։ Դրա դեմ արհեստական պատեր կանգնեցնելը ոչ մի արդյունք չի տա, ինչպես որ մեր պարոն դաշնակցականներն ու հնչակյաններն են անում»։

1901 թ. փետրվարին ցարական ժանդարմերիան հայտնաբերում ու ջախջախում է Թիֆլիսի հայ բանվորների խմբակը։ Ձերբակալվում և Մետեխի բանտն են նետվում Հ. Փիլոսյանը, Գ. Կողիկյանը, Ա. Կախոյանը, Ա. Բաջիաշվիլին և ուրիշներ։ Խմբակը դադարում է գոյություն ունենալուց։ Նրա անդամներից շատերը հետագայում շարունակում են իրենց բեղմնավոր գործունեությունը Անդրկովկասի բոլշևիկյան կազմակերպության շարքերում։

Հայաստանում առաջին մարքսիստական խմբակը հիմնվում է Ջալալօղլում (այժմ Ստեփանավան) Ստեփան Շահումյանի (1878—1918) ղեկավարությամբ։ Ստ. Շահումյանը կրթված ու բազմակողմանի զարգացած մարքսիստ էր, հավատարիմ լենինյան։ Նա Հայաստանի և Անդրկովկասի մարքսիստական, սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունների հիմնադիրներից ու ճանաչված ղեկավարներից էր։ Ստ. Շահումյանը մեծ ինտերնացիոնալիստ էր, Անդրկովկասի բոլոր ժողովուրդների կողմից սիրված հեղափոխական մարտիկ։ Նրան սիրում ու բարձր էր գնահատում մեծ Լենինը։

1899 թ. ամռանը գալով Ջալալօղլի, Ստ. Շահումյանն իր շուրջն է համախմբում տեղի առաջավոր երիտասարդներին և ստեղծում մարքսիստական խմբակ։ Այդ խմբակի մեջ մտնում էին Աշոտ և Անուշավան Թումանյանները, Սերգո Իսրայելյանը, Սեդրակ Հարությունյանը, Գեբասիմ Մելիք-Գրիգորյանը և ուրիշներ։ Ստ. Շահումյանը խմբակի անդամների համար դասախոսություններ էր կարդում, նրանց ծանոթացնում Կ. Մարքսի ուսմունքի հետ։ Ռիգայում ուսանող եղած ժամանակ Ստ. Շահումյանը կապ էր պահպանում Ջալալօղլու խմբակի հետ. ամառը նա գալիս էր Ջալալօղլի, իր հետ բերում մարքսիստական գրականություն, որը հափշտակությամբ կարդում էին խմբակի անդամները։

Ստ. Շահումյանի օգնությամբ Ջալալօղլու խմբակը ձեռք է բերում հեկտոգրաֆ, հեղափոխական կոչեր ու թռուցիկներ բազմացնում ու տարածում շրջանի աշխատավորության մեջ։ Խմբակի անդամները հետագայում դառնում են Լոռու բոլշևիկյան կազմակերպությունների ակտիվ գործիչներ։ Ջալալօղլու խմբակը, ինչպես Ա. Միկոյանն է ասում, կա-

բեռոր նշանակություն ունեցավ Հայաստանում մարքսիզմի տարածման գործում։

Ուշագրավ է, որ այս շրջանում մարքսիստական գաղափարները թափանցում են նաև հայկական գաղթօջախներում ապրող հայ աշխատավորության մեջ։ Այսպես, օրինակ, 1896 թվականին Բուլղարիայի Պլովդիվ քաղաքում ականավոր մարքսիստ Դ. Բլագոևի նախաձեռնությամբ հիմնվում է «Երիտասարդ հայ սոցիալիստների խմբակ»։ Այդ խմբակը մարքսիստական գաղափարներ էր տարածում Պլովդիվի հայ բանվորների ու աշխատավորների մեջ։ Իրենց հեղափոխական գործունեությամբ առանձնապես աչքի են ընկնում Պլովդիվի բանվորների կողմից սիրված ու հեղինակավոր ղեկավարներ Տիգրան Իսմիյանը (Զիլո) և Ստեփան Շանբազյանը։

Այսպիսով, մարքսիզմի տարածումը և մարքսիստական խմբակների առաջացումը Հայաստանում արմատական բեկում առաջ բերին հայ հասարակական քաղաքական կյանքում։ Հայ իրականության մեջ հանդես եկավ նոր, ամենահեղափոխական մարքսիստական ուղղությունը։ Մարքսիզմը հեղաշրջիչ դեր կատարեց ինչպես ամբողջ մարդկության, այնպես էլ հայ ժողովրդի կյանքում, լուսավորեց նրա ազատագրական մեծ պայքարի ուղին։

XIV ԳԼՈՒԽ

ՀԱՅԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՆ XIX ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՆ

Հայկական կուլտուրայի զարգացման նախադրյալները

XIX դարի երկրորդ կեսին հայկական կուլտուրան աննախընթաց վերելք է ապրում։ Լուսավորության, գիտության, գրականության և արվեստի ասպարեզում ձեռք են բերվում խոշոր նվաճումներ։ Հայ ժողովուրդը XIX դարի երկրորդ կեսին ստեղծում է այնպիսի բարձրարժեք կուլտուրա, որով մենք այսօր իրավամբ հպարտանում ենք։

Հայկական կուլտուրայի զարգացումը սերտորեն կապված էր հայ ժողովրդի սոցիալ-տնտեսական կյանքում առաջացած նոր փոփոխությունների հետ։ Ֆեոդալական հարաբերությունների քայքայումը և կապիտալիզմի զարգացումը, հայ բուրժուական ազգի կազմավորումը և ազգային-ազատագրական շարժումների վերելքը, դասակարգային պայքարի սրումը, տնտեսական, քաղաքական և կուլտուրական կապերի ընդլայնումն ու ամրապնդումը հարևան ժողովուրդների, Ռուսաստանի և Արևմտյան

Եվրոպայի հետ,— այդ ամենը կարևոր նախադրյալներ հանդիսացան հայկական կուլտուրայի զարգացման համար։

XIX դարի երկրորդ կեսի հայ հասարակական-քաղաքական մտքի ու կուլտուրայի զարգացման գործում մեծ դեր խաղաց նաև ռուսական և համաշխարհային առաջավոր մտքի, դասական գրականության, գիտության ու արվեստի բուռն վերելքը։

Կար նաև մի այլ կարևոր աղդակ. դա հայկական կուլտուրայի հասարակական-քաղաքական դերի աճն էր։ Գրականության ու արվեստի, պարբերական մամուլի միջոցով օտար բռնակալության լծի տակ գտնվող ժողովուրդը այս ու այն չափով կարողանում էր արտահայտել իր պահանջները, լսելի դարձնել իր ձայնը։ Այս հանգամանքն իր հերթին նպաստում էր ազգային կուլտուրայի զարգացմանը, հարստացնում նրա հասարակական-քաղաքական բովանդակությունը։

Պարբերական մամուլը և հրապարակախոսությունը

Հայկական կուլտուրայի ընդհանուր վերելքի հետ միաժամանակ զարգանում է նաև նրա կարևոր ճյուղերից մեկը՝ պարբերական մամուլը։ XIX դարի առաջին կեսի 40 անուն թերթերի ու ամսագրերի փոխարեն դարի երկրորդ կեսին հրատարակվում էր 340 անուն թերթ և ամսագիր, մոտ՝ 9 անգամ ավելի։ Հայ պարբերական մամուլի և տպագրության աչքի ընկնող կենտրոններն էին Թիֆլիսը, Կոստանդնուպոլիսը և Վենետիկը։

XIX դարի երկրորդ կեսի հայ պարբերական մամուլը մեծ դեր է խաղացել ինչպես հայ հասարակական-քաղաքական կյանքում, այնպես էլ կրթության ու լուսավորության տարածման, հասարակական մտքի, հրապարակախոսության, լեզվի ու գրականության, գիտության ու արվեստի զարգացման գործում։ Հայ նշանավոր հրապարակախոսները, գրողները, մանկավարժները, գիտության ու արվեստի աշխատողները մոտիկից կապված են եղել մամուլի հետ, իրենց ստեղծագործությունները տպագրել և ժողովրդի սեփականությունն են դարձրել մամուլի միջոցով։ Այս տեսակետից առավել աչքի են ընկել դեմոկրատական, առաջադիմական ուղղության պատկանող թերթերն ու ամսագրերը։

1850—1860-ական թվականների ամենաառաջադիմական հանդեսը «Հյուսիսափայլն» էր։ Նա լույս էր տեսնում Մոսկվայում 1858—1864 թվականներին Ստ. Նազարյանի և Մ. Նալբանդյանի գլխավորությամբ։ «Հյուսիսափայլ»-ն իր շուրջն էր համախմբել ժամանակի առաջավոր գրողներին ու հասարակական գործիչներին և անհաշտ պայքար էր մղում կղերա-ֆեոդալական ռեակցիոն ուժերի դեմ։

Առաջադիմական ուղղության պատկանող թերթերից էին նաև Հ. Սվաճյանի խմբագրությամբ Կ. Պոլսում հրատարակվող «Մեղու»-ն (1856—1872), Ստ. Ոսկանի խմբագրությամբ Փարիզում հրատարակվող

«Արևելք»-ը (1855—1856) և «Արևմուտք»-ը (1859—1865), Զմյուռնիայում հրատարակվող «Մաղիկ»-ը (1861—1867)։

Սուլթանական Թուրքիայի դաժան լծի տակ հեծող արևմտահայերի շահերի պաշտպանությամբ և լուսավորական գաղափարների պրոպագանդայով հանդես էր գալիս նաև Մ. Խրիմյանի խմբագրած «Արծիվ Վասպուրականի» թերթը, որը 1855—1856 թթ. լույս էր տեսնում Կ. Պոլսում, իսկ 1858—1864 թթ.՝ Վարագում։ Այդ նույն ուղղությանն էր պատկանում նաև Գարեգին Սրվանձտյանի խմբագրությամբ 1863—1865 թվականներին Մուշում հրատարակվող «Արծվիկ Տարոնո» թերթը։

Առաջադիմական թերթերի հետ միաժամանակ հրատարակվում էին նաև կղերա-պահպանողական ուղղության պատկանող հետադիմական թերթեր։ Այդ թերթերը պաշտպանում էին հին կարգերն ու սովորությունները, կրոնը, եկեղեցին, գրաբար լեզուն և պայքարում առաջադիմական ուղղության դեմ։ Այդպիսի թերթերից էին մոլի ռեակցիոներ Հ. Ջամուռճյանի խմբագրությամբ Կ. Պոլսում հրատարակվող «Երևակ»-ը (1857—1866), Գ. Այվազովսկու «Մասյաց Աղավնի»-ն (1855—1865, Թեոդոսիա), Մսեր Մսերյանցի «Ճռաքաղ»-ը (1858—1862, Մոսկվա) և այլն։

XIX դարի վերջին առաջադիմական և հետադիմական հոսանքների պայքարը պարբերական մամուլի էջերում ավելի սուր բնույթ է ստանում։ Նշանավոր հրապարակախոս Գրիգոր Արծրունու (1845—1892) խմբագրությամբ Թիֆլիսում հրատարակվող «Մշակ»-ը (1872—1920) գտնում է բուրժուական լիբերալիզմի ու կապիտալիզմի ջատագով, պայքարում ֆեոդալիզմի մնացորդների և կղերա-պահպանողական հոսանքի դեմ։ «Մշակը»-ը առաջադիմականների օրգանն էր։ Հետադիմականների օրգաններն էին Ստ. Մանդինյանի, ապա Պետրոս Սիմոնյանի «Մեղու Հայաստանի»-ն (1858—1886) և Սպանդար Սպանդարյանի «Նոր-Դար»-ը (1884—1908)։

XIX դարի երկրորդ կեսի աչքի ընկնող թերթերից ու հանդեսներից էին նաև «Մասիս»-ը (1852—1908), «Հայրենիք»-ը (1870—1909), «Արևելյան մամուլ»-ը (1871—1921), «Փորձ»-ը (1876—1881), «Արձագանք»-ը (1882—1898), «Արևելք»-ը (1884—1912), «Մուրճ»-ը (1889—1907) և այլն։

Պարբերական մամուլը հարուստ նյութ է պարունակում հայ հասարակական կյանքի, գրականության, գիտության ու արվեստի վերաբերյալ։ Գերազանցապես մամուլում են հանդես եկել ու աճել այնպիսի նշանավոր հրապարակախոսներ, ինչպիսիք են Մ. Նալբանդյանը, Ստ. Նազարյանը, Ստ. Ոսկանը, Հ. Սվաճյանը, Գ. Արծրունին, Մ. Մամուրյանը, Ստ. Պալասանդյանը, Ա. Արփիարյանը, Ա. Արասխանյանը և շատ ուրիշներ։ Անհնար է գրել մեր նոր շրջանի պատմությունը առանց պարբերական մամուլի օգտագործման։

Դպրոց

Հայկական կուլտուրայի գլխավոր օջախներից մեկը դպրոցն էր։ Մինչև XIX դարի կեսերը Հայաստանում շատ քիչ դպրոցներ կային։ Եղած դպրոցներում սովորելու իրավունք և հնարավորություն ունեին մեծ մասամբ ունևոր խավերի երեխաները։ Դպրոցներում դասավանդումը տարվում էր գրաբար լեզվով, հետամնաց «տեր-թոդիկյան» ձևերով ու մեթոդներով։ 1850—1860-ական թվականներին հայ լուսավորիչներն ակտիվ պայքար են ծավալում հին, խալիֆայական դպրոցի դեմ, աշխարհաբար լեզվի ու աշխարհիկ կրթության համար։ Նրանք ձգտում էին դպրոցը, ազգային կուլտուր-կրթական հաստատություններն ազատագրել եկեղեցու իշխանությունից և դարձնել ժողովրդի կրթության ու լուսավորության օջախներ։ Նրանք պահանջում էին ժողովրդի համար անհասկանալի գրաբար լեզվի փոխարեն դպրոցներում մտցնել կենդանի ժողովրդական, խոսակցական լեզուն՝ աշխարհաբարը։ Նրանց նշանաբանն էր՝ «գրել այնպես, ինչպես խոսվում է, խոսել այնպես, ինչպես գրվում է»։ XIX դարի երկրորդ կեսին նկատելի կերպով աճում է դպրոցների, աշակերտների և ուսուցիչների թիվը։ 1873 թվականին հայկական 6 թեմերում (Երևանի, Ղարաբաղի, Թիֆլիսի, Շամախու, Աստրախանի և Նոր Նախիջևանի—Բեսարաբիայի) կար 242 դպրոց, որից արական՝ 201, իգական՝ 36, երկսեռ՝ 5։ Աշակերտների թիվը կազմում էր 9482, որից տղաներ՝ 7722, աղջիկներ՝ 1760։ 1881 թվականին նշված 6 թեմերում և Կարսի մարզում կար 330 դպրոց, որից արական՝ 247, իգական՝ 83։ Աշակերտների թիվը կազմում էր 16877, որից տղաներ՝ 12555, աղջիկներ՝ 4322։

Ուսուցիչների թիվը 1873 թվականի համեմատությամբ 1881 թվականին կրկնապատկվել էր՝ 416-ից հասել 832-ի։

1880 թվականին Կովկասի ուսումնական շրջանի 830 պետական և մասնավոր դպրոցներում սովորում էին 8092 հայ աշակերտ, իսկ 1900 թվականին՝ 1901 դպրոցում՝ 31108 աշակերտ։

XIX դարի երկրորդ կեսին բացվում են մի շարք նոր դպրոցներ. այդ թվում էջմիածնի Գևորգյան ճեմարանը (1874), Կ. Պոլսի Կենտրոնական վարժարանը (1876), Վանի Երամյան վարժարանը (1878), Երևանի ուսուցչական սեմինարիան (1881), Երևանի գիմնազիան (1881), Նոր Նախիջևանի Թեմական դպրոցը (1881), Էրզրումի Սանասարյան դպրոցը (1881) և այլն։

1850-ական թվականներից սկսած բացվում են նաև իգական դպրոցներ. օրինակ՝ Երևանի Հռիփսիմյան (1850) և Գայանյան (1866), Շուշու Մարիամյան (1864), Թիֆլիսի Գայանյան (1869) և Մարիամյան-Հովնանյան (1877), Ախալցխայի Եղիսաբեթյան (1870), Ալեքսանդրապոլի Արղության (1871), Բաքվի Հռիփսիմյան (1874), Կարսի Մարիամյան (1890) դպրոցները և այլն։

Դպրոցներ են հիմնվում նաև Ֆրանսիայի, Ամերիկայի, Բուլղարիայի, Ռումինիայի, Եգիպտոսի և այլ վայրերի հայկական գաղթօջախներում։

Դարի երկրորդ կեսին ասպարեզ են գալիս մի շարք նշանավոր հայ մանկավարժներ՝ Պետրոս Շանշյան, Առաքել Բահաթրյան, Սեդրակ Մանդինյան, Ղազարոս Աղայան, Ռեթեոս Պերպերյան, Սարգիս Բեկնազարյան և ուրիշներ։ Նրանք բեղմնավոր աշխատանք են կատարում դպրոցական ծրագրերի ու դասագրքերի մշակման, մանկավարժական գրականության հրատարակման, մատաղ սերնդի կրթության ու դաստիարակության գործում։

Գիտություն

XIX դարի երկրորդ կեսին զարգանում է նաև գիտությունը։ Առանձնապես նկատելի էր հայագիտության զարգացումը։ Հանդես են գալիս նշանավոր գիտնականներ, հրապարակվում են արժեքավոր աշխատություններ։

Պատմա-փիլիսոփայական, տնտեսագիտական և գրականագիտական մտքի ասպարեզում աչքի է ընկնում հեղափոխական-դեմոկրատ Մ. Նալբանդյանը։ Հայագիտական, արևելագիտական արժեքավոր աշխատություններ է հրապարակում գիտության առաջին դոկտոր Ստ. Նազարյանը։ Իրենց պատմա-բանասիրական, հայագիտական ուսումնասիրություններով աչքի են ընկնում Ռուսաստանում գործող, ռուսական արևելագիտական դպրոցի հետ կապված, հայ գիտնականներ Մկրտիչ Էմինը (1815—1890), Քերովբե Պատկանյանը (1833—1889), Գրիգոր Խալաթյանը (1858—1912) և ուրիշներ։ Նրանք ռուսերեն լեզվով հրատարակում են արժեքավոր գիտական աշխատություններ ու սկզբնաղբյուրներ, ռուս ընթերցողին ծանոթացնում հայոց պատմության ու գրականության հետ։

Հայ պատմագրության մեջ բացառիկ երևույթ էր տաղանդավոր պատմաբան Ա. Մ. Գարագաշյանի (1818—1903) «Քննական պատմություն հայոց» չորս մասից բաղկացած ուսումնասիրությունը (1895 թ., Թիֆլիս)։ Ա. Մ. Գարագաշյանը բուրժուական պատմագրության դիրքերից քննադատության է ենթարկում հայ պատմագրության մեջ իշխող կղերա-ֆեոդալական դրույթները, պատմական, լեզվաբանական և բանասիրական հարուստ տվյալների հիման վրա նոր տեսակետներ առաջ քաշում և նոր լուսաբանումներ տալիս հայ ժողովրդի պատմության մի շարք հարցերի։ Գարագաշյանի աշխատությունը մի առաջընթաց քայլ էր հայ ժողովրդի պատմագիտական մտքի զարգացման ճանապարհին։

Հայագիտական մեծ ու բեղմնավոր աշխատանք է կատարում բազմավաստակ պատմաբան, բանասեր, աշխարհագրագետ և հայրենասեր բանաստեղծ Ղևոնդ Ալիշանը։ Նրա ստվարածավալ աշխատությունները՝ «Սիսուան»-ը, «Այրարատ»-ը, «Սիսական»-ը, «Շիրակ»-ը, «Հայ-վենետ»-ը հանրագիտական բնույթ ունեն և փաստական հարուստ նյութ

են պարունակում Հայաստանի պատմության ու աշխարհագրության վերաբերյալ։

Դարի երկրորդ կեսին պատմագիտական արժեքավոր աշխատություններ են հրատարակում նաև Հ. Գաթրճյանը (1820—1881), Ստ. Պալասանյանը (1837—1889), Ա. Պերպերյանը, Մ. Մամուրյանը, Ա. Երիցյանը և ուրիշներ։ Ստ. Պալասանյանի հանրամատչելի «Հայոց պատմություն»-ը երկար ժամանակ մեր դպրոցներում ծառայել է որպես դասագիրք։ Լեզվագիտական, բանասիրական բեղմնավոր աշխատանք են կատարում Ա. Այտընյանը (1825—1902), Հ. Տաշյանը (1866—1933) և ուրիշներ։ Հայագիտական արժեքավոր ուսումնասիրություններ են կատարում եվրոպացի գիտնականներ Վ. Լանգլուան (1788—1870), Հ. Հյուբշմանը (1848—1908), Հ. Մարկվարտը (1864—1930) և ուրիշներ։

Բնական գիտությունների բնագավառում աչքի են ընկնում երկրաբան Անդրեաս Արծրունին (1847—1898), կենսաբան-զարվինիստ Ն. Տաղավարյանը (1862—1915), բժիշկներ Դ. Ռոստոմյանը (1815—1868), Լ. Տիգրանյանը (1842—1906) և ուրիշներ։

Գրականություն

XIX դարի երկրորդ կեսին հայկական կուլտուրայի մյուս բոլոր ճյուղերի համեմատությամբ ավելի արագ թափով զարգանում է գեղարվեստական գրականությունը։ Գրական բոլոր հիմնական ժանրերը՝ չափածո, արձակ, դրամատուրգիա, բարձր զարգացման են հասնում։ Հանդես են գալիս բազմաթիվ տաղանդավոր գրողներ՝ մեր դասական գրականության կարկառուն դեմքերը։

Նշանավոր հեղափոխական-դեմոկրատ Մ. Նալբանդյանը, որը միաժամանակ խոշոր քննադատ էր, հիմք է դնում հեղափոխական-դեմոկրատական պոեզիային։ Նրա ինչպես հասարակական-քաղաքական գործունեության մեջ, այնպես էլ գրական ստեղծագործություններում կարմիր թելի պես անցնում է հայրենիքի ու ժողովրդի ազատության վեհ գաղափարը.

Ազատությո՛ւն գոչեցի,
Թող որոտա իմ գլխին
Փայլակ, կայծակ, հուր, երկաթ,
Թող դավ դնե թշնամին,

Ես մինչ ի մահ, կախաղան,
Մինչև անարգ մահու սյուն,
Պիտի գոռամ, պիտ կրկնեմ
Անդադար՝ ազատությո՛ւն։

Միքայել Նալբանդյանը հայ ժողովրդի ազատության երգիչն է։ Նա իր ամբողջ կյանքը և գրական տաղանդը նվիրեց հայ ժողովրդի ազա-

տության գործին, հերոսի մահով ընկավ այդ գործի հաղթանակի համար մղվող անհավասար պայքարում։

1860-ական թվականների դեմոկրատական պոեզիայի փայլուն դեմքերից է Սմբատ Շահազիզը (1841—1907)։ Պատանի հասակից սովորելով Լազարյան ճեմարանում, այնուհետև ապրելով ու աշխատելով Մոսկվայում, Ս. Շահազիզը մոտիկից ծանոթանում է ռուս գրականությանը և խոր ազդեցություն կրում նրանից։ Պուշկինի, Գրիբոեդովի, Լերմոնտովի, Նեկրասովի, ինչպես և Նալբանդյանի ազատասիրական, դեմոկրատական գաղափարները անջնջելի կնիք են դնում Շահազիզի ստեղծագործության վրա։ Հետևելով Նեկրասովի «Поэтом можешь ты не быть, но гражданином быть обязан» հայտնի խոսքերին, նա հայ գրականության մեջ հռչակում է «նախ քաղաքացի և ապա պոետ» նշանաբանը։

Ս. Շահազիզի ստեղծագործության հիմնական մոտիվը ժողովրդասիրությունն է, ազատասիրությունն ու հայրենասիրությունը։ 1864 թ. գրած «Կեցցե սուրբ գործը» բանաստեղծության մեջ նա ասում է.

Ես ուխտեցի լինել մշակ
Հասարակաց պիտույքի,
Երգել ուսա գործ և վաստակ,
Արդար հացը այս կյանքի։

«Լևոնի վիշտը» հայտնի պոեմում, որը Մ. Նալբանդյանն անվանել է իր վիշտը, Շահազիզն ըմբոստանում է բռնության, խավարի, անարդարության դեմ, ժողովրդին կոչ անում դեպի լուսավորություն, դեպի լիակատար ազատություն։ 1862 թ. Զեյթունի ապստամբությանը նվիրած իր բանաստեղծություններից մեկում Շահազիզն ազգային ինքնավարության պահանջ է դնում.

Այո՛, սերմերը, կարծեմ, աճում են,
Երբ ազգերն իրենց պիտ կառավարեն։

1850—1860-ական թվականների հայ գրականության ականավոր դեմքերից է նաև Մկրտիչ Պեշիկթաշլյանը (1828—1868)։ Նա շնորհալի բանաստեղծ էր, դրամատուրգ, նշանավոր հասարակական գործիչ։ Հայ ժողովրդի, մասնավորապես արևմտահայերի ազատության ու առաջադիմության հարցը Մ. Պեշիկթաշլյանի կյանքի և ստեղծագործության գլխավոր հարցն էր։ Արևմտահայ դեմոկրատների հետ միացած նա պայքարում էր Հայաստանի ազատագրության համար, իր ստեղծագործությունների մեջ ազգային միասնության կոչ անում, փառաբանում հայրենիքի ազատության համար զոհված հերոսներին. «Վասն հայրենյաց մեռար, դու շատ ապրեցար»,— ասում է նա։ Մ. Պեշիկթաշլյանը հայրենասիրական գաղափարներ է քարոզում նաև իր պատմական դրամաներում («Կոռնակ», «Արշակ երկրորդ», «Վահան Մամիկոնյան» և այլն), որոնք, սակայն, զերծ չեն անցյալի իդեալականացումից։

Հայ նշանավոր բանաստեղծների համաստեղության մեջ իր ուրույն տեղն ունի մեծատաղանդ Պետրոս Դուրյանը (1852—1872)։ Նա ապրեց հազիվ քսան տարի, բայց ստեղծեց մեծարժեք գործեր, հարստացրեց, մի նոր բարձրության հասցրեց մեր պոեզիան։ Դուրյանը բանաստեղծական պատկերավոր խոսքի անզուգական վարպետ էր, ինքնատիպ ու մեծ քնարերգու.

Բույլ մը նայվածք, փունջ մը ժպիտ,
Քուրա մը խոսք դյութեց իմ սիրտ։

XIX դարի երկրորդ կեսի պոեզիայի խոշոր դեմքերից է Ռափայել Պատկանյանը՝ Գամառ Քաթիպան (1830—1892)։ Նրա չափածո և արձակ գործերում պատկերված է հայ կյանքը, օտար բռնակալների լծի տակ տառապող ժողովրդի դառը վիճակը, նրա ազատագրական մտորումներն ու ձգտումները։ Նա քննադատել ու ծաղրել է իրենց ազգային դեմքը կորցրած հայ մեծատուններին, հարուստներին ու վաճառականներին, արտաքին փայլի հետևից ընկնող կարիերիստ ու անբան երիտասարդներին։

Ռ. Պատկանյանի հայրենասիրական, ազատաշունչ բանաստեղծությունները օտար բռնակալների դեմ ուղղված ազգային-ազատագրական պայքարի մարտական կոչեր էին։

Ռ. Պատկանյանի «Արմսի արտասուքը» հռչակավոր բանաստեղծությունը, որը Բաֆֆին անվանել է հայ պոեզիայի թագուհի, մեր ժողովրդի պատմական բախտը, նրա անհուն վիշտն ու ազատագրական տենչերն արտահայտող գրական մի անձեռակերտ կոթող է։

1877—1878 թթ. ռուս-թուրքական պատերազմը և հայկական հարցը նոր թափ հաղորդեցին Ռ. Պատկանյանի պոեզիային։ 1870—1880 թվականներին նա մեկը մյուսի հետևից հրատարակում է իր ռազմաշունչ բանաստեղծությունները, որոնց մեջ կոչ է անում հայերին զենքի դիմել և զինված ապստամբության միջոցով ազատագրվել թուրքական բռնակալության լծից։ «Վանեցի գեղջուկի տաղը» բանաստեղծության մեջ նա գրում է.

Հայի գութա՞ն, հայի գութա՞ն, որի՞ համար կջանաս,
Ո՞վ քեզիմով կտանջվի, որի՞ն դու կուշտ հաց կուտաս...

Եղբարք հայեր, առե՛ք խոփը, տվե՛ք դարբնին կռելու,
Կռել-կոփել սուր ու սուսեր՝ Հայաստանը փրկելու։

«Վեհաժողով», «Բողոք առ Եվրոպա» և այլ բանաստեղծությունների մեջ Ռ. Պատկանյանը անարգանքի սյունին է գամում մեծ տերություններին, որոնք իրենց իմպերիալիստական շահերի համար զոհաբերում էին հայ ժողովրդին.

Մեր հոգու վիշտը, մեր բոթն ու սուգը,
Աղեխարշ աշց մեր արտասուքը
Ոչ ոք չտեսավ, ոչ ոք չզգաց,
Լուսավոր Եվրոպ կույր ու խուլ մնաց։

Ռ. Պատկանյանը հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի ամենանշանավոր գաղափարախոսներից էր, նրա ազատասիրական ու հայրենասիրական պոեզիան այդ պայքարի ծնունդ էր։

XIX դարի 80-ական թվականներին, երբ լռել էր Ս. Շահազիզի և Ռ. Պատկանյանի քնարը, հնչում է, Ավետիք Իսահակյանի խոսքերով ասած, Հովհաննես Հովհաննիսյանի (1864—1929) բյուրեղյա լիրիկան։ Լինելով բարձր կուլտուրայի տեր շնորհալի բանաստեղծ, նա հարստացրեց մեր պոեզիան, կատարելագործեց նրա արվեստն ու լեզուն։ Հ. Հովհաննիսյանն իր քնարը նվիրեց հայրենիքի ու աշխատավոր մարդու ազատությանը, նրանց հոգսերին, դարդ ու ցավին.

Աղքատություն ես սիրեցի,
Խեղճի լացը, հառաչանք,
Ես քնարս նվիրեցի
Վիշտ երգելու և տանջանք։

Ժողովրդի կյանքից վերցված և ժողովրդական մոտիվներով գրված նրա մի շարք բանաստեղծությունները՝ «Արացն եկավ լափին տալով», «Ալագյաց բարձր սարին» և այլն, դարձել են ժողովրդական երգեր։ Նա ջերմորեն դիմավորեց սովետական կարգերի հաստատումը Հայաստանում, որը հայ ժողովրդին ազատագրեց դարավոր ստրկությունից։

XIX դարի երկրորդ կեսին բարձր զարգացման է հասնում նաև արձակ գրականությունը՝ պրոզան։

Պերճ Պռոշյանը (1832—1907), շարունակելով Խ. Աբովյանի տրադիցիաները, գրում է իր հայտնի վեպերը՝ «Սոս և Վարդիթեր», «Հացի խնդիր», «Ցեցեր», «Բղդեն» և «Հունոն»։ Իր գրվածքներում նա ցույց է տալիս հայ աշխատավոր գյուղացու թշվառ վիճակը, նրա ճնշումն ու շահագործումը գյուղի ցեցերի՝ ցարական չինովնիկների, առևտրականների, վաշխառուների, հոգևորականների կողմից։ Պռոշյանը միաժամանակ վեր է հանում գյուղի սոցիալական հակամարտությունները, քայքայվող, աղքատացող գյուղացիների տարերային պայքարը իրենց կեղեքիչների դեմ։

«Հացի խնդիր» վեպում ճշմարտախոս Հաքուլը չքավոր գյուղացիների մասին ասում է. «Թոնդիրն ածես շորանոտ չի վեր ելիլ»։ Ճնշողների դեմ պայքարի ելած և այդ պատճառով Սիբիր աքսորված Հունոն ասում է. «Աշխարհումս ով է տվել արդարություն, գութ, խղճմտանք, աշխարհումս արդարն ու լավը նա է, ով քսակումը ոսկիք, ձեռին իրավունք ունի»։ Պ. Պռոշյանի վեպերը XIX դարի երկրորդ կեսի հայ գյուղի ռեալիստական պատկերման լավագույն օրինակներ են։

1860-ական թվականներին գրական ասպարեզ է իջնում նշանավոր վիպասան, բանաստեղծ, մանկական գրող, մանկավարժ Ղազարոս Աղայանը (1840—1911)։ Նրա «Ճախարակ», «Սերմնացան», «Ջմեռ» բանաստեղծությունները, «Երկու քույր» վիպակը, «Տորք Անգեղ» պոեմը և «Քյոռօղլի» պատմվածքը մեր դեմոկրատական-գրականության լավագույն նմուշներից են։

Իր ստեղծագործությունների մեջ Ղ. Աղայանը ոչ միայն բացահայտում է հայ ժողովրդի տնտեսական-քաղաքական ծանր վիճակը, այլև նրան պայքարի է կոչում շահագործողների դեմ։ Նա հալածանքի է ենթարկվել ցարիզմի և ազգային ռեակցիոներների կողմից, 1895 թվականին Ալ. Շիրվանզադեի և այլ առաջավոր հայ մտավորականների հետ միասին աքսորվել Անդրկովկասից։

XIX դարի երկրորդ կեսի հայ գրականության կենտրոնական դեմքը Ռաֆֆին է, Հակոբ Մելիք-Հակոբյանը (1835—1888)։ Նա գեղարվեստական խոսքի անզուգական վարպետ է, մեր պատմավիպագրության ամենակարկառուն դեմքը։ Բարձր արվեստով ու ճոխ լեզվով գրված նրա վեպերն ու պատմվածքները, լինեն դրանք ժամանակակից կյանքին, թե պատմական անցյալին նվիրված, կոչված են ծառայելու հայ ժողովրդի, առաջին հերթին թուրքական բռնապետության դաժան լծի տակ հեծող արևմտահայերի ազատագրությանը։

Լինելով ջերմ հայրենասեր և ազգային-դեմոկրատական հայացքների տեր, Ռաֆֆին իր գրվածքներում, ինչպես և հրապարակախոսական հոդվածներում խիստ քննադատում է պարսկական ու թուրքական հետամնաց ֆեոդալական կարգերը, եվրոպական մեծ տերությունների գաղութային քաղաքականությունը։ «Մահաբեր թույն է» անվանում նա գաղութային քաղաքականությունը, որը ստրկացնում էր ժողովուրդներին։ Նրան ոգեշնչում էին մեծ հեղափոխական-դեմոկրատ Մ. Նալբանդյանի գործն ու գաղափարները։

Իր գրվածքներում՝ «Կայծեր», «Սամվել», «Դավիթ բեկ», «Ոսկի աքաղաղ», «Խենթը» և այլն, Րաֆֆին անդրադարձել է հայ հասարակական կյանքի գրեթե բոլոր կողմերին, իր մեծ տաղանդի ուժով վարպետորեն կերտել բազմաթիվ դրական և բացասական տիպեր, որոնք արտացոլում են հայ գյուղացու, ազնվականության, բուրժուազիայի, հոգևորականության, մտավորականության, երիտասարդության և կնոջ կերպարները։

Րաֆֆին իր ժամանակի հայելին է, հայ ժողովրդի լավագույն իղձերի արտահայտիչը, ամենաժողովրդական ու ամենասիրված հեղինակներից մեկը։

Դարի երկրորդ կեսի ականավոր գրողներից էին նաև Սերենցը (1822—1888) և Մուրացանը (1854—1908)։ Րաֆֆու հետ միասին նրանք զարկ տվին հայրենասիրական պատմավիպագրությանը։

1880-ական թվականներին, գրեթե միաժամանակ, գրական ասպարեզ են իջնում նշանավոր ռեալիստ գրողներ Շիրվանզադեն՝ Ալեքսանդր Մովսիսյանը (1858—1935) և Նար-Դոսը՝ Միքայել Հովհաննիսյանը (1868—1933)։ Շիրվանզադեն և Նար-Դոսը հայ գրականության մեջ ամրապնդում են քննադատական ռեալիզմը։

Շիրվանզադեն բազմաժանր գրող է։ Նա գրել է վեպեր, դրամաներ, պատմվածքներ, նովելներ և այլն։ Նա մեծ դեր է խաղացել հայկական ռեալիստական դրամատուրգիայի և թատրոնի զարգացման գործում։ Շիրվանզադեի ստեղծագործության մեջ վարպետորեն պատկերված է Անդրկովկասի կապիտալիզմի էպոխան իր հակասական կողմերով։ Նրա գլուխ-գործոցը՝ «Քառս» վեպը, այդ էպոխայի գեղարվեստական պատմությունն է։

Մեր նոր և նորագույն շրջանի պատմության համար արժեքավոր են նաև նրա հրապարակախոսական հոդվածները, «Կյանքի բովից» մեմուարները։

Շիրվանզադեն ջերմորեն պաշտպանում էր ժողովուրդների բարեկամության, հատկապես Անդրկովկասի ժողովուրդների եղբայրության գաղափարը, պայքարում ցարիզմի և արևմտաեվրոպական իմպերիալիզմի ազգային-գաղութային ճնշման դեմ։ Նա այն երջանիկ գրողներից էր, որը տեսավ իր ժողովրդի աղատագրումը, ողջունեց սովետական կարգերը և մասնակցեց սոցիալիզմի կառուցմանը։ 1930 թվականին Սովետական Հայաստանի և Սովետական Ադրբեջանի կառավարությունները Շիրվանզադեի գրական գործունեության 50-ամյակի կապակցությամբ նրան շնորհեցին ժողովրդական գրողի կոչում, իսկ Անդրկովկասյան Կենտրոնական գործադիր կոմիտեն՝ Անդրկովկասի ժողովուրդների կուլտուրայի վաստակավոր գործչի կոչում։

XIX դարի երկրորդ կեսին զարգանում են նաև դրամատուրգիան ու երգիծաբանությունը։ Հայ մեծ դրամատուրգ Գաբրիել Սունդուկյանը (1825—1912) հիմք է դնում հայկական դասական դրամատուրգիային։ Նրան իրավամբ անվանում են «Հայկական Օստրովսկի»։

Ավելի քան 50 տարի Գ. Սունդուկյանն իր բեղմնավոր գրիչը ի սպաս է դրել հայկական դրամատուրգիայի զարգացմանը։ Նրա պիեսները՝ «Գիշերվա սաբրը խեր է», «Խաթաբալա», «Էլի մեկ զոհ», «Պեպո» և «Քանդած օջախ», երկար ժամանակ իշխել են հայկական բեմում և մեծապես նպաստել թատերական արվեստի զարգացմանը։ Սունդուկյանի հանրահռչակ «Պեպո»-ն, որտեղ մեծ վարպետությամբ ներկայացված է աշխատավոր մասսայի բողոքը շահագործողների դեմ, եղել է ոչ միայն հայ ժողովրդի, այլև եղբայրական վրաց ժողովրդի ամենասիրելի պիեսներից մեկը։

Ապրելով և ստեղծագործելով Թիֆլիսում, Սունդուկյանը սերտ կապեր ուներ վրաց գրական-հասարակական գործիչների հետ և ջերմորեն պաշտպանում էր Անդրկովկասի ժողովուրդների եղբայրության գաղափարը։ Հայտնի են նրա մտերմական կապերը վրաց նշանավոր բանաստեղծ Ակակի Ծերեթելու հետ, ինչպես արտիստներ Զմշկյանի ու Գ. Աղամյանի կապերը Աբաշիձեի և ուրիշների հետ։

Հայ երգիծաբանության ամենախոշոր դեմքը Հակոբ Պարոնյանն է (1843—1891)։ Նա արևմտահայ նշանավոր դեմոկրատներից էր, հայ ժողովրդի ազատության ու առաջադիմության ջերմ պաշտպան։ Իր ստեղծագործության մեջ, ինչպես և հրապարակախոսական հոդվածներում, Հ. Պարոնյանն անխնա ծաղրում, խարազանում ու մերկացնում էր հայ ժողովրդի ներքին և արտաքին թշնամիներին։ Ամբողջ հայ գրականության մեջ ոչ մի հեղինակ այնքան սուր ու դիպուկ չի քննադատել ու մերկացրել կղերա-ֆեոդալական ու բուրժուական տարրերին, փոքր ժողովուրդներին ճնշող մեծ տերություններին, որքան Հ. Պարոնյանը։

Հ. Պարոնյանը գեղարվեստական ընդհանրացումների, տիպեր կերտելու աննման վարպետ է։ Նրա «Մեծապատիվ մուրացկաններ», «Ազգային ջոջեր», «Պաղտասար աղբար», «Ատամնաբույժն արևելյան» և մյուս գրվածքները գեղարվեստական խոսքի լավագույն նմուշներ են։ Հ. Պարոնյանի քաղաքական սատիրան մեզ հիշեցնում է համաշխարհային սատիրիկներին՝ Մոլիերին և Սալտիկով-Շչեդրինին։ Նա եղել է և մնում է մեր ժողովրդի ամենասիրված գրողներից մեկը։

Արվեստ

XIX դարի երկրորդ կեսին զարգանում է նաև հայկական արվեստը։ Թատրոնը, նկարչությունը, երաժշտությունը կանգնում են ռեալիստական ուղու վրա, բարձրանում է նրանց հասարակական-քաղաքական, կուլտուրական, դաստիարակչական դերն ու նշանակությունը։ Արվեստի զարգացումը սերտորեն կապ-

ված էր կյանքի աճող պահանջների հետ։ 1861 թվականին Կ. Պոլսում Արևելյան թատրոնի բացման առթիվ արտասանած իր նշանավոր ճառում Մ. Նալբանդյանն ասում է. «Հայոց ազգը զանազան աշխարհներում, յուր տարագրության ու թշվառության մեջ, յուր բազմաթիվ հոգսերի ու տառապանքների մեջ, այո, վաղուց արդեն զգացել էր ազգային թատրոնի կարոտությունը»։ Նա բարձր է գնահատում ազգային թատրոնի դերը, դրվատում արևմտահայ թատերական գործիչներին։ «Թատրոնի բեմը ստոր չէ ուսումնական բեմից։ Թատրոնի բեմն է այն աթոռը, ուր նստում է փիլիսոփայությունը... Չկա մարդ, որի վրա ազդեցություն չգործի թատրոնը»,— գրում է Մ. Նալբանդյանը։

1851 թվականին Թիֆլիսում հիմնվում է Թամամշյանի թատրոնը, իսկ 1861 թվականին՝ Պոլսի «Արևելյան» և Զմյուռնիայի «Վասպուրական» թատրոնները։ Այս թատրոնները հետզհետե դառնում են արևելահայ և արևմտահայ թատերական արվեստի օջախներ. այդ թատրոններում են աճում մեր նշանավոր դերասանների մեծ մասը։ 1858 թվականին Կ. Պոլսի Պերա թաղամասի Նաում թատրոնում արևմտահայ նշանավոր թատերական գործիչ և դրամատուրգ Սրապիոն Հեքիմյանի ջանքերով առաջին անգամ Թուրքերեն լեզվով ներկայացում է տրվում, որտեղ բոլոր դերակատարները հայեր էին։ Հայերն ընդհանրապես խոշոր դեր են կատարել Թուրքական թատրոնի, երաժշտության ու կուլտուրայի մյուս ճյուղերի զարգացման ասպարեզում, որը խոստովանում են հենց իրենք Թուրք առաջադեմ և օբյեկտիվ հեղինակները։

Հայկական դասական դրամատուրգիայի զարգացումը, Գ. Սունդուկյանի, Հ. Պարոնյանի, Ալ. Շիրվանզադեի և մյուսների դրամաներն ու կոմեդիաները թատրոնը մոտեցնում են կյանքին, բարձրացնում նրա հասարակական-դաստիարակչական դերն ու նշանակությունը։ Հայկական բեմ են բարձրանում նաև եվրոպական և ռուսական ականավոր դրամատուրգների գործերը։

Թատրոնի զարգացման այս նոր էտապում հանդես են գալիս տաղանդավոր դերասաններ Պետրոս Ադամյանը (1849—1891), Գևորգ Զմշկյանը (1837—1915), Միհրդատ Ամերիկյանը (1843—1879), Արուս Փափազյանը (1841—1907), Ազնիվ Հրաչյան (1853—1920) և ուրիշներ։ Պետրոս Ադամյանը եղել է հայ բեմի պարծանքը, շեքսպիրյան դերերի բարձրարվեստ, վարպետ կատարողը։ Նա մեծ ազդեցություն է թողել հետագա սերունդների վրա, խոշոր դեր կատարել թատրոնի ժողովրդականացման գործում։

Նկարչության բնագավառում աչքի են ընկնում Վարդգես Սուրենյանը (1860—1921), Գևորգ Բաշինջաղյանը (1857—1925), Էմանվել Մահտեսյանը (1857—1908), Հարություն Շամշինյանը (1856—1914) և ուրիշներ։ Աշխարհահռչակ ծովանկարիչ Հովհաննես Այվազովսկին (1817—

1900) հայկական թեմաներով նկարում է «Արարատ», «Արարատ լեռան հովիտը», «Սևանա լիճը», «Հայերի ջարդը Տրապիզոնում 1895 թվականին», «Կենդանի հայերին թուրքերը լցնում են Մարմարա ծովը», «Կարսի գրավումը գիշեր ժամանակ», «Խրիմյան Հայրիկ» և մի շարք այլ կտավներ։

Հայկական կոտորածների կապակցությամբ Մ. Խրիմյանին հայերեն լեզվով գրած իր նամակներից մեկում Հ. Այվազովսկին ասում է. «Խորին ցավով վշտացած է սիրտս անբախտ հայոց չլսված, չտեսնված կոտորածով»։ Հ. Այվազովսկին մոտիկ կապեր է ունեցել և մեծ ազդեցություն թողել նաև մի շարք հայ նկարիչների վրա։

Դարի երկրորդ կեսին նկատելի վերելք է ապրում նաև երաժշտությունը։ Հասարակական-քաղաքական կյանքի, ազգային-ազատագրական շարժումների աշխուժացումն իր կնիքն է դնում ինչպես արվեստի մյուս ճյուղերի, այնպես էլ երաժշտության վրա։ Նոր թափ ու լայն տարածում է ստանում հայրենասիրական, ազատասիրական երգն ու երաժշտությունը։

Իրենց բարձրարվեստ ստեղծագործություններով աչքի են ընկնում Տիգրան Չուխաջյանը (1837—1898), Քրիստափոր Կարա-Մուրզան (1853—1902), Մակար Եկմալյանը (1855—1905) և ուրիշներ։

Տ. Չուխաջյանը մեր ազգային երաժշտության կարկառուն դեմքերից է։ Երաժշտական կրթություն ստանալով Միլանում, նա կարողացավ վարպետորեն օգտագործել եվրոպական երաժշտական բարձր կուլտուրան և նոր ուղու վրա դնել հայկական երաժշտության զարգացումը։ 1868 թվականին ստեղծագործած նրա «Արշակ երկրորդ» օպերան պատմական-հայրենասիրական բովանդակությամբ երաժշտական հիանալի մի կոթող է, լայն ժողովրդականություն վայելող, ամենասիրված օպերաներից մեկը։

Տ. Չուխաջյանը հայկական երաժշտական թատրոնի, հայկական առաջին օպերայի հիմնադիրն է։ Նա գրել է նաև «Լեբլեբիջի» երաժշտական կոմեդիան, «Զեմիրե» լիրիկական օպերան, երգեր, ռոմանսներ, սիմֆոնիկ գործեր և այլն։ Նա եղել է առաջավոր հասարակական գործիչ, երաժշտական-թատերական խմբերի կազմակերպիչ, խոշոր դեր է կատարել հայկական երաժշտական կուլտուրայի զարգացման գործում։ Նրան արժանի կերպով ժամանակակիցներն անվանել են «Հայկական Վերդի»։

Հայկական երաժշտության զարգացման գործում մեծ վաստակ ունեն նաև Ք. Կարա-Մուրզան և Մ. Եկմալյանը, առաջինը հատկապես խմբական, իսկ երկրորդը՝ եկեղեցական երաժշտության բնագավառում։ Ք. Կարա-Մուրզան բեղմնավոր աշխատանք է կատարել հայ ժողովրդական երգերը հավաքելու, մշակելու և տարածելու ուղղությամբ։ Նա

շրջել է Անդրկովկասի տարբեր գավառները, բազմաթիվ երգչախմբեր կազմակերպել, նրանց երգեր, նոտաներ սովորեցրել, ժողովրդականացրել ազգային երգն ու երաժշտությունը։

XIX դարի երկրորդ կեսի հայկական կուլտուրան ավելի հարստացրեց և նոր բարձրության հասցրեց մեր ժողովրդի բազմադարյան մշակույթը։ Դա իր արժանի տեղն ունի ոչ միայն մեր ժողովրդի, այլև համաշխարհային կուլտուրայի պատմության մեջ։

ԲԱԺԻՆ ԵՐՐՈՐԴ

ՀԱՅԱՍՏԱՆԸ ԻՄՊԵՐԻԱԼԻԶՄԻ ԵՎ ՌՈՒՍԱԿԱՆ ԲՈՒՐԺՈՒԱ-ԴԵՄՈԿՐԱՏԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ

XV ԳԼՈՒԽ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ XX ԴԱՐԻ ԱԿԶԲԻՆ

1. ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հայաստանը իմպերիալիզմի դարաշրջանում

XIX դարի վերջին և XX դարի սկզբին Ռուսաստանը թևակոխում է իմպերիալիզմի դարաշրջանը՝ կապիտալիզմի անկման և պրոլետարական հեղափոխության հաղթանակի ժամանակաշրջանը։

Ռուսաստանի հետ Արևելյան Հայաստանը և ամբողջ Անդրկովկասը նույնպես թևակոխում են իմպերիալիզմի դարաշրջանը։ Երկրի սոցիալ-տնտեսական կյանքում նոր փոփոխություններ են կատարվում։ Ուժեղանում է ռուսական և արտասահմանյան կապիտալի մուտքը Անդրկովկաս, հիմնվում են նոր ֆաբրիկա-գործարաններ, արդյունաբերության մեջ տեղի է ունենում կենտրոնացում, աճում է բանվորների թիվը, սրվում են աշխատանքի ու կապիտալի միջև եղած հակասությունները և այլն։

Տարբեր էր դրությունը Թուրքիայի տիրապետության տակ գտնվող Արևմտյան Հայաստանում։ Ինչպես ամբողջ Թուրքիան, այնպես էլ Արևմտյան Հայաստանը, գտնվում էր տնտեսական զարգացման ցածր մակարդակի վրա։ Երկրում տիրող էին հետամնաց ֆեոդալական, ագրարային հարաբերությունները, կապիտալիզմը շատ թույլ էր զարգացած, չկային քիչ թե շատ աչքի ընկնող արդյունաբերական կենտրոններ, չկար բանվոր դասակարգ, չկային բանվորական, սոցիալ-դեմոկրատական կազմակերպություններ։ Եվ եթե Արևելյան Հայաստանը Ռուսաստանի հետ թևակոխեց իմպերիալիզմի դարաշրջանը, տնտեսական կյանքի, արդյունաբերության զարգացման ուղղությամբ նկատելի տեղաշարժեր

կատարվեցին, ակտիվ մասնակցություն ունեցավ հեղափոխական շարժումներին, ապա Արևմտյան Հայաստանը փաստորեն դուրս մնաց տնտեսական-քաղաքական զարգացման այդ ուղուց։ Թուրքիայում տիրող բռնապետական կարգերը անհամատեղելի էին կապիտալիզմի զարգացման հետ։

Արդյունաբերական կապիտալիզմի զարգացումը

Հայաստանն արդյունաբերական տեսակետից ընդհանրապես թույլ զարգացած երկիր էր։ Արևելյան Հայաստանում պղնձի, գինու և կոնյակի մի քանի խոշոր արդյունաբերական ձեռնարկություններ կային։ Գերակշռողը արդյունաբերական մանր ձեռնարկություններն էին։

Հայաստանի արդյունաբերության հին և աշքի ընկնող ճյուղը լեռնարդյունաբերությունն էր։ XX դարի սկզբին լեռնարդյունաբերությունն արագ թափով զարգանում է։ Դրան մեծապես նպաստում է արտասահմանյան կապիտալի մուտքը, որի առաջ ցարական կառավարությունը լայնորեն բացել էր Անդրկովկասի դռները։ «Ես մշտապես կանգնած եմ արտասահմանյան կապիտալը կովկասյան արդյունաբերության մեջ ներգրավելու կողմը»,— գրում է Կովկասի փոխարքա Վորոնցով-Դաշկովը 1905—1913 թթ. իր հաշվետվության մեջ։

XIX դարի վերջին և XX դարի սկզբին արտասահմանյան կապիտալի տեսակարար կշիռն Անդրկովկասի արդյունաբերության մեջ արագ թափով բարձրանում է։ 1892—1902 թվականներին Բաքվի նավթարդյունաբերության մեջ արտասահմանյան կապիտալն աճում է մոտ 6 անգամ, իսկ տեղականը՝ 3 անգամ։ Հայաստանի պղնձարդյունաբերության մեջ արտասահմանյան կապիտալը մոնոպոլիստական դիրք է գրավում։ 1887 թվականին Փարիզում հիմնվում է «Ախթալայի հանքագործների ֆրանսիական ընկերությունը», 1898 թվականին կազմվում է «Շահալի-Էլիար լեռնարդյունաբերական ընկերությունը», 1899 թ. մարտին, ֆինանսների մինիստր Վիտտեյի աջակցությամբ, Ռուսաստանում գործելու պաշտոնական իրավունք է ստանում 1897 թ. հոկտեմբերին Փարիզում հիմնված «Կովկասյան արդյունաբերական-մետաղագործական ընկերությունը», որն ամենախոշորն էր և ամենահարուստը։ Այս ընկերությունը կարճ ժամանակամիջոցում իր ձեռքում կենտրոնացնում է Ալավերդու և մասամբ Զանգեզուրի պղնձի արտադրությունը։ Զանգեզուրի պղնձահանքերի կոնցեսիան ձեռք բերելու փորձեր են կատարում նաև անգլիական կապիտալիստները։

Հայաստանի պղնձարդյունաբերությունը, որն Անդրկովկասում առաջին տեղն էր գրավում, սուր պայքարի առարկա էր դարձել արտասահմանյան և տեղական կապիտալիստների միջև։ Տեղական կապիտալը

ի վիճակի չէր դիմանալու այդ մրցությանը և հետզհետե զիջում էր իր դիրքերը։

1901 թվականին Հայաստանում պղինձ արտադրվել է 117 հազար փութ, 1908-ին՝ 196, 1913-ին՝ 343։ Տեղական կապիտալի տեսակարար կշիռը պղնձարդյունաբերության մեջ արագ թափով ընկնում է, իսկ արտասահմանյան կապիտալինը՝ բարձրանում։ Այսպես, օրինակ. 1908 թվականին տեղական կապիտալը կազմում էր 38,5 տոկոս, 1910-ին՝ 29,5, 1913-ին՝ 15։

1913 թվականին Հայաստանի ծանր արդյունաբերության տարեկան արտադրանքի ավելի քան 59 տոկոսը տալիս էր պղնձարդյունաբերությունը։ Բանվորների ընդհանուր թվի մոտ 80 տոկոսն աշխատում էր պղնձարդյունաբերության մեջ։ 1909 թվականին Հայաստանը տալիս էր Անդրկովկասի պղնձի 66, իսկ Ռուսաստանի՝ 22 տոկոսը, 1913 թվականին՝ Անդրկովկասի՝ 54, Ռուսաստանի՝ 17 տոկոսը։ Պղնձի տարեկան արտադրանքի մոտ 93 տոկոսը պատկանում էր օտարերկրյա կապիտալիստներին։

Հայաստանի լեռնարդյունաբերության կարևոր ճյուղերից էր նաև աղի արտադրությունը։ Կողբի, Նախիջևանի և Կաղզվանի աղահանքերից 1899 թվականին ստացվել է մոտ 1,800 հազար փութ աղ, իսկ 1903-ին՝ 2,600 հազար։

XX դարի սկզբներին արագ թափով զարգանում է նաև գինու, օղու, կոնյակի արտադրությունը։ Այստեղ նույնպես իմպերիալիզմի դարաշրջանին հատուկ որոշ փոփոխություններ են կատարվում։ Տեղի է ունենում կապիտալի և արտադրության կենտրոնացում, մանր ձեռնարկություններն իրենց տեղը զիջում են խոշոր ձեռնարկություններին և այլն։ Մեծահարուստ ռուս կապիտալիստ Շուստովը, որը մի շարք գործարաններ ուներ նաև Վարշավայում, Քիշնևում և Սամարղանդում, Հայաստանի գինու, օղու, կոնյակի ամենախոշոր մոնոպոլիստն էր։ Արտադրության այդ ճյուղը կիսով չափ նրա ձեռքում էր կենտրոնացած։

1901 թվականին Երևանի նահանգում խաղողի այգիների տարածությունը կազմում էր 9465 դեսյատին, որից ստացվում էր 1,128 հազար փութ խաղող, 611 հազար դույլ գինի, 5,336 հազար աստիճան սպիրտ. 1903-ին՝ 9804 դեսյատին, 2,917 հազար փութ խաղող, 1,753 հազար դույլ գինի, 5,821 հազար աստիճան սպիրտ։ Դարի առաջին տասնամյակում մի քանի անգամ ավելանում է ձեռնարկությունների թիվը, գրեթե եռապատկվում սպիրտի արտադրությունը։

Առանձնապես արագ թափով աճում է կոնյակի արտադրությունը։ 1900 թվականին կոնյակ արտադրվել է 283 հազար աստիճան, 1902-ին՝

845, 1904-ին՝ 3,229։ Հայաստանում կոնյակի 6 գործարան կար։ Կոնյակի մոտ 90 տոկոսն արտահանվում էր։

XX դարի սկզբներին նկատելի չափով աճում և ընդարձակվում են արդյունաբերական մյուս ճյուղերը՝ մեխանիկական, կաշեգործական, բամբակաղտիչ, պանրագործական և այլ տիպի ձեռնարկությունները։ 1908 թվականին, պաշտոնական տվյալների համաձայն, Երևանի նահանգում կար 2773 այսպես կոչված ֆաբրիկա-գործարան, որոնց տարեկան արտադրանքը կազմում էր 1.236 հազար ռուբլի։ Բանվորների թվի վերաբերյալ ստույգ տվյալներ չկան. մոտավոր հաշվումներով շուրջ 10—12 հազար բանվոր կար։

Մեզ հետաքրքրող ժամանակաշրջանում փոխվում է նաև բնակչության կազմը, աճում է քաղաքային բնակչությունը։ 1914 թվականին Անդրկովկասի մոտ 7.600 հազար բնակիչներից 1.300 հազարը ապրում էր քաղաքներում։ Հայաստանի շուրջ մեկ միլիոն բնակիչներից քաղաքներում ապրում էր ավելի քան 100 հազարը կամ մոտ 10,5 տոկոսը։ Երևանն ուներ 31 հազար բնակիչ, Ալեքսանդրապոլը՝ 33 հազար, Նոր Բայազետը՝ 12 հազար։

Ստ. Շահումյանը 1906 թ. «Կայծ» թերթում խոսելով հայ իրականության մեջ կապիտալիզմի զարգացման մասին գրում է. «Եվրոպական կապիտալիզմը, որ տիրապետող արդյունագործական եղանակ էր դարձել Ռուսաստանում վերջին տասնամյակների ընթացքում, մուտք գործեց և մեր երկիրը և դրեց իր ուժեղ և ուրույն դրոշմը հայկական իրականության վրա։

Մենք ունենք արդեն խոշոր արդյունագործություն։ Մենք ունենք արդյունագործության կենտրոններ... Մենք ունենք արդեն այդ քաղաքներում բուրժուազիա և պրոլետարիատ իսկական եվրոպական իմաստով»[1]։

Բանվորների և գյուղացիների դրությունը

Իմպերիալիզմի դարաշրջանում, ինչպես ամենուրեք, այնպես էլ Հայաստանում, աշխատավորական մասսաների դրությունը խիստ վատանում է։ Ուժեղանում է բանվորների և գյուղացիների ճնշումն ու շահագործումը, նրանց քայքայման ու աղքատացման պրոցեսը։

Առանձնապես ծանր էր բանվորների դրությունը։ Նրանք աշխատում էին օրական 12—14 ժամ և ստանում չնչին աշխատավարձ։ Ալավերդու և Ղափանի պղնձահանքերում, անօրինակ ծանր ու դժվարին պայմաններում, հանքափոր բանվորները աշխատում էին առավոտյան ժամը

[1] Ստ. Շահումյան, Երկեր, հ. 1, էջ 123—124, Երևան, 1955։

6-ից մինչև երեկոյան ժամը 6-ը և ստանում օրական 60 կոպեկ աշխատավարձ։

Բանվորներն անխնա կերպով շահագործվում ու կեղեքվում էին նաև արտադրության մյուս ճյուղերում։ Երևանում Միրզոյանի ձիաքարշի բանվորներն աշխատում էին ավելի քան 16 ժամ և ամսական ստանում 20—25 ռուբլի։ Ավելի ծանր էր աղահանքերում և կաշվի արտադրության մեջ աշխատող բանվորների դրությունը։

Չափազանց ծանր էին բանվորների աշխատանքային և կենցաղային պայմանները։ Չկար կյանքի ապահովագրություն, բժշկական և կուլտուր-կենցաղային սպասարկում։ Անտանելի էին բանվորների բնակարանային պայմանները, նրանք մեծ խմբերով ապրում էին բարաքներում, հանրակացարաններում, կեղտի ու մրի մեջ, մաքուր օդի, լույսի ու արևի կարոտ։ Բանվորներն իրավազուրկ էին. չունեին խոսքի, մամուլի, ժողովների ազատություն։

1900—1903 թվականների արդյունաբերական ճգնաժամը էլ ավելի է խորացնում բանվորների ծանր ու անտանելի վիճակը։ Գործարանատերերը մասսայորեն փողոց էին նետում բանվորներին, կամայականորեն ավելացնում աշխատանքի ժամերը, իջեցնում աշխատավարձը, անտեղի տուգանում և այլն։ Կապիտալիստներն ամեն կերպ ձգտում էին ճգնաժամից դուրս գալ բանվորների հաշվին։ Այդ տարիներին մեծ թվով բանվորներ, անգործությունից ու կարիքից հարկադրված, արդյունաբերական կենտրոններից վերադարձան իրենց հայրենի գյուղերը կամ չվեցին օտար երկրներ։

Վ. Ի. Լենինը, խոսելով Ռուսաստանի բանվորների անօրինակ ծանր դրության մասին, գրում է. «Ռուսաստանում բոլոր ազգությունների բանվորներն այնպիսի տնտեսական ու քաղաքական ճնշման տակ են գտնվում, որը չկա ոչ մի պետության մեջ...»։

Ծանր էր նաև աշխատավոր գյուղացիության դրությունը։ Կապիտալիզմի զարգացումը գյուղում տնտեսապես քայքայում ու ընչազրկում էր աշխատավոր գյուղացուն։ Գյուղում աճում էր սոցիալական շերտավորումը, հողազուրկ և սակավահող գյուղացիների թիվը։ Ցարական կառավարության ծանր հարկերն ու պարհակները, վաշխառուների ու կուլակների կեղեքումները դառն ու թշվառ կացության մեջ էին դրել չքավոր գյուղացիությանը։

Առևտրական հողագործության, հողի առ ու ծախի աճը իր հերթին արագացնում էր աշխատավոր գյուղացիների հողազրկման և ունեզրկման պրոցեսը։ Կալվածատերերն ու կուլակները զանազան միջոցներով

[1] Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 8, էջ 635։

խլում էին գյուղացիների հողերը, մի բևեռում կենտրոնանում էին հողազուրկ, չքավոր գյուղացիները, իսկ մյուս բևեռում՝ հողատերերը։

XX դարի սկզբում ունեզրկվող գյուղացիների արտագնացությունը մասսայական բնույթ է ստանում։ 1903 թվականին արտագնացների թիվը Նոր-Բայազետի գավառում կազմում էր 5000 մարդ, Ալեքսանդրապոլի գավառում՝ 2200, Նախիջևանի գավառում՝ 3000, Շարուր-Դարալագյազի գավառում՝ 3200։

1906 թվականին Ստ. Շահումյանը, խոսելով գյուղում կապիտալիզմի զարգացման մասին, ասում է. «Ո՞վ չգիտե, որ հայկական գյուղն էլ ենթարկված է արդեն դրամական տնտեսության ու կապիտալիստական արդյունագործական հարաբերությունների ազդեցության։ Գյուղական մանր տնտեսությունը քայքայվում է, գյուղացիության մեծամասնությունը զրկվում է հողից ու արտադրության միջոցներից, ստվարացնում պրոլետարիատի շարքերը և մարդկային նյութ մատակարարում խոշոր կապիտալիստական արդյունագործության»[1]։

Բանվորներն ու գյուղացիները, հասարակության այդ հիմնական աշխատավորական դասակարգերը, գտնվում էին ցարական կառավարության և տեղական շահագործողների կրկնակի լծի տակ, իրավական և տնտեսական ծանր պայմաններում։ Բանվորների և գյուղացիների այդ վիճակն էլ հենց նրանց մղում էր հեղափոխական պայքարի՝ ցարիզմի, բուրժուազիայի ու կալվածատերերի դեմ։

2. ՄԱՍՍԱՅԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ՍԿԻԶԲԸ. ՍՈՑԻԱԼ-ԴԵՄՈԿՐԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԱՋԱՑՈՒՄԸ

Հեղափոխական շարժումները 1905 թ. նախօրեին

1905 թվականի բուրժուա-դեմոկրատական հեղափոխությունը միանգամից չբռնկվեց։ 1905 թվականի նախօրեին Ռուսաստանում և նրա ծայրամասերում տեղի ունեցան մի ամբողջ շարք հեղափոխական ելույթներ, որոնք կարևոր նշանակություն ունեցան գալիք հեղափոխական փոթորիկների բռնկման համար։

XIX դարի վերջին և XX դարի սկզբին հեղափոխական շարժումների կենտրոնը Արևմտյան Եվրոպայից տեղափոխվել էր Ռուսաստան։ Ռուսական լայնածավալ կայսրության մեջ ամենուրեք սկսվել էր բանվորա-գյուղացիական և ազգային-ազատագրական մասսայական հեղափոխական շարժում։

[1] Ստ. Շահումյան, հ. 1, էջ 124։

Հեղափոխական շարժումն ընդգրկել էր նաև Անդրկովկասը։ 1901 թվականի Թիֆլիսի մայիսմեկյան քաղաքական ցույցերով սկսվում է Անդրկովկասի ժողովուրդների բացահայտ հեղափոխական պայքարը։ Այդ ցույցերին մասնակցում էին ավելի քան 3 հազար հայ, վրացի, ադրբեջանցի, ռուս և այլ ազգության պատկանող բանվորներ ու աշխատավորներ։ Ցուցարարները տանում էին կարմիր դրոշակ, Մարքսի և Էնգելսի նկարները, «Պրոլետարներ բոլոր երկրների, միացե՛ք», «Կեցցե՛ քաղաքական ազատությունը», «Կորչի բռնակալությունը» լոզունգները։ Ցույցերը ղեկավարում էր Թիֆլիսի սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունը։ Լենինյան «Իսկրա»-ն, բարձր գնահատելով այդ ցույցերը, 1901 թ. հուլիսին գրել է. «Թիֆլիսում տեղի ունեցած իրադարձությունը պատմականորեն նշանակալի է ամբողջ Կովկասի համար։ Այդ օրվանից Կովկասում սկսվում է բացահայտ հեղափոխական շարժում»։

1902 թվականի հունվարին Բաթումում գործադուլ են անում Մանթաշևի գործարանի բանվորները, որն հաղթանակով է վերջանում։ 1902 թ. մարտին Բաթումում տեղի է ունենում մոտ 6000 վրացի, հայ, ռուս և այլազգի բանվորների քաղաքական վիթխարի ցույց, որը ղեկավարում էր տեղի սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունը։ Ցարական ոստիկաններն ու զորքերը կրակում են ցուցարարների վրա, սպանում 15, վիրավորում 50, բանտարկում 500 մարդ։ 1902—1903 թթ. Բաթումում 30 գործադուլ է տեղի ունենում։

1901—1902 թթ. մի շարք գործադուլներ և ցույցեր են տեղի ունենում Բաքվում։ 1903 թ. հուլիսին ավելի քան 40 հազար հայ, ադրբեջանցի, ռուս և այլ ազգի բանվորներ գործադուլ են անում, որը տևում է 20 օր։ 1904 թ. դեկտեմբերին բռնկվում է Բաքվի պրոլետարիատի ընդհանուր քաղաքական գործադուլը, որը խոշոր նշանակություն է ունենում ոչ միայն Անդրկովկասի, այլև Ռուսաստանի բանվորական շարժման հետագա զարգացման համար։ Այդ գործադուլը ղեկավարում էր ՌՍԴԲԿ Բաքվի կոմիտեն։ Բանվորները խոշոր հաղթանակ տարան։ Առաջին անգամ կոլեկտիվ պայմանագրեր կնքվեցին նավթարդյունաբերողների և գործադուլավորների միջև։

1905 թվականի նախօրեին հեղափոխական մի շարք ելույթներ տեղի ունեցան նաև Հայաստանում։ 1903—1904 թվականներին գործադուլ են անում Ալավերդու պղնձահանքերի բանվորները։ Նրանք պահանջում էին բարձրացնել աշխատավարձը, կրճատել աշխատանքի ժամերը, բարելավել իրենց կենցաղային պայմանները և այլն։ Ալավերդու բանվորների առաջին այդ ելույթները ճնշվում են, ղեկավարներին բանտարկում և արտաքսում են։

Ալեքսանդրապոլում առաջին հեղափոխական ելույթները տեղի են

ունենում 1902—1903 թվականներին։ 1904 թ. ապրիլին գործադուլ են անում Զիմողցյանի գործարանի բանվորները։ Տեղի սոցիալ-դեմոկրատական կազմակերպության ղեկավարությամբ նրանք ընտրում են 11 հոգուց կազմված բյուրո և գործարանատիրոջը ներկայացնում հետևյալ պահանջները. կրճատել աշխատանքի ժամերը, ավելացնել աշխատավարձը, հատկացնել բնակարան, բժշկական ձրի օգնություն, քաղաքավարի վերաբերմունք և այլն։

Բանվորների պահանջները մերժվում են։ Ապրիլի 30-ին գործադուլավորները բողոքի ցույց են կազմակերպում։ Նրանց միանում են քաղաքի ուրիշ ձեռնարկությունների և երկաթուղային բանվորները. ցուցարարների թիվն անցնում է հազար հոգուց։ Գործադուլի ղեկավարները հեղափոխական ճառեր են արտասանում։ Շուտով վրա են հասնում ոստիկաններն ու դաշնակցական խմբերը, ցրում են ցուցարարներին և բանտարկում մի շարք մարդկանց։ Հաջորդ օրը քաղաքում արգելվում է Մայիսի 1-ի տոնակատարությունը։ Բանվորական գործադուլներ են տեղի ունենում նաև Երևանում, Կարսում և այլ վայրերում։

XX դարի սկզբում ամբողջ Անդրկովկասում, այդ թվում և Հայաստանում, բանվորական շարժումը թևակոխում է իր զարգացման նոր էտապը։ Գերազանցապես տնտեսական բնույթ կրող, անջատ-անջատ, տարերային ելույթներ տեղի են տալիս ավելի կազմակերպված ու համախմբված, մասսայական հեղափոխական շարժումների։

Հաղպատի գյուղացիների 1903 թվականի ելույթը

Բանվորական շարժումները հզոր խթան հանդիսացան գյուղացիական ելույթների համար։ Հանձին բանվոր դասակարգի, աշխատավոր գյուղացիները ձեռք բերին բնական դաշնակից, մի դասակարգ, որն առաջատար և վճռական դեր էր կատարում շահագործողների ու ցարական կարգերի դեմ մղվող պայքարում։

1905 թվականի հեղափոխության նախօրեին ագրարային-գյուղացիական շարժումները Հայաստանում նկատելի կերպով աշխուժանում են. պայքարը հողի և ազատության համար դառնում է աշխատավոր գյուղացիությանը հուզող գլխավոր հարցը։ Այդ շրջանի գյուղացիական շարժումներից ամենանշանավորը Հաղպատի գյուղացիների 1903 թվականի ելույթն էր։

Լոռու շրջանի Հաղպատ գյուղը Ալավերդու և Սանահինի բանվորական կենտրոնների հետ կապված գյուղերից էր։ Սոցիալ-դեմոկրատների և հեղափոխական բանվորների ազդեցությունը բավականաչափ ուժեղ էր Հաղպատի գյուղացիների վրա։

Հաղպատը կալվածատիրական գյուղ էր. հողերի մեծ մասը պատկանում էր կալվածատեր Բարաթովին, մի մասը՝ վանքին և մնացած

փոքր մասը՝ գյուղացիներին։ Լավ արոտավայրերը նույնպես գտնվում էին կալվածատեր Բարաթովի ձեռքում։

1902 թվականին իշխան Բարաթովը բարձրացնում է հողի կապալավարձը. գյուղացիները հրաժարվում են և լքում նրա հողերը։ Գազազած կալվածատերը գյուղացիներին պատժելու համար պահանջում է վճարել անմշակ հողերի վարձը, այն էլ կրկնակի չափով, արգելում է արոտավայրերից օգտվել և այլն։ Գյուղացիները հրաժարվում են կատարել կալվածատիրոջ ապօրինի պահանջները և որոշում անվճար օգտվել արոտավայրերից ու հողերից։

Իշխան Բարաթովը Հաղպատի գյուղացիների դեմ գործ է հարուցում Թիֆլիսի օկրուգային դատարանում։ Ցարական դատարանը պաշտպանում է կալվածատիրոջ ապօրինի պահանջը և վճռում գյուղացիներին զրկել արոտավայրերից ու անասունների ձմեռանոցից օգտվելու իրավունքից և վերգրել նրանց անասունները։

1903 թ. նոյեմբերին մի խումբ ոստիկանների ուղեկցությամբ Հաղպատ են գալիս դատական կատարածուն և Բորչալուի ոստիկանապետ պրիստավ իշխան Ավալովը։ Ավալովը գյուղացիներին հայտնում է դատարանի վճիռը և պահանջում ազատել արոտավայրերը, անասունները ներկայացնել վերգրման։ Գյուղացիները մերժում են պրիստավի պահանջը։

Նոյեմբերի 8-ին, երբ պրիստավն անձամբ, ոստիկանների ուղեկցությամբ ցուցակագրել է տալիս և դեպի Բարաթովի գրասենյակը քշում անասունները, գյուղացիք, այդ թվում կանայք, ծերունիներ, երեխաներ, միահամուռ կերպով քարերով ու փայտերով հարձակվում են պրիստավի ու ոստիկանների վրա և թույլ չեն տալիս իրենց անասունները տանել։ Իսկական գոտեմարտեր են տեղի ունենում գյուղացիների և ոստիկանների միջև։ Գյուղացիք քարերով ու մահակներով լավ ջարդում են մի քանի ոստիկանների։ Հովիվներն իսկույն փախցնում են բոլոր անասունները։

Գազազած պրիստավը օգնական ուժեր է բերել տալիս Հաղպատ։ Բայց ապատամբ գյուղացիները ոչ միայն չեն ընկճվում, այլև հարձակվում են պրիստավի և ոստիկանների վրա, քարկոծում նրանց։ Ավալովի հրամանով ոստիկանները մի քանի համազարկ են տալիս, բայց այդ էլ չի օգնում։ Գյուղացիները հերոսաբար առաջ են նետվում և փորձում շրջապատել ոստիկաններին։ Վախենալով շրջապատումից, նրանք կրակերով իրենց հետապնդող գյուղացիների վրա, նահանջում են Ախթալայի ճանապարհով։

Նոյեմբերի 8-ի կռիվների ժամանակ Հաղպատի գյուղացիներից սպանվում են 3 հոգի, վիրավորվում 5-ը, որից երկուսը մահանում են։

Ապստամբը գյուղացիներին պատժելու համար Զայալօղլուց անմիջապես Հաղպատ է գալիս կազակային հարյուրակ, որը և դաժան կերպով ճնշում է գյուղացիների ելույթը։ «Չի կարելի նկարագրել այն գազանությունները, որոնք տեղի ունեցան այնտեղ,— գրում է 1904 թվականին «Պրոլետարիատի կռիվ» թերթիկը։ Կազակները թափվելով տները, կողոպտում էին այն բոլորը, ինչ որ ձեռքի տակ էր ընկնում. ծեծում էին տղամարդկանց ու երեխաներին, խլում կանանց գլխի զարդերը»։ Ապըստամբության ակտիվ մասնակիցներից բանտարկում են 34 հոգու, որոնցից 14-ին ուղարկում են Թիֆլիս՝ Մետեխի բանտը։

Թիֆլիսի նահանգապետին ուղարկած իր զեկուցագրում Բորշալուի գավառապետը գրում է, որ Հաղպատի դեպքերի համար «անպայման մեղավոր են հաղպատցիները», ուստի պետք է ամբողջ գյուղը էկզեկուցիայի ենթարկել՝ «հարևան գյուղերի հայ բնակիչներին սաստելու և օրինակ ծառայելու համար, որը ներկայումս անպայման անհրաժեշտ է»։ Հաղպատը էկզեկուցիայի է ենթարկվում։ Գյուղացիներից բռնությամբ խլում են նրանց անասունները, ունեցվածքը և բավարարում կալվածատեր իշխան Բարաթովի ապօրինի պահանջները։ «Հաղպատը մենք հավասարեցրինք հողի հետ, այնտեղ այլևս խոտ չի բուսնի»,— ամբարտավան ձևով հայտարարում է ցարական սատրապ իշխան Ավալովը։ Թիֆլիսի նահանգապետին ուղարկած իրենց դիմումի մեջ հաղպատցիք գրում են. «Մեր գյուղը լիքը լցվել է զորքով, որին մենք պետք է կերակրենք, մենք զանվում ենք կործանման եզրին»։

Հաղպատի գյուղացիների հեղափոխական ելույթը դաժան կերպով ճնշվեց։ Բայց նա կարևոր նշանակություն ունեցավ գյուղացիական շարժումների հետագա զարգացման համար։ Դա մեր գյուղացիության պատմության հիշարժան էջերից մեկն է։

1903 թվականի հակացարական ելույթները

Իմպերիալիզմի էպոխայում ցարիզմի ազգային-գաղութային քաղաքականությունը ճնշված ժողովուրդների նկատմամբ ավելի է խստանում։ Ցարական Ռուսաստանը, ինչպես Վ. Ի. Լենինն էր ասում, ժողովուրդների բանտ էր։ Միլիոնավոր մարդիկ հեծում էին ցարիզմի բիրտ ու դաժան լծի տակ։ Արևելյան Հայաստանը, որը մտնում էր Կովկասի փոխարքայության մեջ, ցարիզմի կողմից ազգային գաղութային ճնշման էր ենթարկվում։

Ցարական կառավարությունը խեղդում էր հայերի ազգային-ազատագրական և հեղափոխական շարժումները, նրանց պետական անկախության գաղափարը, փակում հայկական դպրոցները։ Հայերի հալածանքներն առանձնապես տուր բնույթ ստացան Կովկասի կառավարչապետ, գարշելի մեծապետական շովինիստ իշխան Գոլիցինի ժամանակ։

1903 թվականի հունիսի 12-ին ցարական կառավարությունը, Գոլիցինի նախաձեռնությամբ, օրենք է հրատարակում հայ եկեղեցական կալվածքներն ու գույքերը սեկուլյարիզացիայի ենթարկելու (պետականացնելու) վերաբերյալ։ Քանի որ եկեղեցական կալվածքներից ստացվող եկամուտներով էին հիմնականում պահվում հայկական դպրոցները, ուստի այդ օրենքը հայկական դպրոցներին զրկում էր նյութական միջոցներից և դնում փակման վտանգի առաջ։ Հունիսի 12-ի օրենքով ավելի քան 300 դպրոց փակվեց, հազարավոր աշակերտներ և բազմաթիվ ուսուցիչներ փողոց նետվեցին, չտեսնված հալածանք սկսվեց հայ մտավորականների դեմ, խիստ հսկողության տակ դրվեցին հայկական կուլտուրական-բարեգործական հաստատությունները։

Հունիսի 12-ի օրենքը մասսայական դժգոհություն և բուռն զայրույթ առաջ բերեց հայ ժողովրդի լայն շրջաններում։ Հայաստանում և Անդրկովկասի հայաբնակ վայրերում ամենուրեք տեղի ունեցան բողոքի ցույցեր և զինված ելույթներ ցարական կառավարության դեմ։

Ականավոր հեղափոխական Բոգդան Կնունյանցը (1878—1911) 1903 թվականին «Խակրա» թերթում տպագրված իր հոդվածում ցարիզմի այդ քաղաքականությունն անվանեց «նոր ավազակություն»։ «Մինչև այժմ չտեսնված դեպքեր են տեղի ունենում մեզ մոտ,— գրում է Բ. Կնունյանցը. ամենախուլ տեղերից լուրեր են գալիս կառավարության հետ զինված ընդհարումների, մասսայական ցույցերի, միտինգների մասին և այլն։ Հեղափոխական փոթորիկով բռնկված է Անդրկովկասը։

Սխալ կլիներ կարծել, թե միայն այդ օրենքը ի վիճակի կլիներ նման փոթորիկ առաջ բերել։ Կուլտուրական խաղաղ հիմնարկների սիստեմատիկ հետապնդումները, տխրահռչակ «ռուսականացման քաղաքականությունը», 300-ից ավելի հայկական դպրոցների փակումը, բարեգործական հիմնարկների գործունեության սահմանափակումը, հրատարակչական ընկերությունների փակումը և մի ամբողջ շարք նման միջոցառումները, հետզհետե սուր հակամարտություն ստեղծեցին հայ բնակչության և կառավարության միջև, որը վաղ թե ուշ պետք է պոռթկար»[1]։

Հունիսի 12-ի օրենքի գործադրումը ամենուրեք հանդիպեց ժողովրդի միահամուռ դիմադրության։ Առաջինը հանդես եկավ Ալեքսանդրապոլը. 1903 թ. հուլիսի 29-ին հնչեցին եկեղեցիների զանգակները, ավելի քան 5 հազար մարդ հավաքվեց առաջնորդարանի առաջ և պա-

[1] Б. М. Кнунянц, Избранные произведения, 1903—1911 гг., Ереван, 1958, стр. 40

հանջեց այնտեղ եկած կաթողիկոս Խրիմյան հայրիկից չկատարել կառավարության որոշումը, չհանձնել եկեղեցական գույքը։

1903 թ. օգոստոսի 3-ին Երևանում մի քանի հազար մարդ բողոքի ցույցեր կազմակերպեցին, երդվեցին մինչև արյան վերջին կաթիլը դիմադրել և թույլ չտալ հունիսի 12-ի օրենքը գործադրել։ Ժողովրդական ցույցերը ցրելու համար նահանգապետը դիմում է զորքի օգնությանը։ Տեղի են ունենում զինված ընդհարումներ, վիրավորվում են մի շարք մարդիկ։

Օգոստոսի 24-ին Ախալցխայում տեղի ունեցած ցույցերին մասնակցում են մի քանի հազար մարդ. ցուցարարները միաբերան գոչում էին. «Ավելի լավ է մեռնենք, քան թույլ տանք, որ մեր իրավունքները ոտնակոխ անեն»։ Նույն օրը հանրագիր է ուղարկվում Խրիմյանին, որի տակ ստորագրել էին 10 հազար մարդ։

Օգոստոսի 29-ին բողոքի հսկա ցույց են կազմակերպում Ելիզավետպոլի հայերը։ Նրանք երդվում են մինչև վերջ դիմադրել կառավարության որոշմանը։ Շուտով ցուցարարների վրա են հարձակվում ոստիկանները, կազակները, 2 վաշտ զինվորներ։ Տեղի են ունենում զինված ընդհարումներ։ Փոխգնդապետ Անդրեևը անձամբ գնդակահարում է մի հայ երիտասարդի, որը բռնելով նրա ձիու սանձը, նրան կողոպտիչ և սրիկա էր անվանել։ Այդ օրը սպանվում են 10 հոգի, վիրավորվում 70, որից 20-ը մահանում են։

Օգոստոսի 31-ին Թիֆլիսում հոգեհանգիստ է կատարվում Ելիզավետպոլում զոհվածների համար։ ՌՍԴԲԿ Կովկասյան միութենական կոմիտեն հակացարական կոչ է տարածում ժողովրդի մեջ։ Խաղաղ հոգեհանգիստը վեր է ածվում հեղափոխական ցույցի. ժողովրդի միջից լսվում է. «Կորչի ինքնակալությունը», «Փառք զոհված մարտիկներին»։ Ցուցարարների վրա հարձակվում են կազակներն ու ստրաժնիկները. տեղի է ունենում զինված ընդհարում, սպանվում են 2 հոգի։ Դիշերը մասսայական ձերբակալություններ են կատարվում. քաղաքը հայտարարվում է ռազմական դրության մեջ։

Բաքվում դեպքերն ավելի սուր կերպարանք են ստանում։ Սեպտեմբերի 2-ին Պարապետում՝ Բաքվի պրոլետարիատի ավանդական հավաքավայրում, տեղի է ունենում մեծ ցույց։ Վրա հասած ոստիկաններն ու կազակները փորձում են ցրել ցուցարարներին, բայց չեն կարողանում։ Երկու կողմերից սկսվում են կրակոցներ, որը տևում է մեկ ժամից ավելի։ Բազմաթիվ մարդիկ սպանվում և վիրավորվում են։ Կասպիական նավատորմը մոտենում է ափին և սպառնում ռմբակոծել քաղաքը։

Բողոքի ցույցեր և ընդհարումներ են տեղի ունենում նաև Կարսում, Էջմիածնում, Շուշիում, Լոռիում, Ղամարլվում, Նախիջևանում, Ախալքալաքում, Բաթումում և այլ հայաբնակ վայրերում։ «Ամենուրեք ժողովուրդը զենքը ձեռքին էր դիմավորում ցարական չինովնիկներին, ամենուրեք ընդհարումներ են տեղի ունեցել զորքի հետ»,— ասում է Բ. Կնունյանցը։

Բնորոշ է, որ մի շարք տեղերում հարևան ադրբեջանցիներն ու վրացիները հանդես եկան հայերի պաշտպանությամբ, մասնակցեցին նրանց բողոքի ցույցերին։ Երևանում ադրբեջանցիները միանալով ցուցարարներին ասում են՝ «թագավորը մեզ էլ քիչ վատություն չի արել»։

Հայ ժողովրդի պայքարը ցարական կառավարության դեմ ազգային և դասակարգային խոր արմատներ ուներ։ Դա ուղղված էր ոչ միայն հունիսի 12-ի օրենքի, այլև ցարիզմի ամբողջ ազգային-գաղութային ռեակցիոն քաղաքականության դեմ։ 1903 թվականի հակացարական ելույթները սերտորեն կապված էին ցարիզմի և բուրժուազիայի դեմ բարձրացող բանվորական հեղափոխական շարժման հետ։

Հայերի հակացարական այդ շարժումը միատարր չէր, ինչպես որ միատարր չէր հայ հասարակությունը։ Հասարակական տարբեր դասակարգեր, տարբեր խավեր էին մասնակցում այդ շարժմանը, որոնք ունեին տարբեր շահեր, տարբեր ձգտումներ։ Հայ հոգևորականությունը ձգտում էր ապահովել իր շահերը, իր ձեռքում պահել հայկական դպրոցները, նրանց նյութական միջոցները։ Բուրժուական կուսակցությունները, հատկապես դաշնակցությունը, որն առաջին անգամ սկսեց ակտիվորեն գործել Կովկասում, ձգտում էր այդ շարժումն օգտագործել իր խախտված դիրքերը ժողովրդի մեջ ամրապնդելու համար, հայ աշխատավորությանը շեղել դասակարգային պայքարի ուղուց և տանել «ազգային հեղափոխության» ուղիով։ Սոցիալ-դեմոկրատական կազմակերպություններն աշխատում էին ժողովրդական մասսայական այդ շարժմանը տալ հեղափոխական ուղղություն, դա միավորել ցարիզմի դեմ մղվող ընդհանուր շարժման հետ։

1903 թվականի հուզումները կովկասահայերի առաջին մասսայական բացահայտ ելույթներն էին ցարիզմի դեմ։ Հակացարական այդ շարժումները ազգային-ազատագրական, պրոգրեսիվ շարժումներ էին։ Դրանք թուլացնում էին ռեակցիայի գլխավոր պատվար ցարիզմի դիրքերը և դրանով իսկ օժանդակում հեղափոխական ուժերին։

Ստ. Շահումյանը հակացարական մասսայական այդ հուզումները նկատի ուներ, երբ գրում էր, թե «1903 թվականը շրջադարձային կետ էր կովկասահայերի պատմության մեջ»[1]։

[1] Ստ. Շահումյան, Երկեր, հ. 1, էջ 284։

Ցարական կառավարությունը զենքի ուժով ճնշեց 1903 թվականի ազգային-ազատագրական շարժումները. բայց 1905 թ. օգոստոսին, վախեցած հեղափոխությունից, վերացրեց հունիսի 12-ի օրենքը և վերադարձրեց եկեղեցական կալվածքները։

Սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունների առաջացումը

XX դարի սկզբին, ինչպես Ռուսաստանում, այնպես էլ Անդրկովկասում, ստեղծվում են լենինյան իսկրայական, սոցիալ-դեմոկրատական կազմակերպություններ։ Սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունների առաջացումը բանվորական շարժման զարգացման, բանվոր դասակարգի և բուրժուազիայի միջև դասակարգային պայքարի սրման հետևանք էր։ Անդրկովկասի սոցիալ-դեմոկրատական կազմակերպություններն ստեղծվում էին ինտերնացիոնալ սկզբունքով և հանդիսանում մեծ Լենինի հիմնադրած կոմունիստական կուսակցության տեղական ջոկատները։

XIX դարի վերջին և XX դարի սկզբին Անդրկովկասի ժողովուրդների ծոցից ծնվեց ականավոր մարքսիստ-լենինյանների մի ամբողջ պլեադա՝ Ա. Ծուլուկիձե, Լ. Կեցխովելի, Ստ. Շահումյան, Բ. Կնունյանց, Ի. Ստալին, Մ. Ցխակայա, Մ. Ազիզբեկով, Ա. Ջափարիձե, Կամո, Ս. Սպանդարյան և ուրիշներ։ Կանգնելով մարքսիզմ-լենինիզմի դրոշի շուրջը, մեծ Լենինի հավատարիմ այդ աշակերտներն ու զինակիցները դարձան Անդրկովկասի սոցիալ-դեմոկրատական, բոլշևիկյան կազմակերպությունների հիմնադիրներ ու ղեկավարներ, նոր տիպի կուսակցության կառուցողներ։

Անդրկովկասի սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունների ստեղծմանը և նրանց գործունեությանը ակտիվ մասնակցություն են ունեցել նաև ռուս նշանավոր հեղափոխականներ Վ. Կուռնատովսկին, Ն. Կոզերենկոն, Լ. Կրասինը, Մ. Կալինինը, Լ. Գալպերինը, Վ. Պոստոլովսկին, Դ. Բորբովսկին և ուրիշներ։

Անդրկովկասի լենինյան-իսկրայական սոցիալ-դեմոկրատական առաջին կազմակերպություններն ստեղծվեցին բանվորական կենտրոններում՝ Բաքվում, Թիֆլիսում, Բաթումում։ 1901 թվականի գարնանը հիմնվում է ՌՍԴԲԿ Բաքվի կազմակերպությունը, որի մեջ մտնում են Լ. Կեցխովելին, Բ. Կնունյանցը, Ա. Ենուկիձեն, Լ. Գալպերինը, Մ. Մելիքյանը (Դեդուշկա) և ուրիշներ։ 1901 թ. ամռանը Բաքվում հիմնվում է «Նինա» գաղտնի տպարանը, որտեղ 60 հազար օրինակ արտատպվում և Անդրկովկասում ու Ռուսաստանում տարածվում էր լենինյան «Իսկրա»-ն։ 1901 թ. նոյեմբերին կազմվում է ՌՍԴԲԿ Թիֆլիսի կոմիտեն, իսկ 1902 թվականին՝ ՌՍԴԲԿ Բաթումի կոմիտեն։ Սոցիալ-դեմոկրատական այս կազմակերպությունները հեղափոխական լայն գործունեություն են ծավալում բանվորների մեջ, կազմակերպում ու ղեկավարում են նրանց գործադուլներն ու ցույցերը։

1901 թվականի վերջերին Երևանում հիմնվում է սոցիալ-դեմոկրատական խմբակ, որի մեջ մեծ մասամբ ընդգրկված էին Շուստովի գործարանի և երկաթուղու առաջավոր բանվորները։ Խմբակը կապ ուներ ՌՍԴԲԿ Թիֆլիսի կոմիտեի հետ, նրանից ստանում և տարածում էր հեղափոխական գրականություն, աշխատանք կատարում բանվորների մեջ։

1901—1902 թվականներին սոցիալ-դեմոկրատական խմբակներ են ստեղծվում նաև Ալեքսանդրապոլում և տերի կայազորում։ Նրանք եռանդուն աշխատանք են կատարում ինչպես բանվոր-ծառայողների, այնպես էլ զինվորների մեջ։ Դարի սկզբին սոցիալ-դեմոկրատական կազմակերպություններ են հիմնվում նաև Կարսում, Ալավերդիում և Հաղպատում։ 1903 թվականին Երևանի նահանգի ժանդարմական վարչության զեկուցագրերից մեկում ասված է, որ «Վերջերս սկսել են առանձնապես հաճախակի երևան գալ սոցիալ-դեմոկրատական և հեղափոխական գաղափարներ պարունակող թերթեր ու գրքույկներ»։

Դարի սկզբին մարքս-լենինյան գաղափարները համակում են նաև Մոսկվայում, Պետերբուրգում, Կիևում, Խարկովում, Ռիգայում և արտասահմանում սովորող հայ առաջավոր երիտասարդությանը։ Առանձնապես աչքի են ընկնում Ստ. Շահումյանը, Բ. Կնունյանցը, Ալեքսանդր Բեկզադյանը, Սուրեն Սպենդարյանը, Արշակ Զուրաբյանը, Սարգիս Կասյանը և ուրիշներ։

Լենինյան-իսկրայական աչքի ընկնող կազմակերպությունը հայ իրականության մեջ 1902 թվականի հոկտեմբերին Թիֆլիսում ստեղծված «Հայ սոցիալ-դեմոկրատների միությունն» էր։ Միության հիմնադիրներն ու ղեկավարներն էին Ստ. Շահումյանը, Բ. Կնունյանցը, Ա. Զուրաբյանը, Ա. Խումարյանը և ուրիշներ։

«Հայ սոցիալ-դեմոկրատների միությունը» մեծ դժվարություններ հաղթահարելով, Թիֆլիսում հիմնում է իր գաղտնի տպարանը և 1902 թվականի հոկտեմբերին հրատարակում «Պրոլետարիատ» թերթը։ «Պրոլետարիատ»-ի առաջին համարում տպագրված է Միության Մանիֆեստը, որտեղ ասված է. «Մեր Միությունը Ռուսաստանի ամեն ծայրամասում յուր ցանցը լայն տարածող Ռուսիայի սոցիալ-դեմոկրատական բանվորական կուսակցության ճյուղերից մեկը լինելով, միանգամայն համերաշխ է նրա հետ և նրա հետ միասին կռվելու է հանուն Ռուսիայի պրոլետարիատի շահերի ընդհանրապես և հայկականի՝ մասնավորապես»։ Այնուհետև մանիֆեստում ասված է, որ «Տնտեսական կռիվն մենք միացնում ենք նաև քաղաքական կռիվը, սա է մարդկության ազատության միակ միջոցը»։

Վ. Ի. Լենինը արտասահմանում Ի. Լալայանցի միջոցով ծանոթանալով Միության մանիֆեստին, 1903 թվականին «Իսկրա»-ում գրում է. «Մենք ամբողջ ճոգով ողջունում ենք «Հայ սոցիալ-դեմոկրատների միության» մանիֆեստը և մանավանդ ազգային ճարցին ճիշտ դրվածք տալու նրա փորձը»[1]:

«Հայ սոցիալ-դեմոկրատների միությունը» և նրա օրգան «Պրոլետարիատ» թերթը հետևողականորեն պաշտպանում և պրոպագանդում էին մարքս-լենինյան դաղափարները: Նրանք անհաշտ պայքար էին մղում օպորտունիզմի և բուրժուական նացիոնալիզմի դեմ, հայ բանվորներին և աշխատավորներին համախմբում սոցիալ-դեմոկրատիայի ինտերնացիոնալ դրոշի շուրջը: «Հայ սոցիալ դեմոկրատների միության» և «Պրոլետարիատ» թերթի հանդես դալը պատմական խոշոր երևույթ էր հայ հասարակական-քաղաքական կյանքում:

1903 թ. մարտին Թիֆլիսում գումարվում է ՌՍԴԲԿ կովկասյան կազմակերպությունների առաջին համագումարը: Համագումարը որոշում է միավորել առանձին-առանձին գործող սոցիալ-դեմոկրատական կոմիտեները և կազմել կուսակցական երկրային ղեկավար կենտրոն՝ ՌՍԴԲԿ Կովկասյան միութենական կոմիտե: Միութենական կոմիտեի կազմում տարբեր ժամանակներում մտել են՝ Ա. Ծուլուկիձեն, Մ. Ցխակայան, Բ. Կնունյանցը, Ստ. Շահումյանը, Ի. Ստալինը, Ա. Զուրաբյանը, Մ. Բոչորիձեն, Ա. Խումարյանը, Ա. Ջափարիձեն, Մ. Դավիթաշվիլին, Ն. Ալաջալովան, Դ. Պոստոլովսկին, Վ. Բոբրովսկին, Ս. Խանոյանը, Ֆ. Մախարաձեն և ուրիշներ:

Համագումարի որոշմամբ հայկական «Պրոլետարիատ»-ը և վրացական սոցիալ-դեմոկրատական կազմակերպության օրգան «Բրձոլա»-ն միացվում են և որպես ՌՍԴԲԿ միության օրգան հրատարակվում երեք լեզվով. հայերեն՝ «Պրոլետարիատի կոիվը», վրացերեն՝ «Պրոլետարիս բրձոլա», ռուսերեն՝ «Բորբա պրոլետարիատա»:

ՌՍԴԲԿ Կովկասյան միության ստեղծումը Անդրկովկասի բազմազգ ժողովուրդների հեղափոխական պայքարի պատմության մեջ նշանակալից իրադարձություն էր: Դա պրոլետարական ինտերնացիոնալիզմի, նոր տիպի կուսակցության կառուցման լենինյան սկզբունքի հաղթանակն էր: ՌՍԴԲԿ Կովկասյան միությունը դարձավ մեծ Լենինի ստեղծած կոմունիստական կուսակցության հավատարիմ և հուսալի կազմակերպություններից մեկը: Անդրկովկասի տարբեր ազգությունների բուրժուական և մանր բուրժուական նացիոնալիստական կուսակցությունների դեմ մղված համառ ու հետևողական պայքարում, նա իր

[1] Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 6, էջ 411:

շուրջը համախմբեց առաջավոր բանվորներին ու գյուղացիներին, նրանց պայքարի հանեց ցարիզմի ու բուրժուազիայի դեմ:

1905 թվականի նախօրյակին սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունները հսկայական աշխատանք կատարեցին Անդրկովկասում ժողովրդին հեղափոխական պայքարի նախապատրաստելու համար: «Մենք գտնվում ենք մեծ դեպքերի նախօրեին,— ասված է ՌՍԴԲԿ Թիֆլիսի կազմակերպության կոչերից մեկում:— Ռուսաստանը ալեկոծվել է. բարձրանում է Կովկասը... Պայքարը բորբոքվել է և մոտ է օրը, երբ բոլոր բաղաքներում բանվորները կապստամբվեն: Կո՛ղչի ցարը, կո՛ղչի ինքնակալությունը, կո՛ղչի կապիտալիզմը. կե՛ցցե միջազգային սոցիալ-դեմոկրատիան»:

1904 թ. Սասունի ապստամբությունը

Հայ ազգային-ազատագրական և հեղափոխական շարժումների վերելքը 19-րդ դարի սկզբին, հատկապես 1903 թվականի հակացարական մասսայական ելույթները, ոտքի հանեցին նաև սուլթանական լծի տակ հեծող արևմտահայությանը: Ազատագրական պայքարի այս էտապի նշանավոր դրվագներից է 1904 թվականի Սասունի ապստամբությունը:

Սասունի ազատասեր բնակիչները չկարողանալով տանել թուրքական և քրդական հարստահարիչների ծանր լուծը, 1904 թ. մարտին ապստամբության դրոշ են բարձրացնում: Թուրքական կանոնավոր զորքերը և քրդական հրոսակախմբերը հարձակվում են Սասունի վրա: Մարտ-ապրիլ ամիսներին Սասնա սարերը դառնում են պատերազմական գործողությունների թատերաբեմ:

Քաջարի սասունցիք իրենց տիրված առաջնորդների՝ Անդրանիկի, Մուրադի, Գևորգ Չաուշի, Հրայրի ղեկավարությամբ հերոսական մարտեր են մղում տասնապատիկ ավելի թուրքական զորքերի և քրդական հրոսակախմբերի դեմ: Նրանց օգնության են հասնում մեծ դժվարությամբ Կովկասից եկած հայդուկները: Դա ավելի է ոգեշնչում սասունցի մարտիկներին:

Արյունահեղ մարտեր են տեղի ունենում հատկապես Կելխում և Տալվորիկում: Այստեղ քաջակորով սասունցիք ծանր հարվածներ են հասցնում թշնամուն, բայց հաղթել չեն կարողանում: Հակառակորդի ուժերը շատ մեծ էին: Թուրքական հրանոթների դեմ հայերը պաշտպանության ոչ մի միջոց չունեին: Զենքի, ռազմամթերքի և անդամթերքի պակասը ավելի ու ավելի զգալի էր դառնում: Սասունցիք փաստորեն մնացել էին մենակ. ապստամբությունը չծավալվեց հայկական մյուս շրջաններում, ուստի և չկարողացան մինչև վերջ պաշտպանվել:

Մեծ կորուստներ տալով սասունցիք հարկադրված եղան նահանջել դեպի Մշո դաշտը և պարտիզանական կռիվներ մղել թշնամու դեմ:

Թուրքական և քրդական հրոսակախմբերը ներխուժեցին Սասուն, սրի քաշեցին հաղարավոր մարդկանց, կողոպտեցին և ավերեցին տասնյակ գյուղեր։ Գազազած սուլթան Աբդուլ Համիդը հրամայում է քանդել արծվաբույնը, Սասունը բնակեցնել քրդերով, բայց մեծ տերությունների ճնշման տակ այդ նրան չի հաջողվում։

Սասունի ապստամբությունը ճնշվում է, բայց այն մեծ նշանակություն է ունենում հայ ազատագրական պայքարի հետագա ընթացքի համար։

XVI ԳԼՈՒԽ

ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 1905—1907 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

1. ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՍԿԻԶԲԸ

1905 թ. հունվարի 9-ի արձագանքները Հայաստանում

1905 թվականի նախօրեին հեղափոխական ճգնաժամը Ռուսաստանում հասնում է իր գագաթնակետին։ Բանվորագյուղացիական շարժումների անշեղ վերելքը և ռուս-ճապոնական պատերազմը անխուսափելի են դարձնում հեղափոխության բռնկումը։

1905 թվականի հունվարի 9-ի դեպքերով, ինչպես Վ. Ի. Լենինն է ասում, սկսվում է ռուսական առաջին բուրժուա-դեմոկրատական հեղափոխությունը։ Մայրաքաղաքում, թագավորական պալատի առաջ, անզեն բանվորների մասսայական գնդակոծումը ցնցում է ամբողջ Ռուսաստանը։ «Բանվոր դասակարգը քաղաքացիական պատերազմի մեծ դաս ստացավ,— գրում է Վ. Ի. Լենինը։— Պրոլետարիատի հեղափոխական դաստիարակությունը մեկ օրում այնպես առաջ գնաց, ինչպես այն չէր կարողանա գնալ գորշ, առօրյա խղճուկ կյանքի ամիսների ու տարիների ընթացքում»[1]։

Հունվարի 9-ի դեպքերը լայն արձագանք գտան Անդրկովկասում։ Անդրկովկասի բանվորներն ու գյուղացիները իրենց դասակարգային համերաշխությունն արտահայտեցին ռուս պրոլետարիատին և, ինչպես ասված է Կովկասյան միութենական կոմիտեի 1905 թ. մարտի 26-ի կոչում, «Բոլորը ոտքի կանգնեցին ու պատերազմ հայտարարեցին ցարական կառավարությանը»։ Հեղափոխական շարժման ալիքը տարածվեց Բաքվում, Թիֆլիսում, Բաթումում, ինչպես նաև Հայաստանի բանվորական կետրոններում՝ Ալավերդիում, Երևանում, Ալեքսանդրապոլում, Կարսում և այլ վայրերում։

Հեղափոխական շարժումները 1905 թ. գարնանը

1905 թ. մարտին առաջինը գործադուլ են անում Ալավերդու հանքագործ բանվորները, որին մասնակցում է ավելի քան հազար մարդ։ Բանվորները պահանջում են բարձրացնել աշխատավարձը, կրճատել աշխատանքի ժամերը, բարելավել իրենց կենցաղային պայմանները, վերջ տալ կամայականություններին և այլն։

Ֆրանսիական կապիտալիստների ներկայացուցիչ, Ալավերդու գործարանի դիրեկտոր Պոլմարը մերժում է բանվորների պահանջը և նրանցից մի քանիսին հեռացնում աշխատանքից։ 1905 թ. մարտի 12-ին Փարիզ ուղարկած զեկուցագրում նա ասում է. «Ես դաժան եմ իմ բանվորների նկատմամբ։ Դա անհրաժեշտ է, քանի որ բավական է աննշան մի երկչոտություն և նրանք կդադարեն աշխատելուց, պահանջելով աշխատավարձի անընդունելի ավելացում»։

Ալավերդու բանվորների գործադուլը տևում է 12 օր և վերջանում կոմպրոմիսով։ Գործարանատերը հարկադրված է լինում որոշ չափով բավարարել բանվորների պահանջները։

1905 թ. մարտին Երևանում առաջինը գործադուլ են անում Շոստովի և Մարաջևի գինու, օղու, կոնյակի գործարանների բանվորները, նրանց օրինակին հետևում են քաղաքի մի շարք ձեռնարկությունների բանվոր-ծառայողները։ Գործադուլը տևում է երկու շաբաթ և վերջանում մասնակի հաջողությամբ։ Ապրիլին գործադուլ են անում ճաշարանների, արհեստանոցների, խանութների, ակումբների և մի շարք այլ հիմնարկ-ձեռնարկությունների բանվոր-ծառայողները։ Այս գործադուլների կազմակերպման ու ղեկավարման մեջ ակտիվ դեր էր կատարում ՌՍԴԲԿ Երևանի կոմիտեի անդամ Սոկոլովսկին։ 1905 թ. ապրիլին Երևանի նահանգի ժանդարմական վարչության պետի գաղտնի զեկուցագրում ասված է. «Այս գործադուլների կազմակերպիչը հանդիսանում է նախկին ուսանող Գեորգի Նիկոլաևիչ Սոկոլովսկին, որի աքսորումը Երևանից չափազանց ցանկալի է, քանի որ նա միաժամանակ սովորող երիտասարդության հավաքույթների գլխավոր կազմակերպիչն է»։

1905 թ. մարտի 20-ին գործադուլ են անում Ղարաքիլիսա—Ալեքսանդրապոլ գծամասի երկաթուղայինները. նրանց միանում են Ալեքսանդրապոլի դեպոյի բանվորները։ Մարտին գործադուլներ են տեղի

[1] Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 8, էջ 106։

ունենում Երևան—Ջուլֆա գծամասում, ինչպես նաև Կարսի մի շարք հիմնարկ-ձեռնարկություններում։

Ապրիլի սկզբներին բռնկվում է Անդրկովկասի երկաթուղագիների ընդհանուր գործադուլը։ Դրան միանում են Հայաստանի երկաթուղագիները։ Թիֆլիս—Երևան, Ալեքսանդրապոլ—Կարս երկաթուղին կանգ է առնում։ Երթևեկությունը վերականգնվում է զորքի օգնությամբ։

Ինչպես ամբողջ Ռուսաստանի, այնպես էլ Անդրկովկասի հեղափոխական շարժման զարգացման համար կարևոր նշանակություն ունեցավ 1905 թ. ապրիլին Լոնդոնում կայացած ՌՍԴԲԿ III համագումարը։ Համագումարը բարձր է գնահատում Կովկասի հերոսական պրոլետարիատի և գյուղացիության հեղափոխական պայքարը։ «Կովկասի դեպքերի մասին» ընդունած բանաձևի նախագծում Վ. Ի. Լենինը գրում է. «Կովկասի սոցիալ-քաղաքական կյանքի հատուկ պայմանները նպաստել են այնտեղ մեր կուսակցության ամենամարտական կազմակերպություններն ստեղծելու... Կովկասի բնակչության մեծամասնության հեղափոխական տրամադրությունը ինչպես քաղաքներում, այնպես և գյուղերում, արդեն հասել է համաժողովրդական ապստամբության ընդդեմ ինքնակալության»[1]։

1905 թ. մայիսին Կովկասյան միութենական կոմիտեի հանձնարարությամբ Հայաստան է գալիս Ստ. Շահումյանը։ Նա լինում է Ալավերդիում՝ ղեկավարում բանվորների մայիսմեկյան ցույցերը, ՌՍԴԲԿ Բորչալուի կազմակերպության ժողովում զեկուցում III համագումարի արդյունքների մասին։ Այնուհետև Ստ. Շահումյանը մեկնում է Երևան, զեկուցում կարդում համագումարի մասին, համախմբում տեղի սոցիալ-դեմոկրատական խմբերին և հիմնում ՌՍԴԲԿ Երևանի կոմիտե։ Կոմիտեի կազմի մեջ մտնում էին Ա. Մալխասյանը, Գ. Սոկոլովսկին, Կ. Ալավերդյանը, Վ. Բարժանսկին, Վ. Նինուաշվիլին, հետագայում՝ Ա. Մռավյանը, Մ. Միրաքյանը, Լ. Տեր-Հովսեփյանը և ուրիշներ։ Ստ. Շահումյանի Հայաստան գալը մեծապես նպաստում է սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունների և հեղափոխական պայքարի աշխուժացմանը։

Բանվորական շարժումը ոտքի է հանում նաև հասարակության մյուս խավերին։ 1905 թ. ապրիլի սկզբներին Թիֆլիսում տեղի է ունենում հայաբնակ 24 կենտրոնների ներկայացուցիչների համաժողով, որը Կովկասի փոխարքային ներկայացնում է հետևյալ պահանջները.

1. Տեղական ինքնավարություն ընդհանուր ձայնատվությամբ։
2. Ընտրել երդվյալների դատարան, դատը վարել հայերեն լեզվով։
3. Լեզվի, խոսքի, ժողովների և մամուլի ազատություն։

[1] Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 8, էջ 536։

4. Անձի և բնակարանների անձեռնմխելիություն։
5. Կանանց և տղամարդկանց իրավունքների հավասարեցում։
6. Ընդհանուր պարտադիր և ձրի ուսում։
7. Թիֆլիսում բացել համալսարան։
8. Կրոնի և հավատալիքների ազատություն։
9. Ութժամյա աշխատանքային օր։
10. Հողաբաժինների պարտադիր ետ գնում պետության օժանդակությամբ։
11. Մտցնել եկամտային պրոգրեսիվ հարկ։
12. Վերադարձնել հայ եկեղեցական կալվածքները։
13. Բանտարկված և աքսորված հայերին ներում շնորհել և այլն։

1905 թվականի հեղափոխության հենց սկզբում ցարական կառավարությունը, վախեցած հեղափոխության ծավալումից, օգտագործում է Անդրկովկասի հայ և ադրբեջանական նացիոնալիստների միջև եղած հակասությունները, ազգային թշնամանք հրահրում եղբայրական երկու ժողովուրդների միջև, հայ ադրբեջանական կոտորածներ կազմակերպում։

1905 թ. փետրվարին կոտորածներ սկսվում են Բաքվում և այնուհետև տարածվում Շուշիում, Ելիզավետպոլում, Երևանում, Նախիջևանում և այլ վայրերում։ Առանձին տեղերում կոտորածները կրկնվում են նաև 1906—1907 թվականներին։ Ցարական կառավարության կազմակերպած այդ ստոր պրովոկացիային զոհ են գնում հազարավոր հայեր և ադրբեջանցիներ։

Անդրկովկասի բոլշևիկները վճռական միջոցների են դիմում եղբայրասպան կռիվները դադարեցնելու համար։ ՌՍԴԲԿ Կովկասյան միության Թիֆլիսի կոմիտեն հատուկ կոչ է հրատարակում, որտեղ մերկացնում է ցարական կառավարության «բաժանիր, որ տիրես» գիշատիչ քաղաքականությունը։ «Ցարն իր գահն ամրապնդելու համար թշնամություն է սերմանում Ռուսաստանի ազգությունների միջև,— ասված է այդ կոչում։ Դուք հայեր, թաթարներ, վրացիներ, ռուսներ, ձեզ մեկնեցեք միմյանց, ավելի սերտորեն միացեք և ձեզ բաժանելու ուղղությամբ կառավարության փորձերին միահամուռ պատասխանեցեք՝ կորչի ցարական կառավարությունը, կեցցե ժողովուրդների եղբայրությունը»։

Ռուս մեծ գրող Մաքսիմ Գորկին, Հովհ. Թումանյանը, Մ. Սաբիրը և ուրիշ առաջավոր գրողներ ու հասարակական գործիչներ իրենց բողոքի ձայնը բարձրացրին ազգամիջյան կոտորածների դեմ։

«Լինելով Կովկասում,— ասում է Մ. Գորկին,— ես ամենուրեք տեսել եմ, թե ինչպես վրացին, թաթարը, հայը կողք-կողքի համերաշխ

աշխատել են, երեխայի նման պարզ և ուրախ կատակներ արել, երգել, ծիծաղել և ինչպես դժվար է հավատալ, որ այդ հասարակ, հիանալի մարդիկ այժմ շար ու մութ ուժերի թելադրանքով անմտորեն մեկը մյուսին կոտորում են»։

1905 թ. մարտին ՌՍԴԲԿ Ալեքսանդրապոլի կազմակերպությունը բողոքի մեծ ցույց է կազմակերպում և միահամուռ դատապարտում ազգային թշնամանք հրահրողներին։ Հետևողական պայքար մղելով երկու ճակատում՝ ցարիզմի և տեղական նացիոնալիզմի դեմ, Անդրկովկասի բոլշևիկները պատվով կատարեցին իրենց ինտերնացիոնալ պարտքը։ Բուրժուական և մանր-բուրժուական կուսակցությունների ուժեղ ազդեցության, ազգային հարաբերությունների բարդ իրադրության պայմաններում Անդրկովկասի բոլշևիկները ճամարձակ ու վրստան կանգնեցին սկսված հեղափոխության դեկի մոտ, անձնուրաց կերպով գլխավորեցին բանվորների և գյուղացիների ազատագրական պայքարը։

2. ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԵԼՔԸ

Հոկտեմբերյան քաղաքական գործադուլները

1905 թ. հոկտեմբերին համառուսական ընդհանուր քաղաքական գործադուլն ընդգրկում է ամբողջ երկիրը։ Այդ գործադուլին մասնակցում էր ավելի քան երկու միլիոն մարդ։ Ինչպես Ռուսաստանում, այնպես էլ Անդրկովկասում սկսվում է հեղափոխության վերելքի շրջանը։

1905 թ. հոկտեմբերի 15-ին Անդրկովկասի երկաթուղային բանվորները, արձագանքելով ռուս երկաթուղայինների կոչին, ընդհանուր գործադուլ են հայտարարում։ Հոկտեմբերի 15-ին գործադուլ են անում Ալեքսանդրապոլի կայարանի և դեպոյի բանվորները։ Հոկտեմբերի 16-ին հրապարակվում է ՌՍԴԲԿ Ալեքսանդրապոլի կազմակերպության կոչը։ Քաղաքում մասսայական ցույցեր և միտինգներ են տեղի ունենում, հեղափոխական ճառեր արտասանվում։

Գործադուլային կոմիտեն ներկայացնում է հետևյալ պահանջները. 1. հրավիրել սահմանադիր ժողով ընդհանուր և գաղտնի ընտրության հիման վրա. 2. ընտրական իրավունք տալ 20 տարին լրացած բոլոր քաղաքացիներին. 3. հավասարություն օրենքի առաջ, առանց ազգի ու դասակարգի խտրության. 4. խոսքի, մամուլի, ժողովների ազատություն. 5. մահվան պատժի վերացում. 6. ձրի, պարտադիր ուսում. 7. ութժամյա բանվորական օր. 8. ամբողջ Ռուսաստանում վերացնել ռազմական դրությունը և պատժիչ ջոկատները. 9. մշտական բանակը փոխարինել ժողովրդական միլիցիայով և այլն։

Ալեքսանդրապոլի երկաթուղային բանվորների պահանջները գերազանցապես քաղաքական բնույթ ունեին։ Հայաստանի բանվորական շարժման պատմության մեջ դա նոր երևույթ էր, բանվոր դասակարգի քաղաքական պայքարի բարձր էտապ թեակոխելու արտահայտություն։

Հոկտեմբերյան քաղաքական գործադուլը տարածվում է Հայաստանի բոլոր երկաթուղիներում։ Ալեքսանդրապոլ—Կարս, Ալեքսանդրապոլ—Երևան երկաթգիծն անցնում է գործադուլային կոմիտեի ձեռքը։ Սանահինի բանվորները հեռացնում են կայարանապետին, ողջույն ուղարկում Քութայիսի և Բաթումի երկաթուղայիններին։ Ռազմական դրություն է մտցվում երկաթուղում։ Զորամասեր են ուղարկվում Ալագյազ, Սանահին, Շահալի, Ղարաքիլիսա, Ուլուխանլու, Երևան կայարանները։ Կարսում ընդհարումներ են տեղի ունենում երկաթուղային բանվորների և ոստիկանների միջև։ Ուլուխանլու կայարանում բանվորները շարքից հանում են երկու շոգեքարշ։ Շահալի և Սանահին կայարաններում բանվորները խորտակում են զինվորական երկու գնացք, որոնք զորք էին փոխադրում գործադուլները ճնշելու համար։

Վ. Ի. Լենինը, խոսելով հոկտեմբերյան քաղաքական գործադուլի մասին, գրում է. «Հեղափոխությունն առաջ է գնում ապշեցուցիչ արագությամբ... Համառուսաստանյան քաղաքական գործադուլն այս անգամ ընդգրկեց իսկապես ամբողջ երկիրը, ամենաճնշված ու ամենաառաջավոր դասակարգի հերոսական ոգևորությամբ համախմբելով Ռուսաստանի անիծյալ «կայսրության» բոլոր ժողովուրդներին»[1]։

Ռուսական հեղափոխության այս բուռն վերելքի շրջանում էր, որ ցարական կառավարությունը հարկադրված հրապարակեց հոկտեմբերի 17-ի մանիֆեստը, որով խոստանում էր հրավիրել օրենսդիր դումա, տալ անձի անձեռնմխելիություն, խոսքի, մամուլի, ժողովների ազատություն և այլն։

Ինչպես ռուսական, այնպես էլ հայ բուրժուազիան, ցնծությամբ դիմավորեց ցարական մանիֆեստը, հեղափոխությունը հայտարարեց ավարտված։ Հայ լիբերալ բուրժուազիայի օրգան «Մշակ»-ը հոկտեմբերի 17-ի մանիֆեստը կոչեց «փրկարար կոնստիտուցիա»։

Բոլշևիկների կուսակցությունը սկզբից ևեթ ճիշտ գնահատեց ցարական մանիֆեստը, բացահայտեց նրա խաբուսիկ բնույթը և կոչ արեց ժողովրդին շարունակել պայքարը, տապալել ինքնակալությունը։ Հոկտեմբերի 17-ի մանիֆեստի դեմ հանդես եկան նաև Հայաստանի բոլշևիկները։ 1905 թ. հոկտեմբերի 26-ին հրապարակվեց ՌՍԴԲԿ Կարսի խմբակի կոչը, որտեղ ասված է. «Այդ ազատությունը բոլոր մեծ ու

[1] Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 9, էջ 500—501։

փոքր բռնակալների քմահաճ ճնշումների, կողոպուտի ազատություն է: Բանվորներին առաջվա պես ազատություն է տրվում... մեռնել քաղցից և փտել բանտերում իրենց բողոքների համար: Զինվորներին ազատություն է տրվում... փտած կաղամբով ու որդնած կաշայով կերակրվել: Գյուղացիներին ազատություն է տրվում... խեղդվել վաշխառուների ու կալվածատերերի ճանկերում... Մենք կարոտ չենք պաշտոնական ազատության, մենք կնվաճենք մեր ազատությունը. դա մեզ կբերի ապրստամբությունը, հեղափոխությունը»:

1905 թ. հոկտեմբերի 29-ին հրապարակվում է ՌՍԴԲԿ Ալեքսանդրապոլի կազմակերպության կոչը, որտեղ ժողովրդին զգուշացվում էր չխաբվել ցարական կառավարության կեղծ խոստումներով. «Հեղափոխությունը առաջ է գնում և ցարական ոչ մի հրովարտակ նրան կանգնեցնել չի կարող»—ասված է կոչում:

Հեղափոխության վերելքի այդ օրերին լսվում է պրոլետարական գրող Հակոբ Հակոբյանի ձայնը.

Հե՛յ, ձե՛ղ մատաղ, բանվո՛ր տղերք,
Մե՛կ էլ, մե՛կ էլ մի զա՛րկ տվեք,
Մի զա՛րկ տվեք ցարի գահին,
Որ խորտակվի նա հիմնովին:

Հայաստանի բոլշևիկների պայքարը հոկտեմբերի 17-ի մանիֆեստի դեմ խոշոր նշանակություն ունեցավ բանվորների ու գյուղացիների ֆեոդալական դասակարգության, հեղափոխական շարժումների հետագա զարգացման համար:

1905 թ. հոկտեմբերի վերջերին Կարսում մասսայական ցույցեր են տեղի ունենում այդտեղ աքսորված 32 սոցիալ-դեմոկրատների ազատման առթիվ: Բանտից ազատված բոլշևիկներ Ա. Խումարյանը, Ս. Ալիյուևը, Մ. Բագրաձեն հեղափոխական ճառեր են արտասանում, ցուցարարները նրանց դիմավորում են մեծ խանդավառությամբ: Ցույցերը ճնշվում են զորքի օգնությամբ, բանտարկվում են 58 մարդ, այդ թվում մի քանի կանայք:

Հոկտեմբերյան քաղաքական գործադուլների բոցերի մեջ Ռուսաստանի արդյունաբերական մի շարք կենտրոններում ծնվում են բանվորական դեպուտատների առաջին սովետները: Հայաստանում սովետներ չստեղծվեցին, բայց նրանց դերը փաստորեն կատարում էին գործադուլային կոմիտեները: Ալեքսանդրապոլի կայազորում կազմվել էր «Ռազմա-հեղափոխական սովետ», որը գործում էր սոցիալ-դեմոկրատական կազմակերպության ղեկավարությամբ:

Ալավերդու բանվորների 1905 թվականի նոյեմբերյան գործադուլը

Ալավերդին Հայաստանի ամենախոշոր բանվորական կենտրոնն էր: Ալավերդու պղնձահանքերում և գործարաններում աշխատում էին տարբեր ազգության պատկանող շուրջ 4000 բանվորներ՝ հայեր, վրացիներ, ադրբեջանցիներ, ռուսներ, հույներ և պարսիկներ: Ալավերդու բանվորները մոտիկից կապված էին Սանահինի երկաթուղայինների հետ, որոնք Հայաստանի բանվորական շարժման փորձված ու առաջատար ջոկատներից էին:

Ծանր էր ու անտանելի բանվորների իրավական և տնտեսական դրությունը: Ֆրանսիական մոնոպոլիստական կապիտալի ներկայացուցիչները գիշատիչ կերպով կողոպտում էին ոչ միայն Հայաստանի պղինձը, այլև տեղական ժողովրդին: Նրանք բանվորներին աշխատեցնում էին 12—14 ժամ և վճարում շնչին աշխատավարձ:

Ալավերդու բանվորները քանիցս փորձել էին բարելավել իրենց իրավական և տնտեսական դրությունը, բայց այդ նրանց չէր հաջողվել: Համառուսական հոկտեմբերյան ընդհանուր գործադուլը նպաստավոր պայմաններ ստեղծեց և հույսեր ներշնչեց նրանց հաղթանակի համար: Նրանք, արձագանքելով երկաթուղայինների կոչին, վերստին պայքարի ելան շահագործողների դեմ:

Ալավերդու բանվորների գործադուլն սկսվեց 1905 թ. նոյեմբերի 20-ին: Այդ օրը Մանեսում մասսայական միտինգ է տեղի ունենում, որին մասնակցում են Սանահինից կարմիր դրոշակներով եկած բանվորները և շրջակա 4 գյուղերի զինված գյուղացիները: Միտինգում մի քանի լեզուներով հեղափոխական ճառեր են արտասանվում: Բոլշևիկ հռետորները, որոնց բանվորները դիմավորում էին մեծ ոգևորությամբ, բացատրում էին գործադուլների տնտեսական և քաղաքական նշանակությունը, կոչ անում պայքարել մինչև հաղթանակ:

«Կավկազսկի ռաբոչիյ լիստոկ» բոլշևիկյան թերթը 1905 թվականին խոսելով Ալավերդու բանվորների այս գործադուլի մասին, գրում է. «Հետաքրքիր էր տեսնել, թե ինչպես միատեսակ պայմանները միավորել էին տարբեր. ազգության պատկանող բանվորներին, թե ինչպես այս խուլ անկյունում բանվորները վճռել էին, ինչ էլ որ լինի, դիմանալ մինչև իրենց պահանջների բավարարումը»:

Նոյեմբերի 21-ին գործադուլային կոմիտեն, որի մեջ մտնում էին առաջավոր բանվորներից Ս. Փիրուզյանը, Մ. Աղամյանը, Վ. Չելիձեն, Ա. Դևորդիանին, Ն. Ջաֆարովը, Ա. Խաչիևը, Մ. Մուրադյանը և ուրիշներ, գործարանի դիրեկտոր Պոլմարին ներկայացնում է հետևյալ պահանջները.

1. Ութժամյա բանվորական օր, 2. աշխատավարձի ավելացում 20

տոկոսով, 3. բանվորին օրավարձ տալ մեկ ռուբլի, 4. բանվորական տեսչություն, որը պետք է զբաղվի բանվորների ընդունման և ազատման, աշխատավարձի ավելացման ու նշանակման հարցերով, 5. տուգանքների վերացում, 6. հիվանդացող բանվորներին բուժել ընկերության հաշվին և մինչև առողջանալը վճարել լրիվ աշխատավարձ, 8. յուրաքանչյուր չորս բանվորին տրամադրել մեկ սենյակ և ապահովել լուսավորությամբ ու վառելիքով, 9. վերացնել հաշվեգրքույկների համար 20 կոպեկ գանձելը, 10. կառուցել երեք բաղնիք, 11. աշխատավարձը վճարել կանոնավոր՝ ամիսը երկու անգամ, 12. գործարանի վերանորոգման և գործադուլի ժամանակ բոլոր բանվորներին վճարել լրիվ աշխատավարձ, չարձակել գործադուլի պատճառով և այլն, ընդամենը 22 կետ։

Պոլմարը վախեցած ընդհանուր գործադուլից, սկզբում փորձում է մասնակի զիջումներով լռեցնել բանվորներին, բայց նրանք չեն համաձայնվում։ Բանվորների վճռականությունը կոտրում է գործարանատիրոջ համառությունը։ Նոյեմբերի 25-ին գործարանի վարչության և գործադուլային կոմիտեի միջև համաձայնագիր է կնքվում, որի համաձայն պետք է բավարարեին բանվորների գրեթե բոլոր հիմնական պահանջները։

Ալավերդու բանվորների 1905 թ. նոյեմբերյան գործադուլը առաջին խոշոր գործադուլն էր Հայաստանում։ Տեղի սոցիալ-դեմոկրատական կազմակերպության, ինչպես նաև Ստ. Շահումյանի, Ս. Սպանդարյանի, Մ. Մելիքյանի (Դեդուշկա) ղեկավարությամբ Ալավերդու բանվորները խոշոր հաղթանակ տարան։ Նրանք որոշ ժամանակ օգտվեցին իրենց հաղթանակի պտուղներից, բայց այդ կարճատև եղավ։ Հոկտեմբերյան քաղաքական գործադուլի և դեկտեմբերյան զինված ապստամբության ճնշումից հետո ֆրանսիական կապիտալիստները հրաժարվեցին իրենց ստորագրած պայմանագրից և բանվորներից ետ խլեցին նրանց նվաճած իրավունքները։

Դեկտեմբերյան զինված ապստամբության արձագանքները Հայաստանում

1905 թվականի հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին հեղափոխության ալիքը Ռուսաստանում բարձրանում էր չտեսնված արագությամբ։ «Բառոմետրը փոթորիկ է ցույց տալիս,— գրում էր Վ. Ի. Լենինը։ Մեր առաջ են ամենամեծ բաղաքացիական պատերազմներից մեկի, ազատության համար մղվող՝ մարդկության երբևիցե ապրած պատերազմներից մեկի համակող տեսարաններ»[1]։

1905 թվականի դեկտեմբերին զինված ապստամբություններ են

[1] Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 9, էջ 500։

բռնկվում Մոսկվայում և մի քանի այլ վայրերում։ Մոսկվայի բանվորների օրինակով Անդրկովկասի երկաթուղայինները դեկտեմբերի 10-ին ընդհանուր գործադուլ են հայտարարում։ Սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունների ղեկավարությամբ գործադուլային կոմիտեները երկաթուղին վերցնում են իրենց ձեռքը։ Թիֆլիսում, Բաքվում և ամբողջ երկաթուղում ռազմական դրություն է հայտարարվում։

Անդրկովկասում զինված ապստամբություն նախապատրաստելու ուղղությամբ զգալի աշխատանք էր կատարված։ 1905 թ. նոյեմբերի վերջերին ՌՍԴԲԿ Կովկասյան միության IV կոնֆերանսը ստեղծել էր «Ռազմա-տեխնիկական հանձնաժողով», որը գլխավորում էին Սերգո Օրջոնիկիձեն և Կամոն։ Հանձնաժողովը զենք էր ձեռք բերում, զինված ջոկատներ կազմակերպում ու վարժեցնում և այլն։ Դեկտեմբերի 18-ին Թիֆլիսում բանվորական զինված ջոկատները բոլշևիկների ղեկավարությամբ հերոսական մարտեր են մղում գնդացիրներով ու հրանոթներով զինված ցարական զորքերի դեմ։ Անհավասար այդ զոտեմարտում քաջի մահով ընկնում են շատերը, ծանր վիրավորվում և Մետեխի բանտն է նետվում լեգենդար հերոս Կամոն՝ Սիմոն Տեր-Պետրոսյանը (1882—1922)։

1905 թ. դեկտեմբերի 10-ին տեղական սոցիալ-դեմոկրատական կազմակերպության ղեկավարությամբ գործադուլ են անում Ալեքսանդրապոլի երկաթուղայինները։ Գործադուլն ընդգրկում է Հայաստանի ամբողջ երկաթուղին։ Գնացքների երթևեկությունն անցնում է գործադուլային կոմիտեների ձեռքը։ Մի շարք տեղերում բանվորական զինված ջոկատներ են կազմակերպվում երկաթուղին պաշտպանելու և երթևեկությունն ապահովելու համար։

Կովկասի ռազմական օկրուգից պատժիչ արշավախմբեր են ուղարկվում Հայաստան՝ երկաթուղայինների գործադուլները ճնշելու համար, բայց այդ նրանց չի հաջողվում։ Ինչպես դեկտեմբերի 25-ին հաղորդում է այդ արշավախմբերից մեկի հետախուզական ջոկատի պետը՝ «Սանահինից մինչև Ալեքսանդրապոլ—Կարս գծերում գործում են հեղափոխական զինված խմբեր։ Գծերում անհնարին է վերականգնել երթևեկությունը, եթե շտապ չվերացվեն հեղափոխական խմբերը»։

Ալեքսանդրապոլի կայազորի պետը կարգադրում է 9-րդ գնդի զինվորներին զենքի ուժով ճնշել երկաթուղայինների գործադուլը։ Կայազորի սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունը դեկտեմբերի 20-ին հատուկ կոչով դիմում է զինվորներին՝ չկատարել հրամանատարության կարգադրությունը։ Այդ կոչում ասված է. «Ընկեր զինվորներ, մեր հայրենիքը վտանգի մեջ է, մեր հայրենիքի փողոցները ներկվել են մեր հայրերի, մայրերի, եղբայրների, քույրերի արյունով... Մի մոռա-

ցեք, որ մենք ժողովրդի զավակներն ենք... միավորված ուժերով ամբողջապես անցնենք ազատ, լուսավոր և լավ կյանքի համար մարտնչողների շարքերը և նրանց հետ միասին մեր կրծքով ձեռք բերենք մարդկային գոյության իրավունք։

Կեցցե՛ բանակի և ժողովրդի միասնությունը, կորչի՛ կամայականությունն ու բռնությունը, կորչի՛ ցարի և մինիստրների ինքնակալությունը, կեցցե՛ դեմոկրատական հանրապետությունը»։

Դեկտեմբերյան զինված ապստամբության օրերին մի շարք ցույցեր և գործադուլներ են տեղի ունենում Երևանում, Ալեքսանդրապոլում, Կարսում և այլ վայրերում։ Ինչպես ամբողջ Ռուսաստանում, այնպես էլ Անդրկովկասում, հեղափոխության ալիքը նորից սկսել էր բարձրանալ։ «Հեղափոխական շարժումն Անդրկովկասում ամենուրեք սրվել է,— գրում է 1905 թ. դեկտեմբերի 25-ին Կովկասի փոխարքան Նիկոլայ II-ին։ Երկաթուղային գործադուլը Թիֆլիսը վերջնականապես կըտրել է ամբողջ երկրամասից։ Հեղափոխականները գրավել են գծերը, գնացքները բաց են թողնում միայն իրենց հայեցողությամբ»։

Հայաստանի բանվորներն ու գյուղացիները Ռուսաստանի բոլոր ժողովուրդների հետ միասին վճռական պայքար էին մղում ցարիզմի ու բուրժուազիայի դեմ։ Բոլշևիկները գլխավորում էին նրանց պայքարը, զինված ապստամբության կոչ անում։ ՌՍԴԲԿ Կովկասյան միության օրգան «Կավկազսկի ռաբոչի լիստոկ» թերթի 1905 թ. դեկտեմբերի 10-ի «Վերադարձ չկա» առաջնորդող հոդվածում Ստ. Շահումյանը գրում է· «Մենք պետք է դիմենք հեղափոխական պայքարի մի այլ զենքի, որից պրոլետարիատի հետ համահավասար կարող են օգտվել նաև հեղափոխական ժողովրդի ոչ պրոլետարական տարրերը։ Ինքնակալությունը մեզ ստիպում է ձեռնարկել պայքարի համաժողովրդական միջոցին՝ զինված ապստամբությանը»[1]։

Անդրկովկասում 1905 թ. դեկտեմբերին սկսված զինված ելույթները չվերածվեցին իսկական զինված ապստամբության։ Մոսկվայի բանվորների զինված ապստամբության ճնշումից հետո հեղափոխությունն սկսեց վայրէջք ապրել, որը տևեց մինչև 1907 թվականը՝ մինչև ռեակցիայի հաղթանակը։

[1] Ստ. Շահումյան, Երկեր, հատ. 1, էջ 121։

3. ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԻ ՎԱՅՐԷՋՔԸ

Հեղափոխական շարժումները 1906 թվականին

Դեկտեմբերյան զինված ապստամբությունը ռուսական առաջին հեղափոխության բարձրագույն կետն էր։ 1906 թվականից սկսվեց հեղափոխության վայրէջքի շրջանը։ Պաշտոնական տվյալների համաձայն, եթե գործադուլավորների թիվը 1905 թվականին հասնում էր 2,863 հազարի, ապա 1906 թվականին՝ 1,108 հազարի, 1907 թվականին՝ 740 հազարի։

Բոլշևիկների կուսակցությունը, մեծ Լենինի գլխավորությամբ, ժողովրդին կոչ էր անում անհաջողություններից չընկճվել, այլ շարունակել պայքարը մինչև հաղթական վախճանը։ «Այս— մեծ կռիվ է, մի դրժվար կռիվ,— գրում է Վ. Ի. Լենինը 1906 թ. փետրվարին,— կռիվ դեմոկրատական հեղափոխությունը մինչև վերջ հասցնելու համար, նրա լիակատար հաղթության համար»[1]։

Հայաստանի բանվորներն ու գյուղացիները ինչպես հեղափոխության վերելքի, այնպես էլ նահանջի տարիներին ռուս ժողովրդի հետ էին, հակահեղափոխության դեմ մարտնչողների շարքերում։ Եվ չնայած այն բանին, որ նրանք անողոք գրոհի էին ենթարկվում դրսից ու ներսից՝ ցարական կառավարության և տեղական շահագործող դասակարգերի կողմից, այնուամենայնիվ, նրանք շարունակեցին պայքարը և հիշարժան նոր էջեր գրեցին հեղափոխության պատմության մեջ։

1906 թ. հունվարին գործադուլ են անում Երևան—Ջուլֆա նորակառույց երկաթգծի բանվորները, փետրվարին՝ Երևանի, Ալեքսանդրապոլի և Կարսի մի քանի հիմնարկ-ձեռնարկությունների բանվոր-ծառայողները։ Երևանի սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունը, 1861 թ. գյուղացիական ռեֆորմի 45-ամյակի կապակցությամբ փետրվարի 19-ին հանդես եկավ մի կոչով, որտեղ պահանջում էր զինված ապստամբության միջոցով տապալել ցարիզմը։ «Ժողովուրդն այլևս չի հավատում ցարի խոստումներին,— ասված է այդ կոչում,— համբերության բաժակը լցվել է... Ընկերներ, կազմակերպվեցեք, ձեռք մեկնեցեք ռուսական պրոլետարիատին և ընդհանուր ուժերով փշրեցե՛ք ցարական գահը։ Կորչի՛ ցարիզմը, կեցցե՛ ընդհանուր զինված ապստամբությունը»։

1906 թվականին բոլշևիկները լայն աշխատանք կատարեցին բանվոր-ծառայողներին պրոֆմիությունների մեջ ներգրավելու ուղղությամբ։ Նրանց ղեկավարությամբ Երևանում, Ալեքսանդրապոլում,

[1] Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 10, էջ 140։

Կարսում հիմնվեցին երկաթուղայինների, տպագրիչների, փոստ-հեռագրատան աշխատողների պրոֆմիությունները։ Պրոֆմիությունների հարցում սուր պայքար էր գնում բոլշևիկների և դաշնակցականների միջև։ Բոլշևիկները կողմնակից էին ինտերնացիոնալ պրոֆմիություններին։ Դաշնակցականներն, ընդհակառակը, ձգտում էին ստեղծել զուտ ազգային պրոֆմիություններ, արհեստականորեն հայ աշխատավորներին անջատում, մեկուսացնում էին իրենց դասակարգային եղբայրներից։ Նրանք ջանում էին հայ աշխատավորներին հեռու պահել դասակարգային, հեղափոխական պայքարից, պրոֆմիությունները գցել իրենց ազդեցության տակ։

1906 թ. մայիսի 1-ին Երևանում մասսայական ցույցեր են կազմակերպվում. ցուցարարները տանում էին կարմիր դրոշակներ, բոլշևիկները հեղափոխական ճառեր են արտասանում։ Գարնան և ամռան ամիսներին գործադուլ են անում Շուստովի և Սարաջևի գործարանների բանվորները, դարբինները, տպագրիչները, կոշկակարները, ակցիոնեական ընկերության բաժանմունքի, առևտրական գրասենյակների և ուրիշ հիմնարկ-ձեռնարկությունների բանվոր-ծառայողները։

Ալեքսանդրապոլում 1906 թ. մայիսին գործադուլ են անում 200 պայտահատ բանվորներ, հունիսին՝ դարբինները, դերձակներն ու կոշկակարները, հուլիսին՝ փոխադարձ վարկային ընկերության ծառայողները։ Հուլիսի 3-ին հրապարակվում է Ալեքսանդրապոլի սոցիալ-դեմոկրատական կազմակերպության կոչը, որտեղ ասված է. «Բանվորի ազատությունը իր՝ բանվորի գործն է, կորչի՛ շահագործող դասակարգը, կեցցե՛ բանվորական միությունը, կեցցե՛ սոցիալիզմի հաղթանակը»։

1906 թ. հունիսին գործադուլ են անում Ալավերդու պղնձաձուլական գործարանի և Շամլուղի հանքերի բանվորները, հուլիսին՝ Կարսի մի քանի ձեռնարկությունների ծառայողները։ Գործադուլավորների համառ պայքարի շնորհիվ Երևանում, Ալեքսանդրապոլում և մյուս վայրերում բանվոր-ծառայողների պահանջների մի մասը բավարարվում է՝ կըրճատվում է աշխատանքային օրվա տևողությունը, բարձրացվում աշխատավարձը և այլն։

1906 թվականին խոշոր հուզումներ են տեղի ունենում Ալեքսանդրապոլի և Կարսի կայազորների զինվորների մեջ։

Ալեքսանդրապոլի սակրավոր երկրորդ գումարտակում հունիսի 24-ին զինված ելույթ է տեղի ունենում, որը ճնշվում է. մասնակիցներից 30 հոգու բանտարկում են, 3 հոգու մահվան դատապարտում։

Հեղափոխական շարժումները լայն ծավալ են ստանում 1906 թվականի օգոստոսին։ Օգոստոսի 2-ին գործադուլ են անում Ալավերդու բանվորները, 7-ին՝ Կարսի սղոցարանների և կոշկակար բանվորները,

11-ին՝ Ալեքսանդրապոլի Զինգեր կարի ընկերության ծառայողները, հացթուխները, 21-ին՝ Երևանի առևտրական բանկի բաժանմունքի ծառայողները, փականագործները, հյուսները և ատաղձագործները, 31-ին՝ հացթուխները և այլն։

1906 թվականի հեղափոխական ելույթներից ամենաաչքի ընկնողը Ալավերդու բանվորների օգոստոսյան գործադուլն էր։ Ալավերդու բանվորներն անդադար պայքարում էին իրենց դրությունը բարելավելու համար, բայց ցանկալի արդյունքի չէին հասնում։ 1906 թվականին «Կայծ» թերթը գրում էր, թե ֆրանսիական ընկերությունը «բանվորներին շահագործելու համար միջոցների ոչ մի խտրություն չի դնում»։ «Բանվորներն այնտեղ ցամաք, շոր հացի են կարոտ»— գրում էր «Նոր խոսք»-ը։ Չկարողանալով տանել ծանր ճնշումները, բանվորները նորից դիմում են գործադուլի։

1906 թ. օգոստոսի 2-ին Ալավերդում հնչում են շչակները, և աշխատանքն ամենուրեք կանգ է առնում։ Գործադուլային կոմիտեն գործարանի դիրեկտորին ներկայացնում է 18 կետից կազմված պահանջներ, որոնք հիմնականում նույնն էին, ինչ 1905 թ. նոյեմբերյան գործադուլի ժամանակ։ Գործարանատերն սկզբում մերժում է բանվորների պահանջները և փորձում պառակտում առաջ բերել նրանց մեջ։ Սակայն, չկարողանալով խափանել գործադուլը, նա հարկադրված խոստանում է որոշ զիջումներ անել։ Այս անգամ բանվորները չեն համաձայնվում և առաջարկում են բավարարել իրենց բոլոր պահանջները։ Տարբեր ազգության պատկանող մոտ 4000 բանվորների գործադուլն ընթանում էր լիակատար համերաշխությամբ և շտեսնված ոգևորությամբ։

Ալավերդու բանվորների գործադուլը ղեկավարում էին ՌՍԴԲԿ Կովկասյան բյուրոյի ներկայացուցիչներ Ստ. Շահումյանը, Ս. Սպանդարյանը և տեղական սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունը։ Նրանք հեղափոխական աշխատանք էին կատարում նաև Սանահինի երկաթուղային բանվորների և Լոռու գյուղացիության մեջ։

Օգոստոսի վերջերին, Թիֆլիսի նահանգապետի կարգադրությամբ, Ջալալօղլուց (Ստեփանավանից) Ալավերդի է գալիս գնդապետ Զոլոտարյովի զորամասը՝ գնդացիրներով և հրանոթներով զինված։ Ալավերդի է գալիս նաև Շուլավերի գավառապետը 60 կազակներով և ստրաժնիկներով։ Ցարական զորքերն ու ոստիկանները շրջապատում են Ալավերդին և կարգադրում դադարեցնել գործադուլը։ Բանվորները չեն հանձնվում։

Գործարանի դիրեկտորը լոկաուտ է հայտարարում և խորամանկ ու խարդախ ձևով հեռացնում ակտիվ գործադուլավորներին։ Մեծ թվով պարսիկ բանվորների, որոնք Պարսկաստանից եկել էին մի կտոր հաց

վաստակելու, լցնում են ապրանքատար վագոնները և, ինչպես Ստ. Շահումյանն է ասում, «բառի բուն նշանակությամբ մերկ ու քաղցած», արտաքսում հայրենիք։ Հետագայում նրանք ակտիվ մասնակցություն են ունենում 1906—1909 թթ. պարսկական հեղափոխությանը։

Ալավերդու բանվորների օգոստոսյան գործադուլը տևում է մոտ մեկ ամիս։ Ինչպես 1905 թ. նոյեմբերյան, այնպես էլ այս գործադուլը իր առանձնակի տեղն ունի Լոռու և ամբողջ Հայաստանի հեղափոխական շարժումների պատմության մեջ։

1906 թվականին աչքի ընկնող գործադուլներ տեղի ունեցան նաև Երևանում։ Օգոստոսի 21-ին գործադուլ են անում Թիֆլիսի առևտրական բանկի Երևանի բաժանմունքի ծառայողները։ Գործադուլը ղեկավարում էին ՌՍԴԲԿ Երևանի և Թիֆլիսի կոմիտեները։ Որոշ ընդհատումներով գործադուլը տևեց 3 ամիս և վերջացավ անհաջողությամբ։

1906 թ. սեպտեմբերին գործադուլ են անում Երևանի Տեր-Ավետիքովի չուգունաձուլական գործարանի բանվորները, տպագրիչները, փականագործներն ու դարբինները, նոյեմբերին՝ Սարաջևի գործարանի բանվորները, դեկտեմբերին՝ կաշվի գործարանի բանվորները և ուրիշներ։

Հեղափոխական շարժումները 1907 թվականին

Հեղափոխական շարժումներն ինչպես ամբողջ Ռուսաստանում, այնպես էլ Հայաստանում շարունակվեցին նաև 1907 թվականին։ Դրանք նահանջի շրջանի արիերգարդային մարտեր էին։ Ձինված 1905 թվականի հեղափոխական պայքարի հարուստ փորձով, նահանջի տարիներին բանվորները, բոլշևիկների ղեկավարությամբ, կարողանում էին նույնիսկ որոշ հաղթանակներ ձեռք բերել։ Այս տեսակետից բնորոշ են Երևանի և Ղափանի բանվորների 1907 թ. գործադուլները, որոնք հաղթանակով ավարտվեցին։

Երևանի Սարաջևի ռեկտիֆիկացիոն և կոնյակի գործարանի բանվորները հեղափոխության հենց սկզբից ակտիվ մասնակցություն ունեցան ցարիզմի և բուրժուազիայի դեմ մղված պայքարին։ Բանվորական այդ կոլեկտիվի վրա բավական ուժեղ էր տեղական սոցիալ-դեմոկրատական կազմակերպության ազդեցությունը։ Բանվորների դրությունը առաջվա պես մնում էր ծանր։ Այդ հողի վրա էլ 1907 թ. հունվարի 27-ին ծագեց նրանց գործադուլը։

ՌՍԴԲԿ Երևանի կազմակերպության ղեկավարությամբ բանվորները մշակում և գործարանատիրոջն են ներկայացնում հետևյալ պահանջները՝ ութժամյա բանվորական օր, աշխատավարձի ավելացում, քաղաքավարի վերաբերմունք, ձրի բժշկական օգնություն, բանվորներին ընդունել և ազատել միջնորդ դատարանի որոշմամբ և այլն։

Գործարանի կառավարիչն սկզբում մերժում է բանվորների պահանջը։ Նա փորձում է պառակտում առաջ բերել տարբեր ազգության պատկանող բանվորների մեջ, բայց այդ նրան չի հաջողվում։ Բանվորների ինտերնացիոնալ կապերը շատ ամուր էին։ Գործարանի կառավարչի պահանջով ժանդարմերիան խուզարկություններ է կատարում բանվորական հանրակացարաններում, բանտարկում գործադուլի ղեկավարներին, բայց այդ էլ չի օգնում։

Բոլշևիկների ղեկավարությամբ բանվորները համառ կերպով պահանջում էին բավարարել իրենց պահանջները. նրանց այդ վճռականությունն էլ կոտրեց գործարանատիրոջ դիմադրությունը։ Նա հարկադրված եղավ բանվորների հետ համաձայնագիր կնքել, որով պարտավորվում էր՝ 1. 5—15 տոկոսով բարձրացնել բանվորների աշխատավարձը, 2. մտցնել ութժամյա բանվորական օր, 3. տարեկան 2 շաբաթ արձակուրդ տալ՝ պահպանելով աշխատավարձը, 4. տալ ձրի բժշկական օգնություն, 5. բանվորներին ընդունել և արձակել միջնորդ դատարանի միջոցով, 6. հիվանդության ժամանակ 6 ամիս վճարել բանվորի աշխատավարձը և պահել նրա տեղը, 7. հաշմանդամության դեպքում ցմահ վճարել աշխատավարձի կեսը և այլն։

Ինչպես տեսնում ենք, Սարաջևի գործարանի բանվորները մեծ հաղթանակ տարան։ Հայտնի է, անգամ հեղափոխության վերելքի շրջանում, պապիտալիստները գալարվում էին և չէին ցանկանում զիջումներ անել բանվորներին։ Սարաջևի բանվորների այս հաղթանակը համառ ու հետևողական պայքարի արդյունք էր։ Դրանում իր լուման ուներ ՌՍԴԲԿ Երևանի կազմակերպությունը։

Հայաստանի 1907 թվականի բանվորական շարժումներից ամենախոշորը Ղափանի բանվորների գործադուլն էր։

Ղափանը Հայաստանի պղնձարդյունաբերության երկրորդ կենտրոնն էր։ Այստեղ աշխատում էին 2000—2500 բանվորներ, որոնց մեծ մասը տեղացիներ էին, շրջակա գյուղերից եկած հայեր և ադրբեջանցիներ. կային նաև պարսիկներ, ռուսներ, հույներ և թուրքեր։ Բանվորների մեծ մասն աշխատում էր հանքերում, փոքր մասը՝ գործարաններում։ Ղափանում կար 4 խոշոր գործարան՝ Մելիք-Ազարյանի «Սյունիքը», Կոնդուրովինը, Հալիձորինը և Ղաթարինը։

Ղափազանց ծանր էր բանվորների դրությունը, մանավանդ հանքերում և լեռնախորշերում։ Բանվորներն աշխատում էին 10—14 ժամ և ստանում չնչին վարձատրություն։ Պղնձի հանքանյութը շալակով կրողներն ստանում էին օրական 40—60 կոպեկ, պղինձը ջոկողներն ու լվացողները՝ 50—60 կոպեկ, պայթեցնողները՝ 75 կոպեկ։ Իրենց ծանր

գրությունը բարելավելու համար Ղափանի բանվորները քանիցս բողոքել, պայքարել էին, բայց արդյունքի չէին հասել։

1907 թ. մարտի 26-ին Ղափանի բոլոր հանքերում ու գործարաններում ընդհանուր գործադուլ է բռնկվում, որին մասնակցում են ավելի քան 2000 բանվոր։ Գործադուլային կոմիտեն, որի մեջ մտնում էին Ա. Վարդանյանը, Ա. Մարտիրոսյանը, Շաթալին և ուրիշներ, նույն օրը ձեռնարկատերերին ներկայացնում է 27 կետից բաղկացած հետևյալ պահանջները. 1. ութժամյա բանվորական օր, իսկ հանքախորշերում վեց ժամյա, 2. աշխատավարձի բարձրացում, 3. մարդավայել վերաբերմունք, 4. բանվորներին արձակել միայն բանվորական ներկայացուցիչների որոշմամբ, տալով 3 ամսվա աշխատավարձ, 5. տուգանքների վերացում, 6. ձրի բժշկություն, 7. գիշերային աշխատանքի վերացում, 8. կառուցել բաղնիք, ճաշարան և հիվանդանոց, 9. վճարել գործադուլային օրերի աշխատավարձը, 10. հանքերում էլեկտրական լուսավորություն անցկացնել և այլն։

Գործարանատերերն սկզբում մերժում են բանվորների պահանջները, փորձում են ազգային պառակտում ստեղծել, բայց այդ նրանց չի հաջողվում։ Բոլշևիկների ղեկավարությամբ հայ և ադրբեջանցի բանվորները համերաշխության ցույցեր են կազմակերպում, գրկախառնվում ու համբուրվում են։ Գործարանատերերը գաղաղած կանչում են պրիստավին և բանտարկել տալիս գործադուլի ղեկավարներից մի քանիսին։ Դա ավելի է բորբոքում բանվորների զայրույթը. նրանք միահամուռ կերպով պահանջում են ազատել բանտարկյալներին և բավարարել իրենց բոլոր պահանջները, հակառակ դեպքում սպառնում են պայթեցնել հանքերն ու գործարանները։

Կապիտալիստները վախեցած բանվորների վճռականությունից, բանակցություններ են սկսում գործադուլային կոմիտեի հետ։ Երեք օրվա բանակցություններից հետո համաձայնվում են բանվորների աշխատավարձը բարձրացնել 10 տոկոսով, սահմանել 9-ժամյա բանվորական օր ամռանը, 7-ժամյա՝ ձմռանը, իսկ մնացած պահանջները բավարարել երկու տարվա ընթացքում։

Ղափանի բանվորների հաղթանակը, այն էլ հեղափոխության նահանջի շրջանում, նշանակալից երևույթ էր Հայաստանի բանվորական շարժման պատմության մեջ։ Այդ գործում աչքի ընկնող դեր խաղացին Բաքվից Ղափան վերադարձած, դասակարգային պայքարի փորձ ունեցող բանվորները, տեղի ու Բաքվի սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունները։

Ղափանի բանվորների հաղթանակը նոր լիցք է տալիս Հայաստանի հեղափոխական շարժումներին։ 1907 թ. մարտ-ապրիլ ամիսներին

գործադուլ են անում Ալեքսանդրապոլի տպարանների և մի քանի ուրիշ ձեռնարկությունների բանվոր-ծառայողները, հուլիսին՝ Երևանի տպարանների ու կազմատների բանվորները, որը տևում է ավելի քան մեկ ամիս, օգոստոսին՝ Երևանի ձիաքարշի աշխատողները և այլն։

Հայաստանի բանվոր-ծառայողները ընդհուպ մինչև 1907 թվականի վերջերը շարունակում էին հեղափոխական պայքարը տեղական շահագործողների և ցարիզմի դեմ, նահանջում էին պաշտպանվելով, հեշտությամբ չէին զիջում իրենց դիրքերը, կասեցնում էին ռեակցիայի հաղթանակը։

4. ԴՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԸ 1905—1907 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

1905—1907 թվականներին բանվորական շարժումները մեծ ազդեցություն ունեցան գյուղացիության վրա։ Հողի և ազատության համար աշխատավոր գյուղացիների մղած դարավոր պայքարը հեղափոխության տարիներին նոր թափ ու լայն ծավալ ստացավ։ Հեղափոխությունն արթնացրեց ու ոտքի հանեց նաև հայ գյուղացուն։ Գյուղացիներն ակտիվ մասնակցություն ունեցան 1905—1907 թվականների բուրժուա-դեմոկրատական հեղափոխությանը։

Բանվոր դասակարգի հեղափոխական պայքարը հզոր խթան հանդիսացավ գյուղացիական շարժումների աշխուժացման համար։ 1905—1907 թվականներին գյուղացիության դասակարգային պայքարը թևափոխեց իր զարգացման նոր էտապը, ավելի կազմակերպված ու սուր բնույթ ստացավ։ Գյուղացիական շարժումների աշխուժացման համար խոշոր նշանակություն ունեցավ սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունների գործունեությունը գյուղում, որը նկատելի կերպով ուժեղացավ հեղափոխության տարիներին։ Բոլշևիկների ջանքերով աշխատավոր գյուղացիության մի զգալի մասը դուրս եկավ բուրժուական և մանրբուրժուական ազգայնական կուսակցությունների ազդեցության ոլորտից և կանգնեց դասակարգային, հեղափոխական պայքարի ուղու վրա։ Դեռևս 1906 թ. սեպտեմբերին Ս. Սպանդարյանը նշում է, որ «Գյուղացիությունը լայն հոսանքով մղվում է դեպի մեր կուսակցությունը»[1]։ Ստ. Շահումյանը և Ս. Սպանդարյանը մեծ նշանակություն էին տալիս ագրարային հարցին և գյուղացիական շարժումներին. նրանք գյուղացիներին կոչ էին անում պայքարել հողի և ազատության համար։ 1906 թ. «Նոր խոսք» թերթում Ստ. Շահումյանը գրում է. «Ամբողջ հողը և ամբողջ ազատությունը— դրանք մեկը մյուսին ծնող, մեկը մյուս

[1] Ս. Սպանդարյան, Երկեր, հ. 1, Երևան, 1959, էջ 133։

սին պայմանավորող պահանջներ են... Ամբողջ հողը և ամբողջ ազատությունը— որտեղում է գյուղացիությունը, իսկ այդ կարող է տալ նրան ոչ թե մեռնող բյուրոկրատիան, այլ միայն և միայն հեղափոխությունը»[1]:

1905—1907 թթ. հեղափոխության տարիներին գյուղացիական ելույթներ տեղի ունեցան Հայաստանի մի շարք շրջաններում: Իր ակտիվությամբ առանձնապես աչքի ընկավ Լոռու գյուղացիությունը: Դա ուներ իր պատճառները: Լոռում ուժեղ էր կալվածատիրական ճնշումը: Կալվածատերեր Բարաթովը, Արամյանցը, Խանաղյանը, Լոռիս-Մելիքովը, Քալանթարյանը և ուրիշներ զանազան ճանապարհներով զավթել էին մեծ քանակությամբ հողեր, արոտավայրեր, անտառներ և անգութ կերպով կեղեքում էին աշխատավոր գյուղացիությանը: Լոռու գյուղացիությունը մոտիկից կապված էր Ալավերդու և Սանահինի բանվորության հետ: Լոռում համեմատաբար ուժեղ էր նաև սոցիալ-դեմոկրատական կազմակերպության ազդեցությունը:

1905 թվականին Լոռու մի քանի գյուղերի բնակիչները զենքը ձեռքներին մասնակցում են Ալավերդու և Սանահինի բանվորական շարժումներին ու կալվածատերերի դեմ մղվող պայքարին: Հաղպատի գյուղացիները մի քանի անգամ մահափորձ են կատարում կալվածատեր Բարաթովի դեմ. նա հարկադրված է լինում իր կալվածքը վաճառել հայտնի հարուստ Արամյանցին: 1906 թ. հուլիսին հաղպատցիք որոշում են հեռացնել Արամյանցի կալվածքի պահակներին և հարկ չվճարել: 1906 թ. օգոստոսի 12-ին, Բորչալուի սոցիալ-դեմոկրատական կազմակերպության ղեկավարությամբ, Լոռու Այգեհատ գյուղում միտինգ է գումարվում, մոտակա գյուղերի ներկայացուցիչների մասնակցությամբ, որտեղ որոշվում է «փոխել տուրքերի և արենդների եղանակը, հեղափոխական ճանապարհով օգտագործել արոտավայրերը»:

1906 թ. օգոստոս-սեպտեմբեր ամիսներին Կուրթանի գյուղացիները ելույթներ են ունենում կալվածատեր Խանաղյանի դեմ: 1906—1907 թվականներին ըմբոստություններ են ծագում Վարդաբլուր, Աքորի, Տաթեր, Ղաչաղան, Մղարթ և ուրիշ գյուղերում:

Գյուղացիական շարժումները սուր բնույթ են ստանում նաև Ալեքսանդրապոլի գավառում: 1905 թվականի մարտ-ապրիլ ամիսներին գյուղացիները փորձում են բռնագրավել Կարակալայի արքունական կալվածքը: Շիրակի գյուղացիներին միանում են Լոռու շրջանի Շիշթափա, Ղոթուրբուլաղ և Ղարաքիլիսա գյուղերի բնակիչները: Ցարական կառավարությունը զենքի ուժով ճնշում է գյուղացիների ելույթները:

[1] Ստ. Շահումյան, Երկեր, հ. 1, էջ 270:

1906—1907 թվականներին աղալարների դեմ համառ պայքար են մղում Միրաք գյուղի բնակիչները: «Հենց որ աղալարները իշխանությունն իրենց ձեռքը վերցրին,— գրում են գյուղացիները Կովկասի փոխարքային,— նրանք սկսեցին մեզ ճնշել, կողոպտել ու ուժով վարել մեր հողերը, ամեն ինչով մեզ ստրուկ դարձնել»: Միրաքի գյուղացիների պայքարը շարունակվում է նաև հետագայում:

Երևանի գավառի Կոտայքի շրջանի Ելդովան և Գյոքիլիսա գյուղերի մուլքադար Գեղամյանը 1907 թվականին բողոքում է, որ գյուղացիները հրաժարվում են մուլք վճարելուց: Կալվածատեր Մելիք-Աղամալյանը 1907 թ. ապրիլին բողոքում է հաշտարար միջնորդին, որ Առինջի գյուղացիները հրաժարվում են իրեն հասանելիք մուլքը Երևան փոխադրել: Ջառ գյուղի կապալառու Ալիբեկ Հաջի Ալաքպար օղլին Երևանի նահանգապետին գրում է. «Գյուղացիները ինձ մուլք չեն տալիս և սպառնում են, եթե ես դիմեմ իշխանության օգնությանը»: Եվ իրոք, 1907 թ. հուլիսին, երբ տանուտերը փորձում է մուլք գանձել, հայ և ադրբեջանցի գյուղացիները միահամուռ ուժերով նրան վռնդում են և բացարձակ հայտարարում, որ «կջարդեն և կայրեն կալվածատիրոջը, ինչպես Ռուսաստանում են անում»: Այս փաստը ցույց է տալիս, որ հայ գյուղացիները գիտեին, թե ինչ է կատարվում Ռուսաստանում:

1907 թվականին բանվորական շարժման անմիջական ազդեցության տակ, սոցիալ-դեմոկրատների ղեկավարությամբ ագրարային շարժումներ են տեղի ունենում Ղափանի գյուղերում: Բաշքենդում գյուղացիների ելույթը ճնշվում է զենքի ուժով: Շարժման ղեկավարներից բոլշևիկ Կոնստանդին Միխայլովն իր ելույթում դիմելով գյուղացիներին, ասում է. «Եթե կառավարությունը մեզ հող չի տալիս, ապա մենք ինքներս կխլենք այն, դուրս կանենք գյուղից պրիստավին ու չինովնիկներին: Թող կառավարությունն ու նրա չինովնիկները լավ իմանան, որ գյուղացին այլևս իր գլուխը չի խոնարհի. կորչե՛ն բռնակալները, կալվածատերերը և կապիտալիստները, կեցցե՛ ազատությունը»: Ցարական ոստիկանները Կ. Միխայլովին, Սպիրիդոն և Իլյա Ֆրանկոպոլ եղբայրներին նետում են Մետեխի բանտը և 1908 թվականին գնդակահարում:

Ցարական կառավարությունը ինչպես բանվորական, այնպես էլ գյուղացիական շարժումները դաժան կերպով ճնշում էր ոստիկանության և զորքի օգնությամբ: 1905—1907 թվականներին ցարական պատժիչ արշավախմբեր էին գործում Լոռիում, Զանգեզուրում, Ղազախում, Երևանի գավառում և այլ վայրերում: Ղազախի գավառում գեներալ Լևիցկու պատժիչ զորամասը բառի բուն իմաստով ասպատակում էր հայ և ադրբեջանական գյուղերը, էկզեկուցիայի ենթարկում, կողոպտում բնակիչներին:

Ցարական գեներալները ապստամբ գյուղացիներին ահաբեկելու համար գործի էին դնում նույնիսկ հրանոթները։ 1906 թ. փետրվարին նրանք Սիսիանում ռմբակոծում են Անգեղակոթ, Բռնակոթ և Ուզ գյուղերը, ավերում մի շարք տներ, սպանում և վիրավորում մի քանի տասնյակ մարդկանց։ Լոռիում գնդապետ Զոլոտարյովի պատժիչ զորամասը ռմբակոծում է Ներքին Գերգեր և Ղարամուրադ գյուղերը։

«Մշակ» թերթը նկարագրելով 1906 թ. փետրվարին Երևանի գավառում ցարական ոստիկանների կատարած խժդժությունները, գրում է, որ նրանք մտնում են գյուղերը, խուզարկում պատահած մարդուն, կողոպտում նրանց ունեցվածքը, թանկարժեք իրերը, կանանց զարդերը, տուգանում, ծեծում, անարգում։ Գավառապետի օգնական «Իոնի բազուկը ծանրացել է Գառնի-Բասարի հայ ազգաբնակչության և առանձնապես Զիգդամլու գյուղի վրա», նա հայտարարել է՝ «Զիգդամլու գյուղը պետք է կործանել, հողի հետ հավասարեցնել»։

Գյուղացիական շարժումները Հայաստանում շատ ավելի ուժեղ և մասսայական կլինեին, եթե չլիներ ցարական կառավարության կազմակերպած հայ-ադրբեջանական ընդհարումները և դաշնակցականների ու մյուս նացիոնալիստական կազմակերպությունների քայքայիչ գործունեությունը։ Բոլոր դեպքերում ինչպես հայ պրոլետարիատը, այնպես էլ հայ աշխատավոր գյուղացին հեղափոխության հետ էր, նրա մասնակիցը։ 1905—1907 թվականներին հայ գյուղն առաջին անգամ էր տեսնում մասսայական հեղափոխական շարժում։ Այդ տարիներին գյուղացիության մղած դասակարգային պայքարն իր արժանի տեղն ունի Հայաստանի 1905—1907 թվականների հեղափոխական շարժումների պատմության մեջ։

5. ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԸ 1905—1907 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

1905—1907 թվականների հեղափոխությանը ակտիվ մասնակցություն է ունենում նաև հայ երիտասարդությունը։ Երիտասարդությունը միշտ էլ հանդիսացել է հասարակության առաջընթացի հիմնական ուժերից մեկը։ XIX դարի երկրորդ կեսի հայ ազատագրական շարժման, ազատագրական խմբակների աջքի ընկնող գործիչներից շատերը ազատասեր ու հայրենասեր երիտասարդներ էին։ Մարքսիզմի տարածման, մարքսիստական և սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունների հիմնադիրներից ու ակտիվ գործիչներից շատերը կրթված, գաղափարական երիտասարդներ էին։ XX դարի սկզբի ազգային-ազատագրական և հեղափոխական պայքարի դրոշակակիրներն ու անվեհեր մարտիկները դարձյալ երիտասարդներ էին։ Բանվորա-գյուղացիական, աշխատավորական երիտասարդությունը հնի անողոք թշնամին էր, նորի ջահակիրը։

1905 թվականի հեղափոխության փոթորիկը ալեկոծում է երիտասարդությանը։ Բանվոր և գյուղացի երիտասարդները, իրենց ծնողների ու եղբայրների հետ միասին, ակտիվորեն մասնակցում են բանվորա-գյուղացիական հեղափոխական շարժումներին, դրսևորելով իրենց երիտասարդական ուժն ու եռանդը։ Հեղափոխության ալիքն ընդգրկում է նաև սովորող երիտասարդությանը։ Կովկասի փոխարքայի զինվորական գծով օգնական գեներալ-լեյտենանտ Մալաման 1905 թ. մարտին Վորոնցով-Դաշկովին գրում է. «Ընդհանուր հուզումներն անդրադարձան նաև երկրամասի արական և իգական, աշխարհիկ և հոգևոր, միջնակարգ և տարրական ուսումնական հաստատությունների վրա, գլխավորապես այնտեղ, որտեղ գերակշռում է տեղական տարրը»։

Սովորող երիտասարդության պայքարն ուղղված էր առաջին հերթին պետական և ազգային դպրոցներում տիրող ծանր ռեժիմի, ուսման, կրթության ու դաստիարակության հին, փտած ձևերի ու մեթոդների դեմ։

1905—1907 թվականներին աշակերտական մի շարք շարժումներ են տեղի ունենում Հայաստանում և Անդրկովկասի մյուս վայրերում գործող ուսումնական հաստատություններում։ Հունվարի 9-ի արյունոտ կիրակիի դեպքերը, հայ-ադրբեջանական ընդհարումները զայրույթ են առաջ բերում սովորող երիտասարդության մեջ։ Թիֆլիսի, Բաքվի, Երևանի, Շուշու, Ալեքսանդրապոլի, Կարսի, Գանձակի և ուրիշ դպրոցներում մասսայական դժգոհություններ են առաջանում, բողոքի ցույցեր ու դասադուլներ կազմակերպվում։

Աշակերտական շարժումները խեղդելու համար ցարական կառավարությունը փակում է մի շարք դպրոցներ, փողոց նետում հազարավոր աշակերտների և ուսուցիչների։

1905 թվականի գարնան ու ամռան ամիսներին և հատկապես հոկտեմբերյան ընդհանուր քաղաքական գործադուլները նոր մղում են տալիս երիտասարդական շարժումներին։ Այս շրջանում աշակերտական շարժումները լայն ծավալ են ստանում Երևանում, Թիֆլիսում, Ղարաքաղում, Ալեքսանդրապոլում, Էջմիածնում և Գանձակում։ Հիշատակության արժանի է հատկապես 1905 թ. սեպտեմբերին տեղի ունեցած Էջմիածնի Գևորգյան ճեմարանի ուսանողների դասադուլը, որի ղեկավարներից էր հետագայում ականավոր բոլշևիկ Ասքանազ Մռավյանը։ 1905 թ. հոկտեմբերին դասադուլ են անում Երևանի արական և իգական գիմնազիաների բոլոր աշակերտները։ Հոկտեմբերի 28-ին Երևանի նահանգապետը Կովկասի փոխարքայության ոստիկանական մասի պետ գե-

ներալ Շիրինկինին հեռագրում է. «Արական և իգական գիմնազիաների բոլոր աշակերտները գործադուլ են արել. ղեկավարությունն անելանելի դրության մեջ է»։ 1905 թվականին դասադուլ են անում նաև Շուշու ռեալական դպրոցի աշակերտները, որը տևում է մոտ երկու ամիս։

Աշակերտական մասսայական ելույթներ են տեղի ունենում նաև 1906—1907 թվականներին։ 1906 թվականին էջմիածնի ճեմարանի ուսանողները նորից դասադուլ են հայտարարում։ Շարժման ղեկավարները հեռացվում են, կաթողիկոսի կարգադրությամբ ճեմարանը ժամանակավորապես փակվում է։ 1906 թ. հունվար-փետրվար ամիսներին շարունակվում էր Երևանի թեմական դպրոցի աշակերտների դասադուլը, որն սկսվել էր դեռևս 1905 թվականի վերջերից։ 1906 թ. փետրվարին Բաքվի դպրոցների հայ և ադրբեջանցի աշակերտները համերաշխության ցույցեր են կազմակերպում, իրենց զայրույթն արտահայտում ազգամիջյան կռիվներ հրահրողների դեմ։ Նրանք 10 աշակերտ ուղարկում են Գանձակ (այժմ Կիրովաբադ) տեղի հայ և ադրբեջանցի աշակերտների մեջ համերաշխությունն ամրապնդելու համար։ Մարտի 20-ին Երևանի արական գիմնազիայի աշակերտները Տ. Մուշեղյանի, Մագնեշտեյնի, Հ. Զաքարյանի և ուրիշների ղեկավարությամբ դասադուլ են անում, որպես բողոքի նշան՝ Սև ծովի ապստամբ նավաստիների ղեկավար Շմիդտի գնդակահարության առթիվ։

1906 թ. մարտին բուռն ելույթներ են տեղի ունենում Ղարաբաղի (Շուշու) թեմական դպրոցում։ Աշակերտները մշակում և դպրոցի վարչությանն են ներկայացնում 42 կետից կազմված հետևյալ պահանջները. 1. Դպրոցն ազատել կղերականության ղեկավարությունից և տալ լայն ինքնավարություն։ 2. Դպրոցը դասել պետական և մյուս միջնակարգ դպրոցների շարքը, որպեսզի ավարտողն իրավունք ունենա ընդունվելու բարձրագույն ուսումնական հաստատություն։ 3. Աշխարհաբարն ընդունել որպես տիրապետող լեզու։ 4. Բարելավել ռուսաց լեզվի դրվածքը, որպեսզի ավարտողները կարողանան գրել և խոսել ռուսերեն։ 5. Կրճատել կրոնական առարկաները. կրոնական վարդապետության փոխարեն մտցնել փիլիսոփայություն։ 6. Աշխատանքի հրավիրել որակյալ մասնագետ ուսուցիչներ։ 7. Դադարեցնել աշակերտներին եկեղեցի տանելը։ 8. Դադարեցնել կոպիտ վերաբերմունքը աշակերտների նկատմամբ և այլն։

Շուշու թեմական դպրոցի աշակերտների դասադուլը մեծ աղմուկ է հանում. մանկավարժական խորհուրդը քանիցս քննարկում է աշակերտների պահանջագիրը, գործին անուղղակի կերպով միջամտում են տեղի սոցիալ-դեմոկրատներն ու դաշնակցականները։ Համառ պայքարից հետո աշակերտների պահանջների մի մասը բավարարվում է։ 1906 թ.

նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին այստեղ նորից աշակերտական շարժումներ են բռնկվում։

1906 թ. հոկտեմբերի 11-ին դասադուլ են անում Երևանի Հռիփսիմյան իգական գիմնազիայի աշակերտուհիները, հոկտեմբերի 15-ին նրանց միանում են արական գիմնազիայի, իսկ նոյեմբերի 6-ին՝ կլասիկական գիմնազիայի աշակերտները։ Տղաներն ու աղջիկները երգում էին «Մարսելյոզ», «Փառք ազատության մարտիկներին», պահանջում վերացնել «ռազմադաշտային դատարանները», հեռացնել գիմնազիայի դիրեկտորին և այլն։ Նոյեմբերի 9-ին դասադուլ են անում Ալեքսանդրապոլի առևտրական ուսումնարանի աշակերտները։

1907 թվականի աչքի ընկնող ելույթներից մեկը էջմիածնի ճեմարանի ուսանողների հունվարյան դասադուլն էր։ Այդ դասադուլը ղեկավարում էին սոցիալ-դեմոկրատները։ Ուսանողները պահանջում էին բարեփոխել ուսումնա-դաստիարակչական աշխատանքները, վերացնել ճեմարանում տիրող կղերական-բյուրոկրատական ռեժիմը և այլն։ Ուսուցչության առաջավոր մասը, այդ թվում ականավոր հայագետ Մանուկ Աբեղյանը և ուրիշներ պաշտպանում էին ուսանողներին, իսկ կղերա-պահպանողական տարրերը խիստ թշնամաբար էին վերաբերվում։

1905—1907 թվականների երիտասարդական շարժումները ցույց տվեցին, որ երիտասարդությունը, ինչպես ժողովրդի մյուս աշխատավորական խավերը, դժգոհ էր տիրող կարգերից, կրթության ու դաստիարակության հին ձևերից ու մեթոդներից, դպրոցներում տիրող բյուրոկրատական ռեժիմից։ Կանգնելով ազատության և առաջադիմության համար մարտնչողների շարքերում, երիտասարդությունը պայքարում էր իր լավ ապագայի՝ հեղափոխության հաղթանակի համար։

6. ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԴԱՍԵՐԸ

1905—1907 թվականների հեղափոխությունը ինչպես Ռուսաստանի բոլոր ժողովուրդների, այնպես էլ հայ ժողովրդի համար պատմական խոշոր նշանակություն ունեցավ։ Հայաստանն առաջին անգամ էր տեսնում նման մասսայական հեղափոխական շարժում։ Հայաստանի բանվորների և գյուղացիների դասակարգային պայքարի պատմության մեջ դա մի նոր, բարձր էտապ էր, հերոսական պայքարի ժամանակաշրջան։

Ցարիզմի և տեղական շահագործող դասակարգերի դեմ մղվող ազատագրական այդ մեծ պայքարում Հայաստանի բանվորներին ու գյուղացիներին ոգեշնչում էր ռուս ժողովուրդը, հատկապես ռուսական

հերոսական պրոլետարիատը, որը հեղափոխության հիմնական շարժիչ ուժն ու ավանգարդն էր։

Պատմական վաղ ժամանակներից սկսած տնտեսական, քաղաքական և կուլտուրական սերտ կապերի մեջ գտնվելով Անդրկովկասի և Ռուսաստանի ժողովուրդների հետ, հայ ժողովուրդն իր ազատագրական պայքարի բախտը անխզելիորեն կապել էր այդ ժողովուրդների բախտի, նրանց ընդհանուր, միասնական պայքարի հետ։ Եվ պատահական չէ, որ 1905—1907 թվականների հեղափոխության բոլոր էտապներում հայ ժողովրդի պայքարն ընթանում էր համառուսաստանյան ընդհանուր շարժման հունով, ինտերնացիոնալ դրոշի ներքո։ Դրա մեջ էր հայ ժողովրդի և մյուս նշված ազգությունների հեղափոխական պայքարի ուժը, դա էր նրանց սոցիալական և ազգային-ազատագրական պայքարի հաղթանակի գրավականը։ *1905 թ. նոյեմբերին «Հեղափոխության նոր հաղթությունը» հոդվածում Ստ. Շահումյանն ասում է. «Ցարական լծի տակ հեծող բոլոր ազգությունների պրոլետարների համերաշխությունը հեղափոխության հաղթության գլխավոր գրավականն է»*[1]։

Պատմական մի շարք հանգամանքների բերումով, ազգային քաղաքական կուսակցությունները՝ հնչակյաններն ու դաշնակցականները, ինչպես հայտնի է, կարողացել էին իրենց ազդեցության տակ գցել հայ աշխատավորության զգալի մասին և նրանց տանել, այսպես կոչված, «ազգային հեղափոխության» ուղիով։ Ազգային-ազատագրական պայքարի դրոշով գործող այդ կուսակցությունները հայ ժողովրդի մեջ բավականաչափ խոր արմատներ էին նետել, տարիներ շարունակ իշխող դիրքեր գրավել հայ հասարակական-քաղաքական կյանքում։

Անհրաժեշտ էր վիթխարի աշխատանք կատարել հայ աշխատավորությանը ազգայնական այդ կուսակցությունների ազդեցությունից դուրս բերելու և հեղափոխության ինտերնացիոնալ դրոշի շուրջը համախմբելու համար։ Այդ ծանր ու դժվարին աշխատանքը ընկած էր հայ մարքսիստ-լենինյանների ուսերին։ 1905—1907 թվականների հեղափոխության տարիներին նրանք անձնուրաց պայքար մղեցին ցարական ինքնակալության, բուրժուազիայի և մանրբուրժուական ազգայնական կուսակցությունների դեմ, բանվորներին ու գյուղացիներին հեղափոխության դրոշի շուրջը համախմբելու, դասակարգային պայքարի հանելու համար։

1905 թվականին Վ. Ի. Լենինը մեծ օգնություն ցույց տվեց հայ բոլշևիկներին նացիոնալիզմի, մասնավորապես սպեցիֆիկների դեմ մղվող պայքարում։ Սպեցիֆիկների այսպես կոչված «Հայ սոցիալ-դեմոկրատական բանվորական կազմակերպությունը» հիմնվել էր 1903 թվականի վերջերին։ Դա հիմնականում մանրբուրժուական, բունդական տիպի կազմակերպություն էր։ Վ. Ի. Լենինը, ծանոթանալով սպեցիֆիկների գործունեությանը, 1905 թ. սեպտեմբերի 7-ին ՌՍԴԲԿ Կենտկոմի անդամներին գրում է. «Խիստ նախազգուշացնում եմ «Հայկական ս.-դ. ֆեդերացիայի» վերաբերյալ։ Եթե դուք համաձայնել եք, որ նա մասնակցի կոնֆերենցիային, ապա նակատագրական սխալ եք կատարել, որպիսին հարկավոր է ուղղել ինչ էլ որ լինի։ Դրանք— մի զույգ ժնևյան կազմալուծիչներ են, որոնք այստեղ հրատարակում են ամենադատարկ բաներ, առանց որևէ լուրջ կապերի Կովկասի հետ։ Դա— բունդական կրեատուրա է, ուրիշ ոչինչ, որը հատկապես հորինված է Կովկասյան բունդիզմը սնելու համար։ Կովկասի ընկերները բոլորն էլ դեմ են գրականագետ-կազմալուծիչների այդ շայկային...»[1]։

1905 թվականի հեղափոխությունը քայքայում առաջ բերեց սպեցիֆիկների մեջ. կենսունակ տարրերը մտան ՌՍԴԲԿ շարքերը։

1905—1907 թվականների հեղափոխությունը վճռական շրջադարձ ստեղծեց հայ իրականության մեջ։ Հեղափոխությունն արթնացրեց աշխատավորական լայն մասսաներին, նրանց համար այս ու այն չափով պարզ դարձավ, որ ներքին և արտաքին կեղեքիչների լծից կարելի է և պետք է ազատագրվել ժողովուրդների ընդհանուր, միասնական ուժերով, որ ազգային նեղ, մեկուսացած պայքարի ուղին սխալ և կորստաբեր ուղի է։ Հակառակ բուրժուական նացիոնալիստների պառակտիչ գործունեության, Հայաստանի բանվորներն ու գյուղացիները հավատարիմ մնացին սոցիալ-դեմոկրատիայի ինտերնացիոնալ դրոշին, հեղափոխությունն ավելի ամրապնդեց ժողովուրդների բարեկամությունը, նրանց մեջ հեղափոխական դաշինքի հիմք դրվեց։

Հեղափոխության բոցերի մեջ հայ աշխատավորները սեփական փորձով տեսան ու համոզվեցին, որ ոչ թե բուրժուական և մանրբուրժուական նացիոնալիստական կուսակցությունները, այլ հեղափոխական սոցիալ-դեմոկրատները, բոլշևիկներն են ժողովրդի շահերի հավատարիմ պաշտպանները։ *«Նացիոնալիզմը Կովկասում,— ինչպես Ստ. Շահումյանն է ասում,— հեղափոխության ամենաառաջիմ թշնամին է»։* Հեղափոխությունը մեծապես նպաստեց նացիոնալիզմի դեմ բոլշևիկների մղած պայքարին, ժողովրդի մեջ նրանց քաղաքական ու գաղափարական դիրքերի ամրապնդմանը։

1905—1907 թթ. հեղափոխության փորձը ցույց տվեց, որ բանվորներն ու գյուղացիները առանձին-առանձին հաղթել չեն կարող, որ բանվորագյուղացիական ամուր դաշինքի շնորհիվ միայն կարելի է

[1] Ստ. Շահումյան, *Երկեր, հ. 1, էջ 94։*

[1] Վ. Ի. Լենին, *Երկեր, հ. 34, էջ 383։*

տապալել ցարիզմի և բուրժուազիայի լուծը։ Հայաստանում հեղափոխական շարժումների առավել թույլ կողմը գյուղացիության մասնակցությունն էր, գյուղացիական շարժման ցածր մակարդակը, բանվորա-գյուղացիական դաշինքի թուլությունը։

1905—1907 թթ. հեղափոխությունը մեծ ազդեցություն ունեցավ հայ ժողովրդի տնտեսական, քաղաքական և կուլտուրական կյանքի վրա։ Նա նոր թափ հաղորդեց հասարակական-քաղաքական դեմոկրատական մտքի, կուլտուրայի, գրականության ու արվեստի զարգացմանը։ Հեղափոխությունն արթնացրեց ու ոտքի հանեց հայ ժողովրդին նոր ձևով մտածելու, նոր ձևով ապրելու համար, նրա ազգային և սոցիալական ազատագրությունը դրեց նոր ուղիների վրա։

Ռուսական առաջին հեղափոխությունն արձագանք գտավ նաև Պարսկաստանում ու Թուրքիայում։ Պարսկաստանի և Թուրքիայի տիրապետության տակ գտնվող հայերը ակտիվ մասնակցություն ունեցան այդ երկրներում սկսված հեղափոխական շարժումներին։ 1905—1907 թվականներին ազատագրական ելույթներ են տեղի ունենում Վանում, Էրզրումում, Բիթլիսում, Տրապիզոնում և այլ վայրերում։ Էրզրումի հայ և թուրք աշխատավորներն իրենց ճնշողների դեմ հանդես էին գալիս միասնաբար, համերաշխ կերպով։ 1906—1911 թվականների պարսկական հեղափոխության ժամանակ հայերն ու պարսիկները նույնպես միասնաբար էին գործում։ Շահական և սուլթանական բռնակալության տապալումը բխում էր ինչպես պարսիկ և թուրք, այնպես էլ հայ աշխատավորության շահերից։

Առանց 1905 թվականի հեղափոխության փորձի, ասում է Վ. Ի. Լենինը, 1917 թվականի Հոկտեմբերյան հեղափոխության հաղթանակը անհնար կլիներ։ 1905—1907 թվականների հեղափոխությունը ցույց տվեց, որ ինչպես մյուս ճնշված ժողովուրդների, այնպես էլ հայ ժողովրդի ազգային և սոցիալական ազատագրությունը հնարավոր է միմիայն ռուսական հեղափոխության հաղթանակի շնորհիվ։

XVII ԳԼՈՒԽ

ՀԱՅԱՍՏԱՆԸ 1907—1914 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

1. ՌԵԱԿՑԻԱՅԻ ԵՎ ՎԵՐԵԼՔԻ ՏԱՐԻՆԵՐԸ

Հայաստանը ռեակցիայի տարիներին

1907 թվականի հունիսի 3-ի պետական հեղաշրջումով Ռուսաստանում սկսվում է ռեակցիայի ծանր ու մռայլ ժամանակաշրջանը։ Արյան մեջ խեղդելով ժողովրդական հեղափոխությունը, ցարական կառավարությունն սկսում է դաժան դատաստան տեսնել հեղափոխական ուժերի հետ։ Ռոմանովների թագավորության 300 տարվա ընթացքում, ասում է Վ. Ի. Լենինը, այնպիսի սանձարձակություններ, կախաղաններ, խոշտանգումներ ու տանջանքներ չեն եղել, ինչպես Նիկոլայ II-ի ժամանակ։

Ռեակցիայի տարիներին չափազանց ծանր դրություն է ստեղծվում նաև Հայաստանի աշխատավորության համար։ Ցարական պատժիչ ջոկատներն ասպատակում էին Հայաստանի գյուղերն ու քաղաքները, հեղափոխականներին բանտարկում ու աքսորում էին, բանվորներից ու գյուղացիներից խլում հեղափոխության շրջանում նրանց ձեռք բերած նվաճումները։ Բանտերը լեփ-լեցուն էին։ 1909 թվականին Երևանում 400 տեղանոց բանտում լցված էր 518 մարդ։ 1908—1910 թվականներին Երևանի նահանգում սպանվել ու խեղդամահ էին եղել 862 մարդ։

Հեղափոխականների դեմ պայքարն ուժեղացնելու նպատակով 1907 թ. դեկտեմբերին հիմնվում է «Կովկասի շրջանային պահնորդական բաժանմունքը», ամենուրեք ավելացվում է գաղտնի ոստիկանների թիվը։ Ռեակցիայի տարիներին Անդրկովկասի ականավոր բոլշևիկներից շատերը բանտարկվում ու աքսորվում են։

Ռեակցիայի շրջանում ավելի խստացավ ցարիզմի առանց այդ էլ բիրտ ու դաժան ազգային-գաղութային քաղաքականությունը, ավելի ծանրացավ ճնշված ազգերի տնտեսական, իրավական ու քաղաքական դրությունը։ Ցարական մերկապարանոց մեծապետական շովինիստները Անդրկովկասի, Միջին Ասիայի ու Սիբիրի ժողովուրդներին համարելով «քաղաքականապես տհաս», սահմանափակեցին նրանց ընտրական իրավունքները։ Երկրորդ Պետական դումայում Կովկասին տրված էր 19 դեպուտատի տեղ, երրորդ դումայում՝ 10։ Անտեսելով Անդրկովկասի ժողովուրդների ազգային իրավունքները, ցարական կառավարությունը Երևանի, Բաքվի, Ելիզավետպոլի նահանգներից կազմել էր մի ընտրական օկրուգ և տվել երկու տեղ։ Ընտրական սիստեմն այնպիսին էր, որ թույլ չէր տալիս ժողովրդի ներկայացուցիչներին ընտրվելու Պետական դումայի կազմում։

Ցարական կառավարությունը ելնելով իր ազգային-գաղութային քաղաքականությունից, ինչպես անցյալում, այնպես էլ այս շրջանում, մեծ թվով ռուսների և ուկրաինացիների վերաբնակեցրեց Կովկասում։ Հինգ տարվա ընթացքում Կովկասում բնակեցվում են 54 հազար ռուսներ, ստեղծվում են 261 ռուսական գյուղեր և խուտորներ։ 1914 թվականին Կարսի մարզում բնակեցվում են ավելի քան երեք հազար ռուսներ. նախատեսված էր Երևանի նահանգում բնակեցնել 2500 հոգի։ Եվ

այդ այն ժամանակ, երբ ինչպես Վ. Ի. Լենինն է նշում, Անդրկովկասում գյուղացիության մոտ 46 տոկոսը զուրկ էր պետական հողից կամ շատ քիչ էր ապահովված։

Ցարական կառավարությունը վայրագ ձևերով հալածում ու հետապնդում էր ոչ միայն հեղափոխականներին, այլև ամբողջ աշխատավոր ժողովրդին, ինչպես Վ. Ի. Լենինն է դիպուկ կերպով բնութագրել, կառավարությունը պատերազմ էր հայտարարել ժողովրդին։ Սեհարյուրակային միապետական Պուրիշկևիչը հայերին անվանում էր «սեպարատիստներ»։ Հեղափոխության դահիճ, ցարական գեներալ Ալիխանով-Ավարսկու գինված ջոկատները և ռազմադաշտային դատարանները ահ ու սարսափ էին տարածում ամբողջ Անդրկովկասում։

Ռեակցիայի տարիներին առավել ծանր ու դժնդակ վիճակ էր ստեղծվել աշխատավորական մասսաների՝ բանվորների ու գյուղացիների համար։ Բանվորներից ոչ միայն խլվեցին հեղափոխության շրջանում պայքարի ճանապարհով ձեռք բերված նվաճումները, այլև ավելի վատ վիճակ ստեղծվեց նրանց համար, քան մինչև հեղափոխությունը։ Ավելացվեց բանվորական օրը, այն հասցվեց 12—16 ժամի, 10—15 տոկոսով իջեցվեց աշխատավարձը։ Գործարանատերերի կամայականություններն ու բռնությունները, բանվորներին տուգանելը, ծեծելը, աշխատանքից հեռացնել փողոց նետելը սովորական երևույթ դարձան։ Առաջավոր բանվորների անունները գրանցվում էին «սև ցուցակներում», նրանց հետապնդում, հսկողության տակ էին պահում, հեռացնում աշխատանքից, անգործության ու տնտեսական կարիքի մեջ ճզմում։

Ստոլիպինյան ռեակցիան ծանր անդրադարձավ նաև աշխատավոր գյուղացիության վրա։ Ցարական պատժիչ արշավախմբերը դաժան դատաստան էին տեսնում հողի և ազատության համար պայքարի ելած գյուղացիների հետ։ Նրանք զինված խմբերով թափվում էին գյուղերը, ահաբեկում, ծեծում գյուղացիներին, բռնագրավում նրանց ունեցվածքը, հարկադրում վճարել հեղափոխության տարիներին չվճարված հարկերն ու տուրքերը։

Ռեակցիան իր սև կնիքն է դնում ամբողջ հայ հասարակական կյանքի վրա։ Գլուխ են բարձրացնում հակահեղափոխական, ռեակցիոն ուժերը՝ միապետության մոլի սպասարկուները, կղերականները, կալվածատերերը, բուրժուական նացիոնալիստները, հեղափոխության բոլոր թշնամիները։ Առաջ են գալիս անկումային տրամադրություններ, հուսալքություն։

Ստոլիպինյան ռեակցիայի այդ ծանր օրերին, միակ կուսակցությունը, որն հավատարիմ մնաց բանվորների ու գյուղացիների ազատագրության գործին, բոլշևիկների կուսակցությունն էր։ 1908 թ. նոյեմբերին Բաքվից արտասահման Միխա Ցխակայային գրած նամակում Ստ. Շահումյանն ասում էր. «Աշխատանքի պայմանները, թանկագին Միխա, սոսկալի դժվարացել են, մեզ տառապիորեն խաչում են... բայց մենք չենք վհատվում։ Հավատը դեպի ապագան և սերը դեպի մեր գործը անսպառ եռանդ են ներշնչում մեզ»[1]։ Այնուհետև խոսելով ներկուսակցական տարաձայնությունների մասին, Ստ. Շահումյանը գրում է. «Մենք ամբողջովին Իլյիչի կողմն ենք», «Մենք հաստատ համոզված ենք Իլյիչի դիրքորոշման ճշտությանը»[3]։

Անդրկովկասի բոլշևիկները անցնելով խոր ընդհատակ, շարունակեցին իրենց պայքարը ցարիզմի ու բուրժուազիայի, ինչպես և մենշևիկների դեմ։ Ռեակցիայի դժոխային պայմաններում անձնվեր գործում էին ականավոր բոլշևիկներ Ստ. Շահումյանը, Ս. Սպանդարյանը, Կամոն, Ս. Կասյանը, Մ. Մելիքյանը, Ս. Խանոյանը, Ռ. Քաթանյանը, Ա. Խումարյանը, Գ. Սոկոլովսկին և ուրիշներ։ Այդ տարիներին իրենց ընդհատակյա գործունեությունը շարունակեցին Երևանի, Ալեքսանդրապոլի, Կարսի, Ալավերդու, Ղափանի, Նոր Բայազետի սոցիալ-դեմոկրատական կազմակերպություններն ու խմբակները։

Հայաստանը ռեղափոխական նոր վերելքի շրջանում

Ստոլիպինյան ռեակցիան երկար չտևեց։ 1910 թվականից սկսվեց հեղափոխական նոր վերելք։ «Սեհարյուրյակային ռեակցիայի լիակատար տիրապետության շրջանը վերջացավ։— գրում էր Վ. Ի. Լենինը 1910 թվականին։— Սկսվում է նոր վերելքի շրջանը»[4]։ Հեղափոխական շարժումներն ամբողջ Ռուսաստանում նոր թափ են ստանում հատկապես Լենայի 1912 թ. ապրիլի նշանավոր գործադուլից հետո։

Ռուսական պրոլետարիատի օրինակին հետևում են նաև Անդրկովկասի բանվորները։ Բաքվում, Բաթումում, Թիֆլիսում բոլշևիկների ղեկավարությամբ մասսայական ցույցեր ու գործադուլներ են տեղի ունենում։ Խոշոր նշանակություն է ունենում հատկապես Բաքվի բանվորների 1914 թ. ամռան ընդհանուր գործադուլը, որը լայն արձագանք գտավ ամբողջ Ռուսաստանում։

Հեղափոխության ալիքը ընդգրկում է նաև Հայաստանը։ 1910 թվականին գործադուլ են անում Ալավերդու բանվորները, Երևանի և Ալեքսանդրապոլի երկաթուղայինները։ 1911 թ. փետրվարին գործադուլ են անում Կողբի աղահանքերի բանվորները։ 1912 թ. մայիսին գործադուլներ են տեղի ունենում Ղափանում և այլ վայրերում։ Հայաստանի աշխատա-

[1] Ստ. Շահումյան, Երկեր, հ. 2, Երևան, 1957, էջ 66։
[2] Նույն տեղում, էջ 67։
[3] Նույն տեղում, էջ 40։
[4] Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 16, էջ 466։

վորները իրենց բողոքի ձայնն են բարձրացնում Լենայի ոսկու հանքերի բանվորների գնդակոծումների դեմ. Երևանում, Ալեքսանդրապոլում, Կարսում, Ղափանում և այլուր բողոքի ցույցեր են տեղի ունենում։ Ալեքսանդրապոլում հրատարակվող «Արագած» թերթը գրում է. «Ապրիլի 4-ին Լենայի ոսկու հանքերում պատահած սոսկալի աղետը խոր կերպով վրդովեց հասարակական խղճի անդորրությունը»։

1913 թվականին Ալավերդու բանվորների մեջ նոր հուզումներ են ծագում, որոնք շարունակվում են նաև 1914 թվականին։ Բանվորները պահանջում էին 8-ժամյա աշխատանքային օր, աշխատավարձը բարձրացնել 20 տոկոսով, բարելավել աշխատանքային և կենցաղային պայմանները, հիմնել բանվորական տեսչություն, վերացնել տուգանքները և այլն։

Հեղափոխության նոր վերելքի տարիներին լայնորեն նշվում էր Մայիսի մեկը։ Բանվորներն ու աշխատավորները մեծ մասամբ առաջին անգամ էին տոնում Մայիսի 1-ը, ցուցադրելով իրենց հեղափոխական կորովը և ինտերնացիոնալ համերաշխությունը։ 1914 թվականին Ղափանում տեղի ունեցած մայվական հակացարական բնույթ էր կրում. ոստիկանները փորձեցին ճնշել այն, բայց չկարողացան։

Բանվորական շարժումները ոգեշնչում և պայքարի էին հանում նաև աշխատավոր գյուղացիներին։ Երևանի, Էջմիածնի, Ալեքսանդրապոլի, Նոր Բայազետի, Զանգեզուրի գավառներում գյուղացիներն ըմբոստանում են կալվածատերերի ու կուլակների դեմ, բռնագրավում նրանց հողերը, արոտավայրերը, այրում նրանց ունեցվածքը և այլն։ 1910 թվականին գյուղացիական հուզումներ են լինում Էջմիածնի գավառի Ագարակ, Հախս, Նազրվան և Թալին գյուղերում։ Նազրվանում զինված ընդհարում է տեղի ունենում գյուղացիների ու կալվածատիրոջ միջև։ Զինված պայքարի բնույթ է ստանում նաև Ալեքսանդրապոլի Մահմուդջուղ գյուղի բնակիչների ելույթը։

1911 թվականին Բջնի գյուղի բնակիչները հարձակվում են հաշտարար միջնորդի և ստրաժնիկների վրա, նրանց դուրս վռնդում գյուղից, հրաժարվում մուլք վճարելուց։ Զոդ գյուղի բնակիչները տարիներ շարունակ պայքարում էին աղալարների ճնշումներից ազատվելու համար, բայց հաջողության չէին հասնում։ Գյուղացիական սուր ելույթներ են տեղի ունենում նաև Էջմիածնի, Սևանի, Տաթևի և Հաղպատ-Սանահինի վանքերին պատկանող գյուղերում։

Ագրարային-գյուղացիական հարցը Անդրկովկասում սուր բնույթ էր ստացել։ Գյուղացիական շարժումները խեղդելու և գյուղում ցարական կառավարության հենարանն ամրապնդելու նպատակով դեռևս 1910 թ. հունիսին Կովկասի փոխարքա Վորոնցով-Դաշկովը այդ հարցի վերաբերյալ նախագիծ էր ներկայացրել կառավարությանը, բայց ընթացք չէր ստացել։ Այդ կապակցությամբ Պետական դումայի 34 անդամներ պահանջել էին վերացնել գյուղացիների ժամանակավոր կախյալ վիճակը։

Ստեղծված ծանր դրությունից դուրս գալու համար ցարական կառավարությունը, ստոլիպինյան ագրարային ռեֆորմի ոգով, 1912 թ. դեկտեմբերի 20-ին ագրարային ռեֆորմ անցկացրեց նաև Անդրկովկասում։ Դեկտեմբերի 20-ի օրենքի համաձայն վերացվում էր գյուղացիների ժամանակավոր կախյալ վիճակը, պետության օժանդակությամբ գյուղացիները պարտադիր կարգով գնում էին իրենց հողաբաժինը. կալվածատերերը պետական գանձարանից միանվագ ստանում էին հողի արժեքը, իսկ գյուղացիները տարբեր ժամկետներում՝ 28, 41 կամ 56 տարվա ընթացքում պարտավոր էին, համապատասխան տոկոսներով, այդ գումարը վերադարձնել պետությանը։

Դեկտեմբերի 20-ի օրենքը գործադրվում է 1913 թ. հունվարի 1-ից։ Այդ օրենքով գյուղացիները դասվում էին սեփականատեր շինականների շարքը։ Մինչև հողի փրկագնի լրիվ մարելը, գյուղացիները պետք է տոկոսներ մուծեին պետական գանձարան՝ 28 տարվա ժամկետի դեպքում, տարեկան մեկ ռուբլու դիմաց՝ 6 կոպեկ, 41-ին՝ 5 կոպեկ, 56-ին՝ $4^1/_2$ կոպեկ։ Մոտավոր հաշվումներով Արևելյան Հայաստանում գյուղացիները 28—56 տարվա ընթացքում պետք է փրկավճար մուծեին 8 միլիոն ռուբլի ոսկով և նույնքան էլ տոկոս, որպեսզի հողի սեփականատեր դառնային։ Սա գյուղացիների յուրատեսակ կողոպուտ էր, հօգուտ կալվածատերերի և ցարական կառավարության։

Ուշագրավ է, որ իր ժամանակին բոլշևիկները խստորեն քննադատեցին ցարիզմի ագրարային այդ ռեֆորմը, պահանջելով ամբողջ հողը անվճար հանձնել գյուղացիներին։ Իսկ լիբերալ-բուրժուական «Մշակ»-ը և դաշնակցականների օրգան «Հորիզոն»-ը մեծ գոհունակությամբ ընդունեցին ցարական ռեֆորմը, անվանելով այն «ճորտության վերացում Կովկասում»։

1912 թ. դեկտեմբերի 20-ի օրենքը, ինչպես ստոլիպինյան ագրարային ռեֆորմը Ռուսաստանում, նպաստեց գյուղում կուլակության դիրքերի ամրապնդմանը, կապիտալիզմի զարգացմանը։ Այդ ռեֆորմից հետո աշխատավոր գյուղացիության քայքայման ու աղքատացման պրոցեսն ավելի ուժեղացավ։ 1913 թվականին Երևանի նահանգում արտագնացների թիվը հասավ մոտ 50 հազարի, որից ավելի քան 30 հազարը Հայաստանից դուրս՝ Բաքու, Ռուսաստան, Ամերիկա և այլ վայրեր։

Վերելքի տարիներին հեղափոխական շարժումները նկատելի կեր-

պով աշխուժանում են նաև հասարակության մյուս խավերի, մասնավորապես սովորող երիտասարդության մեջ և Հայաստանում գտնվող զորամասերում։ 1910—1914 թվականներին աշակերտական հուզումներ են տեղի ունենում Էջմիածնի Գևորգյան ճեմարանում, Երևանի թեմական դպրոցում, արական գիմնազիայում և այլ ուսումնական հաստատություններում։

Անդրկովկասի և Հայաստանի բոլշևիկյան կազմակերպությունները, օգտագործելով լեգալ և անլեգալ պայմանները, եռանդուն աշխատանք էին կատարում ժողովրդի մեջ, կազմակերպում ու գլխավորում էին նրանց հեղափոխական պայքարը։ 1912 թ. հունվարին Պրագայում գումարված ՌՍԴԲԿ VI կոնֆերանսը պատմական դեր կատարեց ինչպես ամբողջ Ռուսաստանի, այնպես էլ Անդրկովկասի հեղափոխական շարժումների հետագա վերելքի գործում։ Վ. Ի. Լենինի հավատարիմ աշակերտների ու զինակիցների՝ Ստ. Շահումյանի, Ս. Օրջոնիկիձեի, Ս. Սպանդարյանի, Ա. Ջափարիձեի, Մ. Ազիզբեկովի, Ն. Նարիմանովի, Վ. Ֆիոլետովի և ուրիշների եռանդուն աշխատանքի շնորհիվ Անդրկովկասի բանվորների ու գյուղացիների հեղափոխական շարժումը նոր թափ ու լայն ծավալ է ստանում։ Այս շրջանում ավելի են համախմբվում Անդրկովկասի բոլշևիկյան կազմակերպությունները, ամրապնդվում են նրանց ինտերնացիոնալ կապերը։ 1913 թվականին Մաքսիմ Գորկուն գրած նամակում Վ. Ի. Լենինն ասում է. «Մեզ մոտ և Կովկասում ս.-դ. վրացիները+հայերը+թաթարները+ռուսները աշխատում էին միասին տասը տարուց ավելի միասնական ս.-դ. կազմակերպության մեջ։ Այդ գրաղ չէ, այլ ազգային հարցի պրոլետարական լուծում։ Միակ լուծումը»[1]։

Անդրկովկասի բոլշևիկներն անհաշտ պայքար մղելով բուրժուական նացիոնալիզմի դեմ, երկրամասի տարբեր ազգության պատկանող աշխատավորներին համախմբում էին ինտերնացիոնալ դրոշի շուրջը, նրանց նախապատրաստում նոր գոտեմարտերի ցարիզմի և բուրժուազիայի դեմ։

1910—1914 թվականներին հեղափոխական շարժումներն ինչպես ամբողջ Ռուսաստանում, այնպես էլ Անդրկովկասում գնալով ավելի ու ավելի էին ծավալվում։ Արագ թափով հասունանում էր հեղափոխական սիտուացիան, մոտենում էր հեղափոխական նոր փոթորիկի բռնկման ժամը, բայց այդ տեղի չունեցավ, որովհետև բռնկվեց առաջին համաշխարհային պատերազմը։

[1] Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 35, էջ 79։

2. ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ 1912—1914 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

Արևմտահայերի ծանր դրությունը

Օսմանյան կայսրության մեջ մոլեգնող համիդյան ռեակցիան չափազանց ծանր ու անտանելի դրություն էր ստեղծել երկրի բոլոր ժողովուրդների, հատկապես հայերի համար։ Սուլթան Համիդը ձգտում էր հայերին կոտորելով լուծել հայկական հարցը. նա ոչ մի միջոցի առաջ կանգ չէր առնում իր դիվային ծրագիրն իրագործելու ճանապարհին։

Ստեղծված ծանր դրությունից դուրս գալու համար հայերը հերոսական ջանքեր էին գործադրում, ինքնապաշտպանական կռիվներ մղում, ազատագրության նոր ուղիներ որոնում։

1905—1907 թվականների հեղափոխությունն արթնացրեց նաև Թուրքիայի ու Իրանի ժողովուրդներին, նոր մղում տվեց նրանց հակաֆեոդալական, հակամիապետական պայքարին։ Թուրքիայում սկսված հակամիապետական, սահմանադրական շարժումը գլխավորում էին թուրքական բուրժուազիայի ներկայացուցիչները՝ երիտասարդ թուրքերը, նրանց «Միություն ու առաջադիմություն» (Իթթիհատ վե թերաքքը) կուսակցությունը։

Հեղափոխության ազդեցության տակ Թուրքիայի ընդդիմադիր ուժերը, անջատ գործողությունների փոխարեն, առաջ քաշեցին համատեղ գործողությունների ծրագիր։ 1907 թ. դեկտեմբերին Փարիզում երիտասարդ թուրքերը, դաշնակցականները, արաբական, հրեական (հետագայում նաև մակեդոնական) կոմիտեները և մի շարք թերթերի ներկայացուցիչներ համաձայնության եկան համատեղ պայքարելու սուլթան Համիդի միապետական ռեժիմի տապալման և սահմանադրական կարգերի հաստատման համար։

1908 թ. հուլիսին Թուրքիայում տեղի ունեցած հեղաշրջման հետևանքով տապալվում է միապետական ռեժիմը. երկրում հաստատվում են սահմանադրական կարգեր, իշխանության գլուխ են անցնում երիտասարդ թուրքերը։ Համիդյան ռեժիմի տապալումը վատարվեց Թուրքիայի ընդդիմադիր ուժերի համատեղ ջանքերով։ Դա մեծ խանդավառություն առաջ բերեց բոլոր ժողովուրդների, այդ թվում հայերի մեջ։ Բայց դա երկար չտևեց։ Իշխանության գլուխ անցած երիտասարդ թուրքերը շուտով հրաժարվեցին իրենց խոստումներից և սահմանադրության հռչակած ազգերի հավասարության սկզբունքներից։ Ինչպես ասել է արևմտահայ նշանավոր գրող Երվանդ Օտյանը՝ «ամեն բան խոսքով եղավ, գործով՝ ոչինչ»։

Երիտասարդ թուրքերի իշխանությունը չլուծեց ժողովրդին հուզող սոցիալական և ոչ մի հարց։ Հակառակ սահմանադրության հռչակած

սկզբունքներին, արևմտահայերը ձեռք չբերեցին կյանքի և գույքի ապահովություն։ Գյուղացիները, անցյալի պես, տառապում էին ֆեոդալական ճնշման, ուղղակի և անուղղակի հարկերի բեռի տակ։ Նրանցից մասսայաբար խլում էին հողերը և տալիս Բալկաններից գաղթած մահմեդականներին (մուհաջիրներ), հայերին հարկադրում էին թողնել ու հեռանալ իրենց հայրենի հողերից։

Երիտթուրքերը մոլի նացիոնալիստական, պանթուրքական քաղաքականություն էին վարում ազգային հարցում։ Նրանք երազում էին նվաճել Բոսֆորից մինչև Ալթայ մահմեդական բնակչություն ունեցող բոլոր երկրները, մեծ կայսրություն ստեղծել, ձուլել և ոչնչացնել իրենց ճանապարհին ընկած քրիստոնյա ժողովուրդներին։

Երիտթուրքերի քաղաքականությունը հայերի նկատմամբ շատ ավելի ռեակցիոն, բիրտ ու դաժան եղավ, քան սուլթան Համիդի ժամանակ։ Նրանք ամբարտավան ձևով հայտարարում էին, թե «Թուրքիայի մեջ մեկ ազգ կա՝ օսմանցի ազգը» և չէին ճանաչում հայերի, հույների, արաբների, քրդերի ու մյուս ժողովուրդների ազգային իրավունքները։

Երիտասարդ թուրքերի սոցիալական և ազգային ռեակցիոն քաղաքականությունը, նրանց սանձարձակ շովինիզմն ու ֆանատիզմը ծանր ու անելանելի կացության մեջ էր դրել արևմտահայությանը։

1909 թ. ապրիլին Ադանայում, Մարաշում և Հալեպում տեղի ունեցած հայկական կոտորածները, որին զոհ գնաց մոտ 30 հազար մարդ, ակնբախ ցույց տվեցին, որ երիտթուրքերի համար հոգեհարազատ է արյունարբու սուլթան Համիդի հայաջինջ քաղաքականությունը, պանիսլամիզմի ու պանթուրքիզմի ամենանողկալի ու հրեշավոր գաղափարը։

Խոսելով արևմտահայերի ծանր դրության մասին, Կ. Պոլսի ռուսական դեսպան Մ. Գիրսը 1912 թվականին գրում է. «Դրությունը Հայաստանում, իսկապես, այնքան ցավալի է, որքան հին ռեժիմի ժամանակ»։ Արևմտահայերի դրությանը լավատեղյակ Ա. Մանդելշտամն ասում է, որ երիտթուրքերի իշխանության օրոք «Հայաստանն ավելի անել կացության մեջ էր գտնվում»։ Ականատես լինելով արևմտահայերի տառապանքներին, 1913 թվականին Երվանդ Օտյանը զայրույթով գրում է. «Հայերը կջարդվին, հայերը կկողոպտվին, հայ կիները կառևանգվին, հայերուն հողերը կհափշտակվին»։

Այսպիսին էր արևմտահայերի վիճակը առաջին համաշխարհային պատերազմի նախօրեին, երիտթուրքերի իշխանության ժամանակ, երբ վերստին առաջ քաշվեց հայկական ռեֆորմների հարցը։

Հայկական հարցի վերաբացումը

Սուլթան Աբդուլ Համիդի միապետական ռեժիմի տապալումը և սահմանադրության հռչակումը Թուրքիայում էական փոփոխություն չմտցրեց արևմտահայերի դրության մեջ։ Իշխանության գլուխ անցած երիտթուրքերը ավելի դաժան, ավելի նենգ ու խարդախ գտնվեցին, քան սուլթան Համիդը։ Նրանք արտաքուստ սիրաշահում էին հայերին, հատկապես դաշնակցականներին, որոնց հետ «եղբայրացել» էին Համիդի դեմ մղվող պայքարում, բայց ներքուստ գերեզման էին փորում նրանց համար։

Իթթիհատականների իշխանության մի քանի տարիների դառն փորձը ցույց տվեց, որ նրանք ոչ միայն չեն ցանկանում բավարարել հայերի արդարացի պահանջները, այլև ահավոր դավեր են լարում նրանց բնաջնջելու համար։ Հայ հասարակական-քաղաքական հեռատես գործիչներից շատերը նախազգուշացնում էին սպասվող վտանգի մասին, բայց դաշնակցության կարճամիտ ղեկավարները անտեսում էին այդ և շարունակում գործակցել դիմակ հագած բորենիներ Թալեաթի, Ջեմալի, Էնվերի, Նազիմի ու մյուսների հետ։

1911 թվականի թուրք-իտալական և 1912 թվականի թուրք-բալկանյան պատերազմները նոր հույսեր արթնացրին հայերի մեջ։ Հաշվի առնելով ստեղծված ներքին և միջազգային նպաստավոր իրադրությունը, հայերը նորից բարձրացրին Բեռլինի կոնգրեսի 61-րդ հոդվածի կենսագործման հարցը։ Հայ հասարակական կազմակերպությունները, մամուլը եռանդուն պայքար ծավալեցին այդ հարցի լուծման համար։ Ժամանակի տարածված թերթերից մեկը՝ «Մշակ»-ը, 1912 թ. սեպտեմբերի 13-ի «Մեծ աղետի առաջ» առաջնորդողում գրում է. «Սպասել թուրքաց կառավարությունից որևէ իրական ռեֆորմ, որևէ իրական դեղ ու դարման հայերի համար՝ անմտություն է և ժամանակի կորուստ... Միակ ելքը, միակ փրկությունը Թուրքահայաստանի համար այն միջոցն է, որ մեծ պետությունները կամենում են գործադրել մակեդոնական, ալբանական հարցերի լուծման համար, այն է՝ տալ Մակեդոնիային, Ալբանիային ավտոնոմիա։ Նույնը պետք է գործադրվի և Հայաստանի վերաբերմամբ»։

1912 թ. սեպտեմբերին Թիֆլիսում, Բաքվում, Երևանում, Ալեքսանդրապոլում և այլ վայրերում ժողովներ են գումարվում և որոշումներ կայացվում մեծ պետությունների օգնությանը դիմելու համար։ Կաթողիկոսի անունով բազմաթիվ դիմումներ են ստացվում Եգիպտոսի, Իրանի, Հնդկաստանի, Ամերիկայի, Բուլղարիայի, Ռումինիայի և այլ գաղթօջախների հայերից։ Հայաստանի և սփյուռքի հայերը կաթողիկոսի հետ էին կապում իրենց հույսերը, նրան համարում հայկական դատի ղեկավար։

1912 թ. հոկտեմբերի 2-ին Գևորգ V կաթողիկոսը, Կովկասի փոխարքա Վորոնցով-Դաշկովի միջոցով, պաշտոնապես դիմում է ռուսաց թագավորին՝ հայկական հարցին ընթացք տալու համար։ Նոյեմբերի 10-ին նա հատուկ կոնդակով եգիպտահայ մեծահարուստ Պողոս Նուբար փաշային լիազորում է հայկական դատը պաշտպանել արևմտաեվրոպական մեծ պետությունների մոտ։ Կ. Պոլսի Ազգային ժողովը 1912 թ. դեկտեմբերի 21-ի դռնփակ նիստում որոշում է դիմել մեծ պետությունների օգնությանը և պատրիարքարանի հետ միասին մշակում են իրենց պահանջները։

Այսպիսով, արևմտահայերի ու արևելահայերի համատեղ ջանքերով, 1912 թվականի աշնանը հայկական հարցը նորից դրվում է մեծ պետությունների առաջ։ Ռուսաստանը, ինչպես 1878 թվականին, ելնելով իր տնտեսական-քաղաքական շահերից, հանդես է գալիս նախաձեռնողի ու պաշտպանի դերում։ Պոլսի ռուսական դեսպանատան գլխավոր թարգման Ա. Մանդելշտամին հանձնարարվում է կազմել հայկական ռեֆորմների նախագիծ։ Օգտվելով պատրիարքարանի ներկայացրած նյութերից և հայկական ռեֆորմների նախորդ ծրագրերից, Ա. Մանդելշտամը հմտորեն մշակում է 1913 թ. հունիսի 8-ի նախագիծը։

Հունիսի 8-ի նախագծով հայկական 6 վիլայեթներից (Երզրում, Վան, Բիթլիս, Դիարբեքիր, Խարբերդ, Սվազ) կազմվելու էր մի նահանգ։ Հայկական նահանգը կամ մարզը բաժանվելու էր սանջակների (գավառ), կազաների (շրջան) և նահիյեների (գյուղ, համայնք)։ Նահանգապետը պետք է լիներ քրիստոնյա, թուրքահպատակ կամ եվրոպացի, որը նշանակվելու էր 5 տարով, սուլթանի կողմից, մեծ պետությունների համաձայնությամբ։

Հայկական մարզի ամբողջ գործադիր իշխանությունը պատկանելու էր նահանգապետին։ Նա պետք է նշանակեր և արձակեր բոլոր պաշտոնյաներին, այդ թվում և դատավորներին։ Ոստիկանությունը և ժանդարմերիան ենթարկվելու էին նահանգապետին. հարկ եղած դեպքում զորքը ևս պետք է դրվեր նրա տրամադրության տակ։ Նահանգապետի մոտ, որպես խորհրդակցական օրգան, գործելու էր Վարչական խորհուրդը։ Նահանգային ժողովը կազմվելու էր քրիստոնյաներից ու մահմեդականներից, 5 տարին մեկ, գաղտնի քվեարկությամբ։ Նահանգային ժողովի ընդունած օրենքները հաստատվելու էին սուլթանի կողմից։

Նահանգի պաշտոնյաները և դատավորները նշանակվելու էին հավասար թվով մահմեդականներից և քրիստոնյաներից։ Օրենքները, որոշումներն ու կարգադրությունները պետք է լինեին երեք գլխավոր լեզուներով՝ հայերեն, թուրքերեն և քրդերեն։ Յուրաքանչյուր ազգություն կարող էր ունենալ իր ազգային դպրոցը՝ մայրենի լեզվով։

Բացի այս, նախատեսվում էր վերացնել քրդական զինված հեծելազորը (համիդիեն), ապահովել 1863 թվականի Ազգային սահմանադրությամբ հայերին տրված իրավունքները, վերադարձնել հայերից խլված հողերը կամ վճարել նրանց արժեքը, արգելել Բալկաններից գաղթած մահմեդականներին Արևմտյան Հայաստանում բնակեցնելը և այլն։

Հունիսի 8-ի նախագծում, ինչպես տեսնում ենք, ոչ մի խոսք չկա Արևմտյան Հայաստանի անջատման և հայկական անկախ պետություն ստեղծելու մասին, ինչպես այդ բարբաջում են Ջեմալ փաշան և հայ ժողովրդի մյուս դահիճները իրենց արդարացնելու համար։ Համենայն դեպս, ցարական Ռուսաստանը չէ, որ արևմտահայերին պետք է անկախություն տար, երբ մոտ 100 տարի նրա տիրապետության տակ գտնվող արևելահայերը զուրկ էին պետական անկախությունից։ Արևմտահայերը ձգտում էին ազատագրվել թուրքական և քրդական հարստահարիչների բիրտ ու դաժան ճնշումներից, նրանց կուլ գնալու վտանգից։ Նրանք պայքարում էին մարդկային տարրական իրավունքների, իրենց գոյության պահպանման համար։

Մեծ տերությունների դիրքը հայկական հարցում

Հայկական վեց վիլայեթներում անցկացվելիք ռեֆորմների ռուսական նախագիծը, որպեսզի գործադրվեր, պետք է հավանություն ստանար մեծ տերությունների կողմից։ Եվ երբ այդ նախագիծը քննարկման դրվեց Կ. Պոլսի դեսպանաժողովում, ամբողջապես երևան եկան միջազգային դիվանագիտության նենգ խաղերն ու խարդախությունները։

Թուրքական կառավարությունը կատաղի դիմադրություն ցույց տվեց ռուսական նախագծին և առհասարակ լսել անգամ չէր ուզում հայկական ռեֆորմների մասին։ Թուրքերին ոգեշնչում էին գերմանական իմպերիալիստները, որոնք ձգտում էին գաղութացնել Թուրքիան և ամբողջ Մերձավոր արևելքը, այդ երկրներից դուրս մղել իրենց մրցակիցներին։

Գերմանիան ու նրա դաշնակիցներ Ավստրո-Հունգարիան և Իտալիան նույնպես թշնամական դիրք բռնեցին հայկական ռեֆորմների նկատմամբ։ Գերմանիան աշխատում էր թույլ չտալ, որ Ռուսաստանի, ինչպես և Անգլիայի ու Ֆրանսիայի դիրքերն ուժեղանան Մերձավոր արևելքում, որպեսզի անկաշկանդ իրագործի «Drang nach Osten» իր նվաճողական քաղաքականությունը, հեգեմոն դիրք ձեռք բերի Արևելքում։ Կայզերական Գերմանիան խրախուսում էր պանթուրքիստների ագրեսիվ ծրագրերը, նրանց հրահրում Ռուսաստանի և հայերի դեմ։ Գերմանիան չէր ցանկանում, որ արևմտահայերն ազատագրվեն թուրքական լծից, վախենում էր, որ նրանք միանան արևելահայերի հետ, ընկնեն Ռուսաստանի ազդեցության տակ։ Գերմանացի արևելագետ Պաուլ Ռոհր-

բախը դեռևս պատերազմից առաջ գրում էր, թե Հայաստանը պետք է մնա Թուրքիայի իշխանության տակ։ Ռազմական գործը կազմակերպելու համար Թուրքիա գործուղված գնդապետ Ֆոն դեր Հոլցը, որին Թուրքերն անվանում էին Հոլց փաշա, խորհուրդ էր տալիս ոչնչացնել բոլոր կենտրոնախույս տարրերին ու արևմուտքում կորցրած հողերի փոխարեն ընդարձակվել արևելքում։ Պանգերմանիզմի մի այլ ներկայացուցիչ՝ Կարլ Ռոտը գրում էր. «Հայկական հարցը այսուհետև պետք է դադարի ռուսական հարց լինելուց։ Նա այսօր պետք է լինի և մնա որպես գերմանական հարց, եթե Գերմանիան կամենում է, որ Բաղդադի գծի երկարությամբ իր մեծ շահերը, իր տնտեսական էքսպանսիան վտանգի տակ չդրվեն»։ Նկատի ունենալով Հայաստանի ռազմա-ստրատեգիական և տնտեսական կարևոր նշանակությունը, նա ասում էր, որ «Ռուսաստանն այստեղ պետք է իր տեղը զիջի մեզ»։

Այսպիսով, հայկական հարցի նկատմամբ, ինչպես Բեռլինի կոնգրեսում Անգլիան, այս անգամ էլ Գերմանիան թշնամական դիրք բռնեց։ Աննախընթաց կերպով սրվեցին ռուս-գերմանական հակամարտությունները։

1913 թ. հուլիսի 3—24-ը Կ. Պոլսի ավստրիական դեսպանատանը մեծ տերությունների լիազոր-ներկայացուցիչները քննարկում են հայկական հարցը։ Ռուսական ներկայացուցիչ Մանդելշտամը բազմաթիվ ու բազմապիսի փաստերով հիմնավորում ու պաշտպանում էր իր կազմած նախագիծը։ Դրան հակառակ գերմանական դեսպանի լիազոր Շոնբերգը ամեն կերպ աշխատում էր տապալել ռուսական նախագիծը։

Ռուսական նախագիծը տապալելու համար գերմանացիների խորհրդով Թուրքերն առաջ քաշեցին հապճեպ կազմված իրենց նախագիծը։ Թուրքական նախագծի համաձայն Արևմտյան Հայաստանը պետք է բաժանվեր երկու նահանգի։ Նահանգների կառավարիչները պետք է նշանակվեին սուլթանի կողմից, առանց մեծ տերությունների համաձայնության, վարչական կառուցվածքը և պաշտոնյաները մնալու էին անփոփոխ, հայերի դրության մեջ էական փոփոխություն չէր կատարվելու։

Թուրքական կառավարությունը Կ. Պոլսի հայ «երևելիների» միջոցով փորձեց իր նախագիծը փաթաթել հայերի վզին, բայց Ազգային վարչությունը և պատրիարքարանը մերժեցին այդ։

Անգլիայի ու Ֆրանսիայի ներկայացուցիչների երկդիմի քաղաքականությունն իր հերթին չնպաստեց ռուսական ծրագրի հաղթանակին։ Անգլիան և Ֆրանսիան առերես պաշտպանում էին Ռուսաստանին, բայց իրականում չէին ցանկանում, որ նրա ազդեցությունն ուժեղանա Թուրքիայում։

Գերմանիայի ու Թուրքիայի թշնամական դիրքը մի կողմից, Անգլիայի ու Ֆրանսիայի երկդիմի քաղաքականությունը մյուս կողմից, այս անգամ ևս փակուղու առաջ կանգնեցրին հայկական հարցը։

Ռուսական ներկայացուցիչները, հարկ եղած պաշտպանություն չգտնելով Անգլիայի և Ֆրանսիայի կողմից, հարկադրված եղան կոմպրոմիս կնքել Գերմանիայի հետ և էական զիջումներ կատարել։ Ռուսական և Թուրքական նախագծերի հիման վրա կազմվեց ռեֆորմների նոր նախագիծ։ Ռուսական և գերմանական դեսպանները, երկար բանակցություններից հետո, 1913 թ. հոկտեմբերին համաձայնության եկան և այդ նախագիծը ներկայացրին Թուրքական կառավարությանը։ Սակայն Գերմանիայի Թուրքական դեսպան Վանգենհայմը չհապաղեց հայտնելու, որ Թուրքիայի դեմ չպետք է հարկադրական միջոցներ կիրառել և պետք է առաջարկել միայն այնպիսի ռեֆորմներ, որ նա կամավոր կերպով ընդունի։

Գերմանական դեսպանի այդօրինակ դիրքը թեավորում էր Թուրքերին և պատահական չէ, որ նրանք հանդես եկան ռեֆորմի նախագծի բոլոր քիչ թե շատ էական կետերի դեմ։ Երկար բանակցություններից և դիվանագիտական համառ պայքարից հետո Թուրքիայի ռուսական դեսպան Գիրսին հաջողվեց, որոշ զիջումներ կատարելով, համաձայնության գալ Թուրքական կառավարության հետ։ 1914 թ. հունվարի 26-ին (նոր տոմարով փետրվարի 8-ին) կնքվեց ռուս-Թուրքական համաձայնագիրը՝ Արևմտյան Հայաստանի ռեֆորմների վերաբերյալ։

1914 թ. հունվարի 26-ի ռուս-թուրքական համաձայնագիրը

1914 թ. հունվարի 26-ի համաձայնագրով Արևմտյան Հայաստանը բաժանվելու էր երկու նահանգի կամ երկու սեկտորի։ Մի սեկտորի մեջ մտնելու էին Էրզրումի, Տրապիզոնի և Սվազի վիլայեթները, իսկ մյուս սեկտորի մեջ՝ Վանի, Բիթլիսի, Խարբերդի և Դիարբեքիրի։

Սեկտորների կառավարիչներ եվրոպացիներից առաջադրելու էին մեծ պետությունները, հաստատելու էր սուլթանը։ Նրանց էր պատկանելու տվյալ սեկտորի վարչական, դատական ու ոստիկանական իշխանությունը։

Օրենքները, հրամանները, դատաստանական և վարչական հիմնարկների գործերը, դասավանդումը դպրոցներում տարվելու էին մայրենի լեզվով։ Զինվորական ծառայությունը պարտադիր էր բոլորի համար։ Համիդիե գնդերը վերածվելու էին պահեստի հեծելազորքի։ Վիլայեթների վարչական խորհուրդները կազմվելու էին հավասար թվով մահմեդականներից ու քրիստոնյաներից. այդ սկզբունքը պետք է գործադրվեր երկու սեկտորների ոստիկանության, ժանդարմերիայի և հա-

սարակական մյուս պաշտոնների բաշխման ժամանակ, եթե ընդհանուր տեսուչները համաձայն լինեին և այլն։

Հունվարի 26-ին համաձայնագիրը շատ ավելի չափավոր ու սահմանափակ բնույթ ուներ, քան հունիսի 8-ի նախագիծը։ Այստեղ չկար և ոչ մի ռեալ երաշխիք արևմտահայերի կյանքի ու գույքի ապահովության վերաբերյալ։ Հայերի համար կատարյալ չարիք հանդիսացող համիդիե զորամասերը, հակառակ հունիսի 8-ի նախագծի, փաստորեն պահպանվում էին, հայերից բռնագրավված հողերը վերադարձնելու և մի շարք այլ կարևոր հոդվածներ դուրս էին նետվել։

Թուրքիայի մեծ վեզիր Սայիդ-Հալիմ փաշայի հետ ստորագրելով ռուս-թուրքական համաձայնագիրը, Գուլկևիչը արտաքին գործերի մինիստր Սազոնովին գրում էր. «Դիմելով հունվարի 26-ի ակտի գնահատության, պետք է, իհարկե, խոստովանել, որ նա հայերին չի տալիս ինքնավարական այն ընդարձակ իրավունքները, որ նրանց համար պետք է ապահովեր ռուսական ծրագիրը»։ Բայց և այնպես, ասում է նա, «Հունվարի 26-ի ակտը անկասկած մատնանշում է նոր, ավելի բախտավոր մի շրջանի սկիզբ հայ ժողովրդի պատմության մեջ... Հայերը չեն կարող չգիտակցել, որ այժմ արվում է առաջին քայլը՝ նրանց թուրքական լծից ազատագրելու համար»։

Ցարական դիվանագետը, անտարակույս, շատ էր գունազարդում հունվարի 26-ի անորոշ ու անգույն համաձայնագիրը։ Այդ և նման հահաձայնագրերը չէ, որ պետք է հայ ժողովրդին ազատագրեին թուրքական բռնակալության լծից և բախտավոր շրջան բացեին նրա պատմության մեջ։ Չնայած դրան, հայ հասարակական գործիչներից շատերը, հայ պարբերական ցամուլը նույնպես, մեծ հույսեր էին կապում այդ համաձայնագրի հետ։ «Մշակ» թերթը հույս էր հայտնում, թե «1914 թվին Թուրքիայի բազմաչարչար հայ ժողովուրդը կտեսնի իր ազատագրությունը»։ Էջմիածնի «Արարատ»-ը գրում էր, թե «հայկական հարցը գտնվում է իր լուծման նախօրյակին»։ Ազգային պատվիրակության նախագահ, դիվանագետի համբավ ունեցող Պողոս Նուբար փաշան 1914 թ. հունվարի 29-ին կաթողիկոսին հեռագրում էր, թե «Ռուսաց կայսեր բարեխնամ կառավարության եռանդուն գործունեության շնորհիվ Ասիական Թուրքիայի մեր եղբայրները այսուհետև հնարավորություն կունենան ապրելու արդար և ապահով վարչության ներքո»։

Որքան էլ անշրջահայաց ու անհեռատես լինեին այս և նման դատողությունները, այնուամենայնիվ, չի կարելի դրանց մոտենալ ժամանակից ու տարածությունից դուրս։ Չպետք է մոռանալ, որ Օսմանյան Թուրքիայի անագորույն լծի տակ հեծող ժողովուրդը հարկադրված, ճարահատյալ էր դիմում դրսի օգնության։ Նա ամեն ճիգ ու ջանք գործադրում

էր, բալկանյան ժողովուրդների նման, Օսմանյան կայսրության յաթաղանից փրկվելու համար։ 1912—1914 թվականներին հայկական հարցի վերաբացումը, մեծ տերությունների և հատկապես Ռուսաստանի օգնությանը դիմելը, հենց այդպիսի իրադրության հետևանք էր։ Կամա թե ակամա նա ընկել էր մեծ տերությունների հակամարտ ուժերի մի այնպիսի ահավոր ցանցի մեջ, որտեղից դուրս գալը և ինքնուրույն կողմնորոշվելը շատ դժվար էր։

1914 թ. հունվարի 26-ի համաձայնագիրը չէր բավարարում հայերի պահանջները, չէր լուծում նրանց հուզող հարցերը։ Բայց, իր ժամանակի պատմական պայմաններում, դա այնուամենայնիվ նրանց համար նպաստավոր մի քայլ էր, եթե, իհարկե, կենսագործվեր։

Թուրքիան միջազգային պայմանագրերը չկատարելու մեծ փորձ ուներ։ Սուլթան Համիդը 30 տարի շարունակ չտեսնված որոգայթներ լարեց Բեռլինի կոնգրեսի 61-րդ հոդվածի դեմ և չկենսագործեց այն։ Երիտթուրքերը չկարողանալով տապալել հայկական ռեֆորմների նախագիծը, հարկադրված ստորագրեցին, բայց ամեն ջանք գործադրեցին, սուլթան Համիդի նման, թղթի վրա պահելու համար։ Ջեմալ փաշան գրում է. «Մենք ցանկանում էինք վերացնել հայկական ռեֆորմների վերաբերյալ այն «համաձայնությունը», որը ընդունել էինք լոկ Ռուսաստանի ճնշման տակ»։ Նա հայերին խորհուրդ է տալիս թողնել այն երազները, թե «Էրզրումի, Բիթլիսի, Վանի, Դիարբեքիրի և Խարբերդի վիլայեթները երբևիցե կարող են Հայաստանի մաս կազմել»։

Թուրքական կառավարությունը այդպես էլ մատը մատին չխփեց իր իսկ ստորագրած համաձայնագիրն իրագործելու համար։ Ռուսական դիվանագիտության գործադրած ջանքերը նույնպես ապարդյուն անցան։ Երիտթուրքերի կառավարության պարագլուխները, ինչպես ֆրանսիացի գիտնական Վիկտոր Բերարն է ասել, այդ «պաշտոնական ավազակները» մտածում էին ոչ թե հայկական ռեֆորմների, այլ հայկական ջարդերի իրենց դիվային ծրագրի իրագործման մասին։

1914 թվականի ամռանը եվրոպացի կառավարիչները՝ հոլանդացի Վեստենենկը և նորվեգացի Հոֆը եկան Հայաստան։ Վեստենենկը նշանակված էր Էրզրումի, Տրապիզոնի և Սվազի սեկտորի կառավարիչ, Հոֆը՝ Վանի, Բիթլիսի, Խարբերդի և Դիարբեքիրի։ Վանում հայերը խանդավառությամբ են ընդունում Հոֆին, իսկ թուրքերը՝ շատ սառն։ Եվրոպացի կառավարիչները դեռ նոր էին անցել իրենց պարտականությունների կատարմանը, երբ սկսվեց առաջին համաշխարհային պատերազմը և հայկական ռեֆորմների ծրագիրը նորից մնաց թղթի վրա, հայ ժողովուրդը կանգնեց օրհասական վտանգի առաջ։

XVIII ԳԼՈՒԽ

ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ ԱՌԱՋԻՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ

1. ՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿՈՎԿԱՍՅԱՆ ՌԱԶՄԱՃԱԿԱՏՈՒՄ

Պատերազմի սկիզբը

1914 թվականի հուլիսի 19-ին (օգոստոսի 1-ին) բռնկվում է առաջին համաշխարհային պատերազմը։ Իր բնույթով դա անարդարացի, իմպերիալիստական պատերազմ էր, որը Գերմանիան, Անգլիան, Ֆրանսիան, Ռուսաստանը, Ամերիկան և նրանց դաշնակիցները մղում էին աշխարհի վերաբաժանման, գաղութային թալանի, ժողովուրդների ստրկացման ու կեղեքման համար։

Առաջին համաշխարհային պատերազմի սանձազերծման գլխավոր հանցագործը կայզերական Գերմանիան էր, իմպերիալիստական բոլոր պետություններից ամենից ագրեսիվը։ Իմպերիալիստական, զավթողական նպատակներ էին հետապնդում նաև Անգլիան, Ամերիկան, Ֆրանսիան, ցարական Ռուսաստանը, Ճապոնիան, Թուրքիան և այլ երկրներ։ Պատերազմը նյութական և մարդկային մեծ կորուստներ պատճառեց բազմաթիվ երկրների ու ժողովուրդների։ Ավելի քան 10 միլիոն մարդ սպանվեց և 20 միլիոն վիրավորվեց։ Դա մոտ երեք անգամ գերազանցում էր նախորդ երկու հարյուր տարիների ընթացքում տեղի ունեցած բոլոր պատերազմների կորուստներին։

1914 թ. հոկտեմբերի 20-ին ցարական կառավարությունը հատուկ հրովարտակով պատերազմ հայտարարեց Թուրքիային, երբ գերմանական «Գեբեն» և «Բրեսլաու» ռազմանավերը, թուրքական կառավարության համաձայնությամբ, նեղուցներով մտան Սև ծով և անակնկալ կերպով սկսեցին ռմբակոծել Օդեսան, Սևաստոպոլը, Թեոդոսիան և Նովորոսիյսկը։

Թուրքական կառավարությունը, դաշնակցելով գերմանական իմպերիալիստների հետ, մշակել էր պանթուրքիզմի գաղափարներից բխող և հեռուները տանող խիստ ագրեսիվ ռազմաստրատեգիական պլան։ Գերմանական գլխավոր շտաբի դիրեկտիվներով, Լիման ֆոն Սանդերսի ռազմական միսիայի անմիջական մասնակցությամբ, թուրքերը ծրագրել էին ներխուժել Անդրկովկաս, գրավել Բաքուն, Ռուսաստանին զրկել Բաքվի նավթից, ամբողջ Կովկասը կտրել Ռուսաստանից։

Ցարական Ռուսաստանը նույնպես իմպերիալիստական քաղաքա-

կանություն էր վարում և ձգտում էր գրավել նեղուցները, Գալիցիան, Արևմտյան Հայաստանը։ Բայց, քանի դեռ նա զբաղված էր Գերմանիայի դեմ պատերազմելով, չէր ցանկանում միաժամանակ պատերազմ սկսել Թուրքիայի դեմ, նոր ռազմաճակատ ստեղծել Կովկասում։ Ստացվեց այնպես, որ պատերազմական գործողությունները սկսեցին և Կովկասյան ռազմաճակատը բացեցին թուրքերը ու նրանց թիկունքում կանգնած գերմանացիները։

Պատերազմի նախօրյակին թուրքերը մեծ քանակությամբ (մոտ 300 հազար մարդ) զորք էին կենտրոնացրել Կովկասյան ռազմաճակատում՝ սրընթաց արշավանքով Երևանը, Թիֆլիսը, Բաքուն գրավելու համար։ Թուրքական զորքերի ընդհանուր հրամանատարությունն իր վրա էր վերցրել ռազմական գործերի մինիստր Էնվեր փաշան։

Կովկասյան ռազմաճակատում կենտրոնացված ռուսական զորքերը (մոտ 200 հազար) նույնպես մշակել էին հարձակողական գործողությունների պլան, որը պետք է իրագործվեր հիմնականում Կարս—Արդահան—Սարիղամիշ ուղղություններով։

1914 թվականի հոկտեմբերի կեսերին թուրքական զորքերը ուժգին կերպով հարձակվում են Կարսի, Սարիղամիշի, Արդվինի և Բաթումի վրա, կոտորում ու կողոպտում սահմանամերձ շրջանների բնակիչներին։ Արդվինում և Արտանուշում թուրքական զորքերը սրի են քաշում հայ բնակչության մեծ մասին, կողոպտում ու ամայացնում բոլոր գյուղերը։ Թուրքական զորքերը միաժամանակ ներխուժում են Պարսկաստան՝ Բաքվի վրա արշավելու նպատակով։ Թուրքական կառավարությունը «սրբազան պատերազմ» (ջիհաթ) է հայտարարում Ռուսաստանի դեմ։ Նա կոչ է անում բոլոր մահմեդականներին ոտքի ելնել, ապստամբել Ռուսաստանի դեմ, մահմեդական դրոշը ծածանել կովկասյան լեռների վրա, Կովկասն աղատել գյավուրներից (անհավատներից), «Կովկասը՝ Կովկասի մահմեդականներին»։

Այսպիսով, բացվում է համաշխարհային պատերազմի մի նոր ռազմաճակատ՝ Կովկասյան ռազմաճակատը, որը ձգվում էր Սև ծովից մինչև Ուրմիո լիճը։

Սարիղամիշի ճակատամարտը

Կովկասյան ռազմաճակատի պատերազմական գործողությունները հիմնականում տեղի են ունենում Հայաստանում։ Էնվեր փաշան և նրա շտաբի պետ գերմանական գեներալ ֆոն Շելենդորֆը իրենց գլխավոր ուժերը կենտրոնացնում և ընդհանուր հարձակում են սկսում Սարիղամիշի ուղղությամբ՝ նպատակ ունենալով պաշարել և ջախջախել ռուսական զորքերին։ 1914 թ. դեկտեմբերի 9-ից մինչև 1915 թ. հունվարի 5-ը Սարիղամիշի մոտ տեղի են ունենում առաջին վճռական մարտերը։ Ձմռան դաժան

ցրտերի ու սառնամանիքների պայմաններում երկու կողմերն էլ մարտնչում էին չտեսնված համառությամբ։ Թուրքերը, հույս դրած իրենց թվական գերակշռության վրա, ամեն կերպ ձգտում էին հասնել հաղթանակի։ Էնվեր փաշան Սարիղամիշի ճակատամարտի հաղթանակի հետ էր կապում Կովկասի գրավման իր ավանտյուրիստական պլանների իրագործումը։ Բայց նրա տկսած հարձակումը անփառունակ վախճան ունեցավ։

Ռուսական քաջարի զինվորները Օլթիի, Բարդուսի և Սարիղամիշի մոտ ջախջախիչ հարվածներ հասցրեցին թուրքական զորքերին։ Թուրքական 3-րդ բանակի 9-րդ հարվածային կորպուսը գրեթե գլխովին ջախջախվեց, 10—11-րդ կորպուսները արյունաքամ արվեցին։ Կասեցվեց թուրքերի հարձակումը։ Դեկտեմբերի 22-ից ռուսական զորքերը հակահարձակման անցան։ Գոռոզամիտ Էնվեր փաշան իր ջարդված ու բարոյալքված բանակի խղճուկ մնացորդների հետ բռնեց փախուստի ճանապարհը՝ հազիվ փրկվելով գերի ընկնելուց։

Թուրքական 3-րդ բանակը Սարիղամիշի մոտ գտավ իր գերեզմանը։ 90 հազար հոգուց թուրքերը կորցրին 70 հազար, որից 30 հազարը՝ ցրտահարված։ Ռուսները կորցրին 20 հազար, որից 6 հազարը՝ ցրտահարված։

Սարիղամիշի ճակատամարտում ռուսական զորքերի տարած փայլուն հաղթանակը վճռական նշանակություն ունեցավ ամբողջ Կովկասյան ռազմաճակատի պատերազմական գործողությունների հետագա ընթացքի համար։ Թուրքական զորքերը, բացի Աջարիայի աննշան մասից, դուրս մղվեցին Կովկասի սահմաններից։ Անդրկովկասի ժողովուրդները փրկվեցին թուրքական զորքերի ներխուժման, մասսայական կոտորածի և կողոպուտի վտանգից։ Ձախողվեց Կովկասը գրավելու գերմանա-թուրքական զավթիչների ագրեսիվ պլանը։

Սարիղամիշի օպերացիան նպաստեց նաև դաշնակիցների գործողությունների ակտիվացմանը Իրաքում և Սուեզի շրջանում։ Անգլիացիները վախենալով, որ ռուսական զորքերը կմտնեն Կ. Պոլիս, 1915 թ. փետրվարին սկսեցին Դարդանելի օպերացիան։ Պարսկաստանը և Աֆղանստանը ավելի աշալուրջ դիրք բռնեցին իրենց պատերազմի մեջ ներքաշելու թուրք-գերմանական պրովոկացիաների նկատմամբ։

Պատերազմական գործողությունները Հայաստանում 1915—1916 թվականներին

Գոտեպնդված Սարիղամիշի ճակատամարտում տարած խոշոր հաղթանակով, ռուսական զորքերը 1915 թվականի գարնանը մի քանի ուղղությամբ հարձակման անցան թուրքերի դեմ։ Ձախ թևում գործող գեներալ Օգանովսկու 4-րդ կորպուսի զորամասերը փետրվարին գրավում են Թավրիզը և Դիլմանը, ետ մղում Պարսկաստան մտած թուրքական զորքերին։ Այնուհետև նրանք,

Անդրանիկի կամավորական խմբի հետ միասին, հաղթական կռիվներ մղելով Խալիլ փաշայի զորքերի դեմ, գրավում են Մանազկերտը, Բաշկալան, Շատախը, Ղոթուրը, Արճեշը, իսկ մայիսի 6-ին՝ Վանը։

Կովկասյան 4-րդ կորպուսի առաջխաղացումը կասեցնելու համար 1915 թ. հուլիսի սկզբներին թուրքերը մեծ ուժով (89 գումարտակ), Աբդուլ-Քերիմ փաշայի հրամանատարությամբ, հակահարձակման են անցնում և հարկադրում ռուսներին թողնել Վանը, Արճեշը և մյուս վայրերը ու նահանջել դեպի Ալաշկերտ։ Ռուսական զորքերի այս նահանջը ծանր հետևանքներ ունեցավ արևմտահայերի համար։

Թուրքերի առաջխաղացումը դեպի Ալաշկերտ ձախողելու համար կենտրոնական ռազմաճակատում էրզրումի ուղղությամբ գործող զորքերը հարձակման են անցնում։ 4-րդ կորպուսը համալրում ստանալով, հուլիսի 23-ին հակահարձակման է անցնում և վերստին գրավում իր թողած վայրերը։ Թուրքերը նահանջում են Մուշի և Բիթլիսի ուղղությամբ։

Անհրաժեշտ նախապատրաստությունից հետո, 1915 թ. դեկտեմբերի վերջերին և 1916 թ. հունվարի սկզբներին, 40 աստիճան սառնամանիքին, ռուսական զորքերն ամբողջ ճակատով հարձակման են անցնում։ Թուրքերը չդիմանալով ռուսների հարվածներին, նահանջում են դեպի Էրզրում։ Քյոփրիքյոյի մոտ նրանք փորձում են փանգնեցնել ռուսների առաջխաղացումը, բայց չի հաջողվում։ Կորցնելով մի քանի հազար մարդ, 12 հրանոթ, մեծ քանակությամբ ռազմամթերք, նրանք խուճապահար փախչում են Էրզրում։ Ամբողջ ճանապարհը ծածկված էր թուրքական սառած զինվորների դիակներով։

Հետապնդելով թուրքական զորքերին, ռուսները հասնում են Էրզրում, պաշարում այն և հունվարի 29-ի գիշերը սկսում գրոհը։ Էրզրումը պաշտպանում էր թուրքական 100 հազար զինվոր։ Թուրքական և գերմանական հրամանատարությունը համոզված էր, որ ռուսներին երբեք չի հաջողվի գրավել Էրզրումի նշանավոր ամրոցը։ Բայց նրանց հույսերը հօդս ցնդեցին։ Ռուսական զորքերը հինգ օրվա համառ մարտերից հետո, փետրվարի 3-ին (16-ին), գրավեցին Էրզրումը։ Թուրքերը կորցրին ավելի քան 60 հազար մարդ, իսկ ռուսները՝ 17 հազար։

Էրզրումի գրավումը ռազմա-ստրատեգիական խոշոր նշանակություն ուներ։ Դրանով ռուսական զորքերը տիրապետող դիրք էին ձեռք բերում Արևմտյան Հայաստանում, իսկ թուրքերը կորցնում էին իրենց գլխավոր բազան։

Էրզրումը կորցնելուց հետո թուրքերն արագորեն Միջագետքից, Սիրիայից և նեղուցների գոտուց իրենց զորքերի մի զգալի մասը և ռեզերվները փոխադրեցին Կովկասյան ռազմաճակատ։ 1916 թ. գարնանն

այստեղ կենտրոնացվեց շուրջ 250 հազար մարդ և մեծ քանակությամբ ռազմամթերք։ 1916 թվականի հուլիսին թուրքական 2-րդ և համալրված 3-րդ բանակները հարձակման անցան Էրզրումը և մյուս վայրերը գրավելու համար։ Սկզբում թուրքերը մասնակի հաջողություններ ունեցան, ճեղքեցին ռուսական զորքերի մի քանի թույլ օղակները և զգալի կորուստներ պատճառեցին նրանց։ Բայց այդ երկար չտևեց։

Ռուսական զորքերը ծանր հարվածներ են հասցնում հակառակորդին։ Թուրքերի 1916 թվականի ամռան հարձակումը ձախողվում է։ Թուրքերը կորցնում են մոտ 60 հազար մարդ, ռուսները՝ մոտ 21 հազար։

Այսպիսով, 1915—1916 թվականներին Կովկասյան ռազմաճակատում ռուսական զորքերը խոշոր հաղթանակներ են տանում. նրանք գրավում են գրեթե ամբողջ Արևմտյան Հայաստանը, հաջողությամբ կատարում Կովկասը գերմանա-թուրքական զավթիչներից պաշտպանելու խնդիրը։

Հետագայում ռուս-թուրքական ռազմաճակատում էական փոփոխություններ տեղի չունեցան։ Երկու կողմերի զորքերն էլ այնքան հոգնած ու հյուծված էին, որ գրեթե անընդունակ էին հարձակողական գործողությունների համար։ 1916—1917 թթ. ձմռան դաժան ցրտերի պայմաններում առաջացած սովը և բծավոր տիֆը մասսայաբար հնձում էին ռուս և հատկապես թուրք զինվորներին։ Թուրքական 2-րդ և 3-րդ բանակները կանգնել էին կատաստրոֆի առաջ։ Դասալքությունը մասսայական չափերի էր հասել։

Այդպիսին էր դրությունը Կովկասյան ռազմաճակատում, երբ բռնկվեց փետրվարյան հեղափոխությունը։

Հայերի մասնակցությունը պատերազմական գործողություններին

Համաշխարհային պատերազմը չափազանց ծանր ու անելանելի կացության մեջ դրեց հայ ժողովրդին։ Նա գտնվում էր Ռուսաստանի և Թուրքիայի տիրապետության տակ, զուրկ պետական իշխանությունից, իր բախտը ազատ, անկախ տնօրինելու իրավունքից, ինքնապաշտպանության ռեալ հնարավորություններից ու միջոցներից։

Պատերազմը մղվում էր Ռուսաստանի և Թուրքիայի միջև։ Պատերազմող կողմերը գործի էին դնում իրենց մարդկային և նյութական բոլոր հնարավորությունները՝ հաղթանակի հասնելու համար։ Ռուսական կառավարությունը բանակ կանչեց կռվի ընդունակ մոտ 200 հազար արևելահայերի, թուրքական կառավարությունը՝ մեծ թվով արևմտահայերի։ Արևելահայերն ու արևմտահայերը ռուսական և թուրքական բանակների շարքերում պետք է կռվեին միմյանց դեմ, մեկը Ռուսաստանի, մյուսը Թուրքիայի հաղթանակի համար։

Պատերազմող կողմերը դրանով չբավականացան։ Երիտասարդ թուրքերը, որոնք հուլյաթի օրերին «եղբայրացել» էին դաշնակցականների հետ, նրանց առաջարկեցին մասնակցել Ռուսաստանի դեմ ծրագրված Կովկասի մահմեդականների ապստամբությանը, հայերին ոտքի հանել ռուսների դեմ, խոստանալով ինքնավարություն Արևելյան Հայաստանի սահմաններում։ Երիտասարդ թուրքերի այս նենգ դավադրական պլանը, որը կործանարար հետևանքներ կունենար հայերի համար, վճռականապես մերժվեց։ Թուրքերն ավելի գազազեցին հայերի այսպես կոչված «անհնազանդության» համար։

Ծանր էր և արևելահայերի դրությունը։ Ցարական կառավարությունը Կովկասի փոխարքա Վորոնցով-Դաշկովի միջոցով հայերից պահանջեց, պարտադիր զինվորական ծառայության կանչվածներից բացի, ստեղծել կամավորական խմբեր՝ Թուրքիայի դեմ կռվելու համար։ Ցարական կառավարությունը հայերին խաբում էր Արևմտյան Հայաստանը թուրքական լծից ազատագրելու կեղծ խոստումներով։ Իրականում նրա նպատակն էր գրավել Արևմտյան Հայաստանը և այն բնակեցնել կազակներով։ 1915 թ. ապրիլին գեներալ Յուդենիչը գործող բանակից Վորոնցով-Դաշկովին գրում է, թե չափազանց ցանկալի է գրաված վայրերը բնակեցնել Դոնից և Կուբանից գաղթվածներով և կազմել սահմանամերձ կազակություն։ Վորոնցով-Դաշկովը համաձայնում է այդ առաջարկության հետ։

Թիֆլիսի Հայոց ազգային բյուրոյի, հայ բուրժուազիայի, կղերականության ու դաշնակցության պարագլուխները, որոնք իրենց ձեռքն էին վերցրել հայ ժողովրդի բախտի տնօրինությունը, կուրորեն ընկան հին աղվես Վորոնցով-Դաշկովի թակարդը։ Ցարական կառավարության օգնությամբ նրանք ձեռնամուխ եղան հայ կամավորական խմբերի կազմակերպմանը, որն ավելի գրգռեց թուրք ջարդարարներին։ Հայ բոլշևիկները դեմ էին կամավորական խմբերի կազմակերպմանը։ Նրանք մերկացնում էին հայկական հարցում իմպերիալիստական պետությունների նենգ ու խարդախ քաղաքականությունը և գտնում, որ ապարդյուն է անցնելու հայերի հավելյալ արյունը։

Պատերազմի բարդ ու լարված իրադրության պայմաններում Ազգային բյուրոյի, հայ բուրժուազիայի ու դաշնակցության պարագլուխները շատ անհեռատես ու անշրջահայաց գործեցին։ Ամենակարևորն ու ամենագլխավորը՝ նրանք բազմակողմանիորեն հաշվի չառան արևմտահայությանը սպառնացող ահավոր վտանգը կանխելու, պատերազմից նվազագույն կորուստներով դուրս գալու հնարավորությունները։ Հայ բուրժուազիայի կարճամիտ «քաղաքագետներն» ու «դիվանագետները» չէին տեսնում, որ ժողովրդին սպառնացող վտանգը շատ մեծ

է, իսկ դա կանխելու կամ վերացնելու հնարավորությունը շատ փոքր։

Թուրքական բռնակալության լծից ազատագրվելու հույսերը վաղ ժամանակներից սկսած հայերը կապում էին Ռուսաստանի օգնության հետ։ Որքան ուժեղանում էին թուրքերի հալածանքները հայերի նկատմամբ, այնքան ավելի էին նրանք մոտենում Ռուսաստանին։ 1912—1914 թվականներին հայկական հարցի նկատմամբ Ռուսաստանի բռնած քարյացական, իսկ Թուրքիայի ու Գերմանիայի թշնամական դիրքը է՛լ ավելի ամրապնդեց հայերի ռուսական կողմնորոշումը։

Թուրքական սուլթանները, երիտասարդ թուրքերի կառավարող կլիկը ձգտում էին հայկական հարցը լուծել հայերին կոտորելով։ Հայերը դառն փորձով բազմիցս համոզվել էին, որ ոչ մի լավ բան չի կարելի սպասել թուրք ջարդարարներից։ Եվ այժմ, երբ պատերազմը նրանց կանգնեցրել էր երկընտրանքի առաջ, բնական է, նրանք պետք է բռնեին Ռուսաստանի կողմը և այդպես էլ եղավ։

Հայերը հավատացած էին, որ Ռուսաստանը և նրա դաշնակիցները հաղթելու են և որոշակի հույսեր էին կապում նրանց հաղթանակի հետ։ Ժողովրդի մեջ տիրող այդ մտայնությունն իր մի բանաստեղծության մեջ արտահայտել է Հովհաննես Թումանյանը.

Ու ամպերում բարձր ուսից Մասիսի,
Սլանում է մեծ արծիվը Հյուսիսի,
Շիտակ դեպի բարձունքները հայկական,
Իր հետևից հայի բախտն ու ապագան։

Հայկական զինված ջոկատները ռուսական և դաշնակից բանակների շարքում արիաբար կռվում էին ընդհանուր թշնամու դեմ։ Հայ ազատագրական շարժման լեգենդար հերոս Անդրանիկի զինվորները մարտընչում էին թուրք ջարդարարների դեմ, պաշտպանում հայերի կյանքը, գույքն ու պատիվը։ 1914—1915 թվականներին Արևմտյան Հայաստանում մղված կռիվների ժամանակ իրենց մարտական սխրագործություններով աչքի ընկան նաև Վարդանի, Քեռու և մյուսների կամավորական խմբերի մարտիկները։

Հայ կամավորները, որոնց թիվը հասնում էր 8 հազարի, մեծ օգնություն ցույց տվեցին Կովկասյան ռազմաճակատում գործող ռուսական զորքերին։ Նրանք օգնության հասան Վանի հերոս պաշտպաններին, տասնյակ հազարավոր արևմտահայերի, այդ թվում կանանց և երեխաների, փրկեցին թուրքական վանդալների ճանկերից։ Հայ կամավորներից, հատկապես շարքայիններից, շատերը (օրինակ, Գայը՝ Հայկ Բժշկյանցը և ուրիշներ) ջերմ հայրենասերներ էին և անձնվիրաբար մարտնչում էին արևմտահայերի ազատագրության համար։

Կամավորական խմբերը ենթարկվում էին ռազմաճակատի ընդհանուր հրամանատարությանը, բայց միշտ չէ, որ նրանք գործում էին հաշտ ու համերաշխ։ Օրինակ, կամավորական առաջին խմբի հրամանատար գեներալ Անդրանիկը դժգոհ էր հրամանատարության քաղաքականությունից և դեպի հայ մարտիկներն ունեցած անբարյացակամ վերաբերմունքից։ 1915 թ. սեպտեմբերին Կովկասյան բանակի հրամանատարին նա բողոքում է, որ իր զորամասը 21 հաղթական ճակատամարտ է մղել, միշտ գտնվել է բոլոր ջոկատների և բոլոր մարտերի ավանգարդում, բայց իր զինվորներից և ոչ մեկը չի պարգևատրվել, ըստ արժանվույն չի գնահատվել։

Ցարական գեներալներին դուր չէր գալիս կամավորական խմբերի հայրենասիրական գործն ու գաղափարը։ 1915 թ. մայիսին, Վանի ազատագրումից հետո, գերագույն հրամանատարը պահանջում է ցրել կամավորական խմբերը։ Վորոնցով-Դաշկովը վախ է հայտնում, որ թիկունք վերադառնալով նրանք կարող են հուզել Անդրկովկասի ներքին կյանքը, ուստի ավելի լավ է պահել և զբաղեցնել թուրքական գործերով։ Հետագայում այդ հակասություններն ավելի են սրվում։ 1915 թ. դեկտեմբերին գերագույն հրամանատարի կարգադրությամբ լիկվիդացվում են կամավորական խմբերը և նրանցից կազմվում հայկական հրաձգային դումարտակներ։

Կամավորներից շատերը՝ ավելի քան 3 հազար մարդ (գլխավորապես արևմտահայեր և ամերիկահայեր), վրդովված նման վերաբերմունքից, հեռանում են կամավորական խմբերից։ Ցարական կառավարության համար հայկական կամավորական խմբերն արդեն կատարել էին իրենց դերը, նրանց գոյությունը համարվում էր ավելորդ և նույնիսկ՝ վնասակար։

Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին հայ ժողովրդի գրեթե բոլոր հատվածները մեծ ճիգ ու ջանք գործադրեցին թուրքական բռնակալության ծանր լծից Արևմտյան Հայաստանը ազատագրելու համար։ Չունենալով որևէ այլ ելք, հայ ժողովուրդն իր հույսը կապում էր Ռուսաստանի և նրա դաշնակիցներ Անգլիայի ու Ֆրանսիայի հաղթանակի հետ։ Այդպես էին վարվում նաև սերբերը, բելգիացիները և ուրիշներ։

Պատերազմը վերջացավ դաշնակիցների հաղթանակով, Թուրքիայի պարտությամբ։ Հայերը, որ իրենց կրած նյութական և մարդկային ահռելի կորուստների համար ամենամեծ իրավունքն ունեին հատուցում ստանալու, ոչինչ չստացան։ Մեծ տերությունները, ինչպես միշտ, խաբեցին նրանց։

2. ԱՐԵՎՄՏԱՀԱՅԵՐԻ ՄԱՍՍԱՅԱԿԱՆ ԿՈՏՈՐԱԾՆԵՐԸ

Հայերի գենոցիդի երիտթուրքերի քաղաքականությունը

Առաջին համաշխարհային պատերազմը աղետաբեր եղավ բազմաթիվ երկրների ու ժողովուրդների համար։ Բայց ոչ մի ժողովուրդ, իր քանակի ու տերիտորիայի համեմատ, այնքան մեծ մարդկային ու նյութական կորուստներ չունեցավ, որքան հայ ժողովուրդը։ Մեր աշխատասեր ու խաղաղասեր ժողովուրդը ոչ մի մեղք չուներ պատերազմի սանձազերծման գործում, դեմ էր պատերազմին, բայց դարձավ նրա անմեղ զոհերից մեկը։ Հայ ժողովուրդը միանգամայն անպատրաստ դիմավորեց կործանարար մի պատերազմի, որի ռազմաճակատներից մեկը դարձավ Հայաստանը։

Օգտվելով պատերազմի ընձեռած հնարավորությունից, հայերի համար խիստ անբարենպաստ, իսկ իրենց համար նպաստավոր պայմաններից, թուրքական զավթիչներն անհապաղ ձեռնամուխ եղան հայ ժողովրդի գենոցիդի իրենց դիվային ծրագրի իրագործմանը։ Գենոցիդը՝ ցեղասպանությունը, միջազգային իրավունքի պատմության մեջ մարդկության դեմ ուղղված ամենածանր հանցագործությունն է։

Թուրքական արյունարբու սուլթանների համար հայերին և մյուս հպատակ ժողովուրդներին կոտորելը սովորական երևույթ էր։ Բայց երիտթուրքերի ղեկավարները դժգոհ էին, որ նրանք ամբողջությամբ չեն բնաջնջել այդ ժողովուրդներին, «հայկական սեպը» չեն վերացրել մահմեդական աշխարհից։

Դեռևս պատերազմի նախօրեին, հայկական հարցի վերաբացման շրջանում, երիտթուրքերի կուսակցությունն ու կառավարությունը խիստ գաղտնի և մեծ խնամքով նախապատրաստում են հայկական ջարդերը։ 1913 թ. դեկտեմբերի 29-ին Էրզրումից ռուսական գլխավոր հյուպատոս Ադամովը հայտնում է. «Այստեղ գաղտնի ժողովներում սկսել են խոսել հայկական ջարդերի մասին։ Մոլլաների հրամանով մուսուլմաններն սկսել են սպիտակ շալմա կրել։ Լուրերի համաձայն ամեն ինչ պատրաստ է ջարդերի համար և միայն սպասում են մայրաքաղաքից անազանգի»։

Հայկական կոտորածները Թուրքիայում պատահական դեպքեր չէին։ Դրանք օրգանապես կապված էին երիտթուրքերի պանթուրքական քաղաքականության հետ, նախօրոք մտածված, ծրագրված պետական միջոցառումներ էին։ Երիտթուրքերի հայտնի պարագլուխներից Բեհաեդդին Շաքիրը լիտիաբար հայտարարում էր. «Հայերը կանգնել են մեր ճանապարհին և մենք անխուսափելիորեն բախվում ենք նրանց հետ։

Մենք ստիպված ենք ոչնչացնել այն ամենը, ինչ խանգարում է մեր ազգային իդեալների իրականացմանը»։

Հայկական ջարդերի գլխավոր կազմակերպիչ Թալեաթ փաշայի ղեկավարությամբ Կ. Պոլսում կայացած Իթթիհատի կոմիտեի գաղտնի խորհրդակցության ժամանակ, ինչպես վկայում է այդ կոմիտեի անդամ Մելվան-զադե Ռիֆաթը, դոկտոր Նազիմ բեյն ասում է. «Հայ ազգը պետք է արմատախիլ արվի. մեր հողի վրա անգամ մի մարդ չպետք է մնա. հայ անունը պետք է մոռացվի»։

Իթթիհատի կոմիտեի (ջեմիեթի) որոշմամբ կազմվում է 1915 թվականի ապրիլի 15-ի գաղտնի պաշտոնական հրահանգը՝ հայերի մասսայական տեղահանության ու ոչնչացման մասին։ Այդ հրահանգում ասված է.

«Որևէ հաշտության սեղանի վրա, որևէ ձևով հայկական հարցի դրվելը կանխելու համար, օգտվելով պատերազմի մեզ բերած անկախությունից, որոշեցինք վերջնական հաշվեհարդարի ենթարկել այն, բնաջնջելով անհարազատ այդ տարրը, իշելով նրանց դեպի Արաբիայի անապատները, համաձայն տրված մեր գաղտնի հրահանգի»։

Հայ ժողովրդի դահիճների՝ Թուրքիայի ներքին գործերի մինիստր Թալեաթ փաշայի, ռազմական գործերի մինիստր Էնվեր փաշայի և Իթթիհատի կենտրոնական կոմիտեի քարտուղար Նազիմ բեյի ստորագրությունները կրող այս հրահանգը պետական օրենքի ուժ ունեցող պաշտոնական կարգադրություն էր, հայ ժողովրդի գենոցիդին վերաբերող նողկալի մի փաստաթուղթ։

Ապրիլի 15-ի գաղտնի հրահանգը պահանջում էր ոչ միայն բնաջնջել մի ամբողջ ժողովուրդ, այլև հայրենիքի ու կրոնի թշնամի էր համարում և գերագույն պատիժ սահմանում այն բոլոր թուրքերի համար, որոնք չեն կատարի հրամանը և թեկուզ մի հայի պաշտպանելու կամ պատսպարելու փորձ կանեն։ Ահա, թե ո՛ւր էր հասնում թուրքական նացիոնալիստների ռասսայական ատելությունը հայերի նկատմամբ։

Հայ ժողովրդի ֆիզիկական բնաջնջման, նրա ազգային-կուլտուրական արժեքների բարբարոսական ոչնչացման երիտթուրքերի ոճրագործ քաղաքականությունը աննախընթաց երևույթ էր, մարդկության պատմության ամենասև էջերից մեկը։

Հայերի գենոցիդի երիտթուրքական քաղաքականությունը նախադուռ հանդիսացավ հրեաների ու սլավոն ժողովուրդների գերմանաֆաշիստական գենոցիդի քաղաքականության։ Պատահական չէ, որ Հիտլերը, օրինակ բերելով հայկական ջարդերը, ասում էր. «Այժմ, մեր ժամանակներում, այլևս ո՞վ է հիշում հայերի բնաջնջման մասին»։

Երիտթուրքերի կառավարությունը մարդկային և նյութական անսահման մեծ կորուստներ պատճառեց հայ ժողովրդին, բայց նրան խպառ բնաջնջել չկարողացավ և չէր էլ կարող։

Կ. Պոլսի հայ մտավորականների աքսորն ու կոտորածը

Հայկական կոտորածների ծրագիրը երիտթուրքերի կառավարությունը փաստորեն գործողության մեջ դրեց պատերազմի հենց սկզբից։ Նրա առաջին գործը եղավ հայ երիտասարդության՝ կռվող ուժի ոչնչացումը։ Բանակ կանչելու պատրվակով 18—45 տարեկան տասնյակ հազարավոր հայ երիտասարդների հավաքեցին, ժողովրդից մեկուսացրին և հեռավոր ու խուլ վայրերում մեծ մասին բորենու պես հոշոտեցին։ Զորակոչվածներից շատերին աշխատեցնում էին ճանապարհներ պատրաստելու, դիրքեր փորելու, բեռներ փոխադրելու համար, սովամահ ու տանջամահ էին անում, կենդանի-կենդանի թաղում իրենց իսկ փորած դիրքերում։

Երիտթուրքերի կառավարության երկրորդ սև գործը եղավ հայ մտավորականության՝ ղեկավար ուժի ոչնչացումը։ 1915 թվականի ապրիլի 24-ին գանազան կեղծ ու շինծու պատրվակներով Կ. Պոլսում բանտարկվում ու աքսորվում են ավելի քան 600 հայ մտավորականներ՝ ականավոր հասարակական գործիչներ, գրողներ, արվեստագետներ, գիտնականներ, բժիշկներ, մանկավարժներ և այլն։ Հայ ժողովրդի դահիճները ցանկանում էին ամբողջ պոլսահայությանը ոչնչացնել, բայց վախեցան մի կողմից Դարդանել մտած դաշնակիցներից, իսկ մյուս կողմից մայրաքաղաքի տնտեսական կյանքի խափանումից։

Աքսորված հայ մտավորականների մեջ էին մեծատաղանդ Կոմիտասը, ականավոր գրողներ Գրիգոր Զոհրապը, Դանիել Վարուժանը, Սիամանթոն, Ռուբեն Սևակը, Թլկատինցին, Երուխանը, Ռուբեն Զարդարյանը, հայտնի բժիշկներ Ն. Տաղավարյանը, Վ. Թորգոմյանը, հայագետ գիտնականներ, հրապարակախոսներ Հրանտը (Մ. Կյուրճյան), Գ. Բարսեղյանը, Սմբատ Բյուրատը, Տ. Քելեկյանը, Գ. Օղանյանը և շատ ուրիշներ։

Հայ կուլտուրայի անխոնջ մշակներին թուրքական ոստիկանները մեծ ու փոքր խմբերով քշում էին երեք ուղղությամբ, դեպի Այաշ, Զանկրի և Զորում։ Աքսորի ճանապարհին նրանց ամեն տեսակի զրկանքի ու անարգանքի էին ենթարկում, ամենաբիրտ ու դաժան ձևով ոչընչացնում այնպիսի մարդկանց, որոնց գործն ու գաղափարները համամարդկային արժեք ունեին։

Մեծ երաժշտագետ Կոմիտասը, չկարողանալով տանել հայ ժողովրդի տառապանքները, խելագարվեց։ Վարուժանը, Սիամանթոն, Զոհրապը, Ռուբեն Սևակը և ուրիշներ աքսորի ճանապարհին գազանաբար հոշոտվեցին։ Ականատես աքսորական Գ. Պալաքյանը պատմում է, որ երբ Զանկրիում Դ. Վարուժանին և Ռ. Սևակին իրենցից բաժանում են, նրանք ասում են. «Մենք բարով, մենք մեռնելու կերթանք, մեր որբերուն տեր եղեք». Վարուժանն ավելացնում է. «Աղգիս ճակատագիրը երաղելով պիտի մեռնիմ»։

1915 թ. օգոստոսի 26-ին Զանկրիից 6 ժամ հեռու գտնվող ամայի մի ձորում դահիճները Դ. Վարուժանին և Ռ. Սևակին կապում են ծառերից և դաշույններով կտրատում։ Վարուժանը դիմադրություն է ցույց տալիս. դահիճները թափում են նրա փորոտիքը և հանում աչքերը։

Թուրքական չարդարարները բարբարոսաբար ոչնչացրին նաև արևմտահայ գրականության շողշողուն աստղերից մեկ ուրիշին՝ Գրիգոր Զոհրապին։ Գ. Զոհրապին և Վարդգեսին, որպես թուրքական պառլամենտի անդամների, արյունարբու Թալեաթը առանձին է աքսորում և նրանց կյանքի ապահովության համար փարիսեցիաբար կեղծ խոստումներ տալիս։ Ցավոր, ոչ միայն հայ պառլամենտականները, այլև շատերը, մոլորված ու խաբված երիտթուրքերի սահմանադրությամբ, չէին սպասում այսպիսի ահավոր մի ոճրագործություն, որին զոհ գնացին և իրենք, և արևմտահայ ժողովրդի հոծ զանգվածները։

Կ. Պոլսում, Գոնիայում, Հալեպում բարեկամները քանիցս Զոհրապին առաջարկում են փախչել, բայց նա չի համաձայնում։ «Ոռու թողում աս անառեր ու անգլուխ ժողովուրդը,— ասում է նա։— Չէ, փախչիլ չեմ կրնար, պարտքս է մինչև վերջը պատնեշին վրա կենալ... մեր փախուստը ավելի կծանրացնե ժողովրդին վիճակը»։

1915 թ. օգոստոսի 2-ին Ուրֆայի մոտ գտնվող Կարաքյոփրու վայրում չերքեզ Ահմեդի և Խալիլի հեծյալ չեթեները գազանաբար հոշոտում են Զոհրապին, Վարդգեսին և մյուսներին։ «Զոհրապը ձեռք անցուցի,— պատմել է դահիճ Ահմեդը,— ոտքիս տակը առի, խոշոր քարով մը գլուխը ճզմեցի»։

Արևմտահայ նշանավոր գրողների և մյուս մտավորականների փոտորածները ծանր հարված հասցրին հայ գրականությանը, գիտությանն ու արվեստին։ Թուրքական վանդալները անսահման մեծ կորուստներ պատճառեցին հայկական մշակույթին։

Հայ մտավորականության աքսորին հետևում է ավելի քան տասը հազար ոչ բնիկ պոլսեցի հայերի տարագրությունը, իսկ 1915 թ. հունիսի 15-ի լուսաբացին, Կ. Պոլսի սուլթան Բայազետի հրապարակում, կախաղան են բարձրացվում 20 հնչակյան գործիչներ, դրանց թվում հայտնի Փարամազը (Մաթևոս Սարգսյան)։ Իր վերջին խոսքում դիմելով թուրք դահիճներին, Փարամազն ասում է. «Դուք մեր մարմինը միայն կրնաք կախել, իսկ մեր գաղափարը՝ ոչ»։ Դոկտոր Պեննեն (Թո-

ռոսյան) ասում է. «Մեզ fսաննեռս կկախեմ, բայց fսաննազարնեռ պիտի հետևին մեզի»:

Արևմտահայերի մասսայական տեղահանությունները ու կոտորածները

1915 թվականի ապրիլից, երիտթուրքերի կառավարության գաղտնի հրահանգի և նախօրոք մշակված ծրագրի համաձայն, տեսվում է արևմտահայերի մասսայական տեղահանությունն ու կոտորածը: Հայկական կոտորածները կազմակերպելու և գլխավորելու համար ստեղծվել էր հատուկ գաղտնի գործադիր մարմին: Ծրագրվել էր առաջին հերթին տեղահանել ու բնաջնջել հայ ազատագրական շարժման հայտնի կենտրոնների՝ Զեյթունի, Սասունի, Վանի և այլ վայրերի բնակչությանը, որոնք ազատագրական պայքարի մեծ փորձ ունեին, աշխարհագրական նպաստավոր պայմաններ՝ ինքնապաշտպանության համար:

Սուլթանական Թուրքիայի կառավարողները սարսափում էին հերոս Զեյթունից ու Սասունից, որոնք քանիցս ջարդել էին նրանց ժանիքները: Այդ էր պատճառը, որ այս անգամ նրանք առավել զգույշ, խորամանկ ու խարդախ վարվեցին և, ցավոք սրտի, կարողացան խաբել, տեղահանել ու մեծ մասին ոչնչացնել:

Զեյթունի և ամբողջ Կիլիկիայի հայերի տեղահանության հարցում ճակատագրական սխալ գործեցին տեղի հայ ղեկավարները, առաջին հերթին Կիլիկիայի կաթողիկոս Սահակ Խապայանը: Միամտաբար հավատալով թուրքական կառավարության կեղծ խոստումներին, նա հատուկ կոնդակով հայերին «կատարյալ հնազանդության և օրինապահության» կոչ արեց, որով և ապակողմնորոշեց նրանց: Շատ փոքր թվով երիտասարդներ միայն Փանոս Չագրյանի ղեկավարությամբ չհնազանդվեցին, լեռ բարձրացան, հերոսաբար կռվեցին թշնամու գերազանց ուժերի դեմ ու քաջի մահով ընկան:

Զեյթունի վերնախավի ազդեցիկ ներկայացուցիչներից մեկը՝ իշխան Սուրենյանը, որը «հնազանդության» կողմնակից էր, աքսորի ճանապարհին ղղջալով ասում էր. «Ափսոս մեր հիմարության, վստահելով մեր դահիճներու խոստումներուն, մենք մեր տունը մեր ձեռքով քանդեր ենք»: *Զեյթունցիք և շատ շատերը հավատացին երիտթուրքերի կեղծ ու խարդախ խոստումներին, շարաշար սխալվեցին և մինչև մրուրը քամեցին դրա դառն պտուղները:*

Թուրքական կառավարության գլխավոր նպատակը Արևմտյան Հայաստանի հայ բնակչության բնաջնջումն էր և դրանով իսկ հայկական հարցի «լուծումը»: Հայերի նկատմամբ գործադրված մյուս բոլոր միջոցառումները կապված էին այդ հիմնական հարցի հետ:

Հայկական հարցի արմատը Արևմտյան Հայաստանում էր: Այդ

հարցն արմատախիլ անելու համար թուրքական զավթիչները որոշել էին ոչնչացնել արևմտահայությանը, Արևմտյան Հայաստանը տիրապետել առանց հայերի, աշխարհագրական քարտեզից իսպառ ջնջել Հայաստան անունը:

1915 թվականի գարնանը, երբ հայ գյուղացիներն զբաղված էին իրենց դաշտային խաղաղ աշխատանքով, երեխաները դպրոց էին գնում, Արևմտյան Հայաստանի վրա նորից բարձրացավ թուրքական յաթաղանը: Ռազմաճակատն ապահովելու պատրվակով թուրքական զորքերն ու ոստիկանները զարհուրելի բռնությամբ ու դաժանությամբ արևմտահայերին մասսայաբար սկսեցին տեղահանել ու քշել երկրի խորքերը, դեպի Միջագետք, Արաբիայի ու Սիրիայի անապատները:

Արևմտահայերի մասսայական տեղահանությունն ու բռնագաղթը այլ բան չէր, քան նրանց մասսայական բնաջնջում: *Ժան դը Մորգանը, դոկտոր Հ. Լեպսիուսը և ուրիշներ հայերի տեղահանությունը համարում են «դիմակավորված կոտորած», «ծրագրված ոչնչացում»: Այդ են վկայում նաև թուրքական պաշտոնական վավերագրերը, առաջին հերթին ներքին գործերի մինիստր Թալեաթ փաշայի գաղտնի հրամանները,* «Թուրքիայի հողի վրա ապրելու և աշխատելու իրավունքը հայերի համար ամբողջովին ջնջված է: Կառավարությունը, ստանձնելով ամբողջ պատասխանատվությունը, հրամայում է՝ չխնայել նույնիսկ օրորոցի մանուկներին»:

1915 թ. նոյեմբերի 23-ին Թալեաթը Հալեպի կուսակալին հեռագրում է. «Գաղտնի միջոցներով ոչնչացրեք արևելյան նահանգներից ձեր կողմերը գաղթած հայերին»: *1915 թ. սեպտեմբերի 3-ի ծածկագրով արյունակզակ դահիճը հրամայում էր կոտորել նաև կանանց ու երեխաներին:* «Մանոթ անձնավորությանց (հայերի) տղամարդկանց նկատմամբ նախապես ձեզ տրված հրամանը գործադրեք նաև կանանց ու երեխաների նկատմամբ, կարգեցեք վստահելի պաշտոնյաներ»:

1915 թվականի գարնան և ամռան մի քանի ամիսների ընթացքում առանց սեռի և հասակի խտրության, հարյուր հազարավոր հայեր բնաջնջվեցին աքսորի ճանապարհներին: Կանայք, երեխաներ, ծերեր, հիվանդներ մեռնում էին քաղցից, ծարավից, տանջանքներից, կսկիծից: Անճար մայրերը գետն էին նետում իրենց և երեխաներին, որպեսզի չտեսնեն նրանց տառապանքներն ու մահը: Թուրքական զինվորներն ու ոստիկանները սվիններով ու մտրակներով քշում էին քարավաններից ետ մնացող սովալլուկ, ուժասպառ ու հիվանդ մարդկանց: Դահիճները ծննդաբերության ժամանակ սվինահար էին անում կանանց ու նորածին երեխաներին: Հազարավոր հայեր իրենց գերեզմանը գտան Տիգրիս և Եփրատ գետերում, դրանք ներկվեցին հայի արյունով: Զլսված

ու չտեսնված դաժանությամբ կատարվող աքսորի ճանապարհին հայերի քարավանները վառվող մոմի պես հանգչում էին։ Աքսորականների տասը տոկոսը հազիվ էր տեղ հասնում։

Թուրքական ջարդարարները կողոպտում և կոտորում էին անզեն ու անօգնական հայ բնակիչներին, առաջին հերթին տղամարդկանց։ Նրանք խլում էին գեղեցիկ կանանց ու աղջիկներին, բռնությամբ, մահվան սպառնալիքի տակ շատերին մահմեդականացնում։ Կ. Պոլսի հայ պատրիարքի և ուրիշ տվյալներով մոտ 200 հազար հայերի բռնի դավանափոխ արեցին, այդ թվում Կեսարիայում՝ 1000 ընտանիք, Խարբերդում՝ 1000, Սեբաստիայում՝ 800 և այլն։

Սարսափելի ջարդեր տեղի ունեցան Արևմտյան Հայաստանի կենտրոնական, հայաշատ վայրերում։ Կարինը, Բիթլիսը, Մուշը, Սասունը, Դիարբեքիրը, Խարբերդը, Սեբաստիան, Մալաթիան վերածվեցին կատարյալ սպանդանոցի։ Կարինի բնակչության 100-ից 95-ը ոչնչացան։ Գյուղերում ոչ մի հայ չմնաց։ Կարինի մոտ հայտնաբերված 12 հսկա հորերը լեփ-լեցուն էին հայերի խոշտանգված դիակներով։ Սեբաստիայի հայերի 90 տոկոսից ավելին բնաջնջվեց։

Թուրքական կանոնավոր զորքերը և քրդական հրոսակախմբերը ահավոր ոճրագործություններ կատարեցին Բիթլիսում, Մուշում, Սասունում և Դիարբեքիրում։ Հարյուրավոր գյուղեր կողոպտվեցին, հրի ու սրի մատնվեցին։ Անխտիր բոլոր հայերին՝ կանանց, երեխաների, ծերերի նրանք հավաքում լցնում էին եկեղեցիները, գոմերն ու մարագները և կրակ տալիս, այրում։ Շատերին լցնում էին ջրհորները, նախօրոք փորված փոսերը և կենդանի թաղում։ Երբ ռուսական զորքերը մտան Մուշ, այնտեղ արդեն ոչ մի հայ չէր մնացել։

1915 թ. հունիսին Խարբերդից առաջին քարավանը (3000 մարդ) ուղարկվեց դեպի Տեր-Զոր, բայց մինչև Մալաթիա հասնելը բոլորին կոտորեցին։

Բաղեշում թուրքական զորքերը հանկարծակի շրջապատում են քաղաքը և սրի քաշում հայերին։ 18 հազարից կենդանի են մնում հազիվ մի քանի հարյուր մարդ։ Մասսայական ջարդեր են տեղի ունենում նաև Մալաթիայում, Արաբկիրում, Երզնկայում, Ամասիայում, Թոքատում, Ակնում և ուրիշ վայրերում։

Տրապիզոնում ինչպես ֆրանսիացի լրագրող Հանրի Բարբին է գրում. «Հայերի բնաջնջումը կատարյալ եղավ։ Քաղաքի մեջ բնակվող 14 հազար հայերից մնաց միայն երկու ընտանիք և 4 կին, որոնք հույների պաշտպանության շնորհիվ ազատվեցին թուրքերի վայրագություններից»։ Տրապիզոնի հայերին լցնում էին նավերը, թիկունք փոխադրելու պատրվակով, և թափում ծովը։

Անսահման ծանր էր ու զարհուրելի գաղթականության վիճակը աքսորավայրերում, հատկապես Տեր-Զորի անապատում։ «Տարի մը Տեր-Զորի մեջ» գրքույկի ականատես հեղինակի տվյալներով 1916 թվականի մայիսին Տեր-Զորում եղած 180 հազար հայերից (տղամարդիկ՝ 10 տոկոս, կանայք՝ 30, երեխաներ՝ 60), հոկտեմբերին մնացել էր միայն 9 հազար։ Ականատեսը պատմում է, թե ինչպես թուրք բարբարոսները ջարդում են մոտ 2500 մերկ ու վտիտ, կմախքացած երեխաների ոտքերը, լցնում խարույկի վրա և այրում։

Դժվար է որոշել հայ ժողովրդի մեծ եղեռնի զոհերի ճշգրիտ թիվը։ Արևմտահայերի նախապատերազմյան և հետպատերազմյան ճշգրիտ վիճակագրության բացակայությունը մեզ այդպիսի հնարավորություն չի տալիս։ Տվյալները հակասական են և մինչև այժմ չկա ընդհանուր ընդունելություն գտած մի թիվ։ Թուրքական աղբյուրները, քաղաքական նկատառումներով, միակողմանի կերպով խիստ նվազեցնում են հայերի թիվն ընդհանրապես, եղեռնի զոհերի թիվը՝ մասնավորապես։

Կ. Պոլսի Պատրիարքարանի և մի քանի այլ տվյալների համաձայն 1914 թվականին Օսմանյան կայսրության մեջ ապրող հայերի թիվը կազմել է 2,5—3 միլիոն, որից Արևմտյան Հայաստանում՝ ավելի քան 2 միլիոն։ Պատրիարքարանի 1912 թվականի վիճակագրության համաձայն հայերը կազմում էին Վանի վիլայեթի բնակչության մոտ 53 տոկոսը, Բիթլիսի՝ 47, Խարբերդի՝ 37, Դիարբեքիրի՝ 35,5, Էրզրումի՝ 34, Սվազի՝ 32,5։ Հայկական 6 վիլայեթներում թուրքերը կազմում էին 25 տոկոս, իսկ քրդերը՝ 24։

Լեպսիուսի տվյալներով Կիլիկիայի և Հյուսիսային Սիրիայի մոտ 243 հազար հայերից աքսորից ու կոտորածից ազատվել են միայն 4000 մարդ։ Արևելյան Անատոլիայի՝ Տրապիզոնի, Էրզրումի, Սվազի, Խարբերդի, Դիարբեքիրի, Վանի և Բիթլիսի վիլայեթների հայերից տեղահանվել ու կոտորվել են 818 հազար մարդ։ Եվրոպական Թուրքիայի 194 հազար հայերից աքսորվել ու կոտորվել են 30 հազար։ Ամբողջ արևմտահայերից, ըստ Լեպսիուսի տվյալների, աքսորվել ու կոտորվել են 1,396 հազար մարդ։

«Ամենուն տարեցույց»-ի, Պատրիարքարանի և այլ տվյալների համաձայն, Արևմտյան Հայաստանի ավելի քան 2 միլիոն հայերից փրկվել էր 592 հազար մարդ։ Սվազի վիլայեթում պատերազմից առաջ եղած 225 հազար հայերից մնացել էր մոտ 17 հազար, Էրզրումի վիլայեթում՝ 215 հազարից 1500, Խարբերդի վիլայեթում՝ 204 հազարից 35 հազար, Դիարբեքիրի վիլայեթում՝ 124 հազարից 3 հազար և այլն։

Մոտավոր տվյալներով մեծ եղեռնի զոհերի հավանական թիվը պետք է համարել մեկ և կես միլիոն մարդ։ Սա աննախընթաց, անսահ-

ման մեծ ու ծանր մի հարվածէր, որ թուրքական վանդալները հասցրին հայ ժողովրդին։

Հայկական կոտորածների, հայ ժողովրդի մեծ ողբերգության մեղքն ու պատասխանատվությունն առաջին հերթին ընկնում է երիտթուրքերի կառավարության, նրա բախտախնդիր պարագլուխների՝ Թալեաթ, Էնվեր և Ջեմալ փաշաների տրիումվիրատի վրա։

Թուրք աշխատավորը մեղավոր չէ հայկական կոտորածների համար։ *Ուշագրավ փաստեր կան այն մասին, որ թուրք, ինչպես և քուրդ գյուղացիները ջարդարարներից թաքցրել ու պատսպարել են իրենց դրացի հայերին, նրանց երեխաներին։ Հայ, թուրք, քուրդ աշխատավորներն ապրում ու աշխատում էին հաշտ ու համերաշխ։ Դերսիմի քրդերը, որոնք բարեկամական սերտ կապեր ունեին հայերի հետ, բազմաթիվ հայերի կյանքը փրկեցին։ Դերսիմի քրդերը թշնամաբար էին տրամադրված թուրքական կառավարության դեմ և օգնում էին ռուսական զորքերին։*

Բացի այդ, թուրք պաշտոնյաների մեջ ևս գտնվեցին առանձին մարդիկ, որոնք կողմնակից չէին հայկական ջարդերին։ Օրինակ, Հալեպի նահանգապետ Ջելալ բեյը հրաժարվեց կատարել հայերին կոտորելու վերաբերյալ Թալեաթի հրամանը։ «Ես այս նահանգի նահանգապետն եմ և չեմ ցանկանում նրա դահիճը դառնալ»— *բացառիկ խիզախությամբ ու մարդասիրությամբ հայտարարեց Ջելալ բեյը։ Նա անմիջապես հեռացվեց պաշտոնից և պատասխանատվության ենթարկվեց։*

Այսպիսով, 1915—1916 թվականներին երիտթուրքերի կառավարությունը նրի ու սրի միջոցով արևմտահայերին մասսայաբար տեղահան արեց հայրենի բնակավայրերից, կողոպտեց նրանց ունեցվածքը, ավերեց ու ամայացրեց ամբողջ Արևմտյան Հայաստանը, բնաջնջեց մեկուկես միլիոն հայ։

Թուրքիայի մեծ վեզիր, հայ ժողովրդի դահիճ Թալեաթ փաշան հայտարարում էր. «Երեք ամսում ես ավելի շատ բան արեցի հայկական հարցը լուծելու համար, քան Աբդուլ Համիդը 30 տարում». «Հայկական հարց այլևս գոյություն չունի, որովհետև այլևս հայեր գոյություն չունեն»։ «Ձարժե հայերի մասին վիճել,— ասում է նա Ամերիկայի դեսպան Հ. Մորգենթաուին,— որովհետև մենք արդեն լիկվիդացիայի ենք ենթարկել նրանց երեք քառորդին։ Ոչ Բիթլիսում, ոչ Վանում և ոչ էլ Էրզրումում այլևս հայեր չկան։

Գորշ գայլի[1] *ցինիկությունն այնտեղ է հասնում, որ նա դեսպանից*

[1] *Հայ ժողովրդի դահիճներից մի քանիսին հայերը տեռորի ենթարկեցին. 1921 թ. մարտի 15-ին Բեռլինում Թալեաթ փաշային սպանում է Սողոմոն Թեհլերյանը։ 1922 թ. հուլիսի 21-ին Թիֆլիսում Ջեմալ փաշային սպանում են Պետրոս Տեր-Պողոսյանը և Արտաշես Գևորգյանը։ 1922 թ. օգոստոսի 4-ին Միչին Ասիայից Աֆղանստան փախչելիս Էնվեր փաշային սպանում է մի հայ սահմանապահ։ Թուրքիայի նախկին վարչապետ Սայիդ Հալիմին 1921 թ. դեկտեմբերի 6-ին Հռոմում սպանում է Արշավիր Շիրակյանը։ 1922 թ. ապրիլի 17-ին նույն Արշավիր Շիրակյանը և Արամ Երկանյանը Բեռլինում սպանում են դոկտոր Բեհաեդդին Շաքիրին և Ջեմալ Ազմիին։*

պահանջում է թուրքական կառավարությանը հանձնել իրենց ձեռքով բնաջնջված հայերին պատկանող ապահովագրական գումարները, որոնք պահվում էին բանկերում։

Հայ ժողովրդի մեծ ողբերգությունը բուռն զայրույթ ու ցասում առաջ բերեց աշխարհի բոլոր ազնիվ ու առաջադեմ մարդկանց մեջ։ Նրանք անարգանքի սյունին գամեցին նողկալի ոճրագործներին, քսաներորդ դարի վանդալներին։ «Այն, ինչ կատարվեց Թուրքիայում,— ասում է ականավոր պատմաբան, ակադեմիկոս Ե. Տարլեն,— համաշխարհային պատմության մեջ, Չինգիզ խանի ժամանակներից սկսած, մի ինչ-որ բացառիկ երևույթ էր իր ծավալի և իր տեսակի մեջ»։

Պատերազմի տարիներին Թուրքիայի ամերիկյան դեսպան Հենրի Մորգենթաուն գրում է. «Ես համոզված եմ, որ տիեզերական պատմության մեջ ավելի զարհուրելի դրվագ չկա, քան հայկական ջարդերը։ Անցյալ ժամանակների մեծ հալածանքները զրեթե աննշան են թվում այն տառապանքների մոտ, որ հայ ազգը կրեց 1915 թվականին»։

Հայկական կոտորածները որակվեցին որպես «նորագույն պատմության ամենասև էջ», «մեծ ոճիր», «մեծ եղեռն», իսկ Հայաստանը՝ թուրքական ջարդարարների «դժբախտ զոհ»։

Գերմանական իմպերիալիզմը և հայկական ջարդերը

Հայկական ջարդերի գլխավոր հանցագործն ու պատասխանատուն թուրքական կառավարությունն էր։ Բայց նա մենակ չէր, և հազիվ թե կարողանար միայնակ իրագործել հայ ժողովրդի գենոցիդի հրեշավոր ծրագիրը։ Երիտթուրքերի կառավարության թիկունքում կանգնած էին գերմանական գիշատիչ իմպերիալիստները։ Երկու գիշատիչ միացել, ռազմական դաշինք էին կնքել իրենց հակառակորդներին հոշոտելու համար։

Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Թուրքիան տնտեսական, քաղաքական և ռազմական կախման մեջ էր գտնվում Գերմանիայից։ Թուրքական բանակի ռազմական մատակարարումը և ղեկավարությունը գտնվում էր գերմանական գլխավոր շտաբի ձեռքում։ Թուրքական կառավարությունը մենակ և անկախ չէր գործում ոչ միայն ռազմաճակատում, այլև երկրի ներքին ու արտաքին քաղաքականության բնագավառում։

Ելնելով իրենց նվաճողական քաղաքականությունից, Գերմանիան

և Թուրքիան 1914 թ. օգոստոսի 6-ին գաղտնի ռազմական դաշինք կնքեցին։ Այդ պայմանագրի 5-րդ կետում ասված է. «Գերմանիան կստիպի ուղղելու Օսմանյան կայսրության արևելյան սահմանները, այն ձևով, որպեսզի ապահովվի Թուրքիայի անմիջական կապը Ռուսաստանում ապրող մուսուլմանական բնակչության հետ»։

Գերմանա-թուրքական գաղտնի այս պայմանագրով նախատեսվում էր Թուրքիայի և Ռուսաստանի սահմանագլխում ընկած Հայաստանի և հայ ժողովրդի բնաջնջում, Կովկասի միացումը Թուրքիային։

Գերմանական իմպերիալիստները ոգեշնչում էին թուրքական ավանտյուրիստներին, որոնք հավատում էին իրենց դաշնակցի հաղթանակին, գայթակղվում նրա առատ խոստումներով։

Գերմանական իմպերիալիստները ձգտում էին հայերին ռուս-թուրքական սահմանագլխից՝ Վանի, Էրզրումի, Բաղեշի և մյուս նահանգներից տեղափոխել ու բնակեցնել Բաղդադի երկաթգծի ուղղությամբ։ Այդ առաջարկի հեղինակը Պաուլ Ռոհրբախն էր, որի սրտում, ինչպես պրոֆ. Լեոն է ասում, տեղ էր գտել «հին տևտոնական հրեշը»։

Հայերի տեղահանությամբ գերմանական իմպերիալիստները ձգտում էին լուծել երկու կարևոր հարց.

ա) ռուս-թուրքական սահմանագլխից հեռացնել Ռուսաստանի կողմ հակված հայ բնակչությանը, զրկել նրանց Ռուսաստանի օգնությունից, իսկ Ռուսաստանին՝ հավատարիմ, վստահելի հայ տարրից.

բ) հայ աշխատունակ և ձեռներեց մարդկանցով բնակեցնել Բաղդադի երկաթգծի շուրջն ընկած ամայի տարածությունները, օգտագործել նրանց իրենց գաղութարար նպատակների համար, իսկ Արևմտյան Հայաստանը բնակեցնել գերմանացի գաղթականներով։

Հայաստանը ծառացել էր Գերմանիայի և Թուրքիայի ծավալման առաջ, ուստի նրանք ամեն կերպ աշխատում էին ոչնչացնել նրան։ Օգտվելով պատերազմի պայմաններից, Վիլհելմ II-ի կառավարության օգնությամբ երիտթուրքերը ձեռնամուխ եղան այդ հարցի լուծմանը։ «Գերմանական մեթոդի և թուրքական գործելակերպի» արդյունքը եղավ արևմտահայության մասսայական բնաջնջումը։

Պատմական վավերագրերը, ականատեսների վկայությունները պարզ ու որոշակի ցույց են տալիս, որ գերմանական սպաները և նույնիսկ դիվանագիտական պաշտոնյաները անմիջական մասնակցություն են ունեցել հայկական ջարդերին։ Վանում թուրքական հրետանու կրակը անձամբ ղեկավարում էր գերմանական սպա։ Էրզրումի հայերի բռնագաղթին մասնակցում էին գերմանական սպաներ։ Նրանցից Կաուլ Շաբները և ուրիշներ, թուրքերի նման, առևանգում ու բռնաբարում էին հայ աղջիկներին։

Տրապիզոնում հայկական ջարդերը ղեկավարում էին իթթիհատի տեղական կոմիտեի նախագահ Նայիլ բեյը, գերմանական սպա Շտանկերը և Շուլենբուրգը։ Տրապիզոնի գերմանական հյուպատոսը իր հայ խոհարարուհուն հանձնում է թուրքերին, որոնք սպանում են անպաշտպան կնոջը։

Մուշում գերմանական հրետանավորները կրակում էին հայերի վրա, կողոպտում և կոտորում նրանց։ Գերմանացիները կողոպտում են նաև Ս. Կարապետ վանքը և թանկարժեք իրերն ու հնությունները փոխադրում Բեռլին։

Ուրֆայում հայերի կոտորածը ղեկավարում էր գերմանական հյուպատոսը, գերմանական «Կրուպպ» մարկայի հրանոթներից անձամբ կրակում էին գերմանացի սպաները։

Հայերի նկատմամբ խիստ թշնամական դիրք էին բռնել Պոլսի գերմանական դեսպան բարոն Վանգենհայմը և ծովային կցորդ (Վիլհելմ II-ի անձնական գաղտնի գործակալ) Հյումանը։ Գերմանական միլիտարիզմի այս նողկալի ներկայացուցիչները Էնվերի և Թալեաթի խորհրդատուներն էին, հայկական ջարդերի ոգեշնչողները։

Վիլհելմ II-ի կառավարության ու նրա դեսպանի բռնած դիրքը ոգեշնչում էր Էնվերին ու Թալեաթին, նրանց մղում նորանոր ոճրագործությունների։ Առանց Գերմանիայի նյութական, ռազմական ու բարոյական օգնության Թուրքիան երբեք չէր կարող իրագործել հայկական ջարդերի իր դիվային ծրագիրը։ Պատերազմի տարիներին Թուրքիան վասալն էր Գերմանիայի։ Գերմանիան, եթե ցանկանար, կարող էր կանխել կամ սահմանափակել հայկական կոտորածները։

Այսպիսով, հայ ժողովրդի մեծ եղեռնի պատասխանատվությունն ընկնում է նաև գերմանական իմպերիալիստների վրա, նրանք մեղսակից են իրենց դաշնակցի՝ թուրքական կառավարության կազմակերպած հայկական ջարդերին։

Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին հայ ժողովրդի կրած մեծ կորուստների ու անլուր տառապանքների համար մեղավոր են և պատասխանատու նաև Անտանտայի իմպերիալիստները։ Անտանտայի պետություններին՝ Անգլիային, Ֆրանսիային, ցարական Ռուսաստանին ամենից առաջ և ամենից ավելի հետաքրքրում էր իրենց իմպերիալիստական շահը և ոչ թե հայ ժողովրդի բախտը։ «Հայաստանը զոհաբերվեց մեր կողմից բարձրացված հաղթական զոհասեղանին,— գրում է անգլիական հայտնի լիբերալ գործիչ Լլոյդ Ջորջը։ Բրիտանական կառավարության քաղաքականությունը ճակատագրական անխուսափելիությամբ հանգեց 1895—1897 և 1909 թվականների ապստամբելի սպանդներին, 1915 թվականի զարհուրելի կոտորածին։ Նույնիսկ թուր-

քական բռնապետության պատմության մեջ անօրինակ այդ չարագործությունների հետևանքով հայ բնակչության թիվը Թուրքիայում կրճատվեց ավելի քան մեկ միլիոնով»։ Ժորժ Կլեմանսոն ասում է, որ «Հայկական արյունը ծանրանում է եվրոպական դիվանագիտության ուսերին»։

Արևմտյան Հայաստանը սպանդանոց էր դարձել, բարբարոսների ձեռքով նահատակվում էր մի ամբողջ հին ու կուլտուրական ժողովուրդ, բայց Անտանտայի պետությունները կեղծ խոստումներից բացի վրճռական ոչ մի քայլ չարեցին նրան փրկելու համար։ Նրանք զբաղված էին Արևմտյան Հայաստանն իրար մեջ բաժանելով, Հայաստանը նրանց հարկավոր էր առանց հայերի։ Տեղին է ասել հայ ժողովրդի լավ բարեկամ Ֆրիտյոֆ Նանսենը. «Վա՛յ հայերին, որ նրանք ներքաշվել են եվրոպական քաղաքականության մեջ։ Նրանց համար շատ ավելի լավ կլիներ, որ եվրոպական ոչ մի դիվանագետ Հայաստանի անունը չարտասաներ»։

3. ՀԱՅԵՐԻ ՀԵՐՈՍԱԿԱՆ ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

1915 թվականը հայ ժողովրդի պատմության մեջ ոչ միայն մեծ ողբերգության, մեծ եղեռնի տարի է, այլև անօրինակ մաքառումների, հերոսական ինքնապաշտպանության, չտեսնված գոյամարտերի տարի։ Երբ Թուրքական դահիճների յաթաղանը դամոկլյան սրի պես կախվեց արևմտահայության վրա, երիտասարդության ու մտավորականության կոտորածներին հետևեց ժողովրդական լայն զանգվածների տեղահանությունն ու բնաջնջումը, հայերը մի շարք տեղերում դիմեցին ինքնապաշտպանության։

Արևմտահայերի ինքնապաշտպանությունը, ինչպես ամեն մի ինքնապաշտպանություն, միանգամայն բնական էր ու օրինական։ Ինքնապաշտպանության գաղափարը համամարդկային գաղափար է։ Արևմտահայերի ինքնապաշտպանությունը ոչ թե դավադրություն կամ ապստամբություն էր, ինչպես բարբաջում են հայ ժողովրդի դահիճները՝ իրենց արդարացնելու համար, այլ կենսական անհրաժեշտություն, գոյության կռիվ, մաքառում գենոցիդի դեմ։

Թուրքական ջարդարարների դեմ մղած ինքնապաշտպանական կռիվներում հայերից շատերն աչքի ընկան, բայց առանձնապես հայտնի դարձավ ժողովրդական հերոս Անդրանիկը (1865—1927)։ Անդրանիկ Օզանյանը քաջ կռվող, անվեհեր մարտիկ էր։ Նա մինչև այդ մասնակցել էր թուրքական լծի դեմ արևմտահայերի ու բուլղարների ազատագրական պայքարին, հայդուկային կռիվների մեծ փորձ ուներ։ Անդրանիկը ջերմ հայրենասեր, ազատասեր մարդ էր, ատում էր ճնշողներին ու բռնակալներին։ «Թուրք խաղաղ բնակչության դեմ ոչ մի ոխ չունեմ,— ասում էր նա,— ես կռվում եմ միայն բեկերի ու կառավարության դեմ։ Ես նացիոնալիստ չեմ, ես ճանաչում եմ միայն մի ազգ. դա բոլոր ճնշվածների ազգությունն է»։ Անդրանիկի անունը ահ ու սարսափ էր առաջ բերում թուրք ջարդարարների մեջ։ Նա ոգեշնչում ու հերոսական ինքնապաշտպանության էր մղում հայերին։

Վանի հերոսամարտերը

Երիտթուրքերի կառավարության գենոցիդի քաղաքականության դեմ առաջինը ծառս եղան Վասպուրականի հայերը, որոնց թիվը հասնում էր 250 հազարի, որից 23 հազարը՝ Վանում։ Թուրք և քուրդ ջարդարարներն այստեղ հանդիպեցին զինված դիմադրության։ Դեռևս 1915 թ. մարտի վերջերից սկսած ինքնապաշտպանական ուժեղ կռիվներ տեղի ունեցան Շատախում, Արճեշում, Հայոց ձորում, Գավաշում, Թիմարում և այլ վայրերում։ Փեսանդաշտի և Շատախի կռիվների ժամանակ հայ գյուղացիները մի քանի անգամ ետ մղեցին թշնամու կատաղի հարձակումները և կարողացան պաշտպանվել կողոպուտից ու կոտորածից։

Վասպուրականի ինքնապաշտպանության կենտրոնը, ազատագրական պայքարի ոգեշնչողն ու տոն տվողը Վանն էր։

Վանի ինքնապաշտպանությունն սկսվում է 1915 թ. ապրիլի 7-ից և տևում մինչև մայիսի 6-ը, մոտ մեկ ամիս։ Այստեղ ավելի, քան որևէ այլ վայրում, ինքնապաշտպանությունը լավ էր կազմակերպված։ Ամենից առաջ դադարեցվել էր հնչակյանների, դաշնակցականների ու ռամկավարների միջև ընթացող գզվռտոցը, որն այնքան մեծ վնասներ էր պատճառում հայ ժողովրդին։ Հիմնվել էր ինքնապաշտպանական կոմիտե և զինվորական մարմին։ Վան քաղաքամեջը և Այգեստանը բաժանվել էր պաշտպանական առանձին շրջանների ու դիրքերի, որոնք ունեին իրենց հրամանատարները։

Վանի պաշտպանները շատ սահմանափակ քանակությամբ զենք և ռազմամթերք ունեին. նրանց հրամայված էր խնայել փամփուշտը, բայց թշնամու կատաղի գրոհների ժամանակ հարկադրված ծախսում էին։ Վանի հմուտ արհեստավորները կազմակերպեցին վառոդ ու փամփուշտ պատրաստելու, հրացան վերանորոգելու արհեստանոցներ, որոնք աշխատում էին գիշեր-ցերեկ։ Օրական միջին հաշվով 2000 փամփուշտ էր պատրաստվում։ Հայտնի Բուլղարացի Գրիգորը բնակիչներից պղինձ հավաքեց, թնդանոթ ձուլեց, որի կրակոցները խուճապ առաջացրին թշնամու մեջ։ Այդպիսի փորձ Շատախում կատարել էր դարբին Կարապետը։

Մեծ աշխատանք էր կատարվել դիրքեր և ամրություններ կառուցելու համար։ Հազարավոր մարդիկ, այդ թվում շրջաններից փախած գյուղացիները, գիշեր-ցերեկ անդադրում աշխատում էին և կարճ ժամանակամիջոցում Վանն ու Այգեստանը պատեցին հսկայական տարածության

վրա ձգվող, պաշտպանության համար հարմարավետ, անառիկ դիրքերով ու ամրություններով։

Ստեղծվել էին նաև մի շարք օժանդակ մարմիններ՝ մատակարարման, բժշկա-սանիտարական, դատական, քաղաքապետական վարչություն, կանանց միություն և այլն։ Կանանց միության հիմնած կարի արհեստանոցում կանայք և աղջիկները մեծ եռանդով հագուստ էին պատրաստում մարտիկների համար։ Մատակարարման և բժշկական մարմինները բացառիկ հոգատարությամբ սպասարկում էին նաև շրջաններից Վան և Այգեստան լցված գաղթականներին։

1915 թվականի ապրիլին Վանը վերածվել էր ռազմական մի ճամբարի։ Տղամարդիկ, կանայք, երեխաները մի մարդու պես կենաց և մահու կռվի էին դուրս եկել անարգ թշնամու դեմ։

Վանի կոմսակալ և զորքերի հրամանատար Ջևդեթ փաշան (Էնվերի փեսան) ծրագրել էր հողին հավասարեցնել Վանը։ Բայց Վանի հերոս պաշտպանները ջարդեցին նրա ժանիքները և հաջողությամբ ետ մղեցին բոլոր գրոհները։ Գազազած Ջևդեթ փաշան Կարինից լրացուցիչ զորք բերեց և ապրիլի կեսերից կատաղի գրոհներ սկսեց։ Թուրքական բազմահազար զորքերը և 12 հրանոթները գիշեր-ցերեկ տեղատարափ կրակ էին թափում հայկական դիրքերի վրա, մոտ 16 հազար արկ արձակվեց Վանի վրա, բայց թշնամին չկարողացավ կոտորել նրա հերոս պաշտպանների կամքը։ Դիրքերը ձեռքից ձեռք էին անցնում, կատաղի գրոհները օրվա մեջ մի քանի անգամ իրար էին հաջորդում, բայց հայերը մնում էին անընկճելի, թուրքերը մեծ կորուստներ տալով նահանջում էին։ Թուրքական բանակում գտնվող գերմանացի սպաներից մեկն ասել է. «Ես այսպիսի դիմադրություն չէի սպասում»։

Արիության և քաջության չտեսնված օրինակներ էին ցույց տալիս ոչ միայն տղամարդիկ, այլև կանայք ու երեխաները։ Նրանք փամփուշտ, ջուր և սննդամթերք էին մատակարարում դիրքերում կռվողներին։ 12—14 տարեկան երեխաները հրանոթների որոտի տակ հավաքում և ռազմական արհեստանոցներին էին հանձնում չպայթած ռումբերը, հանգցնում հրդեհները և այլն։

1915 թ. ապրիլի 28-ին տեղի են ունենում ամենակատաղի և վճռական մարտերը։ Ջևդեթ փաշան, տեղեկանալով ռուսական զորքերի և Անդրանիկի կամավորական խմբի առաջխաղացման մասին, որոշում է մինչև օգնության հասնելը արյունոտ դատաստան տեսնել Վանի պաշտպանների հետ։ Բայց այս անգամ ևս ձախողվում են նրա պլանները։ Հայերը հերոսաբար պաշտպանվում են և ոչ մի թիզ հող չեն զիջում թշնամուն։

Շուտով թուրքական զորքերի մեջ լուրեր են տարածվում, թե «քեռաֆիր Մոսկով կելեճեք» (անիրավ Մոսկովն է գալիս)։ Սկսվում է նրանց խուճապը։ Գոտեպնդվում, նոր լիցք են ստանում հայերը։

Վանի հերոսական ինքնապաշտպանությունը պսակվեց փայլուն հաղթանակով։ Ջևդեթ փաշան խայտառակ պարտություն կրեց և մայիսի 3-ին ամոթահար փախավ Բիթլիս։ Մայիսի 6-ին ռուսական զորքերը և հայ կամավորականների խմբերը մտան Վան։ Վանի հերոս պաշտպանները գրկախառնվեցին նրանց հետ։ Վանի ու Վասպուրականի հայերը փրկված էին։

Մայիսի 6-ին Վասպուրականի ինքնապաշտպանության զինվորական մարմինը, որի մեջ մտնում էին Արմենակ Եկարյանը (ղեկավար), Արամ Մանուկյանը, Փանոս Թերլեմեզյանը, Գաբրիել Սեմերճյանը, Հրանտ Գալիկյանը և ուրիշներ, հատուկ կոչով դիմում է հայ ժողովրդին և ազդարարում փառավոր հաղթանակը։ «Ահա կբոլորի մեր ամսօրյակը—ամսօրյակը պայքարի ու փառքի, մահվան ու հարության... ամիս մը առաջ թշնամին վատաբար կռիվ հայտարարեց մեր դեմ, մենք հավատքով փարեցանք մեր զենքին և մեր հոգիի խորերեն զգացինք, որ հաղթանակը մերը պիտի ըլլա այս կռվին մեջ... Եվ կուրծք տվինք մենք թշնամիի մոլեգին և ամբարտավան հարձակումներուն և ոչ մեկ տեղ, ոչ մեկ վայրկյան թշնամին չտեսավ մեր զինվորը պարտված և մեր դիրքերը լքված...

Այսօր ահա հայկական դրոշակն է, որ հազարավոր տարիներու ընթացքին առաջին անգամն է կծածանի... Այսօր, ուրեմն, տոնն է ոչ միայն մեր ամսօրյա պայքարին և հաղթանակներուն, այլև նախատոնը հայկական ազատության բոլոր բռնավոր լուծերեն, բոլոր հոշոտող ճիրաններեն։ Կեցցե ազատությունը, փառք ինկածներուն»։

Վանի ինքնապաշտպանությունը տապալեց Վասպուրականի հայերին տեղահանելու և կոտորելու երիտթուրքերի կառավարության պլանները։ Դա ոգեշնչեց և պայքարի հանեց արևմտահայ մյուս հատվածներին։ Վանի ինքնապաշտպանությունը իր արժանի տեղն ունի թուրքական բռնապետության դեմ հայ ժողովրդի մղած ազատագրական պայքարի պատմության մեջ։

1915 թ. մայիսի 7-ին կազմվում է Վանի և շրջանի ժամանակավոր վարչությունը։ Գեներալ Օգանովսկու կարգադրությամբ Արամ Մանուկյանը նշանակվում է Վանի և շրջանի կառավարիչ։ Վանում և Վասպուրականում կյանքը մտնում է նոր հունի մեջ, բայց, ցավոք այդ երկար չի տևում։

Թուրքական զորքերը մեծ ուժեր կենտրոնացնելով հակահարձակման են անցնում։ 1915 թ. հուլիսի 2-ին ռուսական զորքերը առանց կռվի, անդիմադրելի կերպով թողնում են Վանը։ Սկսվում է Վասպուրականի հայե-

րի խուճապահար փախուստը դեպի Անդրկովկաս և Պարսկաստան։ Գաղթում են ավելի քան 200 հազար մարդ, ճանապարհին զոհ են գնում մոտ 40 հազար մարդ։

Ջեվդեթ փաշան առանց կռվի «հաղթականորեն» մտնում է Վան, սրի քաշում հարյուրավոր հիվանդների ու վիրավորների, կանանց, երեխաների ու ծերերի, որոնք մնացել կամ չէին կարողացել փախչել։ Մի քանի օր հետո, երբ ռուսական զորքերը վերջապես գրավեցին Վանը, քաղաքը գտան ամբողջապես կողոպտված ու հրկիզված վիճակում։

Մուշի և Սասունի ինքնապաշտպանական կռիվները

Վանի դեպքերից հետո թուրք ջարդարարները վախենում և զգուշանում էին Սասունից։ Ուստի նրանք որոշում են նախ տեղահանել և կոտորել Մուշի հայերին, ապա՝ Սասունի։

1915 թվականի գարնանը և ամռանը Մշո դաշտը վեր է ածվում արյունահեղ կոտորածների թատերաբեմի։ Թուրքական կանոնավոր զորքերը և քրդական ավազակախմբերը լցվել էին դաշտի գյուղերը և կողոպտում ու կոտորում էին խաղաղ բնակիչներին։ Հայերի համար, բացի ինքնապաշտպանությունից, փրկության ուրիշ ելք չկար։

Տարոնի աշխարհում՝ Մուշում և Սասունում, ազատասեր հայ գյուղացիները, հասարակ զենքերով ու անզեն, 7 ամիս շարունակ կենաց և մահու կռիվ մղեցին թուրքական ջարդարարների դեմ։ Թուրքական զորքերին հաջողվեց ընկճել դաշտի գյուղացիների դիմադրությունը և պաշարել Մուշ քաղաքը։

Մշեցիք որոշում են կռվել մինչև արյան վերջին կաթիլը և չհանձնվել թշնամուն։ 1915 թ. հուլիսի 11-ին և 12-ին արյունահեղ մարտեր են տեղի ունենում Մուշում. երկուստեք ծանր կորուստներ են կրում։ Սպառելով իրենց ունեցած փամփուշտը, հայերը, մոտ 700 հոգի, հուլիսի 13-ի գիշերը ճեղքում են թշնամու օղակը և քաշվում լեռները։ Մուշի վիլայեթի 59 հազար հայերից փրկվում է մոտ 9 հազար մարդ, որոնք փախչում են Սասուն և ապաստանում լեռներում։

Ազատագրական պայքարի կարևոր կենտրոններից մեկը պատմական Սասունն էր։ Թուրքական զորքերը Մուշն ավերելուց հետո հարձակվում են Սասունի վրա։ Քաջարի լեռնականները դիմում են ինքնապաշտպանության։ Թուրքական 20-հազարանոց բանակը և քրդական աշիրեթների զինված հրոսակախմբերը ամիսներ շարունակ կատաղի գրոհներ են գործում, բայց չեն կարողանում կոտրել սասունցիների դիմադրությունը։ 1915 թ. ապրիլից մինչև օգոստոս Սասունը պաշարված վիճակում դիմադրում է թշնամու գերազանց ուժերին։ Դաժան մարտեր են մղվում Խուլբում, Խիանքում, Տալվորիկում, Շենիկում և Կուրտիկի լեռներում։ Մեծ կորուստների գնով թշնամուն հաջողվում է գրավել Շենիկն ու Տալ-

վորիկը։ Սասունցիք, մոտ 15 հազար մարդ, քաշվում են Անտոք լեռը և շարունակում անհավասար մարտերը։

Անտոքի մարտերը Սասունի ինքնապաշտպանության ամենահերոսական դրվագներից են։ Հուլիսի 19-ին թուրքերը թարմ ուժեր ստանալով ընդհանուր հարձակման են անցնում։ Թշնամու հրանոթները տեղատարափ կրակ են թափում հայերի վրա, մեծ կորուստներ պատճառելով նրանց։ Դիրքերը ձեռքից ձեռք են անցնում. փամփուշտը սպառած հայ մարտիկները հրացանի խզակոթերով էին հարվածում։ Դրությունը հուսահատական էր։ Ղեկավարներից ու փորձված մարտիկներից շատերը զոհվել էին, փամփուշտը, սննդամթերքը սպառվել։ Օրհասական այդ պահին, 1915 թ. օգոստոսի 3-ին, Սասնա քաջերը գիշերով քաշվում են անտառներն ու քարանձավները։ Կանայք ժայռերից նետվում էին ցած՝ թշնամու ձեռքը չընկնելու համար։ 1916 թվականին, երբ ռուսական զորքերը մտան Մուշ, փրկվեցին հերոս ժողովրդի բեկորները միայն։

Շարին-Գարահիսարի հայերի ինքնապաշտպանությունը

Պատերազմի հենց սկզբին Շարին-Գարահիսարից մոտ 300 հայ երիտասարդների բանակ են կանչում և մեծ մասին գաղտագողի ոչնչացնում։ 1915 թվականի գարնանը տեղի հայերի վիճակն ավելի է վատանում։ Հունիսի 2-ին թուրքական ոստիկանները հարձակվում են հայերի խանութների վրա, կողոպտում են և սպանում անզեն մարդկանց։ Գիշերը կոտորում են բանտում եղած հայերին։ Երբ հայտնի է դառնում տեղահանության հրամանը, հայերը միահամուռ կերպով որոշում են քարձրանալ մոտիկ բերդը և պաշտպանվել։

1915 թ. հունիսի 3-ին շուրջ 5000 հոգի, այդ թվում 500 կռվող, ամրանում են հայկական թաղի մոտ գտնվող բերդում և դիմում ինքնապաշտպանության։ Մի հայ երիտասարդ իր ճառում ասում է. «Մեր պայքարը միայն ինքնապաշտպանության համար չի. մենք մարդ ենք, բանականություն ունենք և մարդու պես պատվով ապրել կուզենք»։

Գազազած թուրք կուսակալը հրամայում է այրել հայկական թաղը, ապա պաշարում է բերդը և սկսում ռմբակոծել։ Սկզբում կռիվները գնում էին փոփոխակի հաջողությամբ։ Հունիսի կեսերին, համալրելով իրենց ուժերը, թուրքերը մի քանի օր անընդհատ ռմբակոծում են հայերի դիրքերը և անցնում գրոհի։ Հայերն արիաբար ետ են մղում նրանց բոլոր գրոհները։ Իրենց քաջությամբ առանձնապես աչքի են ընկնում ռմբաձիգ Գ. Կարմիրյանը և ռումբեր մատակարարող 14 տարեկան Հմայակ Թևեքելյանը, որն ընկնում է թշնամու գնդակից։

Սակայն պաշարված վիճակում երկար դիմանալ հնարավոր չէր։ Փամփուշտը և նռնակներն սպառվում էին, հաց և ճաշ եփելու համար վառելիք չկար, ջուր չկար, դեղորայք չկար, հիվանդությունները գլուխ

էին բարձրացրել։ Հաշվի առնելով ստեղծված ծանր դրությունը, հայերը որոշում են գիշերով ճեղքել թշնամու օղակը և դուրս գալ պաշարումից։ Բայց այդ քչերին է հաջողվում, մեծ մասը անհավասար մարտերում ընկնում է քաջի մահով։ «Մեռնելու երկու ձև կա, պատվավոր և անպատիվ մահ — ասում էին նրանք,— թող աշխարհը ըսե, թե շաբին-գարահիսարցիք պատվով մեռան»։

1915 թ. հունիսի 29-ին թուրքերը ներխուժում են բերդը և հրեշավոր ոճրագործություններ կատարում, չխնայելով երեխաներին, ծերերին, կանանց։ Ծանր վիրավոր մի հայ երիտասարդի թուրք զինվորներն անգթաբար ծեծում են և քարշ տալիս ժայռից ցած նետելու համար։ Վերջին պահին իր բոլոր ճիգերը լարելով, այդ երիտասարդը հարձակվում է դահիճներից մեկի վրա, գրկում է նրան և իր հետ անդունդը գլորում։

27 օրվա հերոսական կռիվներից հետո ընկնում է Շաբին-Գարահիսարը։

Մուսա լեռան 40 օրը

Արևմտահայերի ազատագրական կռիվների պատմության մեջ իր արժանի տեղն ունի Սուետիայի հայերի հերոսական ինքնապաշտպանությունը։

Մայր Հայրենիքից կտրված, Միջերկրականի ափին գտնվող Սուետիայի հայերը գերազանցապես երկրագործությամբ ու արհեստով զբաղվող խաղաղ, աշխատասեր մարդիկ էին։ Պատերազմը և երիտթուրքերի կառավարության հայաջինջ քաղաքականությունը վտանգի տակ դրեցին նաև նրանց գոյությունը։

1915 թ. հուլիսի սկզբներին Զեյթունից իր հայրենի գյուղը՝ Յողանուլը վերադարձած Տիգրան Անդրեասյանի միջոցով սուետացիք արդեն իսկ տեղյակ էին հայերի աքսորին ու կոտորածներին։ Երբ հուլիսին հրաման եկավ Սուետիայի 6 գյուղերի հայերի տեղահանության մասին, նրանք կանգնեցին երկընտրանքի առաջ։ Մի մասը (մոտ 2000 հոգի) Պիթիաս գյուղի քարոզիչ Նոխուտյանի ղեկավարությամբ բռնում է գաղթի ուղին, իսկ մեծ մասը (ավելի քան 4000 մարդ), գերադասելով պատվավոր մահը անպատիվ կյանքից, որոշում է բարձրանալ Մուսա լեռը և պաշտպանվել։ Տեղահանվածների մեծ մասին թուրքերը կոտորում են։

Մուսա լեռը բարձրացած հայերն ունեին 3 ամսվա պաշար։ Բայց շատ քիչ էր զենքը և ռազմամթերքը։ Շուրջ 600 կռվողներ ունեին մոտ 150 մարտական և մի քանի հարյուր որսորդական հրացաններ։ Մեծ մասը անզեն էին, զենք գործածելու անսովոր։

Լեռ բարձրանալուց անմիջապես հետո հայերն ստեղծում են ինքնապաշտպանության մարմին, որը գլխավորում էին անվեհեր հայրենասերներ Եսայի Յաղուբյանը, Տիգրան Անդրեասյանը, Պետրոս Տմլաքյանը և ուրիշներ։ Նրանք արագ թափով սկսում են վրաններ պատրաստել, ճանապարհները փակել, դիրքեր ու խրամատներ փորել, մարտական խմբեր կազմել, ռազմական ու տնտեսական գործի ղեկավարներ կարգել և այլն։

Երբ հայտնի դարձավ հայերի անհնազանդության և Մուսա լեռ բարձրանալու լուրը, թուրքական կառավարությունը զորք ուղարկեց նրանց պատժելու համար։ Օգոստոսի 7-ին թուրքերը գրոհեցին Մուսա լեռան վրա։ Հայերը վեց ժամ շարունակ քաջաբար կռվեցին նրանց դեմ և փախուստի մատնեցին։ Օգոստոսի 10-ին երկուհազարանոց զորամասը, հրանոթներով զինված, նոր հարձակում գործեց Մուսա լեռան վրա։ Թուրքական զորքերի հրամանատարը խոստացել էր մեկ օրում ջարդել բոլոր հայերին։ Բայց հակառակ սպասածին, նա խայտառակ պարտություն կրեց և մի քանի հարյուր սպանված և վիրավոր տալով, փախուստի դիմեց։ Առաջին հաղթանակներն ավելի գոտեպնդեցին հայերին։

1915 թ. օգոստոսի 19-ին թուրքերը մեծ ուժերով, մոտ 7 հազար կանոնավոր և անկանոն զորքով, երրորդ անգամ գրոհեցին Մուսա լեռան հայերի վրա։ Այս անգամ նրանք որոշ հաջողություններ ունեցան. ճեղքեցին հայերի պաշտպանական մի քանի թույլ գծեր։ Բայց այդ կարճատև եղավ։ Օգնության եկած հայերը առյուծի պես նետվում էին թուրքերի վրա, մեծ կորուստներ պատճառում նրանց և ետ շպրտում։

Վաղ առավոտից մինչև երեկո կատաղի մարտեր էին տեղի ունենում։ Հայերը, զինված թե անզեն, արիաբար նետվում էին թշնամու վրա, քարեր և հսկայական ժայռաբեկորներ գլորում, բռնցքամարտի բռնվում, շարքից հանում նրանց հրամանատարներին ու հրետանավորներին։ Նրանք դիշերային հանկարծակի գրոհներ էին կազմակերպում, խուճապ առաջացնում թուրքերի մեջ, զենք ու ռազմամթերք ձեռք բերում։ Օգտվելով Մուսա լեռան անառիկ ամրություններից, մի քուռ հայ քաջեր այս անգամ ևս փայլուն հաղթանակ են տանում տասնապատիկ ավելի թուրքական զորքերի դեմ։

Թուրքերը, չկարողանալով կռվի դաշտում հաղթել հայերին, որոշում են նրանց շրջապատված պահել և սովամահ անել։ Սովի վտանգը թշնամուց ավելի ահավոր էր։ Մուսալեռցիք անխորտակելի կամքի ուժ և բացառիկ արիություն ցուցաբերեցին. մերժեցին հանձնվելու վերաբերյալ թուրքերի առաջարկը և փրկության միջոցներ ձեռնարկեցին։ Նրանք նամակատարներ ուղարկեցին Ալեքսանդրետ և Հալեպ, բայց պատասխան չստացվեց։ Նրանք լեռան վրա մեծ դրոշակ բարձրացրին՝ վրան խաչ և «Քրիստոնյաները վտանգի մեջ են» անգլերեն մակագրությամբ, խարույկ վառեցին, Միջերկրական ծովով անցնող դաշնակիցների նավերի ուշադրությունը գրավելու և նրանցից օգնություն ստանալու համար։

Անցնում էին անձկության ու սպասումի օրեր, բայց հորիզոնի վրա ոչ մի նավ չէր երևում։ Վերջապես, սեպտեմբերի 5-ին երևում է ֆրանսիական «Կիշեն» ռազմանավը։ Փրկված լողվոր Մովսես Գրբքյանը անգ-

լերեն լեզվով գրված նամակը հասցնում է նավին։ Հայերը խնդրում էին իրենց տեղափոխել կամ զենք և ռազմամթերք տալ, որպեսզի կարողանան պաշտպանվել։

Մի քանի օր հետո, ֆրանսիական կառավարության կարգադրությամբ, ռազմանավերի ուղեկցությամբ ափին է մոտենում «Ժաննա դ'Արկ» շոգենավը՝ հայերին Պորտ Սայիդ փոխադրելու համար։ Չտեսնված ուրախություն ու ցնծություն է տիրում Մուսա լեռան վրա։ Սեպտեմբերի 14-ին առաջինը նավ են բարձրացնում երեխաներին՝ 1563 հոգի, ապա կանանց և տղամարդկանց՝ 2495 հոգի, ընդամենը՝ 4058 հոգի։

Մուսա լեռան հայ հերոսները փրկվեցին թուրքական վանդալների ճանկերից, բայց Պորտ Սայիդի «վրանաբնակության» ժամանակ և հետագայում մեծ զրկանքներ կրեցին և շատ զոհեր տվեցին։ Նրանց բեկորներն իրենց վերջնական փրկությունը գտան մայր հայրենիքում՝ Սովետական Հայաստանում։

Ուրֆայի հայերի դյուցազնամարտը

Շուտով թուրքական յաթաղանը բարձրացավ նաև Ուրֆայի հայերի վրա։ Հրաման եղավ 48 ժամվա ընթացքում հանձնել զենքերը և պատրաստվել գաղթի։ Մի խումբ հայ կտրիճներ, Մկրտիչ Յոթնեղբերյանի և Հարությունն Ռասթկելենյանի գլխավորությամբ, վճռում են չկատարել կառավարության հրամանը և դիմում են ինքնապաշտպանության։ Նրանց հետևվում է Ուրֆայի ամբողջ հայությունը։

Ուրֆայի հայերը կազմում են ինքնապաշտպանության կոմիտե, հայկական թաղամասերը բաժանվում են 6 շրջանի, 30 դիրքի, որոնցից ամեն մեկն ուներ իր ղեկավարը։ Քանդում են տների ու բակերի միջնապատերը, դիրքերը միացնում, պաշտպանության մի ընդհանուր շղթա ստեղծում։ Ուրֆայի հայկական թաղը վեր է ածվում պաշտպանության ճամբարի, տղամարդիկ, կանայք, երեխաներ ոտքի են կանգնում «մահ կամ ազատություն» նշանաբանով։

Սեպտեմբերի 30-ին թուրքերը երեք ուղղությամբ հարձակվում են հայերի վրա։ Երբ նրանք նրխուժում են հայկական թաղը, հայերն ուժեղ դիմադրություն են ցույց տալիս։ Բազմաթիվ սպանված և վիրավոր տալով, թուրքերը նահանջում են։ Հոկտեմբերի 3-ին քաղաքի վրա իշխող բերդից թուրքերն սկսում են ռմբակոծել հայկական թաղը և նորից գրոհի անցնել, բայց այս անգամ ևս ետ են շպրտվում, մեծ կորուստներ տալով։ Հայերից սպանվում են քսան հոգի։

Ջեմալ փաշայի կարգադրությամբ շուտով Ուրֆա է գալիս Ֆախրի փաշայի բանակը։ Թուրքական զորքերը շրջապատում են հայկական թաղը և սկսում կատաղի ռմբակոծություն։ Ծանր հրանոթներից կրակում էին գերմանական հրետանավորները՝ գնդապետ ֆոն Էքսֆեյլի ղեկավարությամբ։ Բորբոքվում են արյունահեղ մարտերը։ Թուրքական զորքերը և նրանց միացած աշերեթները լցվում են հայկական թաղը, գրավում մի շարք դիրքեր։ Հայերը նահանջում են, մեծ կորուստներ պատճառելով թշնամուն։

Թուրքերը գերմանացի Մ. Էքարտի միջոցով հայերին առաջարկում են հանձնվել, խոստանալով կյանքի ապահովություն։ Ծանր վիրավոր վիճակում Մ. Յոթնեղբերյանը վճռականապես մերժում է Էքարտին, ասելով. «Եթե ձեր մեջ քաղաքակիրթ և քրիստոնյա մարդու զգացում կա, փրկեցեք անապատներում մեջ կոտորվող անմեղ հայ ժողովուրդը»։

Ուրֆայի հայերը 25 օր շարունակ, գիշեր-ցերեկ, դյուցազնամարտեր են մղում անողոք թշնամու դեմ։ Հայկական թաղամասի տները, բակերն ու փողոցները վեր են ածվում մարտադաշտի, ներկվում արյունով։ Կանայք տղամարդկանց հետ միասին արիաբար կռվում էին անարգ թշնամու դեմ. շատերն ինքնասպանություն էին գործում, թույն ընդունում թշնամու ձեռքը կենդանի չընկնելու համար։

Ուրֆայի հայերի դոյամարտը տևեց մինչև հոկտեմբերի 23-ը։ Ուրֆայի հայ դյուցազունները կռվեցին մինչև վերջին փամփուշտը, մինչև վերջին մարդը։ Տղամարդիկ թե կանայք վերջին փամփուշտը պահում էին իրենց համար։ Թուրքերը հայկական թաղը գրավեցին միայն այն ժամանակ, երբ այնտեղից ծուխ ու բոց էր բարձրանում։

4. ՀԱՅ ԳԱՂԹԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Հայ ժողովրդի գենոցիդի թուրքական կառավարության գիշատիչ քաղաքականության ծանր հետևանքներից մեկն էլ եղավ հայ գաղթականությունը։ Թուրքական դժոխքից ազատվելու համար հայերը փախչում էին՝ ով ուր կարող էր։ 1914—1916 թվականներին Արևմտյան Հայաստանից և Թուրքիայի տիրապետության տակ գտնվող այլ վայրերից հարյուր հազարավոր հայեր, մեծ մասամբ կանայք, երեխաներ ու ծերունիներ, փախան աշխարհի զանազան երկրներ։ Անհրաժեշտ ծանր ու դժնդակ պայմանների մեջ ընկան հայ գաղթականները. նրանց վրա կախվեց սովի ու համաճարակի անավոր վտանգը։ «Սիրտս կսկծում է, արյունոտվում,— գրում է Սուրեն Սպանդարյանը,— երբ կարդում եմ այն հազարավոր փախստականների մասին, այն խեղճ ու տառապյալ, անլուր տանջվող ու արյունոտ ժողովրդի, բռնաբարված կանանց ու մորթված երեխաների մասին»։

Արևմտահայերից շուրջ 300 հազար մարդ, այդ թվում 50 հազար որբեր, գաղթեցին ռուսական կայսրության սահմանները, ապաստան գտան Արևելյան Հայաստանում, Վրաստանում, Ադրբեջանում, Հյուսի-

սային Կովկասում, Ռուսաստանում, Ուկրաինայում, Միջին Ասիայում։ Հայ գաղթականությունը Ռուսաստանում տեղական ժողովրդի կողմից նյութական ու բարոյական մեծ օգնություն ստացավ և համեմատաբար քիչ կարուստ տվեց։

Մեծ եղեռնից հետո հայ գաղթականներին, որբերին փրկելը նշանակում էր փրկել հայ ժողովրդին։ Ամեն մի փրկված որբ ապագա մի հայ ընտանիք էր։ Պատահական չէ, որ ստեղծվեց «Մի հայ՝ մի ոսկի» ֆոնդը, որի գումարներով քրդերից, թուրքերից և ուրիշներից հայ գերիներ էին գնվում։ Ամենուրեք հիմնվեցին խնամատար մարմիններ, բացվեցին որբանոցներ, արհեստանոցներ, դպրոցներ։ Տասնյակ հազարավոր որբեր տեղավորվեցին Երևանում, Էջմիածնում, Ալեքսանդրապոլում, Թիֆլիսում և այլուր բացված որբանոցներում։

Հայ գաղթականության ավելի մեծ զանգվածները փախան Թուրքիայի սահմանամերձ արաբական երկրները։ Սիրիայում, Եգիպտոսում, Իրաքում հայ գաղթականները, բազմահազար մերկ ու քաղցած, կմախքացած մանուկները, արաբ աշխատավորների կողմից գթառատ վերաբերմունքի արժանացան։ Նրանք ապաստան գտան Հալեպում, Բաղդադում, Բեյրութում և այլուր։

Հայ գաղթականները հասան Հունաստան, Բալկանյան երկրներ, Ֆրանսիա, Ամերիկա և այլ վայրեր։ Թուրքական արյունոտ լուծը ճաշակած աղատասեր հույները, բուլղարները, ռումինացիք և մյուս ժողովուրդները գրկաբաց ընդունեցին թուրքական յաթաղանից փրկված հայ գաղթականներին։

Այնքան մեծ էր աղետը, այնքան խորն էր վիշտը, այնքան շատ էր հարյուր-հազարավոր գաղթականների, ծնողներից զրկված բազմահազար որբ ու անօգնական երեխաների հոգսերն ու կարիքները, որ հայ ժողովուրդը սեփական ուժերով հազիվ թե կարողանար բուժել իր անսահման ծանր վերքերը։ Բայց նա մենակ չմնաց։ Նրան նյութական և բարոյական օգնության ձեռք մեկնեցին շատ ժողովուրդներ, աշխարհի բոլոր ազնիվ ու առաջավոր մարդիկ։ Ռուս մեծ ժողովուրդը, Անդրկովկասի եղբայրական ժողովուրդները, բուլղարները, ռումինացիք, հույները, ֆրանսիացիք, ամերիկացիք, պատերազմի ծանր ու դժվարին պայմաններում, շոշափելի օգնություն ցույց տվեցին հայ գաղթականությանն ու որբերին։ Առաջավոր մարդկությունը սատար եղավ աշխատասեր, խաղաղասեր ու ազատասեր հայ ժողովրդին։ Նա աշխարհով մեկ անարգանքի սյունին գամեց թուրք ջարդարարներին։

Համաշխարհային պատերազմի և մեծ եղեռնի մղձավանջային տարիներին, ծայրաճեղ կարիքի ու զրկանքի դժոխային պայմաններում, հայ ժողովուրդը հոգեկան և բարոյական բացառիկ արիություն ու դիմացկունություն ցուցաբերեցին, նա մնաց անսասան, իր հույսը չկորցրեց ապագայի նկատմամբ։ Ճիշտ էր նկատել Ֆրանսիայի մեծ զավակ Անատոլ Ֆրանսը. «Թուրֆիայի դժբախտ զոհը՝ Հայաստանը, մեռնում է, բայց նա կվերածնվի։ Նրան մնացել է շատ քիչ թանկագին արյուն, որից կծնվի մի հերոսական սերունդ»։

5. ԻՐԱՎԻՃԱԿԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՓԵՏՐՎԱՐՅԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԻՑ ՀԵՏՈ

Փետրվարյան հեղափոխության արձագանքները Հայաստանում

1917 թ. փետրվարի 27-ին (մարտի 12-ին) Ռուսաստանում տեղի է ունենում բուրժուա-դեմոկրատական հեղափոխություն։ Տապալվում է ցարիզմը, Ռոմանովների 300 տարվա դինաստիան։ Հեղափոխությունը կատարում են բանվորներն ու գյուղացիները, բայց իշխանությունն անցնում է բուրժուական ժամանակավոր կառավարությանը։ Միաժամանակ հիմնվում են բանվորների և զինվորների դեպուտատական սովետները։ Երկրում ստեղծվում է երկիշխանություն։

Հայաստանի բանվորներն ու գյուղացիները մեծ խանդավառությամբ են ընդունում ցարական կարգերի տապալման լուրը։ Իմպերիալիստական պատերազմի բոցերի մեջ այրվող ժողովուրդը իր փրկության հույսերը կապում էր հեղափոխության հաղթանակի հետ։ Պատերազմը հայ ժողովրդին կանգնեցրել էր կործանման եզրին. նա հերոսական ճիգեր էր գործադրում դժոխային դրությունից դուրս գալու համար։ Հեղափոխությունը փրկության միակ ելքն էր. այդ պատճառով էլ ժողովուրդն ամբողջապես փարվեց հեղափոխության գաղափարին։

Փետրվարյան բուրժուա-դեմոկրատական հեղափոխության առաջին իսկ օրերին Երևանում, Ալեքսանդրապոլում, Կարսում, Սարիղամիշում, Ալավերդում, Ղափանում, Նոր Բայազետում և այլ վայրերում մասսայական ցույցեր ու միտինգներ են տեղի անենում «Կորչի՛ ցարը», «Կորչի՛ պատերազմը», «Կեցցե՛ հեղափոխությունը» լոզունգներով։ Հեղափոխության ալիքը գնալով ավելի ու ավելի է ծավալվում։ Ապստամբ բանվորները, գյուղացիներն ու զինվորները հեղափոխական ճանապարհով վռնդում են ցարական չինովնիկներին ու ոստիկաններին, իշխանությունը վերցնում իրենց ձեռքը, սահմանում ութժամյա բանվորական օր, բռնագրավում կալվածատիրական հողերը և այլն։

1917 թ. մարտի 4-ին Կարսի կայազորի 40 հազար զինվորներ կարմիր դրոշակներով հսկա ցույց են կազմակերպում, բանտարկում իրենց մի քանի հրամանատարներին, քաղաքի պարետին և նահանգապետին։ Կարսում հիմնվում է զինվորական սովետ, որը հետագայում միանում է

բանվորական սովետի հետ։ Հեղափոխական ցույցեր են կազմակերպում նաև Կարսի բանվոր-ծառայողները։

Մարտի սկզբներին հեղափոխական ելույթներ են տեղի ունենում Ալեքսանդրապոլում և Երևանում։ Ալեքսանդրապոլում բանվոր-ծառայողների և զինվորների 30-հազարանոց միտինգ է գումարվում, որտեղ բոլշևիկները հեղափոխական ճառեր են արտասանում։ Երևանում ապրստամբության դրոշ են բարձրացնում կայազորի զինվորները, որոնց միանում են քաղաքի արհեստավորները։

Մարտի 7-ին Էջմիածնում գումարվում է զինվորների և գյուղացիների բազմամարդ միտինգ, որտեղ կրակոտ ճառ է արտասանում երիտասարդ բոլշևիկ Անաստաս Միկոյանը։ Հեղափոխական ելույթներ են տեղի ունենում նաև Ալավերդում, Ղարաքիլիսայում, Նոր Բայազետում, Զանգեզուրում և այլ վայրերում։

Փետրվարյան հեղափոխությունը ոտքի է հանում ինչպես ամբողջ երկրի, այնպես էլ Հայաստանի աշխատավորությանը։ Ռուս ժողովրդի օրինակով նրանք պայքարի են ելնում հին կարգերի դեմ, իրենց սոցիալական և ազգային ազատագրության համար։

Կովկասի փոխարքայության վերացումը

1917 թ. մարտի 9-ին (22-ին) ժամանակավոր կառավարության կարգադրությամբ վերացվում է Կովկասի փոխարքայությունը, որը հիմնվել էր դեռևս 1844 թվականին։ Վերջին փոխարքա Նիկոլայ Նիկոլայևիչ Ռոմանովը մեկընդմիշտ թողնում է Կովկասի սահմանները։ Երկրամասը կառավարելու համար կազմվում է վարչական նոր մարմին՝ այսպես կոչված Անդրկովկասյան հատուկ կոմիտե (Օզակոմ)։

Անդրկովկասյան հատուկ կոմիտեի կազմի մեջ մտնում էին պետական 4-րդ դումայի անդամներ կադետ Վ. Խարլամովը (նախագահ), մենշևիկ Ա. Չխենկելին, կադետ Մ. Պապաջանյանը, կադետ Մ. Ջաֆարովը և սոցիալ-ֆեդերալիստ Ի. Աբաշիձեն։

Օզակոմը իբրև պետական իշխանության օրգան իր ինքնուրույն դեմքը չուներ, նա ամբողջապես կախյալ վիճակում էր գտնվում ժամանակավոր կառավարությունից։ Օզակոմի վրա էր դրված նաև ռուսական դորքերի կողմից Արևմտյան Հայաստանում գրավված տերիտորիաների վարչական կառավարման գործը։

1917 թվականի մարտից սկսած, Օզակոմի ղեկավարությամբ, արձակվում են Կովկասի փոխարքայության տեղական օրգանները և փոխարենը կազմվում նահանգական, գավառական և գյուղական գործադիր կոմիտեներ։ Երևանի նահանգում կազմվում է նահանգական գործադիր կոմիտե, ինչպես և նահանգական կոմիսարիատ, որի գլուխ կանգնած էր կոմիսարը։ Նույնը կատարվում է նաև Կարսի մարզում։

Ինչպես ամենուրեք, այնպես էլ Հայաստանում ժամանակավոր կառավարության կենտրոնական և տեղական մարմինների ընտրությունները խիստ ձևական բնույթ էին կրում։ Նահանգական, գավառական և գյուղական գործադիր կոմիտեի անդամներ ու կոմիսարներ ընտրվում էին շահագործող դասակարգերի կամ քաղաքական ազդեցիկ կուսակցությունների ներկայացուցիչները։ Բոլորը խոսում էին դեմոկրատիայի անունից, դեմոկրատական ընդհանուր ծխաքողարկում էր կատարվում, իսկ իրականում ժողովրդին հուզող և ոչ մի հարց չէր լուծվում, բանվորագյուղացիական լայն մասսաները մնում էին հացի, ազատության և խաղաղության կարոտ։

Անդրկովկասյան հատուկ կոմիտեն, նրա տեղական օրգանները հեղափոխական իշխանության օրգաններ չէին։ Նրանք խոսում էին ժողովրդի անունից, բայց պաշտպանում էին բուրժուազիայի և գյուղական կուլակության շահերը։ Նրանք չլուծեցին և չէին էլ կարող լուծել ոչ բանվորագյուղացիական և ոչ էլ ազգային հարցերը։ Օզակոմում նստած Անդրկովկասի գլխավոր ազգությունների բուրժազիայի ներկայացուցիչներն ավելի խճճեցին ազգային հարցը, տերիտորիալ վեճեր բորբոքեցին, սրեցին ազգամիջյան հարաբերությունները։

Վ. Ի. Լենինի հավատարիմ զինակից Ստ. Շահումյանը, քննադատելով օզակոմի վարած ազգային քաղաքականությունը, գրում է. «Հեղափոխության սկզբներին դումայական կոմիտեն Կովկաս ուղարկեց Կովկասյան ամենագլխավոր ազգությունների դիտավորյալ կերպով ընտրած ներկայացուցիչներին՝ Պապաջանովին, Չխենկելին և Ջաֆարովին։ Նրանց ամբողջ էաղաֆականությունը տարվում էր ազգերը առավելապես անջատելու ոգով... ինտերնացիոնալ հեղինակավոր իշխանություն չկար»[1] (ընդգծումը մերն է—Վ. Պ.)։

Խոսելով Անդրկովկասի առանձնահատկությունների մասին, Ստ. Շահումյանն ասում է. «Անդրկովկասում, որտեղ խիստ խառն են ազգությունները, այդպիսի նացիոնալիստական էաղաֆականությունը տանում է դեպի այդ ազգերի կործանում»[2]։

Ստ. Շահումյանն առանձնապես խիստ քննադատում էր դաշնակցականներին. «Մենք ասել ենք նրանց՝ դուք, պարոններ, հայ ազգի համար կույր առաջնորդներ եք։ Դուք ունեք բարի ցանկություններ, բայց ձեր գործերը, ձեր ճանապարհը կորստաբեր են հայ ժողովրդի համար»[3]։

Հակառակ դաշնակցականների, մենշևիկների և մոսավաթիստների բուրժուա-նացիոնալիստական քաղաքականության, Անդրկովկասի բոլ-

---

[1] Ստ. Շահումյան, Երկեր, հ. 3, էջ 115։

[2] Նույն տեղում, էջ 116։

[3] Ստ. Շահումյան, Երկեր, հ. 2, էջ 407։

շևիկներն առաջ էին քաշում դեմոկրատական ինտերնացիոնալ իշխանություն հաստատելու պահանջը։ Ստեղծված դրությունից դուրս գալու միակ ելքը նրանք համարում էին գյուղական, գավառական և մարզային սովետների կազմակերպումը։

Օզակոմը գոյություն ունեցավ ընդհամենը 8 ամիս՝ մարտից մինչև նոյեմբեր։ Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո, 1917 թ. նոյեմբերին, Օզակոմի փոխարեն կազմվեց Անդրկովկասյան կոմիսարիատ, որը նույնպես հակահեղափոխական ուժերի կոալիցիոն կառավարություն էր։

Սովետները Հայաստանում

Փետրվարյան հեղափոխությունից հետո ինչպես Ռուսաստանում, այնպես էլ Հայաստանում հիմնվում են բանվորական, զինվորական և գյուղացիական սովետներ։ Սովետները հեղափոխության ծնունդ էին։ Հայաստանում ևս ստեղծվում է մի տեսակ երկիշխանություն՝ մի կողմից ժամանակավոր կառավարության տեղական օրգանները, իսկ մյուս կողմից սովետները։

Հայաստանում սովետներ հիմնվում են Երևանում, Ալեքսանդրապոլում, Կարսում, Սարիղամիշում, Ալավերդում, Նոր Բայազետում, Ղափանում, Կաղզվանում և այլ վայրերում։

Երևանում բանվորների և զինվորների սովետը ստեղծվում է 1917 թ. մարտի սկզբներին հեղափոխության լուրն ստացվելուց անմիջապես հետո։ Սովետն ընտրում է գործադիր կոմիտե, պաշտոններից հեռացվում են ցարական չինովնիկները, զինաթափ են արվում ոստիկանները։ Քաղաքի կարգ ու կանոնի հսկողությունն անցնում է սովետին։ Երևանի սովետը կազմված էր 28 դեպուտատից։ Սովետում գերակշռող էին դաշնակցականներն ու էսէռները։

Իր ակտիվ գործունեությամբ աչքի էր ընկնում Ալեքսանդրապոլի սովետը։ Մարտի սկզբներին այստեղ կազմվում է երկու սովետ՝ զինվորական և բանվորական։ Զինվորական սովետը հրատարակում է «Սոլդատ» թերթը։ Հունիսին զինվորական և բանվորական սովետները միանում են, իրենց օրգանը վերանվանում «Ռաբոչի սոլդատ»։

Ալեքսանդրապոլի սովետի գլուխ կանգնած էին մենշևիկները, բայց ուժեղ էր նաև բոլշևիկների ազդեցությունը։ Բոլշևիկներ Պ. Արվելաձեն, Բ. Վարիրջանյանը և ուրիշներ հեղափոխական եռանդուն աշխատանք էին կատարում բանվորների և զինվորների մեջ։ Բոլշևիկների նախաձեռնությամբ օգոստոսին սովետը վերանվանվում և կոչվում է բանվորների, զինվորների և գյուղացիների դեպուտատական սովետ և զգալի աշխատանք կատարում նաև գյուղում։ Հուլիսյան ցույցերից հետո բոլշևիկների ազդեցությունը Ալեքսանդրապոլի սովետում և գավառի աշխատավորության մեջ գնալով ավելի ու ավելի է աճում։

Փետրվարյան հեղափոխությունից անմիջապես հետո բանվորական սովետներ են ստեղծվում Հայաստանի արդյունաբերական կենտրոններում՝ Ալավերդում ու Ղափանում։ Ղափանի բանվորական սովետում ուժեղ էր բոլշևիկների ազդեցությունը։ Սովետը ձեռնամուխ է լինում բանվորների նյութական և կենցաղային պայմանների բարելավմանը, աշխատանքի ժամերի կրճատմանը և այլն։ Ձեռնարկատերերը մերժում են սովետի որոշումը։ Բոլշևիկների ղեկավարությամբ բանվորական միտինգ է գումարվում և գործադուլ հայտարարվում։ Բանվորները հաղթում են. սահմանվում է 8-ժամյա բանվորական օր, աշխատավարձը բարձրացվում է 30 տոկոսով։

Աշխույժ գործունեություն են ծավալում Կարսի և Սարիղամիշի սովետները։ Կարսի բանվորական սովետը ձևավորվում է 1917 թ. մարտի 7-ին։ Նրա առաջին գործը լինում է բանվոր-ծառայողների նյութական և կենցաղային ծանր դրության բարելավումը։ Սովետը պահանջում է սահմանել 8-ժամյա աշխատանքային օր, բարձրացնել աշխատավարձը, բանվորական ապահովագրություն մտցնել, աշխատավարձը կանոնավոր վճարել և այլն։

Երկու սովետ էր հիմնվել նաև Սարիղամիշում՝ զինվորական և գյուղացիական։ Սովետը լայն աշխատանք էր կատարում Սարիղամիշում գտնվող մեծ թվով զինվորականների մեջ։ Այստեղ բավականաչափ ուժեղ էր էսէռների, դաշնակցականների և մենշևիկների ազդեցությունը։ Սովետի բոլշևիկյան ֆրակցիան, աննկուն հեղափոխական Ստյոպա Ալավերդյանի գլխավորությամբ, անհաշտ պայքար էր մղում ժամանակավոր կառավարության և համաձայնողական կուսակցությունների հակահեղափոխական քաղաքականության դեմ։

1917 թ. ապրիլին Սարիղամիշում հիմնվում է սոցիալ-դեմոկրատական կազմակերպություն, որն ակտիվ գործունեություն է ծավալում զինվորների և աշխատավորության մեջ։ Սարիղամիշի սովետում բոլշևիկների դիրքերը գնալով ամրապնդվում են։

Բացի քաղաքներից ու քաղաքատիպ վայրերից, 1917 թվականին սովետներ են հիմնվում նաև մի շարք գյուղերում։ Գյուղական սովետներն զբաղվում էին գերազանցապես հողային հարցով, որը հեղափոխությունից հետո սուր բնույթ էր ստացել։

Բանվորական, գյուղացիական և զինվորական սովետների հանդես գալը Հայաստանում պատմական նշանակալից երևույթ էր։ Աշխատավորական մասսաները սովետների հետ էին կապում իրենց հուզող տնտեսական և քաղաքական հարցերի լուծումը։ Բայց սովետները չդարձան իսկական դեմոկրատական իշխանության օրգաններ։ Սովետներում գերակշռում էին էսէռները, դաշնակցականները, մենշևիկները, որոնք

չգլխավորեցին և չէին էլ կարող գլխավորել ժողովրդի մեջ ծավալվող հեղափոխական շարժումը։

Պայքար սոցիալիստական հեղափոխության համար

Փետրվարյան բուրժուա-դեմոկրատական հեղափոխությունը տապալեց ցարական կարգերը, բայց ժողովրդական լայն մասսաների դրության մեջ էական փոփոխություններ չմտցրեց։ Բանվորներն ու գյուղացիները, որոնք հերոսական պայքար մղեցին հին կարգերի դեմ, շաղատագրվեցին կապիտալիստների ու կալվածատերերի ճնշումից, խաղաղություն, հող և ազատություն չստացան։

Ցարիզմի տապալումից հետո բուրժուական և մանրբուրժուական բոլոր կուսակցությունները հայտարարում էին, թե հեղափոխությունն ավարտված է, մնացած հարցերը կլուծի Սահմանադիր ժողովը։ Վ. Ի. Լենինը և բոլշևիկները, ընդհակառակն, ասում էին, որ ցարիզմի տապալումը գործի սկիզբն է միայն, պետք է շարունակել սկսած գործը, կատարել սոցիալիստական հեղափոխություն։ Փետրվարյան հեղափոխությունից հետո դուրս գալով ընդհատակից, բանտերից ու աքսորավայրերից, բոլշևիկներն ամբողջ երկրում, այդ թվում և Հայաստանում, եռանդուն գործունեություն ծավալեցին բանվորներին, գյուղացիներին ու զինվորներին սոցիալիստական հեղափոխության նախապատրաստելու համար։

Փետրվարից հոկտեմբեր ընկած ժամանակահատվածում բոլշևիկների գլխավոր խնդիրն էր սովետները մաքրել դաշնակցականներից, էսէռներից ու մենշևիկներից, մասսաներին դուրս բերել այդ կուսակցությունների ազդեցությունից, մինչև վերջ մերկացնել ժամանակավոր կառավարության հակաժողովրդական էությունը, պատռել նրա կեղծ դեմոկրատական քողը։

Անդրկովկասում սոցիալիստական հեղափոխության գլխավոր խոչընդոտներից մեկն էլ բուրժուական նացիոնալիզմն էր։ Դաշնակցականները, մենշևիկներն ու մուսավաթականները աշխատում էին բանվորներին ու գյուղացիներին համախմբել ազգային դրոշի շուրջը, նրանց հեռու պահել սոցիալիստական հեղափոխությունից։ Անդրկովկասի բոլշևիկները՝ Ստ. Շահումյանը, Ա. Ջափարիձեն, Մ. Ազիզբեկովը և ուրիշներ, անհաշտ պայքար էին մղում բուրժուական նացիոնալիզմի դեմ, բանվորներին ու գյուղացիներին համախմբում ինտերնացիոնալ դրոշի շուրջը։

Ստ. Շահումյանի խմբագրությամբ Բաքվում հրատարակվող բոլշևիկյան «Սոցիալ-դեմոկրատ» թերթը, որը լենինյան գաղափարների լավագույն պրոպագանդիստն էր Անդրկովկասում, գրում էր. «Հայ բանվորությունը համառուսական բանվորության մի մասն է։ Հայ բանվորության թե տնտեսական և թե քաղաքական շահերը ամենասերտ կերպով կապված են համառուսական բանվորության շահերի հետ»։

Անդրկովկասի բոլշևիկները ղեկավարվելով Վ. Ի. Լենինի հռչակավոր ապրիլյան թեզիսներով, ՌՍԴԲԿ 6-րդ համագումարի որոշումներով, բանվորներին ու գյուղացիներին պայքարի էին հանում սոցիալիստական հեղափոխության համար։ Երկրում ստեղծված օբյեկտիվ պայմանները գործում էին հօգուտ բոլշևիկների։ Շարունակվող պատերազմը, տնտեսական կյանքի փլուզումը, աղքատությունը, գների թանկությունը, սովը, համաճարակը, անարխիան օրըստօրե ծանրացնում էին աշխատավոր մասսաների վիճակը։

1917 թվականի ամռան և աշնան ամիսներին Հայաստանի մի շարք վայրերում բանվորական, գյուղացիական և զինվորական ցույցեր ու ելույթներ տեղի ունեցան։ Կորցնելով հավատը ժամանակավոր կառավարության նկատմամբ, բանվորներն ու գյուղացիները պայքարի էին դիմում՝ իրենց ծանր դրությունից դուրս գալու համար։ Երևանում, Ալեքսանդրապոլում, Ալավերդում, Կարսում, Ղափանում, Կողբում բոլշևիկների ղեկավարությամբ գործադուլներ են տեղի ունենում։ Լայն չափեր է ընդունում գյուղացիական շարժումը։ Արզական, Բջնի, Ռնդամալ, Դյոքիլիսա, Ջառ և բազմաթիվ այլ գյուղերում բռնագրավում են կալվածատերերի հողերը, այրում նրանց ունեցվածքը։ Ժամանակավոր կառավարությունը պատժիչ ջոկատներ էր ուղարկում բանվորական և գյուղացիական ելույթները ճնշելու համար։

Անդրկովկասում հեղափոխական պայքարի հետագա վերելքի համար խոշոր նշանակություն ունեցավ 1917 թ. հոկտեմբերի 2—7-ը Թիֆլիսում կայացած ՌՍԴԲԿ կովկասյան երկրային առաջին համագումարը։ Համագումարը քննության է առնում ընթացիկ մոմենտի հարցը, ագրարային և ազգային հարցերը, զեկուցումներ տեղերից, կազմակերպական խնդիրներ և այլն։

Անդրկովկասի բոլշևիկների երկրային առաջին համագումարը գլխավորում էր Ստ. Շահումյանը, որը ՌՍԴԲԿ VI համագումարում ընտրվել էր Կենտկոմի անդամ։ Պետրոգրադում նա մասնակցել էր Կենտկոմի սեպտեմբերի 15-ի պատմական նիստին, որտեղ քննարկվել էին Վ. Ի. Լենինի հայտնի նամակները զինված ապստամբության և իշխանությունը գրավելու մասին։ Համագումարն անցնում է Կենտկոմի դիրեկտիվների ոգով։ Ընթացիկ մոմենտի մասին տված իր զեկուցման մեջ Ստ. Շահումյանն ասում է. «Չնայած այն ամբողջ պատասխանատվության, որ մենք վերցնում ենք մեզ վրա, չվախենալով աշխատանքի դժվարությունից ու բարդությունից՝ համարձակորեն ընդառաջ գնալ կյանքի առաջադրած խնդիրներին և, մեր ձեռքը վերցնելով իշխանությունը, հեղափոխությունը հասցնել մինչև հաղթական վերջը»[1]։

1 Ստ. Շահումյան, Երկեր, հ. 2, էջ 514։

Համագումարն ընտրում է ՌՍԴԲԿ Կովկասյան երկրային կոմիտե, որի մեջ մտնում են Ստ. Շահումյանը, Մ. Ցխակայան, Ա. Ջափարիձեն, Ֆ. Մախարաձեն, Ի. Ֆիոլետովը, Գ. Կորգանովը, Ս. Կասյանը, Ա. Մռավյանը, Մ. Օրախելաշվիլին, Հ. Նազարեթյանը, Ն. Ալաջալովան, Ն. Կուզնեցովը և ուրիշներ։

Հայաստանի բոլշևիկները մեծ Լենինի դրոշով հայ ժողովրդին առաջնորդում էին դեպի սոցիալիստական հեղափոխություն, դեպի սոցիալական և ազգային վերջնական ազատություն։

XIX ԳԼՈՒԽ

ՀԱՅԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՆ 1900—1917 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

Պարբերական մամուլը

XIX դարի վերջին և XX դարի սկզբին Հայաստանի սոցիալ-տնտեսական կյանքում տեղի ունեցած փոփոխությունները, 1905—1907 թվականների հեղափոխությունը, առաջին համաշխարհային պատերազմը, հայ ժողովրդի մեծ եղեռնը, փետրվարյան հեղափոխությունը իրենց կնիքն են դնում հայկական կուլտուրայի վրա, լայն արձագանք գտնում պարբերական մամուլում, գրականության և արվեստի մեջ։

Հայ պարբերական մամուլը, որը մեր մշակույթի հարուստ և բարձր զարգացած ճյուղերից մեկն էր, և՛ քանակապես, և՛ որակապես ավելի է աճում ու զարգանում։ XX դարի առաջին երկու տասնամյակներում հրատարակվում էին 970 անուն հայերեն թերթեր և հանդեսներ։ Շարունակվում էին հրատարակվել լայն ճանաչում գտած «Բազմավեպ», «Մասիս», «Հայրենիք», «Արևելյան մամուլ», «Մշակ», «Արևելք», «Արմենիա», «Մուրճ», «Հանդես ամսօրյա», «Ազգագրական հանդես» և այլ պարբերականներ։ Հայ պարբերական մամուլը, հայ ժողովրդի նման, սփռված էր աշխարհով մեկ, իր գոյությունը պահպանում էր գրասեր, աշխատասեր ու հայրենասեր հայ մտավորականության հերոսական ջանքերով։

Հայ պարբերական մամուլի պատմության մեջ նոր երևույթ էր մարքսիստական, բոլշևիկյան մամուլի հանդես գալը։ Մարքսիստական պարբերականների ու գրականության հրատարակությունը խոշոր դեր խաղաց հեղափոխական շարժումների և պրոլետարական կուլտուրայի զարգացման գործում։ 1902 թվականին Թիֆլիսում հրատարակվում է լենինյան-իսկրայական ուղղության առաջին հայերեն թերթը՝ «Պրոլետարիատ»-ը։

1903 թվականին լույս է տեսնում «Պրոլետարիատի կոիվը», 1906-ին՝ «Կայծ», «Նոր խոսք», «Կոչ-Դեվեթ» (հայերեն և ադրբեջաներեն), 1907-ին՝ «Սրեր», «Նոր խոսք», 1914—1917-ին՝ «Պայքար», 1917-ին՝ «Սոցիալ-դեմոկրատ», 1917—1918-ին՝ «Բանվորի կոիվը» և այլ պարբերականներ։ Դարի առաջին երկու տասնամյակներում հրատարակվել են 46 անուն բոլշևիկյան թերթեր և հանդեսներ։

Դպրոցը

Հայաստանում երկու տիպի դպրոցներ կային՝ պետական և ազգային։ Պետական դպրոցներում դասավանդումը տարվում էր ռուսաց լեզվով, իսկ ազգային դպրոցներում՝ հայերեն։ Պետական և ազգային (եկեղեցական-ծխական) դպրոցներից բացի, կային նաև մասնավոր դպրոցներ։ Չկար դպրոցական մի ընդհանուր, միասնական սիստեմ։

Ուսումնական ցանցում գերակշռում էին տարրական դպրոցները։ Միջնակարգ դպրոցների թիվը շատ քիչ էր, իսկ բարձրագույն դպրոց գոյություն չուներ։ Ժողովրդական մասսաների համար մատչելին տարրական դպրոցն էր։ 1901 թվականին Հայաստանում կար 136 տարրական դպրոց, 10348 աշակերտ, իսկ 1916 թվականին՝ 578 դպրոց, 34060 աշակերտ։ Հազար բնակչին ընկնում էր մոտ 20 սովորող։

Շատ գյուղերում դպրոցներ չկային և մեծ թվով երեխաներ զրկված էին նույնիսկ տարրական կրթություն ստանալու հնարավորությունից։ Այսպես, օրինակ, 1913—1914 թվականներին Աղեքսանդրապոլի գավառի 98 գյուղերից դպրոցներ կային միայն 29 գյուղում։ Դրությունն ավելի անմխիթարական էր հեռավոր լեռնային շրջաններում։ Տարրական դպրոցների մեծ մասը երկամյա կամ եռամյա էին։

Անմխիթարական էր նաև միջնակարգ կրթության վիճակը։ 1901 թվականին Երևանի նահանգում կար ընդամենը 5 միջնակարգ դպրոց, իսկ 1916-ին՝ 12 դպրոց, 4211 աշակերտ։

Շատ վատ էր դրված աղջիկների կրթության գործը։ Նրանց ճնշող մեծամասնությունը սովորում էր տարրական դպրոցների ցածր դասարաններում, որից հետո չէր շարունակում իր ուսումը։ Կանանց գրագիտության տոկոսը շատ ցածր էր։

Փոքր էր ուսուցիչների թիվը. 1900—1901 ուսումնական տարում պետական և ազգային դպրոցներում աշխատում էր 375 ուսուցիչ, 1915—1916-ին՝ 1715 ուսուցիչ։ Ուսուցիչներից շատ քչերը միայն բարձրագույն կրթություն ունեին։ Նրանց մեծ մասը թերի միջնակարգ և նույնիսկ տարրական կրթություն ուներ։

Ինչպես դպրոցները, այնպես էլ ուսուցիչները նյութական ծանր պայմաններում էին գտնվում։ Ուսուցիչները չնչին աշխատավարձ էին ստանում, ինչպես մեծանուն բանաստեղծ Հ. Թումանյանն է ասում, նրանք ապրում էին վատթար պայմաններում, կիսաքաղց։

Ցարական մեծապետական շովինիստները և թուրքական բարբարոսները ամեն կերպ արգելակում էին հայկական կուլտուրայի զարգացմանը։ 1903 թվականին ցարական կառավարությունը փակեց հայկական դպրոցները, բանտարկեց ու աքսորեց ուսուցիչներից շատերին։ Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին թուրքական վանդալները հիմնահատակ կործանեցին արևմտահայ դպրոցներն ու կուլտուրայի օջախները, սրի քաշեցին աշակերտներից և ուսուցիչներից շատերին։

Պատերազմի տարիներին հայկական դպրոցը մեծ կորուստներ ունեցավ· բայց մեր գրասեր ժողովուրդը երբեք երես չթեքեց դպրոցից, գիր ու գրականությունից։ Բնորոշ է, որ Մուսա լեռան հերոսները Պորտ-Սայիդում վրանների տակ դպրոց էին բացել, երեխաներին գիր ու գրականություն էին սովորեցնում։

Գիտությունը

XX դարի սկզբներին գիտական միտքը թևակոխում է իր զարգացման նոր շրջանը։ Գիտության տարբեր ճյուղերում, հատկապես հայագիտության բնագավառում, հանդես են գալիս նոր դեմքեր, որոնք հարստացնում, առաջ են մղում գիտական միտքը։ Հայ ժողովրդի պատմության, լեզվի, գրականության ու արվեստի ուսումնասիրությունը դրվում է գիտական ավելի բարձր մակարդակի վրա, հրապարակվում են հայագիտական արժեքավոր ուսումնասիրություններ։

Իրենց գիտական և մանկավարժական բեղմնավոր գործունեությամբ աչքի են ընկնում Մ. Աբեղյանը, Հ. Աճառյանը, Լեոն (Ա. Բաբախանյանը), Ն. Ադոնցը, Հ. Մանանդյանը, Հ. Օրբելին, Ստ. Մալխասյանը, Ա. Տերտերյանը, Ե. Լալայանը, նշանավոր հայագետ-կովկասագետ Ն. Մառը և ուրիշներ։

Հայ գրականության և ժողովրդական բանահյուսության ուսումնասիրության բնագավառում աչքի է ընկնում Մանուկ Աբեղյանը (1865—1944)։ Իր դասական աշխատություններով նա գիտական կայուն հիմքերի վրա դրեց հայ հին ու միջնադարյան գրականության և ժողովրդական բանահյուսության ուսումնասիրությունը։ Մեծ է նրա դերը հայ գրականության պատմության, ինչպես և լեզվի ու բանասիրության զարգացման գործում։

Մեծանուն լեզվաբան Հրաչյա Աճառյանը (1876—1953) իր գիտական գործունեությունը սկսելով տակավին XIX դարի վերջերից, այն ծավալում է XX դարի սկզբներին։ Նրա մեծարժեք գիտական հետազոտությունները՝ հայոց լեզվի և ընդհանուր լեզվաբանության բազմազան հարցերի վերաբերյալ, մի ամբողջ գլխով բարձրացնում են լեզվաբանությունը։ Չկա հայոց լեզվի ուսումնասիրության մի բնագավառ, որ մեղվաջան գիտնականն իր լուման ներմուծած չլինի։

Հայ ժողովրդի պատմության ուսումնասիրության և ժողովրդակա-

նացման գործում խոշոր դեր է կատարել բազմավաստակ պատմաբան պրոֆ. Լեոն։ Այս շրջանում լույս են տեսնում նրա նշանավոր «Հայոց պատմություն» ուսումնասիրության առաջին հատորը (1917 թ.), «Երևանի և Ղարաբաղի թեմական դպրոցների պատմությունը» (1914 թ.), «Մեսրոպ Մաշտոց» (1904թ.), «Հայ գրքի տոնը» (1912), «Վանի թագավորությունը» (1915), «Հայոց հարցի վավերագրերը» (1915) և այլ գործեր։ Մեծ են Լեոյի ընդգրկումներն ու պատմագիտական կարողությունները։ Նա միակ պատմաբանն է, որ հայոց պատմությունը հետազոտել է սկզբից մինչև իր օրերը, զբաղվել է ոչ միայն հին, այլև նոր պատմության հարցերով։ Իր բացառիկ աշխատասիրության և բեղմնավոր գրչի շնորհիվ Լեոն հարստացրեց և նոր բարձրության հասցրեց հայ պատմագրությունը։ Չնայած առանձին սխալներին ու վրիպումներին, Լեոն եղել է և մնում է մեր պատմական գիտության կարկառուն դեմքերից մեկը։

Պատմագիտական բեղմնավոր գործունեություն է ծավալում նաև Նիկողայոս Ադոնցը (1871—1943)։ 1908 թվականին ռուսերեն լեզվով հրատարակվում է նրա «Армения в эпоху Юстиниана» պատմաքննական հիանալի ուսումնասիրությունը՝ նախարարական շրջանի քաղաքական կարգերի և ֆեոդալական հարաբերությունների մասին։ Տպագրվում են Ն. Մառի և Հ. Օրբելու աշխատությունները Հայաստանի միջնադարյան հնությունների, մասնավորապես Անիի պեղումների, Ե. Լալայանինը՝ ազգագրության, Ա. Տերտերյանինը՝ հայ նոր գրականության պատմության վերաբերյալ և այլն։

Արժեքավոր աշխատություններ են հրատարակում նաև արևմտահայ պատմաբանները, գրականագետներն ու լեզվաբանները։

XX դարի սկզբին ձևավորվում է հայ մարքսիստական պատմագիտական, փիլիսոփայական և տնտեսագիտական միտքը։ Ականավոր մարքսիստ-լենինյաններ Ստ. Շահումյանը, Ս. Սպանդարյանը, Ալ. Մյասնիկյանը և ուրիշներ ջախջախիչ քննադատության են ենթարկում բուրժուական և կղերական կոնցեպցիաները, գիտական-մարքսիստական հիմքերի վրա դնում հայ հասարակական մտքի, հայ ժողովրդի պատմության ու կուլտուրայի ուսումնասիրությունը։

Գրականությունը

XX դարում հայ գրականությունն ապրեց իր հետագա վերելքը։ Աննախընթաց բարձրության հասավ առանձնապես պոեզիան։ Հանդես եկան բանաստեղծական խոսքի մեծագույն վարպետներ Հ. Թումանյանը, Ավ. Իսահակյանը, Վ. Տերյանը, Դ. Վարուժանը։

Հովհաննես Թումանյանը (1869—1923) հայ պոեզիայի ամենախոշոր դեմքն է, մեր ժողովրդի ամենասիրելի բանաստեղծը։ Իր հանճարի ուժով նա հասավ մեր պոեզիայի շողշողուն գագաթը, աչքի պես պարզ,

աչքի պես բարդ իր ստեղծագործություններում արտացոլեց հայ ժողովրդի կյանքը, նրա ազնիվ իղձերն ու երազանքները։

Հայրենասեր և ժողովրդասեր բանաստեղծը հսկայական դեր խաղաց հայ գրականության ու կուլտուրայի զարգացման, Անդրկովկասի ժողովուրդների և հայ-ռուսական կուլտուրական ու եղբայրական կապերի ամրապնդման գործում։ Հովհ. Թումանյանը ջերմորեն ողջունեց սովետական կարգերի հաստատումը Հայաստանում։

Հայ պոեզիայի մեծագույն վարպետներից է Ավետիք Իսահակյանը (1875—1957)։ Նրա ստեղծագործության հիմնական մոտիվը անհուն սերն է դեպի հայրենիքը և ժողովուրդը։ Նա իրեն հատուկ բանաստեղծական խոսքի ուժով արտահայտել է հայ ժողովրդի կյանքը, նրա դարդ ու ցավը, նրա բողոքը տիրող կարգերի ու օրենքների դեմ։

Դեռևս 1898 թվականին գրած «Ա՜խ, մեր սիրտը լիքը դարդ, ցավ» բանաստեղծության մեջ Ավ. Իսահակյանը խարազանում է շահագործող հարուստներին և պաշտպանում քարից-հողից հաց քամող աղքատ գյուղացուն.

Ա՜խ, մեր սիրտը լիքը դարդ, ցավ,
Օր ու արև չտեսանք,
Վա՜խ, մեր կյանքը սևով անցավ,
Աշխարհից բան չիմացանք։

Խեղճ աղքատը դառը դատի,
Դատարկ նստի... է՜յ, աշխարհ,
Էլ ինչու՞ ես քարը թողնում
Քարի վրա, քա՜ր աշխարհ։

Մեծ բանաստեղծը սրտի անհուն կսկիծով էր խոսում հայ ժողովրդի ապրած ողբերգության մասին և ուրախանում ու հպարտանում մայր հայրենիքի, Սովետական Հայաստանի հաջողություններով։

Հայ պոեզիայի գագաթներից է նաև Վահան Տերյանը (1885—1920)։ Նա իր մեծ տաղանդի ուժով բարձրացրեց մեր պոեզիան մի նոր աստիճանի, մշակեց ու հղկեց բանաստեղծական խոսքը, հանդես եկավ որպես նորարար բանաստեղծ։ Ռեակցիայի տարիներին հրատարակված «Մթնաղի անուրջներ» (1908 թ.) գրքում Վ. Տերյանը երգում է թախիծը, վիշտը, սերը, արտահայտում անկումային տրամադրություններ։ Հեղափոխության նոր վերելքի շրջանում, 1910—1912 թվականներին, նա գրում է իր նշանավոր «Վերադարձ» և «Արևածագ» բանաստեղծությունները.

Մենության խավար զնդանից կրկին
Ես վերադարձա հզոր ու հպարտ,

Եվ ինձ ողջունեց աղմուկը զվարթ,
Ու նոր խնդությամբ այրեց իմ հոգին...

Հայրենասեր բանաստեղծը խոցված սրտով արձագանքեց առաջին համաշխարհային պատերազմի սպանդում արյունաներկ դարձած հայրենիքի վերքերը.

Հայրենիքում իմ արնաներկ
Գիշերն իջավ անլույս ու լուռ
Այնտեղ, ուր կար այնքան սիրերգ
Եվ վարդի բույր, և սրտի հուր։

Հարելով մարքսիզմ-լենինիզմին, մտնելով բոլշևիկյան կուսակցության շարքերը, Վ. Տերյանը դարձավ մեր հեղափոխական պոեզիայի հիմնադիրներից մեկը։ Նա հայ ժողովրդի և բոլոր ճնշված ազգերի ազատագրությունը, նրանց նոր օրը կապում էր Հոկտեմբերյան հեղափոխության հաղթանակի հետ։

Նոր օր է բացվում ազգերի համար,—
Իմ հայրենիքում տիրում է գիշեր,
Իմ հայրենիքում անթափանց խավար,
Զարթե՛ք, վե՛ր ելեք, կենդանի ուժեր։

Դարասկզբի հայկական պոեզիայի խոշոր դեմքերից է Դանիել Վարուժանը (1884—1915)։ Նա կարճատև կյանք ունեցավ, թուրքական ջարդարարները կտրեցին նրա կյանքի ու ստեղծագործության թելը։ Բայց այն, ինչ նա ստեղծագործեց, հայ և համաշխարհային քնարերգության լավագույն նմուշներից է։ Դ. Վարուժանը հայրենասեր և ժողովրդասեր բանաստեղծ է։ Նա երգել է հայրենիքը, գյուղացու, բանվորի, պանդուխտի կյանքն ու աշխատանքը, ձաղկել է օտար բռնակալներին ու կապիտալիստներին։ Դ. Վարուժանի լայն ճանաչում գտած գործերից են «Ցեղին սիրտը», «Հեթանոս երգերը», «Հացին երգը» և այլն։

XX դարի սկզբներին ձևավորվում է հայ պրոլետարական գրականությունը, որի հիմնադիրը եղավ տաղանդավոր բանաստեղծ Հակոբ Հակոբյանը (1866—1937)։ Հ. Հակոբյանը երգել է գործարանը, բանվորի կյանքն ու աշխատանքը, նրա պայքարը բուրժուազիայի ու ցարիզմի դեմ։ Նա նոր գաղափար, թարմ խոսք բերեց մեր պոեզիային։ Նրա լավագույն ստեղծագործություններից են «Հեղափոխություն», «Մեռա՞ն՝ չկորա՞ն», «Հե՜յ, ձեզ մատաղ, բանվոր տղերք», «Ամբոխն իմ աշխարհ» և այլն։

Հ. Հակոբյանը պրոլետարիատի երգիչն է, նրա գործին ու պայքարին նվիրված հեղափոխական մարտիկ։ Նա եղել է Անդրկովկասի բոլշևիկյան կազմակերպությունների աչքի ընկնող գործիչներից մեկը։ Ստ. Շահումյանը և Ս. Սպանդարյանը բարձր են գնահատել նրա հեղափոխական պոեզիան, նրա դերը հայ պրոլետարական գրականության ձևավորման գործում։

Բանվոր դասակարգի և աշխատավորական խավերի կյանքն ու պայքարը երգել է նաև տաղանդավոր բանաստեղծուհի Շուշանիկ Կուրղինյանը (1876—1927)։

XX դարի սկզբին բարձրարժեք գեղարվեստական երկեր են ստեղծում Չիրվանզադեն, Մուրացանը, Նար-Դոսը, Վ. Փափազյանը, Հ. Հովհաննիսյանը, Գր. Զոհրապը, Ե. Օտյանը, Ալ. Ծատուրյանը, Մ. Մեծարենցը, Սիամանթոն, Երուխանը և ուրիշներ։

Արվեստը

Հայկական մշակույթի մյուս ճյուղերի հետ միասին զարգանում է նաև արվեստը՝ երաժշտությունը նկարչությունը, թատրոնը, ճարտարապետությունը։

Հանճարեղ երգահան Կոմիտասը (Սողոմոն Սողոմոնյանը, 1869—1935), օգտագործելով հայ ժողովրդական երաժշտության գանձերը, ստեղծեց ինքնատիպ դասական մի արվեստ։ Նա իր ամբողջ կյանքը նվիրեց հայկական երաժշտության զարգացմանը, հավաքեց ավելի քան 3000 ժողովրդական երգ, որից պահպանվել է 500-ը։ Նրա «Կալի երգը», «Հոլ արա եղո»-ն, «Գարուն ա», «Մոկաց Միրզա»-ն, «Պատարագ»-ը և մյուս ստեղծագործությունները երաժշտական գոհարներ են և մինչև այսօր էլ հուզում ու գեղարվեստական մեծ հաճույք են պատճառում լսողին։ Կոմիտասը մեծապես զարկ տվեց նաև եկեղեցական երաժշտությանը։

Կոմիտասը ոչ միայն երգահան էր, այլև երաժշտության հմուտ հետազոտող, գիտնական երաժշտագետ։ Նա հիմք դրեց հայ ժողովրդական երաժշտության գիտական ուսումնասիրությանը։ Կոմիտասը հայ ժողովրդի երաժշտական հանճարի մարմնացումն է. նրա երաժշտությունը ժողովրդի մեջ ամենատարածվածն ու ամենասիրվածն է։

Նշանավոր երգահան Ալեքսանդր Սպենդիարյանը (1871—1928) հիմք է դնում հայկական սիմֆոնիկ և գործիքային երաժշտությանը։ Նա մեծ դեր է կատարում նաև օպերային թատրոնի զարգացման ասպարեզում։ Իրենց արժեքավոր ստեղծագործություններով աչքի են ընկնում նաև երգահաններ Արմեն Տիգրանյանը (1879—1950), Ռոմանոս Մելիքյանը (1882—1935), Սպիրիդոն Մելիքյանը (1881—1933) և ուրիշներ։

Նկարչության բնագավառում իրենց գեղարվեստական բարձրարժեք կտավներով աչքի են ընկնում Ստեփան Աղաջանյանը (1870—1940),

Փանոս Թերլեմեզյանը (1868—1941), Եղիշե Թադևոսյանը (1870—1936), քանդակագործ Անդրեաս Տեր-Մարուքյանը (1875—1919) և ուրիշներ։ Այս շրջանում է հանդես գալիս մեր մեծատաղանդ նկարիչ, գույների անզուգական վարպետ Մարտիրոս Սարյանը (1880—1972)։

Նշված ժամանակաշրջանում զարգանում է նաև թատրոնը։ Աճում է թատրոնի խաղացանկը, բեմադրվում են հայկական, ռուսական և եվրոպական դասական դրամատուրգների գործերը։ Իրենց դերասանական արվեստով մեծ ժողովրդականություն են նվաճում Հովհաննես Աբելյանը (1865—1936), Սիրանույշը (1857—1932), Վահրամ Փափազյանը (1888—1968) և ուրիշներ։

Հայկական ճարտարապետության ասպարեզում աչքի են ընկնում Թորոս Թորոմանյանը (1864—1934), Ալեքսանդր Թամանյանը (1878—1936) և ուրիշներ։

Հայկական մշակույթը ավելի մեծ նվաճումներ կունենար և ավելի բարձր զարգացման կհասներ, եթե աշխատասեր և տաղանդավոր հայ ժողովուրդը չգտնվեր ազգային ու սոցիալական ճնշման ծանր պայմաններում, նրա ստեղծագործական ուժերը կաշկանդված չլինեին ներքին և արտաքին հարստահարիչների կողմից։